Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Հ. Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀՅՈՒՍՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2004

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 62.3 (2Հ)
Ա 501

FUNDAÇÃO

CALOUSTE GULBENKIAN

Գիրքը հրատարակվում է
ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հիմնարկության հովանավորությամբ

Աճառյան Հրաչյա

Ա 501

Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ), Եր.: ԵՊՀ հրատ., 2004, 484 էջ:

Մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանի անտիպ աշխատություններից է: Գրքում շարադրված են հայ ժողովրդի պատմության հիմնական իրադարձությունները՝ հնագույն շրջաններից մինչև 20-րդ դարի սկզբները: Զուգահեռ տրված են նաև համաշխարհային պատմության դեպքերը, որոնք այս կամ այն կերպ առնչվել են հայ ժողովրդի պատմությանը:

Գիրքը գրված է պարզ, հանրամատչելի լեզվով, որն ընդհանրապես բնորոշ էր Աճառյանին, և կարող է մեծ հետաքրքրություն ներկայացնել ընթերցող լայն շրջանների համար:

Ա $\frac{0503020913}{704\ (02)\ 04}$ 2004

ԳՄԴ 62.3 (2Հ)

ISBN 5-8084-0561-0

© ԵՊՀ հրատարակչություն, 2004 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր ժամանակների մեծագույն հայագետներից մեկի՝ Հրաչյա Աճառյանի գիտական ժառանգությունը բացառիկ բեղմնավոր է, բազմազան ու բազմաբնույթ՝ ընդհանուր լեզվաբանություն և համեմատական լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն և պատմական քերականություն, հայ բարբառագիտություն և բառարանագրություն, հայ ժողովրդի պատմություն, հայ գաղթականության և ընդհանուր պատմություն, հայ բանահյուսություն և հայ մատենագրություն, հայ գրչության պատմություն և հայ գրերի գյուտի պատմություն, Արևելքի և արևելյան լեզուների պատմություն, հայկական բառաքննություն և ձեռագրագիտություն, աղբյուրագիտություն և հայ լեզվաբանական մատենագիտություն, հայ գրականության պատմություն և վիմագրություն... Եթե այս ամենին ավելացնենք նաև նրա մեծ արժեք ներկայացնող հուշագրությունը, պարզ կդառնա առասպելական աշխատասիրություն ունեցող գիտնականի ողջ վաստակը, որն ավելին է, քան մի քանի գիտահետազոտական ինստիտուտների գործունեությունը:

20-րդ դարի սկզբներին Աճառյանը գրել է. «Հայ ժողովրդի պատմությունը, հյուսված ընդհանուր պատմության հետ», որն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի սկզբների անցքերը: Շարադրանքն ավարտել է 1919-20-ական թթ.: Հետագայում նա չի անդրադարձել այս գրքին: Ինչպես վկայում է մեծանուն հայագետի դուստրը՝ բանասեր Քնարիկ Աճառյանը, 1940-ական թվականների վերջերին Աճառյանը ցանկացել է տպագրել, փոխել է ուղղագրությունը, կատարել մասնակի շտկումներ, բայց տպագրության չի հանձնել:

Այսպիսով գիրքը մնացել է անտիպ:

Շարադրանքից անցել է մոտ մեկ դար: Հայ ժողովրդի պատմության որոշ հարցեր (հատկապես վաղ շրջանին վերաբերող) նորովի են ներկայացվում: Աճառյանը հավատարիմ է մնացել իր ուսուցիչներ Անտուան Մեյեի և Հայնրիխ Հյուբշմանի տեսակետներին՝ հայ ժողովրդի ծագումը քննել հնդեվրոպական ուսմունքի շրջանակներում:

Որոշ խնդիրներ են ծագել հատուկ անունների տառադարձման և ուղղագրության հետ կապված հարցերում: Քանի որ մեքենագիր օրինակը

ձեռագրի իրավունք ունի, և կան հայագետի ձեռքով կատարված ուղղումներ, հրատարակչությունը նպատակահարմար գտավ հավատարիմ մնալ բնագրին և տպագրել նույնությամբ, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ ընթերցողին կհետաքրքրի աճառյանական տառադարձությունը: Կատարվել են խիստ մասնակի սրբագրություններ:

Հ. Աճառյանն իր ստեղծագործությունների զգալի մասը գրել է պարզ, մատչելի լեզվով: Հատկապես «Հայ նոր գրականության պատմության» Ա, Բ, Գ, պրակները, «Հայ գաղթականության պատմությունը» և այլն: Այս գիրքը ևս շարադրված է հանրամատչելի լեզվով և կարող է մեծ հետաքրքրություն ներկայացնել ընթերցող լայն շրջանների համար:

Մեծանուն հայագետի դուստրը՝ Քնարիկ Աճառյանը և Երևանի համալսարանի հրատարակչությունը, իրենց երախտագիտությունն են հայտնում ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ հիմնարկությանը և նրա Հայկական բաժանմունքի տնօրեն, դոկտոր ԶԱՎԵՆ Վ. ԵԿԱՎՅԱՆԻՆ՝ Աճառյանի անտիպ ժառանգության հրատարակությունը հովանավորելու հայրենանվեր նախաձեռնության համար:

Գրքի լույսընծայումը նվիրվում է Հրաչյա Աճառյանի մահվան 50-ամյակին:

ՀԻՆ ԴԱՐ

ԵՐԿՐԱԳՆԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Երկրագունդը, որի վրա ապրում է մարդկությունը, իր նախնական շրջանում հրավառ հեղուկ մի զանգված էր. ջերմության այդ բարձր աստիճաններում որևէ կենդանի էակ չէր կարող գոյություն ունենալ նրա վրա. հազարավոր դարեր հետո, երկրագունդն սկսեց կամաց-կամաց սառչել և դրսից կեղև կապել: Այնուամենայնիվ այդ կեղևն էլ դեռ այնչափ տաք էր, որ այնտեղ էլ չէր կարող կյանքը գոյություն ունենալ: Ջուրը, որ կյանքի գոյության առաջին պայմանն է, գոյություն չուներ երկրի վրա, այլ գոլորշու ձևով կանգնել էր օդում: Երկրագնդի այս նախնական վիճակը երկրաբանության մեջ կոչվում է անկենդան (azoïque) կամ նախակենդանական (archéozoïgue) կամ նախնական (primordial) շրջան:

Սրան հաջորդում է հին կենդանական (peotérozoïque) շրջանը. երկիրը ավելի է սառած. անձրևներ են թափվում, շարունակ, և երկրի վրա հոսող ջրերն սկսում են իրենց դիրտը նստեցնել. և նրանց վրա երևան են գալիս առաջին կենդանական ձևերը, հասարակ բույսեր, մանրադիտական որդեր կյանք են առնում.

Սրան հաջորդում է հնակենդանական (paléozoïgue) կամ առաջնական (primaire) շրջանը, երբ ջրերը լցվում են բազմատեսակ կենդանիներով. ցամաքի վրա տարածվում են ճահճային անտառները և նրանց մեջ երևում են երկկենցաղ կենդանիներ:

Սրանից հետո գալիս է երկրորդական (mésozoïque) կամ secondaire) շրջանը: Այս շրջանին ընդարձակ զարգացում են կրում խեցեմորթները, սողուններն ու թռչունները:

Սրան հաջորդում է երրորդական (cainozoïque կամ tertiaire) շրջանը, երբ երկիրը լցվում է ամեն տեսակ բույսերով ու անտառներով և վերջապես երևում են կաթնասուն կենդանիները: Այս շրջանը բաժանվում է 3 դարի. այն է՝ éocène, miocène և pliocène: Առաջին éocène-յան դարում երևում են կապիկները, իսկ վերջին pliocène-յան դարում երևում է մարդը:

Թե ինչքա՜ն ժամանակ է անցել այն հնագույն շրջանից սկսած մինչև մարդու ծագումը՝ գիտնականները համաձայն չեն միմյանց հետ. աշխարհի հնությունը ոմանք դնում են 1 600 միլիոն տարի, ուրիշներ միայն 25 միլիոն տարի. բայց առհասարակ համաձայն են, որ այն ահագին շրջանի մի քառորդը եղել է անկենդան շրջանը, դրանից դեռ մի քիչ ավելին նախակենդանական շրջանը: Ուրեմն կեսից հետո միայն սկսում է կյանքի առաջին շրջանը երկրի վրա: Ամենակարճն է երրորդական (cainozoïque կամ tertiaire) շրջանը, որ ամբողջ աշխարհի հնության հազիվ մի քսաներորդ տևողությունն ունի:

Երրորդական շրջանից հետո գալիս է չորրորդական (pléistocène կամ quaternaire) շրջանը, որի մեջ ապրում ենք մենք և որ կես միլիոն տարվա հնություն ունի: Չորրորդական շրջանն էլ ունի 3 դար, որոնք են **սառցային, հետսառցային** և **ներկա** ժամանակ:

Երկրիս աշխարհագրական վիճակն էլ նախապես չուներ ներկա ձևը. éocène-յան շրջանում ամբողջ Առաջավոր Ասիան և Աֆրիկայի հյուսիսային մասը ծածկում էր Մեծ Միջերկրական ծովը, որի մեջ ցրված էին մի քանի կղզիներ, ինչպես Կովկասը, Հայաստանը, Մակեդոնիան, թերևս նաև Փոքր Ասիան: Հաջորդ miocène-յան շրջանում, ծովից դուրս են ցցվում նաև Եգիպտոսը, Արաբիան, Պարսկաստանը և անշուշտ Փոքր Ասիան: Pliocène-յան շրջանում, նոր ցնցումները բարձրացնում են Իրանը, կազմում են Կարմիր ծովը և ուրիշ հարթություններ: Սառցային դարում երկրի այս բարձր մասերը (Կովկասը, Հայաստանը, Իրանը, Հինդուքուշը, Միջին Ասիան և այլն) ծածկված էին մեծամեծ սառցակույտերով, որոնց վրա չէր կարելի բնակվել: Մարդն ապրում էր ավելի ցածր դաշտերում: Հետսառցային դարում սկսվում են ողողումները, երկրաշարժների պատճառով լեռներ ու սառցակույտեր փուլ են գալիս և կազմում մեծամեծ ջրհեղեղներ, որոնցից մարդը մազապուրծ փախչում է այս ու այն կողմ, իր գոյությունը պահելու համար: Հեղեղները իրենց հետ բերելով լեռների հողերը, խիճ ու կավ, լցնում են հետզհետե ծովեզերքներն ու գետաբերանները և կազմում նորանոր բարեբեր ցամաքներ, որոնց վրա կարող է այժմ մարդկությունն ավելի հեշտությամբ ապրել: Այսպիսի նորակազմ ցամաքներից մեկն էր, օրինակ՝ Ասորեստանը, որ նախապես Պարսից ծոցի մասն էր կազմում. ծովը հասնում էր մինչև այժմյան Մուսուլի (Բարձր Միջագետքի) կողմերը և այստեղ

էին թափվում Եփրատ և Տիգրիս գետերը: Դարերի ընթացքում այս երկու գետերը լցրեցին հողերը մինչև Պարսից ծոցի ներկա սահմանը և ձևացրին Ասորեստանն ու Բաբելոնը:

ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Բնության մեջ ամեն ինչ ենթակա է բարեշրջության (évolutioni) օրենքին. նյութն սկսելով ամենապարզ վիճակից, չափազանց դանդաղ, բայց շարունակ և աստիճանաբար դիմում է նախորդից ավելի կատարյալ մի վիճակի. շրջապատի պայմաններն ստիպում են նյութին՝ հարմարացման (adaptation) օրենքով փոփոխել իր կազմավորությունը. անգործարանավոր հանքային մարմինը գալիս հասնում է վերջապես գործարանավոր էակի առաջին աստիճանին և այստեղից բաժանվելով ճյուղավորվում է երկուսի, մեկը կազմելու համար բուսական թագավորությունը, մյուսը կենդանական թագավորությունը:

Գործարանավոր և անգործարանավոր էակների տարբերությունները բազմաթիվ են. բայց այդ տարբերությունները գլխավորապես կայանում են մեծության, ժամանակի և կամքի մեջ: Գործարանավոր էակների մեծությունը շատ սահմանավոր է. իսկ անգործարանավոր էակների մեծությունը անսահման է: Ի՞նչ է նույնիսկ փիղը կամ մամմութը* համեմատությամբ Խաղաղ օվկիանոսի կամ նույնիսկ Հիմալայան լեռնաշղթայի մեծության հետ: Ժամանակի, այսինքն կյանքի տևողության կողմից էլ գործարանավոր էակները շատ սահմանավոր են. ամենահին կենդանի էակը որ կա, Ցեյլոնի բուդդայական նվիրական ծառն է, որ տնկված է մեր թվարկությունից առաջ 245-ին, որով մոտ 25 դարի հնություն է ունենում: Բայց քանի՜-քանի՜ հազարավոր դարերի հնություն ունեն ամենահասարակ քարերն ու ժայռերը: Մի երրորդ ավելի մեծ տարբերություն որ ներքին է, դա կամքն է. անգործարանավոր մարմիններն ազատ շարժման անընդունակ են, իսկ գործարանավոր էակների գոնե ավելի բարձր տեսակների մեջ կա կամքը:

Բայց ինչ որ կազմում է գործարանավոր և անգործարանավոր մարմինների ամենաէական տարբերությունը, դա վերարտադրության ուժն է, որ զանազան ձևերի տակ հատուկ է միայն

* մամմութ - մամոնտ (խմբ.):

գործարանավոր էակներին: Մարդը 20 տարեկանից սկսում է արտադրել իր նմանին, որից հետո կամաց-կամաց քաշվում է կյանքի ասպարեզից: Սակայն աշխարհի այս միլիարդավոր ծնունդների մեջ չկա մեկը, որ բացարձակապես նույնը լինի մյուսի հետ. մինչդեռ քար և քար, ջուր և ջուր բացարձակապես նույն են: Կյանքի մեջ ով ուժեղ է, գեղեցիկ կամ իմաստուն, վերջապես որոշ առավելությամբ օժտված, մյուսներից ավելի հաջողելու շանսերն ունի. որով սերունդը ստիպված է միշտ դեպի ավելի լավը դիմելու: Այս է որ կենսաբանության մեջ կոչվում է ընտրություն (sélection):

Ավելի փոքր գործարանավոր էակները շատ ավելի կարճ կյանք ունենալով, շատ ավելի էլ արագ աճում ունեն. ուստի և նրանց մեջ բարեշրջության օրենքն էլ շատ ավելի արագ պիտի գործի: Ուրեմն բարեշրջությունը կանգնել չգիտի. շարունակ, բայց առանց ոստումների, հետզհետե կերպարանափոխում է այս կենդանի էակներն էլ. արտաքին աշխարհի պահանջների համաձայն, կանոնավոր առաջադիմությամբ փոփոխում է նրա ո՛չ միայն գործարանավորությունը, արտաքին կողմը, այլև կենդանական կյանքի բոլոր կարողությունները, զգայությունները և այլն: Ամեն մի առաջադիմություն ժառանգականության օրենքով անցնում է հաջորդ սերունդին, որ շարունակում է նույնպես առաջադիմության գործը: Աճում ու զարգանում են գործարանները. գործունեության պահանջն ստեղծում է նորանոր գործարաններ (la fonction crée l'organe). իսկ անպետք դարձած գործարանները ջնջվում են: Այստեղ առաջ են գալիս նոր տեսակի կենդանի էակներ, որոնցից յուրաքանչյուրը նախորդ տեսակի ավելի կատարյալ ձևն է ներկայացնում: «Բնությունը ոստում չի անում» («Natura non facit saltus»): Այսպես՝ սկսելով նախակենդանիներից (protozoaires), որոնք բուսական և կենդանական թագավորությունների սահմանն են կազմում, սկսելով coelentéré-ներից (բուստ, սպունգ, մեդուզա), որոնք ջրերի հատակում իսկական արմատներով հողին կպած բաներ են, մինչև մարդ էակը՝ կա աստիճանական զարգացումը: Առաջին դանդաղաթռիչ archaeoptéryx-ից առաջացավ հասավ մինչև այսօրվա սրաթռիչ արծիվը. ծանրաշարժ coryphodon-ից կամ éohippus-ից հասանք մինչև արագընթաց ձին:

Այս տեսության համաձայն, մարդն էլ իրանից մի աստիճան ցածր գտնված էակի, այն է մարդակերպ կապիկների մի զարգացումն է ներկայացնում: Ըստ Լիննեի, մի կապիկ, որ ուղիղ դիրքով է

քայլում, նույնիսկ առանց խոսելու ընդունակության, մարդ է: Բայց գիտնականները զանազան ժամանակներ գտել են այն նախնական վիճակի կմախքները, որոնք մարդու և կապիկի միջին շրջաններն են ներկայացնում:

Սրանց ամենանախնական տիպն է Pithécanthropus erectus-ը, որին Հեկելը կոչում է Homo alalus pliocène: Այս էակն ապրում էր երրորդական շրջանի վերջում և կապիկի ու մարդու մեջտեղումն է: Հոլանդացի բժիշկ Eugène Dulois-ն 1891 թվականին Ջավայում (Ճավայում) գտավ այս էակի կմախքից չորս կտոր ոսկոր (գանգի վերի մասը, ազդրի մի ոսկոր (fémur), երկու ծամող ատամ (molaire), որոնք թաղված էին հրաբխային մնացորդներում: Գանգն ուներ 550 խորանարդ սմ. պարունակություն, որ ավելի է գորիլից (550 սմ^3) և օրանգութանից (600 սմ^3), բայց պակաս է արդի ամենաստոր մարդուց (օրինակ՝ թասմանացիք ունեն 1020-1100 սմ^3 ուղեղ. ազդրոսկրը ցույց էր տալիս, որ ոտքի վրա կանգնած քայլող մի արարած էր՝ մեզ նման:

Սրանից հետո գալիս է chelléen շրջանի մարդը, որ կոչվում է homo Heidelbergensis. սրանից գտնված է 4 ծնոտ: Սա առաջինն է, որ մտածեց տաշել կայծքարը և իբր զենք գործածել: Ինքը դեռ այնքան նման է կապիկին, որ պատահմամբ եթե ծնոտի վրա ատամներ չգտնվեին, կապիկ պիտի կարծվեր և ոչ թե մարդ:

Նախամարդու երկրորդ ավելի զարգացած տիպարն է Moustier կամ Néanderthal -յան մարդը, որ ապրում էր սառցային դարում: Այս տիպից գտնված են 15 զանազան անձանց կմախքներ: Այս գանգերի ուղեղային ծալքերը պահված էին. կաղապարելով գտան, որ այս էակը նախորդից ավելի մտավոր ու հոգեկան զարգացում ուներ. ուղեղի ձախ մասը ավելի զարգացած էր քան աջը, որից հետևում է, թե աջ ձեռքով գործելու հակում ուներ: Նա կարող էր ուղղահայաց դիրքով կանգնել. հասել էր քաղաքակրթության որոշ աստիճանի, որովհետև գիտեր այրերում բնակվել և կրակ վառել:

Սրանից հետո գալիս է homo sapiens-ը, որ մեր ժամանակի մարդն է:

Նույնի ավելի զարգացած տիպարն է homo primigenius de Krapina, որի կմախքը գտնվեց 1901 թվականին Խրվաթիայում, (Խորվաթիայում) Krapina կոչված տեղում: Wahlkopf գիտնականը քննելով նրա ծնոտը, գտավ որ այդ էակն արդեն կարող էր արտաբերել զանազան մարդկային ձայներ:

Այս բոլորը ցույց են տալիս, որ կապիկից դեպի մարդը անցումը տեղի է ունեցել երրորդական շրջանի վերջում: Pléocene-յան դարում կային արդեն մարդանման էակներ (նախամարդ). իսկ սառցային դարում, այսինքն չորրորդական շրջանի սկզբից գոյություն ուներ մարդը:

Այժմ տեսնենք, թե ո՛րչափ հին են այս դարաշրջանները և մարդ էակը ինչ հնություն ունի: Գիտնականները շատ տարակարծիք են այս մասին. և ճիշտ պատասխան տալ այս հարցման՝ անկարելի է: Մորտիյյեն, որ նախապատմության գիտության հիմնադիրն է և որի նախապատմական բաժանումները շատերի կողմից ընդունված են, երրորդական շրջանի վերջը դնում է մեր թվարկությունից գրեթե 230 000 տարի առաջ: Այս ժամանակից է pithé canthropus erectus կոչված մարդը. Հայդելբերգյան մարդը մեր թվարկությունից 228 000 տարի առաջ է, Նեանդերթալյան մարդը՝ 106 000 տարի, իսկ homo sapiens-ը՝ 40 000 տարի:

Աշխարհի վրա սփռված մարդկությունը, ըստ ցեղագրության (éthnographie) բաժանվում է չորս խմբի. 1. **Սպիտակ ցեղ**, որ բնակվում է Եվրոպայում, Հյուսիսային Աֆրիկայում, Արևմտյան Ասիայում և մասամբ Ամերիկայում. 2. **Դեղին ցեղ,** որ բնակվում է Ասիայի մեծ մասում և Օվկիանիայի մեկ մասում. 3. **Պղնձագույն ցեղ,** որ բնակվում է Ամերիկայում և Օվկիանիայում. 4. **Սև ցեղ**, որ բնակվում է Աֆրիկայում, Օվկիանիայում և Ասիայի ու Ամերիկայի զանազան կողմերում: Խնդիր է, թե այս բոլոր ցեղերը առանձի՞ն թե ընդհանուր ծագում ունեն: Առաջին կարծիքին կողմնակից են բազմասերականները (polygéniste), որոնք ընդունում են, թե աշխարհի զանազան մասերում առաջ են եկել զանազան տիպի նախամարդիկ, որոնք հետո բազմանալով՝ բռնել են այդ աշխարհամասերը: Ընդհակառակը մենասերականները (monogénistes) ընդունում են, որ ամբողջ մարդկությունը երկրագնդի մեկ կետի վրա և մեկ նախամարդուց առաջացած է և հետո տարածված է աշխարհի զանազան մասերը, ուր կլիմայի և շրջապատի համաձայն ստանալով առանձին գույն և կերպարանք, առաջ է բերած արդի չորս ցեղերը:

Ուղիղ է միայն վերջին կարծիքը. այն է՝ համամարդկային ծագման միությունը. ա՛յս է հաստատում կենսաբանությունը (biologie), որ թե՛ բուսական և թե՛ կենդանական աշխարհում ընդունում է տեսակների ծագման միությունը:

Անցնենք այժմ լեզվաբանության արդյունքներին:

Աշխարհում խոսված բոլոր հին ու նոր լեզուների ընդհանուր գումարը 1500 է: Լեզվաբանները քննելով այս լեզուները, գտել են, որ նրանցից շատս մեկը մյուսին նման է և իրարից առաջ եկած կամ մեկ աղբյուրից ծագած: Իրար ցեղակից լեզուները առանձին խմբերի մեջ դասավորելով, գտել են, որ սույն 1500 լեզուները վերածվում են խմբերի, հետևյալ ձևով.

1. Հնդեվրոպական լեզվաբուն, որ տարածվում է Հնդկաստանի արևելյան ծայրից սկսած մինչև Եվրոպայի հյուսիս-արևմտյան ծայրը:

2. Սեմական լեզվաբուն, որ տարածվում է Միջերկրականի արևելքից սկսած մինչև Պարսկաստանի սահմանը և այստեղից հարավ՝ մինչև Հնդկական օվկիանոսը:

3. Քամյան լեզվաբուն, Աֆրիկայի հյուսիսային կողմը:

4. Աֆրիկյան լեզվաբուն, որ տարածվում է Սահարայի հարավային եզերքից մինչև Աֆրիկայի հարավային ծայրը:

5. Հոտենտոտ-Բուշմեն լեզվաբուն, Աֆրիկայի հարավարևմըտյան կողմը:

6. Ավստրական լեզվաբուն, որ տարածվում է Մադագասկարից սկսած մինչև Խաղաղ օվկիանոսի ծայրը:

7. Դրավիդյան լեզվաբուն, Հնդկաստանի հարավային մասում:

8. Անդամանյան լեզվաբուն, որ գտնվում է համանուն կղզիներում, Հնդկաստանի արևելյան կողմը:

9. Չին-Թիբեթական լեզվաբուն, Հնդկաստանի հյուսիսային կողմը:

10. Ուգրո-Ֆիննական լեզվաբուն, որ գտնվում է Եվրոպայի միջին մասից սկսած մինչև Ուրալյան լեռները:

11. Կովկասյան լեզվաբուն, Կովկասյան լեռնաշղթայի երկու երեսը:

12. Ալթայական լեզվաբուն, Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ օվկիանոսը:

13. Ճապոնա-Կորեական լեզվաբուն, հիշյալ երկու երկրներում:

14. Այնու լեզվաբուն, Սախալին կղզու հարավում և Ճապոնիայի հյուսիսում:

15. Հիպերբորյան լեզվաբուն, Սիբիրի արևելյան ծայրում:

16. Ամերիկյան լեզվաբուն, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի բնիկների լեզուներն են:

17. Ավստրալիական լեզվաբուն, այս մեծատարած կղզու բնիկների լեզուներն են:

Յուրաքանչյուր լեզվաբուն մյուսներից անկախ է և անջատ, և ենթադրում է հին նախամայր մի լեզվի գոյությունը: Յուրաքանչյուր նախամայր լեզու էլ ենթադրում է նախավոր մի ազգ և նախավոր մի հայրենիք: Ըստ այսմ մարդկության այն հնագույն շրջանում գոյություն պիտի ունենային առնվազն 17 անկախ լեզուներ և ազգեր, չհաշվելով առանձին մնացած լեզուները, որոնք կորել են անհետ:

Բայց առանձին և անկախ մի լեզվի և մի ազգի գոյությունը առանձին և անջատ մի ցեղ չի ենթադրում, որովհետև լեզու, ազգ և ցեղ իրար հետ կապված բաներ չեն: Այս բանը գլխավորապես հայտնի է նրանից, որ միևնույն սպիտակ ցեղը հինգ անկախ լեզվաբների է բաժանվում (հնդեվրոպական, սեմական, քամյան, ուգրո-ֆիննական և կովկասյան): Այդ նշանակում է, թե լեզվաբանության արդյունքները և անկախ նախամայր լեզուների և ժողովուրդների գոյությունը չեն հակասում համամարդկային ծագման և միության գաղափարին: Սրանք ցույց են տալիս միայն, թե մարդկությունը իր նախնական հայրենիքում սկիզբ առնելուց, բազմանալուց և զանազան տեղեր գաղթել հաստատվելուց հետո, սկսել է լեզու հորինել. և այսպիսով է, որ առաջացել են իրարից անկախ մայր լեզուները, որոնք նոր գաղթերով տարածվել են աշխարհիս զանազան մասերում և ձևացրել այսքան բազմաթիվ լեզուներ:

Ընդունելուց հետո, թե մարդկությունը մեկ նախամոր զավակ է, պետք է գտնել այն տեղը, ուր առաջին անգամ մարդկությունը երևան է եկել: Բայց մարդկության բնօրրանի մասին դեռ ո՛չ մի վճռական կարծիք չկա: Գիտնականներից ոմանք դնում են բևեռներում, հիմնվելով այն բանի վրա, որ երկրագնդի ամենից առաջ սառած և բնակելի դարձած մասերը բևեռներն են: Ուրիշ գիտնականներ դնում են Միջերկրականի եզերքները, Ավստրալիա, Կենտրոնական Ասիա, Մալայզիա, Արաբիա, Աֆրիկա և այլն: Ուրեմն ամեն ինչ անորոշ է: Անորոշ է նույնիսկ յուրաքանչյուր լեզվաբնի հայրենիքը, որ վերի տեսության համաձայն շատ ավելի նոր է, քան ընդհանուր մարդկության առաջին ծագումը:

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մարդկությունն իր նախնական շրջանում ապրում էր շատ ողորմելի դրության մեջ. իր միակ նպատակն էր քաղցից չմեռնել և ազատվել գազանների հարձակումից, որոնք իրանից ավելի էին օժտված ուժով և հարձակողական զենքերով (եղջյուր, ժանիք և այլն): Սրանց դեմ կռվելու համար մարդու միակ զենքն էր քարը, որին զանազան ձևեր տալով, դանակաձև տաշելով և կամ փայտերի ծայրն անցկացնելով գործածում էին: Որևէ մետաղ ծանոթ չէր մարդուն: Այս պատճառով մարդկության այս հնագույն շրջանը կոչվում է **Քարե դար**: Այս շրջանի մարդու միակ սնունդը կազմում են պտուղներ, զանազան խոտեր, ճճիներ* և իր որսացած անասունների միսը, որ հում-հում ուտում է, քանի որ կրակը դեռ գտնված չէ: Հագուստ չունի, որովհետև ոչ թել մանել գիտի, ոչ կաշի գործել և ոչ էլ կարել: Ցուրտը և տաքը կարծրացրել են իր մարմինը, մորթն ամրացրել, թավ մազերով ծածկել, այնպես որ վայրի անասուններից քիչ տարբերություն ունի: Իր բնակարանն է ժայռերի խորշը, քարայրների մեջ, որովհետև շենք շինելու մասին դեռ ոչ մի գաղափար չունի: Մարդու անպաշտպան դրությունը ստիպում է նրան ապրել խմբերով (հորդա) և ո՛չ թե առանձին ընտանիքներով, որովհետև խմբերի բազմությունը մեծ գրավական է ներկայացնում մարդուց ավելի ուժեղ գազանների դեմ հաջողությամբ կռվելուն:

Մարդու միակ զբաղմունքը այս շրջանում որսորդությունն է և որսը ճարելու համար շարունակ ստիպված է տեղից տեղ թափառելու: Հետևաբար հաստատություն չունի, թափառական է:

Կարիքն ստիպում է մարդուն հետզհետե ավելի հնարագետ լինել, իր կերակուրը ձեռքի տակ պատրաստ ունենալու համար միշտ՝ մտածում է պահել զանազան անասուններ, որ հետզհետե ընտանեցնում է և նրանցից մեծ խմբեր կազմած՝ արոտից արոտ է թափառում: Այսպես առաջ է գալիս խաշնարածությունը:

Քարերի հետ միշտ գործ ունենալով, մի օր էլ պատահմամբ շփման միջոցով գտնում են կրակը. և դա պատճառ է դառնում ծնելու քաղաքակրթությունը: Որպեսզի կրակը քամուց և անձրևից

* ճճիներ - որդեր, ճիճուներ (խմբ.):

պաշտպանեն, նրա չորս կողմը պատ են քաշում, վրան քարով ծածկում են և այսպիսով ձևանում է* հայրենի օջախը, մարդկության առաջին տունը: Պատահմամբ կրակի մեջ ընկած մետաղի մի կտորի հալումը սովորեցնում է մարդուն մետաղի գործածությունը և ծանոթանալով բրոնզի հետ, որ անագի ու պղնձի խառնուրդն է, սկսում է պատրաստել իր սուր զենքերը, որով այժմ կարող է հաջողությամբ կռվել ուժեղ գազանների դեմ: Սովորում է հողե ամաններ թրծել, կերակուր եփել և անասունների մորթուց հագուստ պատրաստել: Վերջապես ծանոթանալով զանազան բույսերի մշակության, ստեղծում է երկրագործությունը, որով դառնում է երկրագործ ու նստակյաց ժողովուրդ:

Մարդկության այս շրջանը կոչվում է **Բրոնզե դար:**

Ավելի ուշ մարդը ծանոթանում է երկաթի գործածության, որով սկսում է Երկաթի դարը, որի մեջ ապրում ենք մենք:

4. ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԵՐԿՐՆԵՐԸ

Առաջին քաղաքակրթությունները ծագած են այնպիսի երկրներում, ուր բնությունը օժտած էր մարդուն կյանքի հարմարավոր պայմաններով. այն է տաքուկ կլիմա, բարեբեր հող և առատ ջուր: Գետերի ընդարձակ հովիտներն են դրանք: Այսպես ամենահին դարերում քաղաքակրթությունը ծաղկած ենք գտնում դեղին և կապույտ գետերի հովտում (Չինաստան), Գանգես գետի հովտում (Հնդկաստան), Եփրատ և Տիգրիս գետերի հովտում (Ելամ, Բաղդեաստան, Ասորեստան և Բաբելոն), Նեղոս գետի հովտում (Եգիպտոս) և Ալիս ու Իրիս գետերի հովտում (Փոքր Ասիա):

Մեր թվարկությունից 34 դար առաջ Չինաստանն ստեղծեց իրեն համար առանձին քաղաքակրթություն, օրենքներ դրավ, մի տեսակ գիր, մինչև անգամ կողմնացույց հնարեց: Բայց նրա քաղաքակրթությունը մնաց իր մեջ կամ առավելն ազդեց Հնդկաչինի, Կորեայի, Մանչուրիայի (Մանջուրիայի) և Ճապոնի (Ճապոնիայի) վրա և դեպի մեր սահմանները մուտք չգործեց:

Չինաստանից ավելի հին է Եգիպտոսը: Եգիպտացիք մեր թվարկությունից 5000 տարի առաջ հաստատվելով Նեղոսի

* ձևանում է - ձևավորվում է (խմբ.):

հովտում, պետություն և կուլտուրա են հիմնում: Նույն ժամանակից են նաև ելամացիք և քաղդեացիք, որոնք հաստատվելով Եփրատի և Տիգրիսի հովտում, ստեղծեցին այնպիսի մի կուլտուրա, որ թերևս ամենահինն է մարդկության մեջ: Ավելի հետո գալիս են հաթերը՝ Փոքր Ասիայում և հնդիկները՝ Գանգեսի հովտում:

5. ԵԼԱՄ ԵՎ ՔԱՂԴԵԱ

Արևելքում մարդկային քաղաքակրթությունն առաջին անգամ երևան է գալիս Ելամի և Քաղդեայի մեջ: Քաղդեան գտնվում էր Եփրատ և Տիգրիս գետերի հովտում՝ Պարսից ծոցի վրա. իսկ Ելամը՝ սրանից դեպի արևելք, Պարսից ծոցից մինչև Համադան ձգված տարածության վրա: Մայրաքաղաքն էր Շուշ: Տիգրիսը բաժանում էր այս երկու երկրները: Քաղդեայում այն ժամանակ ապրում էին սումերները (շումերներ), որոնք ոչ սեմական և ոչ էլ հնդեվրոպական լեզվաբնին են պատկանում և թերևս ցեղակից էին Ելամի ժողովրդին: Ելամացիք հասել էին կուլտուրայի այնպիսի աստիճանի, որ արդեն հնարել էին մի տեսակ մեհենագիր գրություն, որ Քաղդեայում ձևափոխվելով վերածվեց բևեռագիր գրության, իսկ ուրիշ ճամփով անցնելով ավելի արևմուտք, կազմել է թերևս եգիպտական ու հաթյան նշանագրերը: Արևմուտքից՝ Արաբիայից առաջանալով սեմական ցեղը, եկավ գրավեց Քաղդեաստանը և իր մեջ ձուլեց սումերներին, որոնք մեր թվարկությունից առաջ 4000 թվականին արդեն վերջացած են:

Մեր թվարկությունից 30-38 դար առաջ, սեմական ժողովուրդների ձեռքի տակ, Քաղդեան հիմնում է մի մեծ կայսրություն, որ հասնում էր մինչև Միջերկրական ծովը: Ելամն էլ ընկավ Քաղդեայի տիրապետության տակ, բայց սումերների նման չձուլվեց: Ելամացիք ո՛չ միայն պահեցին իրենց գոյությունը, այլև հաջողվեցին ազատել Ելամը Քաղդեայի լծից: Այնուհետև Ելամն ավելի զորանալով նվաճեց Քաղդեան և հիմնեց այնտեղ նոր պետություն: Քաղդեայում բնակվող սեմական ժողովուրդներն սկսեցին հեռանալ. մի մասը քաշվեց դեպի հյուսիս և հիմնեց Ասորեստանը, իսկ մի ուրիշ մասը քաշվեց դեպի արևմուտք և այնտեղ, Միջերկրական ծովի եզերքին, հիմնեց Փյունիկեն (23-րդ դ. մ. թ. ա): Այս գաղթականությունների պատճառով Ասորիքի սահմաններից շարժվեց մի ուրիշ բարբարոս ցեղ, որ պատմության մեջ հայտնի է

Հովիվ կամ **Հյուքսոս** անունով: Սրանք արշավեցին Եգիպտոս և նվաճելով եգիպտական փարավոնների իշխանությունը, հաստատեցին իրենց տիրապետությունը:

6. ՀՆԴԵՎՐՈՊԱՑԻՔ ԵՎ ՆՐԱՆՑ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտնականները ենթադրում են, որ հնդեվրոպացիների ընդհանուր նախահայրենիքը գտնվել է Արևելյան Եվրոպայում, Բալթիկ ծովից դեպի արևելք, արդի Լիթվանիայի (Լիտվիա) կամ Միջին Ռուսաստանի սահմաններում: Երկար ժամանակ նրանք այնտեղ բնակվելուց հետո, սկսեցին գաղթել: Անշուշտ միանգամից բոլորը չգաղթեցին, այլ զանազան ժամանակներ զանազան գաղթեր տեղի ունեցան, որոնք սփռվեցին զանազան երկրներ՝ Հնդկաստանի արևելյան ծայրից մինչև Եվրոպայի հյուսիսարևմտյան ծայրը (Իռլանդիա): Այս գաղթականություններից հայտնի են մեզ 11 հատ, որոնք են.

1. **Արիական ճյուղ,** որից առաջացան հնդիկները, մարերը, պարսիկները և նրանց հետ աֆղանները, բելուջները, քրդերը և օսերը:
2. **Թոխարական ճյուղ** (թոխարներ և քուչեր՝ Չինաստանի և Թուրքիայի սահմանի վրա):
3. **Հայկական ճյուղ:**
4. **Կամիսական ճյուղ:**
5. **Թրակո-փռյուգական ճյուղ:**
6. **Հունական ճյուղ:**
7. **Լյուրիկյան ճյուղ** (ալբանացիք, վենետիկցիք, մեսապացիք, հապիգեցիք և այլն):
8. **Իտալական ճյուղ** (որից առաջացան Իտալիայի զանազան ժողովուրդները, ինչպես լատինները, օսկերը, ումբրիացիք, սաբինացիք, սամնիացիք և այլն):
9. **Լեթթո-սլավական ճյուղ** (մի կողմից լիթվանացիք, լեթթերը, հին պրուսիացիք և մյուս կողմից սլավական զանազան ժողովուրդները, ինչպես ռուսները, լեհացիք, չեխերը, սերբերը և այլն):
10. **Գերմանական ճյուղ** (այն է՝ գերմանացիք, հոլանդացիք, դանիացիք, շվեդացիք, նորվեգացիք, անգլիացիք և իսլանդացիք):
11. **Կելտական ճյուղ** (իռլանդացիք, գալլերը, հին ֆրանսիացիք և այլն):

Այս գաղթականությունների ժամանակի և հանգամանքների մասին շատ քիչ բան գիտի պատմությունը: Ամենահին ժամանակներում այս ազգերը արդեն հաստատված են իրենց նոր հայրենիքում, կազմել են նոր ազգեր և լեզուներ և անցյալի մասին բնավ տեղեկություն չունեն: Այսպես են, օրինակ, կամիսները, հնդիկները, մարերը, պարսիկները և այլն: Շատ ավելի ուշ այս բոլոր ազգերն ու ժողովուրդները քաղաքակրթության ճանապարհի մեջ են մտնում, գիր և գրականություն են հիմնում, որով և սկսում է պատմությունը: Կամիսները, ասիացիք, հույներն ու իտալացիք մեր թվարկությունից առաջ գրականություն ունեն արդեն, իսկ մյուսները՝ մեր թվարկությունից հետո:

Մեր թվարկությունից առաջ երրորդ հազարամյակի վերջերը տեղի ունեցավ հնդեվրոպացիների առաջին գաղթը: Դրանք կամիսներն են, որ նախահայրենիքից դուրս գալով, հայտնի չէ ո՛ր ճամփով, Կովկասի և Հայաստանի վրայո՞վ թե Արևմուտքից՝ Եվրոպայի վրայով եկան մտան Փոքր Ասիա: Այստեղ բնակվում էին արդեն հաթերը, հին ժողովուրդ, որոնք ո՛չ հնդեվրոպացի են և ո՛չ էլ սեմական: Հայտնի չէ երբ նրանք հաստատվելով այստեղ, ստեղծել էին մի տեսակ մեհենագիր գրություն և առանձին կուլտուրա: Կամիսները նվաճեցին հաթյան նախաբնիկներին, միացան նրանց հետ և հիմնեցին նոր պետություն: Նրանք շուտով ընդունեցին Ասորեստանյան քաղաքակրթությունը և բևեռագիր գրությունն էլ սովորելով, թողեցին բազմաթիվ արձանագրություններ (թվով 13000), որոնց ընթերցմամբ գիտնականները հետզհետե երևան են հանում նրանց անցյալ պատմությունը: Ոմանք այս ժողովուրդը կոչում են կամիսներ և լեզուն էլ կամիսերեն, ուրիշներ կաներեն, նեսերեն, նաև հաթերեն. բայց անհրաժեշտ է չշփոթել տիրող հնդեվրոպացիներին (կամիսներ) բուն նախաբնիկների հետ, որոնք իսկական հաթերն են:

Կամիսների հետ ուրիշ զանազան հնդեվրոպական ցեղեր էլ կային. ինչպես մանդայեցիք, խարրի կամ հուրրի, բալա և լուվ: Սրանց լեզուներով կան զանազան արձանագրություններ: Պետության մայրաքաղաքն էր Հաթթուշաշը, որի ավերակները երևան եկան Բողազքյոյում, Անկարայից 145 կիլոմետր դեպի արևելք:

Սկզբից կամիսները Փոքր Ասիայի կենտրոնական մասում էին. ավելի ուշ նրանից ավելի հարավ առաջացան և իրենց տիրա-

պետության տակ առան Կիլիկիան, Ասորիքը և Միջագետքը: Մեր թվարկությունից առաջ երկրորդ հազարամյակի սկիզբը նրանք Ասորեստանի վրա արշավեցին: Ասորիքում հանդիպեցին եգիպտացիներին, որոնց հետ բախվելու էին բնականաբար:

7. ՄԻՏԱՆԱՑԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Միտանիները հնդեվրոպական ցեղին էին պատկանում և հատկապես արիական ճյուղի իրանական ընտանիքից էին: Երբ արիները հնդեվրոպական հայրենիքից հեռանալով Կովկասի վրայով հարավ իջան, միտանիներն էլ նրանց հետ էին: Հայաստանում գաղթականությունը երկուսի բաժանվեց. մեծ մասը դեպի Արևելք դիմելով՝ բռնեց Մարաստանը, Պարսկաստանը և ավելի հեռու Հնդկաստանը: Մյուս մասը մնաց Հայաստանում. սրանք միտանիներն էին, որոնց հնությունը մեր թվարկությունից առաջ երկրորդ հազարամյակն է հասնում:

Այն ժամանակ Հայաստանում և Առաջավոր Ասիայում հաստատված էին սուբարիները, որոնք քաղաքակիրթ, բայց անկազմակերպ ժողովուրդ էին: Իրենց հիշատակարանները մինչև մեր թվարկությունից առաջ 4000 թվականն են հասնում: Միտանիները նվաճեցին նրանց և նրանց հետ միացած նոր պետություն հիմնեցին, ճիշտ ինչպես կամիսները հաթերի երկրում:

Միտանիների պետությունը շատ բան ժառանգելով սուբարիներից, արագությամբ ընդարձակեց իր սահմանները և մեծ պետություն դարձավ: Կարծվում է, թե իրենք են հիմնել Նինվեն, որ հետո Ասորեստանի մայրաքաղաքը պիտի դառնար: Իրենք նույնիսկ Ասորեստանի նախկին բնակիչները եղան, որոնց հաջողեցին սեմականները:

Միտանիները հարձակվեցին իրենց արևմտյան հարևան հաթերի պետության վրա: Սրանք արդեն մտել էին Ասորիք (18-րդ դար) և գրավել Հալեպը, որի վրա աչք ունեին նաև միտանիները: Միտանիները նախ հաթերի ձեռքից գրավեցին Եփրատի շուրջը գտնված երկրները, որոնք միացրին իրենց պետության: Այնուհետև մտան Ասորիք, հաթերին դուրս քշեցին և Հալեպը գրավելով՝ դաշնակից վասալ պետություն դարձրին:

Միտանիների զորությունից վախեցած՝ Ասորեստանը, Բաբե-

լոնը և Եգիպտոսը իրար հետ դաշն կապեցին, միտանիների ուժը խորտակելու համար: Եգիպտացիք մտան Ասորիք, բայց իրենց արշավանքները ետ մղվեցին: Միտանիները գրավեցին Նինվեն և Ասորեստանը հարկատու թագավորություն դարձրին (շուրջ 1 450 թ.), հետո արշավեցին Պոնտոսի վրա, որ հաթերի պետության էր հպատակվում. գրավեցին և վասալ թագավորություն դարձրին: Այսպիսով Միտանի պետությունը տարածվեց Կապադովկիայից մինչև Նինվե և Նինվեից մինչև Սև ծով, իր մեջ պարունակելով Կովկասը, Պոնտոսը, Հայաստանը և Միջագետքն ու Ասորիքը:

Այս ժամանակ Հաթյան պետության գահը բարձրացավ Շուբբիլուլիումաշը (1395-1355 թթ. մ. թ. ա.) դիվանագետ թագավորը, որ Հաթյան դաշնակցական պետության իսկական հիմնադիրը դարձավ: Նա դավադրական եղանակով կարողացավ խռովություն գցել Միտանի պետության մեջ. թագավորն իր որդու ձեռքով սպանվեց և պետությունը երկու մասի բաժանվեց . առաջին՝ Խարրի, որի թագավորն էր Արտատամա Բ-ը, որ տիրում էր Հայաստանի մեծ մասին. երկրորդ՝ Միտանի, որի թագավորն էր Դուշրատտա, որ տիրում էր Հայաստանի հարավարևմտյան մասին, Հյուսիսային Միջագետքին և վասալ պետություններին: Շուբբիլուլիումաշը պետությունն այսպիսի դավադրությամբ քայքայելուց հետո, բարեկամացավ իրեն սահմանակից Խարրի պետության հետ, որպեսզի այժմ էլ Դուշրատտային խորտակի: Դուշրատտան նեղը մնացած, դիմեց Եգիպտոս և իր աղջկան փարավոնին կնության տալով՝ նրա բարեկամությունը և դաշնակցությունը ձեռք բերեց: Մեզ հասել են միտանիների թագավոր Դուշրատտայի գրած յոթը նամակները Եգիպտոսի փարավոնին՝ 17-րդ, 16-րդ դարերից: Այդ միջոցին Ասորեստանը գլուխ է բարձրացնում և վերջապես անկախություն է ձեռք բերում. հաթերն իջնում են Ասորիք և Հալեպն ու Կարկեմիշը գրավելով՝ վասալ պետություններ են դարձնում: Հետո խլում են Միջագետքը և միտանիներին Եփրատի արևելյան երեսն են քշում: Վերջապես գրավում են Պոնտոսը: Եգիպտացիք այս բոլորը տեսնելով՝ ավելի լավ են համարում բարեկամանալ զորավոր հաթերի, քան թե թուլացած ու տկարացած միտանիների հետ: Այսպիսով միտանիների դաշնակցությունը եգիպտացիների հետ ջուրն է ընկնում և ասպարեզը մնում է հաթերին:

8. ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՀԱԹԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ

Երբ հյուքսոսները արշավեցին Եգիպտոս, եգիպտացիք արդեն մեծ քաղաքակրթության էին հասած: Մեր թվարկությունից 5 000 տարի առաջ արդեն հաստատված Նեղոսի հովտում, նախապես բաժանված 40 մանր իշխանությունների, կարողացել էին այնուհետև միանալ և մի՛ ազգ և մի՛ պետություն կազմել: Իրենց փարավոնները նվաճել էին Լիբիան, Նուբիան, Եթովպիան, Արաբիան և ամբողջ Հյուսիսային Աֆրիկային տիրելուց հետո, Սվեզի պարանոցից անցնելով, ոտք էին դրել նաև Սինայի թերակղզին: Ստեղծել էին մի տեսակ գիր, որ ծանոթ է **մեհենագիր** անունով և որով մշակում էին հարուստ մի գրականություն: Եգիպտացիների թագավորները իրենց բոլոր նշանավոր քաղաքները զարդարել էին մեծամեծ շենքերով, պալատներով, տաճարներով, հոյակապ հիշատակարաններով, բուրգերով և սֆինքսներով, որոնք ծածկել էին բազմաթիվ արձանագրություններով: Ժողովրդի կյանքը բարելավելու համար Նեղոս գետի վրա բացել էին ջրանցքներ և ջրամբարներ, դիզել էին անբավ հարստություն և մշակել էին սեփական հարուստ կրոն:

Այսպիսի զորության և փառքի հասնելուց հետո, Եգիպտոսում ծագեցին ներքին կռիվներ և այնքան տկարացրին երկիրը, որ չկարողացավ դիմադրել բարբարոսների արշավանքին և ընկավ նրանց իշխանության տակ:

Բայց եգիպտացիք չձուլվեցին անքաղաքակիրթ հյուքսոսների մեջ. ընդհակառակը իրենց փարավոնները քաշվեցին Եգիպտոսի հարավը և այնտեղ շարունակեցին իրենց գոյությունը՝ շարունակ կռվելով հյուքսոսների դեմ: Եգիպտացիք մոտ 150 տարի մաքառեցին նրանց դեմ և վերջապես կարողացան քշել նրանց դեպի Ասորիք և նրանց ետևից մտան նաև իրենք: Այսպիսով եգիպտացիների առաջ բացվեց աշխարհակալության ասպարեզը:

Ասորիքում երկու քաղաքակիրթ ժողովուրդ կար. փյունիկեցիք և հաթերը: Փյունիկեցիք բնակվելով փոքր ու սահմանափակ մի երկրում, չէին կարողացել մեծ ժողովուրդ դառնալ և աշխարհակալության հետևից ընկնել: Իրենց երկիրը անբեր ու քարքարոտ՝ իրենց ապրուստը հոգալու համար ստիպված էին

նրանք ծովին դիմել: Այսպես ստեղծվեց Փյունիկյան վաճառականությունը, որ համաշխարհային նշանակություն ստացավ: Իրենց փոքր նավերի վրա վստահացած, այս հանդուգն նավորդները ճամփորդում էին Փոքր Ասիայի եզերքները, Կիպրոս, Հոնիական ծովի կղզիները, Հունաստան, Իտալիա, մինչև Աֆրիկա և Իսպանիա, և ամբողջ Միջերկրականի եզերքը գտնված ժողովուրդների հետ հարաբերության մեջ էին: Այս բոլոր երկրներում փյունիկեցիք հիմնել էին բազմաթիվ գաղութներ, որոնց միջոցով սկսեց տարածվել Փյունիկյան քաղաքակրթությունը: Սրանց միջոցով է նույնպես, որ այբուբենը տարածվեց Հունաստան և հետո հռոմեական պետության մեջ:

Բայց փյունիկեցիք, իբրև զենքի գործածության մեջ թույլ ժողովուրդ, չկարողացան արգելք դառնալ եգիպտացիների առաջխաղացության դեպի Ասորիք: Եգիպտացիք նվաճեցին Փյունիկեն և ասորական զանազան ժողովուրդները, որոնցից շատերին իբրև ստրուկ փոխադրեցին Եգիպտոս՝ աշխատեցնելու համար քաղաքների, շենքերի, բուրգերի և տաճարների շինության մեջ: Այսպես հիմնվեց եգիպտական մի մեծ կայսրություն, որ տարածվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Եփրատ գետը:

Այստեղ եգիպտացիք հանդիպեցին հաթերին, որոնք Կիլիկիայի սահմաններում և դրանից դուրս էլ տարածված՝ ուժեղ պետություն էին կազմել: Եգիպտացիների առաջին կռիվները հաթերի հետ Հյուսիսային Ասորիքի սահմաններում՝ հաջող անցան իրենց համար: Բայց հաթերը կարողացան վերջապես դաշնակցություն կազմել Փոքր Ասիայի ժողովուրդների հետ, ոտքի հանել Ասորիքի սեմական ժողովուրդները և նրանց հետ միացած՝ երկար ու կատաղի կռիվ սկսեցին եգիպտացիների դեմ: Եգիպտական արշավանքը կանգնեց և Եփրատից այն կողմ չկարողացավ անցնել: Այնուհետև հաթերը գրավեցին Հյուսիսային Ասորիքը, բայց իրենք էլ չկարողանալով ավելի առաջ երթալ, երկու կողմերն ստիպվեցին բարեկամական դաշն կնքել իրար հետ:

Այսպես ուրեմն եգիպտացիք և հաթերը իրար առաջ կտրելով՝ չթողեցին որ իրենցից մեկը ավելի մեծանար և ձեռք բերեր Ասիայի տիրապետությունը: Իրենց դարավոր պատերազմները ժամանակ տվին արևելքի սեմական ցեղերին՝ ազատորեն զարգանալու և իրենց քաղաքական դերը խաղալու:

9. ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Բավական ժամանակ ելամացիների տիրապետության տակ մնալուց հետո, Արևելքի սեմական ցեղերը կարողացան վերջապես նրանց լուծը թոթափել: Մեր թվարկությունից 2 100 տարի առաջ Համմուրաբին հիմնեց Բաբելոնի թագավորությունը, և ո՛չ միայն կարողացավ հետ քշել ելամացիներին, այլև նվաճեց Ելամը, Քաղդեան և Ասորիքը: Համմուրաբին Արևելքի առաջին և հնագույն օրենսդիրն եղավ. իրանից մնում է 282 հոդվածից բաղկացած սեպագիր մի օրինագիրք:

Համմուրաբիի հաջորդները 150 տարի շարունակեցին իր աշխարհաշեն թագավորությունը և Բաբելոնը շատ առաջ գնաց: Բայց այնուհետև պետության առաջադիմությունը կանգնեց. դրացի ցեղերի ասպատակությունները հետզհետե քայքայեցին այն և չթողեցին, որ նա դառնա մի ուժեղ պետություն:

Գրեթե նույն ժամանակ սկսել էր նաև ընկնել եգիպտական մեծ պետությունը. Փոքր Ասիայի Հնդեվրոպական ժողովուրդների արշավանքները ծովի կողմից, լիբիացիների ասպատակությունները արևմուտքից, Ասորիքից փոխադրված գերիների ապստամբությունները բուն Եգիպտոսում և վերջապես ներքին կռիվները պատճառ եղան, որ ո՛չ միայն եգիպտական մեծ կայսրությունը կործանվեր, այլև ինքը Եգիպտոսը հազիվ կարողանար իր գոյությունը պահպանել: Այս միջոցին է, որ հրեաները, օգուտ քաղելով պետության թուլությունից, կարողացան փախչել Եգիպտոսից և Մովսեսի առաջնորդությամբ Ասիա անցնելով և տեղական մանր-մունր ժողովուրդները նվաճելով՝ հաստատվեցին Պաղեստինում (16-րդ դար):

Մի կողմից եգիպտական պետության անկումը և մյուս կողմից բաբելական պետության թուլացումը՝ ասպարեզ բացին նրա հյուսիսային հարևան Ասորեստանին (Նինվե), որ մեր թվարկությունից առաջ ԺԵ դարում հիմնեց աշխարհակալ մի պետություն և երկու տարվա ընթացքում հետզհետե մեծանալով, նվաճեց Բաբելոնը, Քաղդեան, Ելամը, հաթերի երկիրը և Փյունիկեն: Միտանիների պետությունը ամբողջապես նրա մեջ ձուլվեց: Այսպես կազմվեց Արևելքում Ասորեստանյան միահեծան ու բռնակալ պետությունը (13-րդ դար մ. թ. ա.):

10. ՏԱՅ ԹԱԳՈՒՀԻՆ ԵՎ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆՈՐ ԿՐՈՆԸ

Մեր թվարկությունից առաջ 14-րդ դարում Եգիպտոսում նշանավոր դարձավ Տայ թագուհին, որ հեղինակ է կրոնական մի նոր վարդապետության: Իր ամուսնու վերջին 10 տարիներին ինքն էր կառավարում Եգիպտոսը և աշխատեց իր նոր վարդապետությունը տարածել երկրում: Իր գործը շարունակեց իր որդին Ամենոփիս Դ-ը (1375-1357 մ. թ. ա.), որ կոչվում է նաև Aakr-uen-ato կամ Ikhnaton:

Այս նոր վարդապետության էությունը հետևյալն է. տիեզերքի գերագույն աստվածն էր Aton-ը, որ է Արևի սկավառակը: Նրա ստեղծագործություններն են լույսը, ջերմությունը և կյանքը՝ ամբողջ բնության մեջ: Մարդը կարող է միշտ հաղորդակցության մեջ մտնել այդ գերագույն էակի (Աստուծո) հետ՝ հոգու միջոցով, որ այդ հաղորդակցության ճանապարհն է:

Եգիպտացիների կրոնը մինչև այդ ժամանակ բազմաստվածությունն էր. իսկ այս վարդապետությունը բազմաստվածությունը հերքելով անցնում էր միաստվածության: Դա մի մեծ հեղափոխություն էր կրոնական հասկացողության մեջ, որին պատրաստ չէին ո՛չ ժողովուրդը և ոչ քրմական դասակարգը, որ հակառակ կանգնեց նրան:

Իքնատոն թագավորը իր ամբողջ կյանքը նվիրեց իր վարդապետության տարածման համար: Նա թեև տառապում էր վերնոտության հիվանդությամբ (epilepsia), բայց իբրև բնածին հանճար, իր մորից ստացած փիլիսոփայական գաղափարների շնորհիվ՝ թագավոր ու բռնակալ լինելուց շատ հեռու, բանաստեղծ ու փիլիսոփա էր: Իր քաջալերությամբ ծաղկում են Եգիպտոսում արվեստներն ու գրականությունը, իսկ թագավորական արտաքին շուքը, հաղթությունների ծարավը, զինվորական փառքը և նորանոր նվաճումների ցանկությունը վերանում են: Թագավորն իր նոր կրոնն ընդունող պալատականներին ազնվականության տիտղոս է շնորհում և իրեն հետևող ժողովրդին էլ զանազան դյուրություններ է ընծայում: Եվ որովհետև Թեբայի քրմական դասակարգը հակառակ է կանգնում նոր վարդապետության, ուստի արքունիքը Թեբայից փոխադրվում է Կահիրեից 100 մղոն հեռու մի վայր, ուր շինում է մի նոր և գեղեցիկ քաղաք Akhe-taton (Ատոնի հորիզոն) անունով: Ինչպես այս անունը ցույց է տալիս, քաղաքը նվիրված էր նոր վարդապետության սկզբունք Արև-Ատոնին, որի անունը առել

էր Նույինքն թագավորը:

Բայց այն գաղափարները շատ բարձր էին այն ժամանակվա ըմբռնողությունից: Թագավորի անձնական հմայքն էլ չկարողացավ ազդել: Քրմական դասակարգի դիմադրության վրա ավելացան նվաճված ժողովուրդների ապստամբությունը և հիքքիթական արշավանքները, որով եգիպտական իշխանությունն ստիպվեց ետ քաշվել Արևելքից:

11. ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՀԱԹԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ (ԿԱԴԵՇԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ)

Եգիպտացիների փիլիսոփա թագավորի խաղաղասեր քաղաքականությունը փոխվեց, երբ Եգիպտոսի գահը բարձրացավ Սեթի Ա-ը (1313 թ. մ. թ. ա.): Սա սկսեց ծանր պատերազմների մի երկար շարան, որի նպատակն էր նորից գրավել Պաղեստինը: Այստեղ դեմ առ դեմ ելան եգիպտացիները և հաթերը, որոնց թագավորն էր այն ժամանակ Մուրշիլիշը: Շուտով մեռավ Մուրշիլիշը և նրան հաջորդեց Մուտալլուն: Սա կարողացավ սանձել եգիպտական հարձակումները և ցույց տալ Սեթիին, որ եգիպտացիների կողմից անխոհեմություն է տիրապետության սահմանները մինչև Եփրատ հասցնել: Մեռավ Սեթին և նրան հաջորդեց ռազմասեր Ռամսեսը (Ռամզես) (1292 թ.): Սա հավաքեց ամբողջ եգիպտական ուժերը և արշավեց Հյուսիսային Ասորիք: Մուտալլուն էլ հավաքեց Փոքր Ասիայի և Ասորիքի իր բոլոր դաշնակիցներին (Հալեպ և այլն) և մեծ բանակով դիմեց Ռամսեսի դեմ: Մեծ ճակատամարտը տեղի ունեցավ Կադեշի մոտ, Որոնդես գետի վրա (1287 թ.): Եգիպտական ուժերը գերազանցում էին հաթյաններից: Բայց Մուտալլուն հանկարծական հարձակումով անակնկալի բերեց եգիպտացիներին, որոնց թագավորը Ռամսես հազիվ կարող եղավ փախչելով փրկել իր կյանքը: Հասան եգիպտական նոր ուժեր և Ռամսեսը նոր հարձակման անցավ: Կռվի ելքը սակայն անորոշ մնաց և ո՛չ մի կողմ չէր կարող հաղթող համարվել:

Բայց հիքիթներն էլ ծանր կորուստներ էին կրել. շատ մեծ էր սպանվածների թիվը, որոնց մեջ էր նաև Հալեպի թագավորը: Ամովիրացիք դուրս եկան հաթերի դաշնակցությունից և շատ զորաբաժիններ ապստամբեցին հաթերի դեմ: Մուտալլուն սպանվեց: Նրան հաջորդեց Հաթթուշիլիշ Բ-ը, որ հաշտության դաշինք կնքեց Ռամսեսի հետ: Այս դաշնադրությամբ ամովիրացիք

նորից անցնում էին հաթերին, ներքին ապստամբությունները զսպվում էին և մի երկրից մյուսը ապաստանած ապստամբներն ու փախստական պետական հանցավորները հետ էին հանձնվում:

12. ԹՐԱԿԱՑԻՔ, ՓՈՅՈՒԳԱՑԻՔ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Հնդեվրոպական ժողովրդի երրորդ ճյուղը կազմում են հայերը և հինգերորդ ճյուղը՝ թրակո-փռյուգացիք: Այս երկուսը իրար հետ անձուկ ցեղակցություն չունեն, թեև երկուսն էլ, թե՛ հայերը և թե՛ թրակո-փռյուգացիք հնդեվրոպացի են հավասարապես:

Նախահայրենիքից մեկնելով հայերը Սև ծովի հյուսիսային կողմից անցան և նրա արևմտյան եզերքը քերելով դեպի արդի Բալկանյան թերակղզին առաջացան: Այստեղ մի ժամանակ հաստատվելուց հետո, թերևս թրակո-փռյուգացիներից քշվելով, Փոքր-Ասիա մտան և դեպի Ալիսի հովիտը դիմեցին: Փռյուգացիք մտան հայոց ետևից Փոքր-Ասիա և կենտրոնական մասերը բռնեցին. իսկ թրակացիք մնացին Եվրոպայում, Սև ծովի և Մարմարայի շրջանում, ուր իրենց բնակած երկիրն իրենց անունով կոչվեց Թրակիա: Հաթերի պետությունն արդեն թուլացած լինելով՝ չկարողացան արգելք լինել նորեկներին: Հայերը, որոնց իրենց հարևանները արմեն են կոչում, անցան Ալիս գետը և տարածվեցին մինչև Եփրատ: Այս երկու գետերի միջև գտնված տարածությունը, որ ծանոթ է պատմության մեջ Փոքր Հայք անունով, դարձավ հայոց նոր հայրենիքը, ուր նրանք առանձին պետություն կազմեցին, հարևան ունենալով մի կողմից լյուդացիներին, մյուս կողմից փռյուգացիներին, հաթերին և մյուս փոքրասիական ժողովուրդներին (15-րդ-12-րդ դ. դ. մ. թ. ա.):

Փռյուգացիք յուրացրին հաթյան քաղաքակրթությունը. իրենց թողած հիշատակարանները մինչև մեր թվարկությունից առաջ 1 000 թվականն են հասնում. բայց իրենց պատմությունից մեծ բան հայտնի չէ: Կան միայն մի քանի հատուկտոր տեղեկություններ. իսկ հայոց այս ժամանակի պատմությունից ամենևին տեղեկություն հասած չէ մեզ: Հաթերն իրենց արձանագրությունների մեջ հայոց երկիրը կոչել են **Հայաշա** կամ **Հայասա**. կարելի է հուսալ, որ այդ արձանագրությունների մեջ ապագային գտնվեն ավելի ընդարձակ տեղեկություններ:

13. ՆԱԻՐԻ, ՀՐԵԱՍՏԱՆ, ԴԱՄԱՍԿՈՍ

Այն երկիրը, որ այժմ կոչում ենք Հայաստան, հին ժամանակ բնակված էր առանձին մի ժողովրդով, որ կրում էր խալդի անունը և չէր պատկանում ո՛չ հնդեվրոպական և ոչ էլ սեմական ցեղին: Կովկասյան արդի ժողովուրդների հետ էլ դեռ որևէ կապ չէ գտնված: Երկիրը մի պետություն չէր կազմում, այլ բաժանված էր զանազան իշխանությունների, որոնցից ամենածերն ու նշանավորներն էին՝ 1. Նաիրին, Վանա ծովի հարավային կողմը, 2. Բիայնան, Վանա ծովի արևելյան կողմը, և 3. Ուրարտուն, Վանա ծովի հյուսիսային կողմը: Սրանց ծագումը և նախնական պատմությունը բնավ հայտնի չէ մեզ: Պատմության մեջ առաջին անգամ երևան են գալիս նրանք մեր թվարկությունից առաջ 14-րդ դարում, ասորեստանցիների կռիվների ժամանակ:

Տարածվելով և հաստատվելով Միջագետքում, ասորեստանյան պետությունը անշուշտ ուշադրություն պիտի դարձներ իր հյուսիսային հարևանի վրա: Առաջին թագավորը, որ արշավեց Նաիրի, Սալմանասար Ա-ն է (1330-1316 մ. թ. ա.), որ Տիգրիսի հովիտով բարձրացավ դեպի Տիգրանակերտի դաշտը: Նրա որդին՝ Թիգլաթ-Ադար Ա-ը (1310-1270 մ. թ. ա.), արշավեց Կորդվաց աշխարհը. բայց այս արշավանքները թույլ բաներ էին և հաջորդ թագավորները, իրենց ներքին կռիվներով զբաղված, ստիպված էին մոռանալ Նաիրին:

Ասորեստանցիների պետությունը նորից զորացավ Թիգլաթ-Պալասար Ա-ի ժամանակ (1108-1080 մ. թ. ա.), որ մեծ աշխարհակալ եղավ, երեք անգամ արշավեց Նաիրիի վրա և հասավ մինչև Վանա ծովը, հարկատու դարձնելով այն կողմերի բազմաթիվ մանր իշխաններին:

Սրանից հետո ասորեստանյան պետությունը նորից ընկավ. հարավից ոտքի ելան բաբելացիք և հաղթելով ասորեստանցիներին, ազատեցին իրենց երկիրը: Արևմտյան կողմից հաթերը, դաշնակցելով հարևան ցեղերի հետ, վտարեցին նրանց Ասորիքից: Այսպես Ասորեստանը իրար ետևից կորցրեց իր նվաճած երկրները և հասավ երկրորդական պետության աստիճանին: Ոտքի ելան նաև հրեաները, որոնք մինչև այն ժամանակ որևէ կարևոր դեր խաղացած չէին Պաղեստինում: Նրանք նվաճեցին շրջակա ժողովուրդներին, հիմնեցին անկախ թագավորություն, որի մայրաքաղաքը դարձավ Երուսաղեմը: Դավիթ բանաստեղծ թագավորը և

իր հաջորդը՝ Սողոմոն Իմաստուն (1082-975 մ. թ. ա.), տիրելով գրեթե ամբողջ Ասորիքին, բարեկամական դաշն կնքեցին եգիպտացիների և հաթերի հետ: Եգիպտացիների թույլ վիճակը չկարողացավ արգելք դառնալ նրանց առաջխաղացության և եկավ մի րոպե, երբ հրեաներն էլ մի մեծ պետություն պիտի հիմնեին: Բայց այս ժողովուրդը երկրագործությամբ ու խաշնարածությամբ մեծացած, իր մեջ բազմաթիվ ցեղերի բաժանված, զուրկ աշխարհակալական ոգուց, չկարողացավ օգուտ քաղել առիթից: Սողոմոնի մահից անմիջապես հետո արդեն թագավորությունը երկուսի բաժանվեց և հետզհետե ընկավ: Ասպարեզ իջավ այն ժամանակ Դամասկոսի պետությունը, որ կարճ միջոցում տեր դարձավ հյուսիսային և արևելյան Ասորիքին և մինչև Եփրատ տարածեց իր իշխանությունը: Կռվի բռնվելով հաթերի պետության հետ, Դամասկոսը չկարողացավ ավելի ևս մեծանալ, ինչպես նաև թույլ չտվեց, որ հաթերի պետությունը մեծանար և ընդարձակվեր: Վրա հասան ասորեստանցիները և այս երկու պետություններին էլ վերջ տվին:

Այն միջոցին, որ ասորեստանյան պետությունը ընկնում էր և Բաբելոնը, Ասորիքը, Դամասկոսն ու հրեաները հետզհետե ծաղկում էին, շարժվեց նաև Նաիրին, թոթափեց իրենից հարկատվության լուծը և անկախ սկսեց կառավարվել գրեթե 200 տարի:

14. ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Ասորեստանցիների թուլացած պետությունը նորոգելու ձեռնարկեց Թուգուլթու-Նինիպ Բ-ը (889-885 մ. թ. ա.), որ արշավեց դեպի հյուսիս՝ Նաիրիի երկրները: Նրա հաջորդը՝ Ասուր-Նացիր-Աբալ (885-860 մ. թ. ա.), ավելի զորացավ և Ասորեստանը հասցրեց իր նախկին մեծության և փառքին: Չորս անգամ արշավեց Նաիրիի հարավային և արևելյան մի շատ գավառները, մտավ Կումմուխ, գործեց մեծ անգթություններ, իշխաններին կոտորեց և նրանց փոխարեն իր կողմից կուսակալներ նշանակեց: Այսպես հյուսիսային կողմից իր տերությունն ապահովելուց հետո, Ասուր-Նացիր-Աբալը զենքը դարձրեց դեպի արևմուտք, վանեց հաթերին, անցավ Կարկեմիշը, (արևելյան Հաթական պետության մայրաքաղաքը) նվաճեց հյուսիսային Ասորիքն ու Փյունիկեն և հասավ մինչև ծովը:

Այսպիսի մի մեծ պետություն պահել շատ դժվար պիտի լիներ, քանի որ կազմված էր բազմաթիվ այլազան տարրերից, որոնք հաղ-

թողի հեռանալուց անմիջապես հետո, շարունակ աշխատում էին գլուխ բարձրացնել: Եվ իրոք, Սալմանասար Բ-ը (865-825 մ. թ.ա.) ստիպված է լինում 21 անգամ, այն է իր իշխանության գրեթե յուրաքանչյուր տարին արշավել արևմուտք, ապստամբ հաթերին ընկճելու և իր գերիշխանությունը վերահաստատելու համար: Ասորիքի զանազան ազգերը, այն է Դամասկոսի պետությունը, Փյունիկեն, Սամարայի և հրեաների թագավորությունները, անապատական արաբները և այլն, միացած իրար հետ, կազմել էին մի դաշնակցություն՝ ասորեստանյան լուծը խորտակելու համար: Բայց Սալմանասարը ընկավ նրանց վրա, մի առ մի նվաճեց և Կենտրոնական Ասորիքն էլ իր իշխանության տակ առավ:

Ահա այս ժամանակ երևան եկավ մի նոր դիմադիր ուժ, որ գրեթե 100 տարի շարունակ մաքառեց Ասորեստանի դեմ:

Ընդդիմադիր այդ ուժը Ուրարտուն էր:

15. ՈՒՐԱՐՏՅԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուրարտուն Նաիրիի հարևան երկիրն էր և գտնվում էր Վանա ծովի հյուսիսային կողմը: Այս երկիրը բնակված էր միևնույն խալդյան ժողովրդով, որով և բնակված էին Խալդիաստանի (Քաղդեաստանի) մյուս ժողովուրդները (Նաիրի, Բիայնա և այլն): Ուրարտուի այն ժամանակվա թագավորն էր Արամեն (860-843 մ . թ. ա.): Սա տեսնելով Ասորեստանի հետզհետե աճող զորությունը և Նաիրիի թուլացումը, իր շուրջը հավաքեց Խալդիայի բոլոր հյուսիսային ցեղերը, միացրեց նրանք և կազմելով մի հզոր դաշնակցություն, պատրաստվեց չափվելու ասորեստանցիների հետ: Սալմանասարը, որին երբեք շահավետ չէր այսպիսի մի նոր դաշնակցության կազմակերպումն իր սահմանների վրա, առանց ժամանակ թողնելու, իր թագավորության նույնիսկ առաջին տարին (860 թ.), հարձակվեց Նաիրիի վրա և այնտեղից անցավ Ուրարտու. սակայն առանց կարևոր հաջողություն ունենալու, ետ դարձավ: Երկրորդ անգամ արշավեց Խալդիայի հարավարևելյան կողմից (857 թ.), շատ ավերումներ գործեց, բայց առանց կարողանալու ընկճել Արամեին, Վանա ծովի ափերով դարձավ իր երկիրը: 12 տարի հետո, Սալմանասարը երրորդ անգամ արշավեց Ուրարտյան դաշնակցության դեմ, բայց այս անգամ իր արշավանքը մյուսներից է՛լ ավելի անհաջող անցավ: Արամեն հաջողությամբ

հետ վանեց նրա բոլոր արշավանքները, կազմակերպեց զորավոր մի պետություն և մինչև իր մահը անսասան մնաց:

Ուրարտյան դաշնակցությունը կազմված էր, ինչպես ասացինք, Խալդիայի հյուսիսային ցեղերից և երկրներից. հարավային երկրները, և հատկապես Նաիրին այս դաշնակցությունից դուրս էին մնում: Այս բանը ռազմագիտական տեսակետով մեծ վտանգ էր. նախ որովհետև թույլ Նաիրին անկարող էր միայն իր ուժերով դիմադրել թշնամուն, երկրորդ՝ որ նրա նվաճումը մահացու հարված պիտի լիներ Խալդյան պետության, և երրորդ՝ որ ընդհակառակը Նաիրիի կցումը մեծ ուժ պիտի տար Ուրարտյան դաշնակցության և նրա վրայով Խալդիան ավելի հաջողությամբ պիտի կռվեր իր հզոր ախոյանի դեմ: Այս մտածումներով Արամեի հաջորդները աշխատեցին լրացնել դաշնակցության գործը՝ նրա մեջ առնելով նաև Նաիրին և Խալդիայի մնացյալ մասերը:

Այս նպատակով Սարտուրի Ա-ը (835-820 մ. թ. ա.) իջավ Բիայնա և իր աթոռը դրավ Տուսպա (Վան) քաղաքը, որի բարձրաբերձ և անմատչելի ժայռերի վրա հիմնեց ամուր մի բերդ: Հիմնվելով այս քաղաքի վրա, Սարտուրին անցավ Նաիրի և տիրելով այս երկրին՝ միացրեց իր պետության: Այսպիսով դարձավ իրական սպառնալիք Ասորեստանյան պետության առաջ: Սալմանասարն շտապեց չորրորդ անգամ արշավել Ուրարտուի վրա (832 մ. թ. ա.). բայց այս անգամ չկարողացավ նույնիսկ ոտք կոխել Խալդյան հողի վրա, Սարտուրին վազեց* նրա դեմ, հաղթեց և հետ քշեց դեպի Ասորեստան:

Սարտուրիի սկսած գործն ավելի առաջ տարավ Իսպուինիսը (820-800), որ նույնիսկ իր երկրին սահմաններեն դուրս գալով, առաջացավ Ուրմիայի լճի հարավարևմտյան կողմը, դեպի արդի Ռևանդուզը: Այս կողմի ժողովուրդները ապստամբեցին Ասորեստանի դեմ և Իսպուինիսը միացած նրանց հետ, սպառնում էր նույնիսկ Նինվեի վրա հարձակվել:

Իսպուինիսի ժամանակ սկիզբ առավ նշանավոր կրթական մի գործ. հնարվեց խալդյան բևեռագրական դրությունը: Արդեն Սարտուրին ծանոթանալով ասորեստանյան քաղաքակրթության, նրանցից փոխ էր առել ասորեստանյան բևեռագրական դրությունը և Ասորեստանից վարպետներ բերել տալով՝ բուն Ասորեստանի թագավորների սովորության համաձայն և ասորեստանյան լեզվով

* վազեց - արշավեց (խմբ.):

փորագրել էր տվել իր քաջագործությունները: Այժմ Իսպուինիսը այս գործն ավելի առաջ տարավ: Որովհետև ասորեստանյան բևեռագրական դրությունը չափազանց դժվար էր իր բազմաթիվ գաղափարանշաններով և բազմաձայն տառերով, խալդյան ուսումնականները ըստ հնարավորին պարզեցին այն՝ ավելորդ նշանները ջնջելով և մեկ նռանին մեկ հնչյուն տալով: Այսպիսով կազմվեց խալդյան բևեռագրական այբուբենը, որ համեմատելով ասորեստանյան դրության հետ, նշանավոր առաջադիմություն էր: Իսպուինիսը այնուհետև հրամայեց մի կողմ թողնել ասորեստանյան լեզուն և արձանագրությունները գրել ուղղակի խալտյան լեզվով: Այսպես սկիզբ առավ խալտյան գրականությունը:

16. ԽԱԼԴՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ԱՐԳԻՍՏԻՍ Ա.

Իսպուինիսի հաջորդ Մենուաս Ա-ը (800-780 մ. թ. ա.) շարունակելով երկրի միության գործը, որ սկսել էին իր նախորդները, հասավ Խալդիայի բնական սահմաններին. արևելյան կողմից հասավ մինչև Ուրմիայի լիճը՝ նվաճելով և իր երկրին միացնելով Մաննայի երկիրը, որ մրցակցության առարկա էր դարձել ասորեստանցիների և խալդյանների միջև. արևմտյան կողմից հասավ մինչև Միլետեն (Մալաթիա), հյուսիսից գրավեց մինչև Կարին ու Մասիս, հարավից նվաճեց Մուշը:

Բայց Մենուասը (Մենուան) ոչ միայն աշխարհակալ, այլև աշխարհաշեն թագավոր եղավ. ինքն է, որ մեծացրեց և ընդարձակեց Վան քաղաքը, բազմաթիվ պալատներով ու տաճարներով զարդարեց այն, և այս բոլոր մեծագործությունները պատմեց 50-ի չափ բևեռագիր արձանագրությունների մեջ: Սակայն Մենուասի ամենահոյակապ գործը այն մեծ ջրանցքն է, որ մինչև այժմ էլ մնում է և կոչվում «Շամիրամա առու»: Սա արհեստական ջրմուղ է՝ հեռավոր լեռների մեջ փորված. 80 կիլոմետր երկարություն ունի. իր ամենաչոր ժամանակը 1 վայրկյանում 1 500 լիտր ջուր է տալիս և բազմաթիվ գյուղեր ու մի քանի քաղաքներ ոռոգելուց հետո, թափվում է ծովը: Այս հոյակապ ջրանցքի շինությունը մեզ ենթադրել է տալիս, թե ինչ գեղեցիկ ու մեծամեծ տաճարներ ու պալատներ ևս կառուցած պետք է լիներ Մենուասն իր մայրաքաղաքի և ուրիշ քաղաքների մեջ. բայց այս

բոլորը երկար դարերի ընթացքում և բարբարոսների ձեռքով ավերվել ու անհետացել է:

Իր հոր աշխարհակալական գործերը շարունակեց և ավելի առաջ տարավ Մենուասի որդի Արգիստիս (Արգիշտի) Ա-ը (780-755 մ. թ. ա.), որ Խալդյանների ամենաաշխարհակալ թագավորն եղավ: Արաքսի ամբողջ հովտին տիրելուց հետո, իր իշխանությունն ավելի ապահովելու համար, նա առաջացավ մինչև Արագածի հյուսիսային լանջերը, Սևանա լճի հարավարևմտյան ափը և թերևս մտավ նաև Կուր գետի հովիտը: Արևելյան կողմից հասավ մինչև Ուրմիայի լիճը և Կասպից ծովը. արևմտյան կողմից անցավ Եփրատը, գրավեց Մալաթիան և մտավ հաթերի երկիրը: Հյուսիսային Ասորիքի թագավորությունները ճանաչեցին իր գերիշխանությունը և մասամբ հպատակ, մասամբ հարկատու իշխանություններ դարձան: Ասորեստանցիք չկարողացան խանգարել նրան. իրար հետևից կրկնված նրանց արշավանքներն անհաջող անցան. Արգիստիսը վանեց նրանց մինչև Նինվեի մոտերը և Ասորեստանի մի քանի գավառներն էլ իր իշխանության տակ առավ: Նույն ժամանակ Ասորեստանում ծագեց քրմական դասակարգի ապստամբությունը զինվորական իշխանության դեմ՝ տիրանալու համար իր բռնաբարված իրավունքներին: Ասորեստանը թուլացավ, Ասորիքը ճանաչել էր խալդյանների ուժը, Եգիպտոսը երկրորդական պետության աստիճանին էր հասել և Արգիստիսն էր միայն, որ ազատ ու հպարտ իշխում էր Կասպից ծովից մինչև Տորոսի լեռները և Արագածից մինչև Նինվե:

17. ՀԱԹԵՐԻ ԵՎ ԽԱԼԴՅԱՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ. ՌՈՒՍԱՍ Ա.

Ասորեստանում, կարճատև տիրապետությունից հետո, նորից ընկավ քրմական դասակարգը: Զինվորական իշխանությունը ոտքի կանգնեց, տապալեց այն և հիմնեց նոր կայսերական հարստություն: Այս հարստության զորավոր գահակալն եղավ Թիգլաթ-Պալասար Գ-ը (745-727 մ. թ. ա.), որ Ասորեստանի փառքը նորից տարածելու ելավ: Վտանգը կենտրոնացել էր երեք տեղի վրա. նախ Բաբելոնը, որ իշխանության թուլության օրերին ապստամբելով՝ հիմնել էր բազմաթիվ մանր-մունր անկախ իշխանություններ. երկրորդը խալդյան պետությունն էր և երրորդը

Ասորիքը, որի բոլոր մանր-մունր իշխանությունները միմյանց հետ միացած՝ կազմել էին մի դաշնակցություն՝ խալդյան պետության գերիշխանության կամ հովանավորության տակ:

Թիգլաթ-Պալասարն ընկավ նախ բաբելացիների վրա, միմյանց հետևից նվաճեց նրանց մանր-մունր իշխանությունները և այսպես իր հարավն ապահովելուց հետո, զենքը դարձրեց դեպի խալդյան պետությունը: Բայց որչափ դժվա՜ր էր ասորեստանցիների համար մտնել Ուրարտուի լեռնոտ երկիրը և կռիվ մղել այնպիսի զորավոր թշնամու դեմ, որ իր հետ ուներ նաև Ասորիքի պետությունների դաշնակցությունը: Ճարպիկ ու ռազմագիտական մի քայլով, Թիգ-լաթ-Պալասարը դիմեց նախ արևմուտք, անցավ Եփրատը և մտավ Ասորիք, ուր շատ ավելի հեշտ էր չափվել թշնամու հետ, քան թե լեռնոտ Խալդիայում: Արևմուտքից հասան խալդյանների դաշ-նակից թագավորները, Կումմուխը, Կարկեմիշը, Մալաթիան և խալ-դյանների մյուս հպատակները, հյուսիսից հասավ Սարդուրի Բ-ը (755-730 մ. թ. ա.), խալդյանների հզոր գահակալը: Երկու մեծ պե-տությունների վճռական ճակատամարտը տեղի պիտի ունենար Կումմուխի երկրում, Եփրատ գետի մոտ. նա վճռելու էր, թե ո՞վ էր լինելու գերագույն տիրողը Ասիայում, Ասորեստա՞նը թե Խալդիան:

Սարտուրիի բանակը խորտակվեց ասորեստանցիների զորության առաջ և Սարտուրին փախավ իր երկիրը, և Ասորիքի բոլոր մանր իշխանությունները, Համաթը, Դամասկոսը, Սամարիան, Հրեաստանը ճանաչեցին Ասորեստանի գերիշխանությունը (743 մ. թ. ա.):

Խալդյանների ուժը կոտրել էր, բայց Խալդիան չէր ջախջախվել. և Սարտուրիի հաջորդը Ռուսաս Ա (730-714), ավելի մեծ կորովով, հետամուտ եղավ նորից գերիշխանությունը ձեռք բերելու, կործանված փառքը վերականգնելու: Ճարպիկ քաղաքակա-նությամբ, Ռուսասը մի կողմից առաջանում էր դեպի հյուսիս և գրավեց Սևանի արևելյան կողմի երկրները, Սյունիքը, թերևս նաև մտավ Կուրի հովիտը, իսկ մյուս կողմից իր շուրջը հավաքում էր շրջակա երկրների բոլոր մանր-մունր թագավորությունները: Ասորիքի իշխանությունները, որպես փրկչի, իրեն էին սպասում. այսպես կազմվեց նոր զորավոր մի դաշնակցություն, որի մեջ մտան Ուրմիայի լճի հարավային կողմը գտնված թագավորությունները, Մաննայի մեկ մասը, հաթյան բոլոր ցեղերը, Մարաստանը, Մուսասիրի երկիրը: Մյուս կողմից Ասորիքը կազմել էր մի նոր դաշնակցություն, որի մեջ էին մտնում Համաթը, Դամասկոսը,

Փյունիկեն, Սամարիան, Փղշտացիները, Տյուրոսը, Մովաբի և Ամմոնի փոքր երկրները և Հրեաստանը. այսպես Ասորեստանի ամբողջ սահմանը, Էլամից սկսած մինչև Տավրոս ոտքի էր կանգնել:

Ասորեստանի թագավոր Սարգոնը (722-705 մ. թ. ա.) իր բանակներով սկսեց աջ ու ձախ արշավել և մի առ մի հարվածել այս բոլորին. բայց հազիվ մեկը նվաճված, մյուսն էր ոտքի կանգնում. արշավանքները տարիներ տևեցին և գրավեցին մի քանի ասորեստանցի թագավորների ամբողջ ուշադրությունը. փռյուգացիների Միտա թագավորը պարտվեց, խորտակվեց Մաննայի ապստամբությունը, նվաճվեցին հաթերը և նրանց Կարկեմիշ մայրաքաղաքը գրավվեց (717 թ). հաթերի դարավոր պետությունը, որ մի ժամանակ Եգիպտոսի սպառնալիքն էր, կործանվեց, հաթերը հեռացան իրենց լեռները և պատմության ասպարեզից քաշվեցին:

Կարգը եկել էր Խալդիային: Հաթյան պետությունը կործանելուց հետո, ասորեստանցիք արշավեցին Ռուսասի վրա, որ մեծ զորությամբ գալիս էր իրենց դեմ: Նշանավոր ճակատամարտը տեղի ունեցավ Մաննայում, որտեղ Ռուսասը չարաչար պարտվեց և իր ծրագրերի այսպիսի թշվառ վախճանից հուսահատ՝ անձնասպան եղավ (714 թ.): Այսպես վերջացավ Ասորեստանի և Խալդիայի դարավոր մրցումը. ու թեև խալդյան հաջորդ թագավորները մի քանի թույլ փորձեր ևս կատարեցին նորից ոտքի կանգնելու, բայց անհաջող. Խալդիան ընկավ ու հասավ երկրորդական պետության աստիճանին. իրենց թագավորները խոհեմություն համարեցին քաշվել-ամփոփվել իրենց սահմանների մեջ, երբեմն տարեկան նվերներ ուղարկելով ասորեստանյան թագավորներին՝ հաշտ ու բարեկամ մնալու համար նրանց հետ և իրենց բովանդակ ուշադրությունը դարձնելով Խալդիայի ներքին բարօրության վրա:

Այս վիճակը տիրեց մինչև Կիմմերների արշավանքը, որ վերիվայր շրջեց ամբողջ Առաջավոր Ասիայի բախտը:

18. ԵԳԻՊՏՈՍԻ, ԲԱԲԵԼՈՆԻ ԵՎ ԷԼԱՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Ասորիքի մանր-մունր թագավորություններին տեր դառնալուց հետո, ասորեստանցիների առաջ բացվել էր Եգիպտոսի ճանապարհը, այն երկրի՝ որ մի ժամանակ հասնում էր մինչև Եփրատ և

տակավին Ասիայի գերիշխանությունը ձեռք բերելու փափագից չէր հրաժարվել: Եգիպտոսը չհասավ իր այս փափագին՝ այն ներքին կռիվների պատճառով, որոնք պատառ-պատառ արին եգիպտական փարավոնների պետությունը: Վերջին ժամանակները Եգիպտոսը բաժանվել էր 20 թագավորությունների, որոնք միմյանց դեմ շարունակ թշնամության մեջ էին. նրանցից յուրաքանչյուրն ուզում էր գերիշխանություն ձեռք բերել մյուսների վրա և ընդհանուր Եգիպտոսի տեր դառնալ: Իրենց այս կռիվների մեջ նրանք մինչև անգամ դիմեցին օտարին և հրավիրեցին եթովպացիներին: Սրանք մտան Եգիպտոս և տեղական իշխանությունները միմյանց հետևից նվաճելով՝ Եգիպտոսի գերիշխանությունը իրենց ձեռքը վերցրին:

Եգիպտացիք փարավոնների երկրին տիրանալուց հետո, մտածեցին հասնել նաև այն մեծ փառքին, որին արժանացել էին այդ փարավոնները իրենց մեծամեծ աշխարհակալություններով: Այս նպատակով եթովպացիք սկսեցին դաշինք կապել Ասորիքի մանր թագավորությունների հետ, որոնք շարունակ նեղված ասորեստանյան բռնակալ թագավորների լուծի տակ, կարիքն էին զգում զորավոր մի դաշնակցի օգնության և եգիպտական նախկին փառքից հմայված, կարծում էին, թե նա իրենց փրկիչն էր լինելու:

Ասորեստանյան թագավորները, որոնք տեղյակ էին այս դավաղրության, ատամ էին կրճտացնում Եգիպտոսի դեմ, բայց իզուր: Նրանց ձեռքը կաշկանդվել էր խալդյանների և բաբելացիների շարունակական պատերազմներով, որոնք ավելի վտանգավոր էին Ասորեստանի համար, քան հեռավոր Եգիպտոսի անզոր քայլերը:

Երբ խալտիները նվաճեցին և հաթերի երկիրն ու Ասորիքը Ասորեստանի իշխանության տակ մտան, (ասորեստանցիք) ճանապարհ ընկան դեպի Եգիպտոս: Թեև եթովպական բանակը ջախջախվեց և (ասորեստանցիք) մոտեցան Սվեզի պարանոցին՝ (Սուեզի ջրանցքին) բուն Եգիպտոս մուտք գործելու համար, բայց Բաբելոնում մի նոր և ահավոր ապստամբություն ստիպեց նրանց կիսկատար թողնել իրենց գործը և հետ դառնալ դեպի Բաբելոն: Ասորեստանցիք չարաչար կործանեցին Բաբելոնը և գրեթե հողին հավասարեցրին (689 թ.). այնուհետև նրանք անցան Սվեզի պարանոցից, նվաճեցին Եգիպտոսի թագավորությունները և ամբողջ երկրին տեր դարձան (670 թ.): Բաբելացիք դարձյալ ապստամբեցին. միացավ նաև Ելամը և հետո Եգիպտոսը. եկավ մի պահ, երբ ասորեստանյան պետությունը ծանր ճգնաժամի մեջ էր: Բայց ասո-

ռեստանցիք կարողացան հաջողությամբ այս ճգնաժամն էլ անցնել, նորից գրավեցին Բաբելոնը, նվաճեցին Եգիպտոսը և Ելամը, որի մայրաքաղաքը (Շոշ) հիմնահատակ կործանեցին (640 թ.):

Այսպես վերջացավ համաշխարհային տիրապետության վեճը Արևելքում, Ասորեստանը տիրեց Ելամից մինչև Ալիս ու Սաբոս գետերը, մինչև Լյուդիայի սահմանները (որոնց թագավորները Ասորեստանի հետ բարեկամության դաշինք կապեցին) և Եփրատից մինչև Նեղոս, Աֆրիկայի խորերը:

19. ԿԻՄՄԵՐՆԵՐԻ ԵՎ ՍԿՅՈՒԹԱՑԻՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Կիմմերները հնդեվրոպական մի ցեղ էին, որ բնակվում էին Հարավային Ռուսաստանի տափաստաններում, Ազախու ծովի եզերքներին: Միջին Ասիայից, բարբարոսների մի նոր ցեղ, որ պատկանում է իրանյան ճյուղին և կոչվում Շակ կամ Սկյութացի, մասքութներից քշվելով, ճանապարհ ելավ դեպի արևմուտք: Անցնելով Կասպից ծովի հյուսիսային տափաստաններից, նրանք փռվեցին Վոլգայից մինչև Դոն գետի հովիտը: Այս բարբարոսներից զարհուրած՝ կիմմերները թողին իրենց երկիրը և փախան զանազան ուղղությամբ (950 թ.): Նրանցից մի մասը ապաստան գտավ Ղրիմի թերակղզում, երկրորդ մասը ուղղվեց դեպի արևմուտք, անցավ Դանուբը, մտավ Թրակիա, քշեց այնտեղի հնդեվրոպական ցեղերը դեպի Փոքր Ասիա, որոնց ետևից եկան նաև կիմմերները, անցնելով Բոսֆորը (710 թ.): Կիմմերների երրորդ և ավելի ստվար մասն ուղղվեց դեպի արևելք, անցավ Կովկասյան լեռները և մտավ Անդրկովկաս: Կիմմերների հետևից եկան նաև սկյութացիք և փռվեցին Կուրի հովտում, Ուրարտուում, Մաննայի երկրում՝ մինչև Մարաստան: Հաստատվելով այս երկրներում, սկյութացիք դարձան ճշմարիտ աղետ բոլոր ժողովուրդների համար. նրանց ավազակային խմբերը ամեն տարի ասպատակում էին շրջակա երկրները, ավերում էին, կողոպտում, այրում ու ջարդում: Կիմմերները չդիմելով այս ասպատակություններին, փախան դեպի արևմուտք, անցան Ալիսը, մտան Փոքր Ասիա, այնտեղ գտան իրենց ցեղակիցներին, որոնք Թրակիայի վրայով էին եկել, միացան նրանց հետ և Սև ծովի եզերքներին բնակություն հաստատեցին. նրանց ամենանշանավոր քաղաքներն եղան Սինոպը և Հերակ-

լեան: Իսկ արևելքում մնացած կիմմերները բռնի կերպով միացան ու ձուլվեցին սկյութացիների հետ. և նրանց հետ միասին շարունակում էին իրենց ավազակային արշավանքները դեպի Միջագետք, Ասորիք, Փյունիկե, Պաղեստին և մինչև Եգիպտոսի սահմանը: Բարբարոս և անընդունակ քաղաքակրթության, նրանք ջնջեցին քաղաքակրթական ամեն հետք, որ գտան իրենց ճանապարհի վրա. Ուրարտուն շնչասպառ եղավ նրանց առաջ. փռյուգացիների վերջին թագավոր Միդասը պարտվեց և նրա տերությունը ջնջվեց. լյուդացիք պարտվեցին և նրանց մայրաքաղաք Սարդը գրավվեց. գրավվեցին նաև Մագնեսիա և Եփեսոս հունական քաղաքները. իսկ (ասորեստանցիք) ուրիշ ճար չգտան, բայց եթե դաշնակցել Մաննայի սկյութացիների հետ և նրանց հետ խնամություն հաստատելով հանգիստ փնտրել:

20. ՄԱՐԵՐԻ, ԲԱԲԵԼԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ելամից հյուսիս և արևելք, Իրանի հարթությունների վրա բնակվում էին հնդեվրոպական երկու ժողովուրդներ, որոնք լեզվով ու քաղաքակրթությամբ իրար շատ մոտիկ էին. սրանք էին մարերն ու պարսիկները: Ամեն անկազմակերպ ազգի պես, սրանք էլ բաժանված բազմաթիվ ցեղերի, դեռ քաղաքական մեկ ամբողջություն և ուժ չէին կազմում: (Ասորեստանցիների) թագավորները արշավելով այս ցեղերի վրա, նրանցից մի մաս իրենց հպատակ էին դարձրել, բայց տեղի դժվարության պատճառով, ամբողջ երկիրն իրենց իշխանության տակ չէին առել: Մեր թվարկությունից առաջ 7-րդ դարում մարական և պարսկական ցեղերը կարողացան մեկ իշխանության շուրջը հավաքվել և մեկ պետություն կազմել, որի նշանավոր ներկայացուցիչն եղավ Կիաքսարը: Սա ոչ միայն թոթափեց ասորեստանցիների լուծը, այլև համարձակվեց քայլել Նինվեի դեմ:

Նույն միջոցին վերանորոգության մի լայն շունչ էր անցել նաև Եգիպտոսի վրայից. եգիպտացի իշխան Փռամմետիքը, հոնիացի և կարիացի ծովահենների օգնությամբ, կարողացել էր ասորեստանցի պահապան զորքը քշել երկրից, եգիպտական մանր-մունր

իշխանություններն իր լուծի տակ առնել և նրանցից կազմել մեծ և զորավոր մի պետություն: Նրա հաջորդ Նեքավովը ավելի առաջ տարավ այս գործը և մինչև անգամ Սվեզի պարանոցն անցնելով Ասորիք մտավ:

Ասորեստանցիք տեսնելով որ երկու կողմից պաշարված են, իրենց դաշնակից սկյութացիների օգնությունը խնդրեցին: Սկյութացիք արշավեցին Մարաստան և Կիաքսարն ստիպվեց Նինվեի պաշարումը վերացնելով՝ քայլել նոր թշնամու վրա: Երկու բանակները հանդիպեցին միմյանց Մաննայում կամ Ուրարտուում: Կիաքսարը հաղթվեց և ստիպվեց քաշվել Մարաստան: Սկյութացիք ավարի համն առնելուց հետո, չբավականացան Մարաստանով և ուղղակի դիմեցին Ասորեստան, ասպատակեցին նրա պերճ քաղաքները, ավերեցին ու կողոպտեցին մյուս կողմից իրենց ավազակային խումբերն արշավեցին Ասորիք և մինչև իսկ Եգիպտոս մտնելու պատրաստվել էին, երբ Նեքավովը վրա հասավ, ջախջախեց նրանց ու ետ քշեց:

Այնուհետև դաշնակցություն կազմվեց եգիպտացիների, մարերի և բաբելացիների միջև, որոնց թագավորը նույնպես իրեն անկախ էր հռչակել: Եգիպտացիք գրավեցին ամբողջ Ասորիքը և հասան մինչև Եփրատ, այնտեղ, ուր հասել էին երբեմն եգիպտական մեծ աշխարհակալները: Կիաքսարն իր բանակներն ստվարացնելով, ջարդեց ու ջնջեց սկյութացիներին և նրանց դուրս քշեց Արևելքից: Այսպիսով վերջ գտավ սկյութական վտանգը: Սրանից հետո Կիաքսարը նորից իջավ Նինվե և մի ժամանակ պաշարելուց հետո, գրավեց քաղաքը և այնպես ավերեց, որ այնուհետև հետք անգամ չմնաց այն հոյակապ համաշխարհային քաղաքից (608 թ.):

Այսպես վերջացավ ասորեստանյան բռնակալ պետությունը, որ ութը դար շարունակ ավեր ու սարսափ էր Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների վրա, և, թեև նստած երկու քաղաքակիրթ ժողովուրդների՝ քաղդեացիների և եգիպտացիների միջև, գիտության և քաղաքակրթության շատ սերմեր առած նրանցից, բայց չէր կարողացել այդ քաղաքակրթությունը մշակել ու ծաղկեցնել, և միմիայն մի բանի էր հետևել իր ամբողջ գոյության ընթացքում՝ կոտորած և արյուն ...:

21. ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԵՎ ԲԱԲԵԼԱՑԻՆԵՐԻ ԿՌԻՎՆԵՐԸ, ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐ

Ասորեստանի պետության կործանումով, ասպարեզ դուրս եկան երեք մեծ պետություններ՝ մարերի, բաբելացիների և եգիպտացիների պետությունները: Ասորեստանի պետության նման մի մեծ ավարի բաժանումը այս երեքի մեջ՝ անշուշտ տեղի պիտի տար խոշոր բախումների: Բայց մարերն ու բաբելացիք զգուշացան այս կռիվներից՝ թերևս փոխադարձ երկյուղի պատճառով և Արևելքի այս մասում գոնե, ավելի քան կես դար, խաղաղություն տիրեց: Արդար բաժանմամբ Ասորեստանի պետության հյուսիսային մասը, Նինվե մայրաքաղաքով, անցավ մարերին, իսկ հարավային մասը, Բաբելոն մայրաքաղաքով, անցավ բաբելացիներին: Այսպիսով ամբողջ Քաղդեան, Ելամը և Միջագետքը բաբելացիներին բաժին ընկան: Բայց բաբելացիք չգոհացան այսքանով և իրենց իրավունքն էին համարում նաև Ասորիքը, Փյունիկեն և Հրեաստանը, որոնք գրավել էին եգիպտացիք: Կռիվն սկսվեց եգիպտացիների թագավոր Նեքավովի և բաբելացիների թագավոր Նաբուգոդոնոսորի միջև: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Կարկեմիշում, Եփրատի վրա. եգիպտացիների բանակը չարաչար հաղթվեց և քաշվեց Եգիպտոս: Նաբուգոդոնոսորի առաջ այժմ բացվել էր ճանապարհը, բայց Ասորիքի ժողովուրդների դիմադրությունը շատ համառ եղավ: Նաբուգոդոնոսորը տարիներ վատնեց Երուսաղեմը գրավելու համար, որ վերջապես առավ և հետո, հրեաների կրկնակ ապստամբություններից զայրացած, ավերեց քաղաքը և գրեթե ամբողջ ժողովուրդը գերի քշեց Բաբելոն (588 մ. թ. ա.): Ավելի երկար տևեց Տյուրոսի պաշարումը, որ վերջապես նվաճեց (536 թ.): Մյուս կողմից եգիպտացիք նոր բանակներով գալիս էին բաբելացիների դեմ. կռիվը շարունակվեց երկու կողմից փոփոխակի հաջողությամբ, այնպես որ երկու կողմերը վերջապես հոգնած, հետ քաշվեցին և ամբողջ Ասորիքը մինչև Սվեզի պարանոցը մնաց բաբելացիներին:

22. ՀԱՅՈՑ ՄՈՒՏՔԸ ԽԱԼԴԻԱ

Կիմմերական և սկյութական արշավանքները շատ մեծ աղետ դարձան Խալդիայի համար. Արևելքի բոլոր երկրներն էլ արդարև հավասար չափով տուժել էին նրանցից, բայց և ոչ մեկին հասած

աղետը կարող էր հավասարվել Խալդիայի աղետին, որովհետև մյուս երկրները միշտ ավելի հեռու էին գտնվում, իսկ Խալդիան ուղղակի նրանց բնակավայրը դարձել էր: Խալդիայի երկիրը մեծապես ավերվեց, քաղաքները կործանվեցին, ժողովրդի մի մասը ջարդվեց, մնացած մասը լեռների վրա, ամրապատ վայրերում ապաստան փնտրեց:

Երկրի այս թուլացած ժամանակ երկու նոր թշնամիներ երևացին սահմանների վրա. սրանք էին արևելյան կողմից մարերը և արևմտյան կողմից հայերը: Հայերն անցան Եփրատը, մտան Արածանիի հովիտը. խալդիները, արդեն ուժասպառ, չկարողացան դիմադրել նորեկներին և հետզհետե տեղի տվին նրանց առաջ: Խալդիներն սկսեցին քաշվել դեպի հյուսիս և արևելք. հավաքվեցին նախ Վանա ծովի արևելյան կողմը մինչև Մասիս լեռը, ամբողջ հյուսիսային բարձրավանդակը: Նորեկ հայերը հաստատվեցին նախ Արածանիի ստորին հովտում, բայց քանի խալդիները հետ էին քաշվում, հայերն էլ հետզհետե գրավում էին նրանց թողած վայրերը: Հայերի առաջացման նպաստեցին նաև մարերը, որոնց հետ բարեկամական դաշինք էին կապել նրանք:

Երկու դար տևեց հայերի առաջացումը. այս ժամանակամիջոցին նրանք մի կողմից բարձրանում էին դեպի հյուսիս և արևելք, մյուս կողմից իջնում էին դեպի հարավ. հյուսիսից հասան մինչև Կուրի հովիտը, իսկ հարավից անցան Տավրոսի լեռնաշղթան և հասան Տիգրիսի արևելյան ճյուղը, որ Հայաստանի սահմանն է: Երկու դար տևեց ամբողջ ձուլման գործը. հայերը խալդիներից նվազ քաղաքակիրթ ժողովուրդ էին, ուստի շատ բան ընդունեցին բնիկների քաղաքակրթությունից, ստացան նրանց պետական կազմը, նախարարական կազմակերպությունը, ընդունեցին խալդյանների ազնվական տոհմերին իրենց մեջ, բայց պահեցին իրենց բնիկ լեզուն, որին ենթարկվեցին նաև բնիկները: Դժբախտաբար հայերը չսովորեցին խալդյանների բևեռագրական դրությունը, որ կարող էր նաև հարմարվել իրենց լեզվին, և այս պատճառով շատ ուշ ձեռք բերին գիր և գրականություն:

Պատմության մեջ նկատված երևույթ է, որ երբ մի ազգ արշավում է մի նոր երկիր և նվաճում, այն ժամանակ միայն հարատևում է իր գոյությունը, երբ նվաճված ժողովրդից անկախ և հեռու չի կանգնում, այլ նրանց հետ խառնվում է ու միանում: Հակառակ դեպքում, կգա մի օր, երբ նվաճված ժողովուրդը

կհավաքի իր ուժերը և իր նվաճողներին դուրս կքշի:

Այսպես եղավ նաև Խալդիայում. հայերը մտնելով այս երկիրը, այնպես կապվեցին ու խառնվեցին բնիկների հետ, որ երկու դար հետո արդեն խալդ և Խալդիա չկար, այլ կազմվել էր մեկ ժողովուրդ և մեկ երկիր՝ հայ և Հայաստան:

23. ՄԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԵՐ ԵՎ ԼՅՈՒԴԱՑԻՔ.

Ասորեստանյան պետության հյուսիսային մասին տիրելով, մարերը մի նշանավոր դիրք գրավեցին Արևելքում: Իրենց մայրաքաղաքն էր Եկբատանը, որ ամուր պարիսպներով պատեցին: Կիաքսարը ոչ միայն աշխարհակալ, այլև կազմակերպիչ մի թագավոր դարձավ: Պատմության մեջ քիչ մարդ կարողացել է ցույց տալ այնպիսի գործունեություն, ինչպես Կիաքսարը, որ այնքան կարճ ժամանակում կարողացավ մի մեծ պետություն կազմել և ներսից ու դրսից ապահովել այն: Իր ժամանակ, ինչպես գիտենք, ամբողջ արևելքը տակնուվրա էր եղել կիմմերների և սկյութացիների արշավանքներից: Կիաքսարը կարողացավ քշել այս բարբարոսներին և կարգ ու կանոն հաստատել իր տիրած երկրներում: Այնուհետև Կիաքսարն աշխատեց իր իշխանությունը տարածել արևելք և արևմուտք: Առաջին ժողովուրդները, որոնց նա հանդիպեց իր դեպի արևմուտք ընթացքի մեջ, հայերն ու խալդիներն էին: Հայերը, քաջ ու կռվող ժողովուրդ, մարերի առանձին ուշադրության առարկան դարձան. քիչ ժամանակից բարեկամական կապ հաստատվեց այս երկու ժողովուրդների միջև. Կիաքսարի իշխանության տակ հայերը կազմեցին մի վասալ պետություն. հայերի թագավորները հարկ և զորք էին տալիս մարերի պետության: Մարերն էլ փոխադարձաբար պիտի օգնեին հայերին՝ իրենց տարածման մեջ դեպի Խալդիայի ներսերը: Հայերն այսպիսով միևնույն ժամանակ ընկան մի կողմից խալդյան և մյուս կողմից իրանյան քաղաքակրթության տակ, բայց իրենց ինքնուրույնությունը չկորցնելով՝ ստեղծեցին առանձին հայկական մի քաղաքակրթություն: Մարերը Խալդիայի և Հայոց վրայով անցան դեպի Փոքր Ասիա, ուր հանդիպեցին ուրիշ մի ցեղի՝ լյուդիացիներին:

Լյուդիան Փոքր Ասիայի արևմտյան կողմը ծովամերձ մի երկիր էր, բաղկացած բազմաթիվ մանր իշխանություններից, որոնց

գլուխն էր Լյուդիայի թագավորը և նստում էր Սարդում (Sardes) քաղաքում: Լյուդիան կատարյալ արևելյան պետություն էր՝ հաթյան և ասորեստանյան ազդեցությունների ենթակա: Ինքն անցք չուներ դեպի ծովը, ինչ որ շատ աննպաստ հանգամանք էր ներկայացնում այդ հարուստ երկրի ապրանքները հեռավոր երկրներ արտահանելու համար: Այս պատճառով լյուդիացիք պատերազմ հայտարարեցին դրացի Հոնիայի դեմ, որ Փոքր Ասիայի հունական գաղթականությունների մեջ ամենահարուստն ու ծաղկյալն էր: Մյուս հունական գաղութներն օգնեցին Լյուդիային: Պատերազմը տևեց գրեթե մեկուկես դար և Լյուդիան կարողացավ Հոնիայի ցամաքից մի մաս խլել: Այս հարաբերությունները սակայն ուրիշ մի օգուտ ևս ունեցան. Լյուդիան յուրացրեց հունական քաղաքակրթությունը և Փոքր Ասիայի ծաղկյալ երկրներից մեկը դարձավ: Ինքն էր, որ առաջին անգամ հնարեց դրամի գործածությունը, որ շուտով տարածվեց Արևելք և Արևմուտք: Կիմմերական արշավանքի ժամանակ Լյուդիան էլ ավերվեց և մայրաքաղաքը գրավվեց (652 թ.), բայց լյուդիացիք կարողացան ասորեստանցիների օգնությամբ Փոքր Ասիայից դուրս քշել կիմմերներին, հետո ընկան հունական գաղթականությունների վրա և Զմյուռնիան գրավելով, մինչև ծովը ճանապարհ բաց արին. մյուս կողմից հասան մինչև Ալիս գետի ձախ ափը և այսպիսով կազմեցին մեծ և ընդարձակ մի պետություն: Ալիատտեսը (617-560 թթ.), լյուդական պետության մեծագույն գահակալն եղավ:

Լյուդիայի հարստությունը բնականաբար պիտի գրգռեր մարերի նախանձը. և ահա Կիաքսարը, որ Խալդիայի նվաճմամբ Լյուդիային հարևան էր դարձել, հանկարծ հարձակվեց նրա վրա. պատերազմը տևեց մի քանի տարի. ո՛չ մի կողմ չկարողացավ վճռական հաղթանակ տանել և վերջապես երկուսն էլ ձանձրացած՝ հաշտվեցին միմյանց հետ՝ Ալիս գետը դնելով Մարաստանի և Լյուդիայի սահմանը (585 թ.):

24. ՉԻՆԵՐԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ. ՔՈՒՆԿ-ՖՈՒ-ՑԵ

Քաղաքակրթության այն պայմանները, որ Չինաստանն ստեղծել էր իրեն համար հնագույն ժամանակներից սկսած, երկիրը հասցրին բարօրության մեծ աստիճանի: Բայց ճոխությունը և

հարստությունը մեղկացրին չինական առաքինի բարքերը, նախկին կարգերը մոռացվեցին և երկիրն սկսեց արագորեն դիմել դեպի անկում: Թաթարական մի ցեղ բռնագրավելով չինական գահը, մի կողմից սկսեց թաթարական բիրտ կարգերը մտցնել և մյուս կողմից քայքայեց պետական կազմը: Այդ թաթար բռնակալները իրենց գահը խախուտ զգալով և կասկածելով նորանոր ապստամբություններից, ջանացին ստեղծել իրենց համար նորանոր դաշնակիցներ. սրա համար իրենց բարեկամներին կամ ազդեցիկ իշխաններին տալիս էին առանձին գավառներ և այսպիսով Չինաստանում առաջ եկան 156 փոքր վասալական իշխանություններ, որոնք սկզբում թեև կախված էին մեծ ինքնակալից, բայց հետո անկախություն գտնելով, հետզհետե բաժանվեցին կենտրոնական իշխանությունից: Ավելի փոքր իշխանիկների թիվը հասավ 1 800-ի: Կարծես սրանց անկախության ձգտումը բավական չէր, և ահա յուրաքանչյուրն ընդարձակել ուզենալով իր իշխանությունը՝ պատերազմ հրատարակեց* իր շրջակա վասալների դեմ. այնպես որ երկիրը ներկայացնում էր ներքին անվերջանալի կռիվների ընդարձակ մի դաշտ: Մոտ էր տերության կործանումը: Հարկավոր էր մի նոր շարժում, որ կարողանար փրկել երկիրը:

Այս նոր շարժումը առաջ բերին երկու մեծ իմաստասերներ, որոնք են Լաո-ցե և Քունկ-Ֆու-ցե, երկուսն էլ գրեթե ժամանակակից: Առաջինը՝ Լաո-ցեն, հիմնեց Տաոյական վարդապետությունը (Taoïsme), որի հիմքն է Տաոն (Բանը կամ Գերագույն տիեզերական բանականությունը): Տաոն ամեն բանի սկիզբն է, այն անըմբռնելի, անտեսանելի և անզգալի էությունը, որից կազմված է տիեզերքը: Տաոն ինքը մեկ է, բայց ունի երկու բնություն կամ ձև. հոգեկան աննյութական և մարմնական նյութական. այս երկուսից առաջինն է իր կատարյալ ձևը. սրանից է ծագած մարդը և սրան պետք է ջանա դառնալ, արձակելով իրանից մարմնի նյութական կապերը. նյութական բոլոր կիրքերը և մարմնի զանազան հակումների ոչնչացումը, աշխարհի բոլոր հաճույքներից հրաժարումը և երկնային հոգեկան բնության հայեցողությունը (contemplation) կտրուկ միջոցներ են արժանի լինելու նրան, միանալու նրան և վերստանալու այն հոգեկան երջանիկ կյանքը, որ կոպիտ մարմինը եկավ ապականեց մի պահ: Տաոյական վարդապետությունն ունեցավ բազմաթիվ հետևորդներ և ստեղծեց չինացիների մեջ նոր

* հրատարակեց - հայտարարեց (խմբ.):

հոգևոր բարոյական մի կյանք: Գրեթե նույն ժամանակ ծագեց Քունկ-Ֆու-ցեն (551-478 թթ.) և հիմնեց մի ուրիշ վարդապետություն, որ բարոյական և քաղաքական նշանակություն ուներ միանգամայն: Այս վարդապետության հիմքն են կազմում մարդկանց փոխադարձ պարտքերն ու հարաբերությունները. այսպես՝ թագավորի հարաբերությունը դեպի իր հպատակները, հայրերի հարաբերությունը դեպի զավակները և տղամարդկանց հարաբերությունը դեպի իրենց կանայք: Այս հարաբերությունների կանոնավորությունից է ծագում ամբողջ ազգի և ժողովրդի բաօրությունը. այս բարօրության համար պետք են առաքինություն, մարդասիրություն, արդարություն, հավատարիմ հնազանդություն և ճշմարտասիրություն: Չափավորությունը մայրն ամեն առաքինության: Քունկ-Ֆու-ցեի վարդապետությունը բոլորովին գործնական էր. նա մերժում էր ամեն վերացական տեսություն. պետք է լինել բարի և առաքինի, որովհետև այսպես է պահանջում յուրաքանչյուրի անձնական շահը. նա քարոզում էր. «Արա՛ ուրիշին ա՛յն, ինչ որ ուզում ես, որ նա քեզ անի», բայց ոչ այն մտքով, ինչպես Քրիստոսը պիտի քարոզեր 5 դար հետո, այլ թե՝ «Բարիք արա ուրիշին, եթե ուզում ես, որ նա էլ քեզ բարիք անի»:

Իր այս վարդապետությունը քարոզելու համար Քունկ-Ֆու-ցեն ման եկավ քաղաքից քաղաք, գավառից գավառ, գրեթե ամբողջ Չինաստանը շրջեց. սրա աշակերտների թիվը 3 000-ի էր հասնում, բայց իրապես բոլոր ժողովուրդը իրան աշակերտում էր, որովհետև շատ անգամ Քունկ-Ֆու-ցեն քարոզում էր ուղղակի ժողովուրդին. նրա հռչակը այնքան մեծացավ, որ թագավորներն ամեն կողմից հրավիրում էին նրան իրենց պալատը և մեծամեծ պարգևներ հանձնում. նա եղավ մայրաքաղաքի կառավարիչ, արդարադատության նախարար, իրավունք ունենալով փոխելու հին օրենքները և նորերը նշանակելու: Այս միջոցին Քունկ-Ֆու-ցեն կարողացավ իր գաղափարները տեսականից գործնականի վերածել. նա դարձավ Չինաստանի բարենորոգիչը. նրա վարդապետությունը բարեփոխեց ոչ միայն անհատական կյանքը, այլև նրա հետ ամբողջ Չինաստանի հասարակական կյանքը:

Տառյականությունը կռիվ սկսեց Քունկ-Ֆու-ցեի վարդապետության դեմ. բայց այս կռվի մեջ փոխանակ շահելու, ընկավ, որովհետև պայքարը տարավ նրան դեպի իշխանասիրություն և նախապաշարմունք. Ընդհակառակը Քունկ-Ֆու-ցեի վարդապե-

տությունը մնաց իր առաջին բարոյական մաքրության մեջ և մինչև այսօր էլ չինական հասարակական կյանքի վարիչն է:

25. ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՎ ԲՈՒԴԴԱ

Հնդկաստանի քաղաքակրթությունը չինականից ավելի նոր է. երբ հնդեվրոպացի հնդիկները գաղթեցին Հնդկաստան, այս երկիրը բնակված էր մի սևամորթ ցեղով, որ դեռ բարբարոս և անքաղաքակիրթ վիճակում էր գտնվում. սրանք տրավիտներ էին կոչվում: Գրականությունից բոլորովին զուրկ, նրանք մինչև անգամ կրոնի գաղափարը չունեին: Հնդիկները հյուսիսից դեպի հարավ դիմելով, երկար կռիվներ ունեցան տրավիտյանների հետ, որոնց, վերջապես քշելով թերակղզու հարավային մասը, տիրեցին ամբողջ երկրին: Հնդկաստանն այսօր բաժանված է այս երկու հիմնական ցեղերի միջև. հյուսիսային կողմը բռնում են հնդեվրոպական արիական ցեղերը, հարավային կողմը՝ տրավիտյան ցեղերը:

Հնդկաստանը երկու կողմից ծովով և հյուսիսից Հիմալայան մեծ լեռնաշղթայով պաշարված լինելով, արտաքին հարաբերությունից զուրկ էր. միևնույն ժամանակ երկիրը տաք և շատ բարեբեր լինելով, բնակիչները բավականանում էին նրա առատ արդյունքով և պետք չունեին վաճառականության համար շարունակ այս ու այն երկիրը թափառելու: Ահա այս պատճառով հնդիկները մնացին պարփակված իրենց մեջ և արտաքին աշխարհի հետ հարաբերություն չունեցան: Իրենց քաղաքակրթությունը միայն իրենց գործն է:

Հաստատվելով իրենց նոր հայրենիքում, հնդիկներն սկսեցին քաղաքակրթական մի մեծ գործ. նրանք ոչ միայն կատարելագործեցին գիտությունն ու գրականությունը, պարապեցին լայն աշխարհաշինությամբ, այլև աշխատում էին քաղաքակրթել բարբարոս բնիկներին, տարածելով նրանց մեջ կրոն, գիտություն և գրականություն: Հնդիկները մեծ առաջադիմություն կատարեցին մանավանդ փիլիսոփայական գիտությունների մեջ և ծնունդ տվին զանազան խորախորհուրդ վարդապետությունների: Հնդկական կյանքի հնագույն շրջանի արտադրությունն է Վեդան, հնդիկների Ս. Գիրքը, որ կրոնական, բանաստեղծական ու փիլիսոփայական մի գոհար է և որի անվամբ էլ այդ հին շրջանը կոչվում է Վեդայական շրջան:

Հայտնի չէ, թե երբ է գրված Վեդան. ենթադրվում է միայն, որ նրա

հնագույն մասերը մեր թվարկությունից առաջ 1000 թվականից են:

Վեդան ներկայացնում է հնդկական նահապետական կյանքը, իր անխառն պարզության մեջ. կրոնը բնապաշտական է: Ավելի հետո, երբ հնդիկները աշխարհակալությամբ տիրանում են երկրին, նախկին նահապետական կյանքը վերանում է և տեղի է տալիս նոր հասարակական ու քաղաքական բարդ կազմակերպության: Հնդկաստանը բաժանված է զանազան թագավորությունների, որոնք մեկ կրոնով ու լեզվով միացած՝ մեկ ամբողջություն են կազմում: Ժողովրդի մեջ առաջ է եկել դասակարգային բաժանում՝ կրոնական, զինվորական, աշխատավոր և ստրուկ: Առաջին երկուսը արտոնյալ դասակարգերն են, վայելում են անսահման ազատություն և ապրում մյուսների հաշվին. աշխատավոր դասակարգը պարտավոր է հերկել հողը, արհեստներ գործել, վաճառականությամբ պարապել, իսկ ստրուկ դասակարգի պարտականությունն է ծառայել բոլորին. նա զրկված է ամեն իրավունքից և չի կարող ունենալ առանձին սեփականություն և ամենքից արհամարհված է:

Դասակարգերի այս բաժանումը և նրանց փոխադարձ պարտավորությունները որոշելու համար կազմակերպվել է նոր կրոնական վարդապետություն, որ է **Բրահմանականությունը:** Այս կրոնը, թեև հիմնված շատ մաքուր բարոյական սկզբունքների վրա, բայց չկարողացավ մտցնել ժողովրդի բոլոր խավերի մեջ հավասարության և եղբայրության սկզբունքը. ընդհակառակը, դասակարգերի բաժանումն ավելի խորացրեց:

Բրահմանականության խստությունը ծնունդ տվեց բարոյական մի նոր վարդապետության, որ ժամանակակից է չինական կրոնական շարժման և որի հիմնադիրն է Բուդդան (մեռած 477 մ. թ. ա.): Այս վարդապետության էական սկզբունքն այն է, որ մարդկային կյանքը տանջանքների ամփոփումն է. ամենայն ինչ ունայնություն է: Ծեսերն ու կրոնական արարողությունները չեն փրկում մարդուն, այլ պետք է սրտի մաքրություն և բարոյականություն: Երջանկության հասնելու համար մարդ պետք է ուրանա աշխարհը, մտասուզությամբ սպանի իր բոլոր ցանկությունները և զգայական կրքերը, փառասիրությունն ու հաճույքը, անտարբերությամբ դիտի ամեն ինչ, բարին ու չարը, լավն ու վատը, մոռանա գոյության, ձևի, ժամանակի և տարածության գաղափարները: Այն ժամանակ կհասնի հոգու անէության, որ է Նիրվանա:

Բուդդայական կրոնը մեծ հաջողություն ունեցավ. դա արդյունքն էր հնդկական երկրի ճոխ բնության և մեղկ բարքերի: Բացվեցին բազմաթիվ վանքեր և աշխարհից հեռացող ճգնավորների ահագին մի թիվ, քաշված նրանց մեջ, կյանքն անց էր կացնում ծուլության և անգործության մեջ: Բուդդայականությունը, շնորհիվ թագավորների պաշտպանության, տակավ առ տակավ ծավալվեց և բռնեց ամբողջ Հեռավոր Արևելքը:

26. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Այն ժամանակ, երբ ծագում էր մարական պետությունը, Ելամի արևելյան կողմում էլ ծագում էր մի ուրիշ պետություն. պարսիկներն էին սրանք, որ մարերի գերիշխանության տակ հպատակ կամ վասալ մի թագավորություն կազմեցին: Կարճ ժամանակում այս թագավորությունը զորացավ. իրենց թագավորը Կյուրոս, օգուտ քաղելով մարերի թագավորի թուլությունից, հանկարծ արշավեց նրա վրա, հաղթեց և մարերի պետությունը կործանելով, հիմնեց Մեծ պարսկական պետությունը, որ միանգամից ժառանգեց Պարսից ծոցից մինչև Ալիս գետը գտնված ահագին երկրներն ու ժողովուրդները (549 մ. թ. ա.):

Այս ահագին պետության հիմնարկությունը դարձավ մի ահավոր վտանգ բոլոր հարևան պետությունների համար: 585 թվականի դաշնադրությունից հետո, լյուդիացիք, մարական վտանգից ազատ, մի նոր արշավանք էին սկսել Փոքր Ասիայի ժողովուրդների վրա, հետզհետե նվաճել էին Մյուսիան, Բյութանիան, Պափլագոնիան, Փռյուգիան, Պամփյուլիան, Լիկայոնիան, և առհասարակ ամբողջ Փոքր Ասիան, որ տարածվում էր Սև ծովի, Ալիսի ու Միջերկրականի միջև, ընկել էր նրանց իշխանության տակ (բացի Լյուկիայից և Կիլիկիայից): Կրեսոսը, որ այն ժամանակ Լյուդիական այս մեծ պետության ինքնակալն էր, պարսկական վտանգին դեմ դնելու համար, կարողացավ կազմել մի դաշնակցություն, որի մեջ մտան Եգիպտոսը, բաբելացիներն ու մասամբ հույները: Բայց Կյուրոսը հանկարծակի վրա հասավ, ջարդեց Կրեսոսի բանակները, գրավեց մայրաքաղաքը և կործանեց Լյուդական պետությունը, առանց մինչև անգամ ժամանակ տալու դաշնակիցներին, որ Լյուդիային օգնության հասնեին (546 թ.): Այնուհետև պարսիկներն սկսեցին իրենց իշխանությունը տարածել ավելի հեռու. Փոքր-Ասիայի բոլոր

իշխանություններն ընկան նրանց լուծի տակ, հույն գաղթականություններն իրենց հպատակությունը հայտնեցին, արևելքից նվաճեցին Բակտրիան, Սոգդանիան, մինչև Սիբիրի անապատները, և մինչև Չինաստանի ու Հնդկաստանի սահմանները. 538 թվականին ընկավ Բաբելոնը և ամբողջ նրա հպատակ ժողովուրդները՝ մինչև Միջերկրական ծովը, մտան պարսիկների գերիշխանության տակ. մնացել էր միայն Եգիպտոսը, որ նույնպես կարճ դիմադրությունից հետո, ճանաչեց պարսիկների իշխանությունը (525 թ.):

Եգիպտոսին տիրելուց հետո, պարսիկները որոշեցին արշավել դեպի արևմուտք, Կարկեդոնի վրա, որ Փյունիկյան մի հզոր գաղթականություն էր Աֆրիկայի ու Եվրոպայի ծովային վաճառականության, և երկրորդ՝ դեպի հարավ, Եթովպիայի վրա, որ Եգիպտոսից անկախ մի պետություն էր կազմել: Առաջին բանակը, որ դեպի արևմուտք էր գնում, կորավ անապատում. պարսիկները կարողացան նվաճել Նուբիայի մի քանի մասերը միայն և դրանից այն կողմ չկարողացան անցնել: Ավելի մեծ եղավ նրանց հաջողությունը Հնդկաստանում, ուր պարսիկներն անցան Ինդոս գետը և նրա մոտ գտնված ընդարձակ գավառները միացրին իրենց իշխանության:

Այսպես, 40 տարի միայն անցել էր այն օրից, երբ պարսիկները ելել էին աշխարհակալության և այդ 40 տարվա ընթացքում կազմել էին մի այնպիսի պետություն, որին ո՛չ մի ազգ չէր հասել մինչև այն ժամանակ: Ասիայի և Աֆրիկայի բոլոր ծանոթ երկրները ընկել էին նրանց իշխանության տակ. բնական անանցանելի պատնեշներ միայն, ինչպես հյուսիսից Կովկասյան լեռները կամ Սիբիրի տափաստանները, հարավից Միջին Աֆրիկայի անծանոթ անապատները, Արևելքից Հնդկաստանի անծանոթ դաշտավայրերը, արգելք էին լինում այս աշխարհակալ պետության՝ ավելի հեռուները ընդարձակվելու: Եվ միայն Հունաստանն էր, որ ծովից այն կողմ կանգնել էր իր ամբողջ հմայքով և որի հետ բախվելու օրերն արդեն եկել էին:

27. ՀԱՅԵՐԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ.

Մարերի պետության կործանմամբ և նրա տեղը պարսիկների պետության անցնելով, Արևելքում մեծ փոփոխություններ չառաջացան. կարծես մի պետություն չէր որ փոխվում էր, այլ թագավորական մի ցեղ: Այն բոլոր ազգերը, որ հպատակ էին

մարական պետության, ամբողջությամբ անցան պարսիկների պետության և շարունակեցին նույն հպատակությունը:

Այսպես եղավ նաև Հայաստանը:

Հայերը մարերի իշխանության տակ ամենայն հանդարտությամբ ապրելուց հետո, նույն հանդարտությամբ շարունակեցին ապրել պարսիկների Կյուրոս և Կամբյուս թագավորների ժամանակ (549-522 թթ.): Բայց Կամբյուսի մահից հետո, երբ Պարսկաստանում ծագեցին գահակալական կռիվներ և պետության մի ծայրից մինչև մյուս ծայրը՝ Բաբելոն, Շոշ, Մարաստան, Ասորեստան, Պարթևաստան, Սագաստան և նույնիսկ Պարսկաստան ապստամբության դրոշը բարձրացրին, հայերն էլ ապստամբեցին պարսկական կենտրոնական իշխանության դեմ: Այս ապստամբությունները երկար չտևեցին. պարսիկների նոր և հզոր գահակալը՝ Դարեհը (521 թ.), արագորեն հարձակվեց աջ ու ձախ և բոլոր ապստամբ երկրները նվաճեց:

Բայց Հայաստանի նվաճումը շատ հեշտ չեղավ. Դարեհն ստիպվեց իրար հետևից չորս ճակատամարտ մղել հայոց դեմ (520 թ.), որոնք քաջությամբ կռվելով, քշեցին պարսկական բանակներն իրենց երկրի սահմաններից դուրս և մինչև անգամ մտան Ասորեստան: Վերջապես հինգերորդ ճակատամարտում Դարեհը նվաճեց հայերին, և Հայաստանը նորից իր տիրապետության տակ առավ (519 թ.):

Այս ժամանակ հիշվում է նույնիսկ մի հայ՝ Արախ, որ բաբելացիների ապստամբության գլուխն է անցնում, գրավում է քաղաքը և իրեն Բաբելոնի թագավոր հռչակում: Դարեհն արշավում է նրա վրա և նվաճում (516 թ.):

Դարեհն իր լայնածավալ պետությունը կանոնավոր կերպով կառավարելու և դժգոհությունների տեղիք չտալու համար, ընդունեց առանձին երկրների ներքին ինքնավարության դրությունը: Ամբողջ պետությունը բաժանեց սատրապությունների և յուրաքանչյուրի վրա իբրև բարձրագույն կառավարիչ նշանակեց մի սատրապ. սա թագավորի ներկայացուցիչն էր այն երկրում և ուներ մինչև իսկ դրամ կտրելու իրավունք: Նրա հավատարմության վրա հսկելու համար, դրվել էին նաև երկու բարձր պարսիկ պաշտոնյաներ: Յուրաքանչյուր սատրապություն վճարում էր որոշ տուրք պետական գանձարանին: Սատրապությունների թիվը ժամանակի համեմատ փոփոխված է. սկզբնական շրջանում 23

սատրապություն կար, որոնցից 11-ը էր Հայաստանը, որ տալիս էր տարեկան 30 000 մտրուկ և 400 տաղանդ արծաթ հարկ: Սատրապություններից երկուսը առանձնաշնորհված էին և առանձին թագավորություն էին համարվում. սրանք էին՝ Հայաստանը և Պոնտոսը, որոնց սատրապները նաև թագավոր էին կոչվում և որոնց մոտ իբրև հսկող պարսիկ պաշտոնյաներ չկային:

Այս վիճակը տևեց մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակը:

28. ՀՈՒՅՆԵՐԻ ԱՆՑՅԱԼԸ

Հույները կամ հելլենները հնդեվրոպական պատերազմիկ մի ցեղ էին, որ իրենց նախահայրենիքից գաղթելով դեպի հարավ, բնակվեցին նախ Հունաստանի հյուսիսային երկրները: Մեր թվարկությունից 11 դար առաջ հույները շարժվեցին դեպի ավելի հարավ, մտան Հունաստան և քշելով տեղաբնիկ ժողովրդին, որ Պելասգ անունն էր կրում, ամբողջ երկրին տեր դարձան:

Հունաստանը լեռնոտ երկիր է, որ ներկայացնում է բնական սահմաններով շրջապատված բազմաթիվ անջատ գավառներ: Այս գավառների մեջ ցրվելով, հույն ժողովուրդն էլ կազմեց բազմաթիվ անջատ ու անկախ իշխանություններ, որոնց միակ կապը հունարեն լեզվի միությունն էր: Իբրև աղքատ երկիր, Հունաստանը չպիտի կարողանար բավարարել ժողովրդի պահանջները. հետևաբար նրանք ստիպվել էին իրենց ուշադրությունը դարձնել դեպի ավելի հեռուները. ծովը և մոտակա բազմաթիվ կղզիները նոր ասպարեզ էին բաց անում նրանց առաջ: Այսպես հույները դարձան ծովագնաց բախտախնդիր վաճառական մի ժողովուրդ և մեր թվարկությունից առաջ 11-ից 6-րդ դարերին հիմնեցին բազմաթիվ նորանոր գաղթականություններ: Հույները նախ անցան Արշիպեղագոսի կղզիները, հետո մտան Փոքր Ասիա, ուր հիմնեցին նշանավոր գաղթավայրեր, ինչպես Զմյուռնիան, Եփեսոսը, Միլետը և այլն. ավելի հետո նրանք տարածվեցին Սև ծովի և Մարմարայի ափերին, Աֆրիկա, Իտալիա, Սիկիլիա, Գաղղիա և Իսպանիա: Այս ժամանակից են մնացած Սինոպ, Կերչ, Բյուզանդիոն, Սիրակուսա, Մարսել և այլ քաղաքները: Այսքան երկրների և ժողովուրդների հետ հարաբերության մեջ մտնելով, հույները ծանոթացան եգիպտական, փյունիկյան և ասորեստանյան քաղաքակրթության, որ յուրացրին և ավելի ծաղկեցնելով, դարձան հին աշխարհի ամենաքաղաքակիրթ և ամենալուսավոր ժողովուրդը:

Հունական իշխանությունների մեջ ամենից ավելի անվանի դարձան Սպարտան և Աթենքը: Սպարտան մեր թվարկությունից 9 դար առաջ նշանավոր օրենսդիր Լիկուրգոսի ձեռքով հիմնեց մի տեսակ ազատական կառավարություն, ուր թագավորի իշխանությունը բոլորովին սահմանափակված ու հանձնված էր ժողովրդից ընտրված մի մարմնի: Նույն Լիկուրգոսի խիստ օրենքներով Սպարտան դարձավ զուտ զինվորական մի կազմակերպություն և իր հարևան իշխանությունները նվաճելու ձեռնարկեց: Տեղի ունեցան տաք ու երկար կռիվներ, որոնք հայտնի են պատմության մեջ Մեսսենական կռիվներ անվամբ (743-668 մ. թ. ա.) և որոնց մեջ վերջապես հաղթական դուրս գալով Սպարտան՝ տիրապետեց գրեթե ամբողջ Պելոպոնեսին:

Սպարտայի մրցակիցն էր Աթենքը, որ իր իմաստուն օրենսդիր Սոլոնի ձեռքով ստեղծեց Սպարտայից ավելի ազատական մի կառավարություն (594 թ.) և որ ավելի զարգացրեց Կլիսթենեսը (506 թ.): Այս կարգերով պետական իշխանությունը բոլորովին սահմանափակվեց և հանձնվեց ո՛չ թե ազնվապետական մի մարմնի, ինչպես էր Սպարտայում, այլ հասարակության լայն խավերին: Սպարտան, որ արդեն հասել էր Աթենքի սահմանները, օգուտ քաղելով Աթենքի ազնվականների հարուցած խռովություններից ժողովրդի դեմ, իր դաշնակիցներով մտավ Աթենք և զենքի ուժով ցանկացավ իրեն հպատակեցնել: Բայց աթենացիք հաղթեցին և սպարտական զորքը երկրից դուրս քշեցին:

Կացությունն այս վիճակումն էր, երբ ծագեցին հույն-պարսկական պատերազմները:

29. ՀՈՒՅՆ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Ամբողջ Փոքր Ասիային և այնտեղի հունական գաղութներին տիրելուց հետո, պարսիկները մտածեցին արշավել Հունաստան: Երկու ճանապարհ կար. առաջինը ծովային շատ կարճ ճանապարհն էր՝ Հոնիայի եզերքից՝ Արշիպեղագոսի կղզիների միջից ուղղակի դեպի Ատտիկե, որ սակայն պահանջում էր մեծ նավատորմիդ. իսկ երկրորդը՝ ցամաքային ճամփան, որ Թրակիայի և Մակեդոնիայի վրայով իջնում էր Հունաստան: Այս վերջինը թեև շատ երկար, բայց ավելի հարմար էր պարսիկների համար, որոնք նավատորմիդ չունեին, բայց ունեին ցամաքային հսկա բանակ:

Պարսիկներն ընտրեցին ցամաքային ճանապարհը, սակայն սա

էլ իրենց դեմ հանում էր երեք նոր թշնամիների՝ թրակիացիներին, սկյութացիներին և մակեդոնացիներին, որոնք գտնվում էին նրանց ճանապարհի վրա: Պետք էր խորտակել նախ սրանց ուժը:

508 թվականին պարսիկների Դարեհ թագավորը 800 000 զորքով անցավ Բոսֆորը, գրավեց Թրակիայի մի մասը, անցավ Դանուբը, մտավ մինչև Ռուսիայի խորքերը, ջարդեց և ավերեց Դանուբից մինչև Դոն գետը գտնված սկյութացիներին և ետ դարձավ: Սկյութացիք փախան ավելի հյուսիս, Թրակիան նվաճվեց և Մակեդոնիան հարկատու դարձավ:

Այս միջոցին Աթենքի ժողովրդական հասարակապետությունից վռնդված ազնվականները, որոնց գլուխն էր գտնվում Հիպպիասը, իշխանություն ձեռք բերելու համար դիմեցին պարսիկներին: Դարեհը սիրով ընդունեց առաջարկը. այժմ արդեն կարելի էր հունական նավատորմիղով Հունաստանը նվաճել: Դարեհը բռնեց առաջին ծովային ճանապարհը, նվաճեց Արշիպեղագոսի գլխավոր կղզիները, երբ հանկարծ, Աթենքի դրդումով և օգնությամբ, Փոքր-Ասիայի ամբողջ հունական գաղութներն ապստամբեցին: Դարեհը 6 տարի վատնեց այս ապստամբությունը զսպելու համար: Այնուհետև Հիպպիասի առաջնորդությամբ, ծովային ճանապարհով արշավեց Հունաստան. Մարաթոնի դաշտում աթենացիների 11000-անոց բանակը՝ Միլտիադեսի առաջնորդությամբ, ջախջախեց պարսիկների 100000 զորքը և Հունաստանից հետ քշեց: Այստեղ երևան եկավ ազատական կարգերով օժտված եվրոպական քաղաքակրթության առավելությունը ասիական բռնակալության դեմ (490 թ.):

Դարեհը քաշվելով Ասիա, սկսեց պատրաստել մի նոր բանակ՝ առաջինից ավելի զորավոր, և երբ մտադիր էր ճանապարհ ընկնել, հանկարծ պայթեց եգիպտացիների ապստամբությունը՝ իբրև հետևանք Մարաթոնի պարտության. Դարեհի մահն էլ վրա հասավ, և ասպարեզն անցավ Քսերքսեսի ձեռքը (485):

Չորս տարի տևեց, մինչև որ Քսերքսեսը կարողացավ ընկճել Եգիպտոսը. սրանից հետո ապստամբեց Բաբելոնը, որ նույնպես ընկճելուց հետո, 1 700000 զորքով և ահագին նավատորմիղով արշավեց Հունաստան՝ Հելլեսպոնտոսի վրայով (480 թ.): Այսքան մի մեծ բանակ դեռևս չէր տեսնվել աշխարհի վրա. ամբողջ Առաջավոր Ասիան Եվրոպայի դեմ էր ելած. նրա մեջ էին նաև հայերը, իրենց հատուկ փռյուգական զգեստներով և առանձին հրամանատարով:

Պարսկական արշավանքի սպառնալիքի տակ, հունական բոլոր իշխանությունները մոռացան իրենց ներքին կռիվները և կազմեցին ընդհանուր դաշնակցություն: Իրենց տկար ուժով պարսիկների ահագին զորության դիմադրելու միակ միջոցը կիրճերն ու նեղուցները բռնելն էր: Սպարտացիների Լեոնիդաս թագավորը սակավաթիվ քաջերով բռնեց Թերմոպիլեի կիրճը, որով պարսկական բանակը Թեսալիայից Հունաստան էր մտնելու: Պարսկական բանակն անզոր եղավ այս մի բուռ քաջերին դիմադրելու. և միայն մի դավաճանի ցուցմունքով կարողացավ հույների թիկունքն անցնել: Լեոնիդասն իր բոլոր ընկերներով մահ գտավ այնտեղ և Քսերքսեսը նրանց դիակների վրայով մտավ ներս, Աթենքը կործանվեց և հույները քաշվեցին Կորնթոսի պարանոցը: Պարսիկների կապը մայր ցամաքի հետ կտրելու համար, հունական նավատորմիղը Թեմիստոկլեսի առաջնորդությամբ բռնեց Կորընթոսի մոտ Սալամինեի նեղուցը, ուր պարսկական խոշոր նավերը դյուրություն չունեին շարժվելու հունական փոքրիկ ու ճարպիկ նավերի առաջ: Պարսկական նավատորմիղը խորտակվեց և Քսերքսեսը չհանդգնելով հարձակվել Կորնթոսի պարանոցի վրա, փախավ Ասիա, Հունաստանում թողնելով 300 000 զորք միայն՝ կռիվը շարունակելու համար: Հույները հարձակվեցին նաև այս մնացորդի վրա. Կորնթոսի հյուսիսային կողմը, Պլատեայում ջախջախվեց պարսկական ցամաքային բանակը, իսկ Փոքր Ասիայի եզերքում, Միկալե հրվանդանի առաջ, խորտակվեց պարսկական նավատորմիղը: Թեսալիան, Մակեդոնիան և Թրակիան թոթափեցին հպատակության լուծը. Աթենքը վերակառուցվեց և Արիստիդեսի գլխավորությամբ կազմեց զորավոր մի դաշնակցություն, որի մեջ մտան Արշիպեղագոսի կղզիներն ու Փոքր Ասիայի հունական գաղութները, և հզոր մի նավատորմիղ կազմելով, ձեռք բերին ծովերի ազատությունը: 466 թվականին Կիմոնը ոչնչացրեց պարսկական նավատորմիղը, ոտք դրեց Կիպրոս կղզում, ապստամբեցրեց Եգիպտոսը և այնտեղից դուրս քշեց պարսիկներին, որոնք այսպիսի մի մեծ երկիր կորցնելու երկյուղով՝ ստիպվեցին հաշտվել հույների հետ այն պայմանով, որ Փոքր Ասիայի հունական քաղաքները ազատ լինեին և ոչ մեկ պարսկական նավ իրավունք չունենար մտնելու հունական ջրերը (449 թ.):

Այսպես վերջացավ հույն-պարսկական պատերազմների առաջին շրջանը:

30. ՊԵՐԻԿԼԵՍԻ ԴԱՐԸ ԵՎ ՊԵԼԵՊՈՆԵՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Պարսկական պատերազմներից հանգիստ գտնելով, Աթենքը, որ Հունաստանի գերիշխանությունը ձեռք էր բերել, կարողացավ նվիրվել քաղաքակրթության գործին: Նշանավոր մի գործիչ՝ Պերիկլեսը, կանգնեց այս շարժման գլուխը. Աթենքն ստեղծեց բոլորովին ժողովրդական մի կառավարություն և այնպիսի ազատ կարգեր, որոնք ոչ միայն գոյություն չէին ունեցել հին աշխարհի որևէ մի անկյունում, այլև արդի ամենաազատամիտ պետության նախանձը կարող էին շարժել: Գիտության և գեղարվեստի մեծամեծ հանճարներ, խմբված Պերիկլեսի շուրջը, այնպիսի մեծության հասցրին հունական կյանքը, որ այնուհետև հույնը գիտության դայակը կոչվեց և մինչև հիմա էլ արժանի է մեր հիացմունքին: Եսքիլեսը, Սոփոկլեսը, Եվրիպիդեսը՝ ողբերգության մեջ, Արիստոֆանը՝ կատակերգության մեջ, Հերոդոտոսը և Թուկիդիտեսը՝ պատմության մեջ, Անաքսագորասը և Սոկրատը՝ փիլիսոփայության մեջ, Փիդիասը՝ արձանագրության մեջ, Մնեսիկլեսը՝ ճարտարապետության մեջ, ինքը Պերիկլեսը և Լյուսիասը՝ ճարտասանության մեջ առաջին մեծ վարպետները եղան: Եվ մեր թվարկությունից առաջ 5-րդ դարը, երբ ծաղկեցին այս բոլոր հանճարները, իրենց նշանավոր առաջնորդի անվամբ կոչվում է Պերիկլեսի դար և հունական պատմության ոսկեդարն է:

Աթենքի այս նյութական, բարոյական ու քաղաքակրթական առաջադիմությունը շարժեց իր մրցակից Սպարտայի նախանձը, որ զենքի ուժով ուզեց խլել Հունաստանի գերիշխանությունը աթենացիների ձեռքից: Այսպես սկսվեց Պելեպոնեսյան պատերազմը, որ Հունաստանի կործանման պատճառը դարձավ և մղվելով նույնիսկ Պերիկլեսի ոսկեդարում, մեծագույն նախատինքն է հունական պատմության:

Ամբողջ Հունաստանը բաժանվեց երկու թշնամի բանակի. Պելեպոնեսն անցավ Սպարտայի կողմը, իսկ Արշիպեղագոսի, Սև և Մարմարա ծովերի գաղութներն ու կղզիները անցան Աթենքի կողմը: Սպարտայի կողմը գերակշիռ էր ցամաքային բանակը, իսկ Աթենքի կողմը՝ ծովային ուժը և դրամական միջոցները: Պատերազմը տևեց գրեթե 30 տարի՝ փոփոխակի հաջողությամբ և զանազան ընդհատումներով (431-435 թթ.): Ամեն տարի սպարտացիք արշա-

վում էին Ատտիկե, գյուղեր ու քաղաքներ էին ավերում, իսկ աթենացիների նավատորմիղը ասպատակում էր Պելոպոնեսի ծովեզերքը: Մի քանի անգամ հաշտություն կնքվեց, բայց կռիվը նորից սկսվեց: Պատերազմը տարածվեց ոչ միայն Հունաստանում, այլև շատ հեռուները: Աթենացիք արշավեցին Սիկիլիա և Հարավային Իտալիա՝ այս գաղութներն իրենց ձեռքը անցնելու համար, բայց նրանց նավատորմիղը և ընտիր բանակը ոչնչացան:

Աթենքի պարտությունը Սիկիլիայի առաջ՝ գրգռեց պարսիկների ախորժակը. թագավորի փոքր որդի Կյուրոսը, հունական գործերի խառնվելու համար ուղարկվեց Արևմուտք և Փոքր Ասիայի հունական գաղութները նորից պարսիկներին հարկատու դարձան: Կյուրոսը հորից թագավորական գահը խլելու ցանկություն ուներ և սրա համար ուզում էր հույների օգնությունը ձեռք բերել: Աթենքի զորությունը խորտակված լինելով, այլևս նրա վրա հույս դնել կարելի չէր՝ դեպի Պարսկաստան ցամաքային արշավանքի սկսելու համար: Կյուրոսը պետք է փնտրեր Սպարտայի բարեկամությունը, ուստի նրա կողմն անցավ և իր օգնությամբ սպարտացիք կարողացան շուտով ջախջախել աթենացիների զորությունը և տեր դառնալ Աթենքի և ամբողջ Հունաստանի (405 թ.):

31. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՎՐԱ.

Իր վաղեմի ցանկությունը գործադրելու համար, Կյուրոսը վարձեց 13 000 հույն և 100 000 բնիկ զորք, և նրանց գլուխն անցած՝ արշավեց Պարսկաստան. բայց հաղթվեց և սպանվեց: Հույները որոշեցին ետ դառնալ և իրենց զորավար Քսենոֆոնի առաջնորդությամբ, անցնելով Ասորեստանի և Հայաստանի անծանոթ ու լեռնային վայրերից, հաջողությամբ հասան Սև ծով և հայրենիք վերադարձան (401 թ.): Այս նշանավոր նահանջը հայտնի է պատմության մեջ «Նահանջ բիւրեաց» անվամբ, որի ընդարձակ նկարագրությունը տվել է մեզ Քսենոֆոնը. այնտեղ գտնում ենք նաև ընդարձակ տեղեկություններ այն ժամանակի հայոց կյանքի ու քաղաքակրթության վերաբերմամբ:

Հույները, որ շատ մեծ կարիք ունեին Պարսկաստանի ցամաքային ուժի վրա, իրենց այս նահանջով տեսան, թե ո՛րչափ թույլ է եղել պարսկական պետության ներքին կազմը, որ չեն

կարողացել մի բուռ հույների շարժումը խանգարել: Եվ ահա սպարտացիք, Կյուրոսի մահը առիթ համարելով, խզեցին դաշնադրության կապը պարսիկների հետ, մտան Փոքր Ասիա և արշավեցին մինչև Փռյուգիայի սիրտը: Միևնույն ժամանակ Եգիպտոսն ապստամբեց և Սպարտայի հետ դաշնակցություն կնքելով, դուրս քշեց պարսիկներին և անկախություն հայտարարեց: Ապստամբեցին նաև Մյուսիան, Պիսիդիան, Պոնտոսը, Պափղագոնիան և թոթափեցին պարսկական լուծը. Կիպրոս կղզին էլ, որ հունական և փյունիկյան ժողովուրդների մի հավաքում էր, Եգիպտոսի օգնությամբ ոչ միայն ապստամբեց, այլև արշավանք կազմակերպեց դեպի Փյունիկե, գրավեց Տյուրոսը և իր ասպատակներին սփռեց Կիլիկիա:

Պարսիկները, տեսնելով որ այս բոլոր շարժումների դրդիչը սպարտացիներն են, նրանց արշավանքը կասեցնելու համար, այժմ էլ անցան սպարտացիների կողմը: Սպարտացիների բռնությունը Հունաստանում՝ սկսել էր գրգռել նույնիսկ իր դաշնակիցներին, որոնք վախենում էին իրենց անկախության համար: Նրանցից մեկը՝ Թեբեն, արդեն Աթենքի հետ գաղտնի դաշինք էր կապել՝ սպարտացիներին հետ քշելու համար: Պարսիկները միացան նրանց հետ. շուտով կազմվեց մի նոր դաշնակցություն Սպարտայի դեմ, որի մեջ մտան Հունաստանի զանազան քաղաքները: Աթենացիք և պարսիկները միացած՝ մաքրեցին Արշիպեղագոսը սպարտացիներից, Աթենքը վերակառուցվեց, և Սպարտան ստիպվեց կնքել Անտալկիդյան դաշնադրությունը պարսիկների հետ, որի համաձայն Հունաստանի բոլոր քաղաքային համայնքները անկախ հրատարակվեցին, Փոքր Ասիայի հույն գաղութները տրվեցին պարսիկներին, իսկ Հունաստանի վրա ճանաչվեց Սպարտայի հսկողությունը և պարսիկների գերիշխանությունը: Այսպիսով հունական իշխանությունների նախանձը, մրցակցությունը և ներքին հակառակությունները պարսիկներին տվեցին ա՛յն, որին չէին կարողացել հասնել Դարեհի և Քսերքսեսի ահավոր բանակները (387 թ.): 6 տարի կռվելուց հետո, նվաճվեց նաև Կիպրոսը և ազատվեց միայն Եգիպտոսը, որի վրա արշավող պարսկական բանակները վարձկան հույն զորավարների անհամաձայնությունների պատճառով անհաջողության հանդիպեցին և ձեռնունայն հետ դարձան:

Սպարտան, տեսնելով որ իր հեղինակությունը ջնջելու պատճառը Թեբեն էր, դավաճանությամբ հանկարծ հարձակվեց նրա

վրա, գրավեց և իր իշխանության տակ առավ: Թեբացիք խնդրեցին Աթենքի օգնությունը և նրա հետ միացած՝ կազմեցին նոր դաշնակցություն, որին միացան Արշիպելագոսի նշանավոր կղզիները: Թեբացիք, Եպամինոնդասի առաջնորդությամբ, ջարդեցին սպարտական բանակները և Պելոպոնեսը ազատելով նրանց ձեռքից՝ Հունաստանի գերիշխանությունը ձեռք բերին (371 թ.):

Սպարտացիք խնդրեցին պարսից օգնությունը, բայց պարսիկները, Փոքր Ասիայի խնդիրներով զբաղված, չկարողացան ոչինչ անել: Արդարև բոլոր սատրապները, Եգիպտոսի սահմանից սկսած մինչև Հելլեսպոնտոս, միացել ու պարսիկների դեմ ապստամբել էին: Ապստամբները դիմեցին Եգիպտոս, որ բավական ժամանակից ի վեր դարձել էր անկախ պետություն և նրանց թագավոր Տաքոսի հետ բանակցության մտան: Տաքոսը շարժման գլուխն անցավ, կազմակերպեց մի նոր բանակ եգիպտացի և վարձկան հույն զինվորներով, խնդրեց Աթենքի և Սպարտայի օգնությունը. սպարտացիների թագավորն անձամբ եկավ եգիպտոս և անցավ մի բանակի գլուխը: Եգիպտացիք արշավեցին Ասորիք, շարժումը մեծացավ. Կիպրոսը նորից ապստամբեց. Ասորիքի ժողովուրդները ոտքի կանգնեցին: Հրեաները, որ պարսիկների օգնությամբ Բաբելոնի գերությունից դարձել և Երուսաղեմը վերաշինել էին, միացան ապստամբության. Փյունիկյան զանազան իշխանությունները համախորհուրդ, իրենց առաջնորդ ընտրեցին Սիզանի իշխան Տեննեսքին. Փոքր Ասիայի գլուխն անցավ Արտավազդը. պարսկական պետությունը պաշարվել էր բոլոր սահմանների վրա:

Պարսիկների թագավորն անձամբ արշավեց Եգիպտոսի վրա. նրա առաջին հարձակումներն անհաջող անցան. բայց Տիննեսի թուլությունը խանգարեց գործը. դավաճանորեն նա անցավ թշնամու կողմը, իր զորապետներին հանձնեց նրանց և պարսկական զորքը մտցրեց երկիր. Սիդոնի բնակիչները վտանգը տեսնելով, կրակի տվին իրենց տները և 40 000 բնակիչ բոցերին զոհ եղան: Փյունիկեն նվաճվեց և Եգիպտոսի ճանապարհը բացվեց. թագավորը, հույն զորականների քաջությամբ, մտավ Եգիպտոս, նվաճեց երկիրը, քաղաքները գրավեց, նրանց պարիսպները խորտակեց, տաճարները կողոպտեց և թագավորական ցեղերը կոտորելով վերադարձավ Պարսկաստան: Նույն ժամանակ Փոքր Ասիան էլ նվաճվեց, և Արտավազդը փախավ Մակեդոնիա (342 թ.):

32. ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՄԵԾՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

Մակեդոնացիք Իլլիրիայի և Թրակիայի բարբարոս ժողովուրդների և հույների խառնուրդից առաջացած մի ցեղ էին. ունեին առանձին թագավոր, որ հունական սերնդից էր. բայց նրա իշխանությունն անվանական էր, որովհետև ստիպված էր շարունակ կռվել զանազան գավառների ինքնագլուխ իշխանների հետ: 359 թվականին նրանց վրա թագավոր նստեց Փիլիպպոսը, որ Հունաստանում կրթված և զինվորական արվեստին ծանոթ անձ էր: Նա կարողացավ կարճ ժամանակամիջոցում բոլոր իշխաններին իրեն հպատակեցնել, կազմակերպեց հունական ռազմագիտությամբ կրթված ընտիր բանակ և առիթի էր սպասում Հունաստանը գրավելու համար:

Երբ հունական քաղաքները միմյանց հետ կռվի բռնվեցին, Փիլիպպոսը, որ լավ էր ճանաչում հույների անմիաբան, նախանձոտ ու կռվարար բնավորությունը, իսկույն մեջ մտավ և այս ու այն կողմից պաշտպան կանգնելու ձևի տակ, իրար հետևից գրավեց Թրակիայի գաղութները և հասավ մինչև Միջին Հունաստան: Հույները նոր արթնացան և հասկացան իրենց սխալը. Թեբեն և Աթենքը միացան նոր թշնամուն դիմադրելու համար, բայց արդեն ուշ էր. Փիլիպպոսը չարաչար հաղթեց նրանց և այլևս նա Հունաստանի տերն էր (338 մ. թ. ա.):

Փիլիպպոսը աշխարհակալության մի մեծ ծրագիր հղացավ, որի գործադրության մեջ իբր գլխավոր միջոց ծառայելու էին հույները: Կորնթոսում նա գումարեց բոլոր հունական իշխանությունների մի համաժողով, որտեղ իրեն Հունաստանի առաջնորդ հռչակելով, առաջարկեց միանալ իրեն և արշավել Պարսկաստանի վրա, հույներն ընդունեցին. այսպիսով գլուխ եկավ այն կարևոր գործը, որին հույներն իրենք չէին կարողացել հասնել. ցեղերը միացան օտարի միջնորդությամբ:

Փիլիպպոսն իր թիկնապահներից մեկի ձեռքով սպանվելով, իր ծրագրի գործադրությունն անցավ իր որդի և հաջորդ Ալեքսանդրին, որ հույների մեծ փիլիսոփա Արիստոտելի մոտ կրթված խիզախ երիտասարդ էր: Հույն-մակեդոնական միացյալ բանակի գլուխն անցած, որի թիվը հազիվ 35000 էր, նա անցավ Հելլեսպոնտոսն ու մտավ Ասիա (334 թ.): Մենք գիտենք, թե ինչքան թուլացել էր այն ժամանակ պարսկական պետությունը. գահակալները միմյանց հետևից զոհ էին գնում թույնի կամ դավաճանության, սատ-

բապները միմյանց հետևից ապստամբում էին. շատ երկրներ անվանապես միայն հպատակ էին պարսիկներին և պետությունն ուժ չուներ ապստամբներին ճնշելու: Նրա գլխավոր ուժը վարձկան հույն զինվորներն էին:

Այսպիսի փտած մի պետություն բնականաբար հեշտ կերպով փշրվելու էր Ալեքսանդրի կորովի բանակի առաջ: Գրանիկոն գետի վրա տեղի ունեցավ առաջին մեծ կռիվը. պարսիկները չարաչար հաղթվեցին. Ալեքսանդրը գրավեց Փոքր Ասիայի հունական գաղութները և Ամանոսյան լեռների մոտ, Իսոսի առաջ ճակատեց պարսկական գլխավոր բանակի դեմ, որի հրամանատարը նույնիսկ Պարսկաստանի թագավոր Դարեհ Գ-ն էր: Պարսիկները ջախջախվեցին և Դարեհը փախավ Պարսկաստան: Ալեքսանդրը նվաճեց Ասորիքը, Փյունիկեն, Պաղեստինը, իջավ մինչև անապատը, հետո գնաց Ասորեստան և Տիգրիսի մոտ, Արբելայի ճակատամարտում երրորդ անգամ հաղթեց Դարեհին: Դարեհը փախավ և փախուստի միջոցին մի արաբի ձեռքով սպանվեց (330 թ.):

Այսպես վերջ գտավ պարսիկների պետությունը. շատ կարճ ժամանակի մեջ Ալեքսանդրը տեր դարձավ նրա մեծածավալ հողերին, այնուհետև անցավ Թուրքեստան, մտավ Հնդկաստան, տիրեց Փենջաբին, և մինչդեռ ուզում էր ավելի առաջ գնալ և տիրել Գանգեսի և Ինդոսի հովիտներին, բանակն ըմբոստացավ և Ալեքսանդրն ստիպվեց հետ դառնալ Բելուջիստանի վրայով Բաբելոն և մինչդեռ պատրաստվում էր նոր արշավանքի դեպի Արաբիա, մահը վրա հասավ 32 տարեկան հասակում (323 թ.):

Ալեքսանդրի աշխարհակալության գլխավոր արդյունքն եղավ Արևելքի և արևմուտքի միացումը և հունական քաղաքակրթության տարածումը ասիական երկրներում: Նեղոսից մինչև Ինդոս և Սիր-Դարիա կառուցվեցին 70-ի չափ քաղաքներ, մեծ մասամբ Ալեքսանդրիա անվամբ, որոնց մեջ հաստատվելով մեծ ու փոքր հույն գաղութներ, դարձան արևմտյան քաղաքակրթության վառարանները և իրենց շրջապատում տարածեցին հույն լեզուն, գիտությունները, արվեստները և հունական կրոնական գաղափարները: Ժամանակ անցնելով, այս ազդեցությունն այնքան մեծացավ, որ Առաջավոր Ասիայի շատ ազգեր, որոնց թվում նաև Հայաստանը, յուրացրին հունական քաղաքակրթությունը և Արևելքում դարձան արևմտյան ազգեր:

33. ՍԵԼԵՎԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ալեքսանդր III-ի մահից հետո, նրա հսկա պետությունը չկարողանալով մեկ ձեռքի տակ կառավարվել, տեղի տվեց բազմաթիվ ներքին պատերազմների իր զորապետների միջև: Վերջապես համաձայնություն կայացավ պետությունը բաժանել երեք անկախ մասի, որոնք առանձին թագավորություններ դարձան.

1) **Մակեդոնիան**, որի իշխանության տակն էր նաև Հունաստանը, 2) **Ասիան,** որ անցավ Սելևկոսին և 3) **Եգիպտոսը,** որ անցավ Պտղոմեոսին: Այս երեքի մեջ քաղաքակրթության տեսակետից ամենաբարձրը հանդիսացավ Եգիպտոսը, ուր հին եգիպտական քաղաքակրթությունը հունականի հետ միացած, նոր թափ ու նոր ձև ստացավ: Եգիպտոսի մայրաքաղաք Ալեքսանդրիան դարձավ նաև հելլենական քաղաքակրթության մայրաքաղաքը. այդ հռչակավոր քաղաքում հավաքվեց կես միլիոն ժողովուրդ, բացվեց մեծ գիտական ճեմարան, գրադարան, ուր հավաքվել էր 700000 հատոր ձեռագիր մատյան՝ աշխարհի զանազան լեզուներով. և այնտեղ էին դիմում աշխարհի ամեն կողմերից ամեն ազգի մարդիկ՝ գիտության ծարավը հագեցնելու համար:

Եգիպտոսը ձեռք բերեց նաև քաղաքական նշանավոր դիրք. Պտղոմյանները ո՛չ միայն նվաճեցին Լիբիան և Եթովպիան, այլև Կիպրոսը, Փյունիկեն, Ասորիքը, հետո Եփրատն անցնելով՝ մտան Բաբելոն,Պարսկաստան և մինչև Բակտրիա առաջացան: Բայց Պտղոմյանների այս առաջադիմությունը վաղանցուկ եղավ. Սելևկյանները նրանց հետ քշեցին և չթողեցին որ Եգիպտոսից դուրս տարածվեին:

Քաղաքական կացության կողմից երեք պետությունների մեջ ամենամեծն ու զորեղը եղավ Սելևկյան պետությունը: Սելևկոսը նստեց նախ Սելևկիա քաղաքում, որ ինքը կառուցեց Տիգրիս գետի վրա, Բաբելոնի մոտ. այստեղից փոխադրվեց Անտիոք, որ Ասորիքի մեջ էր և այսպիսով ավելի մոտեցավ Հունաստանին ու Մակեդոնիային, որտեղից շատ ժողովուրդ գունդ-գունդ դիմում էր դեպի արևելք, հաստատվելու Սելևկյան պետության սահմանների մեջ:

Սելևկյան պետությունը տարածվում էր Միջերկրական ծովից մինչև Միջին Ասիա, այնպես որ նրա զանազան մասերի մեջ կապ պահելը շատ դժվար էր. և ահա շուտով նորանոր ապստամբություններ սկսեցին, որոնք ծնունդ տվին բազմաթիվ անկախ

թագավորությունների. Մարաստանում, ուր պարսկական կրոնը կռվի ելավ հունական կրոնի դեմ, դուրս եկավ Ատրպատ սատրապը և հիմնեց անկախ պետություն, որ իր անվամբ կոչվեց Ատրպատական և որի մեջ մտավ նաև Հայոց արևելյան գավառների մի մասը: Միջին Ասիայում, Օքսոս գետի վերի կողմերը բնակվող թափառական արիական մի ցեղ, Արշակ և Տրդատ եղբայրների առաջնորդությամբ գաղթելով Կասպից ծովի հարավարևելյան կողմը (Խորասան), պարթև ցեղի գուխն անցավ և սպանելով սելևկյանների սատրապին, հիմնեց պարթևական պետությունը (250-248 թթ.): Ապստամբեցին նույնիսկ Բակտրիա գաղթած հույները և իրենց երկիրը անկախ հայտարարեցին: Փոքր Ասիայում (չհաշված հունական գաղութները՝ Դորիան, Հոնիան, Եվոլիան, ինչպես նաև Եփեսոսը, Զմյուռնիան և այլն), ձևացան հինգ գլխավոր թագավորություններ, որոնք էին Պերգամոնը, Բյութանիան, Գաղատիան, Կապադովկիան և Պոնտոսը:

Այս ապստամբությունները տեսնելով՝ վերջապես շարժվեցին սելևկյանները. իրենց նշանավոր թագավոր Մեծն Անտիոքոս Գ-ը (223-187 թթ.) հարձակվեց ապստամբների վրա, պարթևները չարաչար հաղթվեցին և ամփոփվեցին Վրկանում՝ Կասպից ծովի ափերին. Բակտրիայի հունական իշխանությունը, ինչպես նաև ապստամբ Հնդկաստանը, հարկատու դաշնակից պետություններ դարձան. այնուհետև Անտիոքոսը զենքը դարձրեց Ատրպատականի և Հայաստանի դեմ, որոնք նույնպես շուտով նվաճվեցին:

34. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Արբելայի ճակատամարտում, որ Դարեհը մղում էր Ալեքսանդրի դեմ, մասնակցում էին նաև հայերը 7000 ձիավոր և 40000 հետևակ զորքով: Դարեհից պարտվելով՝ Հայաստանն անցավ մակեդոնական իշխանության տակ: Ալեքսանդրը պահեց երկրի հին պետական կազմը և տվեց նրանց մի պարսիկ սատրապ: Մի հույն սատրապ էլ նստում էր Փոքր Հայքում: Հայերն ապստամբեցին և երկու օտարներին էլ քշելով, իրենց մարդկանց դրին:

Սելևկյանների ժամանակ Հայաստանն էլ այդ մեծ պետության գերիշխանության տակ ընկավ: Անտիոքոս Գ-ը տիրելով երկրին,

նշանակեց երկու կառավարիչ, Արևելյան Հայաստանում՝ Արտաշեսին, իսկ Արևմտյան Հայաստանում Զարեհին: Այս երկուսն էլ սելևկյանների զորապետներից էին, բայց թերևս ծագում էին հին հայ թագավորական ցեղից և մեծացել էին հունական քաղաքակրթությամբ:

Արտաշեսը և Զարեհը համբերությամբ տարան սելևկյանների լուծը, սպասելով հարմար առիթի, որ թոթափեին այն և իրենք իրենց անկախ հռչակեին: Այս առիթը ներկայացավ հռոմայեցիների միջամտությամբ:

35. ՀՌՈՄԻ ԱՆՑՅԱԼԸ. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՎՆԵՐ. ԻՏԱԼԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Իտալիան նախապես բնակվել էր ոչ հնդեվրոպական ցեղերից, որոնց մնացորդներն էին լիգուրացիք և ետրուսկները. այս վերջինները մեծ քաղաքակրթության հասած ժողովուրդ էին: Անհիշատակ ժամանակների մեջ հնդեվրոպական ցեղի 8-րդ ճյուղը, որ իտալական կոչեցինք, մտնելով Իտալիա, նվաճեց նրանց և հաստատվեց թերակղզու զանազան կողմերը: Իտալական գաղութը բաղկանում էր զանազան ժողովուրդներից. սրանցից լատինացիք բնակվեցին թերակղզու արևմտյան մասում. նրանց դիմաց հաստատվեցին սամնիացիք, ավելի հյուսիս՝ սաբինացիք, ումբրիացիք և ետրուսկները, իսկ հարավային կողմը՝ հաբիգեցիք, որոնք նստեցին Սիկիլիայում: Այս բոլորի մեջ ամենանշանավորը դարձան լատինացիք, որոնց կենտրոնական քաղաքն էր Հռոմը և որի անվամբ էլ կոչվեցին հռոմայեցի: Հռոմեական ժողովուրդը բաժանվում էր երկու մասի՝ պատրիկներ և պլեբեյներ. առաջինները Հռոմի հին քաղաքացիներն էին, որոնք իրենց ձեռքն էին վերցրել կառավարությունը և հարստությունը. իսկ պլեբեյները եկվոր կամ նվաճված ժողովուրդներն էին, որոնք շատ իրավունքներից զրկվել էին. սրանք իրավունք չունեին կառավարական գործերի մեջ խառնվելու, բայց ընդհակառակը զինվորական ծառայությունը և հարկերը իրենց վրա էին ծանրացել, թեև իրենց մշակելու հողերն էլ շատ քիչ էին: Երկրի գլխավոր իշխանությունը հանձնվել էր թագավորին, որ նաև քրմապետ, դատավոր և զինվորական հրամանատար էր. իրեն օգնական ուներ ծերակույտը, որի անդամների թիվը մինչև 300-ի էր հասնում, բոլորն էլ ընտրված պատրիկներից:

Պատրիկների և պլեբեյների դասակարգային կռիվների. պլեբեյները պահանջում էին նույնպես ունենալ իրավունքներ, որ պատրիկները չէին զիջում տալ. վերջապես Հռոմի թագավորներից մեկը ստիպվում է նոր դասակարգային բաժանում կատարել: Ժողովրդին բաժանում է ըստ իրենց հարստության 5 մասի. ամենահարուստները պիտի վճարեին ամենամեծ տուրքերը, պիտի կատարեին ամենածանր զինվորական ծառայությունը, միանգամայն և ամենամեծ իրավունքները պիտի վայելեին: Նվազ հարուստները ավելի պակաս պիտի ծառայեին և ավելի պակաս իրավունքներ պիտի ունենային: Աղքատները զինվոր չպիտի լինեին: Այսպես պարտք և իրավունք համեմատական էին միմյանց:

Դասակարգային այս նոր կազմակերպությամբ պլեբեյները Հռոմի քաղաքացիների կարգն անցան, որից պատրիկները և ծերակույտը դժգոհ լինելով, տապալեցին թագավորությունը և հիմնեցին Հռոմեական հանրապետությունը (510 թ.), որի գլուխն էին կանգնել երկու հյուպատոսներ՝ մեկ տարվա պայմանաժամով ընտրված:

Հանրապետությունը չբավարարեց պլեբեյների պահանջները. իշխանությունը թագավորից անցնելով պատրիկներին, պլեբեյները ավելի ենթարկվեցին նրանց, միևնույն ժամանակ իրենց շրջակա ազգերի արշավանքները, թեև բոլորի համար էլ ծանր, բայց հատկապես զգալի էր պլեբեյներին, իբրև աղքատ դասակարգի, մինչդեռ պատրիկներն իրենց հարստությամբ կարող էին ավելի տոկալ: Ահա այս պատճառով պլեբեյները նորից սկսեցին իրենց կռիվը պատրիկների դեմ, որ տևեց ամբողջ մեկուկես դար (510-366 թթ.): Պատրիկները ստիպված եղան քայլ առ քայլ զիջել. պլեբեյներն ստացան նախ առանձին հասարակություն կազմելու իրավունք, առանձին իշխանավորներով (տրիբուն), որոնց իրավունքը գրեթե հավասար էր հյուպատոսներին: Այնուհետև իրավունք ստացան իրենց միջև բաժանելու ազատ և նոր նվաճված հողերը, որոնք առաջ պատրիկներին էին պատկանում: Ավելի հետո ժողովրդին դատելու համար գրավոր օրենքներ մշակեցին, որով վերջ դրվեց պատրիկների դատավարական քմահաճույքին: Վերջապես պլեբեյները ձեռք բերին հյուպատոս, քուրմ, ինչպես նաև ծերակույտի անդամ ընտրվելու իրավունքը, որով այլևս հավասարվեցին պատրիկներին և դասակարգային կռիվը վերջ գտավ (366):

Դասակարգային կռիվը վերջացնելուց հետո, հռոմեայեցիք

ձեռնարկեցին ամբողջ Իտալիայի նվաճման գործին: Այս նպատակին հասնելու համար նրանք կազմակերպեցին իրենց հզոր լեգեոնները, որոնք զինվորների հայրենասիրությամբ, դիմացկունությամբ և կարգապահությամբ գերազանցում էին աշխարհի բոլոր բանակները: Առաջին կռիվն սկսեց սամնիացիների հետ, որոնք Իտալիայի արևելյան եզերքին, Հռոմի դիմաց բնակվող ժողովուրդ էին և Իտալիայի ժողովուրդների մեջ ամենաուժեղը: Լատինացիք, որ սամնիացիներից երկյուղ ունեին, միացան հռոմայեցիների հետ և սրանով կարողացան խորտակել նրանց ուժը: Հաղթությունից հետո լատինները իբրև դաշնակից պահանջելով հավասար իրավունքներ Հռոմի վարչական իշխանության մեջ, հռոմայեցիք թշնամացան նրանց հետ և լատինացիների երկիրն էլ նվաճելով՝ հռոմեական գավառ դարձրին:

Իտալիայի ժողովուրդները հասկացան վտանգի մեծությունը և իսկույն Հռոմի զորությունը խորտակելու համար կազմեցին մի դաշնակցություն, որի մեջ մտան սամնիացիք, ումբերկացիք, ետրուսկները և Հյուսիսային Իտալիայի կելտերը: Հռոմեյացիք կարողացան անջատել նրանց միմյանցից և յուրաքանչյուրին նվաճելով՝ ամբողջ Միջին Իտալիայի տեր դարձան:

Կարգը եկել էր Հարավային Իտալիային, որի ամենանշանավոր քաղաքը Տաբենտոնն էր. սրա բնակիչները հարստությամբ և զեխությամբ հղփացած ու պատերազմելու անընդունակ, օգնության կանչեցին Եպիրոսի Պյուրոս թագավորին: Սա մակեդոնական ընտիր բանակով և փղերով Իտալիա մտավ և Հռոմի վրա գնաց: Փղերի անսովոր տեսքից վախեցած՝ հռոմայեցիք հաղթվեցին ու փախան: Պյուրոսը մտավ Սիկիլիա և կղզուն տիրելուց հետո՝ նորից Իտալիա անցավ: Բայց այս անգամ հռոմայեցիք արդեն փղերին վարժված, չարաչար ջարդեցին նրա բանակը և Պյուրոսը փախավ Հունաստան: Այսպիսով Հարավային Իտալիան էլ Հռոմի հպատակը դարձավ (275 թ.):

(Գաղղիացիների արշավանքը մինչև Գաղատիա (278 թ.) տե՛ս. և ա՛ռ Ալպոյաճյանից, հատ. Ա. էջ 167):

36. ՓՅՈՒՆԻԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Փյունիկցիների հիմնած գաղթականությունների մեջ ամենանշանավորը Կարկեդոնն էր, որ Աֆրիկայի հյուսիսային եզերքի

վրա մեծ և վաճառաշահ մի պետություն էր կազմել: Երբ Տյուրոսը և Սիդոնը ընկան վերջնականապես, նրանց ունեցած գաղութներն էլ անցան Կարկեդոնի ձեռքը, որով իր ազդեցությունն ավելի ևս մեծացավ: Իրեն էին հպատակվում ամբողջ Հյուսիսային Աֆրիկան մինչև Եգիպտոս, Միջերկրականի կղզիները, Սարդինիա և Սիկիլիայի մի մասը: Արևմտյան ծովային վաճառականության մեջ Կարկեդոնը հանդիպեց երկու ժողովուրդների՝ հույներին և ետրուսկներին, որոնք իր մրցակիցները դարձան: Հույները մակեդոնացիների, իսկ ետրուսկները՝ կելտերի և հռոմայեցիների ուժի տակ խորտակվելով, Կարկեդոնն իր այդ մրցակիցներից էլ ազատվեց և դարձավ այն ժամանակի աշխարհի ամենամեծ ծովային պետությունը (Գ դար):

Բայց Կարկեդոնը չուներ իր մեջ ներքին հոգեկան ուժ, որ ազգերի տևականության գրավականն է: Երկիրը կառավարվում էր վաճառականների ժողովով, որոնք անձնական շահի մասին էին մտածում միայն. հարստությունն ստեղծել էր բարքերի ապականություն և վաճառականական շահադիտությունը հանրային զգացումները ջնջել էր իրենց միջից. բոլոր զորքը վարձկան էր, հավաքված Եվրոպայի զանազան ցեղերից, հետևաբար զուրկ միությունից և հայրենասիրությունից: Նվաճված ու չարաչար շահագործված ժողովուրդների ապստամբությունից վախենալով, նրանց քաղաքները ամրացված չէին, որով վտանգի ժամանակ դիմադրել կարելի չէր:

Հարավային Իտալիայի նվաճմամբ հռոմայեցիք և կարկեդոնացիք դեմ դեմի էին ելել. Սիկիլիան հռոմայեցիների նախանձի առարկան էր դարձել և առիթի էին սպասում գրավելու այս հացաշատ կղզին: Առիթը ներկայացավ, երբ Սիկիլիայի երկու անկախ ցեղերի միջև կռիվ ծագելով, հաղթված կողմը Հռոմի օգնությունը խնդրեց. հռոմայեցիք իսկույն մեջ մտան և այսպիսով սկսեց պատերազմը կարկեդոնացիների և հռոմայեցիների միջև: Կարկեդոնացիք Մեսինայում հաղթվեցին և Սիկիլիան անցավ հռոմայեցիներին: Այնուհետև հռոմայեցիք խորտակեցին կարկեդոնական նավատորմը, գրավեցին Սարդենիան և կարկեդոնացիների պետության վերջնական հարվածը տալու համար՝ մեծ նավատորմիդ ճանապարհ հանեցին դեպի Աֆրիկա: Կարկեդոնական նավատորմը դուրս եկավ չափվելու նրա հետ, բայց ջախջախվեց. հռոմայեցիք ցամաք իջան և տիրեցին Թունուզին:

Կարկեդոնացիք հավաքեցին նոր վարձկան բանակ, որին հաջողվեց հռոմայեցիներին Աֆրիկայից դուրս քշել, նրանց նավատորմը խորտակել և նորից Սիկիլիային տեր դառնալով, մինչև անգամ Հարավային Իտալիա թափանցել: Բայց այս երկարատև պատերազմներից երկու կողմերն էլ թուլացած, վերջապես հաշտվեցին՝ Սիկիլիան հռոմայեցիներին մնալու պայմանով:

Սիկիլիայի կորուստը դարմանելու համար, կարկեդոնացիք իրենց աչքը դարձրին դեպի Իսպանիա. նշանավոր մի բանակ Աֆրիկայից մտավ այնտեղ և մի քանի տարվա մեջ թերակղզին գրավեց: Սա կարևոր էր նաև այն տեսակետով, որ իբերացիք նրանց տալիս էին զորավոր մարտական ուժեր:

Բայց Իսպանիայի նվաճումը մի նոր վտանգ էր Հռոմի համար. ուստի հռոմայեցիք նորոգեցին պատերազմը և իրար հետևից խլեցին Սարդենիան, Կորսիկան, Ծովային Իլլյուրիան: Միևնույն ժամանակ Իտալիայի սահմանները հյուսիսից ապահովելու համար՝ արշավեցին գալլերի վրա և մի շարք ահեղ ճակատամարտների մեջ նրանց մեծ մասին ջարդելով՝ հասան մինչև Ալպյան լեռները: Հիմա արդեն ամբողջ Իտալիան հռոմայեցիների ձեռքումն էր:

Կարկեդոնացիք իրենց վրեժը լուծելու համար հռոմայեցիներից, երկրորդ անգամ պատերազմի դուրս եկան: Հաննիբալը՝ հնության այս հռչակավոր զորավարը, հղացավ հանդուգն մի ծրագիր. իր ստվար բանակով անցավ Պիրենյան լեռները, արյունռուշտ պատերազմներով ճեղքեց Գաղիայի վայրենի ցեղերը, անցավ Ալպյան ձյունաշատ լեռները և մտավ Հյուսիսային Իտալիա: Այս ահագին և սոսկալի արշավանքի մեջ իր բանակի կեսը կորավ, բայց նա իր ուժերը ապստամբ գալլերով նորոգելով, պատրաստվեց կռվելու: Սարսափեցին հռոմայեցիք իրենց թիկունքում տեսնելով այս ահավոր թշնամուն. իսկույն իրենց բանակները դուրս եկան նրա դեմ. Հաննիբալը չորս մեծ ճակատամարտների մեջ չարաչար ջախջախեց նրանց. այս հաղթությամբ ոգևորված՝ ոտքի կանգնեցին Հռոմի հպատակ ժողովուրդները՝ գալլերը, սամնիացիք, սիկիլիացիք. միևնույն ժամանակ մակեդոնացիք և սելևկյանները պատրաստվեցին հարվածելու Հռոմը: Կացությունն այնքան հուսահատական էր, որ Հռոմի ժողովուրդը որոշեց գաղթել երկրից և ծովերից այն կողմ մի նոր երկիր որոնել. բայց ծերակույտը չթողեց. հուսահատությունը հերոսացրեց նրանց. 17 տարեկանից վեր ամեն

մարդ զինվոր դարձավ և նոր բանակներ կազմվեցին, սամնիացիք և սիկիլիացիք նորից նվաճվեցին, մակեդոնացիք պարտվեցին և իրենց նավատորմը հրո ճարակ եղավ. սելևկյանները չկարողացան շարժվել իրենց տեղից, որովհետև հռոմայեցիների դրդմամբ Եգիպտոսի պտղոմյանք նրանց դեմ էին դուրս եկել. հռոմայեցիք նվաճեցին նաև Իսպանիան և Նյումիդիայի թագավորների հետ դաշնակից դարձան: Հաննիբալն ուղղակի Հռոմի վրա գնաց, բայց չկարողացավ գրավել. իր ամբողջ հույսն իր եղբոր վրա էր, որ հանդուգն արշավանքով կարողացավ Իսպանիայից մի նոր զորավոր բանակ բերել Իտալիա՝ Հաննիբալին օգնության: Բայց երկու բանակներն իրար չմիացած՝ նրա զորքը ջարդվեց և իր զորապետի հետ կորավ: Հաննիբալն ստիպվեց քաշվել Իտալիայի հարավային ծայրը: Հռոմայեցիք որոշեցին այն ժամանակ բուն իսկ Կարկեդոնը հարվածել. Սկիպիոնն անցավ Աֆրիկա, նվաճեց կարկեդոնացիների անպաշտպան քաղաքները և բանակեց Կարկեդոնի առաջ: Կարկեդոնացիք իսկույն հետ կանչեցին Հաննիբալին և նա լաց լինելով ստիպվեց հեռանալ այն Իտալիայից, որ 17 տարի շարունակ կռիվներով չափչփել էր: Զամայի ճակատամարտում Հաննիբալը հաղթվեց և կարկեդոնացիք ստիպվեցին հաշտվել հռոմայեցիների հետ այն պայմանով, որ Միջերկրականի բոլոր կղզիները, Իսպանիան և կարկեդոնացիների մեծ նավատորմիղը ամբողջովին անցներ Հռոմին (201 թ.):

Այս նվաճումներով Հռոմեական հանրապետությունը դարձավ Միջերկրականի ամենամեծ պետությունը:

Այս միջոցին Արևմուտքում կազմվել էր հռոմեական պետությունը. Հռոմը նախապես միայն մի քաղաք, կարողացել էր նվաճել ամբողջ Իտալիան, հետո անցել էր Աֆրիկա, կործանել Կարկեդոնը և դարձել Միջերկրականի ամենամեծ պետությունը:

37. ՀՆԴԿԱԿԱՆ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՉԱՆԴՐԱԳՈՒՓԹԱ ԵՎ ԱՍՈՔԱ

Ալեքսանդրի մահից անմիջապես հետո, երբ զանազան ազգեր ապստամբելով ցանկանում էին անկախություն ձեռք բերել, շարժվեց նաև Հնդկաստանը: Այս շարժման գլուխ կանգնեց Չանդրագուփթա անվամբ մեկը, որ հասարակ ծագումով էր և

Փենջաբում տեսել ու սովորել էր հունական պատերազմական արվեստը: Երբ Ալեքսանդրը հետ քաշվեց, Չանդրագուփթան գնաց Փատալիփութրա մայրաքաղաքը, և այնտեղ բրահմին Չանակիայի օգնությամբ Նունդաների իշխանությունը նվաճեց և քիչ հետո գրեթե ամբողջ Հյուսիսային Հնդկաստանի տեր դառնալով, հիմնեց հնդկական մի մեծ պետություն (շուրջ 318 մ. թ. ա.), որ Փենջաբից սկսելով տարածվում էր ծովից ծով: Սելևկոս թագավորն իր բանակը ուղարկեց նրա դեմ, բայց ոչ միայն չկարողացավ հաղթել, այլև նոր նահանգներ ստիպվեց զիջել, այնպես որ Հինդուքուշը Սելևկյան պետության և հնդկական մեծ թագավորության սահման եղավ (305 թ.): Սելևկոսը Փաթուլիփութրա մայրաքաղաքում Մեգասթենես անվամբ մի հույն դեսպան նշանակեց, որ 5 տարի ապրելով այնտեղ, հնդիկ աշխարհի նկարագիրը թողեց:

Չանդրագուփթայի օրով սկսում է Հնդկաստանի քաղաքական և կրոնական իշխանությունների պայքարը, որ ամեն երկրի մեջ սովորական պատմական մի երևույթ է եղած ավելի կամ նվազ չափով:

Հնդիկները, ինչպես գիտենք, ունեին չորս դասակարգ, որոնցից երկու ազդեցիկներն էին կրոնականն ու զինվորականը: Բրահմանները հետզհետե ժողովրդի սրտին ու մտքին տիրելով, նյութական մեծ հարստություն ձեռք բերելուց հետո, հեռու չէին արդեն մի օր էլ քաղաքական իշխանությունը ձեռք բերելուց: Չանդրագուփթան, նրանց այս քայլը կասեցնելու նպատակով, որոշեց ուժ տալ բուդդայական կրոնին, որ բրահմանական վարդապետության և դասակարգերի բաժանման հակառակ էր: Իր այս գործը շարունակեց և առաջ տարավ իր թոռը Ասոքան (264-227 թթ.), հնության այս մեծ թագավորը, որի տերությունը տարածվում էր Աֆղանիստանից մինչև Մադրաս (իր մեջ առնելով Բելուջիստանը, իսկ հյուսիսից մինչև Հիմալայա: Իր տերությունից դուրս էին մնում Հարավային Հնդկաստանի դրավիդյան իշխանությունները՝ Չոլան, Չերան, Փանդյան): Ինքը միակն եղավ գահակալների մեջ, որ գաղափարն ունեցավ զենքը թողնելու և կրոնով աշխարհակալություններ անելու:

Մադրասից այն կողմ իր իշխանությունը տարածելու համար նա պատերազմ ունենալով հնդկական մի ցեղի հետ, տեսավ ու հասկացավ պատերազմի արհավիրքները, հրաժարվեց մարդասպանության արվեստից և որոշեց կյանքի մնացյալ մասը նվիրել

բուդդայական կրոնի տարածմանը: Ընդունեց նախ բուդդայական ճգնավորական կարգը և ինքն էլ իբր հավատացյալ հիմնեց բազմաթիվ վանքեր ու բարեգործական հաստատություններ, հասարակական այգիներ, թառուղիներ, որոնց ներքև ժողովուրդը պաշտպանվելու էր արևից, բուսարաններ՝ բժշկական խոտերի մշակության համար, մինչև անգամ իգական սեռի կրթության գործը իր ուշադրության առարկան դարձրեց: Գրականությունն ու կրոնը ծաղկեցնելու համար ո՛չ միայն վարձատրեց ու քաջալերեց բազմաթիվ հեղինակների, այլև ինքը երկրի զանազան կողմերում փորագրել տվեց կրոնական հարյուրավոր արձանագրություններ: Վերջապես ուղարկեց բազմաթիվ բուդդայական քարոզիչներ դեպի Քաշմիր, Սեյլան, մինչև անգամ Սելևկյան ու Պտղոմյան թագավորների հետ բանագնացության մտավ:

Այսպես սկսեց բուդդայական կրոնի ծավալումը, որ հետզհետե մեծ չափերի հասնելով տիրեց ոչ միայն Հնդկաստանին ու Ցեյլոնին, այլև Աֆղանիստանին, Մոնղոլիային, Թաթարիստանին, Չինաստանին, Կորեային և այստեղից էլ Ճապոնիային (Զ դար մ. թ. ա.):

Բուդդայական կրոնի տարածումը նաև հնդիկ քաղաքակրթության տարածումն եղավ. հնդիկ բազմաթիվ քուրմեր անցան այս երկրները, որոնց մեջ հիմնեցին 6 առանձին պատրիարքություն, հնդկական գրականության բոլոր կարևոր գործերը թարգմանեցին նոր լեզուների և հնդկական այբուբենի օրինակով ձևացան զանազան նոր ազգային այբուբեններ, մինչև անգամ Չինաստանում և Ճապոնիայում: Բայց այս ընդարձակ ծավալումը չէր կարող իր հակառակ ազդեցությունը չունենալ. ժամանակ անցնելով և երկրից երկիր թափառելով, բուդդայականությունն այնպես ձևափոխվեց, որ նախկին պարզ բարոյականի վրա հիմնված բոլորովին հոգեկան կրոնը դարձավ մի նոր տեսակի կռապաշտություն, իր բազմաթիվ ծեսերով և աստվածներով, որոնցից մեկն էլ եղավ նույն ինքը Բուդդան:

Այս բոլոր պատճառներով բուդդայականությունը չհասավ իր նպատակին, այն է հավասարության և եղբայրության սկզբունքը տարածել Հնդկաստանում. դասակարգերը դարձյալ մնացին, ստրուկները նորից տառապում էին, թեև ո՛չ նախկին չափով: Բուդդայականության արդյունքն այն եղավ, որ Հնդկաստանի հարյուրավոր միլիոն ազգաբնակչությունը դարձրեց մի իներտ մարմին և սրանով էլ կանգնեցրեց նրա քաղաքական գոր-

ծունեությունը: Նրա հետ աշխարհակալները կարող էին վարվել այնպես, ինչպես ուզում էին, առանց սպասելու հակադարձ շարժման: Նույնիսկ Ասոքայի պետությունը իր մահից հետո քայքայվեց և վերածվեց բազմաթիվ անկախ թագավորությունների:

38. ՉԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՑԻՆ-ՇԻ-ՀՈԱՆԳ-ԹԻ.

Այս ժամանակ Չինաստանը բաժանվել էր 8 անկախ թագավորությունների, որոնցից մեկն էլ Ցին էր կոչվում: Ցին երկրի թագավորը, բացառիկ կամքի ու կորովի տեր մարդ, ուզեց ամբողջ Չինաստանը մեկ միության վերածել և հիմնել մեծ կայսրություն, իրեն համախոհ գտնելով իմաստուն և իրեն նման ազդեցիկ մի անձնավորություն՝ Լի-սեն, որին իրեն խորհրդական և նախարար նշանակեց և նրա հետ միասին ձեռնարկեց իր մեծ ծրագրի գործադրության: Կաշառքի և խարդախության միջոցով նրան հաջողվեց նախ կռիվ ձգել մյուս թագավորությունների միջև, որոնք միմյանց դեմ դուրս եկան և սկսեցին իրար ջարդել: Այսպիսով երբ նրանց բավական թուլացած և ուժասպառ գտավ, կազմեց 600 000 հոգանոց մի բանակ, մի առ մի արշավեց այդ 7 երկրների վրա և բոլորին էլ իր իշխանության տակ առավ: Այսպիսով նա իրեն կայսր հրատարակեց և կոչվեց Ցին-շի-հոանգ-թի, որ է Ցին երկրի ինքնակալ կամ թագավոր (221 թ.):

Կայսրությունը հրատարակելուց* հետո, Շի-հոանգ-թին սկսեց երկրի ներքին բարեկարգությամբ զբաղվել: Նա ամբողջ կայսրության մեջ հայտարարեց, որ այլևս կռիվը և պատերազմը վերջացած լինելով, զենք կրելն արգելված է, ուստի ով որ զենք ունի, պարտավոր է այն բերել և հանձնել պալատ, հայտնելով, որ այնուհետև իբր այդ զենքերը արոր պատրաստելու պետք է գործածվեն: Սրա վրա միլիոնավոր զենքերի ահռելի մի մթերանոց կազմեց:

Հետևելով «Բաժանիր, որ տիրես» սկզբունքին, Շի-հոանգ-թին Չինաստանը բաժանեց 36 նահանգների և նախկին թագավորությունները ջնջելով, յուրաքանչյուրի վրա մի նահանգապետ և մի փոխնահանգապետ նշանակեց, որոնք հրաման ունեին միմյանց վրա հսկելու և իրանցից մեկի կողմից կայսեր դեմ որևէ հակառակ շարժում ցույց տրված ժամանակ, պալատը լուր հասցնելու:

* հրատարակելուց - հռչակելուց (խմբ.):

Սրանից հետո իր անսահման երկրում ճանապարհորդելու դուրս եկավ նա: Նահանգապետները նրան լավ ընդունելություն ցույց տալու համար, սկսեցին ճանապարհներ սարքել, ծառուղիներ տնկել և քաղաքները զանազան շենքերով զարդարել: Այս բանը իրեն օրինակ եղավ և հրաման հանեց ամեն կողմ պատրաստել ճանապարհներ և ծառուղիներ: Սրա համար ահագին քանակությամբ մարդիկ գործի լծվեցին, լեռները ծակեցին, հովիտները լցրեցին, ճահիճները չորացրին, գետերի վրա կամուրջներ գցեցին և իրենց բացած ճանապարհների երկու կողմերը ծառեր տնկեցին: Մի ծառուղի կար, որ 180 փարսախ երկարություն ուներ:

Կայսեր ուշադրության առարկա դարձավ հատկապես մայրաքաղաքը, որ գեղեցիկ շենքերով, պալատներով, պարտեզներով և արձաններով զարդարեց: Պալատների թիվը բուն մայրաքաղաքում 300 էր, շրջակայքում՝ 400: Պալատներն այնքան ընդարձակ էին, որ մեկ սրահի մեջ 10 000 մարդ կարող էր կռվի պատրաստ կենալ: Այս պալատները և ծառուղիները երևակայությունն ուներցավ նմանեցնելու երկնքի Ծիր-կաթինին, որի շուրջը փայլում են համաստեղությունները. ուստի 70000 ընտանիք բերավ և բնակեցրեց նրանց շուրջը: Այս շինությունների համար 800 000 բանվոր էր աշխատում:

Այս շինություններից հետո Ծի-հոանգ-թին երկրում ընդհանուր և մանրամասն վիճակագրություն կազմել տվեց. այսպիսով ամբողջ ժողովրդի թիվը, տնտեսական կացությունը, հասույթը, ամեն ինչ մանրամասն իմացավ և ըստ այնմ տնօրինեց տուրքերը:

Այս գործերից հետո Չինաստանի միահեծան կայսրը ձեռնարկեց աշխարհակալության և ցանկացավ երկիրն ավելի ընդարձակել: Նա կազմեց 300000 հոգիանոց մի բանակ, որն ուղարկեց թաթարական հիունգ-նու ցեղի դեմ: Սրանք մեզ ծանոթ հոներն են, որոնք Հյուսիսային Չինաստանի սարսափն էին եղել միշտ: Զարդեց նրանց, քշեց մինչև անանցանելի անապատները: Եվ այլևս երկիրն ընդմիշտ նրանց արշավանքներից զերծ պահելու համար, կառուցեց Չինական նշանավոր պարիսպը, որ ունի 3 000 կիլոմետր երկարություն (213 թ.): Պարիսպներն այնքան հաստ են, որ 6 ձիավոր կարող են վրայից ազատ անցնել: Բարձրությունը 20-25 ոտք է, նույնիսկ լեռների վրա, որոնք իր երկայնքին հաճախ պատահում են և որոնցից մեկը 5225 ոտք բարձրություն ունի: Պարիսպն սկսվում է ծովից, որտեղ մահվան պատժի սպառնալիքով հրամայվել էր այնպես խիտ և կուռ շաղախել քարերը, որ ան-

գամ մի գամ հնարավոր չլիներ խրել ծերպերի մեջ: Պարսպի ամբողջ երկարությամբ աշտարակներ են կառուցված, որոնք միմյանցից երկու նետաձիգ միայն հեռավորություն ունեն. այսպիսով ամեն տեղից էլ հնարավոր պիտի լիներ հարվածել թշնամուն: Վտանգավոր տեղերում պարիսպները կրկնակի, երեքկին էին: Ամբողջը այնպես ամուր է կառուցված, որ 2000 տարի է, որ առանց նորոգության, չինական պարիսպը կարողացել է դիմադրել բնության և մարդկանց ավերմունքին: Մի քանի միլիոն բանվոր 10 տարի շարունակ աշխատել են այս պարիսպների կառուցման համար. 40000 հոգի այնտեղ մահացել են: Պարիսպների պաշտպանության համար 1 000000 բերդապահ զորք էր նստել: Հաշվել են, որ ամբողջ շինանյութը, որ գործ է ածվել այս պարիսպների վրա, բավական էր երկու անգամ պատելու երկրագունդը մի այնպիսի պարիսպով, որ 2 ոտք լայնություն և 6 ոտք բարձրություն միայն ունենար:

Այս պարիսպը կառուցելուց և բարբարոսների արշավանքը կասեցնելուց հետո, կայսրը աչքը դարձրեց դեպի հարավ և ուզեց մինչև ծովը գրավել: Հավաքեց բոլոր անգործ մարդկանց, բոլոր շքեղ կամ ավելորդ ապրանքներ վաճառող վաճառականներին, ինչպես նաև կայտառ և առողջ գյուղացիների, զինվորական լավ կրթություն տվեց նրանց և իր պատրաստ բանակի հետ միացնելով՝ արշավեց դեպի հարավ: Կանտոն, Տոնկին և ուրիշ մեծ գավառներ նվաճվեցին և միացվեցին Չինաստանին. այսպիսով երկիրը հասավ մինչև ծով:

Նոր պատմագիրները Ցին-շի-հոնագ-թի կայսեր համեմատում են մեր ժամանակների Նապոլեոնի հետ. նրա անունը տարածվեց ամեն կողմ. իր անունն է (Ցին), որ ձևափոխվելով դարձավ ընդհանուր երկրի անունը (Չին, Չինաստան):

Այս բոլորով հանդերձ Ցին-շի-հոանգ-թի կայսրը չէր սիրվել ամբողջ ժողովրդից. դժգոհ էին նրանից իր չափազանց խիստ բնավորության և անգթության համար. միայն պատերազմի մեջ ջարդված չին զինվորների թիվը հաշվում էին մեկուկես միլիոն, չհաշված պատերազմների արհավիրքների պատճառով զոհ գնացած մարդկանց: Գիտնականները և ուսումնականները դժգոհ էին նրանից, որովհետև կայսրը հին օրենքները եղծել և նոր օրենքներ էր հնարել: Կայսրը ինքն էլ զգում էր, որ դժգոհ են իրենից հատկապես ուսումնականները, որոնցից միշտ սպասում էր ապստամբական շարժում:

Այս շարժման առաջն առնելու համար կայսրը բոլոր ուսումնականներից մի ժողով գումարեց և առաջարկեց նրանց, որ քննեն իր արարքները և եթե գտնեն մի անիրավ բան՝ հայտնեն: Մի ուսումնական խոսք առավ և նրա գործերի նմանը չտեսնված ջատագովությունն արեց: Բոլորը ծափահարեցին նրան և ասածները արդարացի գտան: Գտնվեց միայն ուսումնական մի մանդարին (Շուն-յու-յուե)), որ համարձակվեց ասել, թե բոլորն էլ ստախոս են և շողոքորթ, թե կայսրը անիրավ է, որովհետև ոտնակոխ է արել հին օրենքները և չի հետևում հին կայսրերի օրինակին ու բարոյականի և արդարության այն օրենքներին, որ իրենց նախնիքը դրել են: Սրա վրա խոսք առավ Լի-սեն և ցույց տվեց, թե ժամանակը և մարդիկ անշարժ չեն, այլ միշտ փոփոխության ենթակա. հին օրենքները հին ժամանակներին էին հարմար. կյանքը փոխվել է և նոր օրենքներ է պահանջում. նոր կյանքը հին օրենքներով կառավարելն անմտություն է: Դատապարտեց ուսումնականներին, որոնք ժամանակակից կյանքի առաջ աչքները գոցած, հին գաղափարներին կառչած, ամեն բան նրանով են դատում և գովում միայն ինչ որ հին է: Այս բոլորի պատճառը գրքերն են, հին պատմության և բարոյագիտության գրքերը, որոնք անմեղ մարդկանց մտքերը պղտորում, մոլորեցնում են: Եվ առաջարկեց կայսեր՝ հավաքել բոլոր այս կարգի գրքերը և այրել:

Կայսրը հրամայեց և իր հրամանը խստիվ գործադրվեց: Ամեն կողմից բերին ու հանձնեցին պատմական, իմաստասիրական ու բարոյագիտական թանկագին ձեռագրեր, որոնք այրեցին, մոխիր դարձրին: Այսպիսով հին աշխարհին վերաբերող, հին կյանքն ու պատմությունը արտացոլող գանձերը ոչնչացվեցին. մնացին միայն բժշկական, աստղաբաշխական և հմայական գրվածքները: Բայց գտնվեցին ուսումնականներ, որոնք իրենց կյանքի գնով պահեցին իրենց սիրելի գրքերը:

Այս միջոցառումները սակայն չվերացրին դժգոհությունները. ուսումնականներից մեկը մինչև անգամ գրեց մի զավեշտ կայսեր դեմ: Կայսրը զայրացած՝ նշանակեց մի քննիչ հանձնախումբ, որ բանավոր քննություն էր անցկացնում բոլոր ուսումնականներին քննում և եթե նրանց կարծիքը կասկածելի գտներ, մահվան էր դատապարտում: Միայն մայրաքաղաքում 460 ուսումնական գլխատվեց:

Շատ չանցած կայսրը մեռավ (210 թ.) և իր կառուցած

լայնածավալ կայսրությունը տակնուվրա եղավ: Բոլոր նահանգներն ապստամբեցին և անկախություն ձեռք բերին: Ապստամբները դիմեցին մայրաքաղաք, կայսերական ցեղը բնաջինջ արին և բոլոր պալատներին կրակ տվին: Երեք ամիս տևեց հրդեհը և ամեն ինչ ավերակ դարձրեց: Նույնիսկ կայսեր գերեզմանը, որ իր կենդանությանը կառուցել էր տվել և որ աննախընթաց գեղեցկությամբ մի պալատ էր հազարավոր ակունքներով և գոհարներով զարդարված և մարդկային ճարպե մոմերով լուսավորված, ուր 10000 բանվոր իբրև մատաղ ողջ-ողջ թաղել էր, ավերվեց և անհետացավ:

Այսպես վերջացավ Ցին-շի-հոանգ-թիի կայսրությունը և Չինաստանը նորից բազմաթիվ մանր պետությունների վերածվելով, ներքին անվերջանալի կռիվների ասպարեզ դարձավ:

39. ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ. ՎԵՆ-ԹԻ

Այն խռովահույզ վիճակը, որին ենթարկվեց Չինաստանը Ցին-շի-հոանգ-թի կայսեր մահից հետո, շատ երկար չտևեց: Մի քանի բարեկարգիչ կայսրեր կարողացան խռովության առաջքը առնել և նորից խաղաղություն հաստատել երկրում: Սրանց մեջ ամենաարժանավորը եղավ Վեն-թին (179 թ.), որի գործերը արդի ամենաբարեկարգ և ազատական պետությունների էլ նախանձը պիտի շարժեին:

Ցին-շի-հոանգ-թիի արգելքը հին գրքերի հանդեպ վերացված լինելով, այժմ սկսել էր հակառակ մի շարժում՝ կորած և անհետացած հնությունները երևան հանելու և նորից հրատարակելու: Վեն-թին այս շարժման ջերմեռանդ պաշտպանը հանդիսացավ. խուզարկեցին խրճիթները, որոնեցին գերեզմանները, փլցրին ավերակ պատերը և ինչ որ գտան հին գրքերից, նորից արտագրեցին ու տարածեցին: Ֆու-ռէնկ անվամբ մի ծերունու միջոցով կարելի եղավ ձեռք բերել անհետացած Շու-քինգը, որ ամբողջ հին Չինաստանի տարեգրությունն էր պարունակում և որ այժմ մեր ձեռքն է հասած:

Վեն-թին իր սրտին այնքան մոտ զգաց ժողովրդի բարեկեցությունը, որ աղի հարկը ամբողջովին և մյուս հարկերը կես առ կես ջնջեց: Հիմնեց հանգստյան թոշակ. ամբողջ կայսրության

մեջ, ամեն մարդ, որ 80 տարեկանին հասած էր, պետք է խնամվեր ու հոգացվեր պետության ծախսով: Պետության ծախսերը պակասեցնելու համար ջնջեց ինչ որ ավելորդ էր. և անձամբ էլ սրա օրինակը տալով, պալատի ոսկի և արծաթ ամանները վերցրեց, և մինչև անգամ կայսրուհուն արգելեց զարդարուն հագուստներ հագնել: Երկրագործությունը քաջալերեց և սրա համար ինքն էլ իր ձեռքով հող էր մշակում, իր պալատում թթենիներ տնկեց, շերամ պահեց և կայսրուհուն էլ ստիպում էր ասեղնագործությամբ զբաղվել: Բանակն ազատ արձակեց, որպեսզի զինվորները գնան խաղաղ աշխատանքով ապրեն: Պահեց միայն սահմանափակ թվով զորք՝ բարբարոսների արշավանքը կասեցնելու համար: Հին ժամանակ կար մի օրենք, որով պալատի առաջ երկու տախտակ էր կախված. մեկի վրա ցանկացողը կարող էր գրել ամեն լավ առաջարկ. որ երկրի բարօրության համար կարևոր էր համարում. մյուսի վրա գրում էին իշխանության թերությունները: Այս օրենքը հետո ջնջել էին. Վեն-թին նորից հաստատեց այն: Մեր ձեռքն է հասել Վեն-թիի մի հրովարտակը, ուր ասում է, թե պետության դեմ խոսելը ոճիր է համարվում. ինքն այս բանը բոլորովին սխալ է համարում. առանց ժողովրդի քննադատության կառավարությունն անտեղյակ պիտի մնա իր գործած սխալներին. ուստի հրամայում է, որ ամեն մարդ ազատ լինի իր գանգատները հայտնելու: Առիթ բռնելով արևի մի խավարում, որ չարագուշակ էին համարում, կայսրը մի ուրիշ հրովարտակ հանեց, ուր ասում է, թե այդ խավարումը իր անձի համար տրված մի նշան է, և խստիվ պատվիրում է ամենքին և ամեն տեղ՝ քննել և իմանալ, թե ինչ սխալներ է գործած, որպեսզի ինքն էլ դրանք ուղղելու աշխատի: Այս հրովարտակն էլ հասել է մեր ձեռքը:

Ամենահետաքրքրականը հետևյալն է. իր գահակալության տարեդարձին պաշտոնյաները հանդիսավոր աղոթքներ էին կատարել և կայսեր անձին երջանկություն էին մաղթում: Կայսրը հրովարտակ հանեց, ուր դատապարտելով այս արարքը, ասում է, որ կայսեր անձի երջանկությունը նշանակություն չունի, պետք է որ ժողովուրդը երջանիկ լինի: Սրա համար նա արգելում է նման ավելորդ ծիսակատարությունները և հրամայում, որ պաշ-տոնյաները փոխանակ այդպիսի գործերով զբաղվելու, իրենց ամբողջ ուշադրությունը նվիրեն իրենց պաշտոնը լավ կատարելուն:

40. ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ. ԿԱՐԿԵԴՈՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Կարկեդոնի պարտությունից հետո սկսում է Հռոմի մեծ աշխարհակալությունների շրջանը:

Այն ժամանակ աշխարհի վրա երկու պետություն կար, որոնք կարող էին Հռոմի միցակիցները համարվել. դրանք մակեդոնացիներն ու սելևկյաններն էին: Սրանք արդեն մի անգամ Հաննիբալի հետ միացած լինելով, գրգռել էին հռոմայեցիների թշնամությունը, որոնք պատեհ առիթ էին փնտրում՝ նրանց ուժը խորտակելու համար:

Մեծ տերությունների դեմ հաջողությամբ կռվելու համար հռոմայեցիք հետևում էին վարպետ մի քաղաքականության՝ գրգռել հպատակ մանր ազգերին ապստամբության, նրանց օգնության հասնել և հետո բոլորին միասին նվաճել:

Այս վարպետ քաղաքականությամբ նրանք շտապեցին Մակեդոնիա, երբ հույներն ապստամբելով՝ հռոմայեցիներին իրենց օգնության կանչեցին: Մակեդոնացիք նվաճվեցին, Հունաստանը ազատ հայտարարվեց (197 թ.), բայց կարճ ժամանակ հետո երկուսն էլ իրենց անկախությունը կորցնելով՝ հռոմեական գավառներ դարձան (146 թ.):

Նույն խաղը գործադրեցին նաև Սելևկյանների դեմ. Անտիոքոս Մեծն արշավեց Եվրոպա և Հունաստանին տեր դարձավ: Հռոմայեցիք ոտքի հանեցին Փոքր Ասիայի թագավորությունները, Հունաստանից դուրս վտարեցին նրան և հետո Փոքր-Ասիա անցնելով, Մագնիսա քաղաքի առաջ չարաչար խորտակեցին նրա ուժը: Այս պարտությամբ սելևկյանների պետությունը քայքայվեց և ամբողջ Փոքր Ասիան մինչև Տավրոսյան լեռները նրանցից խլվելով մտավ հռոմայեցիների իշխանության տակ (190 թ.):

Հռոմայեցիների գրգռությամբ* Հայաստանն էլ, որ մինչև այն ժամանակ սելևկյաններին հպատակ երկիր էր, դարձավ անկախ պետություն:

Սրանից հետո հռոմայեցիք նորից իրենց ուշադրությունը դարձրին Կարկեդոնի վրա, որ հաշտության կարճատև շրջանում իր ուժերը նորոգել, նորից ծաղկյալ ու հարուստ ծովային պետություն էր դարձել: Ապագա հավանական հարձակումից վախենալով, հռոմայեցիք գրգռեցին Նյումիդիայի թագավորին, որ եկավ Կար-

կեդոնի հողերը գրավելու. կարկեդոնացիք պատերազմ բացին նրա դեմ. իսկույն հռոմայեցիք օգնության հասան իրենց դաշնակցին. և թեև Կարկեդոնը պատրաստ էր հաշտություն կնքելու, իր ամբողջ նավերն ու զենքերը հռոմայեցիներին հանձնելու պայմանով, բայց նրանք մերժեցին, որովհետև կանխապես որոշել էին ոչնչացնել Կարկեդոնը: Կարկեդոնացիք այն ժամանակ ցույց տվին աներևակայելի քաջություն.աստվածների տաճարները զենքի գործարան դարձան. մարդիկ իրենց տները քակեցին նավեր շինելու համար. կանայք իրենց մազերից նավի պարաններ հյուսեցին: Հռոմայեցիք երեք անգամ պարտվեցին այս հուսահատ դիմադրության ժամանակ. իրենց նավերը այրվեցին. վերջապես հռոմայեցիք, հաստակառույց մի պարիսպ քաշելով քաղաքի առաջ, ամեն հարաբերություն կտրեցին. սովորական կարկեդոնացիք կրակ տվին իրենց քաղաքին և իրենք էլ բոցերի մեջ նետվեցին. 17 օր տևեց հրդեհը, ամբողջ քաղաքն այրվեց և աշխարհի երեսից ջնջվեց (146):

41. ՀՈՒՅՆ-ԲԱԿՏՐԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.

Վերևում ասացինք, թե Ալեքսանդր Մակեդոնացին Բակտրիայում հունական մի ստվար գաղութ հաստատեց: Սելևկյանների ժամանակ, 3-րդ դարի կեսին, սրանք ապստամբեցին և Դիադոտոսի ձեռքով անկախ թագավորություն հաստատեցին: Ավելի ուշ Եվթիդիմոսը Հնդկաստան մտավ. Ասոքայի պետությունը կործանվել էր, հույները բնավ դիմադրություն չգտնելով, տիրեցին նաև Հնդկաստանի այս մասին: Այս ժամանակ սկսեցին Կենտրոնական Ասիայի բարբարոսների արշավանքները. յուվե-չի անվամբ թուրքական մի ցեղ արշավեց Բակտրիայի հունական թագավորության վրա. սրանք ստիպվեցին երկիրը թողնել, Փենջաբ փախան (175 թ.) և Սաքալա քաղաքում գահ հաստատեցին: 82 տարի տևեց հույների թագավորությունը Հնդկաստանում. նրանց թագավորների մեջ նշանավոր եղավ Մենանդրը, որին հնդիկները Միլինդա են կոչում (140 թ.) և իրենց վեպերի նյութ են դարձրած: Սրա վրա է գրված հնդկական «Միլինտափանհա» վեպը, որ բուդդայական վարդապետության մի հարցարան է:

Ներքին կռիվներով թուլացած և շարունակ ենթակա յու-չի

* գրգռությամբ - դրդմամբ (խմբ.):

թուրքերի արշավանքներին, հույն-բակտրիական թագավորությունը կործանվեց 93 թվականին: Սակայն իր այսչափ կարճ կյանքի մեջ էլ, հույն-բակտրիական թագավորությունը հնդիկների համար քաղաքակրթողական մեծ նշանակություն ունեցավ: Հնդկական արվեստի մեջ հունական տարրեր մտան, հնդկական թատրերգությունը հույների օրինակով ծնվեց: Այս ազդեցությունը սակայն տարածվեց Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասերի վրա, արևելքը նրանից զերծ մնաց:

42. ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ.

Մագնեսիայի ճակատամարտից հետո, երբ սելևկյան պետությունը քայքայվեց, Հայաստանի երկու կուսակալները՝ Արտաշես և Զարեհ, ժամանակը եկած համարեցին նրանց լուծը թոթափելու: Նրանք բանակցության մեջ մտան Հռոմի հետ և ստանալով ծերակույտի համաձայնությունը, Հայաստանը անկախ հայտարարեցին (189 թ.): Զարեհը թագավորեց Փոքր-Ասիայում և Արտաշեսը՝ Մեծ Հայքում:

Արտաշեսը մտածեց կազմակերպել հայոց ազգային միությունը՝ նվաճելով այն բոլոր գավառները, որոնք Հայաստանի բնական սահմաններն էին կազմում: Նա իր իշխանության իբր կենտրոն ընտրեց Արաքսի հովիտը, ուր ամուր դիրքի վրա կառուցեց Արտաշատը և դարձրեց մայրաքաղաք: Ապա հարձակվեց շրջակա թագավորությունների վրա. Ատրպատականի տերությունից խլեց Վասպուրականն ու Փայտակարանը, վրացիներից խլեց Տայքը, Կղարջքը և Գուգարքը, խալիֆներից և Մոսխերից՝ Կարինը, Դերջանը և Եկեղիքը, իսկ Ասորիքի իշխանությունից՝ Տմորիքը: Այսպես հասավ Հայաստանի բնական սահմաններին, Սև ու Կասպից ծովերին: Մնում էր միայն Ծոփաց երկիրը: Արտաշեսը հարձակվեց նաև այս երկրի վրա, բայց կապադովկացիք օգնության հասնելով՝ կարելի չեղավ այն գրավել, և Ծոփքը ժամանակավորապես Հայաստանից դուրս մնաց:

Մինչդեռ Հայաստանում հիմնվում էր Արտաշիսյան հարստությունը, մյուս կողմից նորից զորանում էին պարթևները: Նրանք սելևկյաններից խլեցին Միջագետքն ու Բաբելոնը. Մեծն Արշակ Թ (123-88 թթ.), դարձավ պարթևների մեծագույն աշխարհակալը: Մայրաքաղաքը Խորասանից փոխադրվեց Տիզբոն, որ Տիգրիսի

արևելյան ափի վրա էր կառուցվել, Սելևկիայի դիմաց: Պարթևները գտնվելով Հայաստանի անմիջապես հարավը, պիտի աշխատեին արգելել Հայաստանի ուժեղացումը: Այս պատճառով ահա նրանք կռվի ելան հայերի դեմ և հաղթելով խլեցին Արտաշեսի գրաված գավառներից մի մաս, ինչպես և թագավորի որդի Տիգրանը պատանդ տարան: Երբ թագավորը մեռավ, պատանդ Տիգրանն արձակվեց վճարելով Հայաստանի հողերից 70 հովիտ, որոնցով պարթևները կազմեցին մի քանի վասալ պետություններ, որոնք իբր պատվար պիտի ծառայեին հայերի ու պարթևների միջև: Այս մանր պետություններն էին Ադիաբենը (Ասորեստան), Կորդուքը և Օսրոյենը (Եփրատի վրա):

43. ՔԱՂԱՔԱՅԻՆ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ) ԿՌԻՎՆԵՐԸ ՀՌՈՄՈՒՄ

Այն մեծամեծ աշխարհակալությունները, որ հռոմայեցիք տարան աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների վրա, թեև մեծ փառքի և հարստության հասցրին նրանց, բայց միևնույն ժամանակ իրենց քայքայման պատճառ դարձան: Շփվելով արևելքի ազգերի հետ, այն գյուղական չարքաշ ու հայրենասեր ժողովուրդը դաճավ զեխության, շռայլության ու մեղկ կյանքի սիրահար, նվաճված ժողովուրդներից խլված հարստությունը վարժեցրեց նրանց դատարկապորտ լինելու. հունական արվեստները և մեղկությունը նրբացրին իրենց ճաշակը և մոռացնել տվին առաջին պարզությունը. նրանց նուրբ իմաստասիրական վարդապետությունների ծանոթությունը հասցրեց անկրոնության և ի վերջո անպարկեշտ հաճույքների: Իշխանավորները ձեռք բերելով ահագին հարստություն և մեծամեծ հողեր, կազմեցին մի նոր ազնվական դասակարգ, որ տիրացավ պետական բոլոր պաշտոններին. այսպիսով ժողովուրդը նորից հասավ այն իրավազուրկ դրության, որի մեջ էր հասարակապետությունից առաջ: Բուն աշխատավոր ժողովուրդը մասամբ պատերազմների մեջ կոտորվելով, մասամբ նոր գաղթավայրերում ցրվելով, գրեթե սպառվեց. մնացյալներն էլ ավելի լավ համարեցին երթալ քաղաք և իշխանավորների ծառայության մեջ դատարկ, բայց հանգիստ կյանք վարել: Նրանց տեղը գրավեցին զանազան երկրներից բերված անհամար ստրուկները, որոնք բռնի աշխատում էին և հայրենասիրությունից զուրկ էին: Իսկ Իտալիայի մյուս

ժողովուրդները, որոնք Հաննիբալի արշավանքների ժամանակ նույնքան տուժել էին կյանքով ու կայքով, այժմ էլ իրենց հողերից զրկվելով, հասան հետին աղքատության և քաղաք թափվելով, կազմեցին չքավոր (proletarius) դասակարգը, որն ապրում էր ողորմությամբ:

Ընկած գյուղական դասակարգը վերականգնելու փորձեր արին երկու անձնվեր եղբայրներ՝ Տիբերիոսը և Կայոս Գրակքոսը. առաջինը մի նոր օրենքով խլեց ազնվականների ավելորդ հողերը և բաժանեց հողազուրկ ժողովրդին (133 թ.), երկրորդը Իտալիայի բոլոր ժողովուրդների համար պահանջեց Հռոմի քաղաքացիության իրավունք, որով նրանք Հռոմի քաղաքացիներին հավասար էին լինելու (123 թ.): Բայց ազնվականները այս կարգերին հակառակորդ հանդիսացան և իրենց կուսակիցներով հարձակվեցին բարեենորոգիչների վրա. երկուսն էլ իրար հետևից զոհ գնացին և նրանց կուսակից ժողովրդից հազարավորներ մահ գտան: Սրանից հետո, շնորհված արտոնությունները խլվեցին և ժողովուրդը նորից մատնվեց նախկին աղքատ, հողազուրկ վիճակին:

Այս միջոցին ծագեցին մի քանի ահավոր պատերազմներ. Նյումիդիայում Յուգուրթա անուն մի իշխան թագավորին սպանելով՝ գահին տեր դարձավ և զենքը դարձրեց Հռոմի դեմ: Կաշառելով Հռոմի իշխանավորներին՝ ինքը կարողացավ շարունակ հաղթող հանդիսանալ հռոմեական բանակների դեմ, մինչև որ Մարիուս զորավարը, որ հասարակ, տգետ մի գյուղացի էր, քաջությամբ հաղթեց նրան և գերի բռնելով բանտարկեց (104 թ.):

Հազիվ աֆրիկյան պատերազմը վերջացել էր, տեղի ունեցավ գերմանական ավելի ահավոր արշավանքը: Մեր թվարկությունից առաջ 116 թվականին Պալթիկ ծովը բարձրանալով, հեղեղեց շրջակա գավառները. 100 000 հոգի ջրահեղձ եղան. Յութլանդի բնակիչ վայրենի և մարդակեր կիմբրերը և տևտոնները, 600 000 հոգի, հեղեղից փախչելով, թողին գերմանական երկիրը և ուրականի պես արշավեցին Էլբայի և Դանուբի հովիտները: Երեք տարի ամեն ինչ ավերել վերջացնելուց հետո, այս վայրենիները Զվիցերիայի վրայով արշավեցին գալլերի երկիրը և հետո Իտալիա: Հռոմեական վեց լեգեոններ իրար հետևից բնաջինջ եղան այս սարսափելի հրոսակների առաջ. 100 000 հռոմայեցի ջարդվեց. եթե տևտոնները այս միջոցին Հռոմի վրա արշավեին, հռոմեական պետությունը վերջացած պիտի լիներ: Բայց վայրենիները

ճանապարհ ծռելով անցան Իսպանիա, որ կողոպտելուց հետո նորից հետ դարձան: Մարիուսն այդ միջոցին իր պատրաստությունները տեսել էր: Չքավոր ժողովրդից մի մեծ բանակ կազմելով, ելավ վայրենիների դեմ և նրանց ուժը խորտակելով, կարողացավ փրկել Հռոմը ստույգ վտանգից (102 թ.):

Այս քաջագործությունների համար Մարիուսը քանիցս Հռոմի Հյուպատոս ընտրվեց և օգտվելով իր աստիճանից, կռիվը նորոգեց ազնվականների դեմ, այնքան որ սրանք միացան և հաջողվեցին վերջապես հեռացնել նրան: Այն ժամանակ ոտքի կանգնեցին Իտալիայի ժողովուրդները և նորից սկսեցին պահանջել քաղաքացիության իրավունքը: Մերժում ստանալով ազնվականներից, նրանք բաժանվեցին Հռոմից և հիմնեցին առանձին պետություն: Հռոմը պատերազմ բաց արեց դաշնակիցների դեմ, որ տևեց երկու տարի և 300 000 զոհ խլեց դաշնակիցներից. վերջապես Սիլլա զորավարը հաղթեց նրանց և Հռոմը զանազան զիջումներ անելով հաշտվեց (90-88 թթ.):

44. ՀԱՅ-ՊՈՆՏԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ԵՎ ՄԻՀՐԴԱՏ

Մինչդեռ հռոմայեցիք զբաղվել էին քաղաքացիական ու քաղաքական մեծամեծ պատերազմներով, մյուս կողմից, Առաջավոր Ասիայում հիմնվում էր մի մեծ կայսրություն, որ հռոմեական պետության սարսափն էր դառնալու:

Դա հայ-պոնտական կայսրությունն էր:

Առաջավոր Ասիայի վիճակն այն ժամանակ հետևյալ ձևն էր ներկայացնում: Արևմտյան ծայրին գտնվում էր **Ասիա** անվամբ մի նահանգ, ուր կենտրոնացել էին հռոմեական նահանգային վարչությունը և զինվորական ուժը: Սրան սահմանակից էին Փոքր-Ասիայի մի շարք մանր պետությունները (Կապադովկիա, Կոմմագեն, Կիլիկիա և այլն), որոնք Մագնեսիայի ճակատամարտից հետո ընկել էին հռոմեական թևարկության* տակ: Հայաստանի մոտ գտնվում էին Փոքր Հայքն ու Ծոփքը, որոնք առանձին թագավորություններ էին: Ավելի հարավ գտնվում էր պարթևների մեծ պետությունը, որից Հայաստանը բաժանվել էր Ադիաբենի, Կորդուքի և Օսրոյենի վասալական պետություններով:

* թևարկության տակ - տիրապետության տակ (խմբ.):

Միջերկրականի արևելյան ափի վրա կանգուն էր Սելևկյան պետությունը, որ թեև իր նախկին փառքից զրկված, բայց դարձալ մեծ պետություն էր: Հայաստանին սահմանակից էր Պոնտոսը, որի վեհապետ Միհրդատը՝ հելլենական դաստիարակությամբ մեծացած, մարտական ընդունակություններով օժտված, անխոնջ զինվորական էր: Նրա նպատակն էր Փոքր Ասիայի բոլոր պետությունները միացնել իր ձեռքի տակ և դուրս գալ Հռոմի դեմ:

Տիգրանը և Միհրդատը, երկուսն էլ աշխարհակալական խոշոր ծրագիրներով սնված, ձեռք մեկնեցին միմյանց և կազմեցին հայ-պոնտական հարձակողական ու պաշտպանողական մի դաշնադրություն, որ և կնքեցին խնամությամբ: Տիգրանն ամուսնացավ Միհրդատի աղջկա հետ: Այս դաշնադրությամբ Տիգրանը պիտի նվաճեր Հայաստանի արևելյան և հարավային երկրները, իսկ Միհրդատը՝ արևմտյան և հյուսիսային երկրները. առաջինն իր զենքը պիտի ուղղեր գլխավորապես պարթևների դեմ, իսկ երկրորդը՝ հռոմայեցիների:

Տիգրանը դուրս եկավ նախ Հայաստանին միացնելու Ծոփքը, որ Արտաշեսի ժամանակից դուրս էր մնացել. սակայն նա չկարողացավ գրավել Փոքր Հայքը, որովհետև Միհրդատի իշխանության տակ էր մտել. այսպիսով արևմտյան կողմից Հայաստանի սահմանը եղավ Եփրատը: Այնուհետև Տիգրանն իր զենքը դարձրեց պարթևների դեմ և նվաճեց Ադիաբենի, Կորդուքի, Օսրոյենի, Ատրպատականի և Մարաստանի վասալ իշխանությունները, ինչպես նաև Կուրի և Արաքսի ներքին հովիտը: Այս նվաճումներով Տիգրանն իր վրա առավ «թագավորաց թագավոր» տիտղոսը, որ համապատասխանում է մեր ներկայի կայսր գաղափարին, մինչդեռ պարթևների թագավորը կոչվելու էր պարզապես «թագավոր»: Այս բոլոր շրջաններից Տիգրանը կազմեց 500 000 զորքով հսկա մի բանակ: Սրանից հետո նա հարձակվեց սելևկյանների պետության վրա, որ կործանելով գրավեց նրանց ձեռքից Արևելյան Կիլիկիան, Ասորիքը, Փյունիկեն, Պաղեստինի մի մասը, որոնք միացրեց իր տերության: Իսկ Միջագետքի մի մասը դարձրեց առանձին հայկական թագավորություն, որի մայրաքաղաքն եղավ Մծբինը: Այս ամբողջ երկրների աշխարհակալության շրջանը տևեց 25 տարի և վերջացավ 75 թվականին: Հայաստանը Հռոմի հետ դարձել էր աշխարհի մեծագույն պետությունը. իր սահմանները տարածվում էին Կուր գետից մինչև

Հորդանան և Մարաց լեռներից մինչև Կիլիկյան Տավրոս: Այս ընդարձակ տարածության վրա գտնված բազմաթիվ ու բազմազան ազգերը միացնել և մեկ համայնքի մեջ ձուլելը շատ դժվար գործ էր, որովհետև հայ ժողովուրդը փոքրամանություն էր ներկայացնում: Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը կենտրոնից շատ հեռու էր գտնվում, ուստի Տիգրանը Տիգրիսի հովտում կառուցեց Տիգրանակերտ քաղաքը, որ բնակեցնելու համար արշավեց արևմուտք, դեպի Կապադովկիա, Կիլիկիա և Ասորիք, և 12 քաղաք կործանելով, նրանց բնակիչներին՝ 300 000 հույն կամ հելլենացած օտարազգիներ, փոխադրեց Տիգրանակերտ:

Այսպես Տիգրանը հիմնեց արևելյան մի մեծ պետություն, որի կառավարությունը թեև բռնակալ միապետական, բայց սիրող էր հելլենական քաղաքակրթության, որ որդեգրեց ու սկսեց տարածել իր շրջանում:

Մինչդեռ Տիգրանն այսպես զբաղվել էր արևելքի և հարավի նվաճումով, նրա դաշնակից Միհրդատը նույն միջոցին արշավում էր դեպի հյուսիս և արևմուտք: Նախ նվաճեց Սև ծովի հյուսիսային երկրները, Ղրիմն առավ իր իշխանության տակ, հետո գրավեց Փոքր Ասիայի այն բոլոր երկրները, որոնք Հռոմի հպատակ կամ նրա պաշտպանության տակ էին: 100 000 հռոմեական քաղաքացի կամ զինվոր ջարդեց: Ամբողջ Փոքր Ասիային տիրելուց հետո, մի մեծ բանակ ճանապարհ հանեց դեպի Եվրոպա, որ շուտով տիրեց Թրակիային, Մակեդոնիային և Հունաստանին: Մնում էր միայն անցնել Իտալիա և այնտեղ խորտակել Հռոմի ուժը. և Միհրդատն արդեն սկսել էր այս նպատակով պատրաստություն տեսնել:

Հռոմայեցիք սարսափահար Միհրդատի դեմ ուղարկեցին նշանավոր Սիլլա զորավարը ստվար բանակով: Սիլլան անցավ Հունաստան. հույներն արդեն Միհրդատի կողմն էին անցել և Սիլլան շատ մեծ նեղություններ կրեց՝ դիմադրելու համար պոնտական բանակին: Տասն ամիս տևեց Աթենքի պաշարումը, որ վերջապես գրավեց. հետո ավելի հյուսիս բարձրացավ և երկու անգամ ջարդելով պոնտացիների զորքը, տիրեց ամբողջ Հունաստանին: Այնտեղից անցավ Ասիա, բայց ստիպվեց շուտով հաշտվել Միհրդատի հետ, որովհետև պետք էր դառնալ Իտալիա՝ ժողովրդական ապստամբությունը զսպելու համար: Միհրդատ պարտավորվեց վճարել մեծ տուգանք, 70 նավ և հրաժարվել իր տիրած բոլոր երկրներից:

45. ՄԱՐԻՈՍ-ՍԻԼԼԱՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Հռոմում նորից սկսել էին քաղաքացիական կռիվները՝ կուսակցական հողի վրա: Ժողովուրդը բաժանվել էր երկու մասի. Սիլլայի կուսակիցներ, որոնք ազնվականների շահերի պաշտպանն էին, և Մարիոսի կուսակիցներ, որոնք ժողովրդի շահերին կողմնակից և անհաշտ հակառակորդ էին Սիլլային: Սիլլայի բացակայության ժամանակ, Մարիոսի կուսակիցները, գրավելով Հռոմի իշխանությունը, ահավոր կոտորած սկսեցին Սիլլայի կուսակիցների մեջ: Սամնիացիք և Հարավային Իտալիայի զորքն էլ բռնելով Մարիոսի կողմը, արշավեց Հռոմի վրա: Ահա այս պատճառով էր, որ Սիլլան ստիպվել էր շուտով հաշտվել Միհրդատի հետ և դառնալ Հռոմ: Ժողովրդական կուսակցությունը հաղթվեց, Սիլլան տեր դարձավ Հռոմի և իբրև դիկտատոր այնպիսի սարսափ տարածեց, որ պատերազմի արհավիրքներն էլ գերազանցեց: Վեց ամիս արյունը հոսում էր ամբողջ Իտալիայում: Սիլլան Մարիոսի կուսակիցների անունների ցուցակը կազմած՝ կախել էր հրապարակներում և ամեն մարդ իրավունք ուներ և պարտավոր էր սպանել ու կողոպտել նրանց առանց դատաստանի:

Այսպես նորոգվեց ազնվականների գերագույն իշխանությունը, որ ամբողջապես կենտրոնացավ ծերակույտի ձեռքում: Իտալիայի ժողովուրդներն էլ իր կողմը շահելու համար, Սիլլան տվեց նրանց ներքին ինքնավարություններ, իրենց ծերակույտի իշխանության տակ: Այսպես վերջացավ քաղաքացիական կռիվների հիսնամյա շրջանը և Գրակքոսների սկսած գործը գրեթե պսակվեց հաջողությամբ (82 թ.): Բայց սրա փոխարեն առաջ եկավ նոր ծանր մի վիճակ. զորքի միջից վերացավ կարգապահությունը, կողոպուտ և սպանություն նրանց համար սովորական բան դարձան և այս միջոցով հարստության և իշխանության տիրացան: Այսպիսով Հռոմի կառավարությունը ժողովրդից և ազնվականներից անցավ լրբացած զինվորականության ձեռքը:

Կրքերը առերևույթս հանդարտվել էին. բայց այս սարսափի ազդեցության տակ էր միայն: Անմիջապես որ Սիլլան մեռավ, սկսեցին նորանոր պոռթկումներ: Մարիոսի կուսակիցներն սկսեցին պահանջել իրենց կորած հարստությունը և երբ ծերակույտը մերժեց, գալլերի հետ միացած արշավեցին Հռոմի վրա: Ուրիշ մարիոսականներ քշվեցին Իսպանիա, ոտքի հանեցին լուսի-

դոնացիներին և ջարդելով իրենց դեմ ուղարկված բանակները՝ ուզում էին հիմնել նոր Հռոմ: Մի խումբ ստրուկներ փախչելով արենայից, 100 000 ստրուկների գլուխն անցան և պատրաստեցին սոսկալի մի ապստամբություն: Սրան հաջորդեց ծովահենների արշավանքը: Սիլլայի ձեռքից մազապուրծ փախած բազմաթիվ մարիոսականներ, գողեր ու ավազակներ, ահագին խմբեր կազմած, ամրացել էին Միջերկրականի բոլոր ափերի վրա և նավատորմներ կազմած ու բերդեր կառուցած՝ կողոպտում էին առևտրական նավերը. այնքան որ վաճառականությունը կանգնեց և եկավ մի վայրկյան, երբ Հռոմը Աֆրիկայից չկարենալով ցորեն ստանալ՝ մատնվեց սովի ճիրաններին:

Այս բոլոր արշավանքները զսպող և Հռոմը վերահաս վտանգից ազատող գլխավոր անձը եղավ Պոմպեոսը, որ Սիլլայի օգնականն էր: Սրանով ինքը դարձավ երկրի ամենաազդեցիկ մարդը: Պոմպեոսը, թեև Սիլլայի կողմնակից, բայց տեսնելով որ ազնվականության գերիշխանությունը վնասակար է երկրի շահերին, վերականգնեց նախկին կարգերը, որով եղավ ամենաժողովրդական մարդը (70 թ.):

46. ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԵՎ ՊՈՄՊԵՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Հռոմի գլխին բարձրացած այս բոլոր փոթորիկները միջոց տվին Միհրդատին նորից սկսելու իր արշավանքները: Կովկասյան լեռներից ու Դանուբի ափերից բարբարոսների մի բանակ կազմած, հարձակվեց Փոքր Ասիայի վրա և մինչև ծովը տիրեց: Հռոմայեցիք նրա դեմ ուղարկեցին Լուկուլլոս զորավարին: Այս պատերազմում Տիգրանը մնաց չեզոք և Միհրդատը, մի քանի անգամ հռոմայեցիներին հաղթելուց հետո, պարտվեց և փախավ Հայաստան: Լուկուլլոսն ուզենալով Ասորիքն էլ գրավել, այնտեղ բնակվող հույներին հորդորեց ապստամբվել: Միևնույն ժամանակ դիմեց Տիգրանին և պահանջեց իրեն հանձնել Միհրդատին. բայց մերժում ստանալով, իսկույն մտավ Հայաստան և պաշարեց Տիգրանակերտը: Տիգրանը պատրաստ չէր. ուստի թողեց և հեռացավ: Տիգրանակերտի հույները ապստամբեցին և քաղաքը Լուկուլլոսին հանձնեցին: Նույն ժամանակ ապստամբեցին նաև Ասորիքն ու Կորդուքը և թշնամիների կողմն անցան: Տիգրան նեղը մնացած, դիմեց պարթևներին և խոստացավ ետ տալ Միջագետքի երկրները,

եթե իրեն օգնական զորք տային: Նույնպիսի դիմում կատարեցին նաև հռոմայեցիք: Պարթևները հավասարապես վախենալով թե՛ հայերից և թե՛ հռոմայեցիներից, որոշեցին չեզոքություն պահել:

Տիգրանն ու Միհրդատը կազմակերպեցին մի նոր բանակ և կռվի ելան. Լուկուլլոսն արշավեց Հայաստանի ներսերը՝ Արտաշատ մայրաքաղաքը գրավելու համար, բայց չդիմանալով Տիգրանի հարվածներին, ստիպվեց ետ քաշվել և գնաց նվաճելու Մծբինը: Միհրդատը նորից գրավեց Պոնտոսը. Տիգրանն առավ Կապադովկիան և մինչև իսկ սպառնում էին Ասիա նահանգին: Լուկուլլոսը Մծբինը թողեց և գնաց իր սիրած երկրները պաշտպանելու. բայց զինվորների ապստամբության պատճառով չկարողանալով մի բան անել, ետ քաշվեց:

Հռոմայեցիք այն ժամանակ ուղարկեցին հռչակավոր Պոմպեոսին. սա անմիջապես սկսեց բանակցություններ վարել պարթևների հետ՝ հայ-պոնտական միության դեմ մի նոր դաշնակցություն կազմելու համար: Նույն միջոցին Հայաստանում Տիգրանի որդին (Փոքր Տիգրանը) ապստամբել էր և Արտաշատին տիրելով, ցանկանում էր հոր իշխանությունը խլել. բայց հաղթվելով՝ փախել էր պարթևների թագավորի մոտ, որ իր աներն էր: Փոքր Տիգրանը կարողացավ համոզել պարթևներին՝ ընդունելու Պոմպեոսի առաջարկը: Այս դաշնադրությամբ Պոմպեոսը հարձակվեց Միհրդատի վրա, իսկ պարթևները Փոքր Տիգրանի հետ միասին հարձակվեցին Հայաստանի վրա: Միհրդատը հաղթվեց և քաշվեց Տայք, որ Հայաստանի և Պոնտոսի սահմանն էր. իսկ Տիգրանը հաղթեց պարթևներին և ետ քշեց: Այն ժամանակ Փոքր Տիգրանը փախավ Միհրդատի քով, որին Տիգրանը ապստամբության դրդիչն էր կարծում. և ահա այս եղավ պատճառ, որ Տիգրան և Միհրդատ թշնամացան միմյանց հետ և հայ-պոնտական դաշնակցությունը լուծարվեց: Այս միջոցին Միհրդատի որդին էլ ապստամբեց և Փոքր Տիգրանը, Միհրդատի դժվարին կացությունը տեսնելով, գնաց Պոմպեոսի մոտ: Պոմպեոսը մի նոր հարձակում գործեց Միհրդատի վրա, ջարդեց ու փախցրեց Կովկասյան լեռները: Այստեղ Միհրդատը, Հաննիբալի նման, հղացավ մի խոշոր ծրագիր, այն է հավաքել Կովկասի լեռնականներին, անցնել սարմատացիների աշխարհը, մտնել Եվրոպա և Իտալիայի վրա արշավելով, ուղղակի Հռոմը պաշարել: Բայց այս ահավոր ծրագիրը սարսափեցրեց իր բոլոր զորապետներին, որոնք մեծ ու փոքր ապստամբեցին իր դեմ

և Միհրդատը, վերջին հուսահատության մատնված, անձնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին:

Այսպես Պոնտոսը նվաճվեց և հռոմեական նահանգ դարձավ:

Պոմպեոսը այնուհետև Փոքր Տիգրանի առաջնորդությամբ քայլեց Արտաշատի վրա: Տիգրանը նեղը մնացած, գոնե բուն Հայաստանը ազատելու համար, շտապեց բանակցության մեջ մտնել Պոմպեոսի հետ և նրա բանակատեղին գնալով, հաշտվեց: Այս հաշտությամբ Տիգրանը զրկվեց իր նվաճած բոլոր երկրներից, դարձավ Հռոմի բարեկամ և դաշնակից պետություն, որի թագավորները գահ պիտի բարձրանային Հռոմի հավանությամբ (66 թ.): Պոմպեոսը անցավ Կովկաս, նվաճեց Աղվանքը, Վրաստանը, Կողքիսը (Մինգրելիան), առաջացավ մինչև Աբխազիա և լեռնականներին գոնե անվանապես Հռոմին հպատակ հայտարարելուց հետո, Հայաստանի և Ասորիքի վրայով վերադարձավ:

47. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երբ Պոմպեոսը հաղթականորեն վերադարձավ Ասիայից, Հռոմում նոր էր վերջացել այն մեծ խռովությունը, որ պատմության մեջ հայտնի է Կատիլինայի դավադրություն անվամբ: Այս անձն արտակարգ ընդունակություններով օժտված, բայց նշանավոր անբարոյական և ոճրագործ մարդ էր: Նա իր կողմը սիրաշահելով Հռոմի սրիկաների մի մեծ խումբ, ետրուրացիներին և գալլերին, կազմել էր ընդարձակ մի դավադրություն, այն է՝ գրավել Հռոմը, այրել, հյուպատոսներին ու ծերակուտականներին սպանել, իշխանությունը ձեռք բերել և հարուստներին կողոպտելով՝ մեծ հարստության տեր դառնալ: Կիկերոնը՝ հռչակավոր հռետորը, երևան հանեց դավադրությունը և դավադիրներին մահապատժի ենթարկել տվեց (63 թ.): Ծերակույտը, որ այս դավադրությունը ջնջելով, հայրենիքը վտանգից փրկած լինելու հպարտությամբ էր լցված, սառնությամբ ընդունեց Պոմպեոսին և մերժեց վարձատրել նրա զինվորներին: Պոմպեոսը ստիպվեց միանալ Հուլիոս Կեսարին, որ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչն էր, և Կրասոսին, որ ազնվականների ներկայացուցիչն էր, և նրանց միջոցով իր արդար պահանջը լրացրեց: Այս երեքի միությունը, ուր համբավ, հարստություն և խելք միացել էին, կոչվեց Եռապետություն (Triumvirat) (60 թ.):

Եռապետների մեջ ամենանշանավորը դարձավ Կեսարը, որ հյուպատոս ընտրվելով, գրեթե մենակ կառավարեց երկիրը: Ինքը դրեց պետության ծախսով աղքատներին նոր հողեր բաժանելու օրենքը, որով ժողովրդի սիրելին դարձավ: Ուզենալով զորքն էլ իր կողմը դարձնել, բանակի գլուխն անցավ և իր վրա վերցրեց Գալլիայի արշավանքը: Այն ժամանակ գերմանական սվև կոչված մի ցեղ Հռենոսն անցնելով արշավել էր Գալլիա և այն նվաճել. Կեսարը գնաց այս բարբարոսներին նվաճելու: Նախ հաղթեց հելվետացիներին, որոնք Զվիցերիայից գաղթել էին Գալլիա և նրանց նորից քշեց իրենց երկիրը: Հետո նվաճեց Էլզասը, հաղթեց բելգիացիներին, տիրեց ամբողջ Բելգիային և Լա Մանշի նեղուցից անցնելով, մտավ Մեծն Բրիտանիա: Այսպես 10 տարում ամբողջ կելտական երկրները նվաճելով, դարձավ Իտալիա:

Հռոմում եռապետները նորից միացան և ամրապնդեցին իրենց բարեկամությունն ու իշխանությունը հակառակորդների դեմ: Պոմպեոսը գնաց Իսպանիա, իսկ Կրասոսը՝ պարթևների դեմ:

48. ԿՐԱՍՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ. ՀԱՅ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

Հռոմայեցիների և պարթևների միությունը, որ հապճեպով կազմակերպել էր Պոմպեոսը, անհիմն բան էր և գոյացել էր միմիայն հայ-պոնտական զորությունը խորտակելու համար. և անմիջապես, երբ Պոնտոսը նվաճվեց և Հայաստանը Հռոմին դաշնակից պետություն դարձավ, այս միությունն էլ ջնջվեց: Աշխարհի երկու ամենամեծ պետությունները դեմ դեմի էին եկել և ուշ կամ կանուխ սկսվելու էր ընդհարումը: Այս վիճակում Հայաստանի դրությունը շատ ծանր էր. նա իբրև դաշնակից օգնելու էր հռոմայեցիներին, որից գրգռված, պարթևներն էլ պիտի աշխատեին նվաճել այն, որպեսզի կարենային ավելի հաջողությամբ կռվել հռոմայեցիների դեմ:

Տիգրանի մահից անմիջապես հետո կռիվն սկսվեց: Հռոմայեցիների եռապետ Կրասոսը եկավ Ասորիք և այնտեղից արշավեց պարթևների վրա: Հայոց թագավոր Արտավազդը, իբրև դաշնակից, խորհուրդ տվեց Կրասոսին, որ հռոմեական բանակը նախ մտցնի Հայաստան, որպեսզի հայկական բանակի հետ միացած՝ արշավեն պարթևների վրա: Բայց Կրասոսը մերժեց այս

ծրագիրը և մենակ, Միջագետքի վրայով սկսեց առաջանալ: Պարթևները կազմակերպեցին երկու բանակ, որոնցից մեկն ուղարկեցին Կրասոսի դեմ՝ Միջագետք, իսկ մյուսը Արտավազդի դեմ՝ Հայաստան, որպեսզի արգելեն դաշնակիցների միացումը: Այլևս Արտավազդի համար անհնար էր միանալ Կրասոսին, իսկ Կրասոսը, Արտավազդի այս քայլը համարելով դավաճանություն, որոշեց պատժել նրան: Սրա վրա հայերն իսկույն հեռացան հռոմայեցիների դաշնակցությունից և միացան պարթևների հետ: Այս նոր դաշնակցությունը նվիրագործվեց երկու թագավորների խնամությամբ: Պարթև և հայ բանակների առաջ հռոմայեցիք չարաչար հաղթվեցին և նույնիսկ Կրասոսն սպանվեց: Այնուհետև դաշնակիցներն անցան Եփրատը, արշավեցին հռոմեական երկրները և նվաճեցին Ասորիքը, Փյունիկեն ու Պաղեստինը:

49. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

Կրասոսի մահից հետո, երկու եռապետների միջև կռիվ ծագեց. երկուսն էլ ցանկանում էին միահեծան իշխել: Կեսարն իր բանակով քայլեց Հռոմի վրա: Պոմպեոսը, թեև ուներ մեծ ուժ, բայց պատրաստ չէր. ուստի չկարողացավ դիմանալ և փախավ Հունաստան: Կեսարը կարճ ժամանակվա մեջ տիրեց Իտալիային, Սիկիլիային, Սարդենիային, Իսպանիային, հետո գնալով Պոմպեոսի հետևից, Թեսալիայում խորտակեց նրա ուժը: Այնտեղից վերադարձավ Հռոմ և զորքին ու ժողովրդի պաշտամունքին առարկա դարձած, ընտրվեց ամբողջ երկրի ընդհանուր զինվորական հրամանատար, ցմահ ստանալով կայսր (imperator) տիտղոսը:

Կեսարի ծրագիրն էր Հռոմի քաղաքացիության իրավունքը տարածել ամբողջ հռոմեական պետության հպատակ ժողովուրդների վրա, պայմանով, որ նրանք իրենց վայրենի բարքերը թողնելով, ընդունեին հռոմեական քաղաքակրթությունը: Այս ծրագիրն արդեն գործադրության դրեց Գալլիայում, որին պիտի հաջորդեին հետզհետե ուրիշ երկրներ:

Բայց Կեսարի կյանքը շատ կարճ եղավ. մի խումբ կատաղի հանրապետականներ, նրա գործունեության մեջ տեսնելով միապետության վերականգնումը, հարձակվեցին նրա վրա և սպանեցին (44 թ.):

Կեսարի մահից անմիջապես հետո նրա գլխավոր զորավար Անտոնիոսը, որդեգիր Օկտավիանոսը և Գալլիայի կառավարիչ Լեպիդոսը, հալածելով դավադիրներին, կազմեցին երկրորդ եռապետությունը: Սրանք հռոմեական պետությունը բաժանեցին իրենց մեջ. Լեպիդոսն ստացավ Աֆրիկան, Անտոնիոսն առավ Արևելքը, Հունաստանը և Եգիպտոսը, իսկ Օկտավիանոսն առավ Արևմուտքը և Հռոմը:

50. ԱՆՏՈՆԻՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Եռապետական կռիվների պատճառով հռոմայեցիք մի պահ անուշադրության էին մատնել Արևելքը, ուր հայերը և պարթևները հասել էին մինչև ծովը: Երբ Երկրորդ եռապետությունը գլուխ անցավ իշխանության և Անտոնիոսն ստացավ Արևելքը, իր մեկ զորավարը արշավեց պարթևների վրա և խորտակեց նրանց զորությունը (38 թ.): Հռոմի տիրապետությունը տարածվելով նաև Վրաստանի ու Աղվանքի վրա, հասավ մինչև Կովկասյան լեռները: Արտավազդը նորից փոխեց իր քաղաքականությունը և պարթևներից բաժանվելով, անցավ հռոմայեցիների կողմը: Հայոց և հռոմայեցիների միացյալ բանակը արշավեց Ատրպատականի վրա, բայց պարթևներից ջարդվելով ետ քաշվեց: Այս պարտության պատասխանատվությունը հռոմայեցիք Արտավազդի վրա ձգելով, իրենց սիրտը զովացնելու համար շղթայեցին նրան (34 թ.) և իր ընտանիքով Եգիպտոս գերի տանելով սպանեցին (31 թ.), իսկ Հայաստանը հանձնեցին Ատրպատականի Արտավազդ թագավորին, որ Հռոմի հպատակությունն ընդունել էր:

Հայերը շուտով ապստամբեցին այս նորելուկ թագավորի դեմ և Արտավազդի որդի Արտաշես Բ-ի առաջնորդությամբ դուրս վռնդելով նրան, ջարդեցին Հայաստանում մնացած ամբողջ հռոմեական զորքը և Հայաստանը անկախ հայտարարեցին:

51. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՕԳՈՍՏՈՍԻ ԴԱՐԸ.

Ինչպես որ Առաջին եռապետության ժամանակ Կեսարն իր երկու ընկերներին վտարելով տեր դարձավ իշխանության, նույնպես եղավ նաև այս երկրորդ եռապետության ժամանակ:

Արդեն Օկտավիանոսը Հռոմն իրեն բաժին պահելով, ծածուկ սկսել էր աշխատել այս նպատակով: Լեպիդոսը երկրորդական նշանակություն ուներ. մրցումը տեղի էր ունենալու Օկտավիանոսի և Անտոնիոսի միջև: Անտոնիոսը քաշվելով Եգիպտոս, սկսել էր արևելյան երկրները մեկ առ մեկ իր որդիներին բաշխել՝ առանձին թագավորություններ ստեղծելով: Սրանից առաջացավ մեծ դժգոհություն Անտոնիոսի դեմ՝ ասելով թե նա հռոմեական պետությունը բաժան-բաժան է անում: Առիթից օգուտ քաղեց Օկտավիանոսը և պատերազմ հայտարարեց Անտոնիոսի դեմ: Մի նշանավոր նավամարտի մեջ Անտոնիոսը հաղթվեց և անձնասպան եղավ: Այսպիսով Օկտավիանոսը դարձավ հռոմեական պետության միահեծան տերը. ծերակույտը տվեց նրան Օգոստոս տիտղոսը, որ սիրով ընդունեց ժողովուրդը և տեղ-տեղ էլ աստվածային պաշտամունքի առարկա դարձրեց:

Այսպես հիմնվեց Հռոմեական կայսրությունը (30 թ.):

Օգոստոսի շրջանը Հռոմեական պատմության ամենափառավոր ժամանակն է և իր գահակալի անունով կոչվում է Օգոստոսի դար: Օգոստոսը, տեսնելով որ պետությունն այնպիսի հսկայական մեծության է հասած, որից ավելին կառավարել այլևս անհնար է, փակեց պետության սահմանները, վերջ տվեց դարավոր պատերազմներին և խաղաղությունը տիրեց երկրում: Ինքն աշխատեց ստեղծել բարեկարգ մի կառավարություն: Իշխանությունը ենթարկեց ուժեղ կենտրոնացման, որի համար պատրաստել տվեց մինչև պետության ծայրամասերը հասնող ճանապարհներ, որոնք բոլորը տանում էին դեպի Հռոմ: Հաստատվեց սուրհանդակային վարչություն, որ կենտրոնի հրամանները ամեն տեղ էր հասցնում: Ժողովուրդը բարօրություն տեսավ: Արվեստները և գիտությունները ծաղկեցին ամեն ժամանակից ավելի, և հռոմեական քաղաքակրթությունն սկսեց տարածվել ամենուրեք: Օվրատիոսը, Վիրգիլիոսը, Տիտոս-Լիվիոսը, Օվիդիոսը և շատ ուրիշ հանճարներ նրա օրով ծաղկեցին:

52. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Անկախություն հայտարարող Հայաստանը նվաճելու համար Օգոստոս կայսրը բռնի միջոցների չդիմեց: Ինքն արդեն պատերազմների հակառակ լինելով, ձեռք առավ քաղաքագիտությունը:

Հայաստանում կազմվեց հռոմեասեր մի կուսակցություն, որ կայսեր դրդմամբ և հռոմեական բանակի օգնությամբ տապալեց իշխանությունը, սպանեց Արտաշես թագավորին և գահ բարձրացրեց Արտավազդի եղբայր Տիգրան Գ-ին, որ այն ժամանակ Հռոմում էր գտնվում: Այսպես Հայաստանը բոլորովին հռոմեական իշխանության տակն ընկնելով, դարձավ անվանական մի թագավորություն. և այս հաջողությունը մեծ շուքով տոնեցին Հռոմում:

Այս վիճակը մի քանի տարի տևելուց հետո, հռոմեասեր կուսակցությունն ընկավ. հայոց ազգային կուսակցությունը միացավ պարթևների հետ և հռոմայեցիների դեմ ապստամբելով դուրս քշեց նրանց: Այն ժամանակ հռոմայեցիք գրգռեցին Կովկասյան լեռների ժողովուրդներին, որոնք խմբով արշավեցին Հայաստան. նրանց դեմ մղված պատերազմների մեջ մահացավ Տիգրան Դ-ը, որ վերջին շառավիղն էր Արտաշիսյան հարստության (1 մ. թ.): Այդ օրվանից սկսած Հայաստանի գահը դարձավ խաղալիք հռոմայեցիների ձեռքում: Պարթևների հետ համաձայնության գալով, հռոմայեցիք միացրին Հայաստանի և Ատրպատականի թագավորությունները և այդ երկու միացյալ երկրների վրա սկսեցին թագավոր նշանակել հռոմեական կրթություն ստացած զանազան օտարազգի անձնավորությունների: Հայերը չէին սիրում նրանց, ուստի շարունակ գլուխ բարձրացնելով, իրար հետևից վռնդեցին այդ գահակալներին: Հռոմայեցիք վախենում էին, որ հայոց մեջ պարթևական կուսակցությունը զորանալով, նրանց ազդեցության է ենթարկվում Հայաստանը. ուստի հաշտության իբրև վերջին միջոց, հայոց գահի վրա բարձրացրին Պոնտոսի թագավորի որդի Զենոնին, որ հռոմեական կայսերական ընտանիքի ազգականն էր, բայց մեծացել էր Հայաստանում: Այս ընտրությունը գոհացրեց թե՛ հռոմեական կուսակցությունը և թե՛ հայոց ազգային կուսակցությունը: Զենոնը մեծ հանդեսով թագավոր պսակվեց Արտաշատում և ստացավ հայկական՝ Արտաշես Գ անունը (18 թ.):

Այնուհետև բավական ժամանակ խաղաղություն տիրեց Հայաստանում:

Այն, ինչից վախենում էին հռոմայեցիք, կատարվեց Արտաշեսի մահից անմիջապես հետո: Պարթևների Արտավան թագավորն ուզում էր հիմնել պարթևական մի մեծ պետություն, որին պիտի ենթարկվեր նաև Հայաստանը: Իրեն կողմնակից էր հայոց պար-

թևասեր կուսակցությունը, որ հետզհետե զորանալով, հաղթեց հակառակորդ հռոմեասեր կուսակցության, և Արտաշեսին իբրև հաջորդ գահի վրա բարձրացրեց Արտավանի որդի Արշակին (34 թ.): Սրանով Հայաստանն անցավ պարթևական գերիշխանության տակ: Հռոմայեցիք նորից ձեռնարկեցին քաղաքական խաղերի: Սրանք մի կողմից գրգռում էին վրացիներին, մյուս կողմից դավադրություններ էին լարում Հայաստանի և Պարսկաստանի միջև: Եվ ահա վրացիք, միանալով կովկասյան լեռնական ժողովուրդների հետ, արշավեցին Հայաստան: Պարթևների բանակը, որ եկել էր կռվելու վրաց դեմ, հաղթվեց: Մյուս կողմից ներքին դավաճանություններն ավելի մեծ գործեր տեսան. հայոց Արշակ թագավորը, իր պալատականներից թունավորվելով, մեռավ, իսկ պարթևների թագավորը Արտավան, իր իշխաններից վռնդվելով, փախավ Սկյութիա: Հռոմեական բանակը մտավ Միջագետք. պարթևներն ստիպվեցին ճանաչել Հռոմի բարեկամությունը և վրաց թագավորի եղբայր Միհրդատին ընդունել իբրև հայոց թագավոր (37): Այս պայմանով Արտավանը վերադարձավ իր գահը: Բայց հռոմայեցիք չկարողացան վայելել իրենց աշխատության պտուղը. իրենց թուլությամբ քշեցին վրացի Միհրդատին և Հայաստանը հանձնեցին Արտավանին, որ երկիրը պարսկական պետության մի պարզ նահանգի վերածեց և սկսեց մարզպանի ձեռքով կառավարել:

Այս վիճակը տևեց երեք տարի, մինչև Արտավանի մահը:

Արտավանի մահից հետո Պարսկաստանում սկսեցին գահակալական կռիվներ, որոնցից օգուտ քաղելով հռոմայեցիք մտան Հայաստան և վռնդված վրացի Միհրդատին նորից գահ բարձրացրին: Պարթևներն իրենց ներքին մեծամեծ կռիվներով զբաղված, չկարողացան ուշադրություն դարձնել իրենց դրացի երկրների վրա: Վերջապես կռիվները դադարեցին և Վաղարշը թագավորեց պարթևական գահի վրա. և որպեսզի իր երկու եղայրներին էլ բավարարի, նրանցից առաջինին՝ Բակուրին տվեց Ատրպատականի գահը, իսկ երկրորդին՝ Տրդատին, որ միանգամայն զրադաշտական կրոնի քուրմ էր, վերապահել էր Հայաստանի գահը:

Այդ միջոցին հայոց թագավորությունը վրաց ձեռքումն էր: Բայց վրացիք իրենց արարքներով զզվելի էին դարձել: Ատելությունն ավելի սաստկացավ, երբ վրաց թագավորն էլ սկսեց դավեր նյութել Հայաստանում, և Վրաստանի ու Հայաստանի վրացի թագա-

վորներն սկսեցին ջարդել միմյանց: Առիթից օգուտ քաղելով Վաղարշը Հայաստան ուղարկեց իր եղբորը՝ Տրդատին, որի բանակին միացան նաև հայերը, և վրացիներին Հայաստանից դուրս վռնդեցին (54): Սրա վրա դուրս եկան հռոմայեցիք իրենց իրավունքը պաշտպանելու համար, և սկսեց կատաղի մի կռիվ, որ տևեց 10 տարի (54-64 թթ.): Հռոմայեցիք ուղարկեցին Կորբուլոն զորավարին մեծ բանակով, որին միացան Հռոմի վասալ պետությունները, վրացիների, մոսխերի և Կոմմագենի թագավորները: Տրդատը մեծ ուժ չուներ դիմադրելու համար հռոմայեցիներին. ուստի նա մղում էր լեռնային ասպատակային կռիվ և շարունակ հետ էր քաշվում: Հռոմայեցիք առան Արտաշատը, որ հիմնահատակ կործանելուց հետո, իջան հարավ և գրավեցին մինչև Տիգրանակերտ: Արտաշատի կործանումը գրգռեց հայերին, որոնք ամեն կողմից կատաղաբար ոտքի կանգնելով, հարձակվեցին հռոմայեցիների վրա, բայց չկարողացան նրանց առաջն առնել: Հռոմայեցիք մինչև անգամ հարձակվեցին Ադիաբեն: Սրա վրա բուն պարթևական բանակը մտավ Հայաստան և հայոց հետ միանալով չարաչար հաղթեց հռոմայեցիներին:

Այս հաղթությունից հետո Վաղարշն առաջարկեց հաշտության պատվավոր մի ձև, այն պայմանով, որ Տրդատը թագավորի հայոց, բայց իր թագը, Հռոմ գնալով, ստանա կայսեր ձեռքից: Այս ձևով թե՛ պարթևները իրենց նպատակին հասած պիտի լինեին և թե՛ հռոմայեցիք իրենց իրավասությունը կորցրած չպիտի լինեին: Երկու կողմերը համաձայնության գալով հաշտվեցին և Տրդատը մեծ փառավորությամբ ճանապարհ ելավ Հռոմ գնալու: Նրա շքախումբը բաղկացել էր 3000 հոգուց, որոնց վրա օրական 2 000 000 ֆրանկ ծախս էր գնում և այդ ամբողջ ծախսը հռոմեական պետության գանձարանի հաշվով էր: Վերջապես Տրդատը հասավ Հռոմ և չտեսնված շքեղությամբ թագավոր պսակվեց (66 թ.):

Այսպես վերջացան Հայաստանի գահակալության կռիվները և Արևելքը խաղաղվեց:

Տրդատից սկսվում է հայ Արշակունիների հարստությունը. Հայաստանը դառնում է միաժամանակ վասալ հռոմեական և պարթևական պետություններին. Հայաստանում տիրում են պարթևական քաղաքակրթությունն ու կրոնը, որի ազդեցությամբ հայ ժողովուրդը ավելի պարթևներին է կողմնակից, քան հռոմայեցիներին:

53. ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ. ՌՈՒՄԻՆԻԱ

Օգոստոսից հետո հռոմեական պետությունը հետզհետե ավելի միահեծան է դառնում. ժողովրդի իրավունքի վերջին մնացորդներն էլ խլվում են. կայսրերը դառնում են մեկական բռնակալ և իրենց կամքն ու քմահաճույքը օրենք է լինում: Գտնվում են նույնիսկ կայսրեր, որոնք մարդասպանությունն ու հրդեհը իրենց համար հաճելի զբոսանք են դարձնում. այսպես Ներոնը կրակի է տալիս ամբողջ Հռոմը և ապա վերաշինում՝ գավառների ժողովրդին սոսկալի կերպով կողոպտելով: Դաժան կայսրերի ոճիրներից զզված, բանակը շարունակ ապստամբում է և նրանց կյանքին մահով կամ աքսորով վերջ տալիս: Այսպես կայսերական գահը խաղալիք է դառնում զինվորների ձեռքում, որոնք իրենց քմահաճույքի համեմատ կայսր են դնում իրենց հաճելի դարձած այս կամ այն անարժան անձին, մի քանի ամիս հետո գահընկեց անելու և սպանելու համար: Մինչև անգամ եղավ մի ժամանակ, երբ կայսերական գահը աճուրդի դրվեց և ով շատ վճարեց՝ բարձրացավ գահ: Կայսրության ամբողջ տևողության ընթացքում հազիվ եղան մի քանի արժանավոր գահակալներ, որոնք հռոմեական պետության պատիվը բարձր պահեցին:

Պետական այսպիսի անկյալ վիճակում, հռոմեական տերությունը բնականաբար չպիտի կարողանար նորանոր աշխարհակալությունների ետևից լինել և պիտի բավականանար պաշտպանելով իր արդեն ընդարձակ սահմանները, որոնց ամեն կողմից սպառնում էին շրջակա բարբարոս ժողովուրդները:

Կայսրության շրջանում պատահած դեպքերի մեջ հիշատակության արժանի են Երուսաղեմի կործանումը և Դակիայի նվաճումը:

Հրեաստանը Տիգրանի ձեռքով նվաճվելուց հետո կարճ ժամանակ հայոց պետության հպատակության տակ մնալուց հետո, Պոմպեոսի ժամանակ ընկավ հռոմեական պետության իշխանության տակ: Սակայն նա պահում էր իր ներքին ինքնավարությունը: Երկրի զինվորական իշխանությունը Հերոդեսների հարստության ձեռքումն էր, իսկ Երուսաղեմը, իբրև սրբավայր կառավարվում էր քահանայապետների ձեռքով: Հռոմեական իշխանությունը ներկայացնում էր մի պրոկուրատոր, որ պաշտոն ուներ երկրի հարկերը հավաքելու: Ներոնի ժամանակ

այդ հարկերը չափազանց ծանրացան և կեղեքված հրեաները խիստ գրգռված էին հռոմեական իշխանության դեմ: Գրգռությունն ավելի սաստկացավ, երբ հռոմեական պրոկուրատորն սպանել տվեց հրեաների քահանայապետին: Սրա վրա բոլոր հրեաներն ապստամբեցին և սկսեցին ջարդել իրենց մեջ գտնված հռոմայեցիներին: Հռոմեական բանակը մտավ Հրեաստան և Գալիլիայի գավառն ավերելուց հետո, արշավեց Երուսաղեմի վրա, ուր ապաստանել էր 1 000000 հրեական ժողովուրդ: Հռոմեական բանակը, առաջնորդությամբ Վեսպասիանոսի և հետո Տիտոսի, հինգ ամիս ամբողջ պաշարեց քաղաքը, սոսկալի սով ընկավ. հրեաները ծայրահեղ հանդգնությամբ դիմադրեցին. բայց վերջապես քաղաքը գրավվելով սարսափելի կոտորածն սկսեց: Այն ժամանակ ամեն մեկ տուն գրեթե մի բերդ դարձավ: Բուն տաճարում ապաստանող հրեաները հուսահատական քաջությամբ կռվեցին: Բայց վերջապես տաճարն էլ գրավվեց և կրակի տրվեց: 1100 000 հրեա ջարդվեց, 100000 հոգի գերի տարվեց, իսկ մնացյալը զանազան կողմեր ցրվեց (70 թ.): Կես դար հետո, հրեաները նորից ապստամբեցին: Հռոմայեցիք այս անգամ էլ զսպեցին ապստամբությունը մեծ դաժանությամբ. 600 000 հրեա կոտորվեց և մնացյալներին արգելվեց Երուսաղեմի մեջ բնակությունը, հրեա ժողովուրդը ամբողջապես ցրվեց աշխարհի ամեն կողմը:

Երկրորդ նշանավոր դեպքն եղավ Դակիայի թագավորության կործանումը: Այս երկիրը բռնում էր արդի Ռումինիան, Բեսարաբիան և Տրանսիլվանիան: Տրատյանոս կայսրը նվաճեց այն և վերածեց հռոմեական գավառի (106 թ.). և որպեսզի իր տիրապետությունը ապահովի այնտեղ, Իտալիայի զանազան մասերից հռոմայեցի գաղթականներ բերեց և բնակեցրեց Դանուբի ձախ ափին: Սրանք հաստատվելով այնտեղ, երկիրը լատինացրին և այսօր կազմում են ռումինական ժողովուրդը:

54. ՀՆԴԻԿ-ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՔԱՆԻՇԿԱ

Յուե-չի թուրքական բարբարոս ցեղը, որ Կենտրոնական Ասիայում կազմակերպվելով, հույն-բակտրիական թագավորությունը կործանել և գրավել էր նրա տեղը, կարճ ժամանակվա ընթացքում ձևացրեց մի զորավոր պետություն: Այս թուրքերը նախ ընդունեցին բուդդայական կրոնը: Տեր դառնալով հույն-բակ-

տրիական թագավորության և Հնդկաստանի մեկ մասին, ընդգրկեցին նաև հույն-իրանական քաղաքակրթությունը: Իրենց պետությունը, որ ծանոթ է հնդիկ-սկյութական անվամբ, շուտով մեծացավ և ընդարձակվեց: Իրենց ամենանշանավոր թագավորն եղավ Քանիշկան (78 թ.), որ տիրում էր Փենջապին, Քաշմիրին, Գանդարային, Քապո-լիին, Քաշկարին և Խոթանին: Իր մայրաքաղաքն էր Փեշեվարը, որ քաղաքակրթության կենտրոն էր դարձել: Այստեղ էին նստում հին բժշկության նշանավոր ներկայացուցիչ Չարաքան և բուդդայական գրվածքների նշանավոր հեղինակ Ասվագոշան: Քանիշկան խառնվում էր նաև հնդիկ կրոնական գործերի մեջ. նա մասնակցեց բուդդայական համագումարին, որ այն ժամանակ կայացավ Հնդկաստանում:

Հնդիկ-սկյութացիների այս պետությունը տևեց մինչև 4-րդ դարի կեսը և հարավից առաջացող հնդիկների ու հյուսիսից առաջացող հոների առաջ կործանվեց:

55. ՉԻՆԱՑԻՔ ՀԱՄՆՈՒՄ ԵՆ ԿԱՍՊԻՑ ԾՈՎ.

Առևտրական այն հարաբերությունները, որ սկսել էին չինացիք հյուսիսից թաթարների և հարավից հնդիկների, պարսիկների և մինչև իսկ եգիպտացիների հետ, սրեցին նրանց ախորժակը: Չինացիք ցանկացան շատ ավելի հեռուները հասցնել իրենց տիրապետությունը: Հո-թի կայսեր ժամանակ (88-106 թթ.) Փուն-չաո զորավարը բանակի գլուխն անցած, արշավեց Քաշկարի թագավորության վրա, որ Չինաստանի դաշնակցությունից դուրս էր եկել: Նրան նվաճելուց հետո, գնաց Քուչի երկրի վրա, որ երկար պատերազմներից հետո նույնպես նվաճեց: Այսպես իրար հետևից Կենտրոնական Ասիայի 8 թագավորություն հարկատու դարձնելուց հետո, նրանցից զորք վերցնելով Յուե-չիի թագավորության վրա գնաց, հաղթեց և նրանց թագավորին սպանեց: Միևնույն ժամանակ հյուսիսային հոները կատարյալ պարտություն կրեցին և Փուն չաոն Բուխարայի երկիրը նվաճելով, հասավ մինչև Կասպից ծով: Այդ ընդարձակ տարածության մեջ 50 թագավորություն նվաճեց և նրանց գահաժառանգ իշխաններին իբրև պատանդ ուղարկեց չինացիների կայսեր:

Չինացիք ցանկացան նաև տիրել Կասպից ծովին և այնտեղից արշավել հռոմեական պետության վրա (102 թ.): Բայց

պարսիկները, որ հռոմայեցիների հետ մետաքսի վաճառականություն ունեին, վախենալով, որ այս շահավետ առևտուրը կանցնի չինացիների ձեռքը, շատ հուսահատական տեղեկություններ տվեցին Կասպից ծովի մասին: Իբր թե այդ ծովն անցնելու համար ուժեղ քամիով 2 ամիս է հարկավոր. իսկ վերադառնալու համար, եթե քամին հարմար լինի, 2 տարի է պետք: Այնպես որ, ասացին, նավորդները սովորաբար 3 տարվա պաշար են վերցնում իրենց հետ:

Այս սխալ տեղեկությունները ետ կասեցրին չինացիներին իրենց ծրագրից, որոնք Կասպից ծովի առաջ կանգ առան:

56. ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՏՐԴԱՏ

Հայաստանն Արշակունյաց հարստության ձեռքն անցնելուց հետո, թեև հռոմեական պետության վասալ, բայց ավելին հակված լինելով դեպի պարթևները, նրանց հետ միացած կռվում էր Հռոմի դեմ, իր ազգային ինքնությունը պահպանելու համար: Իսկ Հռոմը, չբավականանալով տեսնել նրան վասալ դրության մեջ, փորձեր արեց պարզ նահանգի վերածելու:

Տրայանոս կայսրը առաջին անգամ, որ երազում էր Ալեքսանդր Մակեդոնացի դառնալ, հռոմեական բանակով մտավ Հայաստան, քշեց տեղացի թագավորին և երկիրը հռոմեական նահանգ դարձրեց (114 թ.): Ազատ մնաց միայն երկրի հյուսիսային մասը: Այնուհետև կայսրը, շարունակելով իր արշավանքը, գրավեց հյուսիսից Խաղտիքը, Վրաստանը, Աղվանքը, Սարմատացիների աշխարհը և Կիմմերյան Բոսֆորը, իսկ հարավից՝ Ատրպատականը, Միջագետքը, առավ նույնիսկ Սելևկիան ու Տիզբոն մայրաքաղաքը և հասավ Պարսից ծոցը: Պարթևների թագավորը, որ կարողացել էր փախչել, կազմակերպեց մի խոշոր ապստամբություն, որին միացան նաև Միջագետքն ու Հայաստանը: Այս միջոցին Տրայանոսը մեռավ և նրա հաջորդ Ադրիանոսը, հաշտվելով պարթևների հետ, քաղաքական դրությունն ստացավ իր նախկին վիճակը:

Հայ-հռոմեական պատերազմը երկրորդ անգամ նորոգվեց պարթևների Վաղարշ Գ թագավորի ժամանակ: Սա երազելով հիմնել պարթևական մի մեծ կայսրություն և պատճառ բռնելով այն,

որ Հռոմը Հայաստանի թագավոր է նշանակել ոչ Արշակունի մեկին (Սոյեմոսին), արշավեց Հայաստան (161 թ.): Հայերն իսկույն միացան պարթևների հետ և հռոմեական բանակը բնաջինջ արին: Այսպես սկսեց ահավոր մի պատերազմ, որ տևեց 60 տարի մանր ընդհարումներով:

Հռոմայեցիք մտան Հայաստան, գրավեցին Արտաշատը, որ հիմնահատակ կործանեցին և ամբողջ երկիրը նվաճելուց հետո, իջան հարավ, Միջագետքի արևմտյան մասը հռոմեական տերության միացրին և Սելևկիան ու Տիզբոնը գրավեցին: Արտաշատի փոխարեն հռոմայեցիք կառուցեցին նրա մոտիկ Վաղարշապատը (Նորաքաղաք), ուր հռոմեական պահապան զորք դրին: Հայոց Սանատրուկ Արշակունի թագավորը քաշվեց Մծբին: Այս միջոցին Հռոմում ծագեցին գահակալական կռիվներ. պետությունը զինվորականների ձեռքում խաղալիք դարձավ. քսանի չափ զորավարներ պետության զանազան կողմերը կայսր հայտարարվեցին: Զինվորական անիշխանության այս շրջանում, Սանատրուկը կարողացավ չեզոքություն պահելով շարունակել իր իշխանությունը Մծբինում: Երբ խռովությունը վերջացավ և հիմնվեց կանոնավոր մի կառավարություն, հռոմայեցիք նորոգեցին պատերազմը: Սրանք գրավեցին Մծբինը, որ Արևելքի կռիվների համար դարձել էր մի նշանավոր կենտրոն: Հայերը նորից միացան պարթևներին և պաշարեցին Մծբինը: Կայսրը ուզենալով սիրաշահել հայերին, հռոմեական զորքը դուրս բերեց Հայաստանից, Մծբինի փոխարեն Փոքր Հայքի զանազան մասերը միացրեց Հայաստանին և հայոց թագավոր Վաղարշը հրավիրվեց իր երկիրը: Վաղարշը նստեց Նորաքաղաքում, որ իր անունով կոչեց Վաղարշապատ: Այնուհետև կայսրը հարձակվեց պարթևների վրա, գրավեց Տիզբոնը և Միջագետքը դարձրեց հռոմեական նահանգ:

Միջագետքի գրավմամբ Հայաստանը այլևս կորցրեց իր ռազմական կարևոր նշանակությունը հռոմեական ու պարթևական պատերազմների մեջ, որոնք փոխադրվեցին Մծբինի շուրջը: Այլևս Հայաստանը կռվի ու վեճի առարկա չէր երկու պետությունների միջև: Ուստի հռոմայեցիք թողին, որ հայերը ունենան առանձին պետություն և զորք, որի պահպանության համար նույնիսկ իրենք պետական նպաստ հատկացրին:

Հռոմայեցիների անմիտ կայսրերից մեկը՝ Կալակալլան նորոգեց պարթևական պատերազմը (215 թ.): Նրա նպատակն էր նվաճել

ամբողջ Արևելքը՝ մինչև Հնդկաստան ու Չինաստան: Այս երազով նա մտավ Ասորիք և խաբեությամբ իր մոտ կանչելով հայոց Վաղարշ թագավորին, բանտարկեց նրան և Հայաստանը հռոմեական նահանգ հայտարարեց: Վաղարշի որդին Տրդատը փախավ Հայաստան և հայոց բանակի գլուխն անցած՝ ջարդեց հռոմեական զորքը և միացավ պարթևներին: Հռոմայեցիք գրավեցին Աղնաբենը: Պարթևների Արտավան թագավորը հայ-պարթևական նոր բանակով վրա հասավ և մի քանի անգամ ջախջախեց հռոմեական զորությունը: Սրա վրա հռոմայեցիք ստիպվեցին հաշտվել՝ վճարելով դաշնակիցներին 50 000 000 ֆրանկ տուգանք և ապստամբ Հայաստանի վրա թագավոր դնելով Տրդատին:

57. ՎՐԱՍՏԱՆԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎՐԱ

Հայաստանի Հյուսիսային կողմը, Սև և Կասպից ծովերի միջև և Կուր գետից մինչև Կովկասյան լեռները, հնագույն ժամանակներից սկսած ապրում էին բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ, որոնց թիվն այսօր էլ 40-ի է հասնում: Այս ժողովուրդների մեջ ամենամեծ և կարևոր տեղը գրավեցին վրացիք և աղվանները, որոնք հայոց անմիջական հարևաններն էին, առաջինները արևմտյան կողմը և Կողքիս (արդի Բաքումի և Մենգրելիա), երկրորդները արևելյան կողմը, դեպի Կասպից ծով (արդի Դերբենդից մինչև Բաքու): Թե՛ Վրաստանը և թե՛ Աղվանքը հայոց նման շարունակ ենթակա եղան արևմտյան մեծ ազգերի արշավանքին. այսպես մարերի, պարսիկների, մակեդոնացիների, սելևկյանների և հռոմայեցիների արշավանքներն անպակաս եղան: Եղավ մի ժամանակ, երբ վրացիք, հռոմայեցիների օգնությամբ զորացած, Հայաստանի վրա թևարկություն ունեցան, բայց ընդհանրապես, ինչպես աղվանները, նույնպես նաև վրացիք, հայոց թագավորների թևարկության տակ էին և պատերազմի ժամանակ պարտավոր էին նրանց օգնական զորք տալ:

Կովկասյան մյուս ժողովուրդները, շատ ավելի փոքր քան վրացիներն ու աղվանները, բայց բարբարոս և ավազակ, ապրում էին շարունակ ասպատակելով իրենց հարևան երկրները: Կովկասյան շղթայի հյուսիսային կողմում ապրում էին է՛լ ավելի բարբարոս ցեղեր, որոնք ընդհանրապես հայտնի են պատմության

մեջ սկյութացի անվամբ: Սրանք պատկանում էին իրանյան ճյուղին և նրանց մնացորդները այսօրվա օսերը կամ օսեթիներն են: Սկյութացիներն էլ շարունակ ասպատակում էին դեպի արևելք և արևմուտք, դեպի Իրան և Ռուսաստանի հարավային տափաստանները:

Կովկասյան լեռներում երկու գլխավոր կիրճեր կամ անցքեր կան, որոնք սկյութացիների աշխարհը միացնում էին Կովկասի հետ. առաջինն էր Դարյալի կիրճը, Վրաստանի կողմից և երկրորդը՝ Ճորայ կապանը (Դերբենդ)՝ Աղվանից երկրի կողմից: Վրացիների և աղվանների գործն էր եղել ամուր կերպով պաշտպանել այս անցքերը, արգելք հանդիսանալու համար հյուսիսային բոլոր մեծ ու փոքր բարբարոս ազգերին՝ արշավելու ինչպես Վրաստան և Աղվանք, նույնպես և ավելի հարավ, Հայաստան, Միջագետք և Պարսկաստան:

Մի կողմից այս բարբարոսների արշավանքները, մյուս կողմից վրացական բազմաթիվ ցեղերի անջատական ձգտումները (թուշ, խևսուր, փշավ, սվան, իմերել, ինգելոյ, մինգրել և այլն) թույլ չտվին վրաց՝ կազմելու կուռ միություն և պատմության մեջ կարևոր դեր խաղալու: Եթե հյուսիսից անանցանելի լեռները պատնեշ էին քաշել իրենց առաջ, արևմուտքից բաց էր ծովը, որ ազատ ասպարեզ էր բաց անում նրանց մինչև Եվրոպա: Բայց վրացիք նավագնացության և վաճառականության էլ հակում չունեցան: Այսպիսով նրանք մնացին միշտ ամփոփված իրենց նեղ սահմանների մեջ, իրենց բարձրաբերձ լեռների և գեղեցիկ հովիտների ծոցը և ապրեցին իրենց ներքին կռիվներով:

Վրաց Ամզասպ Բ թագավորի ժամանակ (184 թ.), օսերը, կովկասյան մյուս լեռնականների հետ միացած, լեռնաշղթայի կիրճերը ճեղքելով, հանկարծ հարձակվեցին Վրաստան: Ամեն կողմ ավարի տալով, նրանք հասան մինչև Մծխեթա՝ Վրաստանի մայրաքաղաքը: Ամզասպը փախավ, բայց նորից հավաքելով իր ուժերը,, հարձակվեց թշնամիների վրա, ջարդեց և Վրաստանից դուրս վռնդեց: Այս հաջողությունից սիրտ առած, նա արշավեց Հյուսիսային Կովկաս, և բոլոր ժողովուրդները՝ ալաններից մինչև աբխազները, ընկճելով իր իշխանության տակ առավ:

Այս արշավանքից վերադառնալով, Ամզասպն իր զորավարներին վարձատրած լինելու համար, արտոնություն տվեց նրանց կառավարելու իրենց երկրները՝ բոլորովին ազատ և ինքնակամ

կերպով: Այս արտոնությամբ մեծամեծ չարիքների դուռ բացվեց: Զինվորական դասակարգը դարձավ ժողովրդի հարստահարիչը. Մենգրելիայի իշխանը և մյուս բոլոր նահապետները միացան, թագավորի դեմ պատրաստեցին մի ընդհանուր ապստամբություն և դիմելով հայոց Վաղարշ թագավորին, խնդրեցին, որ վանի Ամզասպին և իր որդուն՝ Ռևին թագավոր նշանակի Վրաստանի: Վաղարշը արշավեց Վրաստան, կարճ պատերազմից հետո Ամզասպը հաղթվեց և սպանվեց. Վաղարշն իր որդուն Վրաստանի վրա թագավոր դրեց:

Ռևը վերջ տվեց զինվորական դասակարգի գերիշխան իրավունքներին. այսպիսով հարստահարությունները վերջացան և ժողովուրդը նեղությունից ազատվեց: Ռևը հույն և հռոմեական քաղաքակրթության հակում ուներ և սկսեց արևմտյան քաղաքակրթության սերմերը տարածել Վրաստանի վրա:

58. ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ.

224 թվականին Արևելքում տեղի ունեցավ պետական մի խոշոր հեղաշրջում, որ պատմության, հատկապես հայ կյանքի ընթացքին բոլորովին նոր ուղղություն տվեց: Արտաշիր Սասանյանը, որ Պարսկաստանի հարավարևմտյան կողմը գտնված Ֆարսիստան նահանգի արքայիկն էր, ապստամբելով պարթևների Արտավան թագավորի դեմ, սպանեց նրան և ինքը նրա տեղն անցնելով, հիմնեց պարսից Սասանյան պետությունը: Քաղաքական այս հեղաշրջումը կարող էր առանց ազդեցության մնալ, եթե իր հետ չբերեր նաև քաղաքականության փոփոխություն: Պարթևներն առհասարակ կրոնի մեջ ազատամիտ և հելլենականության կողմնակից էին, իսկ Սասանյանները մոգական զրադաշտական կրոնի մոլեռանդ հետևորդ լինելով, թշնամի էին հելլենական քաղաքակրթության և ոխերիմ հակառակորդ հռոմեական տիրապետության:

Սասանյանները Պարսկաստանի տերը դառնալուց հետո, արշավեցին Միջագետքի վրա. բայց այստեղ արաբներից պարտություն կրելով, հարձակվեցին Հայաստանի վրա: Այն ժամանակ հայոց թագավորն էր Խոսրովը, պարթևների Արտավան թագավորի եղբայրը: Հայաստան էին ապաստանել Արտավանի որդիները և Ատրպատականի թագավորը, որ պարթևական ծագում ուներ:

Սասանյանները չարաչար հաղթվեցին հայերից և Արտաշիրը փախավ Պարսկաստանի արևելյան նահանգները (128 թ.): Առիթից օգուտ քաղելով, շարժվեց հռոմեական բանակն էլ, որին միացան նաև հայերը և ատրպատականցիք: Հայերը քաջությամբ կռվեցին. բայց իրենց թագավորը Խոսրով դավաճանության զոհ գնաց: Նույնպիսի վախճան ունեցան նաև հռոմայեցիների կայսրը և բանակը, դադարեցնելով իր արշավանքը, պարսիկների կամքին թողեց Միջագետքն ու Հայաստանը: Հռոմում այս ժամանակ նորից անիշխանությունն է սկսվում, կայսերական գահը նորից զինվորականների ձեռքում խաղալիք է դառնում. ավազակներ ու մարդասպաններ գահ են բարձրանում և ընկնում իրար հետևից. գերմանական բարբարոս ցեղերը խուժում են պետության գավառները: Այս խառնակությունները լսելով պարսիկները արշավում են Հայաստան (252), ջարդում են հռոմեական զորքը և հայոց Տրդատ Գ թագավորին դուրս վռնդելով, նրա տեղ իրենց կողմից դնում են Արտավազդին: Վալերիանոս կայսրը արշավում է պարսիկների վրա, բայց չարաչար հաղթվելով, ինքն էլ գերի է ընկնում (259 թ.):

Այս անլուր պարտության վրա հռոմեական պետությունը կործանման անդունդը հասավ. ամեն մի նահանգի մեջ նորելուկ մի կայսր երևան եկավ և սկսեց ինքնագլուխ իշխել: Պատմության այս շրջանը կոչվում է 30 բռնակալների շրջան: Այս ժամանակ Հռոմի վասալ իշխաններից մեկը, Պալմիրայի արաբ Օդենաթ թագավորը, արշավեց պարսիկների վրա, նրանց զորությունը խորտակեց և Միջագետքն ու Հայաստանը իր հովանավորության տակ վերցրեց (261 թ.):

59. ԴԻՈԿԼԵՏԻԱՆՈՍԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՐԴԱՏ.

Կործանվող Հռոմին նոր կենդանություն տվեց Ավրելիանոս կայսրը, որին հաջողվեց ընկճել բարբարոսներին ու ապստամբներին: Վերջինների մեջ էր նաև Պալմիրայի Զենոբիա թագուհին, որ ինքնագլուխ իշխում էր կայսրության արևելյան նահանգների մի մասի վրա: Կայսրը հաղթեց և Զենոբիան գերի տարվեց Իտալիա: Սրանով նորից Հայաստանը ենթարկվեց Հռոմին:

Հռոմեական պետությունն ամրապնդելու համար կայսրը մի նոր

հնարք ևս գործադրեց. գերմանացի բարբարոս ցեղերը գաղթեց-նելով պետության սահմանների վրա, պարտավորեցրեց նրանց վանել ուրիշ բարբարոսների արշավանքը: Այս միջոցառումը թեև ապագայի համար շատ վնասակար էր լինելու, բայց կարևոր էր ոոպեն փրկելու համար:

Կայսրության փրկության համար ավելի հարմար մի միջոց մտածեց Դիոկլետիանոս կայսրը: Տեսնելով որ հռոմեական ընդարձակ պետությունը կառավարելու համար մեկ անձը բավական չէր, պետությունը բաժանեց չորս մասի և ընտրելով բանակի ամենանշանավոր զորավարներից երեք հոգու, յուրաքանչյուրին տվեց մեկ բաժին, իրեն պահելով Արևելքի կառավարությունը և ամբողջ պետության գերիշխանությունը: Այսպես հիմնվեց քառապետությունը և հռոմեական պետությունն ունեցավ չորս ինքնավար կայսր: Հռոմը և իրեն հետ նաև ծերակույտը, դադարեցին վարչության կենտրոն լինելուց և նրա տեղ ձևացան չորս ուրիշ մայրաքաղաքներ: Այս ձևով կարելի եղավ երկիրը խաղաղեցնել, բարբարոսների արշավանքը կասեցնել և ապստամբությունները դադարեցնել: Դիոկլետիանոսը արշավեց նաև պարսիկների վրա, սոսկալի կերպով ջարդեց նրանց և ստիպեց կնքել հաշտության մի նոր դաշնագիր: Այս դաշնադրությամբ Հայաստանն ու Վրաստանը մտան Հռոմի գերիշխանության տակ և հայոց վրա թագավոր նստեց Տրդատ Դ-ը, որ հռոմեական կրթություն ստացած իշխան էր (296 թ.):

Այս դաշնադրությունն անխախտ մնաց ամբողջ 40 տարի:

60. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ. ԱԲԳԱՐ, ՏՐԴԱՏ ԵՎ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍ.

Օգոստոս կայսեր ժամանակ, Հրեաստանի մի աննշան գյուղում ծնվեց Հիսուսը: 30 տարեկան էր նա, երբ սկսեց քարոզել իր նոր վարդապետությունը, որի հետևորդները սկզբից շատ քիչ, հետզհետե բազմացան: Այս վարդապետությունը տարբերվում էր մովսիսական կրոնից նրանով, որ դուրս էր թողնում բոլոր նյութական ծեսերն ու ավելորդապաշտությունները, և ամբողջ կրոնը հիմնում էր սիրո և բարոյականի վրա: Բոլոր մարդիկ հավասար են և բոլորն էլ լինելով մի Հայր Աստուծո զավակները, եղբայր են իրար հետ: Չկա ազգերի և մարդկանց դասերի միջև

խտրություն: Նյութական հարստությունները ոչ ոքի սեփականությունն են կազմում, այլ իբրև ամենքի Հոր տուրքը, պատկանում են ամենքին: Հոգին առավել է, քան մարմինը. հետևաբար մենք էլ մոռանալով մարմնի պահանջները, պետք է հետևենք հոգու պահանջներին: Աստուծո թագավորությունը կգա այն ժամանակ, այսինքն փոխանակ պատերազմների, կռիվների, ազգային կամ անհատական վեճերի, չոր նյութականի համար վարված պայքարի, կտիրի խաղաղություն, սեր և ընդհանուր եղբայրություն: Ժամանակակիցները չհասկացան այս մեծ քարոզչի խոսքերը և հրեաները իբրև հակառակորդ մովսիսական կրոնի, սպանեցին նրան խաչելով, իր քարոզության երրորդ տարում և հալածանք հանեցին նրա հետևորդների դեմ: Հիսուսի աշակերտները փախչելով զանազան կողմեր, շարունակեցին իրենց վարդապետի ուսմունքը քարոզել և նորանոր հետևորդներ ճարել: Այս քարոզիչների մեջ ամենից ավելի եռանդուն դեր ունեցավ Պողոս Տարսոնացի առաքյալը, որ Փոքր Ասիա, Հունաստան և Հռոմ գնաց և ամեն տեղ աշակերտներ հասցրեց: Բայց, ինչպես Բուդդայի, նույնպես և Հիսուսի վարդապետությունը չմնաց իր առաջին մաքրության մեջ. Հիսուսի գաղափարները օրեցօր փոխվեցին. մարդիկ դեռ չէին հասել այն բարձրության, որ կարողանային ըմբռնել այն, ինչ որ Հիսուսն էր ասում: Նույնիսկ Հիսուսի աշակերտները ամբողջապես չէին հասկանում Հիսուսի վարդապետությունը. և Պողոս առաքյալը, իբրև հունական դաստիարակության զավակ, իր ըմբռնողությունը տվեց նրան և այնպես էլ սկսեց տարածել: Ավելի հետո մարդիկ, նյութապաշտ գաղափարներով մեծացած և կռապաշտական դաստիարակությամբ սնված, ավելացրին նրա վրա նորանոր ծեսեր, ծոմեր, կրոնական արարողություններ, տոներ, տաճարներ, կրոնական դասակարգ, սրբեր ու նշխարներ, աստվածային երրորդություն և Աստվածամոր գաղափարը:

Առաջին երկիրը, ուր մուտք գործեց քրիստոնեությունը, Ասորիքն էր. այստեղից Միջերկրականի ափերով մտավ Փոքր Ասիա, հետո անցավ Հունաստան և տարածվեց Եվրոպայի մի քանի կողմերը: Առաջավոր Ասիայում երկու քրիստոնեական կենտրոն ձևացավ. առաջինը Եդեսիան էր, Օսրոյենի թագավորության մայրաքաղաքը, ուր առաջին դարի վերջերից սկսած թագավորում էր Հայ Արշակունիների երկրորդական մեկ ճյուղը, որով և մեծ շփում էր

առաջացել հայ և ասորի ժողովուրդների միջև: Երկրորդ քրիստոնեական կենտրոնն էր Կեսարիան՝ Կապադովկիայի մայրաքաղաքը: Այս երկու կենտրոնները քրիստոնեության համար տվին բազմաթիվ քարոզիչներ: Երուսաղեմի առումը և հրեական ժողովրդի ցրումը եղավ երկրորդ պատճառ քրիստոնեությունը տարածելու աշխարհի բոլոր կողմերը:

Բայց ուր էլ գնացին քրիստոնյաները, ենթարկվեցին սոսկալի հալածանքների, իբրև մարդիկ, որ չէին ընդունում կուռքերի պաշտամունքը և չէին երկրպագում կայսրներին՝ իբր աստվածների: Այս հալածանքների նախանշանը տվեց Ներոն կայսրը, որին հետևեցին իր հաջորդներից շատերը. խմբերով հավաքում էին քրստոնյաներին, ամեն տեսակ տանջանքներով ստիպում էին ուրանալ իրենց կրոնը, հակառակ դեպքում գլխատում էին նրանց, այրում, խաչում, առյուծների առաջ գցում, կաշեհան անում և այլն: Ընդամենը 10 հալածանք տեղի ունեցավ, որոնցից վերջինը՝ Դիոկլետիանոսի հալածանքը, եղավ ամենասոսկալին ու ամենաերկարատևը՝ ամբողջ 8 տարի:

Սակայն այս բոլոր խստությունները չկարողացան ջնջել նոր կրոնը. ընդհակառակը հալածանքներից մեծ տարածում գտավ. կռապաշտները նույնիսկ սկսեցին կասկածել իրենց կրոնի ճշմարտության վրա: Հռոմեական օտարազգի կայսրերը ներմուծեցին արևելյան կրոններին հատուկ աստվածություններ և ծեսեր, ինչպես եգիպտական Իսիդը, պարսկական Միհրը և ասորական Բահաղը: Եղան նույնիսկ կայսրեր, որոնք թույլատու գտնվեցին դեպի քրիստոնեությունը, մինչև որ այս նոր կրոնը եկավ հաղթահարելու և պետական կրոն դառնալու:

Առաջին քրիստոնյա թագավորը եղավ Եդեսիայի Աբգար Թ թագավորը, որ ընդունեց քրիստոնեությունը 3-րդ դարի սկիզբը (207 թ.): Քարոզիչները Եդեսիայի շրջանից Մծբինի վրայով անցան Հայաստան և նրա հարավային կողմերը տարածեցին քրիստոնեությունը: Գ դարի սկիզբը իբրև քրիստոնեության քարոզիչ Հայաստանում հիշվում է եդեսացի մեծ բանաստեղծ և պատմաբան Բարդածանը, որ մեծ հաջողություն չի ունեցել: Նույն դարի կեսին Հայաստանում կար արդեն հայ եպիսկոպոսական թեմ: Հայ և ասորի քարոզիչներ մտան նաև Պարսկաստան, ուր տարածելով քրիստոնեությունը, հիմնեցին Սելևկիայի և Տիզբոնի եկեղեցական համայնքը:

Քրիստոնեությունը հաղթանակեց և պետական կրոն դարձավ Հայաստանում Դ դարի սկզբին: Գրիգոր անունով եռանդուն մի քարոզիչ, որ պարթևական ազնվական ցեղից սերված և Կապադովկիայում հունական դաստիարակությամբ էր մեծացել, եկավ Հայաստան, մտավ Տրդատի պալատը և կարողացավ թագավորին և նրա հետ ամբողջ արքունիքը քրիստոնյա դարձնել: Սրանից հետո Տրդատը և Գրիգորը, բանակի գլուխն անցած, զենքի զորությամբ տապալեցին կռապաշտությունը, մեհյանները կործանեցին և քրիստոնեությունը տարածեցին ամբողջ Հայաստանում: Նոր կրոնի հաջողության և բարգավաճման համար ինքը բաց արեց դպրոցներ, ուր հույն և ասորի քարոզիչներ հունական և ասորական դաստիարակությամբ կրթում էին բազմաթիվ հայ պատանիների՝ նոր կրոնի քարոզության համար:

Քրիստոնեության վերջնական հաղթանակը տեղի ունեցավ հռոմեական կայսրության մեջ, Կոստանդիանոսի օրով:

Դիոկլետիանոս կայսրը և իր ընկերը հրաժարվելով քառապետությունից, ընտրվեց մի նոր քառապետություն, որին հետևելով Հռոմը, նույնպես ընտրեց երկու կայսր: Այսպիսով ձևացավ 6 անկախ կայսր: Շուտով կռիվ սկսվեց սրանց միջև և տևեց 17 տարի. յուրաքանչյուր կայսր ուզում էր նվաճել մյուսներին և ամբողջ պետության միահեծան տեր դառնալ:

Կայսրերի մեջ ամենաբախտավորը գտնվեց Գալլիայի կայսր Կոստանդիանոսը, որ իր ընկերներին հաղթահարելու համար մտածեց տարբեր մի քաղաքականություն: Տեսնելով իր և թշնամի բանակների մեջ քրիստոնյա զրնվորների բազմությունը, նրանց իր կողմը շահելու համար դարձավ քրիստոնեության կողմնակից և հրամայեց որ բանակն ու զինվորները ունենան խաչանիշ դրոշակներ: Քրիստոնյա զինվորները սրանից նոր ոգի առան և քաջությամբ կռվեցին: Կոստանդիանոսը հետզհետե նվաճելով և սպանելով մյուս կայսրերին, տեր դարձավ Հռոմի և ամբողջ Արևմուտքի: Արևելքում մնաց միայն Լիկինիոս կայսրը, որի հետ դաշնակցելով Կոստանդիանոսը, հրապարակեցին Միլանի հրովարտակը, որով քրիստոնեությունն ազատ հայտարարվեց, եկեղեցիները բացվեցին և քրիստոնյաների դեմ կատարված ամեն բռնություն վերացվեց (313 թ.):

61. ՄԱՆԻՆ ԵՎ ՄԱՆԻՔԵԱԿԱՆ ԿՐՈՆԸ

Երբ քրիստոնեական վարդապետությունն սկսեց տարածվել Արևելքում, բնականաբար իր մեծագույն բախումը պիտի կատարեր զրադաշտական կրոնի հետ, որ Պարսկաստանում տարածված և պետական պաշտպանությամբ զորացած կրոնն էր: Քրիստոնեական պատմության առաջին շրջանը լի է այն սոսկալի ջարդերով ու նահատակություններով, որոնց զրադաշտականները ենթարկեցին իրենց հայրենակից քրիստոնյաներին:

Գտնվեցին անշուշտ խոհուն անձեր, որոնք մտածեցին երկու կրոնների մեջ գտնել հաշտության եզր: Այս կարգի մարդկանց մեջ ամենամեծը եղավ Մանին, որ հիմնեց մի նոր կրոն՝ մանիքեական անվամբ: Շապուհ Ա թագավորի օրով և նույնիսկ արքայական հրամանով նա դուրս եկավ քարոզելու այս նոր կրոնը Պարսկաստանում (242 թ.): Նա ընդունում էր բոլոր նախկին կրոնական մեծ քարոզիչներին՝ Մովսեսին, Զրադաշտին, Բուդդային և Հիսուսին. բայց նրանց վարդապետությունը համարում էր անկատար և ինքը եկել էր լրացնելու այդ բոլորը: Քրիստոնեական կրոնն ու զրադաշտականը հաշտեցնելու համար իրար հետ, նա քարոզում էր, թե պարսկական Որմիզդը քրիստոնյաների Հայր Աստվածն է, իսկ Ահրիմանը՝ սատանան: Մանին իր կրոնը տարածելու համար անձամբ ման եկավ ամբողջ Պարսկաստանը, Թուրքեստանը, Հնդկաստանն ու Չինաստանը, հասցրեց բազմաթիվ աշակերտներ, ասորերենի վրայից հորինվեցին մի քանի տեսակ այբուբեններ և սկսեցին տեղական լեզուներով մանիքեական ճոխ գրականություն, որի մի մասը հասել է մեզ: Վերջապես մանիքեականությունը թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում այնպես տարածվեց, որ մինչև անգամ քրիստոնեության հավասար մրցակից դարձավ և քրիստոնյաներից շատերին էլ իր ծոցը քաշեց: Քրիստոնեություն և զրադաշտականություն հավասարապես զինվեցին նրա դեմ և վերջապես պարսիկների թագավորը շարժումից վախենալով, մորթազերծ անելով սպանել տվեց Մանիին, իր քարոզչությունից վերադառնալիս (274 թ.): Բայց նրա մահով այդ կրոնը չվերջացավ և դեռ մի քանի դար շարունակեց իր գոյությունը Արևելքում:

62. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ ՏՐԴԱՏԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍԻ ՀԵՏ

Լիկինիոսի հետ մի քանի տարի հաշտ ապրելուց հետո, Կոստանդիանոսը պատերազմ բաց արեց նրա դեմ, նվաճեց և այսպիսով ամբողջ հռոմեական կայսրության տեր եղավ: Բայց Կոստանդիանոսը Հռոմ չդարձավ, այլ ընտրեց իրեն համար բոլորովին նոր մի կենտրոն. Արևելքի և Արևմուտքի միջև, հին Բյուզանդիոնի ավերակների վրա, Բոսֆորի ափին հիմնեց մի նոր քաղաք, որ կոչեց Կոստանդնուպոլիս և իր մայրաքաղաքը դարձրեց:

Այս ընտրությունը հարմար էր շատ տեսակետներով. նախ, որ Հռոմն իբրև հանրապետական ու ժողովրդական գաղափարների կենտրոն, անհարմար էր Կոստանդիանոսի միապետական գաղափարներին և կարող էր ներքին կռիվների տեղիք տալ: Երկրորդ՝ Հռոմը լինելով մեհյանների և աստվածների քաղաքը, անհարմար էր նույնպես քրիստոնեության պաշտպան կայսեր քաղաքականության: Երրորդ՝ Հռոմը կտրված լինելով կայսրության զանազան մասերից, մինչդեռ նոր քաղաքը գտնվելով Արևելքի և Արևմուտքի մեջտեղը, հրաշալի մի վայրում, ավելի մոտիկ Ասիային, Իլլյուրիային և Թրակիային, ավելի մոտից պիտի կարողանար հսկել այդ նահանգների վրա, մանավանդ որ կայսրության կարևոր ռազմական ուժերը նրանցից էին հանվում: Վերջապես, Կոստանդնուպոլիսը այնպիսի ապահով դիրք ուներ, որ կարող էր զերծ մնալ բարբարոսների սպառնացող արշավանքներից, ինչ որ իրոք էլ տեղի ունեցավ: Մինչդեռ Հռոմը շուտով ընկավ բարբարոսների լծի տակ, Կոստանդնուպոլիսը դեռ հազար տարի դիմացավ մինչև տաճիկների արշավանքը:

329 թվականին հիմնվեց Պոլիսը և դարձավ նշանավոր համաշխարհային քաղաք, կենտրոն քրիստոնեության: Հռոմն այնուհետև ընկավ և հռոմեական կայսրության տեղ բարձրացավ հունական կամ արևելյան կայսրությունը, հույն լեզվով և հունական քրիստոնեական քաղաքակրթությամբ: Արևելքի բոլոր քրիստոնյա ազգերը, հատկապես Պարսկաստանի քրիստոնյա հպատակները իրենց աչքը դարձրին Պոլիս ու հոգով հարեցին հույներին, նույնիսկ պատերազմի ժամանակ բռնում էին նրանց կողմը. այսպիսով

կրոնական հարակցությունը վերածվեց քաղաքականի և պարսիկների թագավորները իրենց դրությունը պաշտպանելու համար թշնամի դուրս եկան քրիստոնեության և տարիներ շարունակ սոսկալի հալածանք հանեցին իրենց հպատակ քրիստոնյաների դեմ:

Պոլսի մոտիկությունը առանձին նշանակություն ունեցավ նաև մեզ համար: Մի կողմից Պարսկաստանի գահը բարձրացող նոր հարստության՝ Սասանյան տոհմի ցեղական թշնամությունը հայ Արշակունյաց տոհմի հետ և մյուս կողմից զրադաշտական կրոնի ակնհայտ թշնամությունը կրոնի հետ՝ պատճառ դարձան, որ այլևս հայերը կտրեն իրենց հարաբերությունը Արևելքի հետ, որին կապվել էին Հայաստանում հաստատված օրից, և միանային Արևմուտքին, հանձին հունական քաղաքակրթության և Կոստանդնուպոլսի կայսրության: Շուտով Տրդատ թագավորը գնաց Պոլիս և Կոստանդիանոս կայսեր հետ կնքեց մի դաշինք, որ նվիրագործում էր հայոց նոր քաղաքականությունը:

63. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայոց նոր կրոնի հետ ստեղծված նոր քաղաքականությունը հառաջ բերեց Հայաստանում երեք նոր կուսակցություն: Առաջին կուսակցությունը կազմում էր կրոնական դասակարգը, կաթողիկոսի գլխավորությամբ, որ ժառանգաբար մնացել էր Լուսավորչի ցեղին և Տրդատի ու նրա հաջորդների ժամանակ ձեռք բերած մեծամեծ կալվածներով հարստացել էր ու զորացել: Այս կուսակցությունն ամբողջապես հակվել էր հույների կողմը: Նրա մրցակիցն էր Աղբիանոսի ցեղը, որ առաջին ասորի քարոզիչների դպրոցն էր ներկայացնում և ինքն էլ երբեմն վայելելով թագավորների համակրանքը, հասել էր մինչև կաթողիկոսական բարձրագույն աստիճանին: Երրորդն էր հին հայկական հեթանոսական կրոնին կողմնակից իշխանական դասակարգը, որ կարող ենք կոչել ազգային կուսակցություն և որ տարվել էր հակաքրիստոնեական և հակակղերական գաղափարներով, թշնամի էր թեև, առաջին և թե՛ երկրորդ կուսակցության:

Կրոնական կուսակցությունն աշխատեց իր հովանու տակ առնել նաև Վրաստանն ու Աղվանքը, որոնց կաթողիկոսները շատ անգամ հայերից էին ընտրվում և հաստատվում: Այսպիսով այս

կուսակցությունը ավելի զորացած ու մեծացած, կարողացավ շատ անգամ իրավունքներ բանեցնել թագավորի և իշխանական դասակարգի վրա:

Զրադաշտական կրոնին կուսակից Սասանյաններն իրենց դիրքը զորացնելու համար ստիպված էին նախ կռվել Պարսկաստանում ճարակող քրիստոնեության և երկրորդ՝ հայ քրիստոնեության դեմ, որպեսզի սրանով կարենային հեռացնել հայերին հունական քաղաքականությունից և Հայաստանն իրենց ազդեցության տակ առնել:

Շահերու մոտիկությունը առաջ բերեց մի տեսակ գործակցություն հայ ազգային կուսակցության և սասանյանների միջև: Առաջինը հաջողությամբ դիմադրելու համար հայ, վրացի և աղվան կրոնական կուսակցության և հույն քաղաքականության, ստիպված էր դիմել պարսիկներին և պարսիկներն էլ իրենց ծրագրի հաջողության համար պիտի հիմնվեին այս կուսակցության վրա և նրա միջոցով կռիվ մղեին Հայաստանում:

Դիոկլետիանոսի դաշնադրությունը շատ ստորացուցիչ էր Սասանյանների համար: Շապուհ Բ գոռոզ թագավորն ուզում էր փոխել դեպքերի ընթացքը, բայց դաշինքի պայմանաժամը դեռ չէր լրացել: Ուստի անհամբեր սպասելով հանդերձ պայմանաժամի լրանալուն, սկսեց իր պատրաստությունները տեսնել: Իր գրգռմամբ հայոց պարսկասեր կուսակցությունը կարողացավ թունավորելով սպանել Տրդատ թագավորին և հետո Արիստակես կաթողիկոսին: 336 թվականին լրացավ դաշնագրի պայմանը և Շապուհ մտավ Միջագետք: Հայաստանում ապստամբեցին Փայտակարանը, Աղձնիքը և Ծոփքը, Հյուսիսային լեռնական վայրերի ցեղերը միահամուռ արշավեցին Հայաստան, որոնց հետևեցին հետո պարսիկները: Հունասեր կուսակցությունը լարեց իր ուժերը. Վաչե Մամիկոնյան սպարապետը և Վրթանես կաթողիկոսը պետության հոգին դարձան: Առանց հույների օգնության, նրանք կարողացան հաջողությամբ վանել բոլոր արշավանքները և ապստամբությունները դադարեցնել: Բայց այս կռիվների մեջ Վաչեն զոհ գնաց. մեռավ նաև Վրթանեսը: Այն ժամանակ պարսկասեր կուսակցությունն իրեն ազատ զգաց: Իր կողմը հակվեց նաև Տիրան թագավորը, որ անձնական թշնամություն ուներ Հուսիկ կաթողիկոսի հետ: Կաթողիկոսը, ինչպես նաև իր հաջորդը, սպանվեցին թագավորի ձեռքով և կաթողիկոսական աթոռը Լուսավորչի ցեղից

խլվելով՝ անցավ Աղբիանոսի ցեղին: Սրա վրա Մամիկոնյանները գժտվեցին թագավորի հետ և հունական կուսակցությունը ձեռնթափ եղավ:

Ասպարեզը բացվել էր պարսիկների համար, որոնք ազատ մտան Հայաստան և գերի բռնեցին Տիրան թագավորին: Հայերը դիմեցին հույներին և հայ-հունական միացյալ բանակն արշավելով Հայաստան՝ պարսիկներին վտարեց երկրից: Սրանք արևելյան վայրենի ցեղերի հետ պատերազմի բռնված լինելով, չկարողացան ավելի մեծ արշավանքների ձեռնարկել, հաշտվեցին հույների հետ և հայոց վրա թագավոր դրին Արշակին:

64. ԱՐՇԱԿ ԵՎ ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ. ԿՌԻՎ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Մեծն Կոստանդիանոսի մահից հետո հռոմեական պետությունը նրա երեք որդիների միջև գահակալական կռիվների ասպարեզ դարձավ: Այդ կռիվները տևեցին ավելի քան 20 տարի: Բարբարոսներն անցան Հռենոսն ու Դանուբը և կայսրության գավառները ասպատակեցին: Այդ միջոցին Պարսկաստանի վիճակն էլ հանգիստ չէր: Թաքարական վայրենի ցեղեր խուժում էին արևելյան սահմաններից ներս և Սասանյան թագավորներն զբաղվել էին այս ասպատակությունները վանելով: Այսպես ուրեմն թե՛ հույները և թե՛ պարսիկները ներքին ու արտաքին կռիվներով զբաղված, ժամանակ չունեին միմյանց հետ չափվելու և Միջագետքի կռիվները ժամանակավորապես դադարեցին:

Օգտվելով իր երկու հարևան երկրների խառնակ վիճակից և զինադադարից, Արշակը մտածեց բարեկարգել Հայաստանը: Նախ պաշտոնի կանչեց Մամիկոնյաններին, որոնք պետության հետ գժտված, քաղաքական գործերի մասնակցությունից հրաժարվել էին: Վասակ Մամիկոնյան նախարարը ստանալով հայ բանակի հրամանատարությունը, կարողացավ երկաթյա կարգապահությամբ իշխանության հնազանդության մեջ պահել բոլոր նախարարական տոհմերը: Քաղաքացիական վարչությունը հանձնվեց Գնունիների ցեղին և սրանք կարողացան երկրի տնտեսական դրությունը բարելավելով, հարստացնել պետական գանձարանը: Մամիկոնյանների հետ առաջ անցան նաև Լուսավորչի տոհմը և կաթողիկոսական իշխանությունը Աղբիա-

նոսի ցեղից խլվելով, նորից իրենց վերադարձավ: Ներսեսը՝ Լուսավորչի տոհմից նշանավոր ժառանգորդ և եռանդուն գործիչ, կաթողիկոս ընտրվեց: Սա գումարեց հայոց առաջին եկեղեցական ժողովը, ուր միջոցներ որոշվեցին եկեղեցական իշխանությունը զորացնելու և կազմակերպելու համար: Հիմնվեցին վանքեր ու կուսանոցներ, որոնց շուրջը հավաքվեց խոշոր երկսեռ միաբանություն և կազմվեց կրոնականների ստվար բանակը: Այս վանքերն ստացան մեծաքանակ հողեր, որով հոգևորական դասակարգի հարստությունը շատ մեծացավ:

Հոգևորական դասակարգը ձեռք վերցրեց նաև կրթական գործը. վանքերում բացվեցին դպրոցներ, որոնցում, հունական կրթություն ստացած հայ կրոնավորներ կրթում էին մատաղ սերունդը իրենց գաղափարներով: Սրանից բացի հիմնվեցին բարեգործական հաստատություններ, արդի եվրոպական մտքով, անկելանոցներ, աղքատանոցներ, ծերանոցներ, որբանոցներ և հիվանդանոցներ: Մուրալու արհեստը վերացավ և խեղճերն ու հիվանդները սկսեցին խնամվել նրանցում: Արևելքում դեռ նման բաներ չէին տեսնվել: Սրանք քրիստոնեության բերած բարիքներն էին, որ քառորդ դար առաջ մուտք էին գործել հռոմեական աշխարհում և որոնց օրինակը Ներսես հույներից ստացավ: Վերջապես կրոնական դասակարգը մշակեց նաև մի շարք եկեղեցական օրենքներ հավատացյալների կենցաղային հարաբերությունների մասին, որով մի տեսակ օրենսդրական իշխանությունն էլ ձեռք բերեց: Այս բոլորը այնպիսի մեծ ազդեցություն ունեցավ ժողովրդի վրա, որ նրա ամբողջ համակրանքը դեպի իրեն գրավեց:

Կղերական դասակարգի զորացումը բնականաբար բնավ հաճելի չպիտի լիներ ազգային կուսակցության և սրանք միջոցներ էին մտածում նրա առաջքը առնելու համար. բայց ժամանակը հաջող չէր. Ներսեսը դյուրությամբ ընկճվող մարդկանցից չէր, մանավանդ որ իրեն հետ ուներ նաև Արշակի գործակցությունը:

Կղերական դասակարգի զորացումն անշուշտ Արշակի համար էլ հաճելի չպիտի լիներ, բայց նա առժամապես ստիպվել էր չհակառակվել Ներսեսին և թույլ տալ եկեղեցական դասակարգի զորացումը՝ ի վնաս ազգային կուսակցության, բոլորովին հեռավոր նպատակով: Արշակի նպատակն էր ջնջել Հայաստանից նախարարական կազմակերպությունը և ամբողջ ժողովրդին ազատելով նրանց հպատակությունից, հավաքել ուղղակի իր

իշխանության տակ, ուրիշ խոսքով ճորտերի ազատությամբ ստեղծել միահեծան ինքնիշխան կառավարություն: Այս բանը լինելու էր սկիզբը Հայաստանի մեծության և փառքի: Այս պատճառով ահա Արշակի համար օգտակար էր, որ կրոնական և ազգային կուսակցությունը անհաշտ մնային միմյանց հետ, որով ընդդիմադիր ուժերը բաժանված պիտի մնային:

Իր նպատակի գործադրության առաջին փորձն արեց Արշակը կառուցելով Արշակավան քաղաքը, ուր իրավունք տվեց գաղթելու և ձրի հողեր ստանալու բոլոր այն գյուղացիներին, որոնք նախարարական կալվածների մեջ հողային և հարկային դժվարությունների էին հանդիպել: Բայց նախարարները շուտով տեսան վտանգը, իսկույն դաշնակցեցին միմյանց հետ և իրենց միացնելով նաև հոգևորական դասակարգը, միահամուռ ուժերով դեմ ելան Արշակին: Սրանք պաշարեցին և ավերեցին Արշակավանը: Արշակ անցավ Վրաստան և վրաց զորքի գլուխն անցած՝ եկավ կռվելու ապստամբ նախարարության դեմ: Ներսեսը տեսավ, թե ինչպիսի վտանգի պիտի ենթարկվի երկիրը այս ազգամիջյան պատերազմների պատճառով, ուստի հաշտարար դիրք բռնեց և կարողացավ երկու կողմերը համաձայնության բերել: Այսպիսով Արշակի խոշոր և գեղեցիկ ծրագիրը ջուրն ընկավ:

65. ՀՈՒԼԻԱՆՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ. ՀՈՎՀԱՆՈՍԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՇՐՈՒՆԻ

355 թվականին պարսիկները նորոգեցին պատերազմը հույների հետ: Շապուհը պահանջում էր ամբողջ Միջագետքն ու Հայաստանը: Հաշտվելով արևելյան բարբարոս ցեղերի հետ և նրանցից օգնական զորք ստանալով, Շապուհը մտավ Միջագետք: Նա ուզում էր իր կողմը գրավել նաև Արշակին և սրա համար առանձին աշխատանք թափեց հայոց պարսկասեր կուսակցությունը: Վերջապես Արշակը համաձայնվեց գնալ Պարսկաստան, ուր երդումով ընդունեց Շապուհի դաշնակցությունը. բայց կասկածելով պարսիկների անկեղծության վրա, փախավ Հայաստան և չեզոքություն պահեց:

Շապուհը մեծ հաջողություն ունեցավ Միջագետքում. առավ Ամիդը, թեև մեծ զոհերով, և հիմնահատակ կործանեց: Այս

նշանավոր քաղաքի ավերը լսելով կայսրը արշավեց Արևելք և աշխատեց նախ իր կողմը գրավել հայերին ու վրացիներին: Արշակը գնաց կայսեր մոտ և խոստացավ մնալ նրա դաշնակիցը: Այս դաշնադրությունը սրբագործեցին խնամությամբ: Արշակն ամուսնացավ մի կայսերական իշխանուհու հետ: Պարսիկները ետ քաշվեցին և կայսրը իր գործը կիսկատար թողեց ու դիմեց Արևմուտք, ուր նշանավոր մի հակառակորդ՝ Հուլիանոսը, խլում էր կայսերական գահը:

Հուլիանոսը պատմության մեջ հայտնի է **Ուրացող** տիտղոսով: Հարելով միթրայական դավանանքին, որ Պարսկաստանից սկսելով սպառնալի կերպով տարածվում էր արևմուտքում, նա քրիստոնեության հակառակ կանգնեց ու թեև նյութական հալածանք չհանեց քրիստոնյաների դեմ, բայց խլեց նրանց ձեռքից դպրոցական գործը և պետական պաշտոնները. նորից բաց արեց մեհյանները և կռապաշտությունը պետական կրոն դարձրեց:

363 թվականին Հուլիանոսը արշավեց Միջագետք: Նա այնքան գոռոզ էր, որ երբ տեղական իշխանները եկան իրենց օգնությունն առաջարկելու, մերժեց ասելով, թե «Հռոմեական պետությունը բավական զորեղ է իր սեփական ուժերով վարելու պատերազմը»: Հուլիանոսն ընդունեց միայն Արշակի աջակցությունը, որին հրաման ուղարկեց արշավելու Մարաստանի վրա, ինքը հասավ մինչև Տիզբոն և մոտ էր մայրաքաղաքը գրավելուն: Բայց այստեղ հռոմայեցիների բանակը չարաչար պարտվեց, և նույնիսկ կայսրը մահ գտավ: Արշակը հաջողությամբ առաջ էր տանում կռիվը Մարաստանի կողմերը: Բայց նորընտիր կայսր Հովիանոսը, թույլ ու վախկոտ մեկը, չկարենալով շարունակել պատերազմը, ամոթալի դաշինք կնքեց պարսից հետ, որով Հայաստանի բոլոր հարավային նահանգները՝ Աղձնիքը, Մոկքը, Ծավդեքը, Կորդուքը, ինչպես նաև Միջագետքի մեկ մասը Մծբին մայրաքաղաքով անցավ պարսիկներին: Կայսրը ձեռք պիտի քաշեր Հայաստանից և չպիտի օգներ հայերին, եթե պարսիկները պատերազմ սկսեին նրանց դեմ:

Այս ամոթալի դաշնադրությունը, որով Հռոմի հավատարիմ դաշնակից Հայաստանը այսպես լքված էր մնում, կոչվում է Հովիանոսի դաշնադրություն (363 թ.):

Շապուհը մեկ անգամից չարշավեց Հայաստան, այլ գործ դրեց իր դիվանագիտական խաղերը: Հայաստանի հյուսիսային նահանգները՝ Գուգարքը, Ուտին, Արցախը և Փայտակարանը

ապստամբեցին Արշակի դեմ և անցան պարսիկների կողմը, Ծոփքը մտավ հույների իշխանության տակ, վերջապես հայտնի կերպով ապստամբեց պարսկասեր կուսակցությունը իր երկու պարագլուխների՝ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի առաջնորդությամբ: Սրանք գնալով Պարսկաստան, դաշինք կապեցին Շապուհի հետ. իրենց ծրագիրն էր քրիստոնեությունը ջնջելով Հայաստանից, տարածել զրադաշտական կրոնը և թագավորական իշխանությունը խլելով Արշակունյաց տոհմից, հանձնել Մերուժան Արծրունուն: Սրանով Սասանյաններն էլ հասած պիտի լինեին իրենց նպատակին, այն է ստեղծել զրադաշտական մի Հայաստան, բուն հայկական (ո՛չ Արշակունի) թագավորությամբ:

Մերուժանը և Վահանը, զրադաշտական դարձած, հայ և պարսիկ զորքով մտան Հայաստան՝ իրենց ծրագիրը զենքով գործադրելու: Քրիստոնեական կուսակցության պարագլուխը՝ Վասակ Մամիկոնյանը դուրս եկավ պաշտպանելու օրինական իշխանությունը: Բազմաթիվ ճակատամարտների մեջ նա գրեթե միշտ անպարտելի մնաց. բայց երբ ապստամբությունը տարածվեց ամեն կողմ և այլևս դիմադրել անկարելի էր, հավատալով Շապուհի երդումին, Արշակն ու Վասակը գնացին Պարսկաստան, ուր և գտան իրենց մահը:

66. ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Արշակի և Վասակի կորստից հետո Արշակի տեղ իր որդի Պապը և Վասակի տեղ իր որդի Մուշեղ Մամիկոնյանը կուսակցության գլուխն անցան: Սրանք դիմեցին Հունաստան և կայսեր օգնությունը խնդրեցին: Միևնույն ժամանակ հայոց Փառանձեմ թագուհին, փակված Արտագերս բերդում, դիմադրում էր պարսիկների հարձակումներին: Պարսիկները շատ երկար պաշարեցին այս անառիկ բերդը, բայց չկարողացան գրավել: Դավադրական խաղով հայերը վերջապես դուրս եկան բերդից և ցիրուցան արին պարսկական բանակը: Նույն ժամանակ հռոմայեցիների կայսրն էր Վալենտիանոսը, որ Արևելյան կայսրությունը հանձնել էր Վաղեսին: Բարբարոսներն անցել էին Դանուբն ու Հռենոսը և արշավում էին կայսրության գավառների վրա. մավրիտանացիք ապստամբել էին Աֆրիկայում: Վաղես կայսրը ցանկանում էր դուրս

գալ հայոց օգնության, բայց Հովհանոսի դաշնադրությամբ իր թևերը կապվել էին: Երբ Վալենտիանոսի խիզախ արշավանքները ետ քշեցին բարբարոսներին ամեն կողմից և Աֆրիկայի ապստամբությունը սանձեցին, մյուս կողմից երբ Արտագերսի հաղթական արձակումը լսվեց, Վաղեսն էլ որոշեց դուրս գալ: Պապը և Մուշեղը հունական զորքով մտան Հայաստան:

Շապուհը կատաղեց, երբ լսեց Պապի արշավանքը և անձամբ առաջնորդելով բանակը, մտավ Հայաստան: Գրավեց և կործանեց Արտագերսը, հետո արշավեց Արևելյան Հայաստանի բոլոր քաղաքների վրա: Իրար հետևից առավ ու կործանեց Արտաշատ, Վաղարշապատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ, Վան և Նախիջևան քաղաքները և մեծաթիվ ժողովուրդ, հատկապես հրեաների, Փառանձեմ թագուհու հետ գերի վարեց Պարսկաստան: Այստեղ անթիվ մարդիկ փղերին ոտնատակ գնալով կոտորվեցին, իսկ Փառանձեմ թագուհուն հրապարակային լուտանքի ենթարկելով սպանեց:

Շապուհի ավերիչ գործը շարունակեցին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը, որոնք սրով սկսեցին տարածել մոգական* կրոնը Հայաստանում: Սրանք իրենց խժդժությունների մեջ այնքան առաջ գնացին, որ վերջապես Վահանի հարազատ որդի Սամվելը չդիմանալով, սպանեց նրան ու փախավ Հունաստան:

Պապը և Մուշեղը մտան Հայաստան. իսկույն իրենց միացավ Ներսես կաթողիկոսը և իրեն հետ ամբողջ հոգևորական կուսակցությունը: Սկսեցին հարձակվել պարսկական բանակների վրա և իրար հետևից հետ խլել հայկական բերդերը: Հույները մտան Վրաստան և այնտեղ նոր թագավոր նշանակելով, երկիրն առան իրենց հովանավորության տակ:

Շապուհը մեծ բանակ կազմակերպեց և արշավեց Հայաստան՝ հայ-հունական բանակի դեմ կռվելու: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ձիրավի դաշտում, Նպատ լեռան ստորոտում: Շապուհը չարաչար հաղթվեց և ստիպվեց հաշտություն խնդրել, Հայաստանը թողնելով հույների գերիշխանության տակ (371 թ.):

* մոգական - զրադաշտական (խմբ.):

67. ՊԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի վերակազմության առաջին պայմանն էր ձեռք բերել երկրի ամբողջությունը: Սրա համար Պապը և Մուշեղը կարգի բերին նախ հայկական բանակը: Քիչ ժամանակից արդեն կազմակերպվել էր 90000 զորք, որի գլուխն անցած Մուշեղը, արշավեց այն գավառների վրա, որոնք Հովհանոսի դաշնադրությամբ կամ Մերուժանի ապստամբության ժամանակ պարսիկների ձեռքն էին անցել: Իրար հետևից նվաճվեցին Ատրպատականի հայկական մասը, Նորշիրականը, Կորդիքը, Տմորիքը, Մարաց երկիրը, Արցախը, Ուտիքը, Փայտակարանը, Գուգարքը, Աղձնիքը, Ծոփքը, Անգեղտունը և Անձիտը:

Հայաստանի ամբողջությունը ձեռք բերելուց հետո, Պապը մտածեց սանձել եկեղեցական իշխանությունը, որ նախկին թագավորների շնորհներով և հատկապես Ներսես Մեծի ջանքերով այնքան էր մեծացել ու հարստացել, որ քաղաքական իշխանության մրցակից էր հանդիսանում և տերության մեջ տերություն էր դարձել: Պապը այս նպատակով խլեց վանքապատ- կան շատ հողեր, վանականների թիվը սահմանափակեց, կույսերի միաբանությունները ցրեց և առհասարակ ձրիակերությունը վերացրեց: Այս գործի մեջ իր անհաղթելի հակառակորդն էր Ներսեսը, որի գոյությունը Պապ աշխատեց մեջտեղից վերացնել: Երբ Ներսեսը մեռավ, Պապը կաթողիկոսական աթոռը հանձնեց Աղբիանոսի տոհմին, որ Լուսավորչի ժառանգների նման գերիշխանական ձգտումներ չուներ և միշտ ավելի համակերպվող էր եղել քաղաքական իշխանության:

Այստեղ Պապը կատարեց հայ ազգի և եկեղեցու պատմության մեջ դարագլուխ կազմող մի գործ. ստեղծեց հայ եկեղեցու անկախությունը:

Լուսավորչից սկսյալ հայոց կաթողիկոսները իրենց օծումը Կեսարիայի հույն մետրապոլիտից էին գնում ստանալու. և այս հայ եկեղեցին դնում էր մի տեսակ հպատակության մեջ: Պապը վերացրեց այս հնավանդ սովորությունը և կարգադրեց, որ այնուհետև հայ կաթողիկոսները Հայաստանում և հայ եպիսկոպոսներից ստանան իրենց օծումը: Այսպիսով հայ եկեղեցին

ազատվեց հույների անվանական թևարկությունից էլ և դարձավ բոլորովին անկախ, ինչպես շարունակում է մնալ մինչև այսօր:

Պապի այս գործերը կասկած զարթեցրին հույների մեջ, որոնք մտածեցին, թե Պապը որոշել է վերջապես նաև հույների հովանավորությունը թոթափել և հայ երկիրը բոլորովին անկախ հայտարարել: Կայսրը խորամանկությամբ կանչեց նրան Տարսոն, իբր թե կարևոր խորհրդակցության համար և հրամայեց կալանավորել: Պապը դիմադրեց հույների զորքին և փախավ: Կայսրը նրա դեմ բանակ ուղարկեց, բայց Պապը ջարդեց նրանց և անցավ Հայաստան: Այստեղ հույների զորավարը խնջույք կազմեց և նենգությամբ վերջ տվեց նրա կյանքին (374 թ.):

Այսպես ընդհատվեց այս վարչագետ թագավորի արդյունավետ գործունեությունը:

68. ՀՆԴԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՓԹԱՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հնդիկ-սկյութական պետության կազմությամբ, Հնդկաստանի հյուսիսային մասը նվաճվել և մնացյալ մասերի մեջ մանր-մունր իշխանություններ էին ձևացել: 4-րդ և 5-րդ դարերի հնդկական ազգային կյանքը նոր կենդանություն է ստանում և Յուե-չի թուրքական տիրապետության դեմ հաղթական պատերազմներ է մղում: Հիմնվում է հնդկական մի նոր հարստություն, որ կրում է Կուփթաս անունը: Իր առաջին թագավորներից Չանտրակուփթան 319-ին նոր թվական է սկսում և Հնդկաստանի համար նոր ու մեծ վերածնություն է ստեղծվում (350 թ.):

Կուփթաների հնդկական հարստությունը իր մեծության գագաթնակետին է հասնում Սամուդրակուփթա թագավորի ժամանակ, որ ոչ միայն ամբողջ Հյուսիսային Հնդկաստանին տեր է լինում, այլև Գանգեսի հովտի և Արևելյան, Արևմտյան ու Հարավային Հնդկաստանի զանազան թագավորություններն իրեն հարկատու է դարձնում (Դեկան, Ասսամ, Օրիսա և այլն): Սրանով Ասոքայի թագավորության սահմանները վերականգնում է: Իր որդի Չանտրակուփթա Բ-ի ժամանակ (4-րդ դարի վերջում) երկիրն ավելի է մեծանում, այնպես որ Կուփթաների պետությունը Գանգեսից մինչև Արաբական ծովն է հասնում:

Կուփքաների հարստությունը երկարատև խաղաղություն է բերում երկրին և նրա կրոնական կյանքին ու քաղաքակրթության առաջացմանը զարկ է տալիս: Բուդդայականությունը բազմաթիվ աղանդների վերածվելով քայքայվել ու իր ազդեցությունը կորցրել էր: Սրա փոխարեն նորից փայլ է տալիս բրահմանականությունը, և հնդկական ժողովրդական կրոնը վերականգնվում է: Իրենք Կուփքաները հարում են Վիշնուի կրոնին, որը մեծարում են ու քաջալերում: Նորոգվում է սանսկրիտ գրականությունը, գեղարվեստը, գիտությունները, արհեստներն ու վաճառականությունը ծաղկում են:

Կուփքաների հարստությունը մինչև 500 թվականը տիրում է և հոների արշավանքով կործանվում:

69. ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Հռոմեական պետության ամբողջ հյուսիսային կողմը, Ատլանդյան օվկիանոսից սկսած մինչև Ուրալ լեռները, անհիշատակ ժամանակներից իր վեր ապրում էին հնդեվրոպական երեք մեծ ցեղեր՝ կելտերը, գերմանները և սլավները: Սրանք դեռ բարբարոս վիճակի մեջ էին: Պատմության մեջ առաջին անգամ երևան եկան կելտերը, որոնք մեր թվարկությունից վեց դար առաջ, Ալպյան լեռներն անցնելով, հաստատվեցին հռոմեական պետության հարավային գավառները: 390 թվականին սրանք համարձակվեցին մինչև անգամ Ապենինյան շղթան անցնել և Հռոմը գրավել: Հռոմայեցիք մեծ դժվարությամբ հետ քշեցին նրանց, որից հետո կամաց-կամաց նրանց երկրներն էլ նվաճեցին:

Կելտերից հետո ասպարեզ ելան գերման ցեղերը: Բալթիկ ծովի հեղեղման պատճառով, մեր թվարկությունից առաջ 116-ին, վայրենի և մարդակեր կիմբրները և տևտոնները թողին գերմանական հողերը և արշավեցին Էլբայի ու Դանուբի հովիտները, հետո Զվիցերիա, Իտալիա և Իսպանիա: Մեր թվարկությունից կես դար առաջ ասպարեզ եկան սվևները, որոնց առջևից շարժվեցին հելվեդացիք, բելգիացիք, որոնց նվաճեց կամ քշեց Կեսարը: Այս բոլոր ցեղերը հաստատվեցին Հռենոսից ու Դանուբից այն կողմ եղած երկրներում՝ Գերմանիայում, Զվիցերիայում, Ավստրիայում, Հարավային Ռուսիայում, Շվեդում և Նորվեգիայում:

Գերմաններից հետո երևան եկան սլավները, որոնք մեր

թվարկությունից մի քանի տարի առաջ, գրավելով Բալթիկ ծովի հարավարևելյան կողմերը, քշեցին գերմանական ցեղերին և տարածվեցին մինչև Էլբա գետը, Ռուսիայի ներքին մասերը և մի մասն էլ անցնելով Դանուբը, մտավ Բալկանյան թերակղզին:

Հռոմեական քաղաքակրթության ազդեցության տակ, կելտական ու գերմանական ցեղերը շուտով քաղաքակրթության համն առան: 341 թվականին Ուլֆիլաս անվամբ գոթացի եպիսկոպոսը «Աստվածաշունչը» գոթերենի թարգմանեց և քրիստոնեական կրոնը տարածեց գոթերի մեջ, որոնք այն ժամանակները բնակվում էին Դոն, Դնեստր և Դնեպր գետերի հովիտները՝ մինչև Դանուբ և բաժանվել էին երկու մեծ ցեղերի՝ օստրոգոթ (արևելյան գոթեր) և վիսիգոթ (արևմտյան գոթեր):

Սլավները դեռ երկար ժամանակ վայրենի մնացին:

Այս երեք հնդեվրոպական ցեղերից դուրս կային նաև ուրիշ վայրենի ցեղեր, որոնք բնակվում էին Ուրալ լեռներից այն կողմ՝ Միջին Ասիայի ընդարձակ տարածության մեջ: Սրանք ուգրո-ֆիննական և ուրալ-ալթայական ժողովուրդներն էին, որոնք լավագույն հողեր գտնելու նպատակով սկսեցին արշավել դեպի արևելք և արևմուտք: Արևելյան արշավանքներն ուղղված էին Չինաստանի դեմ և չինացիք շարունակ կռվի մեջ էին նրանց դեմ: Այս բարբարոս վաչկատուներից ազատվելու համար էր, որ չինացիք կառուցեցին չինական պարիսպը: Այնուհետև Միջին Ասիայում տեղի ունեցած մի մեծ հեղեղ նորից ստիպեց վաչկատուններին շարժվել դեպի արևելք և արևմուտք. չինացիք հետ մղեցին այս արշավանքները և հասան մինչև Յարքանդ (122 մ. թ. ա.): Ավելի հաջող եղավ վաչկատունների արշավանքը դեպի Եվրոպա. բազմաթիվ փորձերից հետո նրանք վերջապես Ուրալ լեռներն անցան և Ռուսիայի դաշտերով դեպի արևմուտք առաջացան, իրենց առջևից քշելով կամ իրենց հետ խառնելով գերման և սլավ ժողովուրդները:

375 թվականին տեղի ունեցավ հոների առաջին արշավանքը. ուրալ-ալթայական գազանաբարո այս ժողովուրդը անցնելով Ուրալյան լեռները և Վոլգա գետը և նվաճելով ալաններին, հասավ գոթերի թագավորության սահմանը: Օստրոգոթները ամբողջապես նվաճվեցին, իսկ վիսիգոթները Դանուբն անցնելով մտան Արևելյան կայսրության գավառները և բնակություն հաստատելու համար տեղ խնդրեցին, Վաղես կայսրը ընդունեց նրանց և 1 000 000

վիսիգոթ բնակեցրեց Դանուբի հարավային երկրներում, որպեսզի նրանց միջոցով պաշտպանի իր սահմանները արշավող մյուս բարբարոս ցեղերից:

Այնուամենայնիվ վիսիգոթների այս բազմությունը վտանգավոր էր կայսրության համար, ուստի Վաղեսն ուզեց սովով ոչնչացնել նրանց:

Վիսիգոթներն ապստամբեցին կայսրության դեմ և արշավեցին Թրակիա: Վաղես կայսրը անձամբ գնաց նրանց վրա, բայց իր բանակները ջարդուփշուր եղան և ինքն էլ զոհ գնաց (378 թ.): Վիսիգոթներն առաջացան մինչև Ադրիանուպոլիս, բայց չկարողացան արշավել Պոլսի վրա: Թեոդոս զորավարը հաղթեց նրանց և ինքը կայսր դարձավ:

70. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Գոթական արշավանքների պատճառով հույներն ստիպված էին իրենց ամբողջ ուշադրությունը դարձնել մայրաքաղաքի վրա, որ կործանման անդունդին էր հասել: Այս պատճառով ո՛չ միայն մոռացան նրանք Հայաստանը, այլև իրենց բանակները դուրս հանելով երկրից, տարան արևմուտք կռվելու: Առիթից օգուտ քաղելով, Մանվել Մամիկոնյան նախարարը քշեց հույների նշանակած Վարազդատ թագավորին էլ և հայոց վրա անվանական թագավոր դնելով Պապի երկու անչափահաս որդիներին, իրապես երկրի կառավարությունն իր ձեռքն առավ: Եվ որպեսզի կարող լիներ դիմադրել հույներին, եթե նրանց կողմից որևէ հարձակում տեղի ունենար, դիմեց պարսիկների պետության և ստացավ նրանցից զինվորական նշանակալի ուժ:

Մանվելն այսպես երկրի դրությունն ապահովելուց հետո, երբ արդեն բավական զորավոր զգաց իրեն, հանկարծ զինվորական հեղափոխություն բարձրացնելով, ջարդեց ոչ միայն պարսիկների զինվորական ուժը, որ երկրի պաշտպանության համար էր խնդրել, այլև նրանց ուղարկած նորանոր բանակները, որոնց առաջնորդ Մերուժանին էլ սպանեց:

Այսպիսով մի կողմից խեղդելով հայոց պարսկասեր կուսակցությունը և մյուս կողմից պարսկական ոտնձգությունները, երկիրը բոլորովին անկախ հայտարարեց:

Այս ժամանակները Պարսկաստանում կրոնական և քաղա-

քական իշխանության միջև կռիվ էր սկսվել: Թագավորներն ուզում էին իրենց իշխանության մեջ անկախ լինել, իսկ մոգերն ուզում էին աշխարհական իշխանության վրա գերիշխանություն ունենալ: Այս կռիվը տևեց 20 տարի պարսիկների մեջ և սրա համար էր, որ նրանք չկարողացան ավելի մեծ ուշադրությամբ հետևել Հայաստանում իրենց շահերին:

Գոթական արշավանքը վանելուց հետո, երբ Թեոդոս Մեծն իր պետության արևմտյան նահանգները խաղաղացրեց, ուշադրություն դարձրեց նաև Արևելքի վրա: Պարսիկներն առաջարկեցին հույներին, կռվախնձորը մեջտեղից վերացնելու համար, Հայաստանը բաժանել երկու տերությունների միջև: Թեոդոս կայսրը համաձայնվեց: Հայաստանի արևելյան մասը, որ ամբողջ երկրի 4/5 մասն էր կազմում, անցավ պարսիկներին, Մծբին քաղաքի հետ. իսկ արևմտյան մասը, որ 1/5 մասն էր կազմում, Կարին քաղաքի հետ, անցավ հույներին: Երկու մասերն էլ իրենց վրա ունեցան հայ թագավոր (384):

Քիչ ժամանակ հետո հույներն իրենց բաժնի հայոց թագավորությունն էլ ջնջելով, Արևմտյան Հայաստանը վերածեցին պարզ հունական մի նահանգի, որ կառավարում էին հույն իշխաններով: Այս բանը շատ վշտացրեց հայերին, որոնք տեսան իրենց երկրի ջլատումն ու կորուստը: Երկիրը փրկելու համար այս կորստից և նորից մի ամբողջության վերածելու համար, Արևմտյան Հայաստանի իշխաններն անցան Արևելյան Հայաստան, և խմբվելով Խոսրով թագավորի շուրջը, նախ վերականգնեցին Լուսավորչի տոհմի կաթողիկոսությունը, ընտրելով արժանավոր մի անձի՝ Սահակին, որ ազգի մեջ գոնե կրոնական միությունը պիտի պահպաներ: Հետո որոշեցին դիմել հույների կայսեր և ստանալով նաև Արևմտյան Հայաստանը, ամբողջը դնել հույների հովանավորության տակ: Պարսիկները չլսեցին այս խնդրանքը, թագավորին ու կաթողիկոսին գահազուրկ արին և հայոց վրա նոր թագավոր դրին Վռամշապուհին:

71. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՎԵՐՋ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Թեոդոս Մեծը հռոմեական պետությունը կառավարեց մինչև 395 թվականը, ըստ հնարավորին դեմ դնելով բարբարոսների

հարձակման, զսպելով ներքին ապստամբությունները և հռոմեական պետությունը պահելով մեկ ամբողջության մեջ: Իր մահից հետո պետությունը բաժանվեց իր երկու որդիների միջև. Արկադիոսն ստացավ Արևելքը և Հոնորիոսն ստացավ Արևմուտքը:

Այս բաժանումը պատահական չէր, այլ համապատասխան իրականության:

Արևելքը դարձել էր հույն լեզվի և քաղաքակրթության աշխարհը, իսկ արևմուտքը՝ նորալատին ռոմանացած ազգերի աշխարհը:

Այս բաժանումը եղավ վերջնական:

Այս բաժանումով դադարում է հին ազգերի պատմության շրջանը և թևակոխում ենք միջին դարը:

Մեր ազգային պատմության մեջ կատարվում է նույնպես հայ կյանքի ամենամեծ երևույթը՝ հիմն է դրվում հայ գրականության և հայն էլ, նորալատին ազգերի հետ, սկսում է մտնել քաղաքակիրթ ազգերի շարքը:

ՄԻՋԻՆ ԴԱՐ

72. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ. ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Միջին դարը թեև Եվրոպայում բարբարոսների ահեղ արշավանքներով է սկսվում, բայց մեր մեջ գրականության Ոսկեդարն է որ սկսում է:

Մենք գիտենք, որ այն ժամանակ, երբ հայերը արշավեցին Հայաստան, երկրի նախաբնիկները (խալդերը) ունեին գիր և գրականություն. բայց հայերը, իբրև կիսավայրենի ժողովուրդ, չկարողացան օգտվել նրանցից, փոխ առնելով խալդյան գրությունը: Մինչև 5-րդ դարի սկիզբը հայերն ապրեցին առանց գրականության, իրենց ամենահզոր ժամանակն անգամ (Տիգրան Մեծ), հայոց լեզուն պետական լեզու չդարձավ, հունարենը կամ պարսկերենն էր, որ իբր դիվանական լեզու գործ էր ածվում: Քրիստոնեության ժամանակ ավելացավ նաև ասորերենը: Լուսավորչի և Ներսես Մեծի ժամանակ Հայաստանում բացվեցին բազմաթիվ կրոնական դպրոցներ, բայց այս բոլորի մեջ դասավանդությունը, ինչպես նաև եկեղեցիներում ժամերգությունը կատարվում էին հունարեն կամ ասորերեն լեզուներով, որոնցից ոչինչ չէր հասկանում հայ ժողովուրդը:

Այս վիճակը շատ դառն էր սակավաթիվ հայ ուսումնականների համար:

4-րդ դարի վերջերին Հայաստանը մատնվեց քաղաքական ծանր կացության. արևմտյան մասն արդեն խլել էին հույները և աշխատում էին հունացնել. Արևելյան Հայաստանի թագավորությունն էլ պարսիկների ձեռքում անվանական բան էր դարձել, որ նույնպես շուտով պիտի տապալվեր: Եվ հայ ազգն ամբողջությամբ պիտի գտնվեր օտարների լծի տակ, ենթակա նրանց քաղաքական և ազգային ամեն տեսակի ճնշումներին: Հայությունն արդյո՞ք բավական բարոյական ուժ ուներ, որպեսզի կարենար դիմադրել գալիք հարվածներին և իր գոյությունը պահպաներ: Միակ ուժը քրիստոնեությունն էր, որ պարսկական մոգականության առաջ

խտիր կամ պատնեշ պիտի հանդիսանար. բայց արդյո՞ք այս ուժն էլ պիտի կարողանար երկար դիմանալ և նորանոր փորձեր, ինչպես արեց Մերուժան Արծրունին, չպիտի գային հարվածելու և տապալելու այն էլ:

Այս մտածմունքներով տարվեց 5-րդ դարի սկիզբը հայության նշանավոր զավակը Մեսրոպ, տարոնացի կրոնավորը: Նա գտավ, որ հայ ազգը, լեզուն ու կրոնը փրկելու գլխավոր միջոցն է հայերեն գրականությունը, և որոշեց հնարել հայերեն տառերը: Իր այս միտքը նա հայտնեց ժամանակի թագավոր Վռամշապուհին և կաթողիկոս Սահակին, որոնք ուսումնասեր մարդիկ լինելով, մեծ համակրությամբ վերաբերվեցին նրա գաղափարին: Վռամշապուհը հայտնեց, որ Միջագետքի Դանիել ասորի եպիսկոպոսի մոտ կան հայերեն գրեր. Մեսրոպի առաջարկությամբ իսկույն այս գրերը բերվեցին և բանալով հայոց առաջին դպրոցը, Մեսրոպ փորձեր արեց այդ գրերով հայ գրականություն ստեղծելու: Բայց փորձերը ցույց տվին, որ նրանք հարմար չէին մեր լեզվին, որովհետև շատ պակաս տառեր կային: Մեսրոպ անձամբ գնաց Միջագետք, Եդեսիայի գրադարանում խուզարկություններ կատարեց և վերջապես համոզվելով, որ դրանք հայերեն տառեր չէին, մի կողմ դրեց և ինքը, օգտվելով հունարեն, պահլավերեն և ասորերեն այբուբեններից, հնարեց հայերեն այբուբենը:

Սկսվեց այնպիսի եռանդուն մի գործունեություն, որի նմանը ուրիշ անգամ չտեսավ Հայաստանը: 35 տարի ամբողջ, այս անխոնջ վարդապետը պտտվեց Հայաստանի ամեն կողմերը և ամեն տեղ դպրոցներ բաց անելով, սովորեցրեց ու տարածեց հայ գիրը: Մյուս կողմից Սահակ կաթողիկոսը հայերենի էր թարգմանում Աստվածաշունչը և հույն ու ասորի եկեղեցական գրականության բոլոր նշանավոր գործերը ուշիմ աշակերտներն ուղարկվում էին Եդեսիա, Պոլիս և Աթենք՝ ուսման մեջ կատարելագործվելու և հայ նորածիլ գրականությունը նոր երկերով ու թարգմանություններով ճոխացնելու: Կարճ ժամանակվա ընթացքում հայ գրականությունը այնպես մեծացավ ու տարածվեց, որ այս շրջանը կոչվեց հայ գրականության Ոսկեդարը:

Մեսրոպ անցավ նաև Վրաստան և Աղվանք ու նրանց համար էլ հնարելով առանձին այբուբեն, հիմք դրեց այդ երկու հարևան ազգերի գրականության:

73. ՎԻՍԻԳՈԹՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ. ԱԼԱՐԻԿ.

Արկադիոսը և Հոնորիոսը, տեսնելով որ իրենց ուժերով անկարող պիտի լինեն բարբարոսների ահարկու արշավանքներին դեմ դնելու, մտածեցին բարբարոսների դեմ նույնիսկ բարբարոսներ գործածել. Արկադիոսը օգնական առավ գալլիացի Ռուֆինոսին, իսկ Հոնորիոսը՝ Ստիլիկոն անվամբ մի վանդալի: Այս երկուսը կազմակերպեցին բարբարոսներից վարձված մի բանակ և իրենք էլ այս բանակների գլուխն անցան:

Բարբարոսների մեջ նշանավոր եղավ վիսիգոթների առաջնորդ Ալարիկը, որ իր ամբոխի գլուխն անցած երկու արշավանք գործեց՝ նախ դեպի Թրակիա և Հունաստան (396) և հետո դեպի Իտալիա (403): Ստիլիկոն վանդալը դուրս եկավ նրանց դեմ և երկու անգամ էլ կարողացավ քշել նրանց Իլլիրիա, ուր նրանք հույների կայսրից իրավունք ստացան բնակվելու:

406 թվականին սվևները Բալթիկի եզերքներից հարավ արշավելով և իրենց հետ առնելով նաև գերմանական զանազան ցեղեր, ալաններին, ֆրանկներին, վանդալներին, բուրգոնդներին, թափվեցին Իտալիա, բայց այստեղից դուրս քշվելով, խուժեցին Գալլիա և Իսպանիա: Շուտով նորից եկավ Ալարիկը և այս անգամ գրավեց Հռոմը, ուր ամեն ինչ ավերեց ու կործանեց (410 թ.): Վիսիգոթները Իտալիայից անցան Գալլիա և Իսպանիա, ուր ոչնչացնելով ալաններին, իսկ սվևներին ու վանդալներին թերակղզու հեռավոր ծայրերը քշելով, հիմնեցին Իսպանիայի վիսիգոթական թագավորությունը, ուր շուտով ամբողջ Իսպանիային տեր դարձավ: Բուրգոնդները քաշվեցին Գալլիայի արևելյան կողմը և Հելվետիայի սահմանի վրա հիմնեցին մի փոքր թագավորություն. իսկ վանդալները մի ժամանակ Հարավային Իսպանիային տիրելուց հետո, անցան Աֆրիկա և քշելով հռոմայեցիներին, հիմնեցին մի նոր թագավորություն, որի մայրաքաղաքն եղավ Կարթագենը (430 թ.):

74. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Վռամշապուհի թագավորության շրջանը Հայաստանի համար խաղաղ գործունեության մի շրջան եղավ: Պարսկաստանն այն

ժամանակ զբաղվել էր ներքին կռիվներով. թագավորական իշխանությունը դուրս էր եկել զրադաշտական հոգևորականության և ազնվականության դեմ, իր գերիշխանության իրավունքները պաշտպանելու համար: Այս պատճառով ահա նրանք ո՛չ միայն դադարեցրել էին արտաքին պատերազմները, այլև Պարսկաստանի քրիստոնեության դեմ ներքին հալածանքը վերջացրել էին. ցույց տալով կրոնական լայն համբերողություն: Երեսնամյա այդ խաղաղ շրջանին հայությունը կարողացավ ստեղծել իր գրական Ոսկեդարը և բարոյապես պատրաստվել գալիք աղետները դիմագրավելու:

Վռամշապուհի մահից անմիջապես հետո, պարսիկները երևան հանեցին իրենց բուն քաղաքականությունը, որ պարզապես հայոց թագավորության ջնջումն էր: Պարսիկների թագավորը իբրև հայոց գահակալ դրավ իր որդի Շապուհին, որպեսզի այսպիսով գահի ժառանգությունը անցնի Սասանյան ցեղին: Բայց հայերը չընդունեցին և շատ վատ վարվեցին հետը: Երբ պարսից թագավորը մեռավ և Շապուհը շտապեց Պարսկաստան, իր հոր գահը ժառանգելու, հայերը ապստամբության դրոշը բարձրացրին պետության դեմ: Ներսես Ճիճրակացին հալածեց պարսիկների զորքը, հարկերը դադարեցրեց և երկրի իշխանությունը ձեռք առավ: Սրա վրա պարսիկների թագավորը, տեսնելով որ դեռ ժամանակը չէ ներգործական քայլեր առնելու, մեղմացավ և հայոց հաճությամբ թագավոր դրավ Հայաստանի գահի միակ ժառանգորդ Արտաշեսին, որ Վռամշապուհի որդին էր:

Արտաշեսը թույլ մարդ էր. նա չկարողացավ զսպել պարսկասեր կուսակցությունը, որ նորից բարձրացրեց իր գլուխը և այս անգամ ավելի վճռական կերպով: Նրանք դիմեցին Պարսկաստան և բողոքելով թե՛ Արտաշեսի և թե՛ Սահակ կաթողիկոսի դեմ, պահանջեցին, որ գահազուրկ անի նրանց: Թագավորը սիրով կատարեց նրանց խնդիրքը և վերջ տվեց հայոց Արշակունի թագավորության և Լուսավորչի տոհմի կաթողիկոսության: Հայաստանը դարձավ պետության մեկ նահանգը և կառավարվում էր պարսիկների թագավորի կողմից նշանակված մարզպանով, որ շատ անգամ պարսիկ և երբեմն էլ հայ էր լինում (428 թ.):

Այսպես հասան պարսիկները այն նպատակին, որին հետևում էին 200 տարուց ի վեր:

75. ՀՈՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ. ԱՏՏԻԼԱ (ԱԹԻԼԼԱ) ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Հոները, որ իրենց առաջին արշավանքի ժամանակ հասնելով մինչև Պաննոնիա (Հունգարիա), այնտեղ կանգ էին առել, 5-րդ դարի կեսին նորից շարժվեցին: Նրանց առաջնորդն եղավ Ատտիլան, որ իր իշխանության տակ միացնելով բոլոր հոներին, գերմանական ցեղերին և սլավներին, սկսեց մի ահարկու արշավանք արևելքից արևմուտք՝ Ասիա և Եվրոպա: Իր գունդերից այլևայլ բարբարոս խմբեր անցան Կովկասյան լեռնաշղթան և մտան Պարսկաստան. իսկ ինքն արշավեց Պոլսի վրա և միայն ահագին փրկանք առնելուց հետո, ետ քաշվեց: 451 թվականին Ատտիլան ոտքի հանելով իր 600 000-անոց բանակը, արշավեց Գալլիա և մինչև Օռլեան հասավ, ավերելով իր ճանապարհի վրա փռված քաղաքներն ու գյուղերը: Իր անունն այնպես սարսափելի էր, որ մյուս բոլոր բարբարոս ցեղերը, ֆրանկները, բուրգոնդները, վիսիգոթները, ինչպես նաև հռոմայեցիք, իսկույն միություն կազմեցին և միացյալ ուժով դեմ ելան, վանելու համար այս «Աստվածային պատուհասը»: Մառն գետի վրա տեղի ունեցավ համաշխարհային նշանակություն ունեցող այս ճակատամարտը. 160 000 հոգի ընկավ այնտեղ. հոները հաղթվեցին և իրենց հավաքած ավարով միասին նորից քաշվեցին Պաննոնիա:

Մի տարի դադար առնելուց հետո, Ատտիլան նորից ճանապարհ ընկավ և այս անգամ ուղղակի արշավեց Իտալիա, Հյուսիսային Իտալիայի բոլոր քաղաքները կործանեց և պատրաստվում էր արդեն Հռոմի վրա արշավելու, երբ ժանտախտն ընկնելով իր բանակի մեջ, զորքերն սկսեցին կոտորվել: Ատտիլան կանգ առավ և առանց Հռոմին դիպչելու, նորից ետ դարձավ Պաննոնիա, ուր ինքն էլ մեռավ և իր տերությունն էլ հետը քայքայվեց (453 թ.):

Հոների երկրորդ արշավանքին ժամանակակից է անգլո-սաքսոնների արշավանքը Բրիտանիայի վրա:

Բրիտանիան հռոմեական մի նահանգ էր դարձել Կեսարի ժամանակից սկսած. երբ հռոմեական զորքերը հեռացան այնտեղից, Կալեդոնիայի (Սկոտլանդիայի) վայրենիներն արշավելով այս երկրի վրա, սկսեցին կողոպտել և ավերել. բրիտանացիք անզոր գտնվեցին դիմադրելու նրանց, ուստի հրավիրեցին սաքսոն ծովահեններին, որոնք թափվեցին Բրիտանիա, ասպատակեցին

Բրիտանիա, ասպատակներին քշեցին և իրենց երկրին տեր դառնալով, հիմնեցին սաքսոնական չորս թագավորությունները (453 թ.):

Հոների արշավանքից մի քանի տարի հետո սկսվում է վանդալների արշավանքը դեպի Իտալիա:

Վանդալները, ինչպես գիտենք, Իսպանիայից անցել էին Աֆրիկա և այնտեղ, մավրիտանացիների հետ միացած, հիմնել էին առանձին թագավորություն, Կարկեդոնի պետության ավերակների վրա: Վերանորոգելով Կարկեդոնը և այն դարձնելով նոր թագավորության մայրաքաղաքը, վանդալները պատրաստեցին զորավոր մի նավատորմիղ, որ քիչ ժամանակից Միջերկրականի սարսափը դարձավ: Վանդալների թագավոր Գենզերիկը տիրեց Սիկիլիային և Միջերկրականի մյուս կղզիներին. այնտեղից անցավ Իտալիա և առավ Հռոմը, որ 15 օր անխնա ավերեց և կործանեց այնպիսի մեծ խժդժությամբ, որ այնուհետև վանդալություն բառը դարձավ խժդժության հոմանիշ (455):

Վանդալների արշավանքով հռոմեական պետության վերջին մնացորդներն էլ անցան բարբարոսների ձեռքը. Իտալիայում կազմվեց գերմանական Հերուլ ցեղի թագավորությունը, որ Հռոմի վերջին անվանական կայսրին (6-ամյա երեխա) գահազուրկ անելով, վերջ տվեց Հռոմեական կայսրության (476 թ.):

76. ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Սասանյաններն իրենց առաջին նպատակին հասնելուց հետո, որոշեցին անցնել երկրորդ նպատակին, այն է զրադաշտական կրոնը տարածել Հայաստանում:

Արևելքում չորս քրիստոնյա ազգ կար՝ հայերը, վրացիք, աղվաններն ու ասորիները: Սրանց մեջ թե՛ թվով և թե՛ ազդեցությամբ ամենագլխավորը հայերն էին, և եթե հայերն ընդունեին զրադաշտական կրոնը, մյուսներն էլ դյուրությամբ պիտի հետևեին նրանց և այսպիսով պիտի կտրվեր ամեն կապ, որ արևելյան քրիստոնեական աշխարհը կապում էր Արևմուտքի հետ: Այս պատճառով ահա պարսիկներն էլ իրենց առաջին և գլխավոր աշխատանքը թափեցին Հայաստանի վրա:

Այս նպատակի իրագործման գլուխ կանգնեց Հազկերտ Բ-ը, որ կրոնամոլ թագավոր էր և ամեն բանի մեջ մոգերի խորհրդին համամիտ ու հպատակ:

Վարպետ քաղաքականությամբ Հազկերտն աշխատեց նախ ջնջել այն բոլոր արգելքները, որ կարող էին խանգարել գործը:

Առաջին և գլխավոր արգելքը հույներն էին, որոնք կարող էին իրենց բանակով օգնության գալ հայերին, մանավանդ այսպիսի կրոնական նպատակի համար: Հազկերտը հարձակվեց հույների վրա, հասավ մինչև Մծբին և ստիպեց նրանց կնքել մի ամոթալի դաշինք, որի համաձայն բոլոր այն պարսիկները, որոնք քրիստոնեություն ընդունելու պատճառով փախել ապաստանել էին հույների պետության մեջ, պիտի բռնվեին և հանձնվեին պարսիկներին:

Երկրորդ արգելքը կարող էին հանդիսանալ հոները, որոնք, բարբարոս ցեղ, մասամբ դարձած քրիստոնյա, կարող էին արշավել Պարսկաստան կամ հայոց օգնության գալ: Հազկերտն սկսեց ահագին մի արշավանք հոների դեմ, որ տարիներ տևեց և վերջացավ հոների նահանջով: Այս երկու արգելքները հեռացնելուց հետո դարձավ Հայաստան, որտեղ սկսվելու էր երրորդ արգելքը:

Հայաստանը, թեև զրկված թագավորական իշխանությունից և հարկատու ու հպատակ պարսից, բայց անխախտ էր պահում դեռ ներքին ինքնավարությունը, կար առանձին հայկական բանակ՝ հայ սպարապետի առաջնորդության տակ, նախարարները մնում էին իրենց իշխանության մեջ, հարկերը հավաքվում էին հայոց ձեռքով և ապա ուղարկվում Պարսկաստան, դատական վարչությունն ամբողջապես հայոց ձեռքումն էր: Հազկերտն աշխատեց ջնջել այս ներքին ինքնավարությունն էլ. դատական և ելևմտական վարչությունը խլեց հայոց ձեռքից և հանձնեց պարսիկ պաշտոնյաների. բայց չկարողացավ ձեռք տալ նախարարության և բանակին: Երբ այսպես ամեն կողմից ապահով զգաց իրեն, ժամանակը եկած համարեց անցնելու բուն նպատակին:

Բնականաբար մեկ անգամից կարելի չէր պահանջել, որ բոլոր հայերը թողնեին քրիստոնեությունը և հետևեին մոգական կրոնին. ուստի պարսիկները նախ պահանջեցին, որ Հայաստանում, ուր քրիստոնեությունը միակ դավանված կրոնն էր, զրադաշտական կրոնն էլ ազատ պաշտվի և ազատորեն հիմնվեն ատրուշաններ, որոնք արգելված էին Հայաստանում (այս այն էր, ինչ որ արդի

բառով կարող ենք կոչել կրոնների ազատություն): Այս իմաստով Հազկերտը հրովարտակ ուղարկեց Հայաստան: Եկեղեցական դասակարգը և ժողովուրդը հուզվեցին. նախարարները հակառակվեցին հրովարտակին. Հազկերտը կանչեց նրանց պալատ, հեռացնելու համար հոգևորականության ազդեցությունը. հաջողվեց կրակապաշտ դարձնել նրանց և մոգերի մի խմբով ուղարկել Հայաստան: Մոգերը զանազան վայրերում ատրուշաններ կանգնեցին և սկսեցին զրադաշտական կրոնը քարոզել երկրում. բայց այդ քարոզությունն անօգուտ էր. բացի շատ սակավաթիվ հետևորդներից, ուրիշ լսող չկար: Կրոնական դասակարգը, Ղևոնդ երեցի առաջնորդությամբ, ոտքի կանգնեց. իրենց միացան նաև նախարարները և հայոց բանակի սպարապետ Վարդան Մամիկոնյանը. հարձակվեցին մոգերի վրա, կոտորեցին նրանց և ատրուշաններն էլ քանդեցին: Վարդանն անցավ Աղվանք, այնտեղ գտնվող պարսկական բանակն էլ ջարդեց և ատրուշանները կործանեց:

Այս առաջին հաջողությունից սիրտ առած, հայերը որոշեցին ընդհանուր ապստամբություն բարձրացնել պարսիկների դեմ. ուստի դիմեցին հույներին, հոներին և հունահայերին ու նրանցից օգնություն խնդրեցին: Հույների կայսրը մերժեց օգնել. անօգուտ անցավ նաև հոների դիմումը. մինչև անգամ հունահայերը չկարողացան օգնության հասնել իրենց ազգակիցներին: Այս տեսնելով, Հայոց մարզպան Վասակ Սյունին, որ մինչև այս ժամանակ ապստամբության կողմնակից էր, հուսահատվեց և գտավ, որ ապստամբությունը անխորհուրդ է: Եթե հույները և հոները, որոնք ահագին պետություն ունեին, չէին կարողացել դիմադրել սասանյաններին, ինչպե՞ս պիտի կարողանային հայերը, առանց դրսի օգնության, դեմ դնել նրանց ահավոր զորության: Վասակի խորհրդին համամիտ գտնվեցին նախարարներից շատերը և այսպիսով ձևացրին առանձին մի կուսակցություն, որի ծրագիրն էր ապստամբության չդիմել և ժամանակավորապես այժմ համակերպվել պարսիկներին: Իսկ կղերական կուսակցությունը, որի գլուխն էր Վարդանը, իր հույսը իր սեփական ուժի վրա դնելով, քարոզեց ընդհանուր ապստամբություն, որ Հայաստանի շատ գավառներում տարածվեց: Հազկերտը որոշեց զենքի ուժով ճնշել ապստամբությունը:

Ավարայրի դաշտում տեղի ունեցավ պատերազմ, ուր 60 000

հայեր, իրենցից եռապատիկ ավելի պարսկական զորքի դեմ ճակատեցին: Վարդանը գործեց մեծամեծ քաջություններ, բայց անխոհեմությամբ մտնելով պարսից բանակի սիրտը, ընկավ իրենների հետ: Սրա վրա բանակը ցրվեց և քայքայվեց (451 թ.):

Այնուհետև պարսիկները հարձակվեցին Հայաստանի մյուս ապստամբ իշխանների վրա, որոնց մեջ նշանավոր էր Վարդանի եղբայրը՝ Հմայակ Մամիկոնյանը, Տայոց նահանգում: Պարսիկները մեկ առ մեկ նվաճեցին այս ապստամբներին էլ և բովանդակ երկիրը իրենց ձեռքն առան: Հետո բռնեցին ապստամբության գլխավորներին, կաթողիկոսին, կրոնավորներին (որոնց մեջ նշանավոր էր Ղևոնդ Երեցը), նախարարներին, ինչպես նաև Վասակ մարզպանին և տարան Պարսկաստան: Այնտեղ կրոնավորները, իբրև ատրուշան քանդող, մահվան դատապարտվեցին, նախարարներն աքսորվեցին, իսկ Վասակը բանտարկվելով Պարսկաստանում, Հայաստան ուղարկվեց մի պարսիկ մարզպան:

Այսպես ընկճվեց հայոց առաջին ապստամբությունը պարսից դեմ:

77. ԹԵՈԴՈՐԻԿ. ԳՈԹԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Հոների առաջին արշավանքի ժամանակ, օստրոգոթները նվաճվելով, մտել էին նրանց իշխանության տակ: Մեկ դարի չափ նրանց լուծը կրելուց հետո, երբ Ատտիլայի մահով հոների պետությունը քայքայվեց, օստրոգոթներն էլ ազատվելով, տեր դարձան Պաննոնիայի: Նրանցից մի մասը հույների կայսրության կողմից վարձվելով, բանակի ծառայության մեջ մտավ: Գրգռվելով հույների կայսրերից, նրանց թագավոր Թեոդորիկը, իր ամբողջ ցեղով (200 000 հոգի) դուրս եկավ Պաննոնիայից և արշավելով Իտալիա, ջնջեց հերուլների թագավորությունը և կարճ ժամանակից տեր դարձավ ամբողջ Իտալիային և Սիկիլիային (493 թ.):

Թեոդորիկը Իտալիայում հաստատվելուց հետո ուշադրություն դարձրեց շրջակա երկրների վրա. գրեթե առանց կռվի գրավեց Իլլյուրիան, Պաննոնիան, Նորիկան (Ավստրիան). կռվելով բուլղարների հետ, խլեց Մարսելի գավառը, բավարացիք, ալամանները և վիսիգոթները կամովին հպատակվեցին նրան: Այսպիսով Թեոդորիկը մի ձեռքի տակ միացնելով օստրոգոթներին ու վիսիգոթներին, որոնք հոների արշավանքի պատճառով միմյանցից բաժանվել էին ու հեռացել, հիմնեց գոթական մի մեծ

պետություն, որ սկսելով Իսպանիայից, տարածվում էր Գալլիայի և Իտալիայի վրայով մինչև Դանուբի ակունքները և դարձել էր հռոմեական պետության ժառանգը: Նրա մեջ միացել էին գերմանական զանազան ինքնավար ցեղերը: Օստրոգոթները, ընդունելով հռոմեական քաղաքակրթությունը, իրենց պետությունը կազմակերպեցին հռոմեական պետական կարգերի համաձայն: Քիչ ժամանակից պետությունն այնպես կանոնավորվեց և քաղաքակրթվեց, որ մինչև իսկ խոճի և կրոնի ազատությունը հարգվեց և տեղացի հռոմեական ժողովուրդը տիրող օստրոգոթների հետ հավասար քաղաքացի դարձավ:

78. ՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ.

Վարդանանց անհաջող ապստամբությունից հետո, Հայաստանի վրա ավելի ծանրացավ պարսկական լուծը: Պարսիկները, հավատարիմ իենց քաղաքականության, քարոզում էին իրենց կրոնը, տեղ-տեղ կառուցում էին ատրուշաններ, և որպեսզի ավելի շատ հետևորդներ ունենան, աշխատում էին պատիվ ու պաշտոն տալ միայն ա՛յն հայերին, որոնք ուրանում էին իրենց հավատը, առանց նկատի ունենալու արժանիքը: Այսպես, մի կողմից շատանում էր երկրում զրադաշտական-ուրացող հայ նախարարների կուսակցությունը, մյուս կողմից նրա հետ զուգընթացաբար ընկնում էր երկրի վարչական մարմնի բարոյականը: Բայց քրիստոնեական-հունասեր կուսակցությունը երբեք չէր հուսահատվել. սրանք իրենց հույսը դրած հույների վրա, շարունակ սպասում էին, թե ե՛րբ կգա հարմար ժամանակը, մի նոր ապստամբությամբ պարսկական լուծը թոթափելու համար:

Հարմար առիթը տվին վրացիք: Այս ժամանակները Վրաստանի գահը բարձրացավ Վախթանգը, նրանց նշանավոր թագավորներից մեկը, որ ուզեց երկիրն ազատել թշնամիների ձեռքից: Նախ հարձակվեց օսերի վրա, որոնք Դարյալի կիրճը բռնած, շարունակական ասպատակություններով նեղում էին Հյուսիսային Վրաստանը, հաղթեց և օսերին երկրից դուրս քշեց: Այնուհետև բարեկամացավ հույների կայսեր հետ և նրա հետ դաշինք կապելով, ստացավ Աբխազիան և Մինգրելիան: Այս նախապատրաստությունները տեսնելուց հետո, հոների հետ բարեկամական

դաշինք կնքեց, նրանց հետ միանալով ապստամբեցին պարսիկների դեմ, հարձակվեցին պարսկական բանակի վրա, պարսկական զորքը երկրից դուրս քշեցին. Վրաստանը անկախ հայտարարվեց: Հայ իշխանները հարմար առիթ համարելով այս, իրենք էլ միացան և Վահան Մամիկոնյանի առաջնորդությամբ ապստամբության դրոշը բարձրացնելով, պարսիկների մարզպանին դուրս քշեցին և հիմնեցին ժամանակավոր անկախ կառավարություն: Մարզպանը նոր զորք առած շտապեց գալ Հայաստան, իր բույնի մեջ խեղդելու համար ապստամբությունը, քանի դեռ ամբողջ երկրում չէր ծավալվել և քանի դեռ հույները կամ հոները հայոց օգնության չէին եկել: Բայց մարզպանը հաղթվեց և սպանվեց: Այս հաղթության վրա Վահանը կոչ կարդաց բոլոր հայ նախարարներին՝ միանալու ապստամբության, դաշնակցեց վրացիների և հոների հետ, որպեսզի միացյալ ուժով տապալեն պարսկական լուծը: Բայց իր կոչին շատ քչերը միայն արձագանք տվին և Վահանն իր հույսը իր վրա միայն դրած, որոշեց կռվել մինչև վերջ:

Պարսիկները մեծ ուժերով եկան Վահանի դեմ. Վահանն անձամբ գնաց նրանց դեմ և Ներսեհապատում, Ավարայրի դաշտի մոտ, ջախջախեց պարսիկների բանակը (481 թ.): Միևնույն ժամանակ պարսիկները մտել էին Վրաստան, Վահանը գնաց նաև նրանց դեմ, որպեսզի վրացիների ու հոների հետ միացած, Վրաստանն էլ մաքրի պարսիկներից: Բայց հոները չեկան, վրացիք էլ փախան պատերազմի դաշտից, և Վահանը շատ կորուստներ տալով՝ քաշվեց Հայաստան:

Այդ օրվանից Վահանն սկսում է հայդուկային կռիվներ մղել պարսիկների դեմ. իր սակավաթիվ զինվորներով, որոնց թիվը հետզհետե պակասելով մինչև 40-ի իջավ, թափառում էր սարից սար և հանդուգն հարձակումներով խորտակում պարսիկ զորապետների ուժը, որոնք իրար հետևից գալիս էին Հայաստան Վահանին բռնելու համար: Եվ Վահանը մինչև վերջ անպարտելի մնաց:

Այս միջոցին Պարսկաստանում տեղի է ունենում Հեփթաղների (հոնական ցեղ) մեծ արշավանքը: Պարսիկների Պերոզ թագավորը գնում է նրանց դեմ, բայց իր ամբողջ բանակով միասին ջարդվում և ինքն էլ անհետ կորչում. հաղթողները ողողում են ամբողջ Պարսկաստանը և երկիրը մատնվում է սոսկալի անիշխանության.

թագավոր չկար, վերջապես պարսիկներն սթափվում են. կարողանում են կաշառքի միջոցով ասպատակող ավազակ ցեղերը երկրից դուրս հանել, ներքին ապստամբությունները ջնջել և Վաղարշին գահ բարձրացնելով (484 թ.)՝ պարսկական թագավորությունը վերականգնել: Սրա վրա Պարսկաստանի պետական քաղաքականության մեջ նշանավոր մի փոփոխություն է տեղի ունենում. որոշում են հաշտվել բոլոր թշնամի տարրերի հետ և ներքին ապստամբություններին վերջ տալ: Դիմում են նաև Վահանին և կարճատև բանակցությունից հետո ընդունելով նրա բոլոր պայմանները, Նվարսակի դաշնագրով հաշտություն են կնքում հայոց հետ:

Այս հաշտությամբ պարսիկները Հայաստանի պետական կրոն են ճանաչում քրիստոնեությունը, հանում են ատրուշանները և մոգական քարոզությունը և դադարեցնում հավատորսության աշխատանքները: Կարճ ժամանակից պարսկական պետությունը Վահանին շնորհում է հայոց բանակի ընդհանուր սպարապետությունը և Հայաստանի մարզպանության պաշտոնը:

Այսպես գլուխ է գալիս Վահանի ապստամբությունը և հայերը հասնում են իրենց ցանկալի նպատակին:

79. ՄԱԶԴԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պարսիկների արքունիքն այնուամենայնիվ չկարողացավ երկրում հիմնական խաղաղություն հաստատել. Վաղարշը հակառակ էր մոգերին, ուստի կրոնական դասակարգն իրանից հեռու մնաց. այս պարագային արքունիքի միակ հույսը ավագանին և զինվորական դասակարգը պիտի լինեին. բայց որովհետև պատերազմների պատճառով գանձարանը դատարկ էր, ուստի կարելի չեղավ բանակը գոհացնել: Երկու դժգոհ դասերը՝ մոգերն ու զինվորականները միացած, տապալեցին Վաղարշին և գահը հանձնեցին Կավատին (488 թ.), հուսալով որ նա, իբրև իրենց բարերարյալը, հլու գործիք կդառնա իրենց ձեռքում: Բայց Կավատը, հենց որ գահի վրա հաստատվեց, չուզեց մի այդպիսի անարգ դեր ստանձնել և ազնվականների ու մոգերի միացյալ ուժը խորտակելու համար մի նոր միջոց ընտրեց:

Այս ժամանակ դուրս էր եկել Իրանի խորհրդավոր քարոզիչ-

ներից մեկը, Մազդակ անվամբ մի եռանդուն հոգևորական, որ ժողովրդի հավասարության և արդարության սկզբունքի անվամբ, քարոզում էր մի նոր սոցիալական վարդապետություն: Նա պահանջում էր, որ բոլոր հարուստներն իրենց հարստության ավելորդ մասը և իրենց ոչ հիմնական կանանց բաժանեն չունևոր դասակարգին: Կավատն անցավ Մազդակի կողմը և սկսեց պաշտպանել նրան: Այս միջոցով հույս ուներ նա մեծամեծներին և բարձր հոգևորականությանն ընկճել: Նոր վարդապետությունը վայելելով պետական պաշտպանություն, տեսականից անցավ գործնականի. ժողովուրդն սկսեց զանազան վայրերում հարձակումներ գործել և հարուստների ինչքն ու կանանց խլել: Այս խռովության վրա լեռնական վայրենի ցեղերը նորից ապստամբեցին և Պարսկաստան արշավեցին: Ազնվականները և հոգևորականները կարողացան Մազդակի շարժումը զսպել, Կավատին գահազուրկ արին և աթոռը նրա եղբորն հանձնեցին: Սակայն Կավատը փախավ հեփթաղների մոտ և փեսայանալով նրանց թագավորին, զորք առավ և մտավ Պարսկաստան, իր գահին տեր դարձավ, ազնվականներին հաղթեց, Մազդակի կողմնակիցներին սանձեց և խաղաղությունը վերահաստատեց երկրում: Այս Կավատն էր, որ քառորդ դար հետո Մազդակի կողմնակիցների մի նոր սպառնական շարժման ժամանակ, երբ նրանք ո՛չ միայն հասարակական ընդունված կարգերը, այլև պետականությունն էլ կործանելու փորձեր էին անում, ընկավ նրանց վրա և մի ահռելի կոտորածով այդ շարժման վերջ տվեց:

80. ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԿԱՅՍՐԸ.

Հին աշխարհի այն ժամանակվան ամենանշանավոր պետությունը Արևելյան կայսրությունն էր: Սա իր մեջ պարունակում էր Եվրոպայում՝ Հունաստանը, Թրակիան, Եպիրոսը և Արշիպելագոսի կղզիները՝ Ասիայում՝ Փոքր Ասիան, Միջագետքը, Ասորիքը, Փյունիկեն և Պաղեստինը, Աֆրիկայում՝ Եգիպտոսը և Կյուրենաիկեն: Իր մայրաքաղաքը՝ Պոլիսը, հռչակավոր իր պերճությամբ, շքեղությամբ և հարստությամբ, աշխարհի մայրաքաղաքն էր:

Բայց հակառակ իր մեծության և շքեղության, արևելյան կայսրությունը ներքուստ տկար և խախուտ էր: Իր տկարության

պատճառը բարոյական ապականությունն էր, որին ենթարկվել էին մի կողմից պալատականներն ու իշխանավորները և մյուս կողմից ժողովուրդը: Պալատը սիրային դավաճանությունների և ոճիրների թատերաբեմ էր եղել. կայսրերը, սովորաբար կամազուրկ և բախտախնդիր մարդիկ, խաղալիք էին դարձել կայսրուհիների և սիրեկանների ձեռքում: Ժողովուրդը, հայրենասիրական զգացմունքից և եռանդից զուրկ, սիրում էր հաճույքի, զվարճությունների և թատրոնի մեջ անցկացնել իր ժամանակը: Ամենից ավելի զարգացած էին կրոնական անմիտ վեճերը. շուտ-շուտ երևան էին գալիս նորանոր աղանդապետներ, որոնք քրիստոնեության մեջ հերձվածներ էին առաջացնում և սկսում էին ընդարձակ վեճերը Աստվածաշնչի այս կամ այն բառի կամ տառի շուրջը. կայսրերն անգամ մասնակցում էին այս վեճերին. վեճը շատ անգամ տեղիք էր տալիս կռիվների, հալածանքի, աքսորի և ներքին պատերազմների:

Իրերի այս դրության մեջ, բյուզանդական պետության երկարատև գոյությունը զարմանալի է. բայց այս բանը պետք է բացատրել Պոլսի աշխարհագրական դիրքով և կայսրերի դիվանագիտական նենգությամբ: Մի կողմից Դանուբը և դժվարանցանելի Բալկանները, մյուս կողմից Բոսֆորի նեղուցը և Պոլսի ամուր պարիսպները անառիկ էին դարձնում այն: Կայսրերը շատ անգամ կարողացան դրամով կամ խաբուսիկ միջոցներով ազատվել բարբարոսների արշավանքից և նրանց դարձնել դեպի Արևմուտք, դեպի հին աշխարհի փառքը կազմող Հռոմը: Այսպես, Ատտիլայի արշավանքը դրամով վանեցին, օստրոգոթները խարդախ դրդումներով անցան Իտալիա, եթե ոչ այս երկու աշխարհակալ ուժերն էլ բավական էին հարվածելու Արևելյան կայսրությունը:

Արևելյան կայսրության ամենափառավոր շրջանը եղավ Հուստինիանոսի շրջանը: Այս կայսրը, թեև իր բոլոր նախորդների նման ողորմելի մտքի տեր մեկը, բայց կարողացավ իբր օժանդակ գտնել մի քանի այնպիսի կարող անձնավորություններ, որոնք կարճ ժամանակվա մեջ տերության թե՛ քաղաքական և թե՛ մտավոր ուժը բարձրացրին: Իր ժամանակ կատարված գործերի մեջ ամենաառաջինն ու ամենանշանավորը եղավ Օրինագրքի հրատարակությունը, որ կատարեց Տրիբոնիան իրավագետը: Շատ ժամանակ էր, որ հռոմեական ինքնակալները ձեռնարկել էին այդպիսի կատարյալ մի օրինագրքի հրատարակությանը, բայց

փորձերը միշտ էլ անհաջող էին անցել՝ աշխատանքի հսկայական մեծության պատճառով: Հուստինիանոսը կազմեց իրավագետների մի հանձնաժողով, որի գլուխն անցավ Տրիբոնիան: Հինգ տարի աշխատելով, հանձնաժողովը հավաքեց ու միացրեց մինչև այն ժամանակ հրատարակված 2000 իրավագիտական աշխատություն և կազմեց մի հսկա գործ: Այս օրինագիրքը (Corpus juris), որ հրատարակվեց 528 թվականին, այնուհետև դարձավ կայսրության նոր օրենքը. նրա վրա են հիմնվում այսօր էլ եվրոպական բոլոր օրենսդրությունները:

Օրինագրքի հրատարակությունից պակաս նշանավոր չեղան Հուստինիանոսի շինարարական գործերը, որոնց թագն ու պսակը եղավ Ս. Սոֆիայի տաճարը: Ճարտարապետության այս հրաշալիքը կերտելու համար կայսրը վատնեց ահագին հարստություն, կողոպտեց գրեթե ամեն տաճար կամ մեհյան իր ամենանշանավոր զարդերից, սյուներից ու քանդակներից, որոնք փոխադրեց ու դրավ նոր տաճարում: Տաճարի օծումը կատարվեց 537 թվականին և մինչև այսօր էլ մնում է կանգուն իր հոյակապ գմբեթով, իր հրաշակերտ սյուներով ու քանդակներով: Թուրքերն այն վերածել են մզկիթի:

Հուստինիանոսի աշխարհակալական կռիվները, որ մղեցին Բելիսարիոս և Ներսես զորավարները, տարածվում են չորս կողմի վրա. հարավարևմտյան կողմը վանդալների դեմ, արևմտյան կողմը գոթերի դեմ, հյուսիսային կողմը բուլղարների դեմ և արևելյան կողմը պարսից դեմ:

Առաջին պատերազմը Բելիսարիոսը մղեց վանդալների դեմ. սրանք նախապես լինելով քաջ ու պատերազմիկ ցեղ, կռիվների մեջ շատ մարդ կորցնելով պակասել էին թվով. միանգամից հասնելով մեծ հարստության իրենց պատերազմական ուժը նվազել էր. աֆրիկյան ջերմ կլիմայի տակ նրանց բարքերը թուլացել և մեղկացել էին: Մյուս կողմից իրենց և տեղական ժողովրդի մեջ տիրում էր անհաշտ թշնամություն. սրա պատճառը դավանանքի տարբերությունն էր: Վանդալները, հետևելով արիոսական դավանանքին, չկարողացան միանալ տեղացիների հետ, որոնք ուղղափառ դավանանքին էին պատկանում: Այս պատճառով ահա վանդալները չկարողացան երկար դիմադրել հույներին, երեք ամիս կռվելուց հետո, սովից նեղված, իրենց թագավորն ստիպվեց անձնատուր լինել. վանդալների պետությունը ջնջվեց և Աֆրիկան,

Սարդենիան ու Բալեարյան կղզիները միացան հույների կայսրության (534 թ.):

Այստեղից Բելիսարիոսն անցավ օստրոգոթների պետության վրա, որոնց կենտրոնը Իտալիան էր: Սրանք էլ գտնվում էին վանդալներին գրեթե նման վիճակի մեջ: Թեև քաղաքակրթված, թեև հռոմեական ժողովրդի հետ հավասար իրավունքով կապված, բայց այստեղ էլ ձուլումը և միությունը կատարյալ չէին եղել: Սրա պատճառը նախ դարձյալ կրոնական տարբերությունն էր, որովհետև օստրոգոթները արիոսական, մինչդեռ տեղացի ժողովուրդն ուղղափառ էր. իսկ երկրորդ պատճառը հռոմեական ժողովրդի վերաբերմունքն էր դեպի նորեկները. Հռոմայեցիք, իբրև հին քաղաքակիրթ ժողովուրդ, հպարտ իրենց անցյալով, շատ բարձրից էին նայում եկվորների վրա, որոնց համարում էին միշտ բարբարոսներ, ինչքան էլ որ սրանք բարեկարգված ու քաղաքակիրթ լինեին: Քաղաքական կացությունն ավելի տագնապալի էին դարձրել գահակալական այն կռիվները, որ այդ ժամանակ տիրում էին օստրոգոթների մեջ: Այնուամենայնիվ հաջողությունը հույների համար այնքան հեշտ չեղավ, ինչքան Աֆրիկայում: Պատերազմը տևեց մոտ 20 տարի: Բելիսարիոսը նվաճեց նախ Սիկիլիան, հետո մտավ Իտալիա և մինչև անգամ առաջացավ մինչև Հռոմ: Բայց գոթերը կազմակերպվեցին Իտալիայի զանազան կողմերը և նորից իրենց իշխանությունը ձեռք բերեցին: Բելիսարիոսի հաջորդ Ներսեսը կարողացավ վերջապես խորտակել նրանց ուժը և Իտալիան դարձրեց Արևելյան կայսրության նահանգ: Այսպես վերջացավ Օստրոգոթների կայսրությունը (553 թ.):

Օստրոգոթների անկման հետ գրեթե միաժամանակ հարված ստացան նաև վիսիգոթները Իսպանիայում: Սրանց տիրապետությունն էլ Իսպանիայում ճիշտ այն կացությունն ուներ, ինչ որ օստրոգոթների պետությունը Իտալիայում: Վիսիգոթներն էլ թեև ընդունել էին հռոմեական կարգերը, բայց իբր արիոսական, չէին կարողացել միանալ տեղական ուղղափառ ժողովրդի հետ: Երբ իրենց մեջ սկսեցին գահակալական կռիվները, իսկույն հույների հարվածը հասավ և գրավեց Իսպանիայի հարավային մասը՝ Ջիբրալթարի նեղուցի հետ (552 թ.): Այսպիսով Արևելյան կայսրությունը Միջերկրականի ավազանին գրեթե ամբողջապես տեր դարձավ:

Արևմուտքի տիրապետությունից քիչ հետո, Արևելյան կայսրության հյուսիսային սահմանների վրա երևան եկան բուլղարները: Սրանք թուրքական վայրենի մի ցեղ էին, որոնք հոների ետևից Վոլգան անցնելով մի ժամանակ թափառական կյանք էին վարել Ռուսաստանի տափաստանների մեջ և հետո ավելի արևմուտք դիմելով, եկել հասել էին Դանուբի ափերը: Այստեղից շարունակ նրանք արշավում էին Պոլսի վրա: 559 թվականին սրանք, հոնական ու սլավական ցեղերի հետ դաշնակցելով, անցան սառած Դանուբի վրայից, արշավեցին Թրակիա և առաջացան մինչև Պոլսի պատերի տակ: Բելիսարիոսը գնաց նրանց դեմ և հազիվ կարողացավ նորից Դանուբի մյուս ափը քշել նրանց. և որպեսզի մի նոր արշավանքի առաջն առնեին, հույները ամբողջ Դանուբի երկարությամբ կառուցեցին 80 բերդ և ամրոցներ:

Հույների համար ամենադժվարն եղավ արևելյան պատերազմը, որի մասին կխոսենք ստորև:

81. ՀՈՒՅՆ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ԽՈՍՐՈՎ ՆՈՒՇԻՐՎԱՆ

Հույն-պարսկական այն սոսկալի և երկարատև պատերազմը, որ հավասարապես երկու կողմերին էլ թուլացնելով դուռ բաց արեց արաբական աշխարհակալության, իսկապես հին հռոմեական պատերազմների շարունակությունն է կազմում: Մազդակյան շարժումը զսպելուց հետո, արդեն Կավատն առաջին անգամ սկսել էր հարձակումը Հայաստանի կողմից և գրավել Կարինը, որ Հունահայաստանի մայրաքաղաքն էր (502 թ.): Շուտով ընկավ նաև Ամիդը՝ Միջագետքի այդ նշանավոր բերդաքաղաքը և սոսկալի կերպով պատժվեց. բյուրավոր բնակիչներ կոտորվեցին. Միջագետքը ավերակ դարձավ: Պարսիկները հոնական մի նոր արշավանքից նեղված, ստիպվեցին հաշտություն կնքել հույների հետ՝ նախկին սահմանները պահելով (506 թ.):

Երկրորդ անգամ սկսվեց կռիվը Հուստինիանոսի ժամանակ:

Պատերազմների պատճառ եղան լազերը. նրանք Կողքիսում բնակվող փոքր ժողովուրդ էին, որոնք նախապես պարսիկներին հպատակ և զրադաշտական էին, բայց այս ժամանակ լազերի թագավոր Ծատը Պոլիս գնաց, ամուսնացավ մի իշխանուհու հետ և

ընդունելով քրիստոնեությունը, Հուստինիանոս կայսեր պաշտ-պանության տակ մտավ: Պարսիկները զենքով դուրս եկան պաշտպանելու իրենց նախկին հպատակներին. պատերազմն սկսվեց երկու պետությունների միջև. կռապաշտ արաբները ազատ գործելու հրաման ստացան պարսիկներից և մինչև Ասորիք առաջանալով անլուր խժդժություններ գործեցին. մի քանի անգամ Բելեսարիոսը հաղթեց, բայց իր զինվորների ապստամբության պատճառով մի սոսկալի պարտություն կրելով, քիչ մնաց որ կայսրությունը ահեղ վտանգի ենթարկվեր, երբ պարսիկների մեջ գահակալական կռիվ ծագելով, երկու կողմերն ստիպվեցին հաշտություն կնքել, այն պայմանով, որ լազերը նորից մնային պարսիկների ձեռքի տակ և հույները վճարեին պատերազմական տուգանքը:

Պարսիկների նոր թագավորն եղավ Խոսրով Նուշիրվանը, որի անունը Սասանյան պատմության մեջ փառավոր մի էջ է կազմում: Նա թշնամի չեղավ հույն քաղաքակրթութան. ընդհակառակը հավասարապես սիրող արևելյան և արևմտյան արվեստի, ջանաց Պարսկաստան մտցնել այդ երկու քաղաքակրթությունների գլուխգործոցները, թարգմանել տալով թե՛ հին հունական և թե՛ հնդկական փիլիսոփայական գործերը: Պարսկաստան հրավիրեց այն կռապաշտ հույն փիլիսոփաներին, որոնց Հուստինիանոսն արգելել էր ուսուցանել Աթենքում: Սրանից բացի, Նուշիրվանը ճարպիկ քաղաքականությամբ մտածեց հարվածել հունական պետությունը նույնիսկ իր մեջ, կրոնական հողի վրա:

Մենք գիտենք, որ Արևելքն այն ժամանակ բաժանվել էր երկու կրոնի և հետևաբար երկու քաղաքականություն կար. մեկը հունականն էր, որին հարել էին բոլոր քրիստոնյա ժողովուրդները, իսկ մյուսը զրադաշտական աշխարհը: Բայց հույներն էլ իրենց մեջ զանազան կրոնական բաժանումներ ստեղծել էին, որ քրիս-տոնեության ուժը ջլատում էին: Սրանցից առաջինն ու ամե-նանշանավորն եղել էր արիոսական վարդապետությունը, որ թեև 325 թվականին Նիկիայի տիեզերական ժողովում դատապարտվել էր, բայց շուտով տարածվել ու մեծ ծավալ էր գտել. բոլոր բարբարոսները, որոնք քրիստոնեությունն ընդունել էին, հետևում էին այս դավանանքին. այսպես ալանները, օստրոգոթները, վիսիգոթները, բուրգոնդները և վանդալները: Ինչպես տեսանք, արիոսական դավանանքն եղավ պատճառ, որ այս ազգերը

չկարողացան միանալ իրենց հպատակ ցեղերի հետ, որով որտեղ էլ հաստատվեցին, օտար և չսիրված մի տարր դարձան և շուտով կորցրին իրենց իշխանությունը:

Բայց այս ժողովուրդները բոլորն էլ Արևմուտքի մեջ էին և հետևաբար անմիջական դեր չունեին Արևելքում:

Արևելքում նշանավոր դեր կատարեցին նեստորական դավանանքը և «մի բնության» վարդապետությունը: Նեստորական դավանանքը, որ դատապարտվեց Եփեսոսի տիեզերական ժողովում 431 թվականին, ծավալվեց գլխավորապես Ասորիքում: Իսկ մի բնության վարդապետությունը, որ 451 թվականին մերժեցին Քաղկեդոնի ժողովում հավաքված արևմտյան հայրերը, տարածվեց ամբողջ Արևելքում: Այս վարդապետության հետևեցին հայերը, վրացիք, աղվանները, ասորիները, եգիպտացիք, ինչպես նաև հույների եկեղեցական հայրերից շատերը: Հայերը չմասնակցեցին 451 թվականի եկեղեցական ժողովին և հետո էլ նրա դավանած վարդապետության համամիտ չգտնվեցին: 506 և 508 թվականներին Բաբկեն կաթողիկոսը Դվինում գումարելով ընդհանուր հայ եկեղեցական ժողով, ուր ներկա էին նաև վրաց և աղվանից կաթողիկոսները, պաշտոնապես մերժեց Քաղկեդոնի ժողովը, որով հայ և հույն եկեղեցիները անջատվեցին միմյանցից: Հայ եկեղեցու թևարկության տակ մտան Արևելքի մյուս երեք քրիստոնյա ժողովուրդները, այն է վրացիք, աղվանները և ասորիները: Հույներն աշխատեցին գրչով և սրով տարածել իրենց դավանանքը և օգուտ քաղելով հայ ազգի անիշխան դրությունից, կարողացան 551 թվականին վրացիներին խլել ու բաժանել հայ եկեղեցուց. բայց չկարողացան անջատել ո՛չ աղվաններին և ո՛չ էլ ուղղափառ ասորիներին, որոնք հայ եկեղեցուն բարեկամ և հավատարիմ մնացին միշտ:

Նուշիրվանը տեսնելով քրիստոնեության մեջ ծագած այս պառակտումը, օգտագործեց այն քաղաքական շահերի համար, քանի որ արդեն փորձերը ցույց էին տվել, թե կարելի չէր ո՛չ սրով և ո՛չ խոսքով Արևելքի քրիստոնյաներին զրադաշտական դարձնել: Նուշիրվանը քաջալերեց թե՛ նեստորական դավանությունը և թե՛ միաբնակ վարդապետությունը: Ասորիքում հալածված բոլոր նեստորական ասորիները հրավիրվեցին Պարսկաստան և նրանք անցնելով Եփրատը, տարածվեցին Պարսկաստանի զանազան կողմերը, հաստատեցին առանձին պատրիարքական մի աթոռ

Պարսկաստանի մայրաքաղաք Տիզբոնում և մինչև անգամ քրիստոնեական առաքելություններ հիմնեցին հեռու տեղեր, Հնդկաստան, Չինաստան և Թաթարիստան: Այսպիսով Արևելքի քրիստոնեության կապը կտրվեց Արևմուտքի հետ, ուրիշ խոսքով հույն քաղաքականությունը մեծ հարված ստացավ Արևելքում:

Երբ հույներն զբաղվել էին Իտալիայի օստրոգոթների հետ, սրանց թագավորը գրգռեց Նուշիրվանին արշավելու հույների վրա: Նուշիրվանը, որին շահավետ չէր հույների պետության այդչափ զորանալը, իսկույն քանդեց խաղաղության դաշինքը և արշավեց Ասորիք, գրավեց Անտիոքը և ապա քայլեց Երուսաղեմի վրա: Բելիսարիոսը վազեց Արևելք. հույները պարտվեցին և Նուշիրվանը գնաց պաշարեց Եդեսիա քաղաքը: Բայց այստեղ զորեղ դիմադրության հանդիպելով, նորից ստիպվեց հաշտվել Հուստինիանոսի հետ, ստանալով պատերազմական մեծ տուգանք:

Մի քանի տարի հետո պատերազմը նորոգվեց: Նուշիրվանն ուզում էր Կողքիսի լազերին տեղահանելով ցրել Պարսկաստանի զանազան կողմերը, իսկ նրանց երկիրը պարսիկ գաղթականներով բնակեցնել: Լազերը դիմեցին Հուստինիանոսի օգնության. այս անգամ հույն բանակները հաղթեցին պարսիկներին և Նուշիրվանն ստիպվեց նորից հաշտվել հույների հետ՝ Լազիստանն ու ամբողջ Կողքիսը թողնելով հույներին և Պարսկաստանի քրիստոնյաներին խղճի ազատություն շնորհելով (562 թ.): Հուստինիանոսը բոլոր լազերին քրիստոնյա մկրտել տվեց և երկիրը հաստատապես իր իշխանության միացրեց:

Գրեթե նույն ժամանակ է ընկնում նաև աբխազների դարձը: Հույն-պարսկական կռիվների ժամանակ աբխազներն էլ ապստամբեցին և երկու անկախ թագավորություն հաստատեցին. Հուստինիանոսը նվաճեց նրանց և հիմք դրեց քրիստոնեության (551 թ.):

82. ՀԵՓԹԱՂՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոները Միջին Ասիայում բնակվող մի ցեղ էին: 4-րդ դարում սրանք մեծ արշավանքի ձեռնարկեցին: Արևմտյան կամ սև հոները, ինչպես գիտենք, Ուրալն ու Վոլգան անցան և Եվրոպա արշավելով, տեղի տվին բարբարոսների արշավանքին: Արևելյան հոները,

որոնք սպիտակ հոներ կամ հեփթաղ անունն էին կրում, Օքսոս գետի երկարությամբ տարածվեցին, Սասանյան պետության հետ կռվի բռնվեցին և նրա սպառնալիքը դարձան: Քաբուլում հաստատված քուշանների պետությունը կործանեցին 468 թվականին և այնպես որ քուշանները այլևս անհետացան պատմության բեմից. նրանց հայրենիքն անցավ հեփթաղներին և այնուհետև հեփթաղներն են, որ Պարսկաստանի թշնամիներն էին: Հեփթաղները քուշանների պետությունը կործանեցին և ապա արշավեցին Հնդկաստան: Այստեղ կուփթաների պետության հետ բախվեցին, նվաճեցին և նրանց թագավորության տեր դարձան: Սրանից հետո հեփթաղները Փենջաբի վրայով ամբողջ Կենտրոնական Հնդկաստանը ողողեցին և իրենց իշխանության տակ առան: 6-րդ դարի սկզբում հույների Միհիրագուլա թագավորը Հնդկաստանի գերիշխան տերն էր և իր աթոռը հաստատել էր Փենջաբի Սաքալա քաղաքում: Հեփթաղները կազմել էին ասիական մի մեծ պետություն, որ Պարսկաստանից մինչև Չինաստան էր տարածվում և որի մեկ մասը կազմում էր միայն Հնդկաստանը: Հերաթը և Բահլը այս պետության գլխավոր քաղաքներն էին: Քաշկարը, Յարքանդը, Խոթենը իրենց էին պատկանում: Կուփթաների թագավորը փորձեց ապստամբել հեփթաղների դեմ, բայց չարաչար հաղթվեց նրանց Թորաման թագավորից: Փանուկուփթա թագավորի մահով կուփթաների տիրապետությունը վերջացավ (510 թ.): Մնացին միայն մի քանի հնդկական իշխանություններ, որոնք հեփթաղներին հարկատու էին:

Հեփթաղները բուդդայական էին և աշխատեցին տարածել այս կրոնը Թիբեթում և Չինաստանում, որոնց հետ բանուկ հարաբերություն ունեին:

Հեփթաղների այս պետությունը գրեթե կես դար տևեց: Թուրքերը, որոնք Ասիայի ներսերը բնակվող բարբարոս մի ցեղ էին, դեպի Արևմուտք առաջացան և հեփթաղների հետ պատերազմի բռնվեցին: Հեփթաղներն ստիպված էին երկու կողմի վրա կռիվ մղելու, հյուսիսից թուրքերի և հարավից հնդիկների դեմ: Սրանց Յասոտհարմա թագավորը, իրեն հետ միացնելով հնդկական բոլոր փոքր իշխանությունները, հեփթաղների դեմ ելավ: 533 թվականին Մոզթանի մեջ հեփթաղները չարաչար պարտվեցին և գրեթե ոչնչացան: Յասոտարման հնդկական պետությունը վերականգնեց: Մյուս կողմից թուրքերը հեփթաղների հյուսիսային կողմի

հողերը խլեցին և Օքսոս գետի աջ ափը հաստատվեցին: Տագնապալի վայրկյանին անակնկալ կերպով մեջ մտավ պարսիկների Խոսրով Նուշիրվան թագավորը, որ մի անգամ ընդմիշտ ազատվելու համար ավազակ հեփթաղներից, որոնք իրենց ահարկու արշավանքներով Պարսկաստանի փորձանքն էին դարձել, դաշնակցեց թուրքերի նորակազմ զորավոր պետության հետ և ինքն էլ հարձակվելով հեփթաղների արևմտյան հողերի վրա, գրավեց Բակտրիան և մինչև Օքսոս գետի ձախ ափը առաջացավ (560 թ.): Հեփթաղներն ամեն բան կորցնելով անհետացան պատմությունից և հետո իբրև կրոնակից հնդկական ցեղերի հետ խառնվելով արագորեն ջնջվեցին: Բայց Յասոտհարմայից հետո Հնդկաստանն էլ չկարողացավ մեծ միություն կազմել և մնաց միշտ բազմաթիվ մանր իշխանությունների ձեռքը, որոնք միմյանց դեմ շարունակական կռվի մեջ էին մինչև իսլամական տիրապետությունը:

83. ԵՄԵՆԸ ԵՎ ՀԱԲԵՇԻՍՏԱՆԸ.

Թուրքերի առաջացումը դեպի Օքսոս և Խոսրովի հետ դաշնակցությունը, որ տեղի ունեցավ հույն-պարսկական պատերազմի վերջին տարիներին, մի այնպիսի մեծ փոփոխություն էր Արևելքում, որ պատմության ապագա ընթացքի համար շատ մեծ նշանակություն պիտի ունենար: Այսպիսով պարսիկների պետությունը հարևան դարձավ թուրքական խաքանության հետ, թուրքերն առաջին անգամ լինելով ծանոթացան Արևմուտքի հետ, և այդ օրվանից սկսեց այն սերտ հարաբերությունը պարսիկների և թուրքերի միջև, որ մինչև այսօր էլ շարունակվում է:

Գրեթե նույն ժամանակ ծագեց Եմենի հարցը. հաբեշները, որ Աֆրիկայի ներսում անկախ քրիստոնյա պետություն էին կազմում, Կարմիր ծովից անցնելով հարձակվեցին արաբների վրա և Եմենին տեր դարձան (525 թ.): Եմենի իշխանը չուզեց հպատակվել այս սևամորթներին և դիմելով պարսիկներին, խնդրեց որ օգնեն իրեն՝ ազատելու համար երկիրը օտար լծից: Խոսրովը մեծ նավատորմիղ չուներ այսպիսի հեռավոր ծովային աշխարհակալության ձեռնարկելու համար, բայց Արաբիայի հարուստ վաճառականությունը հույներից խլելու փափագից տարված, մանավանդ որ Հաբեշիստանը մի շատ թույլ պետություն էր, անկարող չափվելու

պարսիկների հետ, պատրաստեց մի փոքր նավատորմ, որ մտավ արաբական ջրերը, հաբեշներին հեշտությամբ երկրից դուրս վռնդեց և երկիրը պարսիկների պետության միացրեց (570 թ.):

Մի կողմից թուրքերի դաշնակցությունը և մյուս կողմից Եմենի տիրապետությունը հակառակ էին հույների շահերին, որովհետև զորացնում էին պարսից դիրքը Արևելքում: Այս պատճառով հույները նույնպես հարաբերության մեջ մտան խաքանի հետ և նրա հետ դաշնակցություն կնքեցին պարսիկների դեմ: Պարսիկները դժգոհությամբ տեսան, որ իրենց դաշնակիցը այժմ դարձել էր իրենց թշնամու բարեկամը և մի ավելի վտանգավոր թշնամի էր ստեղծվել իրենց համար: Նրանք աշխատեցին խանգարել այս բարեկամությունը, իսկ խաքանը երկու հակառակամարտ կողմերի մեջ զորացնում էր իր դիրքը: Այս ուժն էր, որ ավելի հետո Պարսկաստանից ներս պիտի խուժեր և ամբողջ Մերձավոր Արևելքը գրավելով, հույների կայսրության տեր պիտի դառնար:

84. ՀԱՅՈՑ ԵՐՐՈՐԴ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ. ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Նուշիրվանի ժամանակ պարսիկների քաղաքականությունը դարձյալ փոխվեց դեպի հայերը: Վստահելով այն հաջողությունների վրա, որ ունեցան նրանք արևելյան պատերազմների մեջ, նորից սկսեցին կրոնական հալածանքները. Դվին մայրաքաղաքում Նուշիրվանն սկսեց կառուցել մի մեծ ատրուշան. իրար հետևից Հայաստան ուղարկվեցին մի խումբ դաժանաբարո պարսիկ մարզպաններ, որոնց վերջինը՝ Սուրեն, անօրենության չափն անցկացրեց. չարչարում ու կեղեքում էր ժողովրդին, նախարարների կանանց հետ շնանում էր և վերջապես սպանեց Մանվել Մամիկոնյան նախարարին: Սրա վրա հայերն ապստամբեցին, Մանվելի եղբայր Վահան Մամիկոնյանը ապստամբության գլուխն անցավ և դիմելով հույների կայսեր ու նրանից օգնության խոստում ստանալով, միացավ մյուս նախարարների հետ, հարձակվեց պարսիկների վրա, Սուրենին սպանեց, զորքը ջարդեց, մոգերին կոտորեց և Հայաստանից դուրս քշեց: Հայոց օրինակին հետևեց նաև Վրաստանը: Այսպիսով երկու երկրները մտան հույների հովանավորության տակ և

հույն-պարսկական նոր պատերազմն սկսվեց: Նուշիրվանն ուղարկեց մի նոր բանակ, որ հայոց միաբան զորության առաջ ջարդվեց ու խորտակվեց: Միևնույն ժամանակ պատերազմը ծավալվեց Միջագետքում և պարսիկները մինչև Ասորիք առաջացան: Նուշիրվանն անձամբ մտավ Հայաստան. այս ժամանակ հայ նախարարների մեջ երկպառակություն ընկավ. Վարդանը չկարողացավ դեմ դնել պարսիկներին, ուստի գնաց Պոլիս և կայսրից օգնություն խնդրեց: Այդ միջոցին Խոսրովն ամբողջ Հայաստանը նվաճելով. Փոքր-Ասիա մտել և մինչև Կեսարիա առաջացել էր: Կայսրը զորք ուղարկեց Արևելք. հույները քշեցին պարսիկներին. Խոսրով այրելով Փոքր-Ասիան, քաշվեց իր երկիրը. հույները մտան Հայաստան, բայց երկար ժամանակ ապարդյուն կերպով կռվելուց հետո, ստիպվեցին հաշտվել պարսիկների հետ նախկին պայմաններով և Հայաստանն ու Վրաստանը մնացին պարսիկների ձեռքում: Նուշիրվանը հայոց վրա նշանակեց նոր պարսիկ մի մարզպան, պատվիրելով որ ժողովրդի հետ քաղցրությամբ վարվի (578 թ.): Իրենից հետո նստում են հայ մարզպաններ և հայերը խաղաղ ապրում են մինչև պարսկական տիրապետության վերջը:

85. ԼՈՆԳՈԲԱՐԴԱՑԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՊԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հուստինիանոսի մահից հետո Արևելյան կայսրության փառքը հետզհետե ավելի է ընկնում: Նախ կորչում է Իտալիան: Ներսես զորավարը իրեն դեմ եղած մի անարգանքի ի վրեժ, հրավիրում է լոմբարդացիներին՝ գալ Իտալիան գրավելու: Սրանք գերմանական բարբարոս մի ցեղ էին, որ բնակվում էին Միջին Դանուբի հովտում՝ Պաննոնիայում: Ներսեսի հրավերի վրա, դուրս գալով իրենց հայրենիքից, արշավեցին Իտալիա, ջարդեցին բյուզանդական բանակը և հիմնեցին Հյուսիսային Իտալիայում մի նոր թագավորություն, որի մայրաքաղաքն եղավ Պավիան (568 թ.): Հռոմը և նրա շրջակա վայրերը դեռ մնում էին հույների ձեռքում: Լոնգոբարդացիք ավելի առաջ անցան, Իտալիայի զանազան մասերում կազմեցին 30-ի չափ մանր իշխանություններ և ձգտում էին ամբողջ երկրին տեր դառնալու:

Լոնգոբարդացիների արշավանքը և նրանց տիրապետություն-

ները տարօրինակ մի դրություն ստեղծեցին Իտալիայում, երկրի զանազան կողմերը ցրվել էին կայսերական շատ կալվածներ, որոնք դեռ հպատակ չէին լոնգոբարդացիներին. բայց նրանք չէին կարող միանալ ո՛չ միմյանց և ո՛չ էլ կենտրոնական կառավարության հետ կապ պահպանել, քանի որ լոնգոբարդական այլևայլ իշխանություններով անջատված էին միմյանցից: Այս պատճառով յուրաքանչյուրն ստիպված էր ուրույն կառավարություն դառնալ: Բայց ընդհանուր միության և հաղորդակցության կարիքը պահանջում էր ստեղծել հասարակաց իշխանություն, որ բոլորի միջնորդը դառնար:

Բնական կացությունից բխած այս դերը իր վրա առավ եկեղեցական իշխանությունը, որի կենտրոնը Հռոմի պապն էր: Պապերը գիտակից էին իրենց այս դերին և աշխատեցին շահագործել այն: Հռոմեական մեծ պետության անկումից հետո պապերը մնալով միշտ Հռոմում, իրենք իրենց մի տեսակ տերն էին համարում Հռոմի: Թեև Հռոմն ընկած, բայց Իտալիայի բոլոր ժողովուրդների մեջ կենդանի էր միշտ նրա հմայքը, որ այժմ բնականաբար պապերուն վրա պիտի անդրադառնար: Բացի այդ, պապերը հնարել էին մի նոր փաստաբանություն, որով իրենց Քրիստոսի փոխանորդն էին համարում և մյուս բոլոր պատրիարքությունների գլուխը: Ահա այսպես ստեղծվեց Հռոմի պապերի եկեղեցական ու քաղաքական իշխանությունը, որի գլխավոր հիմնադիրն եղավ Գրիգոր Մեծ պապը (590-604 թթ.):

Երբ լոմբարդացիների արշավանքի պատճառով Հռոմի դրությունը վտանգվել էր, քաղաքին հաց և ջուր մատակարարելու, պարիսպները նորոգելու և պաշտպանելու, տուրքերը գանձելու և զինվորների թոշակը վճարելու,վերջապես արտաքին հարաբերությունները պահպանելու պետքը կար, Գրիգոր պապն էր, որ այս բոլոր գործերն իր վրա առավ և կատարեց պապական եկեղեցու դրամական միջոցներով:

Նույն պապն եղավ դարձյալ, որ ձեռք զարնելով կրոնական քարոզչության, ուղղափառ դավանության դարձրեց արիոսական վիսիգոթներին, որով Իսպանիան սերտորեն միացավ Պապի աթոռին, արիոսական լոնգոբարդացիներին, որով Իտալիայի բոլոր ժողովուրդների վրա իր իշխանությունը տարածվեց և վերջապես հեռավոր բրիտանացիներին, որոնց քարոզիչն եղավ Օգոստինոսը: Այստեղ 453 թվականից կազմվել էին սաքսոնական 4 թագա-

վորությունները. 547 թվականին արշավեցին նաև սաքսոնների ցեղակից անգլերը և հիմնեցին ևս 3 թագավորություն, որոնք միանալով նախորդների հետ, կազմեցին անգլո-սաքսոնական յոթնպետությունը (584 թ.):

Բրիտանիայի դարձով ամբողջ Արևմտյան Եվրոպան մտավ պապի կրոնական գերիշխանության տակ:

86. ԽՈՍՐՈՎ Բ ԵՎ ՀԵՐԱԿԼ

Իտալիայի կորուստն այնքան խոշոր նշանակություն չուներ Արևելյան կայսրության համար, որչափ ավարների արշավանքը, որոնք իրար հետևից շարունակ արշավում էին Պոլսի վրա և մեծամեծ ավարներով ու փրկանքով միայն ետ էին դառնում: Մյուս կողմից պարսիկներն սպառնում էին Արևելքից և արդեն Ասորիք էին մտել: Այս վտանգավոր կացության մեջ ստեղծվեց մի հաջող ռոպե հայազգի Մորիկ կայսեր ժամանակ: Վահրամ Չոբինի սոսկալի ապստամբության ժամանակ, պարսիկների Խոսրով Բ թագավորը գահից զրկվելով, կայսեր օգնությունը խնդրեց: Կայսրը զորավոր մի բանակ հանձնեց հայ իշխաններին, որոնք մտան Պարսկաստան, ապստամբությունը ճնշեցին և Խոսրովին նորից իր գահի վրա բազմեցրին: Խոսրովն ի նշան շնորհակալության, Մորիկին հանձնեց Հայաստանի հարավային մասը և նրա հետ բարեկամական դաշինք կապեց: Իսկ իր օգնական հայ իշխաններին էլ վարձատրելով, նրան ամենաանվանիին՝ Սմբատ Բագրատունի Բազմահաղթին պարսկական բանակի ընդհանուր սպարապետ և Հայաստանի ու Վրկանաց աշխարհի (Գիլանի) մարզպան նշանակեց:

Բայց շուտով այս բարեկամությունը դեպի չարը դարձավ: Զինվորական մի ապստամբության ընթացքում Մորիկ կայսրն սպանվելով, Խոսրովը ահարկու բանակով դուրս եկավ հույների դեմ, իր բարեկամի մահվան վրեժը լուծելու: Նա գրավեց Ասորիքը, Պաղեստինը իր Երուսաղեմ մայրաքաղաքով, և պատրիարքի հետ Քրիստոսի Ս. Խաչը գերի տարավ. ամբողջ քրիստոնյա աշխարհը սարսափով լսեց այս գույժը. Խոսրովն այնուհետև նվաճեց Եգիպտոսը, հետո դաձավ Փոքր-Ասիա և հասնելով Քաղկեդոն, նստեց Պոլսի դիմացը: Մյուս կողմից բարբարոս ավարները Դանուբն անցնելով արշավել էին հարավ և մինչև Պոլսի դռները

հասնելով, նրա արվարձաններն էին կողոպտում: Տերությունը կործանվել էր և մնում էր միայն մայրաքաղաքը: Արդեն Հերակլ կայսրը որոշել էր փախչել Կարկեդոն:

Այս վտանգավոր կացության մեջ պետության փրկիչ հանդիսացավ Պոլսի Սերգիոս պատրիարքը, որ ամբողջ վանքերի և եկեղեցիների հարստությունը ի սպաս դնելով կայսեր, հորդորեց նրան նոր արշավանքի պատրաստություն տեսնել: Հերակլը թողնելով Պոլիսը «Աստուծո, Ս. Կույսի և Սերգիոսի» պաշտպանության, մտավ Փոքր Ասիա և Կիլիկիայում մեծ հաղթություն տարավ պարսիկների դեմ: Հետո գնաց Պոնտոս և Տրապիզոնի մոտ տարավ երկրորդ մեծ հաղթանակը: Այնուհետև դաշնակցելով կովկասյան ազգերի հետ և ավազակ խազարներին Պարսկաստան արձակելով, մտավ Հայաստան: Հայերը սիրով ընդունեցին նրան և նոր օժանդակ զորքով նրա բանակը ստվարացրին: Հերակլը արշավեց Մարաստան, առավ ու կործանեց Ուրմիա քաղաքը, որ Զրադաշտի հայրենիքն էր համարվում:

Իրենց ետևում կատարված այս սարսափելի պարտությունների լուրն առնելով Խոսրովը շփոթվեց. իսկույն նա միացավ ավարների հետ, բայց նավատորմիղ չունենալով, չկարողացավ կարևոր օգնություն հասցնել. ավարները Պոլսի առաջ նոր պարտություն կրելով ետ փախան: Հերակլը Մարաստանից մտավ Ասորեստան և մինչև Տիզբոն՝ պարսիկների մայրաքաղաքը հասավ: Այն ժամանակ պարսիկները, որ արդեն զզվել էին Խոսրովի բռնակալ վարմունքից, քրիստոնյաների հետ միացած, ապստամբեցին իրենց թագավորի դեմ, սպանեցին նրան և հաշտություն խնդրելով Հերակլից, քաշվեցին նախկին սահմանները (628 թ.):

87. ՄՈՒՀԱՄՄԵԴ. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Եգիպտոսի և Պարսկաստանի միջև փռված ընդարձակ անապատային երկիր է Արաբիան, ուր բնակվում էին միմյանց թշնամի բազմաթիվ արաբական կիսավայրենի ցեղեր: Այն մեծ աշխարհակալները, որ անցան Արևելքի վրայով, չկարողացան բոլորովին տիրապետել նրանց, երկրի անմատչելիության պատճառով, այնպես որ արաբները մնացին միշտ կիսանկախ դրության մեջ:

7-րդ դարի սկզբում երևան եկավ նրանց մեջ կրոնական ու

քաղաքական մի նոր գործիչ՝ Մուհամմեդը: Սա աղքատ ընտանիքի զավակ, նախապես հասարակ ուղտապան, հետո վաճառական, շատ անգամ ճամփորդելով դեպի Պաղեստին և Ասորիք, առիթ էր ունեցել ծանոթանալու հնդկական կրոնին, քրիստոնեության և նրա զանազան աղանդներին: Ազդվելով այս կրոններից նա մտածեց իր հայրենակիցներին էլ, որոնք կռապաշտ էին, միաստվածության դարձնել: Նա քաղեց այս բոլորից ինչ որ ավելի բնական ու հարմար էր գտնում արաբական բարքերին, հորինեց մի նոր կրոն Իսլամ անվամբ, որ ամփոփեց Ղուրանում և սկսեց քարոզել իրեն շրջապատողներին (611 թ.): Նրա առաջին հետևորդները չափազանց քիչ էին, բայց շուտով նրանց թիվն ավելացավ: Մուհամմեդն ապաստանելով Մեդինե քաղաքը, արշավեց Մեքքայի վրա, որ կռապաշտության կենտրոնն էր, գրավեց և կուռքերը կործանեց: Մեքքայի գրավումը մեծ նշանակություն ունեցավ նոր կրոնի քարոզչության համար: Մի քանի տարվա ընթացքում Արաբիայի մեծ մասն արդեն Մուհամմեդի ձեռքի տակ նվաճվել և նոր կրոնին հպատակվել էր:

Բաժան-բաժան եղած արաբ ցեղերը կրոնի միությամբ կազմեցին մի ամբողջություն և մարգարեի պատվերի համաձայն դուրս եկան աշխարհներ նվաճելու (632 թ.): Ժամանակը չափազանց բարեպատեհ էր. հույներն ու պարսիկները միմյանց ջարդելով երկուսն էլ լքվել ու հոգնել էին. քրիստոնեության մեջ երկպառակություն էր տիրում. արաբների նոր ու թարմ ուժերի դեմ դնելու համար ոչ ոք չկար. ուստի կարծվածից էլ ավելի արագ կատարվեցին նվաճումները:

Արաբները բաժանվեցին երեք խմբի. առաջին խումբը քայլեց Արաբիայի ներսերը, դեռ չհպատակված ցեղերը նվաճելու. երկրորդը արշավեց դեպի Ասորիք և երրորդը դեպի Պարսկաստան: Վեց տարի տևեց Ասորիքի նվաճումը, Հերակլ կայսեր ուղարկած բանակները ջարդուփշուր եղան: Դամասկոսը և Երուսաղեմը գրավվեցին, և Ասորիքն ու Պաղեստինը մտան արաբական իշխանության տակ (638 թ.): Երկար չտևեց Պարսկաստանի նվաճումը. արաբները գրավեցին Տիզբոնը, Նեհավենտի դաշտում (Եկբատանի հարավը) ջարդեցին պարսիկների վերջին թագավոր Հազկերտի բանակը (642 թ.), որ փախավ մինչև Չինաստան՝ օգնություն խնդրելու: Արաբները տիրեցին Պարսկաստանին և իսկույն սկսեցին քարոզել մահմեդական կրոնը. զրադաշտական

կրոնը տեղի տվեց. պարսիկներն ընդունեցին իսլամը և այնպիսի մոլեռանդությամբ, որ իրենք իրենց ձեռքով ոչնչացրին հին պարսկական կրոնի գրականության մնացորդները, այրեցին բոլոր պահլավերեն գրքերը, իրենց գրերն անգամ թողին և ընդունեցին արաբական գրերը: Զրադաշտական կրոնին հավատարիմ մի փոքր խումբ միայն ավելի լավ համարեց թողնել երկիրը, քան թողնել կրոնը և Պարսից ծոցի եզերքով երկար թափառելուց հետո, Գուզարադի հնդիկ իշխանից հրավեր ստացավ այդ երկիրը գաղթելու. զրադաշտականներն անցան Հնդկաստան և այնտեղ պահում են իրենց գոյությունը մինչև այսօր: Դրանք կոչվում են փարսի կամ գեբր և թվով շուրջ 60 000 են:

Պարսկաստանից ավելի արագ եղավ Եգիպտոսի նվաճումը. միաբնակ քրիստոնյաները և դպտիները, որոնք երկաբնակ հույներից շարունակ հալածված, միջոց էին փնտրում ազատվելու նրանց զզվելի լուծից, իսկույն անցան թշնամու կողմը և Եգիպտոսը առանց կռվի գրավվեց (640 թ.):

Այս երկրների նվաճումից հետո կարգը եկավ Հայաստանին, և հետո Վրաստանին, որոնք այն ժամանակ ամբողջապես հույների իշխանության տակ էին գտնվում: Արաբները Հայաստանի նվաճման համար 50 տարի մոտավորապես կռիվ մղեցին հույների և հայերի դեմ: Առաջին արաբական բանակը ոտք դրեց Հայաստան 640 թվականին Ասորեստանի վրայով և առանց արգելքի մինչև Տարոն առաջացավ: Այստեղ նրանց դեմ դուրս եկավ Տարոնի իշխան Տիրան Մամիկոնյանը, որ ընդամենը 8 000 կռվող ուներ 18 000 արաբների դեմ: Մամիկոնյաններին հատուկ քաջությամբ այս փոքրաթիվ բանակը կռվեց ու ջարդվեց և նրանց դիակների վրայից արաբներն առաջ արշավելով, հասան մինչև Դվին մայրաքաղաքը, որ գրավեցին և գերիների ահագին բանակով վերադարձան:

Արաբների հետ քաշվելուց հետո հույները նորից եկան և իրենց կորած իշխանության տեր դարձան. արաբներն ստիպվեցին երկու նոր արշավանքի ձեռնարկել և մեծ անգթություններ գործելով տիրեցին Հայաստանին, ժողովրդի վրա ծանր հարկեր դրին և հետ դարձան: Այս հարկերին չդիմանալով հայերը թոթափեցին արաբական լուծը և նորից հնազանդվեցին հույներին: Արաբները պատրաստվեցին ավելի մեծ արշավանք կատարելու, բայց իրենց միջև քաղաքացիական պատերազմ ծագելով արշավանքը հետաձգվեց:

88. ԴԱՄԱՍԿՈՍԻ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արաբների մեջ իշխանության համար ժառանգական օրենք չգտնվելով, երբ Օսման ամիրապետը մեռավ, նրան հաջորդ ընտրելու համար արաբները երկուսի բաժանվեցին, մի մասը պահանջում էր, որ Մուհամմեդի փեսան Ալին լինի ամիրապետ, մյուսները Մուավիեի կողմն էին, որ Ասորիքի կառավարիչն էր: Հինգ տարվա արյունահեղ կռիվներից հետո, վերջապես հաղթեց Մուավիեն: Ալի ամիրապետին և նրա որդուն Հասանին սպանեց և հիմնեց մի նոր ամիրապետություն, որ իր անվամբ կոչվեց Ումեյան (661 թ.):

Քաղաքական բաժանումը մահմեդականության մեջ առաջ բերավ կրոնական երկու մեծ հերձված, որ մինչև ներկայումս էլ շարունակվում է. առաջինը կոչվում է **սուննի**, որոնք Մուավիեի հետևորդներն են և կրոնի մեջ ընդունում են Ղուրանի հետ նաև չորս ամիրապետների ժամանակ գրված ավանդությունները, իսկ երկրորդը կոչվում է **շիա**, որոնք Ալիի հետևորդներն են և մերժում են ավանդությունները, իբր սրբազան գիրք ընդունելով միայն Ղուրանը:

Ումեյան խալիֆաները թողին Մեքքան և իբր մայրաքաղաք ընտրեցին Դամասկոսը Ասորիքում: Արաբական նախկին պարզ բարքերը փոխվեցին և կազմակերպվեց ասիական հին միապետական ոճով բռնակալ մի պետություն: Աշխարհակալական պատերազմները, որոնք ներքին կռիվների պատճառով մի ժամանակ կանգ էին առել, նորից սկսեցին: Այս անգամ արաբները իրենց գլխավոր ուշադրությունը դարձրին հույների կայսրության վրա, որի շատ նահանգներ դեռ չէին նվաճվել: Հայերը լսելով արաբների նոր պատրաստությունը, մանավանդ որ իրենք էլ զզվել էին հույների կրոնական վեճերից ու ոտնձգություններից, կամովին ընդունեցին հպատակությունը: Արաբները Հայաստանի կառավարությունը հանձնեցին մի հայ նախարարի:

(**Թեոդորոս Ռշտունի**, մանրամասն տե՛ս և ա՛ռ Արմֆանի Գիտական ժողովածու, 1941 թ., էջ 60-90 և այլն):

672 թվականին արաբները արշավեցին Պոլսի վրա. մի ասորի հնարել էր մի տեսակ նոր նյութ, որ ջրի մեջ էլ վառվելու հատկություն ուներ. այս նյութը, որ ծանոթ է պատմության մեջ

հունական հուր անվամբ, փրկեց Արևելյան կայսրությունը. հույները նրանով էին վառում իրենց մոտեցող թշնամի նավերը: Արաբները յոթը տարի պաշարեցին Պոլիսը, բայց չկարողացան գրավել և հետ քաշվեցին:

Աֆրիկայի բնիկները հույների ծանր հարկերից նեղված, հրավեր կարդացին արաբներին՝ գալ տիրել իրենց երկրներին: Արաբները արշավեցին Աֆրիկա և մինչև Օվկիանոսը տիրեցին: Հույները մի նոր փորձ կատարեցին Հայաստանն ազատելու արաբների ձեռքից, բայց այս փորձն էլ զուր անցավ. արաբները դուրս քշեցին հունական զորքը Հայաստանից և վերջնականապես տիրեցին երկրին (693 թ.): Այստեղից անցավ Կովկաս և Վրաստանին ու Աղվանքին տիրելով մինչև Կովկասյան լեռնաշղթան հասան: Արևելքում արշավեցին Թուրքեստան, Աֆղանստան, Բելուջիստան, Հնդկաստան և Կասպից ու Արալի ծովերից մինչև Ինդոս գետը տարածված ընդարձակ երկրներին տեր դարձան: Այստեղից իրենց աչքը դարձրին դեպի Չինաստան: Հնդկաստանը դիմելով չինացիներին, արաբների դեմ կռվելու համար օգնական զորք ուզեց. արաբները խորտակեցին այս բանակը, բայց այնուամենայնիվ Չինաստան մտան և նրա հետ բարեկամական հարաբերություն պահեցին:

Կրետե կղզուն տիրելուց հետո, արաբները Մավրիտանիայի վրայով մտան Իսպանիա և Վիսիգոթների թագավորության վերջ տալով, տիրեցին գրեթե ամբողջ երկրին (711 թ.):

Արաբները երկրորդ և ավելի ահավոր մի արշավանք փորձեցին Պոլսի վրա. անցան Փոքր Ասիան և Հելլեսպոնտոսի նեղուցը և 1800 նավերի տորմիղով Պոլիսը ծովից ու ցամաքից պաշարեցին (717 թ.): Այս սոսկալի պաշարումը տևեց մի տարի. Լևոն Իսավրացի կայսրը քաջությամբ պաշտպանեց քաղաքը. հունական հուրը վառեց արաբական նավատորմը. քաղաքի բուլղարները օգնության հասնելով, 22 000 արաբ ջարդեցին Պոլսի պատերի տակ, արաբները սոսկալի կորուստներով հետ դարձան ու թեև ուրիշ շատ անգամներ հարձակվեցին Փոքր Ասիայի վրա, բայց այլևս բնավ Պոլիս արշավելու համարձակությունը չունեցան:

Այսպես արաբները հասան այնպիսի մեծ ծավալի, որին ո՛չ մի հին աշխարհակալ չէր հասել աշխարհի սկզբից ի վեր. Ինդոս գետից սկսած մինչև Պիրենյան լեռները արաբական իշխանության տակ էին. Ասիայի և Աֆրիկայի մեջ չկար այլևս մի ազգ կամ

տերություն, որ արաբական հարվածը ստացած չլիներ կամ համարձակվեր նրանց դեմ դուրս գալու: Կարգը եկել էր Եվրոպային:

Իսպանիային տիրելուց հետո, արաբները Պիրենյան լեռներն անցան և իրենց առաջ բացվեցին Գաղիայի ընդարձակ դաշտերը. իրենց ձիավորներն արդեն ասպատակում էին մինչև Լուար գետը, մինչև Գաղիայի կեսերը: Այստեղ դեմ դեմի ելան արաբներն ու ֆրանկները ու նրանց բախումից պիտի վճռվեր Եվրոպայի, հռոմեական քաղաքակրթության և քրիստոնեության ճակատագիրը:

89. ՖՐԱՆԿՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ. ՇԱՐԼ ՄԱՐԹԵԼ

Ֆրանկները գերմանական փոքր մի ցեղ էին, որ 406 թվականին սվևների հետ միասին Իտալիա արշավելուց և այնտեղից դուրս քշվելուց հետո, անցել էին Գաղիա, որի հյուսիսային կողմը մի փոքր նահանգում բնակություն էին հաստատել: Երկար ժամանակ նրանք այդ փոքր տարածության մեջ մնացին, առանց անկախ և զորավոր պետություն կազմելու: Գաղիայի մնացյալ մասերը այն ժամանակ երեք ավելի մեծ իշխանությունների էին պատկանում: Փարիզի շրջանում կար հռոմեական մի իշխանություն, այնտեղից հարավ, մինչև Պիրենյան լեռները, վիսիգոթների ձեռքումն էր, իսկ արևելյան լեռնային մասը բուրգոնդներին էր պատկանում:

Ֆրանկների մեջ նշանավոր եղավ Կլովիսը, որ աշխատեց կամաց-կամաց տիրել Գաղիայի մյուս մասերին: Նախ հաղթեց հռոմայեցիներին և Փարիզը գրավելով իրեն մայրաքաղաք դարձրեց (486 թ.). հետո հաղթեց վիսիգոթներին և նրանց Պիրենյան լեռների հյուսիսային անկյունը քշելով, երկրի մեծագույն մասին տեր դարձավ: Ալամանները, որ այն ժամանակ արշավում էին նրա վրա Գաղիան ձեռքից խլելու համար, հաղթվելով Հռենոսից այն կողմ քշվեցին, որով Գերմանիայի կեսը մտավ ֆրանկների իշխանության տակ: Այնուհետև Կլովիսը դարձավ քրիստոնյա, որով կաթոլիկ հոգևորականության էլ պաշտպանությունը շահեց:

Իրենից հետո տերությունը բաժանվեց իր չորս որդիների միջև, որոնցից յուրաքանչյուրը նոր աշխարհակալություններ մղելով, ֆրանկների պետությունը ավելի հեռուները տարածեցին և մինչև անգամ Իսպանիա և Իտալիա մտան:

Արյունահեղ ֆրանկների չորս թագավորությունների միջև

սկսվեց արյունալի մի կռիվ, որ տևեց 70 տարի. թագավորները միմյանց սպանելով, վերջապես մնաց միայն Կլոտերը, որի ձեռքի տակ միացավ ամբողջ Գաղիան: Նրա որդին Դակոբեռը (628 թ.) կազմեց զորավոր մի պետություն, որ արևմտյան Եվրոպայում ամենանշանավորը դարձավ. իրեն հարկատու կամ հպատակ եղան շրջակա բոլոր ժողովուրդները. Իտալիայի լոնգոբարդացիք, Իսպանիայի վիսիգոթները և մինչև իսկ Բյուզանդիայի կայսրերը նրա բարեկամությունն էին փնտրում:

Դակոբեռից հետո գալիս է ֆրանկ թագավորների մի շարք, որոնց գոյությունն անվանական էր միայն. սրանք իրենց ամբողջ իշխանությունը հանձնել էին պալատական մի իշխանի (maire), իսկ իրենք կերուխումի և զվարճության մեջ էին անցկացնում իրենց ժամանակը: Այս թագավորները կոչվում են դատարկապորտ թագավորներ (rois faineants): Սրանց ժամանակ ֆրանկների պետությունը շատ վտանգվեց. Արևելյան Եվրոպայից Գերմանիա խուժեցին բարբարոսների ուշ մնացած խմբերը, կռապաշտ սաքսոնները և սլավոնները. ֆրանկների հպատակ այլևայլ գավառներ ապստամբեցին և վերջապես հարավից բարձրացան արաբները, որոնք եկել էին քրիստոնեության հետ հռոմեական քաղաքակրթությունը ոչնչացնելու:

Ֆրանկների այս ժամանակվա մերն* էր Շարլ Մարթելը. այս կտրիճ մարդը դուրս եկավ կացությունը փրկելու. նվաճեց ապըստամբներին, բարբարոսներին սանձեց և գնաց արաբների դեմ: Պուատիեի դաշտում տեղի ունեցավ կռիվը. Շարլը հաղթեց և արաբներին Պիրենյաններից այն կողմ նետեց (732 թ.). Եվրոպան փրկվեց:

90. ՄԵԾ ՉԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ԹԱՅ-ՑՈՒՆ

Այն միջոցին, երբ հույներն ու պարսիկները կռվում էին Արևելքի տիրապետության համար, հեռավոր Արևելքում և նույնիսկ Պարսկաստանի սահմանների վրա կազմվում է Մեծ չինական կայսրությունը:

Շատ վաղուց չինացիներն ընդհարման մեջ էին թաթար և մոնղոլ վաչկատուն ցեղերի հետ: Դրանցից շատերն էլ խաղաղ ճանապարհով մտել էին Չինաստան և իրենց քաջությամբ զանազան

* մեր - քաղաքագլուխ (խմբ.):

պաշտոնների հասել: 4-րդ դարի վերջում Չինաստանի հյուսիսային մասերում պետության գլուխն են անցնում թաթարական ծագումով կայսրեր, որոնք շարունակում են կռիվն իրենց վաչկատուն ցեղակիցների հետ: Ավելի հետո հարաբերությունները բարեկամական են դառնում և չինացիք սկսում են վաճառականություն անել թաթարների հետ. նրանք հյուսիս ու արևմուտք առաջանալով, հասնում են մինչև Բայկալ լիճը և Սիբիրի Օբի գետը: Այս բոլորը սրում է չինացիների ախորժակը: 609 թվականին Յունկ-թի կայսրն անձամբ թուրքերի դեմ է արշավում, որոնք հրաժարվել էին հարկը վճարել և մինչև ույղուրների երկիրն է առաջանում ու չինացիների գերիշխանությունը վերահաստատում է Միջին Ասիայում: 7-րդ դարում Չինաստանի զանազան պետությունները միանալով մի ամբողջություն են կազմում. Թայ-ցուն նշանավոր կայսրը (627-649 թթ.) նվաճում է այդ բոլորին իր ձեռքի տակ և դուրս է գալիս աշխարհակալության: Նվաճում է Չինական Թուրքեստանը և վերածում 4 փոխարքայության. Քաշգարը ճանաչում է չինացիների կայսեր իշխանությունը: Չինացիների ազդեցությունը հասնում է մինչև Սոգդիանիա, Թոխարստան և Խորասան. նրա սահմանները արևմուտքից հասնում են Կասպից ծովը և կցում է Պարսկաստանին. հյուսիսից Ալթայան լեռները. հարավից անցնելով Տիբեթը, մտնում են Հնդկաստան և գրավում Նեպալը. իջնում է Ամման. հյուսիսից արշավում են Կորեա և այդ երկիրն էլ միացնում չինական պետության: Այսպես կազմվում է միահեծան մի կայսրություն, որ մինչև անգամ Արևմուտքի հետ հարաբերություն է սկսում:

Արաբների մարգարեն Մուհամմեդ Եմենից ուղարկված մի նավով դեսպաններ է ուղարկում Թայ-ցուն կայսեր և իր կրոնն առաջարկում նրան: Կայսրը սիրով է լսում քարոզիչներին և թույլ է տալիս նրանց հիմնելու Չինաստանում առաջին մզկիթը (628 թ.): Դրանից հետո ասորի նեստորական քարոզիչների միսիոներական մի խումբ է գալիս Չինաստան. Թայ-ցունը լսում է նրանց քարոզչությունը, հրամայում է չինարեն թարգմանել Ս. Գիրքը և գտնելով արժանավոր, թույլատրում է քարոզել Չինաստանում, ինչպես և հիմնել քրիստոնեական եկեղեցի (628 թ.): Վերջապես հույների Թեոդոս կայսրը լսելով այս բոլորը, ինքն էլ ուղարկում է մի դեսպան՝ բարեկամական կապեր հաստատելու համար:

Կայսեր այս վարմունքը ցույց էր տալիս, թե ինչքան նա հանդուրժող էր դեպի բոլոր կրոնները: Հասկանալի է, թե այսպիսի

մի անձ ինչքան ուշադիր պիտի լինի դեպի արվեստներն ու գրականությունը: Այդ շրջանին Չինաստանը հասնում է քաղաքակրթական մեծ աստիճանի. արվեստները, հատկապես նկարչությունը, մետաքսագործությունը, հախճապակի ստանալու արվեստը և այլն ծաղկում են. գրականությունը զարգանում է. ասում են, թե պալատական գրադարանում 54 000 հատոր գիրք է եղել այդ ժամանակ: Կայսրը պալատում հիմնում է ժողովրդական լսարան դասախոսությունների համար, որոնք ինքն էլ աշակերտում էր. հիմնում է դպրոց 10 000 աշակերտով, գրական ակադեմիա և զինվորական վարժարան, ուր զինվորներն էին մարզվելու: Նա գտնում է թեյը, որի գործածությունը տարածվում է շուտով բոլոր ասիական երկրներում: Չինաստանը խաղում է խոշոր դեր Արևելյան և Կենտրոնական Ասիայի վրա և չինական քաղաքակրթությունը տարածվում է այդ բոլոր երկրներում: Այդ ժամանակ է տեղի ունենում մի նշանավոր ճանապարհորդություն, որ գիտական մեծ նշանակություն ունի. չինացի աշխարհագրագետ Յուան-Չուանկը դուրս է գալիս իր երկրից (629 թ.) և 16 տարի շարունակ ման գալով Տիբեթ, Թուրքեստան, Աֆղանիստան, Հնդկաստան և Ցեյլոն, դառնում է Չինաստան, բերելով իր հետ հարյուրավոր գրքեր բուդդայական գրականության վերաբերյալ: Թագավորը հրամայում է թարգմանել դրանք սանսկրիտից չինարեն, միևնույն ժամանակ գրել այդ բոլոր երկրների աշխարհագրությունը:

Չինական այս մեծ պետությունը տևում է 9-րդ դարի վերջը և 10-րդ դարի հետ սկսում է քայքայվել և վերածվում է զանազան մասերի:

91. ՀԱՅԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ.

693 թվականից սկսած Հայաստանը պաշտոնապես արաբների հպատակության տակ ընկավ: Արաբները կառավարում էին երկիրը մահմեդական մի ընդհանուր կառավարիչով, որ մեր պատմության մեջ սովորաբար ոստիկան (ամիրա) է կոչվում: Սրա ռեզիդենցիան Դվինն էր: Նրա պարտականությունն էր նախ հարկերը հավաքելով ուղարկել ամիրապետի և երկրորդ՝ երկիրը հնազանդության մեջ պահել: Հարկահավաքությունը սովորաբար շատ խիստ էր. իսկ երկիրը հնազանդության մեջ պահելու համար արաբ ոստիկանները

հեշտ միջոց էին մտածել. զանազան պատճառներով սպանել նախարարներին կամ Հայաստանից վտարել. այսպիսով ժողովուրդն անգլուխ մնալով, չպիտի կարողանար ապստամբության դիմել:

Արաբական տիրապետությունը պարսկականից տարբերվում էր գլխավորապես նրանով, որ մինչդեռ պարսիկները նպատակ էին դրել հայերին զրադաշտականության դարձնել և սրա համար մի քանի անգամ ընդհանուր հալածանք հանեցին քրիստոնեության դեմ, ընդհակառակն արաբները այդպիսի խոշոր քայլերի չդիմեցին: Ճշմարիտ է, որ արաբները մահմեդական կրոնը սուրի ուժով տարածեցին ամեն կողմ, բայց այդ տեղի ունեցավ և հաջողվեց կռապաշտ ու կրակապաշտ երկրներում: Այսպես Պարսկաստանը, Աֆղանստանը, Բելուջիստանը, Հնդկաստանը, Թուրքեստանը, Կովկասի լեռնականները և Աֆրիկայի վայրենիներն ընդունեցին իսլամությունը և իսլամության հետ արաբական գրականությունն ու քաղաքակրթությունը: Իսկ քրիստոնյա երկրները շատ ավելի զերծ մնացին կրոնական հալածանքից. սրանց մեջ կրոնական հալածանքը կրում էր մասնակի բնույթ: Այս պատճառով Հայաստանն էլ կարողացավ պահել իր կրոնը, լեզուն և գրականությունը: Հայերը ո՛չ միայն չձուլվեցին արաբների հետ կամ մահմեդական չդարձան, այլև մի քանի անգամ ապստամբեցին նրանց լուծը թոթափելու համար, թեև իրենց բոլոր փորձերն էլ անհաջող անցան:

Առաջին ապստամբությունը տեղի ունեցավ նույնիսկ առաջին ոստիկանի (Աբդուլլայի) դեմ: Այս ապստամբության գլուխ կանգնեց Սմբատ Բագրատունի իշխանը, որ Դամասկոս գերի քշված նախարարներից մեկն էր: Գերությունից փախուստ տալով դիմեց հույներին և նրանցից զորք ստանալով եկավ Հայաստան: Վարդանակերտի նշանավոր ճակատամարտում արաբները չարաչար պարտվեցին և Աբդուլլան հազիվ կարողացավ փախչել: Արաբները նոր բանակ ուղարկեցին Հայաստան, բայց Սմբատը նույն հաջողությամբ ջարդեց այս բանակն էլ: Երրորդ անգամ ավելի ստվար բանակով եկան արաբները. այս անգամ կաթողիկոսը միջամտեց և երկու կողմերը հաշտեցրեց: Արաբներն իրենց վրեժը լուծելու համար խարդախությամբ հայոց ... իշխանները հավաքեցին Նախիջևանի եկեղեցում և այրեցին: Այնուհետև արշավեցին երկրի զանազան կողմերը և շատերին գերի բռնելով քշեցին Դամասկոս: Այս խժդժությունները տևեցին գրեթե 40 տարի, մինչև որ եկավ Մրվան ոստիկանը և հայոց

տառապանքին վերջ տվեց (742 թ.):

Այս ժամանակ Դամասկոսում գահակալական կռիվներ ծագեցին. Մրվանը Հայաստանի կառավարիչ նշանակեց մի հայ իշխանի և ինքը հայկական օգնական զորք առնելով Դամասկոս գնաց, խռովությունները դադարեցրեց և ինքը գահ բարձրացավ:

92. ԲԱՂԴԱԴԻ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սուննիների և շիաների մեծ հերձվածը (աղանդը) ահագին պառակտում առաջ բերեց արաբական պետության մեջ: Ալիի ժառանգորդները, որոնք Բաբելոնում իշխանական հարգված մի ցեղ էին կազմում, դեռ չէին մոռացել իրենց հասցված անարդարությունը: Նրանց գլխավորներից Աբբասը ապստամբեց Ումեյան խալիֆայության դեմ, Դամասկոսը գրավեց, ամիրապետին սպանեց, սուննիներից տասնյակ հազարավորներ չարաչար խժդժությամբ կոտորեց, մինչև անգամ հին ամիրապետների գերեզմանները բանալով, նրանց ոսկորները այրեց և վերջապես ինքը հիմնեց մի նոր խալիֆայություն, որ իր անունով կոչվում է Աբբասյան խալիֆայություն (750 թ.):

Նոր խալիֆայությունն իրեն մայրաքաղաք դարձրեց Բաղդադը, որ հիմնեցին արաբները Տիզբոնի ավերակների վրա: Ումեյաններից Աբդուռահմանը կարողացավ սակայն փախչել Աֆրիկա և այնտեղից անցնելով Իսպանիա, հիմնեց անկախ խալիֆայություն, որի մայրաքաղաքն եղավ Կորդովան (755 թ.): Այս բաժանումն առաջ բերեց նոր պառակտումներ Աֆրիկայում, ուր ձևացան մի շարք նոր խալիֆայություններ, որոնցից նշանավորներն եղան Մարոկկոյի և Թունիսի խալիֆայությունները: Այս բաժանումներով աբբասյան խալիֆայությունը զրկվեց իր Աֆրիկայի և Եվրոպայի տիրապետություններից և իր ձեռքում մնաց միայն Ասիան:

Աբբասյան խալիֆայության ժամանակ արաբական պետությունը հասավ պերճության և շքեղության գագաթնակետին: Արաբները նոր աշխարհակալություններից հրաժարվելով, հետամուտ եղան քաղաքակրթվելու և Արևելքի արվեստներն ու գիտությունները զարգացնելու: Բանաստեղծությունը, աստղաբաշխությունը, բժշկությունը, քիմիան և մաթեմատիկական գիտությունները նորանոր քայլեր առան. Բաղդադը դարձավ Պոլսի

մրցակիցը և աշխարհի ամենամեծ և ամենաանվանի քաղաքը: Աբբասյան խալիֆաներն իրենք էին քաջալերում այս արվեստները. նրանցից ամենանշանավորը՝ Հարուն-ալ-Ռաշիդը իր պալատը բանաստեղծների և գիտնականների կենտրոնավայրն էր դարձրել:

93. ՀԱՅՈՑ ՆՈՐ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Բաղդադի խալիֆաների և ամիրաների անբավ շռայլության և ծախսերի մատակարարությունը բնականաբար պիտի ծանրանար հպատակ երկրների, հատկապես քրիստոնյա երկրների վրա, որոնց թվում ամենակարևորը Հայաստանն էր: Այս պատճառով ահա հարկերը սոսկալի ծանրության հասան. ժողովուրդը և նախարարները չդիմանալով ընչաքաղց ոստիկանների հարստահարություններին, երեք նոր ապստամբություն բարձրացրին:

Առաջին ապստամության գլուխ անցան Մամիկոնյանները, բայց Բագրատունիները նրանց հակառակ գտնվեցին, ուստի կռիվը նախ իրենց միջև սկսեց և ապստամբությունը գլուխ չեկավ:

Երկրորդ անգամ հայերը ապստամբեցին Բեկիր ոստիկանի դեմ. նրա զորքերը ջարդեցին և երկրից դուրս վտարեցին. բայց Միջագետքի արաբները օգնության հասնելով, ապստամբությունն ընկճեցին:

Երրորդ ապստամբությունն ավելի ուժեղ եղավ. այս անգամ գլուխ կանգնեց Մուշեղ Մամիկոնյան իշխանը, որ Տարոնի վրա արշավող արաբներին ջարդելուց հետո, մինչև Դվին առաջացավ, գրավեց քաղաքը և ոստիկանին դուրս քշեց: Սրա վրա մյուս նախարարներն էլ սիրտ առան և ապստամբությունն ընդհանուր ծավալ գտավ (780 թ.): Արաբները մեծ բանակով վազեցին Հայաստան. հայոց 5 000 զորքը նրանց դեմ դուրս եկավ. բայց թշնամին վեց անգամ ավելի շատ էր. Մուշեղ Մամիկոնյանը քաջությամբ կռվեց նրանց դեմ և իր 3 000 քաջերի հետ ընկավ պատերազմում, մնացածները ցրվեցին և ամուր տեղերում ապաստանեցին: Արաբները արշավեցին երկրի զանազան կողմերը, շատերին կոտորեցին, շատերին գերի տարան Բաղդադ, մի քանի տարի շարունակ: Հայերն այս անհաջող փորձերից հուսալքվեցին և հպատակության ծանր լուծը անտրտունջ տարան մինչև 9-րդ դարի սկիզբը:

94. ՏԻԲԵԹՑԻՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Կենտրոնական Ասիայի բարձունքների վրա թառած ընդարձակ լեռնաշխարհ է Տիբեթը: Ժողովուրդը կիսավայրենի դրության մեջ էր: Հնդկաստանից եկած քարոզիչներ այստեղ էլ մտցրին բուդդայական կրոնը, որին ջերմեռանդ հետևորդ և պաշտպան եղան տիբեթցիք: Սակայն բուդդայականությունն այստեղ տարբեր կերպարանք ստացավ, որ կոչվում է լամայականություն: Այս աղանդն ընդունում է, թե Բուդդան մշտապես անձնավորվում է լամայի անձի մեջ: Իրենց մայրաքաղաքն եղավ Լհասսան, որտեղ նստում է դալայ-լաման՝ տիբեթցիների կրոնապետը: Չինացիք նվաճեցին այս երկիրը և կայսրության մի նահանգը դարձրին: Երբ Չինաստանը ներքին ապստամբություններով սկսեց թուլանալ, տիբեթցիք գլուխ բարձրացրին: 7-րդ դարի կեսից (648 թ.) Տիբեթի թագավորը՝ Սրոնգ-ցան-գամբո, որ ջերմեռանդ բուդդայական էր, արշավեց Հնդկաստան, հաղթեց Մագատայի թագավորին և նշանավոր սուրբ պատկերը, որ ներկայումս էլ իրենց մեծ սրբությունն է, բերավ Տիբեթ: Նույն ժամանակ մտել է նաև տիբեթցիների գիրը: Տիբեթցիներն արշավում են նաև չինացիների, արաբների, ինչպես նաև թուրքերի դեմ, որոնց հետ երբեմն էլ միանում են՝ միասին չինացիների դեմ կռվելու համար: 763 թվականին տիբեթցիք, Թի-սրոնգ--դե-ցան թագավորի առաջնորդությամբ, կազմում են 300 000-անոց մի բանակ, արշավում են Չինաստան և բազմաթիվ քաղաքներ գրավելուց հետո, մինչև մայրաքաղաքը՝ Սյու-նգան-ֆու առաջանում են, ավարի են տալիս և կայսերական պալատը այրելուց հետո, մեծ ավարով են վերադառնում: Չինացիները դաշնակցում են ույղուրների, հնդիկների և արաբների հետ՝ Տիբեթի դեմ դուրս գալու համար: Ույղուրները հարվածում են տիբեթցիներին, բայց սրանք Պեկինում (Բաշ-Բալիխ) հաղթում են ույղուրներին և Փոքր Բուխարան չինացիներից գրավում են: Վերջապես չինացիք և տիբեթցիք հաշտության դաշինք են կնքում և իրենց այս դաշինքը մարմարի վրա արձանագրելով Լհասսա մայրաքաղաքի մեծ տաճարի դռան վրա են կախում (783 թ.), ուր մնում է մինչև այսօր: Այս Թի-սրոնգ-դե-ցան թագավորն է, որ ճարպիկ մտածմունքն ունեցավ Տիբեթի արժեքը բարձրացնելու համար այն բուդդայական կենտրոն և համաշխարհային սրբավայր դարձնելու: Նա տեսավ,

որ բուդդայական կրոնը, թեև հնդկական կրոն, բայց Հնդկաստանում հետզհետե ընկնելու վրա է, տեղի տալով կա՛մ բրահմանականության և կամ նորածագ հնդկական կրոնին: Միայն Տիբեթն էր, որ այդ կրոնի հավատարիմ հետևորդն ու պաշտպանն էր: Ուստի ուժ տվավ լամայականության: Հետևանքն այն եղավ, որ երկիրը թեև հետո շատ բազմաթիվ փոքր պետությունների բաժանվեց, բայց լամայականությունը, ընդհակառակը, շահեց. դալայ-լաման մնաց և մնում է մինչև այսօր իբրև Տիբեթի թե՛ կրոնական և թե՛ քաղաքական պետը և կազմում է տիբեթցիների ազգային միության կապը:

95. ԿԱՐՈԼՈՍ ՄԵԾԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Իսպանիայի արաբներին հետ քշելուց հետո, ֆրանկների թագավորությունն ավելի ուժեղ և անվանի դարձավ. հարմար առիթը քաշեց նրանց Իտալիա:

Լոնգոբարդացիք ձգտելով ամբողջ Իտալիայի տիրապետության, բնականաբար ազատ չպիտի թողնեին Հռոմը: Պապը չցանկանալով իր աթոռը ձեռքից հանել, ստիպված էր դիմել արտաքին օգնության: Հույները շատ հեռու էին, վիսիգոթներն ընկճված. միակ գլխավոր պետությունը որ կար Իտալիայի սահմանի մոտ, ֆրանկներն էին, որոնց թագավորն էր այն ժամանակ Պեպին Կարճահասակը (Pepin le Bref): Պեպինն ընդունեց պապի խնդիրքը, արշավեց Իտալիա, ազատեց Հռոմը և Ռավեննայի նահանգը խլելով լոնգոբարդացիների ձեռքից, նվիրեց պապին: Այս օրից սկսեց պապի աշխարհական իշխանությունը (754 թ.):

Պեպինի հաջորդ Կարոլոս Մեծի օրով պատերազմը նորից բորբոքվեց ֆրանկների և լոնգոբարդացիների միջև. Կարոլոսը հաղթեց և լոնգոբարդացիների թագավորության վերջ տալով, նրանց երկիրն իր տերության միացրեց (774 թ.): Այսպիսով ֆրանկների ձեռքի տակ ընկան Գաղիան, Գերմանիան և Իտալիայի մեծ մասը:

Կարոլոսն արշավեց նաև Իսպանիա՝ սանձելու համար արաբներին. տիրեց երկրի հյուսիսային մասին, բայց շուտով տեսավ, որ այս օտար միջավայրում ինքը գործ չունի. բասկերը Պիրենյան լեռներում ջարդեցին նրա վերջապահ զորքը. և

Կարոլոսը թողնելով Իսպանիան ետ դարձավ: Այս անհաջողության վրա Կարոլոսի դեմ ապստամբեցին Գերմանիայի հյուսիսային կողմից սաքսերը և հարավային կողմից բավարացիք: Շատ դժվար եղավ ճնշել սաքսերի ապստամբությունը. քանի-քանի անգամ Կարոլոսն ստիպվեց արշավել նրանց վրա, բայց երբ հեռանում էր, նորից էին ապստամբում: Կարոլոսը վերջապես ընկճեց նրանց և որպեսզի նրանց կոպիտ բարքերը չափավորի և ապստամբության միտքը անհետացնի, բռնի քրիստոնյա դարձրեց նրանց: Ավելի հեշտ եղավ ճնշել բավարացիների ապստամբությունը, որով ճանապարհ բացվեց դեպի ավարների երկիրը: Սրանք այն ժամանակ բնակվում էին արդի Հունգարիայում և շարունակ ասպատակում էին դանուբյան սլավների երկրները և Բալկանյան թերակղզին: Կարոլոսն այնպիսի հարված հասցրեց ավարների թագավորության, որ այլևս նրանք չկարողացան ուշքի գալ: Կարոլոսը հարձակվեց նաև սերբերի և սլովենների վրա, խորտակեց նրանց էլ, բայց չկարողացավ գրավել Չեխիան:

Այս մեծ աշխարհակալություններից հետո պապը Հռոմում նրան պսակեց կայսր, համարելով նրան իբրև հին հռոմեական պետության հաջորդն ու շարունակողը (800 թ.):

Այսպես ֆրանկները կազմեցին մի մեծ կայսրություն, որի սահմաններն սկսելով Պիրենյան լեռներից, տարածվում էին մինչև Էլբա գետը և Բոհեմիայի լեռները, որտեղից Դանուբի ընթացքով հասնում էին մինչև Սավա գետը: Նրա մեջ մտնում էին, բացի Գաղիայից, արդի Բելգիան, Զվիցերիան, Իտալիան, Գերմանիան, Ավստրիան, մինչև Սերբիան: Նրա ընդարձակության և ուժին հազիվ էին հասնում բյուզանդական կայսրությունը և արաբական պետությունը: Աբբասյաններից Հարուն-ալ-Ռաշիդ խալիֆան փնտրեց նրա բարեկամությունը ընդդեմ Կորդովայի խալիֆայի, որ իր մրցակիցն ու թշնամին էր: Կարոլոսն էլ վախենալով սրանից, քաջալերեց ու պաշտպանեց Իսպանիայի հյուսիսային անկյունում ապաստանած վիսիգոթներին, որոնցից կազմեց մի առանձին իշխանություն՝ իբրև ընդդիմադիր ուժ Կորդովայի խալիֆայության:

96. ԿԱՐՈԼՈՍԻ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ո՛չ կրոնական կապը և ո՛չ միապետական ուժը չկարողացան իսկական միություն հաստատել այն բոլոր ցեղերի մեջ, որոնք կազմում էին Կարոլոս Մեծի կայսրությունը: Ցեղերը խմբվել էին ըստ լեզուների և արդեն անջատ ազգություններ էին կազմում: Կարոլոսի մահից անմիջապես հետո արդեն սկսեց բաժանումը: Կայսրության ժառանգորդ երեք եղբայրներ, յուրաքանչյուրը մի ժողովրդի գլուխը կանգնելով, պատերազմ բացին միմյանց դեմ, որ վերջացավ Վերդյոնի դաշնադրությամբ (843): Այս դաշնադրությամբ կայսրությունը բաժանվեց երեք պետությունների. Իտալիան (որի մեջ էր նաև Պրովանսը, Բուրգունդիան և Լոթարինգիան), Ֆրանսան և Գերմանիան Հռենոսից արևելք): Այսքանը բավական չէր. քիչ հետո այս երեքից բաժանվելով կազմվեցին Արմորիկի Բրըտոնների, Նավարրայի Գասկոնների, Պրովանսի, Բուրգունդիայի և Լոթարինգիայի անկախ թագավորությունները: Այսպիսով կազմվեց 8 պետություն:

Ֆրանսիայի թագավորները մի քանի անգամ փորձեցին նորից միացնել այս բոլորը և վերականգնել Կարոլոսի կայսրությունը, բայց հաջողությունը վաղանցուկ եղավ և 887 թվականին Տրիբուրի (Tribur) դաշնադրությամբ վերջնականապես բաժանվեցին երեքի:

Ազգերի անկախության հետ աճեցին նաև պապական եկեղեցու ձգտումները: Կարոլոս Մեծի ժամանակ եկեղեցական իշխանությունը թեև շատ պատվավոր դիրքի մեջ էր, վայելում էր նրա ամբողջ օժանդակությունը և ինքն էլ ծառայում էր իբրև միջոց միապետությունը զանազան ցեղերի մեջ տարածելու, բայց այնուամենայնիվ քաղաքական իշխանության ենթարկված ուժ էր: Պապն ուզում էր ինքնագլուխ լինել, իր վճիռները լինելու էին անդառնալի և ինքը ճանաչվելու էր որպես պետը բոլոր քրիստոնեական եկեղեցիների: Այս նպատակով նա սկսեց խառնվել նաև Պոլսի պատրիարքական աթոռի գործերին. բայց հույները չխաբվեցին. 867 թվականին Պոլսի Փոտ պատրիարքը եկեղեցական ժողով գումարեց և նզովեց պապին: Այսպիսով արևելյան և արևմտյան եկեղեցիները միմյանցից բաժանվեցին:

97. ԲՈՒՂԱՅԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Կարոլոս Մեծի կայսրության քայքայման հետ գրեթե միաժամանակ սկսվում է արաբական պետության քայքայումը. սրա պատճառներն էին նախ պետության ընդարձակածավալ տարածությունը, որ անհնար էր մի ձեռքի տակ կառավարել, երկրորդ՝ արաբ իշխանների և ամիրապետների մեղկությունը, որ դիզված անբավ հարստության հետևանքն էր, երրորդ՝ կրոնական բազմաթիվ հերձվածները, որոնք ձևացան մահմեդականության մեջ, չորրորդ՝ պետությունը կազմող ցեղերի և ժողովուրդների բազմազանությունը և հինգերորդ՝ յուրաքանչյուր երկրի վրա նշանակված էմիրների անջատական ձգտումները: Ապստամբության ընդհանուր ոգին սկսում է տիրել արաբական պետության ո՛չ միայն քրիստոնյա, այլև մանավանդ մահմեդական դարձած ժողովուրդների մեջ, սկսած 9-րդ դարից: Աֆրիկայի արաբները կազմում են մասնավոր խալիֆայություններ. ապստամբում են նաև մեր հարևան պարսիկները: Այս կողմից ապստամբության առաջին նշանը տալիս է Թահիրը, որ արաբների կողմից Խորասանի նահանգապետ էր նշանակվել. սա սկսում է ինքնագլուխ իշխել իր նահանգի վրա և այսպիսով հիմնադրում է Թահիրի հարստությունը (820 թ.), որ ժառանգաբար կառավարում է Խորասանի անկախ թագավորությունը կես դար շարունակ: Ապստամբական փորձեր սկսում են նաև ուրիշ նահանգներում: Արաբները չեն կարողանում ճնշել դրանք և միմյանց դեմ գրգռելով միայն ուզում են սանձել նրանց աշխարհակալական ախորժակները: Այս անկախ պետությունները գտնվում էին Պարսկաստանի հեռավոր արևելյան կողմերը. երկրի արևելյան մասը, իբրև արաբական խալիֆայության կենտրոնին ավելի մոտիկ վայր, դեռ զսպված էր մնում. բայց այստեղ էլ զանազան պարսիկ իշխաններ հանդարտ չէին և միանալով հայոց հետ, ուզում էին թոթափել հպատակության լուծը:

Հայ-պարսկական երկու գլխավոր ապստամբություն տեղի ունեցավ 9-րդ դարում: Առաջին ապստամբության գլուխ կանգնեց Սևադա պարսիկ իշխանը, որ կանխապես խնամություն հաստատելով հայոց հետ, ամուսնացել էր Արուսյակ Բագրատունի իշխանուհու հետ: Բագրատունիք և Սյունիք միացան պարսիկներին և ապստամբությունը պայթեց: Արաբները նախ ցանկացան քաղցրությամբ վերջացնել գործը, բայց տեսնելով, որ

բանակցություններն անզոր են, հարձակվեցին ապստամբների վրա, հաղթեցին, պարսիկները փախան իրենց երկիրը, իսկ հայերը նորից հաշտվեցին արաբների հետ:

Երկրորդ ապստամբությունը կազմակերպեց Բաբան պարսիկ իշխանը, որ Պարսկաստանում մի քանի անգամ արաբների դեմ կռվելուց հետո, եկավ Հայաստան և միացավ Բագարատ Բագրատունի իշխանի հետ, որին արաբները հանձնել էին Հայաստանի կառավարությունը: Արաբներն արշավեցին հայ-պարսկական միացյալ բանակի վրա. նրանց միացավ դժբախտաբար նաև հայոց Սմբատ սպարապետն իր զորքով. մեծ պատերազմում ապստամբները հաղթվեցին և Բաբանն ու Բագարատը գերի բռնվեցին: Սրա վրա սասունցիները կատաղած իրենց սարերից վար իջան և արաբական զորքն իրենց իշխանի հետ ջարդուփշուր արին (849 թ.)

Սասունցիների հարձակումը բորբոքեց արաբների կատաղությունը. ամիրապետն ուղարկեց Բուղա անվամբ թուրք զորավարին Հայաստանը բնաջինջ անելու համար: Նրան միացավ նաև Սմբատ սպարապետը, որ կարծում էր, թե այսպիսով կարող է մեղմել թուրք գազանի սիրտը: Բայց անօգուտ. Բուղան արշավեց Հայաստանի բոլոր կողմերը, երկիրն արյամբ ողողեց, ամեն տեղ ավերեց, և անհամար մարդկանց կոտորելուց հետո, գերիների ստվար բազմությամբ վերադարձավ Բաղդադ, իրեն հետ տանելով նաև Սմբատ սպարապետին, ուրիշ շատ նախարարների հետ: Բաղդադում նրանցից ոմանք ուրացան և ազատվեցին, մյուսները նահատակվեցին, իսկ Սմբատ Բագրատունին բանտում մահանալով, կոչվեց Սմբատ Խոստովանող:

98. ՆՈՐՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՍԱՐԱԿԻՆՈՍՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Կարոլոս Մեծի կայսրության քայքայումը ազատ ասպարեզ տվեց բարբարոսների մի նոր արշավանքի, գրեթե ամբողջ Եվրոպայում. այս բարբարոսներն էին հյուսիսից նորմանները, հարավից սարակինոսները, որոնց շուտով ավելացան նաև արևելքից հունգարացիները կամ մաճառները:

Նորմանները գոթական մի ցեղ էին. սլավներն արշավելով դեպի Բալթիկ ծովը, բաժանեցին նրանց գերմանացիներից և նորման-

ները քաշվեցին դեպի հյուսիս՝ նվաճելով ֆիննական ցեղերը, բնակվեցին Սկանդինավիայում (այս անվամբ հասկացվում էին Շվեդիան, Նորվեգիան և Դանիան). այստեղ կտրված հռոմեական աշխարհից և իրենց ցեղակից գերմաններից, երկար ժամանակ մնացին բոլորովին բարբարոս վիճակում: Տարվա երկու երրորդ մասը ձյունն ու սառույցը պատում էին այս երկրները. քաղցն ստիպել էր այս թշվառ ժողովուրդներին հեռու վայրերում փնտրել իրենց ապրուստը: Բնակվելով ընդարձակ ծովերի ափերին, դարձել էին անհերկյուղ ծովահեններ. ուռենու ճյուղերով նավեր էին հյուսում, որոնցից յուրաքանչյուրը մինչև 70 մարդ առնում էր. հաջող քամին քշում էր նրանց որևէ ծովեզերք, որտեղ կողոպտելուց և ասպատակելուց հետո, նորից հետ էին դառնում: Սովորաբար Բալթիկի և Հյուսիսային ծովի ափերին էին ասպատակում: Նորմանների առաջին արշավանքն սկսվեց Կարոլոս Մեծի ժամանակ, բայց կայսեր ահը հետ կանգնեցրեց իրենց: Կարոլոսի մահից հետո ավելի երես առան. 843 թվականից սկսած ամեն տարի կանոնավոր կերպով սկսեցին կրկնվել նրանց ասպատակությունները. այժմ այլևս չէին բավականանում Բալթիկի և Հյուսիսային ծովի մերձավոր եզերքներով, այլ շատ ավելի հեռուներն էին գնում. անցնում էին Գերմանիա, Անգլիա, Սկովիդա, Իռլանդիա, Ֆրանսիա, հետո ծովեզրը դառնալով՝ Իսպանիա և Իտալիա: Նրանք են, որ գտան Իսլանդիան, Գրենլանդիան, նույնիսկ Հյուսիսային Ամերիկան, իսկ Ռուսիայի հյուսիսային ծայրը մի փոքր իշխանություն հիմնեցին, որ հետո դառնալու էր Մոսկովյան պետությունը: Ծովեզերքներից դիմում էին գետաբերանները և գետերի ընթացքով երկրների շատ ներսերն էին գնում՝ իրենց նույն խեղճ ուռենուց պատրաստված մակույկներով: Այսպես, օրինակ, մինչև Ֆրանսիայի սիրտը առաջացան: Ուր էլ գնային սոսկալի խժդժություններ, ավեր ու կոտորած էին սփռում. մահն իրենց համար զվարճություն էր:

Նորման ավազակների մեջ նշանավոր եղավ Հաստինգսը, որ 844-850 թվականներին ասպատակեց Ֆրանսիան, Իսպանիան և Իտալիան: Երկու դար տևեց նորմանների արշավանքը և շատ տեղեր գրավեցին. գերմանացիք իրենց երկիրն ազատելու համար՝ նորմանների մի խումբ վարձելով Հռենոսի վրա պահապան դրին. սրանք են, որ կազմեցին Հոլանդիան: Ֆրանսիացիք Լա Մանշի ափին մի ամբողջ գավառ տվին նրանց, որ և կոչվեց Նորմանդիա:

Ավելի վատ եղավ Անգլիան, որ ամբողջապես նորմաններից նվաճվեց:

Նորմաններից քիչ հետո երևան եկան սարակինոսները. սրանք Աֆրիկայի ծովեզերքի մահմեդականներն էին, որոնք ծովահենների մի նավատորմ կազմելով սկսեցին ասպատակել Միջերկրականի եզերքները. գրավեցին Սիկիլիան, հետո մտան Ֆրանսիա և Պիրենյան լեռների և Իտալիայի միջև, Պրովանս գավառում հաստատվելով, շարունակ արշավում էին Հարավային Ֆրանսիա և Իտալիա, մինչև Հռոմ:

99. ԱՎԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նորմանների և սարակինոսների արշավանքը Եվրոպայում տեղի տվեց պետական մի նոր կազմակերպության: Որովհետև ավազակները սփռվել էին ամեն կողմ և երևում էին հանկարծ որևէ անակնկալ ժամանակ. կառավարությունը չէր կարող իր բանակը տանել ամեն կողմ՝ արշավանքների առաջքը կտրելու համար: Ուստի ամեն տեղ ո՛վ որ քաջ էր, մի խումբ մարդկանց հավաքելով իր գլուխը, դուրս էր գալիս կռվելու ավազակների դեմ և իր շրջանը կամ գյուղը պաշտպանելու: Ինչ էլ լիներ իր ծագումը, նա դառնում էր այդ վայրի զինվորական իշխանության գլուխը, բայց որովհետև անհնար էր կապ հաստատել կենտրոնական իշխանության հետ, ուստի նրա վրա միանում էին նաև մնացյալ բոլոր իշխանությունները. ինքը լինում էր միանգամայն զորավար, օրենսդիր, դատավոր, հողատեր և իշխան, և իր բոլոր գործողությունների մեջ ազատ էր: Հողային և իշխանական յուրաքանչյուր այսպիսի միություն կոչվում էր **ավատ** և նրա վրա իշխողը՝ **ավատապետ**: Շատ փոքր և թույլ ավատապետները ուժ ձեռք բերելու համար փոխադարձ պաշտպանության պայմանով միանում էին մի ավելի մեծի, որ դառնում էր **տեր** (սինյոր), իսկ ինքը լինում էր նրա **վասալը**: Ավատականությունը, որ վերջնականապես հաստատվեց 1 000 թվականին, ամբողջ Եվրոպան բաժանեց հազարավոր այսպիսի մասերի, որոնց իշխողները աստիճանի կարգով կոչվում էին պարոն, դերկոմս, կոմս, մարքիզ, դուքս, մեծ դուքս, և այս բոլորից վեր թագավորն էր: Այս բոլոր միությունների մեջ երկու տեսակ ժողովուրդ կար. մեկը կռվող և իշխող դասակարգը, այն է զինվորականները, որոնց գլխավորները **ասպետ** էին կոչվում և

որոնց հետ միացել էին կրոնավորները, իսկ մյուսը՝ նրանց կերակրող ժողովուրդը (գյուղացի, արհեստավոր և վաճառական), որ կոչվում էր **ճորտ**:

Ավատականությունը երկու դժբախտ հետևանք ունեցավ. որովհետև բոլոր հողերը բաժանվել էին ավատապետների, որոնք իրենց շրջանում ամեն իշխանություն վարում էին, հետևաբար թագավորությունը դարձավ անարժեք և անվանական մի բան, որովհետև ո՛չ հող ուներ և ո՛չ իրավունք, պարզ տիտղոս էր: Երկրորդ՝ որովհետև յուրաքանչյուր ավատ ազատ էր իշխանության մեջ, ուստի ամբողջ Եվրոպան դարձավ ներքին մանր-մունր կռիվների ընդարձակ դաշտ, որ ոչ ոք խանգարելու իրավունք չուներ:

Այսպես ուրեմն Կարոլոս Մեծի կայսրությունը երեք թագավորությունների բաժանվելուց հետո, այժմ էլ վերածվեց բազմաթիվ մանր իշխանությունների. Ֆրանսիան բաժանվել էր 4 դքսությունների և 4 կոմսությունների, Գերմանիան նույնպես չորս մեծ դքսությունների (Սաքսոնիան, Բավարիան, Սուաբը, Ֆրանկոնիան), այսպես և մյուսները:

Ավատական իշխանության ձևը Արևելյան կայսրության և արաբական պետության մեջ մուտք չգործեց:

100. ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Սլավոնական ժողովուրդները գերմաններից շատ ուշ կազմեցին պետական համայնքներ. նրանք շարունակ թափառում էին Ռուսիայի հարավային և Գերմանիայի արևելյան կողմի երկրներում: Միջին Ասիայից եկող բարբարոսները սրանցից զանազան խմբեր իրենց հետ առնելով տանում էին Արևմուտք. իրենք շատ անգամ ասպատակում էին Դանուբից հարավ եղած բյուզանդական երկրները. հույները նրանցից վարձում էին մեծամեծ խմբեր, տալիս էին հողեր և իրենց գործ էին ածում պատերազմների մեջ: Սլավոնների գաղթը դեպի Հունաստան այնքան շատացավ, որ կարելի է ասել, թե ամբողջ Հունաստանը և Մակեդոնիան հունացած սլավներից էր բաղկանում. բուն հույները քաշվեցին ծովեզերքը, որտեղ վաճառականությամբ էին պարապում:

Վերդյոնի դաշնադրությունը կարծես նախանշան եղավ սլավոնական ազգերի կազմակերպության և անկախության: Սրանց թվում առաջին տեղն է գրավում Լեհաստանը. լեհերը Վիստուլա գետի շուրջը կազմեցին մի փոքր իշխանություն Պիաստ դուքսի առաջնորդությամբ (842 թ.). 10-րդ դարում նրանք քրիստոնյա դարձան և մտան գերմանական պետության իշխանության տակ, իսկ Բոլեսլավ Ա-ի օրով անկախություն ստացան (992 թ.):

Ռուսները իջան հյուսիսից դեպի հարավ. 862 թվականին մի խումբ նորմաններ (վառեգներ) Ռուրիկի առաջնորդությամբ կանչվեցին Նովգորոդի հանրապետության ծառայության, որ Իլմեն լճի եզերքին էր գտնվում Բալթիկ ծովից դեպի արևելք: Ռուրիկը փոխանակ օգնելու, քաղաքը գրավեց. նրա հաջորդները հիմնեցին զանազան մանր իշխանություններ, հետո հասան և գրավեցին Կիևը, որ իրենց մայրաքաղաքը դարձրին. մտնելով բյուզանդական իշխանության հետ հարաբերության մեջ, երբեմն իբրև վարձկան զորք և երբեմն իբրև թշնամի, իրենց Վլադիմիր թագավորի հետ ընդունեցին քրիստոնեությունը և սկսեցին հետզհետե քաղաքակրթվել (988 թ.):

Ավելի նշանավոր եղան բուլղարները, որոնք Միջին Ասիայից եկած թուրքական մի ցեղ էին. ֆիններին հետ սրանք Եվրոպա անցան և սլավոնների հետ հարևան եղան. ֆինները շատ ճյուղերի էին բաժանվել, ինչպես սուոմիները, էստոնները, լապոնները, պիրմերը, սամոյեդները, չերեմիսները, չուվաշները, մորդվինները. սլավները կարողացան այս խմբերը քշել դեպի Բալթիկ ծովը և Ուրալյան լեռները. նրանցից շատերը խառնվեցին սլավների հետ. ամենաուժեղները գտնվեցին սուոմիները, որոնք հաստատվեցին Ֆինլանդիայում և կազմեցին ֆինն ժողովուրդը: Սրանց ցեղակից մաճառները առաջացան դեպի միջին Եվրոպա և կազմեցին արդի հունգար ազգը: Հունգարները բնակվեցին Դոն գետից մինչև Վոլ-գա եղած տարածության մեջ. նրանք շատ անգամ մասնակցում էին հոների և սլավների արշավանքին դեպի արևմուտք և հարավ: Երբ հոները ջախջախվեցին և օստրոգոթները Թեոդորիկի հետ քաշվեցին Իտալիա, նրանց տեղը սլավներին ու բուլղարներին մնաց: Սլավները, հանրապետական գաղափարներով տոգորված, զանազան ցեղերի բաժանված, չկարողացան մի զորեղ միություն կազմել. ընդհակառակը բուլղարներն ավելի միապետական,

խմբված մեկ իշխանի հրամանի տակ, արշավեցին դեպի առաջ: Իրենց նախկին արշավանքների մեջ ավարի համն առած, մեկ նշանաբան ունեցան նրանք՝ դեպի Պոլիս: 5-րդ դարում սրանցից մի մասը անցավ Դոնը և դեպի Դնեպր և Դնեստր առաջանալով հաստատվեց արդի Բեսարաբիայի և Ռումինիայի մեջ: Այսպիսով բուլղարները գրաված եղան մի հսկա տարածություն Վոլգայից մինչև Դանուբ. Կուբրատ իշխանը կարողացավ ստեղծել մի մեծ պետություն, որ հազիվ սկսված քայքայվեց իր հիմնադրի մահով (637 թ.): Բուլղարները բաժանվեցին միմյանցից. մի մասն ամփոփվեց նախկին հայրենիքում՝ Դոնից մինչև Վոլգա, ուր կազմեց Մեծ կամ Սպիտակ Բուլղարիայի թագավորությունը. այս ցեղը նախ քրիստոնյա դարձավ, բայց հետո թաթարների հետ խառնվելով, մահմեդական դարձավ և 10-րդ դարում լեզուն և ազգությունը կորցրեց. նրանցից առաջանալու էր Կազանի թաթարների խանությունը: Մի ուրիշ մասը Իսպերիխի առաջ-նորդությամբ անցավ Դանուբը. հույները սարսափահար, մինչև Բալկանյան լեռները տարածվող հողամասը դատարկեցին, որով բուլղարները հաստատվեցին այստեղ, մայրաքաղաքը դարձնելով Վառնան (679 թ.): Այսպես կազմվեց բուլղարական նոր հայրենիքը՝ արդի Բուլղարիան: Նույն կողմերը գտնվող տասի չափ սլավական մանր-մունր ցեղերը միացան բուլղարների հետ. բայց բուլղարներն էլ վերցրին նրանց լեզուն և քաղաքակրթությունը: Այսպես հիմնվեց բուլղար-սլավոնական զորեղ թագավորությունը: Նա անդադար կռվի մեջ էր հույների կայսրության հետ, որին երբեմն էլ իբր դաշնակից օգնում էր: Իրենք էին որ, ինչպես տեսանք, մի անգամ ազատեցին Պոլիսը արաբների ձեռքից (718 թ.): 3-րդ դարում Բուլղարիան ընդունելով թագավոր դնելու ընտրական դրությունը, շատ տկարացավ և հույն կայսրերի քաղաքական դավերին խաղալիք դարձավ: Մի անգամ, նոր ընտրությունից դժգոհ, 200 000 բուլղար թողեց հայրենիքը և Փոքր Ասիա գաղթեց (760 թ.): Բուլղարիայի մեծությունը վերականգնեց Կրումը, որ Հունգարիայում հաստատված բուլղարների իշխանն էր. Կարոլոս Մեծը ջնջելով ավարներին, նպատակ էր դրել ջնջել նաև բուլղարներին. Կրումը կոչ արեց Բուլղարիայի իր ցեղակիցներին՝ միաբան ուժով դուրս գալու ֆրանկների դեմ: Կրումը թագավոր ընտրվեց (802 թ.) և այսպիսով Պանոնիայի բուլղարներն էլ միանալով հայրենիքին, ձևացավ մի մեծ Բուլղարիա, որ

հաջողությամբ վանեց Կարոլոսի արշավանքը: Նա միապետությունը վերականգնեց, օրենքներ դրավ, բանակը կարգի բերավ և հույների դեմ կռվի սկսեց. գրավեց նախ Սոֆիա նշանավոր քաղաքը. Նիկեֆոր կայսրը արշավեց նրա վրա. բայց Կրումը Բալկանների մեջ պաշարելով նրան մի անտառում, ամբողջ բանակը թագավորի հետ միասին այրեց. նա հասավ մինչև Պոլիս և կարող էր գրավել մայրաքաղաքը, երբ մահը վրա հասավ:

864 թվականին բուլղարների Բորիս իշխանը ընդունեց քրիստոնեությունը հույն քարոզիչների ձեռքով. նրա որդին Սիմեոնը բուլղարական թագավորությունն իր գագաթնակետին հասցրեց:

Սլավոնական պետությունների մեջ ամենանշանավորը եղավ Մորավիայի թագավորությունը. այս երկրի սլավները, գերմանացիների ճնշումներից նեղված, միացան Ռոստիսլավի իշխանության տակ: Սա դիմեց հույներին և պատրաստակամություն հայտնեց քրիստոնեությունն ընդունելու. Կյուրեղ և Մեթոդիոս քարոզիչները եկան Մորավիա (865 թ.), կազմեցին սլավոնական տառերը, Աստվածաշունչը թարգմանեցին, որ հետո մտան Ռուսիա և Բուլղարիա: Մորավները և չեխերը մկրտվեցին: Ռոստիսլավը հիմնեց Մորավյան մեծ պետությունը, որի մեջ մտան սերբերը և Էլբյան սլավները: Մորավները նույնիսկ մտան Բավարիա և այս միջոցով լատին եկեղեցու հետ հարաբերության մեջ մտնելով, ընդունեցին կաթոլիկությունը: Գերմանացիք տեսնելով, որ անկարող են դիմանալ մորավների զորությանը, կանչեցին հունգարներին: Սրանք հոնական մի վայրենի ցեղ էին. հարձակվեցին մորավների վրա, վերջ տվին նրանց պետության, հետո անցան Գերմանիա, կոտորեցին ու կողոպտեցին Բավարիան, Տուրինգիան, Բոհեմիան, Հյուսիսային Իտալիան և մինչև Ֆրանսիայի սիրտը առաջացան (893 թ.):

Մորավյան պետության կործանումը մեծ նշանակություն ունեցավ սլավոնական ցեղի ապագայի համար. հունգարացիք հաստատվելով իրենց նոր հայրենիքում, միմյանցից բաժանեցին սլավոն ժողովուրդները. չեխերն առանձին թագավորություն կազմեցին, արևմտյան սլավոններն սկսեցին լատինանալ, իսկ հյուսիսային սլավոնները անջատված մնացին բյուզանդական քաղաքակրթությունից:

101. ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Այն բոլոր կրոնական հերձվածների մեջ, որոնք զանազան ժամանակ ծագեցին հույների կայսրության մեջ, թե՛ բարոյական արժանիքով և թե՛ քաղաքական տեսակետով ամենից նշանավորը պավլիկյաններն են, որոնցից անբաժան են նաև թոնդրակեցիք և մանիքեցիք: Այս բոլորը փոքրասիական ծագում ունեն. հատկապես պավլիկյանները Չորրորդ Հայքի ծնունդ են, իսկ թոնդրակեցիք բուն Հայաստանից և իրենց նախավայր Թոնդրակ գյուղի անվամբ այսպես են կոչվում: Այս վարդապետությունների հետևորդները, զզված այն բոլոր արտաքին ծիսական ձևերից, որոնցով պաշարված էր հույների մեջ քրիստոնեությունը, մտածել էին միանգամից վերջ տալ նրանց և վերահաստատել նախկին պարզ քրիստոնեությունը, ուժ տալ միայն նրա ներքին բարոյական կողմին: Նրանք դեմ էին կրոնավորական աստիճաններին, եկեղեցական խորհուրդներին, խաչի նշանին և հատկապես եկեղեցական պատկերներին, որոնցով այնպես խճողում են մինչև այսօր հույները և նրանց հետևորդ ռուսները իրենց եկեղեցիներն ու մինչև իսկ տները (իկոնա)*: Պավլիկյանները այս բանը համարում էին կռապաշտություն և այս կետում թերևս նրանք ազդված էին մահմեդականներից, որոնք քրիստոնեության մեջ պատկերների պաշտամունքի մասին նույն գաղափարն ունեին: Այսպիսով պավլիկյանները դառնում են բողոքականության ռահվիրաները և իբրև ծնունդ հայ մտքի, առանձնապես նշանակություն ունեն մեզ համար:

Պատկերների մասին իրենց հակառակությունը շուտով տարածվեց Փոքր Ասիայում. փռյուգացի մի եպիսկոպոս ընդունեց այն և տարածեց բարձր հոգևորականության մեջ: Դարժումն առաջացավ դեպի արևմուտք: Հույների Լևոն Գ Իսավրացի կայսրը ընդունեց այս հավատը և հրապարակեց մի հրովարտակ, որով արգելվում էր պատկերների պաշտամունքը (726 թ.): Այսպիսով կազմվեց երկու կուսակցություն. պատկերամարտներ, որոնք կայսեր կուսակից բարձր հոգևորականները, զինվորականները և նոր աղանդավորներն էին, և պատկերապաշտներ, որոնք ցածր աստիճանի կրոնավորներն էին և հասարակ ժողովուրդը:

* իկոն(ա) - սրբապատկեր (խմբ.):

Փոքր-Ասիան մեծ մասամբ պատկերամարտ էր, իսկ մայրաքաղաքը, կղզիները և Արևմտյան Եվրոպան՝ պատկերապաշտ: Կայսեր հրովարտակը պատճառ դարձավ բացարձակ կռվի. մայրաքաղաքն ապստամբեց և կայսրը զենքի զորությամբ ճնշեց այն. կղզիներն ընտրեցին մի նոր կայսր, որ մի նավատորմի գլուխն անցած, արշավեց Պոլսի վրա. հունական հուրը այրեց նրանց. Իտալիան քիչ էր մնում բոլորովին բաժանվեր կայսրությունից, եթե պապը զգույշ քաղաքականությամբ չկարողանար պահել ժողովրդին: Պատկերամարտների կռիվը շարունակվեց Լևոնից հետո հաջորդ երկու կայսրերի և ավելի հետո Լևոն Ե հայ կայսեր ժամանակ, որոնք պատկերամարտ էին, իսկ սրանց միջև եղող կայսրերը պատկերապաշտ էին: 120 տարի տևեց պատերազմը և երկու կողմից շատեր զոհվեցին: Վերջապես պատկերապաշտները հաղթող հանդիսանալով, եկեղեցական ժողով գումարեցին և պատկերապաշտությունը ճշմարիտ կրոն հռչակեցին (843 թ.):

Որչափ ժամանակ որ պատկերամարտ կայսրերը նստում էին գահի վրա, պավլիկյանները, որոնք Եփրատի և Տավրոսի շուրջը հաստատվել էին և մի կուռ համայնք էին կազմում, ազատ էին իրենց պաշտամունքի մեջ: Նրանք պաշտպանություն էին գտնում կայսրերից ո՛չ միայն իրենց հավատի նորության պատճառով, այլ որովհետև իբրև պատնեշ էին ծառայում իսլամության հարձակման դեմ: Նրանց կազմակերպիչն էր դարձել իրենց հոգևոր պետ Սարգիս կրոնավորը (800 թ.): Բայց երբ գահ բարձրացան պատկերապաշտ կայսրեր և պավլիկյանները հալածանքի ենթարկվեցին, նրանց մի մասը փախավ արաբական հողերը: Ավելի հետո, երբ հալածանքը սաստկացավ, պավլիկյանները կատաղեցին և դիմեցին բացարձակ պատերազմի: Կարբեաս հռոմայեցի զինվորականը նրանց գլուխն անցավ. կազմվեցին հայդուկային խմբեր, որոնք ամրանալով սահմանային Դերբիկե (Դիվրիկ) բերդում, շարունակ ասպատակում էին հույների հողերը և քրիստոնյաներին կոտորում անխնա: Նրանք մինչև Սև ծով և Բութանիա հասան: Նրան հաջորդեց Քրյուսոքիրը, որ իր նախորդի գործը շարունակեց հաջողությամբ: Հույների Վասիլ Ա կայսրը կարողացավ հաղթել նրան. Քրյուսոքիրը խարդախությամբ սպանվեց և պավլիկյանների ապստամության վերջ տրվեց (874 թ.): Ավելի հետո, 10-րդ դարում, Չմշկիկ կայսրը պավլիկյաններին, թոնդրակեցիներին ու մանիքեցիներին տեղահանելով, բնակեցրեց

Բուլղարիայում, ուր նրանք տարածելով իրենց դավանանքը, կազմեցին բոգոմիլների աղանդը: Ավելի ուշ խաչակիրները ծանոթանալով այս դավանանքին, այն պիտի փոխադրեին Եվրոպա, ուր, հատկապես Հարավային Ֆրանսիայի Ալբի քաղաքում զարգանալով, կազմեց ալբիգեցիների աղանդը, իսկ Հյուսիսային Իտալիայում՝ պատարիների աղանդը: Հռոմի պապը 13-րդ դարում հալածանք հանեց նրանց դեմ, տասնյակ հազարավոր մարդիկ կոտորեց և Ալբին քարուքանդ անելով՝ վերջ տվեց հերձվածին:

102. ԱՆԳԼԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ. ԱԼՖՐԵԴ ՄԵԾ

Նորմանները նվաճելով Անգլիան, հաստատվել էին այնտեղ: Սաքսոն թագավորներից մեկը՝ Ալֆրեդը փախավ երկրի ներսերը և անտառների ու ճահիճների մեջ պահվեց: Այնտեղ սկսեց իր շուրջը կուսակիցներ հավաքել, որոնցով շարունակ կռիվ էր մղում նորմանների դեմ: Երբ կուսակիցների թիվը ավելի մեծացավ, անցավ վճռական ճակատամարտների, որոնք երկար և ավելի արյունահեղ եղան: Նորմանները վերջապես պայման կապեցին Ալֆրեդի հետ. Անգլիան բաժանեցին երկու մասի. Թայմզ գետի արևելյան մասը պահեցին իրենց, իսկ այնտեղից դեպի արևմուտք եղած ամբողջ երկիրը Ալֆրեդին տվին (878 թ.):

Ալֆրեդը կազմակերպեց երկիրը վարչապես ու բարոյապես. բաց արեց դպրոցներ, հրավիրեց Արևմտյան Եվրոպայից գիտնականների և գրագետների և հիմք դրեց անգլերեն լեզվի և գրականության: Այսպես արժանացավ Մեծ տիտղոսին:

Իր հաջորդները նորոգեցին պատերազմը նորմանների հետ և երկրի մնացյալ մասից էլ դուրս քշելով նրանց, ամբողջ Անգլիայի անկախ թագավորությունը վերականգնեցին:

103. ՀԱՅՈՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ԱՇՈՏ Ա. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Սլավական* ազգերի կազմության և Անգլիայի ազատության ժամանակից է ինչպես Պարսկաստանի, այնպես և Հայաստանի ազատությունը արաբական լծից, որ կազմակերպեց ու ձեռք բերեց Աշոտ Ա Բագրատունի նախարարը խոհեմ քաղաքականությամբ:

*սլավական - սլավոնական (խմբ.):

Աշոտը Սմբատ Խոստովանողի որդին էր. իր նախնիքներից իբրև ժառանգություն ստացել էր մեծամեծ կալվածներ Հայաստանի զանազան կողմերը. այդ կալվածները այնքան ընդարձակ էին, որ տասից ավելի քաղաքներ էին պարունակում. և նրանցից դուրս բերված նախարարական զորքը 40 000 հոգու էր հասնում: Վարպետ քաղաքականությամբ Աշոտը խնամացել էր Հայաստանի երկու մեծ նախարարական տոհմերի՝ Սյունյաց և Արծրունյաց հետ, որով նրանց բարեկամությունն էլ իր կողմն էր շահել:

Երբ Բուղան Հայաստանը տակնուվրա անելով հեռացավ, Աշոտը սկսեց խնամել ժողովուրդը, քանդված տեղերը նորոգեց, լեռներն ապաստանած մարդկանց հետ դարձրեց, Բաղդադ գերի քշված նախարարներին ազատեց և առհասարակ իր քաղցր վարմունքով բոլորին սիրելի դարձավ: Ամիրապետը տեսնելով նրա հավատարիմ գործունեությունը, իշխանաց իշխանի տիտղոսը տվեց նրան (859 թ.): Այն ժամանակ արդեն քայքայման դուռը հասած արաբական խալիֆաների քաղաքականությունն էր յուրաքանչյուր երկրում առաջնակարգ դիրք գրավող մի անձի տալ վարչական ինքնօրինություն, մեծ իշխանի տիտղոս և նրա ձեռքով զսպել ուրիշ մանր-մունր ըմբոստ իշխանների ոտնձգությունները: Արաբների այս քաղաքականությունը իրոք որ հաջող միջոց էր կացությունը փրկելու և կենտրոնական իշխանությունը հանգիստ պահելու համար. բայց այդ ժամանակավոր էր միայն. որովհետև այդ քաղաքականությամբ արաբները նույնիսկ իրենց ձեռքով պատրաստում էին զանազան երկրներում անկախության ձգտումը և յուրաքանչյուր իշխան բոլորովին ինքնօրեն դառնալու ջանք էր գործադրում: Այս պարագայի համար էլ արաբները մի ուրիշ հնարք ունեին. նրանք զանազան իշխաններն իրար դեմ էին գրգռում և այսպես ներքին ազգամիջյան կռիվների միջև աշխատում էին իրենց գերիշխանությունը գոնե անվանապես կամ ձևապես անխախտ պահել:

Ճիշտ այս միջոցին էր, երբ Աշոտի ձեռքով Հայաստանն ինքնավարություն էր ստանում, երկու ուրիշ ինքնավար իշխանություն էլ էր կազմվում, մին Եգիպտոսում, մյուսը Աֆղանիստանի հարավային սահմանի վրա՝ Սեյիստանում: Ահմեդ անվամբ մեկը, որ թաթարական ցեղին էր պատկանում և Բաղդադի պալատումն էր մեծացել, Եգիպտոսի ժառանգական իշխան է նշանակվում, որով հիմնվում է Թուլունի հարստությունը (868 թ.). սրանց

իշխանության տակ է մտնում նաև Ասորիքը, բայց երկու երկրների միջև ծագած պատերազմը պատճառ է դառնում, որ ամիրապետը միջամտի կռվին և երկու երկրներն էլ նվաճելով վերջ տա Թուլունի կայսրության (905 թ.): Յաղուբ անվամբ մի նախկին ավազակապետ այս նահանգի վրա իշխան է նշանակվում և իր քաջությամբ ոչ միայն նվաճում է Քիրմանի և Շիրազի նահանգները, այլև հաղթում Խորասանի թագավորին, որ արաբական խալիֆայության դեմ ըմբոստացել էր: Այս հաղթությամբ Յաղուբը ցնցում է Թահիրի հարստությունը, Խորասանն առնում իր իշխանության տակ, որին իբր վարձ ամիրապետից ստանում է նաև Բահլի, Բուխարայի և Քաբուլի իշխանությունը (870 թ.): Այսպես է հիմնվում Սաֆֆարիների պարսկական հարստությունը:

Յաղուբն ինքնագլուխ դառնալուց հետո, ըմբոստանում է նույնիսկ կենտրոնական իշխանության դեմ և արշավում Բաղդադի վրա. բայց հաղթվում է և ինքն էլ մի քիչ անց մեռնում (875 թ.): Յաղուբի հաջորդ Ամրուն ավելի քաղաքագետ է գտնվում և հպատակություն կեղծելով, ամիրապետից ստանում նաև Իրաղի նահանգը: Այսպիսով Սաֆֆարիների իշխանությունը մեծ պետություն է դառնում: Նրան էր հպատակվում Աֆղանիստանից սկսած մինչև Միջագետք՝ գրեթե ամբողջ Պարսկաստանը, որից դուրս էին մնում միայն Պարսից ծոցի հյուսիսային մասը, Կասպից ծովի հարավային մասը և Ատրպատականը:

Մի նոր ապստամբություն էլ ծագեց Ատրպատականում. այս նահանգի Զահապ իշխանը ապստամբեց ամիրապետի և իր դեմ ուղարկված արաբական բանակը ջարդելով, 80 000 զորքով մտավ Հայաստան, այս երկիրն էլ իր իշխանության տակ առնելու համար: Ժամանակը եկել էր, որ Աշոտն իր վարչական ձիրքի հետ պատերազմական հանճարն էլ ցույց տար: Աշոտը գնաց նրա դեմ, հաղթեց և Հայաստանից դուրս վռնդեց:

Այս փառավոր հաղթության վրա նախարարները միացած, դիմեցին ամիրապետին և խնդրեցին, որ Աշոտին Հայաստանի վրա թագավոր նշանակի: Ամիրապետը տեսնելով որ մերժելու պարագային Աշոտն ինքնագլուխ կարող է կատարել իր փափագը, նոր խռովություններից խուսափելու համար, համաձայնվեց և թագ ու ծիրանի ուղարկեց Աշոտին (885 թ.):

Այսպիսով կազմվեց հայոց նոր թագավորությունը, որ սկզբում հարկատու էր արաբներին, որոնց կողմից նշանակված մի

ոստիկան էլ նստում էր Դվինում. բայց քիչ-քիչ այս կախման կետերն էլ ջնջվեցին և Հայաստանը կատարյալ անկախություն ձեռք բերեց Աշոտի հաջորդների ժամանակ:

104. ՍԱՄԱՆԻ ԹԱԹԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց անկախության գրավականը Բաղդադի խալիֆայության թուլությունն էր, իսկ այս թուլության գլխավոր պատճառն էլ Պարսկաստանի խառնակ վիճակը, որ 9-րդ դարից սկսելով դեռ շատ երկար պիտի շարունակեր:

Սաֆֆարիների պետության դեմ Խորասանն ապստամբում է և ամիրապետից նոր իշխան է ուզում. ամիրապետն իր սովորական քաղաքականությամբ կատարում է Խորասանի պահանջը. Բաղդադից ուղարկվում է մի նոր իշխան ստվար բանակով, որ Ամրուին պաշտոնից գցում և Խորասանի տեր է դառնում: Բավական ժամանակ հետո Ամրուին հաջողվում է ընկճել Խորասանը, իր պետության տեր դառնալ և նույնիսկ Բաղդադի վրա քայլել՝ ամիրապետին գահազուրկ անելու համար: Ամրուն իր 400 կտրիճ ձիավորներով պալատ է մտնում, իբր թե խալիֆային երկրպագելու համար. այստեղ կռիվն սկսվում է. պարսիկները ջարդվում են և Ամրուն հազիվ կարողանում է փախչել: Ամիրապետը Իսմայիլ Սամանի թաթար իշխանին Բուխարայի տեր է նշանակում և Պարսկաստանի գրավումը նրան է առաջարկում: Ամրուն գնում է նրա վրա, բայց հաղթվում, ձերբակալվում՝ Բաղդադ է ուղարկվում, ուր և սպանվում է: Այսպիսով, Սաֆֆարիների պետության վերջ է տրվում և Իսմայիլը նվաճելով Խորասանը, Սեյիստանը, Թաթարիստանը և Իրաղը, հիմնում է Սամանիների պետությունը, որի մայրաքաղաքներն էին Բուխարան և Սամարղանդը (901 թ.):

Սամանիների պետության ժամանակակից է Ֆաթիմյանների պետությունը. սրանք արդեն 902 թվականին սկսել էին Արևմտյան Աֆրիկայում տարածել իրենց իշխանությունը. այնուհետև ավելի զորանալով, առաջացան դեպի արևելք և իրենց անկախ խալիֆայություն հրատարակեցին (909 թ.). սրանք ուզում էին տիրել ամբողջ արաբական հողերին և Բաղդադի խալիֆայության տեր դառնալ. այս նպատակով արշավեցին Եգիպտոսի վրա և նրա մեկ մասին տեր դարձան. այս տեսնելով Եգիպտոսի կառավարիչը իրեն հայտարարեց անկախ, ամիրապետը, անկարող լինելով

դիմադրել նրան, Ասորիքն էլ կցեց Եգիպտոսին և ճանաչեց նրա անկախությունը. այսպես սկսեց Եգիպտոսի Էխշիդյան հարստությունը (936 թ.), որ սակայն շատ կարճ կյանք ունեցավ. Ֆաթիմյանները եկան և առանց կռվի տիրեցին երկրին. այսպես կազմվեց Ֆաթիմյանների մեծ պետությունը, որին հպատակ էին բացի Աֆրիկայից նաև Ասորիքը, Մալթան, Սարդենիան, Սիկիլիան և Միջերկրականի կղզիներից շատերը. մայրաքաղաքն եղավ նոր հիմնված Կահիրեն:

105. ԿԻՏԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ճիշտ այն թվականին, երբ սամանիները իրենց պետությունը հիմնեցին, Հեռավոր Արևելքում հիմնվում էր Կիտանների պետությունը:

Կիտանները թերևս տունգուսների ցեղին էին պատկանում. նանք փոքր, աննշան և բարբարոս մի ժողովուրդ էին, որ դեռ 5-րդ դարում բնակվում էին Մանջուրիայում, Լիանգ գետի ափին: Ուրիշ մոնղոլ ժողովուրդների նման, սրանք էլ չինական տերության հպատակ էին և քիչ-քիչ նրանց քաղաքակրթությունն ընդունեցին: Սակայն բոլոր մոնղոլական ժողովուրդների միջից այս փոքրիկ ժողովուրդն եղավ, որ առաջին անգամ պատմության մեջ դեր խաղաց և իրեն հաջորդող մյուս մոնղոլ ժողովուրդների համար լայն ճանապարհ բաց արեց:

Կիտանի մի իշխան՝ Ապաոխին, որ 901 թվականին գահ բարձրացավ, օգուտ քաղելով չինական պետության խառնակ վիճակից, իր երկիրն անկախ հայտարարեց: Մի քանի տարվա ընթացքում իր պետությունն այնքան մեծացավ, որ մի կողմից Ամուր գետից այն կողմ, մինչև Չինաստան հասավ և նրա հյուսիսային գավառները գրավեց և մյուս կողմից մինչև Գոբի անապատը առաջացավ:

Ապաոխին չինական քաղաքակրթությունն ընդունեց, գիր և գրականություն մտցրեց իր երկրի մեջ և պետության կարգադրության համար կազմեց օրինագիրք: Կիտաններու պետությունը դարձավ զորավոր կայսրություն, կապ հանդիսացավ Արևմուտքի և Չինաստանի միջև, այսպես իր անունն սկսեց նաև Չինաստանի տեղ գործ ածվել (Խթայ, Kumau):

Մոնղոլական պետությունները առհասարակ կարճատև կյանք

են ունեցել. սրանց համեմատությամբ կիտանների պետությունը երկարակյաց եղավ և տևեց մինչև 1125 թվականը:

Այս ժամանակները կիտաններին հպատակ Յուե-չի ցեղից ապստամբեց, նրանց իշխանությունը կործանեց և հիմնեց Քիրի կոչված պետությունը: Կիտանների թագավորական ցեղից մեկը (Ելուի-տաշի) հեծյալների մի փոքր գունդով փախավ արևմուտքի անապատը. շատերը հետևեցին նրան, գրավեց մինչև Խորեզմը և Պարսկաստանի սահմանն ու հիմնեց մի նոր պետություն, որ կոչվում է Կարա-Կիտայ (1125 թ.) և մինչև 1210 թվականը տևեց: Այնուհետև երկիրը Նայման քրիստոնյա պետության ձեռքն անցավ: Արևելքում ծագեց Կին թագավորությունը (1127 թ.), որ ոչ միայն Կիտանի պետության տեր դարձավ, այլև Չինաստանի հյուսիսային մասին, մինչև Հո-նան և 1235 թվականին կործանվեց, ինչպես կտեսնենք:

106. ՀԱՅՈՑ ԿՌԻՎՆԵՐԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԵՏ

Հայաստանն անկախ թագավորություն դառնալուց հետո, զորանալու և Արևելքում դիրք ձեռք բերելու համար, պետք ուներ երկարատև խաղաղության, բայց այս պայմանը պակասեց նրան: Այն ժամանակ, երբ Հայաստանը կազմակերպվեց, ճիշտ իրեն մոտ ձևացավ Ատրպատականի իշխանությունը, որի գլուխը թեև մի պարզ ոստիկան էր, բայց արաբական պետության թույլ կարգերի պատճառով, իրավունք համարեց խառնվելու Հայաստանի ներքին գործերի մեջ: Հայաստանը պետք ուներ միության, բայց այս պայմանն էլ պակասեց նրան: Ճշմարիտ է, որ Հայաստանում չկար այն խիստ ավատական դրությունը, որ ընդհանուր էր այն ժամանակ Եվրոպայում, բայց հայերն էլ ունեին իրենց նախարարական տոհմերը, որոնք անջատական ձգտումներով սնված, ցանկանում էին յուրաքանչյուրը անկախ թագավորություն ձեռք բերել: Ատրպատականի ոստիկանները քաջալերեցին այս շարժումը և Հայաստանը զանազան թագավորությունների բաժանելով, ցանկանում էին քիչ-քիչ բոլորին տեր դառնալ: Ատրպատականի ոստիկանները չկարողացան հասնել իրենց նպատակին, բայց կարողացան իրենց կռիվներով զբաղեցնել նրան և չթողնել որ հասներ իրական մեծության:

Առաջին կռիվներն սկսեցին նույնիսկ Աշոտի մահից ան-

միջապես հետո, նրա հաջորդ Սմբատի օրով: Այս ժամանակ Ատրպատականի ոստիկանն էր Ավշինը, որ երեք գլխավոր արշավանք կատարեց Հայաստան: Առաջին արշավանքը բոլորովին ապարդյուն անցավ և Ավշինը Սմբատի զորավոր բանակը տեսնելով, վախեցավ և հետ քաշվեց: Երկրորդ արշավանքին նա հասավ մինչև Դվին, բայց այստեղ Սմբատի զորքից կատարյալ ջարդ կրելով հետ քաշվեց: Երրորդ արշավանքին հասավ մինչև Կարս, բայց տեսնելով, որ անկարող է բռնել Սմբատին, հաշտվեց նրա հետ և նորից հետ դարձավ: Ավշինի մահից հետո նրա գործը շարունակեց հաջորդը Յուսուֆ. սա հայոց ուժը ջլատելու համար, օգուտ քաղելով Գագիկ Արծրունի իշխանի գժտությունից Սմբատի հետ, նրան Վասպուրականի վրա թագավոր դրեց (908 թ.): Այսպես Հայաստանը բաժանվեց երկու թագավորության՝ Բագրատունյաց և Արծրունյաց: Այնուհետև Յուսուֆը միացավ Գագիկի հետ և երկուսը միասին արշավեցին Սմբատի վրա: Սմբատը մենակ էր. իր նախարարները ցրվել-հեռացել էին նրանից. նրա բանակը չէր կարողացել դիմադրել թշնամուն. օգնություն խնդրեց հույների կայսրից, բայց իզուր Սմբատը, հուսահատված, քաշվեց Կապույտ բերդը, որ Յուսուֆը եկավ պաշարեց հայոց զորքով: Մի տարի Սմբատ պաշարումը վանելուց հետո, սովից նեղված, նաև տեսնելով երկու կողմից թափված քրիստոնյաների արյունը, անձնատուր եղավ. Յուսուֆը խաչելով սպանեց նրան և ինքը տեր դարձավ Հայաստանի (914 թ.):

Սմբատի որդի Աշոտը, իր երկրին հասած աղետը տեսնելով, զորք հավաքեց և հարձակվեց պարսիկների վրա, մի առ մի գրավեց նրանց տիրած բերդերը, ջարդեց զորքը և Հայաստանի իշխանությունն իր ձեռքը առավ: Յուսուֆը մի նոր բանակ ուղարկեց Հայաստան և ինքն էլ անձամբ Դվին գալով, երկու կողմից սկսեց աղետալի պատերազմը, որ 13 տարի տևեց: Այս պատերազմների մեջ շատ գյուղեր ու քաղաքներ ավերակ դարձան, շատ մարդիկ կոտորվեցին, երկրագործությունը դադարեց, հունձը փչացավ և երկրում տիրեց ընդհանուր սով: Վերջապես Աշոտը գնաց Պոլիս և հույների կայսրից օգնական զորք ստանալով եկավ Հայաստան:

Հույների օգնության լուրը լսելով, Յուսուֆը շփոթվեց և մտածեց նոր երկպառակությամբ նվաճել հայերին. Աշոտ Սպարապետին կանչեց իր մոտ և նրա գլխին թագ դնելով արձակեց: Երկու Աշոտների միջև սկսեց պատերազմը, որ տևեց մի քանի տարի և

հազիվ վերջ գտավ կողմերի հաշտությամբ:

Աշոտի վարմունքն ունեցավ իր հետևորդները. գրեթե բոլոր նախարարները մեծ ու փոքր ապստամբեցին Աշոտի դեմ և Աշոտ իր ամբողջ ժամանակն անցկացրեց մի առ մի ապստամբությունները զսպելով: Մյուս կողմից Յուսուֆը շարունակում էր կռիվն իր զորավարների ձեռքով և ուզում էր բռնել Աշոտին: Այս ներքին ու արտաքին կռիվներից զզված, Աշոտ քաշվեց Սևանա կղզին, Հայաստանը թողնելով ապստամբ իշխանների և ասպատակող պարսիկների ձեռքը: Այս միջոցին կազմվեց Գևորգ Մարզպետունու հայդուկային խումբը, որ շարունակ հարձակումներ էր գործում պարսիկների դեմ: Պարսիկները եկան ու պաշարեցին Սևանն էլ. դուրս եկավ Աշոտ, մյուս կողմից հասավ Գևորգ Մարզպետունին և երկու կողմից պաշարելով թշնամուն, այնպիսի մի ջարդ տվին նրանց, որ մինչև Դվին փախան և այլևս չվերադարձան: Աշոտ դուրս եկավ Սևանից և մնացյալ ժամանակը խաղաղությամբ կառավարեց երկիրը, իր այնքան տարիների աննկուն քաջության համար ստանալով **Երկաթ** տիտղոսը:

Ըստ Գելցերի, էջ 922, Աշոտը արաբ խալիֆայից ստացավ Շահընշահ տիտղոսը, որով ճանաչեց նրա գերիշխանությունը Արծրունյաց, Աղվանից, Վրաց և Աբխազաց քրիստոնյա թագավորությունների վրա:

107. ԲՈՒՅԻՆԵՐԻ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

10-րդ դարի կեսին բույի ցեղին պատկանող երեք եղբայրներ, իրենց քաջությամբ և փոխադարձ օգնությամբ հաջողում են հիմնել պարսկական մի նոր պետություն: Նրանցից առաջինը գրավում է Ֆարսի նահանգը և Շիրազը դարձնում է իր թագավորության մայրաքաղաքը. երկրորդը տիրում է Իրաղին՝ Սպահան մայրաքաղաքով, իսկ երրորդը գրավում է Քիրմանը: Քիրմանի թագավորը ավելի զորանալով, արշավում է Բաղդադի վրա, գրավում քաղաքը և խալիֆային գահազուրկ անելով, մի ուրիշին է նշանակում նրա փոխարեն: Ինքը վերցնում է իր վրա «խալիֆայի ստրուկ» տիտղոսը, բայց իրապես դառնում է արաբական պետության քաղաքական տերը, կրոնական իշխանությունը միայն թողնելով խալիֆային:

Այսպիսով Պարսկաստանում ձևանում է երկու մեծ պետություն.

Սամանիների թաթարական պետությունը, որ գրավում էր Թուրքեստանը և Արևելյան Պարսկաստանը, և բույիների պարսկական պետությունը, որ տիրում էր Հարավային Պարսկաստանին և Բաղդադի արաբական իշխանության:

Սակայն Բույիների պետությունը մի ամբողջություն չէր կազմում. նա բաժանվել էր զանազան իշխանությունների միջև, որոնք թեև պատկանում էին միևնույն գերդաստանին, բայց լարված էին միմյանց դեմ անհաղթ թշնամությամբ: Հարևան ղազնևիների սուլթանությունը, որ երկյուղ էր կրում բույիների պետությունից և Պարսկաստանի վրա աչք ուներ, շարունակ գրգռում էր նրանց միմյանց դեմ: Այս ներքին կռիվները թուլացրին բույիներին և մի դար չանցած, նրանք հարձակվեցին Արևելքից արշավող ղազնևիների և հյուսիսից արշավող սելջուկների ձեռքը:

108. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ. ՉՄՇԿԻԿ

Հույների կայսրությունը, որ Հուստինիանոս կայսրից հետո արաբական արշավանքների, սլավոնական հարձակումների և պատկերամարտության կռիվների պատճառով շատ էր ընկել, մի նոր փայլով սկսեց փայլել հայկական հարստության ժամանակ:

Արդեն Հուստինիանոսի օրից սկսած, հույն կայսրերը սովորություն էին արել բազմաթիվ հայեր գաղթեցնել հունական կայսրության զանազան կողմերը, Փոքր Ասիա, Թրակիա և Մակեդոնիա: Զինվորական գաղթականություններ էին սրանք և հաստատված էին այդ սահմաններում՝ պաշտպանելու համար երկիրը ասպատակող արաբների, սլավոնների և հագարացիների դեմ: Հատկապես Փոքր Ասիայում ճիավոր զինվորների բանակը հայերից էր կազմված: Հայերը տվին պետության ամենամեծ պաշտոնյաները և զորավարները, որոնք պահեցին հունական կայսրությունը, իրենց քաջությամբ և խելքով: Քանի՜-քանի՜ հայ զորավարներ բարձրացան կայսերական աստիճանի, ինչպես Մորիկը, Փիլիպիկոս Վարդանը, Լևոն Ե-ը, նույնպես նաև Մժեժ և Արտավազդ կայսրերը: 9-րդ դարում մակեդոնացի մի հայ Վասիլ անվամբ, հանճարեղ, կրակոտ և եռանդուն մի անձ, որ հունական պալատի սիրելին էր դարձել, թագուհու թելադրությամբ սպանելով կայսեր, նրա տեղն անցավ: Այդ օրից սկսվում է հույների

պատմության առանձին մի շրջանը, որ կոչվում է հայկական հարստություն և տևելով մեկուկես դար, կազմում է հունական պատմության ամենափառավոր շրջանը (867-1028 թթ.): Այս շրջանին է, որ հույները հասնում են նորից այն մեծության և փառքին, որին տիրացել էր հին բյուզանդական կայսրությունը՝ նախքան արաբական արշավանքները: Երկիրը ծաղկեց հարյուրավոր եկեղեցիներով և վանքերով, իմաստուն օրենքներով, ամուր պարիսպներով, պետության սահմաններն ընդարձակվեցին, սարակինոս ծովահենները, որոնք Աֆրիկայից, Կրետեից և Կիլիկիայից շարունակ ասպատակում էին Հունաստանի ծովեզերքը, ջարդվեցին, Կրետեն գրավվելով, մեջի մահմեդականները վռնդվեցին կամ քրիստոնյա դարձան, հետո գրավվեցին Կիպրոսն ու Կիլիկիան, և այսպիսով նորից ձեռք բերվեց ծովերի տիրապետությունը, սլավոնական ցեղերը, որոնք հունական պետության սարսափն էին, ընկճվեցին ու զսպվեցին: Ռուսները, որ իրենց Եգոր իշխանի առաջնորդությամբ 40 000 հոգով մայրաքաղաքի վրա էին արշավել ծովի կողմից, այնպիսի ջարդ կրեցին, որ էլ նոր արշավանքի փորձ չարին. բուլղարների պետությունը մի քանի անգամ պարտվեց, խորվաթներն ստիպվեցին ընդունել Պոլսի գերիշխանությունը և այսպես Դանուբից մինչև Եփրատ ու Տիգրիս հույն զենքի զորությունը ճանչցան:

Պետությունն իր գերագույն աստիճանին հասցրեց Չմշկիկ հայ կայսրը, որ դուրս եկավ արաբական զորությունը խորտակելու համար Ասիայում: Իր առաջին հաջողությունների վրա բոլոր արաբները միացան հույների դեմ. Բաղդադի խալիֆան կրոնական արշավանք հայտարարեց. արևմուտքի արաբները, այն է Եգիպտոսի Ֆաթիմյանները, որոնք իրենց իշխանությունը տարածել էին Ասորիքում, ձեռք կարկառեցին արևելյան մահմեդականներին, Բաղդադի արաբներին: Չմշկիկը անձամբ իր բանակի գլուխն անցած արշավեց նրանց վրա (974 թ.). իրար հետևից ընկան Միջագետքի և Ասորիքի նշանավոր քաղաքները՝ Ամիդը, Մարտյուրոպոլիսը, Լիբանանը, Բեյրութը, Դամասկոսը և այսպիսով արաբական պետության ուժը խորտակվելով, քաշվեցին նրանք Եփրատից ու Տիգրիսից այն կողմ և մինչև իսկ շատ մահմեդական էմիրներ հույներին հարկատու դարձան:

109. ԱՆԻԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ

Արաբների անկումն ամենից ավելի նպաստեց հայոց Բագրատունի պետության հզորացման: Աշոտ Երկաթից հետո Հայաստանը մեկ դար ամբողջ խաղաղություն է վայելում. հայերը հաշտության դաշինք են կապում Ատրպատականի իլխանության և Դվինի ոստիկանի հետ. շինարար թագավորներ ձեռք են զարնում երկրի շինության և ժողովրդի բարօրության գործին: Իրենց ուշադրության գլխավոր առարկան է դառնում Անի մայրաքաղաքը, որ պարիսպների կրկնակի շարքով ամրացնում են և հոյակապ եկեղեցիներով, չքնաղ պալատներով և ուրիշ գեղեցիկ շենքերով զարդարում են: Ժողովրդի բարօրությամբ, վաճառականության զարգացմամբ և կրթության ծավալմամբ երկիրը ծաղկում է, աճում ու հարստանում: Զորավոր մի բանակ, որ մինչև 90 000 հոգու էր հասնում, ապահովում է երկրի հանգստությունը. թշնամիներն ակնածում են Հայաստանի զորությունից և հանդուգն արշավանքները պատժվում են. այսպես հաջողությամբ է վանվում աբխազների արշավանքը, որոնք ցանկանում էին գալ Կարսի վրա. Համդուն արաբ ոստիկանը, որ ամիրապետի դեմ ապստամբելով, Միջագետքն ու Ատրպատականը ասպատակելուց հետո, Հայաստան էր արշավել, հաղթվում է, ինքն էլ բռնվում է և սպանվում: Հույների Չմշկիկ կայսրը, որ արաբների դեմ արշավելու ժամանակ հանդգնությամբ մտել էր Հայաստան, հայոց զորությունը տեսնելով իր մտադրությունից հետ է քաշվում և հայոց օգնությունն է խնդրում արաբների դեմ: Այսպես Հայաստանը դառնում է մեծ և ազդեցիկ մի տերություն, և Արևելքի ընդհանուր քաղաքական կյանքին տեր է կանգնում հակառակ արաբների, որոնք հետզհետե հետ են քաշվում և ամփոփվում հարավային ու արևելյան սահմանների մեջ:

Խաղաղության այս շրջանին էլ Հայաստանը պառակտվում է. կազմվում են մի շարք մանր-մունր թագավորություններ. այսպես, Կարսի թագավորությունը (968 թ.), Ռշտունյաց և Անձևացյաց թագավորությունները, Սյունյաց թագավորությունը (970 թ.), Կյուրիկեի Բագրատունյաց թագավորությունը Լոռիում (980 թ.) և այլն: Բարեբախտաբար այս բոլոր թագավորություններն էլ գրեթե միշտ հաշտ ու սիրով են մնում միմյանց հետ, Անիի կենտրոնական թագավորությունը զիջող դիրք է բռնում դեպի մյուսները և նրանց վրա իր ունեցած բարոյական հեղինակությամբ բավականանում է:

110. ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ. ԲԱԳՐԱՏ Գ ՄԵԾ

Վրաստանն ընդհանրապես Հայաստանի վիճակին բախտակից է եղած. այն բոլոր հարվածները, որոնք զարկին Հայաստանը, քիչ հետո հարվածեցին նաև Վրաստանը: Տարբերությունն այն էր, որ հարվածի առաջին թափը հայերը կրելով, վրացիք մի քիչ ավելի հանգիստ էին զգում: Հույն-արաբական հակամարտության ժամանակ Վրաստանն էլ երկու տերության ձեռքում խաղալիք դարձավ: Արևելյան մասն անցավ արաբներին, որոնք Տփղիսում մի ամիրա դրին իբրև երկրի կառավարիչ. իսկ արևմտյան մասը գտնվում էր հույների ձեռքում:

Արաբների անկման ժամանակ, երբ արևելքի ազգերը մեկիկ-մեկիկ սկսեցին թոթափել արաբական լուծը, վրացիք էլ սկսեցին անկախության ձգտել: Առաջին անգամ Աբխազիայի Լևոն իշխանը թագավորական թագ կապեց և երկիրը անկախ հայտարարեց (746 թ.): Այնուհետև գրավեց Արևմտյան Վրաստանը և մայրաքաղաք դարձրեց Քութայիսին: Սրանից քիչ հետո վրաց Աշոտ Մեծ իշխանը (786 թ.), Կախեթիայի իլխանին հաղթելով, Արևելյան Վրաստանն իր իշխանության տակ առավ: Այսպիսով կազմվեցին երկու վրացական պետություններ:

Աբխազիայի թագավորության մեջ գահակալության կռիվներ ծագելով, ժողովուրդն ավելի լավ համարեց կանչել Արևելյան Վրաստանի թագավոր Բագրատ Գ-ին և երկիրը նրան հանձնեց: Այսպիսով Վրաստանը մտավ մի գայիսոնի տակ (985 թ.):

Բագրատն այնուհետև շարունակելով երկրի միացման գործը, մի կողմից նվաճում էր տեղական վրացի մանր իշխաններին և մյուս կողմից արաբների գրաված հողերը հետ էր խլում: Այսպիսով Բագրատն այնքան զորացավ, որ կոչվեց Մեծ և իր վրա վերցրեց **Շահնշահ** տիտղոսը: Իր մահվան ժամանակ (1014 թ.) միայն Տփղիսն էր մնացել արաբների ձեռքում:

111. ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

Տրիբուրի դաշինքից հետո, Գերմանիան առանձին թագավորություն կազմելով, հետամուտ եղավ կայսրություն դառնալու: Զանազան թշնամի ցեղեր հյուսիսից ու արևելքից նեղում էին իրեն.

այսպես նորմանները հյուսիսից, սլավոնական ցեղերը, չեխերը, լեհերը, վենետները, մանավանդ մորավները արևելքից: Գերմանացիք դյուրությամբ կարողացան ընկճել նորմաններին, որոնք արդեն բավական թուլացել էին. բայց անկարող եղան մորավական մեծ պետության հետ չափվելու. սրա համար գերմանացիք դաշնակցեցին վայրենի հունգարացիների հետ, որոնք արևելքից թափվելով Մորավիայի վրա, վերջ տվին նրանց անկախության: Սրանից հետո Գերմանիայում սկսվեց ավատականության կռիվը. Գերմանիան ուներ 4 մեծ դքսություն և սրանցից յուրաքանչյուրը ձգտում էր անկախ թագավորություն ձեռք բերելու. այս կռիվները երկար ու աղետալի դարձան և ամբողջ միջին դարը տևեցին:

Հունգարացիք մորավական պետությունը կործանելուց և Գերմանիայի արևելյան կողմը հաստատվելուց հետո, հիմա էլ իրենց արշավանքը դարձրին Գերմանիայի դեմ: Սոսկալի եղան այս կռիվները. գերմանացիք նրանց դիմադրելու համար հաստատեցին պարտադիր զինվորական ծառայություն. 15 տարեկանից վեր ամեն մարդ զինվոր պիտի լիներ և առաջին զորակոչին պարտավոր էր ներկայանալ. անսաստողները մահվան պատիժ պիտի կրեին: Երկարատև պատերազմների մեջ ամենից վճռականը մղեց Օթոն Ա Մեծը, որ Ավգսբուրգի ճակատամարտում 100 000 հունգարացի կոտորեց. այս խոշոր պարտությունը այնպես ընկճեց հունգարներին, որ այլևս նրանք չհամարձակվեցին իրենց տեղից շարժվել (955 թ.):

Հունգարացիների պարտությունից հետո Օթոնը նվաճեց լեհերին, վենետներին, հարձակվեց բարբարոս դինիացիների վրա և երկիրը նվաճելուց հետո, հաշտվեց նրանց հետ այն պայմանով, որ ընդունեին քրիստոնեությունը:

Այս ժամանակ Իտալիան քառասային վիճակ էր ներկայացնում. թագավորությունը վերջացել էր. տասնյակներով դքսություններ, անկախ եկեղեցական վիճակներ (ինչպես Հռոմը, Միլանը, Պավիան), ազատ քաղաքներ (ինչպես Վենետիկը, Ջենովան), միմյանց դեմ անդադար պատերազմի մեջ էին: Վերջապես կանչեցին Օթոնին խաղաղացնելու համար երկիրը: Օթոնը մտավ Իտալիա, ամբողջ երկիրը Գերմանիայի իշխանության տակ առավ և ինքն էլ Հռոմում կայսր պսակվեց (962 թ.). մնաց միայն Իտալիայի հարավային մասը, որ գերմանացիք չկարողացան նվաճել և մնաց հույների ձեռքում:

Օթոնի հաջորդները աշխարհակալության գործը ավելի առաջ տարան. նվաճեցին Զվիցերիան, Բուրգունդիան, Պրովանսը, հարկատու դարձրին Չեխիան և Հունգարիան իրենց հնազանդեցրին. Հենրիկոս Գ կայսեր ժամանակ (1039-1066 թ.թ.) գերմանական կայսրությունն իր մեծության գագաթնակետին էր հասել:

112. ԴԱՆԻԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ. ՔԱՆՈՒԹ ՄԵԾ.

Ալֆրեդ Մեծի հաջորդների ժամանակ Անգլիայի թագավորական տան մեջ խռովություն սկսեց. ժառանգորդներն սկսեցին միմյանց կոտորել. Անգլիայի ուժը թուլացավ. դանիացիք առիթից օգուտ քաղելով, մեծ բազմությամբ Անգլիայի վրա հարձակվեցին. թագավորը, որ ուժ չուներ նրանց դիմադրելու, դավադրություն կազմակերպեց և մեկ օրում ամբողջ դանիացիներին կոտորեց (1002 թ.): Սրա վրա դանիացիք կատաղած, ավելի մեծ բազմությամբ հարձակվեցին երկրի վրա և վրեժ լուծելու համար ամեն կողմ այրելով, ավերելով ու կոտորելով ամբողջ Անգլիային տեր դարձան:

Դանիայի մեծագույն թագավորն եղավ Քանութը (1017 թ.), որ չբավականանալով Դանիայի, Անգլիայի և Սկովտիայի տիրապետությամբ, նվաճեց նաև Շվեդիան ու Նորվեգիան: Նա եղավ իմաստուն թագավոր և դրավ խելացի օրենքներ. բարի ու բերապաշտ մարդ լինելով, հսկեց որ դանիացիների ճնշումները վերանան անգլիացիների վրայից և ոչ ոք դժգոհության առիթ չունենա: Ինքն ընդունեց քրիստոնեությունը և քարոզիչներ ուղարկեց Շվեդ և Նորվեգիա, որոնք այդ երկրներում էլ կռապաշտությունը վերջացրին և բարբարոս ժողովուրդների բարքերը մեղմելու աշխատեցին:

113. ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

10-րդ դարում բուլղարական պետությունն իր մեծության գերագույն աստիճանին հասավ: Առաջին քրիստոնյա թագավոր Բորիսի որդի Սիմեոնը եղավ նրանց նշանավոր թագավորը (893-927 թ. թ.): Հույները տեսնելով բուլղարների առաջադիմությունը, դաշնակցեցին վայրենի հունգարացիների հետ և երկու

կողմից միաժամանակ հարձակվեցին նրանց վրա: Բուլղարները կանչեցին ավելի բարբարոս պեչենեգներին և Բեսարաբիայի դաշտավայրերում այնպես ջարդեցին հունգարներին, որոնք դեպի արևմուտք քաշվելով, հաստատվեցին վերջնականապես Թեյսի և Դանուբի միջև եղած երկրում. այդ դարձավ իրենց հայրենիքը, ուր և մնում են մինչև այսօր: Հունգարներին ջարդելուց հետո, Սիմեոնն արշավեց հույների վրա, նրանց էլ կոտորեց, գրավեց Ադրիանուպոլիսը և առաջացավ մինչև Կոստանդնուպոլիս (913 թ.): Հույներն իրենց բոլոր զորությունը Ասիայից ու Եվրոպայից կենտրոնացրին նրա դեմ, բայց իրենց զորավարների նախանձի ու մրցակցության պատճառով չկարողացան հաղթել բուլղարներին: Սիմեոնը տիրեց Բալկանյան թերակղզու մեծ մասին. նրան էին հպատակվում բացի Բուլղարիայից Ռումինիան, Սերբիան, Տրանսիլվանիան, Մակեդոնիան, Ալբանիան, Թեսալիան և Եպիրոսը. իր մայրաքաղաքը փոխադրեց Բրեսլավ, ուր հիմնեց նաև հույներից անկախ բուլղարական պատրիարքական իշխանություն և այնպես առաջ տարավ բուլղարական գրականությունը, որ այդ շրջանը կոչվում է Ոսկեդար:

Այսպիսի հաջողության հասնելուց հետո, Սիմեոնը վերցրեց իր վրա «Ցար բուլղարաց և ինքնակալ հոռոմոց» մեծ տիտղոսը, ինչ որ ցույց էր տալիս, թե ինքը նպատակ ուներ տիրելու Բյուզանդիային և Բրեսլավի պատրիարքական աթոռը դարձնել տիեզերական պատրիարքություն: Հույները բուլղարների ուժը խորտակելու համար նրանց դեմ հանեցին սերբերին և խորվաթներին. Սիմեոնը դաշնակցեց արաբների հետ և որոշեց ծովից ու ցամաքից հարձակվել Պոլսի վրա. հույները կարողացան սիրաշահել արաբներին և հեռացնել դաշնակցությունից. Սիմեոնը հասավ Պոլսի պարիսպներին, բայց վախեցավ հարձակվել. սերբերը մյուս կողմից հաղթեցին բուլղարներին. նույն տարին Սիմեոն ցարն էլ մեռավ և սկսեց բուլղար պետության թուլացումը (927 թ.): Սիմեոնի որդին ստիպվեց հաշտվել հույների հետ և իբր նշան բարեկամության, ամուսնացավ կայսեր թոռան հետ: Բուլղարներն ընկան հույների ազդեցության տակ. Սերբիան բաժանվեց. մյուս կողմից բաժանվեցին Մակեդոնիան և Ալբանիան և կազմեցին նոր թագավորություն:

Հույները այսչափով չգոհացան և ուզում էին իսպառ ջնջել բուլղարական պետությունը. այս պատճառով նրանք դաշնակցեցին ռուսների Սվյատոսլավ իշխանի հետ և նա իր ավազակ

ծովահեններով արշավեց Բուլղարիա (965 թ.): Նրանք այնպիսի ջարդ ու ավեր սփռեցին Բուլղարիայում, որ հույներն իրենք էլ վախեցան և շուտով հաշտություն կապեցին բուլղարների հետ՝ ռուսներին ետ վանելու համար: Այդ միջոցին պեչենեգները արշավեցին Ռուսիայի վրա և Սվյատոսլավը Բուլղարիան թողնելով շտապեց Կիև: Պեչենեգներին քշելուց հետո, նա նորից դարձավ Բուլղարիա, հաղթեց, գերի բռնեց թագավորին, նվաճեց Բուլղարիան, հետո մտավ Թրակիա, առաջ Ֆիլիպե քաղաքը և Ադրիանուպոլսի մոտ ճակատ հարդարեց հույների դեմ: Չմշկիկ կայսրը անձամբ եկել էր դիմադրելու բարբարոսներին: Հույները հաղթեցին, բուլղարների թագավորին ազատեցին և ռուսներին հետ քշեցին: Բուլղարները կարծում էին, որ Չմշկիկը եկել էր ազատելու իրենց, բայց նա ռուսներին քշելուց հետո, Բուլղարիան էլ նվաճեց և իր պետության միացրեց (972 թ.):

Բուլղարիայի նվաճումով բուլղարական պետությունը չվերջացավ. բուլղար իշխան Շիշման Ա-ը, որ Մակեդոնիան և Ալբանիան բաժանելով մայր երկրից ինքնագլուխ իշխում էր «ցար» տիտղոսով, շարունակեց իր թագավորությունը: Նրա որդի Սամվելը մայրաքաղաքը հաստատեց Օխրիդա քաղաքում և երբ լսեց Չմշկիկ կայսեր մահը, ոտքի հանելով բոլոր բուլղարներին, մտավ Թրակիա և Թեսալոնիկե: Չմշկիկի հաջորդ Վասիլ կայսրը դուրս եկավ նրա դեմ, բայց չարաչար հաղթվեց. Սամվելը տիրեց Դուրացցոյին, Ադրիատիկի ափերին, Բոսնիային, Սերբիային, ասպատակեց Պելոպոնեսը և այսպես վերականգնեց մի մեծ բուլղարական պետություն: 15 տարի հետո Վասիլը նոր զորությամբ հարձակվեց բուլղարների վրա, գրավեց նրանց քաղաքները, 15 000 գերի բռնեց ու կուրացրեց, որոնց ցավին չդիմանալով Սամվելը սրտի կսկիծից մեռավ (1014 թ.): Իր հաջորդները 4 տարի ևս շարունակեցին իրենց կռիվը, բայց նրանք էլ ընկան և ամբողջ բուլղարական պետությունը կործանվեց (1018 թ.). բուլղար գերիները մեծ բազմությամբ Հայաստան վտարվեցին:

114. ՂԱԶՆԵՎԻՆԵՐԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բուխարայի արքունիքի իշխաններից մեկը՝ Ալփթեկին, ինչ-որ դժգոհության պատճառով քաշվեց Ղազնա, որ Քաբուլի մոտ մի փոքր քաղաք էր, Աֆղանստանի և Հնդկաստանի սահմանում:

Նվաճելով շրջակա քաղաքները, Ալփթեկին հիմնեց մի նոր սուլթանություն, որ մայրաքաղաքի անվամբ կոչվում է Ղազնի (10-րդ դարի վերջում): Սկզբում այդ սուլթանությունը շատ աննշան էր, բայց շուտով սկսվեց մի սրբազան պատերազմ Հնդկաստանի կռապաշտ թագավորների դեմ: Այդ ժամանակ բուդդայական կրոնը ստուգությամբ սկսել էր ջնջվել Հնդկաստանից. զանազան կրոնների մրցությունից և չորս կողմը վխտացող թաթար և մահմեդական ցեղերի արշավանքներից առաջացել էր մի նոր կրոն, որ կոչվում է հնդկական կրոն և որի հիմքն է բրահմանականությունը՝ նոր ձևափոխությամբ:

Թաթար սուլթանները մահմեդականի մոլեռանդությամբ վառված, արագությամբ նվաճեցին շատ հնդկական ռաջաների, որոնց հողերին տեր դառնալով, աշխատում էին մահմեդական կրոնն էլ տարածելու նրանց մեջ: Այսպիսով Ղազնի սուլթանությունը մեծանալով ու անբավ հարստություն դիզելով. միաժամանակ մահմեդականների աչքում մեծ փառքի ու պատվի արժանացավ: Երբ սամանիների պետության դեմ ծագեց տեղական ապստամբություն, թագավորը դիմեց Ղազնի սուլթանին, որ ապստամբներին նվաճելով, իբր վարձ ստացավ Խորասանի նահանգը:

Ղազնի սուլթանների մեջ ամենից նշանավորը դարձավ Մահմուդը, որ իր իշխանությունը Բաղդադի խալիֆայի ձեռքով նվիրագործելուց հետո, դուրս եկավ աշխարհակալություններ անելու: Անցավ Գանգեսի հովիտը (1001 թ.), նվաճեց Քաշմիրը, Լահորը, Մուլթանը, Փեշավերը, ամբողջ Փենջաբը, և այսպես հիմնեց Հնդկաստանի թուրքական հարստությունը (1001-1526 թթ.): Այնուհետև դարձավ դեպի արևմուտք, նվաճեց Աֆղանիստանը, Բելուջիստանը, Սեյիստանը, սամանիների պետության վերջ տալով առավ Խորասանը և Իրաղը ու այսպիսով գրեթե ամբողջ Պարսկաստանին տեր դարձավ: Թաթարների խանը Խոթենի (Արևմտյան Չինաստան) մոնղոլ թագավորի հետ արշավեց նրա վրա, բայց մեծ ջարդ կրելով ետ քաշվեց: Մահմուդ չմտավ Թաթարիստան և Օքսոս գետի առաջ կանգ առավ: Արդեն սկսել էր սելջուկների արշավանքը, որ Ղազնի սուլթանության արևմտյան մասի համար մի մեծ սպառնալիք պիտի դառնար:

115. ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՇԱՆՈՒՄԸ

Բաղդադի խալիֆաները, չկարենալով դիմադրել ամեն կողմ ծագող ապստամբություններին, պետական ծառայության էին կանչել թուրք զորքերը Միջին Ասիայի իրենց հպատակներին, որոնք շատ հարգված էին իրենց քաջությամբ: Թուրք զորքերը առանձին գունդերով տարածվել էին ո՛չ միայն Բաղդադում, այլև Եգիպտոսում, Փոքր-Ասիայում, Ասորիքում և բոլոր սահմանների վրա: Երբ թուրքերը բազմացան ու զորացան, սկսեցին իրենք էլ ըմբոստանալ և այլևս խալիֆաների հրամանին ուշադրություն չէին դարձնում: Այսպես կազմվեցին արաբական պետության զանազան կողմերը թուրք-մոնղոլական առանձին պետություններ, ինչպես էին Սամանիների և Ղազնևիների սուլթանությունները (10-րդ դարի վերջը):

Թուրք ցեղերից սելջուկները Կասպից ծովի հարավային եզերքով դիմեցին դեպի արևմուտք. սելջուկների մեջ նշանավոր եղավ Տուղրիլ բեկը, որ իր ավազակային խմբով Միջագետքը տակնուվրա անելուց հետո, մտավ Հայաստան: Արծրունյաց Սենեքերիմ թագավորը իր բոլոր զորությամբ թշնամու դեմ ելավ, բայց հաղթվելով ետ քաշվեց: Տուղրիլը շարունակեց իր ասպատակությունները, մտավ Բագրատունյաց տերության սահմաններից ներս և կողոպտելուց հետո քաշվեց Պարսկաստան: Արծրունյաց Սենեքերիմ թագավորը, տեսնելով որ անկարող է լինելու իր տերությունը պաշտպանել այս նոր թշնամու դեմ, բանակցության մեջ մտավ հույների կայսեր հետ և իր երկիրը նրան հանձնելով, գաղթեց Սեբաստիա, ուր հիմնեց Սեբաստիայի Արծրունի թագավորությունը, հույների գերիշխանության տակ (1021 թ.): Նրա հետ գնաց նաև հայ ժողովրդի մի ստվար խումբ, որի թիվը անշուշտ չափազանցությամբ 400 000 են հաշվում: Այս եղավ առաջին նշանը Հայաստանը դատարկելու հայերից և արևելյան գավառները թողնելով դեպի արևմուտք տարածվելու:

Նույն միջոցին Տուղրիլ բեկը Խորասանում իրեն թագավոր էր հռչակում և Իրաղը, Մուսուլը, Բաղդադը գրավելով, բույիների տերության վերջ էր տալիս և ղազնևիներին դեպի արևելք քշելով, ամբողջ Պարսկաստանն իր իլխանության տակ էր առնում:

116. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Մինչդեռ Արծրունյաց թագավորությունը Սեբաստիա փոխադրվելով Հայաստանի հարավային և արևելյան մասը հույների իշխանության տակ էր մտել, մյուս կողմից, հյուսիսում դեռ շարունակվում էր Բագրատունյաց թագավորությունը, ինչպես նաև մյուս մանր թագավորությունները:

Այս միջոցին վրաց Գեորգի Ա թագավորը, Բագրատ Մեծի որդին և հաջորդը, իր հոր գործը շարունակելով և օգուտ քաղելով բուլղարական պատերազմներից, արշավեց հույների վրա՝ խլելու համար Պոնտոսը և Վրաստանի հարակից այն հողերը, որոնք ենթարկվել էին հույների կայսրության: Հույների Վասիլ կայսրը անճամբ եկավ նրա դեմ, հաղթեց, Վրաստանն ամբողջովին միացրեց իր իշխանության և մինչդեռ Հայաստանի սահմանները քերելով վերադառնում էր, Բագրատունյաց Հովհաննես-Սմբատ թագավորը, որ ծածուկ օգնություն էր հասցրել վրացիներին, կարծելով, թե կայսրը Հայաստան էլ պիտի մտնի պատժելու համար իրեն, վախեցավ և երդման թուղթ ուղարկեց նրան, որով խոստանում էր Անին իր մահից հետո կայսեր տալ: Կայսրը այս անակնկալ հաջողության վրա ուրախացած, առանց Հայաստան մտնելու, գնաց իր երկիրը: Մի ժամանակ հետո Վասիլը մեռավ և երդմնաթուղթը անցավ իր հաջորդին: Սա իր մահվան անկողնում խղճահարվելով եղած անարդարության վրա, երդմնաթուղթը հանձնեց Կիրակոս անուն մի հայ քահանայի, որպեսզի տանի իր թագավորին հանձնի: Կիրակոսը խարդախությամբ պահեց երդմնաթուղթը և մեծ գումարով վաճառեց նրա հաջորդին:

Հովհաննես-Սմբատը անորդի մեռնելով, իր մահից հետո հայոց մեջ սկսեց ժառանգության կռիվ. կազմվել էր երկու կուսակցություն. առաջինը, որի գլուխն էր Վահրամ Պահլավունի սպարապետը, պահանջում էր գահը հանձնել Բագրատունյաց միակ ժառանգ Գագիկին, որ Յովհաննես-Սմբատի եղբորորդին էր, իսկ մյուսը՝ Սյունյաց Վեստ-Սարգիս իշխանին, որ պետության խնամակալն էր: Այս միջոցին վրա հասան կայսեր դեսպանները և պայմանի համաձայն Անին պահանջեցին: Հայերը մերժեցին: Կայսրը բարկացած, ուզեց զենքի զորությամբ լուծել հարցը. երեք անգամ իրար հետևից բանակ ուղարկեց Հայաստան, բայց այս բոլորը անօգուտ անցավ: Չորրորդ անգամ 100 000 հոգուց

բաղկացած մի բանակ եկավ, Անին պահանջեց. մյուս կողմից Աղվանից թագավորը սկսեց գրավել Հայաստանի հյուսիսային-արևելյան գավառները: Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունին հանկարծական հարձակումով ընկավ թշնամու վրա, 20 000 հոգու ջարդեց և հույներին Հայաստանից դուրս քշեց: Այս հաղթության վրա Վահրամյանները շտապեցին Գագիկին թագավոր օծել: Վեստ Սարգիսը տեսնելով իր անհաջողությունը, ապստամբեց նրա դեմ. Գագիկը հաղթեց նրան, բանտարկեց, բայց հետո նրա քաղցր խոսքերից խաբվելով, ներեց և բարձր պաշտոնների հասցրեց:

Բայց Վեստ Սարգիսն իր վրեժը չէր մոռացել. եթե նրան չհաջողվեց թագավոր դառնալ, թող Գագիկն էլ չվայելի. ուստի շարունակ աշխատեց Գագիկի մոտից հեռացնել Վահրամյաններին և իր կուսակիցներին առաջ քաշել. երբ կուսակիցները բավական շատացան, դիմեց հույներին և գրգռեց, որ Անիի պահանջումը նորոգեն: Կայսրը նոր դեսպաններ ուղարկեց և Անին պահանջեց. Գագիկը մերժեց. կայսրը դարձյալ պատերազմի դիմեց և երկու անգամ իրար հետևից ուղարկեց իր բանակները Անին գրավելու: Գագիկը երկու բանակներն էլ ջարդեց: Այն ժամանակ հույների կայսրը Վեստ Սարգսի խորհրդով Գագիկին Պոլիս կանչեց, իբր թե Անիի խնդիրը բարեկամաբար կարգադրելու և հայոց ու հույների միջև հաշտության դաշինք կնքելու: Վեստ Սարգիսն իր կուսակիցներով հորդորեց Գագիկին լսել կայսեր հրավերը, երդվելով որ Անին իրենք ցմահ կպաշտպանեն: Գագիկն ստիպվեց գնալ Պոլիս. բայց այնտեղ բանտարկվեց. մյուս կողմից Վեստ Սարգիսը բանակցության մտնելով կայսեր հետ, Անիի բանալիները ուղարկեց նրան: Գագիկն ստիպվեց հրաժարվել թագավորությունից և Փոքր Ասիայի քաղաքներից մեկը քաշվեց: Հույները մի նոր բանակ ուղարկեցին Անին գրավելու. հայերը դուրս եկան և հույների զորքը կոտորելով ետ քշեցին. բայց երբ լսեցին, որ Գագիկը հրաժարվել է թագավորությունից, հաղթված զորավարին ետ կանչեցին և Անին նրան հանձնեցին: Այսպես վերջացավ Անիի Բագրատունյաց թագավորությունը, իսկ Կարսի և մյուս մանր թագավորությունները դեռ շարունակում էին իրենց գոյությունը (1046 թ.):

117. ՆՈՐՄԱՆԴԱՑԻՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Երբ դանիացիք տիրեցին Անգլիային, բնիկ սաքսոնացի արքայական իշխանները փախան Նորմանդիա, Ֆրանսիայի հյուսիսային կողմը գտնված այս նահանգը, որի ժողովուրդը թեև նախապես նորման, բայց հիմա արդեն լեզվով ու քաղաքակրթությամբ ֆրանսիացի էր դարձել. դանիացիք չկարողացան երկար մնալ Անգլիայում. սաքսոնները քշեցին Քանութի հաջորդներին երկրից դուրս և Անգլիայի հին թագավորությունը վերականգնեցին, գահը հանձնելով Նորմանդիա փախած մի իշխանի (1042 թ.): Սա անորդի լինելով, խոստացավ գահը տալ նորմանդացի դուքս Գիյոմին, որ իր ազգականն էր: Սաքսոնները չուզեցին օտար թագավոր և ուրիշ մի սաքսոն իշխան գահ բարձրացրին: Գիյոմն իր իրավունքը ձեռք բերելու համար իր գլուխը հավաքեց նորմանդացի և ֆրանսիացի բազմաթիվ ասպետների, զինվորականների և բախտախնդիրների և նրանցով բանակ կազմած՝ Անգլիա արշավեց: Սաքսոնները դուրս եկան կռվելու, բայց հաղթվեցին և Գիյոմը Անգլիայի գահը ձեռքն առավ (1066 թ.): Սաքսոնները նոր ապստամբություններ կազմակերպեցին, որ հարյուր տարուց ավելի տևեց և մինչև անգամ անհատական բնավորություն ստացավ: Նորմանդացիք զսպեցին այս ապստամբությունները և սաքսոններին օրենքից դուրս հրատարակելով, անխնա ջարդում էին: Սաքսոնները թե՛ կրոնական և թե՛ քաղաքական բոլոր պաշտոններից դուրս վտարվեցին և նրանց տեղը նորմանդացիք անցան. սաքսոն աղջիկներին ու կանանց բռնի կերպով ստիպեցին ամուսնանալ նորմանդացիների հետ, այնպես որ շատ կարճ ժամանակի մեջ Անգլիան նորմանդական, այսինքն ֆրանսիական մի երկիր դարձավ. ֆրանսիական քաղաքականությունը և ֆրանսերեն լեզուն տարածվեցին Անգլիայում և ամբողջ 3 դար տիրապետեցին այնտեղ:

118. ՏՈՒՂՐԻԼԻ ԵՎ ԱԼՓԱՍԼԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՐՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հայաստանի մեծ մասը նվաճելուց հետո, հույները շատ վատ վարվեցին հայոց հետ. գանձարանի խնայողության համար, հայոց

ու վրաց բանակներից 50 000 զինվոր ցրեցին, իշխաններին սրով կամ թույնով սպանեցին, նույնիսկ կաթողիկոսական իշխանությունը երկրից դուրս վտարեցին: Ժողովուրդը չդիմանալով ծանր հարկերին, սկսեց խումբ-խումբ գաղթել հեռու վայրեր և այդ մասին նույնիսկ հույներից օժանդակություն էր ստանում: Հույները մտադիր էին հայությունն ազգովին ոչնչացնել և իրենց ձուլել:

Տուղրիլ բեկը լսելով Հայաստանի անցքերը, իր ասպատակներին ուղարկեց Հայաստան, որոնք երկիրը մի քանի տարի տակնուվրա արին, շատ մարդկանց կոտորեցին, շատ քաղաքներ ու գյուղեր այրեցին ու կողոպտեցին: Սրանց մեջ նշանավոր եղան Սմբատաբերդը և Արծնը, որոնցից վերջինը ուներ 150 000 բնակիչ և արևելյան ու արևմտյան վաճառականության կենտրոն էր համարվում: Այս երկու քաղաքներն էլ գրավվեցին, ժողովուրդը բնաջինջ եղավ և քաղաքները մոխրակույտի վերածվեցին:

Հույներն անփույթ գտնվեցին պաշտպանելու իրենց երկիրը. նրանք շատ ուշ միայն կազմակերպեցին հույն, հայ և վրացի միացյալ մի բանակ, որ սելջուկներից ջարդվեց ու ցրվեց: Այս պարտությունից հետո Տուղրիլն անձամբ եկավ Հայաստան և իր զորքերին ցրեց երկրի չորս կողմը. սրանք անարգել մտան ամեն տեղ, միայն Մանազկերտը քաջությամբ դիմադրեց և անձնատուր չեղավ. կռվի դուրս եկավ նաև Կարսի Գագիկ թագավորը, որ թեև հաղթվեց, բայց Կարսը և նրա հետ էլ Անին ազատ մնացին:

Տուղրիլից հետո եկավ Ալփասլանը. նախ մտավ Վրաստան և ամբողջ երկիրը հրի ու սրի մատնելուց հետո, ուղղակի Անիի վրա քալեց. Անին գրավվեց, ավերվեց և բնակիչները սրի քաշվեցին (1064 թ.): Կարսի թագավոր Գագիկը սելջուկների հետ բարեկամանալով կարողացավ ազատվել, բայց մտածելով, որ չպիտի կարողանա երկար դիմանալ, իր իշխանությունը հույներին հանձնեց և Փոքր Ասիա քաշվեց (1065 թ.):

Ալփասլանը երկրորդ անգամ մտավ Վրաստան և Հայաստան և այս երկու երկրները նվաճեց, հետո մտավ Փոքր Հայք, Սեբաստիայի իշխանությունը ոչնչացրեց և մինչև Կեսարիա հասավ: Հույների կայսրը 100 000 զորքի գլուխն անցած անձամբ դուրս եկավ նրա դեմ կռվելու, բայց Մանազկերտի առաջ հաղթվեց և գերի բռնվեց (1071 թ.): Այսպիսով հույները հայոց դեմ իրենց բռնած անմիտ քաղաքականության պատճառով ո՛չ միայն չկրցան վայելել Հայաստանը, այլև իրենց փոքրասիական հողերն էլ

սելջուկյան թուրքերի մեծ կայսրության ձեռքը թողեցին և պետության մայրաքաղաքը վտանգի տակ դրին:

119. ՊԱՊԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Իտալիան Գերմանիայի կայսերական իշխանության տակ ընկնելուց հետո, սկսեց մի ծանր կռիվ պապական իշխանության և Գերմանիայի կայսրության միջև, որ գերմանական երկիրը տակնուվրա արեց և վերջ ի վերջո կայսրության գերագույն իշխանությունը տապալեց:

Գիտենք որ արևմտյան եկեղեցու պետը Հռոմն էր, որ իր մեծ ու փոքր պաշտոնյաներով բռնել էր ամբողջ Արևմտյան Եվրոպան: Իր բարոյական ու նյութական զորությունը կարող ենք ասել, որ գերազանցում էր նույնիսկ կայսերական իշխանությունները: Բոլոր ժողովուրդներն իբր սրբություն ընդունում էին նրա հրամանը: Նյութական հարստությունն անսահման էր. բարեպաշտական նվերները, որ դարերի ընթացքում շարունակ եկել ավելացել էին վանքերի և եկեղեցիների վրա, չափազանց էին. Գերմանիայի հողի 1/3-ը, Ֆրանսիայի և Անգլիայի 1/5-ը, ինչպես նաև Իտալիայի և իսպանիայի մի խոշոր մասը իրեն էին պատկանում: Եվ որովհետև այն ժամանակ հողի տերը նաև քաղաքական ու զինվորական տեր էր, ուստի եպիսկոպոսները նաև աշխարհական իշխան էին, բերդ ու բանակ ունեին, դրամ էին կտրում և օրենք էին դնում: Եկեղեցական իշխանության զորությունն ավելի մեծ էր և հետզհետե ավելի պիտի մեծանար նրանով, որ մինչդեռ ավատական իշխանությունները շարունակ բաժանվում էին, ընդհակառակը եկեղեցին կենտրոնական մի իշխանություն էր կազմում Հռոմի պապի ձեռքում, որի հրամանը ամենուրեք անպայման հնազանդություն էր պահանջում:

Եկեղեցական իշխանությունն ավելի մեծ մի զենք ևս ուներ. դա բանադրանքն էր: Բանադրում էր իրեն անսասնողին, այսինքն մարդկությունից դուրս էր վտարում: Բարեկամները հեռանում էին բանադրվողից, կոտրում էին նրա խմած բաժակը, ջարդում ճաշած սեղանը, այրում նստած աթոռը. եթե եկեղեցի մտներ, պատարագը դադարում էր, եթե անիծյալը իշխանավոր լիներ, նրա գավառում եկեղեցական ծեսեր չէին կատարվում և ժողովուրդն իր ձեռքով ստիպում էր նրան հեռանալ:

Այսպիսի մի հզոր իշխանություն Գերմանիայի կայսրերն ուզեցին իրենց հպատակեցնել և իրենց ձեռքում գործիք դարձնել, որով պիտի կարենային տիրել ամբողջ Եվրոպային և եվրոպական խոշոր ազգերն ու ժողովուրդները ըստ կամս կառավարել: Այս նպատակին հասնելու համար նրանք իրենց ձեռքն առան տվչություն (investitura) կոչված իրավունքը, այսինքն հոգևորականին իշխանություն տալը աշխարհական սինյորի ձեռքով, սովորական ավատական կարգով: Այս իրավունքով կայսրերը մի քանի անգամ նույնիսկ միջամտել էին պապի ընտրության և պապին իրենց ձեռքով էին ընտրած:

Պապերը տեսան կայսրերի այս ձգտումը և վճռեցին դեմ կենալ: Այն ժամանակ սկսեց երկու կողմերի մեջ ծանր մի պայքար, որ մեծ նշանակություն պիտի ունենար Եվրոպայի ճակատագրի համար: Եթե կայսրերը հաղթեին՝ Եվրոպան Գերմանիայի գերին պիտի դառնար, իսկ եթե պապերը հաղթեին՝ պիտի ստեղծվեր Եվրոպայի մեջ չտեսնված մի աստվածապետություն:

Պապական պայքարի սկիզբը դրեց Գրիգոր Է պապը (1073 թ.), որ Գերմանիայի կայսր Հենրիկոս Դ-ից պահանջեց ազատել պապական իշխանությունը Գերմանիայի գերիշխանությունից, կրոնական իշխանությունը անկախ դարձնել, եկեղեցին բարեկարգել և այն դարձնել աշխարհականների հոգու տերը: Այս իմաստով արգելվեց տվչության իրավունքը աշխարհականներին. ո՛չ մի կրոնավոր չպետք է որ ընդուներ իր իշխանությունը աշխարհականի ձեռքից: Հոգևորական իշխանության ուժը զորացնելու համար արգելեց ամուսնանալ հոգևորականությանը: Պապական իշխանության գերիշխանության տակ հայտարարեց Հունգարիայի, Իսպանիայի և Դալմատիայի թագավորությունները, որոնք նոր էին քրիստոնյա դարձել կամ անհավատների ձեռքից խլվել: Սրանից բացի Հենրիկոս Դ կայսրից պահանջեց եկեղեցական պաշտոնները առևտրի նյութ չդարձնել, սպառնալով բանադրել նրան:

Հենրիկոսը հավասար համարձակությամբ դուրս եկավ կռվելու պապի հետ. եկեղեցական ժողով գումարեց և պապին գահազուրկ հայտարարեց: Պապը չվախեցավ և բանադրեց կայսրին: Գերմանիայի ժողովրդի կեսը հրաժարվեց կայսրին ճանաչելուց. սկսեց արյունահեղ պատերազմը երկու կողմերի միջև. Գերմանիան արյունով ներկվեց. վերջապես կայսրն ստիպվեց գնալ պապի

ոտքը և երեք օր գլխաբաց և ոտաբոբիկ նրա դռան առաջ սպասելուց հետո, իրավունք ստացավ պապի ոտքն ընկնելու և ներում խնդրելու: Պապը ներեց: Բայց գերմանացիք արդեն ընտրել էին նոր թագավոր, որ պապն էլ հաստատեց: Պատերազմն սկսեց կայսեր և նորընտիր թագավորի միջև. կայսրը հաղթեց և սպանեց նրան. Հենրիկոսը նորից Գերմանիայի տերը դառնալով, արշավեց Իտալիա, գրավեց Հռոմը, պապին գահից ցած գցած և մի ուրիշին դրեց նրա տեղը: Գրիգոր Է պապը հազիվ կարողացավ փախչել և կամավոր աքսորում մեռավ: Ուրբանոս Բ պապն անցավ նրա տեղը և ավելի սաստկությամբ շարունակեց կռիվը. Հենրիկոսին դեմ դուրս եկան իր երկու հարազատ որդիները, զրկեցին նրան կայսրությունից ու հալածեցին, կայսրը ամեն բանից զրկված մուրացկանի նման ապրեց ու մեռնելուց հետո էլ իր մարմինը 5 տարի անթաղ մնաց մի նկուղում:

Վերջապես երկու կողմերը տեսնելով, որ պայքարը ուրիշ բանի չպիտի ծառայի եթե ոչ գերմանական և իտալական ավատապետների անկախության, որոշ համաձայնության եկան. Վորմսի համաձայնագրով (concorda) ճանաչվեց եկեղեցական ընտրությունների կատարյալ ազատությունը պապի հաստատությամբ, իսկ ընտրյալի տվչությունը կատարելու էր կայսրը (1122 թ.):

120. ՌՈՒԲԻՆՅԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Արծրունյաց և Բագրատունյաց թագավորությունները կործանվեցին և սելջուկները սկսեցին երևալ Հայաստանում, խումբ-խումբ հայ իշխաններ սկսեցին թողնել իրենց երկիրը և իրենց ժողովրդի հետ գաղթել դեպի արևմուտք՝ հունական կայսրության հողերը: Հույները քաջալերում էին այս շարժումը՝ մասամբ Հայաստանը հայերից դատարկելու նպատակով և մասամբ Փոքր Ասիայում քրիստոնյա տարրը զորացնելով, սելջուկների արշավանքի դեմ պատնեշ բարձրացնելու համար: Գաղթականներից մի մեծ թիվ անցավ Կիլիկիա. այնտեղ, լեռների բարձրությունների վրա, հաստատվեցին մի քանի մանր հայ իշխաններ, ոմանք ինքնագլուխ, ոմանք էլ հույների կայսեր իշխանության տակ: Սրանց մեջ հայտնի են Գող Վասիլը, որ Կիլիկիայի արևելյան կողմը, Քեսունում էր տիրում, Օշինը, Հայաստանի Արցախ գավառից, որ Լամբրոնի բերդը խլեց

մահմեդականներից և հույների կայսրից ժառանգություն ստացավ, սրա եղբայրը՝ Բազունի, որ Տարսոնի իշխան դարձավ և Ապիրատ Պահլավունին, որ Վերին Եփրատի կողմերը, Ծովք դղյակում հաստատվեց:

Բայց այս բոլորից ավելի նշանավոր եղավ Ռուբենը, Գագիկի մերձավոր ազգական, որ վրեժ լուծելու համար հույների ձեռքով նրա դավաճանական մահվան, միանգամայն հայ ժողովուրդը նրանց հարստահարություններից ազատելու համար, եկավ Տավրոսյան լեռները: Այնտեղ իր սակավաթիվ կուսակիցներով մի հույն իշխանի ձեռքից խլեց Գոռոմոզոլ գյուղը և իրեն իշխան հայտարարեց (1080 թ.): Տեղացի հայերը շուտով խմբվեցին նրա շուրջը. Ռուբենը նրանց գլուխն անցած, կարճ ժամանակվա ընթացքում Տավրոսյան սարերը մաքրեց հույներից. մոտակա հայ իշխաններն էլ ճանաչեցին նրա հովանավորությունը և այսպիսով հիմնվեց Կիլիկիայում հայոց նոր իշխանությունը, որ իր հիմնադրի անվամբ կոչվում է Ռուբինյան:

Հույներն այդ միջոցին վատ դրության մեջ էին. թե՛ Եվրոպայում և թե՛ Փոքր Ասիայում ապստամբություն էր ծագել կայսերական իշխանության դեմ, որ մեծ դժվարությամբ կարելի եղավ խաղաղեցնել. բայց հազիվ թե դրանք զսպվեցին, սկսեց նորման ծովասպատակների արշավանքը դեպի Ալբանիա և Մակեդոնիա, որն այլապես շատ դժվարությամբ զսպեցին հույները վենետիկյան նավատորմի օգնությամբ և սելջուկյան վարձկան թաթարների աջակցությամբ: Նորմաններից հետո սկսեց սլավոնական ցեղերի արշավանքը, պավլիկյան բուլգար նորահավատները, միացած բարբարոս պեչենեգ և կուման 80 000 ավազակների հետ, ապըստամբեցին-գրավեցին Բուլղարիան, Թրակիան, ջարդեցին հույների բանակը և ավարառությունն ու կոտորածը մինչև Պոլիս հասցրին. հույները չկարողացան դիմադրել նրանց և միայն կաշառելով կումաններին, միացան նրանց հետ և ջարդեցին բուլղարներին ու պեչենեգներին:

Այս կռիվների պատճառով հույները չէին կարող զբաղվել Կիլիկիայով, որից արդեն ավելի մեծ վտանգ չէր կարելի սպասել. և այսպես Ռուբեն իշխանը ազատ ասպարեզ ունեցավ:

121. ԽԱՉԱԿԻՐՆԵՐԻ ՄԵԾ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Միջին դարում գոյություն ուներ սխալ մի կարծիք, թե 1000 թվականին աշխարհը կործանվելու է. այդ թվականի նախօրյակին ժողովուրդներն ու թագավորները իրենց անձը սուրբ և բարեպաշտական գործերի նվիրեցին, իշխանները հրաժարվեցին իրենց գահից և մտան Աստուծո ծառայության մեջ: Երբ սարսափի թվականն անցավ և աշխարհն իր տեղում մնաց, մարդիկ իբրև շնորհակալություն առ Աստված, կրկնապատկեցին իրենց ջերմեռանդությունը: Ահագին թվով եկեղեցիներ սկսեցին կառուցվել ամեն կողմ և ժողովրդական նվերներով հարստանալ. բազմաթիվ ուխտավորներ դիմում էին Եվրոպայի սրբավայրերը, մինչև անգամ ավելի հեռու՝ Երուսաղեմ, Քրիստոսի գերեզմանը: Մի անգամ 3000 ֆրամաններ, մի ուրիշ անգամ 7000 գերմանացիք, իրենց եպիսկոպոսներով Երուսաղեմ ուխտի գնացին: Երուսաղեմն առաջ գտնվում էր արաբ խալիֆաների իշխանության տակ, որոնք ամեն հարգանք ընծայում էին Քրիստոսի գերեզմանին և ուխտավորներին նեղություն չէին տալիս: Հարուն-ալ-Ռաշիդ խալիֆայի ժամանակ մինչև անգամ Կարոլոս Մեծը Ս. Գերեզմանի պաշտպան ճանաչվեց: Երբ թուրքերը գրավեցին Երուսաղեմը (1082 թ.), ուխտավորների դրությունը չափազանց վատացավ. նրանք մինչև անգամ Երուսաղեմի պատրիարքին բանտարկեցին և ահագին փրկագին ստանալուց հետո միայն արձակեցին: Պետրոս անվամբ մի ճգնավոր, որ Երուսաղեմ ուխտի էր գնացել, տեսավ Ս. Գերեզմանի անկյալ վիճակը, ուխտավորների թշվառ դրությունը և եկավ գանգատվելու պապին: Նույն ժամանակ թուրքերն առաջացել էին նաև Փոքր Ասիայում և հունական կայսրության մեծ նեղություն էին տալիս: Հույները, չկարողանալով նրանց դեմ դնել, դիմեցին պապին և օգնություն խնդրեցին: Ուրբանոս Բ պապը ժամանակը եկած համարեց թուրքերի դեմ կրոնական արշավանք քարոզելու՝ փրկելու համար Ս. Քաղաքը նրանց ձեռքից: Սրանով նախ արևելյան քրիստոնեությունը իր ազդեցության պիտի ենթարկվեր, երկրորդ՝ Եվրոպայի քրիստոնյաների բարեպաշտական զգացումները պիտի արծարծվեին և երրորդ՝ ըմբոստ կայսրերի քաղաքական ձգտումները ուրիշ տեղ պիտի ուղղվեին:

Պետրոս ճգնավորը եղավ կրոնական արշավանքի եռանդուն քարոզիչը, որ ամբողջ Ֆրանսիան ոտքի կանգնեցրեց. մեկ միլիոն

հոգի պապի կոչին արձագանք տվին. սրանք ի նշան իրենց զինվորության, իրենց կրծքի վրա կրում էին մի կարմիր խաչ, որով կոչվեցին **խաչակիր**: Եվրոպայի ամեն կողմերից հավաքվել էին նրանք, բայց խաչակիրների մեծագույն մասը, ինչպես նաև նրանց գլխավոր առաջնորդները ֆրանսիացի էին:

Առաջին խումբը՝ 15000 հոգի, ճանապարհ ելավ (1096 թ.). սրանց ետևից մեկնեց 100 000 հոգի՝ Պետրոս ճգնավորի առաջնորդությամբ. այս բոլորը խեղճ ու աղքատ մարդիկ էին, որոնք հաց գտնելու համար Գերմանիայում հրեաներին ջարդելուց, Հունգարիայում մեծ անկարգություններ առաջ բերելուց և իրենք էլ մեծ ջարդ կրելուց հետո, մնացյալն անցավ Թրակիայի վրայով Փոքր Ասիա և բոլորն էլ ջարդվեցին թուրքերի ձեռքով: Այնուհետև մեկնեց կանոնավոր զինվորական մի խումբ, 100 000 ձիավոր և 600 000 հետևակ, որոնք զանազան ճանապարհներով հասան Պոլիս: Սրանց գլխավոր առաջնորդն էր Գոդֆրուա-դը-Բույոնը: Խաչակիրները շատ մեծ նեղություն կրեցին Փոքր Ասիայում. սննդի և ջրի պակասությունը, հույների նենգությունը և թուրքերի հետ մշտական կռիվները չափազանց պակասեցրին նրանց շարքերը: Երբ հասան Կիլիկիա, այնտեղ գտան հայոց փոքրիկ իշխանությունը. Ռուբենը մեռել էր այն ժամանակ և նրան հաջորդել էր Կոստանդինը: Կոստանդինը մեծ օգնություն ցույց տվեց խաչակիրներին, պաշար մատակարարելով և դժվարին ճանապարհների համար գիտակ առաջնորդներ տալով: Խաչակիրները շատ գոհ մնալով հայոց վարմունքից, Կոստանդինին շնորհեցին **մարկիզ** տիտղոսը:

Կիլիկիայից անցնելով խաչակիրները հասան Ասորիք. պաշարմամբ գրավեցին Անտիոքը և այնտեղ լատինական մի նոր իշխանություն հիմնեցին: Բաղդադի խալիֆան 200 000 զորք ուղարկեց Անտիոքը հետ վերցնելու համար. այս բանակը բնաջինջ եղավ: Այնուհետև ժանտախտն սկսեց ճարակել եվրոպական բանակում, այնպես որ այն ահարկու բանակից հազիվ 50 000 հոգիէր մնացել, երբ Անտիոքից մեկնեցին: Վերջապես հասան Երուսաղեմի առաջ: Անկարելի է նկարագրել այն հուզումը, այն ոգևորությունը, որ պատեց բոլորին, երբ Ս. Քաղաքը պարզվեց նրանց առաջ:

Երուսաղեմն այն ժամանակ պատկանում էր Կահիրեի Ֆաթիմյաններին, որոնք Բաղդադի ամիրայի դեմ ապստամբելով առանձին սուլթանություն էին հիմնել (968 թ.) և հետո Ասիա ար-

շավելով, գրավել էին Պաղեստինը թուրքերի ձեռքից: 1099 թվականի հուլիսի 15-ին եվրոպացիք սկսեցին ընդհանուր հարձակումը. մյուս օրը քաղաքը գրավեցին և սկսեցին կոտորել մեջի հրեաներին ու մահմեդականներին. մեկ շաբաթ տևեց կոտորածը. արյան հեղեղն այնպես էր հոսում, որ ձիերի մինչև կուրծքն էր հասնում:

Երուսաղեմը գրավելով եվրոպացիք այնտեղ էլ հիմնեցին նոր լատինական մի թագավորություն, որի գլուխն եղավ Գոդֆրուան: Նրա մոտ մնացին միայն 300 ձիավոր, մնացյալը հայրենիք վերադարձան: Այսքան քիչ մարդկանց վերադարձը այն ահագին բանակից սառեցրեց Եվրոպան և ամբողջ 50 տարի ոչ մի օգնություն չհասավ Երուսաղեմի թագավորության:

Ամեն տեղ, ուր որ տիրեցին եվրոպացիք, Ասորիքում և Պաղեստինում, հիմնեցին եվրոպական ավատական կարգեր. Երուսաղեմի թագավորը համարվում էր գերիշխան, բայց մյուս բոլոր իշխաններն էլ (Հոպպե, Տրիպոլիս, Անտիոք և Եդեսիա լատին դքսություններ) անկախ էին. ուստի քաղաքական միասնություն չկար: Խաչակիրների առատ նվերներով հոփացած կղերը երկրի մեծագույն սեփականատերն էր. ճորտերն եղան տեղական հունացած քրիստոնյաները, որոնց մեջ կային նաև հայեր և ասորիներ: Մեծ էր հատկապես լատին պատրիարքի ազդեցությունը և հակակշռում էր թագավորական իշխանությունը: Պետական բանակն ուներ 20 000 զինվոր՝ Լիբանանի աղեղնավորներից և հայկական ու սուրիական հետևակ գնդերից: Քաղաքներում, մանավանդ ծովերի վրա, կազմվեց հարուստ վաճառական դասակարգ, որ գլխավորապես իտալացիներից էր կազմված: Կային շատ վենետիկցիներ, ջենովացիներ և պիզացիներ: Սրանք սկսեցին բանուկ վաճառականական հարաբերություն Արևելքի և Արևմուտքի միջև: Եվրոպացիներին օգնելու համար Եվրոպայում կազմվեցին ասպետական կարգեր, որոնց մեջ նշանավոր եղավ տաճարականների կարգը: Սրանք մեծ հարստություն և ազդեցություն ձեռք բերին և անցան Ասորիք ու Պաղեստին. սկզբում ամեն կերպ աջակցում էին նորակազմ եվրոպական իշխանություններին, բայց կախված լինելով ուղղակի Հռոմի պապից, միշտ հակառակ էին գնում Երուսաղեմի թագավորության պահանջներին և ծառայում էին միայն պապի շահերին: Այս բոլորը շատ թուլացրին Երուսաղեմի իշխանությունը և ներքին քայքայման գլխավոր պատճառը դարձան հենց սկզբից:

122. ՍԵԼՋՈՒԿՅԱՆՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ. ՄԵԼԻՔՇԱՀ. ՀԱՇԻՇԻՆՆԵՐ

Տուղրիլից ու Ալփասլանից հետո սելջուկների գլուխն անցավ Մելիքշահը, որի օրով պետությունն իր փառքի գագաթնակետին հասավ. Ալփասլանի ժամանակ արդեն սելջուկները Արաբիայի անապատներից մինչև Ջիհուն գետը իրենց իշխանության տակ էին առել. Ալփասլանն իր կյանքի վերջին օրերին նվաճել էր նաև Խորեզմը (Խիվայի երկիրը) և Ջիհունն անցնելով մտել էր թուրքերի նախկին հայրենիքը: Մելիքշահն ավելի առաջ գնաց. վարպետ քաղաքականությամբ նա ճորտերին ազատություն շնորհեց, որով հույների հպատակ բոլոր ժողովուրդները իր կողմն անցան և այսպիսով հույների ամբողջ փոքրասիական հողերը մշտապես սելջուկների ձեռքն ընկան. նրա զորավարները գրավեցին Ասորիքը, Եգիպտոսը. ինքն էլ նվաճեց Բուխարան և Սամարղանդը. Քաշգարի թագավորը հպատակություն հայտնեց. այսպիսով սելջուկների պետությունը մեծ կայսրություն դարձավ: Մելիքշահը խաղաղասեր մարդ էր, գիտության և արվեստների սիրող. Ասիայի խորքերում նա կառուցեց հիվանդանոցներ, մզկիթներ ու դպրոցներ. պարսկական գրականությունը նրա օրով առանձին փայլ ստացավ. նույնիսկ հաստատվեց մի նոր տոմար և Նավրոզի տոնը, որ շատ էր խանգարվել, արեգակնային դրությամբ վերանորոգվեց:

Մելիքշահի ժամանակ Պարսկաստանի հյուսիսային կողմը մի նոր աղանդ ձևացավ*, որի հիմնադիրն էր Հասան անվամբ մի պարսիկ: Այս աղանդի հետևորդները, որոնք հայտնի են պատմության մեջ բաթընի կամ հաշիշին անվամբ, ուխտում էին լինել կույր գործիք իրենց աղանդապետի ձեռքին: Աղանդապետը հարբեցնում էր նրանց հաշիշ կոչված ըմպելիքով, որ տալիս էր քաղցր քուն և հաճոյական երազներ: Աղանդապետը նրանց խոստանում էր հանդերձյալ կյանքում նույնպիսի հաճույքներ հավիտենապես: Այս ակնկալությամբ աղանդավորները արհամարհում էին կյանքը, կատարում էին աղանդապետի բոլոր հրամանները և բարոյական և քաղաքային օրենքներից իրենց բոլորովին զերծ համարելով, կատարում էին ազատորեն ինչ որ ցանկանում էին՝ գողություն, բռնաբարություն և մարդասպանություն: Նրանց թիվը 70 000-ի

* ձևացավ - ձևավորվեց (խմբ.):

հասավ. գրավեցին բազմաթիվ ամրոցներ, որոնցից մեծագույնն էր Ղազվինի մոտ Ալամուտի ամրոցը: Այստեղից նրանք ցրվեցին Պարսկաստանի բոլոր քաղաքները, Ասորիք, Լիբանան և Աֆրիկա: Սուլթաններն անգամ սարսափում էին նրանցից և չէին համարձակվում ձեռք տալ այս վճռական մարդկանց:

123. ՄԱՆՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այն միջոցին, երբ հայերը Կիլիկիայում նոր պետություն էին հիմնում, Հայաստանն ամբողջությամբ սելջուկյանների իշխանության տակ էր ընկել: Տուղրիլի և Ալփասլանի գազանային օրերից հետո, Մելիքշահի ժամանակ հայերը խաղաղություն վայելեցին:

Մելիքշահի մահից հետո, նրա եղբոր և չորս որդիների միջև սկսեց քաղաքացիական երկար պատերազմ, որ սելջուկյան պետությունը կտոր-կտոր արեց. ամեն մի նահանգում կազմվեց առանձին սուլթանություն. այսպես առաջ եկան Խորասանի, Քիրմանի, Խորեզմի, Բաղդադի, Հալեպի, Դամասկոսի, Իկոնիայի սուլթանությունները: Սրանցից դուրս ձևացան բազմաթիվ մանր իշխանություններ, հատկապես Ատրպատականում և Պարսկաստանի հարավային մասում, որոնք հայտնի են պատմության մեջ **աթաբեկ** անվամբ: Սուլթանների մեջ ամենից պատվավորն էր Խորասանի սուլթանը, որ Պարսկաստանի տերն էր համարվում. նա սկսեց մի երկար պատերազմ հնդիկների և թաթարների դեմ. Լահորի և Ղազնայի թագավորները հպատակվեցին իրեն. բայց վերջապես պարտվեց և Խորեզմի սուլթանը տիրելով Պարսկաստանին, սելջուկյան ցեղին վերջ տվեց (1193 թ.): Այս աշխարհակալություններով Խորեզմի պետությունը սահմանակից դարձավ Գուրիների պետության, որ հիմնվելով Աֆղանիստանի արևմտյան կողմում (1163 թ., Ղիասէդդին սուլթանի ձեռքով), շատ կարճ ժամանակում ո՛չ միայն տիրել էր Ղազնևիների պետության, այլև ավելի ընդարձակվելով գրավել էր Հնդկաստանի կեսը. նրան էին հպատակվում Լահորը, Դելիին, Աջմիրը, Գուջարատը, Բենգալիան: Խորեզմի սուլթանը արշավեց գուրիների վրա և նրանց երկրի մեծագույն մասը գրավելով՝ այդ պետության վերջ տվեց, նույնիսկ պետության գերագույն մեծության ոոպեին (1204 թ.): Այսպես կազմվեց Խարիզմի թուրքական մեծ պետությունը, որ Կասպից ծովից մինչև Հնդկաստան տարածվեց, իր մեջ

պարունակելով Թուրքեստանը, Պարսկաստանը, Աֆղանիստանն ու Բելուջիստանը, Հյուսիսային Հնդկաստանը:

Հայաստանում էլ ձևացան անջատ և իրարից անկախ իլխանություններ:

Այս իշխանությունների մեջ ամենամեծն էր Շահի Արմենի ամիրայությունը, որ տարածվում էր Վանա ծովի հյուսիս-արևմտյան կողմը և պարունակում էր 12 քաղաք, ամիրայի մայրաքաղաքը լինելով Խլաթը կամ Մանազկերտը: Ավելի հետո գալիս էին Դվինի, Անիի և Կարսի ամիրայությունները:

Սրանցից բացի Հայաստանի ծայրագավառներում կային մի քանի հայկական իշխանություններ, որոնք հին թագավորության մնացորդները կամ շարունակությունն էին: Այսպես 1) Տավուշի և Մածնաբերդի իշխանությունները, Գուգարաց և Ուտյաց սահմանների վրա, որոնք սերած էին Կյուրիկեի Բագրատունիներից. 2) Աղվանից հայացած թագավորությունը՝ Ուտիքի և Արցախի կողմերը, որոնցից ծագեցին հետո Խաչենի իշխանները. 3) Սյունյաց թագավորությունը, Կապանում և շրջակայքում, որ թեև շատ տկարացած և փոքրացած էր, բայց դեռ պահում էր թագավորական տիտղոսը և որ հետո հետ քաշվեց Խաչեն. 4) Արծրունյաց թագավորությունը՝ Ամիկ բերդաքաղաքում, Վանա ծովի արևելյան կողմը, որ հին Արծրունյաց թագավորության շարունակությունն էր և պահեց թագավորական տիտղոսը մինչև 15-րդ դար. 5) Տարոնի և Սասունի իշխանությունը, որ Մամիկոնյանների սերունդն էր Տուրուբերանի ու Աղձնյաց սահմանների մեջ մինչև 12 դար:

Այս բոլոր հայկական իշխանությունները, թեև անկախ կամ կիսանկախ, սակայն բաժանվել էին միմյանցից վերոհիշյալ մահմեդական ամիրայություններով և նրանց մեջ կապ ու միություն չկար. մինչև որ եկան թաթարները և թե՛ հայ և թե՛ օտար բոլոր իշխանություններին վերջ տվին:

124. ՀՈՒՅՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿԻԼԻԿԻԱ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆՎԱՃՈՒՄԸ

Ռուբենի հիմնած փոքրիկ իշխանությունը իր հաջորդները աշխատեցին շարունակ ընդարձակել և հասնել երկրի բնական սահմաններին. Ռուբենի ժամանակ իշխանությունը Գորոմոզոլի շրջանն էր բռնում. նրա հաջորդ Կոստանդինը տիրեց Վահկա

բերդին, Թորոսը հասավ Անարզաբա մեծ քաղաքը և հույների զորքն այնտեղից դուրս քշեց. հետո հարվածեց Իկոնիայի սելջուկյաններին և իր իշխանությունը հյուսիսից հասցրեց մինչև Կիզիստրա բերդը. վերջապես Ռուբինյանների չորրորդ իշխան Լևոն Ա-ը գրավեց Մամեստիան և Տարսոն մայրաքաղաքը և այսպիսով գրեթե ամբողջ Կիլիկիային տեր դարձավ:

Այս միջոցին հույների կայսրությունը եվրոպացի խաչակիրների շնորհիվ ունեցել էր որոշ հաջողություններ Փոքր-Ասիայում. սելջուկները հաղթվելով հաշտվեցին հույների հետ և ամբողջ ծովեզերքը, Փռյուգիայից մինչև Պիսիդիա և Պամփյուլիա թողին հույներին: Այս հաջողություններից հետո հույների կայսրը Անտիոքը նորից իր իշխանության տակ առնելու համար զորավոր բանակով արշավեց Ասորիքի վրա: Անտիոքի լատին իշխանը բավական ուժ չունենալով կայսեր դիմադրելու համար, հայոց օգնությունը խնդրեց: Լևոնը, հայ և լատին բանակի գլուխն անցած, փոխանակ կայսեր առաջը կտրելու, գնաց Կիլիկիայի արևմտյան կողմը գտնվող Սելևկիա քաղաքը պաշարելու: Կայսրը սելևկյան թողնելով Լևոնի ձեռքում, լեռների կիրճերով մտավ Կիլիկիա և երկիրն անպաշտպան գտնելով, միմյանց հետևից գրավեց բոլոր գլխավոր քաղաքները՝ Մամեստիան, Տարսոնը, Ադանան և Անարզաբան: Լևոնն իր սխալը միայն ուշ հասկացավ և Սելևկիան թողնելով գնաց կայսեր դեմ: Բայց տեսնելով, որ այլևս անհնար է դիմադրել, գնաց ամրացավ Վահկա բերդում: Անտիոքացիք իսկույն բանակ կազմած արշավեցին Կիլիկիա՝ Լևոնի օգնության. կայսրը մի գունդ զորք թողնելով Վահկայի առաջ, մնացյալ բանակով գնաց Անտիոքի վրա, հաղթեց և ստիպեց լատիններին ճանաչել իր գերիշխանությունը: Հետո եկավ Վահկայի վրա. Լևոնը մի ժամանակ դիմադրելուց հետո, պաշարի պակասության հետևանքով անձնատուր եղավ. կայսրը շղթայեց նրան իր երկու որդիների հետ և տարավ Պոլիս ու բանտարկեց: Այսպես նվաճվեց Կիլիկիան և ամբողջապես ընկավ հույների տիրապետության տակ (1136 թ.): Հույները դրանից հետո առաջացան Փոքր Ասիայի ներսերը, սելջուկների և Սեբաստիայի դանիշմանների միացյալ ուժը խորտակցեին և մինչև Նիկսար տիրելով սելջուկներին ոչնչացրին (1140 թ.):

125. ԹՈՐՈՍ Բ. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՎԵՐԱԳՐԱՎՈՒՄԸ

Հինգ տարի բանտում չարչարվելուց հետո, Լևոնն ու իր որդիներից մեկը մեռան. մյուս որդին Թորոսը ազատվեց, բայց բանտարկվել էր Պոլսում:

Կիլիկիային տեր դառնալուց հետո, հույներն սկսեցին շատ վատ վարվել հայերի հետ. հայերը զզվեցին և երբ Փոքր Ասիայի թուրքերը արշավեցին Կիլիկիա, հայերը չէին որ պիտի պաշտպանեին երկիրը: Այսպես կարճ ժամանակ հետո Կիլիկիան սելջուկյան թուրքերի իշխանության տակ ընկավ: Ամեն ինչ վերջանալուց հետո, նոր միայն հույների կայսրը արշավանքի ձեռնարկեց դեպի Կիլիկիա, նվաճված երկիրը հետ վերցնելու համար թուրքերից, բայց հաղթվեց և իր բանակը ցիրուցան եղավ:

Կայսեր բանակում զինվոր էր նաև Թորոսը. երբ բանակը պարտվելով փախավ, Թորոսն անցավ Կիլիկիա, այնտեղ հայտնեց իր ով լինելը. շուտով նրա մոտ հավաքվեցին իր երկու եղբայրները՝ Ստեփանեն և Մլեհը. Թորոսը 10 000 հայերի գլուխն անցած, տիրեց Վահկային և հետո կարճ ժամանակում ամբողջ Կիլիկիային տեր դարձավ նորից (1145 թ.):

Հույների կայսրը Կիլիկիայի կորուստը լսելով, Թորոսի դեմ ուղարկեց մի նոր բանակ. Թորոսը վախեցավ չափվել հույների կայսեր հետ. ուստի լուր ուղարկեց զորավարին, թե պատրաստ է ճանաչել կայսեր գերիշխանությունը, միայն թե կայսրն էլ ճանաչի իր իշխանությունը Կիլիկիայի վրա: Զորավարը գոռոզությամբ մերժեց ամեն պայման և պահանջեց անձնատուր լինել, որպեսզի կապեն նրան այն շղթաներով, որով հայրն էր կապվել բանտում: Լսելով այս վիրավորական խոսքերը, Թորոսը վրդովվեց և գիշերային հանդուգն հարձակմամբ ընկնելով թշնամու վրա, ջարդեց և մինչև Անտիոք փախցրեց:

Կայսրն իմանալով այս պարտությունը, գրգռեց նախ Իկոնիայի սուլթանին և հետո Անտիոքի իշխանին, որոնք մի քանի անգամ արշավեցին Կիլիկիա. Թորոսը հաղթանակով վտարեց նրանց իր երկրից և Կիլիկիայի լեռնային մասերն էլ միացրեց իր տերության: Կայսրը մի քանի բանակներ ուղարկեց իր հանդուգն թշնամու դեմ, և երբ սրանք էլ պարտվեցին և հետ փախան, վճռեց անձամբ արշավել Թորոսի վրա: Հանկարծ մտավ նա Կիլիկիա և սկսեց բոլոր կարևոր քաղաքները նվաճել. իսկ Թորոսն իր փոքր գնդով

թափառում էր լեռնից լեռ՝ զգուշանալով ուղղակի չափվել կայսեր հետ: Այստեղ միջամտեցին Երուսաղեմի թագավորը և Ասորիքի լատին իշխաններն ու հաշտեցրին երկու կռվող կողմերին, այն պայմանով, որ Թորոսը տիրի Կիլիկիային՝ կայսեր գերիշխանության տակ և Կիլիկիայում մի մաս հունական զորք մնա որպես պահապան:

Այս միջոցին Իկոնիայի և Սեբաստիայի սուլթանների միջև կռիվ ծագեց. սրանից օգուտ քաղելով, Թորոսի եղբայրը՝ Ստեփանեն, արշավեց նրանց երկրների վրա և մի շարք քաղաքներ գրավելով, Կիլիկիայի արևելյան կողմը հաստատեց անկախ հայկական իշխանություն: Հույները նախանձեցին նրան և խարդախությամբ խնջույքի հրավիրելով սպանեցին նրան: Սրա վրա կատաղեցին Թորոսն ու Մլեհը, հարձակվեցին Կիլիկիայի հույների վրա, 10 000 հոգու ջարդեցին և հունական իշխանության վերջին մնացորդներն էլ ջնջեցին: Պատերազմը նորից սկսվեց հայերի և հույների միջև. կայսրը մի քանի անգամ զորք ուղարկեց Կիլիկիա. բայց Թորոսը բոլորին էլ ջարդեց և Կիլիկիան բոլորովին անկախ հայտարարեց:

Այնուհետև հույները չկարողացան երբեք ոտք դնել Կիլիկիա:

126. ՄԼԵՀ. ՀԱՅՈՑ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Թորոսի մահեն հետո Կիլիկիան ներքին կռիվների ասպարեզ դարձավ. Թորոսն իր գահը թողել էր իր անչափահաս որդուն. եղբայրը Մլեհ ցանկացավ, որ ինքը տեր դառնա գահին: Նա կրոնական գաղափարների մեջ շատ ազատամիտ մեկն էր. մի ժամանակ տաճարական ասպետների կարգը մտնելով, ընդունել էր կաթոլիկ դավանանքը. հետո նրանց հետ քրիստոնեությունն էլ թողնելով, թափառական թուրքմենների գլուխն էր անցել. սրանից հետո գնաց Հալեպի սուլթանի մոտ և մտավ նրա ծառայության մեջ: Երբ նա իմացավ Թորոսի մահը, ցանկացավ տեր դառնալ Կիլիկիայի գահին. ուստի Հալեպի սուլթանի հետ դաշնակցեց և նրանից օգնական զորք վերցնելով, արշավեց Կիլիկիայի վրա: Հայերը չընդունեցին նրան. բայց որովհետև անկարող էին դիմադրել իրենց ուժերով, ուստի դիմեցին Երուսաղեմի թագավորին և Անտիոքի իշխանին. սրանք շտապեցին օգնական զորք ուղարկել

Կիլիկիա և Մլեհին երկրից դուրս վտարեցին: Մլեհը իսկույն դիմեց Հալեպի սուլթանին, որ իր զորքով արշավեց լատին իշխանների հողերը և ստիպեց հետ քաշվել Կիլիկիայից: Այն ժամանակ Մլեհը մտավ Կիլիկիա և բռնի կերպով տեր դարձավ գահին (1170 թ.):

Մինչև այդ Կիլիկիայի հայերի քաղաքականությունը լատինների հետ բարեկամությունն էր: Մլեհն այս կապերը խզեց և բարեկամացավ մահմեդականների հետ: Նախ պատժեց իր հակառակորդներին, գրավեց նրանց կալվածները, Թորոսի որդուն փախցրեց երկրից դուրս, տաճարական ասպետներին, որոնք հաստատվել էին Կիլիկիայում և շատ կալվածներ ձեռք բերել, հալածեց և նրանց կալվածները խլեց, և բոլոր պարագաների մեջ թշնամություն էր ցույց տալիս խաչակիր իշխաններին: Ընդհակառակը, հաշտության և բարեկամության դաշինք կնքեց Իկոնիայի սուլթանի, սելջուկյան թուրքերի և Հալեպի արաբների հետ. մինչև անգամ երբ թուրքերը պատերազմ էին մղում խաչակիրների դեմ, ինքը միաբանվեց թուրքերի հետ. մի անգամ էլ ասպատակեց Պաղեստինի կողմերը և միայն այն ժամանակ, երբ ասպետները միացան իրեն դեմ, ստիպվեց հետ քաշվել: Այս նոր քաղաքականության պտուղը վայելեց Մլեհ այն ժամանակ, երբ հույների կայսրը մի նոր փորձ ուզեց կատարել Կիլիկիա արշավելու համար. Մլեհը գրգռեց իր դաշնակից Իկոնիայի սուլթանին, որ ասպատակեց Փոքր Ասիայի հունական գավառները, սրանով կայսրն ստիպվեց իր մտադրությունից հրաժարվել և սուլթանի դեմ պատերազմի դուրս գալ:

Հայտնի չէ, թե ինչ հաջող արդյունք էր տալու հայության համար Մլեհի այս նոր քաղաքականությունը, որ կարող ենք ասել, թե հիմնվել էր իրերի ավելի գիտակից ըմբռնողության վրա: Բայց Մլեհը հաջողություն չէր ունենալու. անկարելի էր միանգամից փոխել քրիստոնյա հայերի գաղափարները, մանավանդ այնպիսի մի մարդու ձեռքով, որ խոհեմության փոխարեն թշնամություն էր գործադրում իր հակառակորդներին զսպելու համար: Հայ իշխանները միաբանեցին և սպանեցին նրան. այսպիսով նոր քաղաքականությունն էլ իրեն հետ կորավ (1175 թ.):

127. ՎՐԱՍՏԱՆԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ. ԴԱՎԻԹ ՎԵՐԱՆՈՐՈԳԻՉ

Սելջուկների արշավանքների ժամանակ Վրաստանը կրեց այն բոլոր չարիքները, որոնց ենթարկվեց Արևելքը: Վրաստանն ավերակ դարձավ: Գահը և երկիրը փրկելու հույսով, վրաց թագավոր Գեորգի Բ-ը անձամբ գնաց Մելիքշահի մոտ և հպատակություն հայտնեց: Մելիքշահը ընդունեց նրան և թուրք օգնական բանակ տալով, վերադարձրեց իր երկիրը, որպեսզի նրա միջոցով կարենա նվաճել նաև Կախեթիան: Սակայն այս բանակը ուրիշ բանի չծառայեց, եթե ոչ նոր ավերներ սփռելու Կախեթիայում: Այն ժամանակ Կախեթիայի թագավորն իր կարգին գնաց Մելիքշահի ոտքը և մահմեդականությունն ընդունելով, ուրիշ մի թուրք բանակով վերադարձավ Քարթալինայի թագավորի դեմ կռվելու:

Երբ Մելիքշահը մեռավ և նրա թագավորությունը քայքայվելով, հպատակ ժողովուրդները այստեղ և այնտեղ փոքր անկախ պետություններ ձևացրին, Վրաստանն էլ իր կարգին գլուխ բարձրացրեց: Այն ժամանակ Վրաստանի թագավորն էր Դավիթ Բ-ը (1089 թ.), որ Գեորգի Բ-ի որդին էր: Օժտված լուսամիտ գաղափարներով, զերծ կրոնական մոլեռանդությունից, հավասար աչքով և անխտրական ոգով վերաբերվելով բոլոր տեսակի կրոններին, կարեկից ժողովրդի ցավերին, գիտակ բազմաթիվ լեզուների, որով ուղղակի հարաբերության մեջ կարող էր մտնել զանազան ազգերի և ժողովուրդների հետ, այս թագավորը ձեռնարկեց մի մեծ Վրաստան վերականգնելու գործին: Նրա հետ էին ոչ միայն վրացիք, այլ նաև հայերը:

Երբ Անին գրավվեց, հայոց թագավորությունը ջնջվեց և ժողովուրդը սելջուկյան ամիրաների ձեռքը մատնվեց. շատ իշխաններ իրենց ժողովրդի հետ սկսեցին Վրաստան ապաստանել: Այստեղ էին դիմում հատկապես հյուսիսային Հայաստանի բնակիչները: Վրաստանի թագավորները սիրով ընդունեցին նրանց, հայ իշխանների և զորավարների մեծամեծ պաշտոններ տվին և իրենց բանակները հայ զինվորներով ստվարացրին:

Այն թշնամությունը, որ դավանաբանական տարբերությունն էր մտցրել հայ և վրացի հարևան ժողովուրդների միջև, որոնք միմյանց պաշտպանելու և ուժ ձևացնելու համար սերտ միության կարիքն ունեին, Դավիթն աշխատեց վերացնել և ինքն անձամբ

օրինակ տալով, հաճախում էր հայ եկեղեցիները և հայ կրոնավորների օրհնությունն էր ընդունում: Այս միության արդյունքը երևան եկավ և հայոց ու վրաց միացյալ զորությունը կարողացավ նշանավոր դեր կատարել 12-րդ դարի պատմության մեջ:

Կովկասյան լեռնաշղթայի վրա հաստատվել էին թուրքական հորդաներ, մեծ մասամբ հեթանոս, որոնք վրացական հողերը շարունակ ասպատակելով, ժողովրդին մեծ նեղություն էին պատճառում: Դավիթը դիմեց նրանց և լավ հողեր խոստանալով, 40 000 հոգի գաղթեցրեց և բնակեցրեց բուն Վրաստանում: Հետո այս քաջ ու ռազմասեր մարդկանցից կազմեց մի ընտիր բանակ, որ պատրաստ էր ամեն վայրկյան կռվի դուրս գալու թշնամու դեմ: Այս իմաստուն գործքով, մի կողմից ավազակությունը դադարեցրեց և ժողովրդին հանգիստ պարգևեց, մյուս կողմից արդի եվրոպական տերությունների նման մշտապես պատրաստ բանակ ունեցավ:

Այս բանակով Դավիթը նախ թուրքերին իր երկրից վտարեց, հետո գրավեց Թիֆլիսը և իր տերության մայրաքաղաք դարձրեց (1121 թ.), այնուհետև նվաճեց Նուխին, Շամախին, Օլթին, Տավուշը, Լոռին, Տաշիրը, Կյուրիկեի տերությունը և ամբողջ Կովկասը: Սև ծովից մինչև Կասպից ծովն իր իշխանության տակ առավ: Անիի հայերը, նեղված իրենց թուրք ամիրայից, հրավիրեցին Դավթին և նա զորքով դիմելով Անիի վրա, ներսի հայերի օգնությամբ գրավեց քաղաքը (1124 թ.): Ամիրան սակայն, քիչ հետո կարողացավ շրջակա ամիրաներից օգնական զորք ստանալ և նորից Անիի վրա դիմեց. հերոսական դիմադրությունից հետո, անեցիք վրացիներից օգնություն չստանալով, ստիպվեցին հաշտվել ամիրայի հետ և քաղաքը նորից նրան հանձնել:

Մի քանի տարի հետո, Գեորգի Գ-ի օրով, վրացիք դարձյալ զորացան. Շիրակի վրա արշավեցին և Անիի ու Մանազկերտի ամիրաների միացյալ զորությունը խորտակելով՝ Անին գրավեցին: Այնուհետև վերցրին Դվինը և շատ մարդկանց կոտորեցին, մինչև որ պարսիկների թագավորը արշավեց նրանց վրա և չորս տարի ասպատակեց երկիրը, բայց վերջապես ստիպվեց հետ քաշվել, ասպարեզը թողնելով վրացիներին:

128. ԻՏԱԼԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՄ

Վերևում ասացինք, որ Իտալիան այն ժամանակ ամբողջապես բաժանվել էր մանր-մունր դքսությունների և ազատ քաղաքների, որոնցից յուրաքանչյուրը մյուսներից ազատ էր ու անկախ: Իտալացիք, այն ժամանակ շատ ավելի քաղաքակիրթ քան Եվրոպայի մնացյալ ազգերը, կարողացել էին կազմել շատ ազատական կարգեր ունեցող հանրապետություններ: Այդ բոլոր հանրապետությունների մեջ էլ իշխանությունը հանձնվել էր մի քանի կոնսուլների, բայց գլխավոր ձայնը պատկանում էր ժողովրդի ընդհանուր ժողովին, որին անդամ էին նաև դուքսերն ու պարոնները: Այս ազատ հանրապետություններից դուրս էին մնում միայն Հռոմը, որ պապի գերիշխանության տակ էր և Երկու Սիկիլիաների թագավորությունը: Վերջինը կազմվել էր 11-12-րդ դարերին, երբ սարակինոսները արշավում էին Իտալիա: Պապը, նեղված նրանցից, օգնության կանչեց նորմաններին. սրանք թեև սարակինոսներին դուրս քշեցին, բայց իրենք տեր դարձան Հարավային Իտալիային և հիմնեցին առանձին թագավորություն, որի մայրաքաղաքն էր Նաբոլին (1053 թ.): Նորմանները հետո գրավեցին նաև Սիկիլիան, որ միացնելով նախորդի հետ, կոչեցին Երկու Սիկիլիաների թագավորություն (1130 թ.):

12-րդ դարի կեսին, մի ազատամիտ կրոնավոր պահանջեց, որ Հռոմն էլ Իտալիայի մյուս քաղաքների նման լինի ազատ և իշխանությունն աշխարհական ընտրյալ անձերի հանձնվի: Պապն ստիպվեց հեռանալ և Հռոմում էլ հռչակվեց հանրապետություն:

Ազատական կարգերի հաստատումը Իտալիայում, մանավանդ Հռոմում և պապի հեռացումը հաճելի չեղավ գերմանացիների համար, որոնց այս ժամանակվա կայսրն էր Ֆրեդերիկ Բարբարոսան: Սա թունդ միապետական էր և կարծում էր, որ կայսերական իշխանությունն իրեն տրված է Աստուծո կողմից և չի կարող սահմանափակվել մարմնավոր մարդկանց կողմից կամքով կամ ուժով. ինքն օրենքից ավելի բարձր է և իր կամքը օրենք է: Ֆրեդերիկն արշավեց Իտալիա, ավերեց մի շարք քաղաքներ, գրավեց Հռոմը, այրել տվեց ազատամիտ կրոնավորին և քաղաքի բնակիչներից մի մասին կոտորելուց հետո, Հռոմի և աշխարհի կայսր պսակվեց:

Իտալիան հպատակվել էր բռնակալության՝ ուժերի պակասության պատճառով. բայց երբ կայսրը հեռացավ, իսկույն Իտալիայի հյուսիսային մի շարք քաղաքները, Միլանոյի հանրապետության գլխավորության տակ միացան և մերժեցին հպատակվել կայսեր. իրենց միացավ նույնիսկ պապը, որովհետև Իտալիայի անկախությունը նաև պապական աթոռի անկախությունն էր: Կայսրը արշավեց Իտալիա, պապին գահից վեր առավ, պաշարեց Միլանը: Քաղաքացիք մեծ քաջությամբ դիմադրեցին երկու տարի շարունակ, բայց պաշարն սպառվելով անձնատուր եղան: Միլանոն ամբողջապես ավերվեց և բնակիչները բռնի կերպով դուրս քշվեցին: Հռոմը գերմանական կայսրության մայրաքաղաքը հայտարարվեց:

Կայսրը կարծեց, թե ամեն ինչ վերջացել է. բայց երբ գնաց Գերմանիա, իտալացիք նորից ոտքի կանգնեցին. ապստամբությունն այս անգամ բռնեց ամբողջ Իտալիան. կազմվեց Լոմբարդական լիգան, որի մեջ մտան բոլոր նշանավոր քաղաքները, գլխավորությամբ Միլանոյի, որ արագությամբ վերականգնվել էր ընդհանուրի ծախսով (1164 թ.): Ֆրեդերիկը շտապեց Իտալիա, բայց Գերմանիայում ծագած ավատական կռիվները արգելք հանդիսացան, որ կայսրը կարենա կազմել իրեն պետք եղած զորավոր բանակը. Ֆրեդերիկը կրեց մի շարք նշանավոր պարտություններ և պապի ոտքն ընկնելով հաշտություն խնդրեց. Կոնստանցայի դաշնադրությամբ Իտալիայի ինքնավարությունը և ազատական հանրապետությունները ճանաչվեցին, այն պայմանով, որ ժողովրդի ընտրած կոնսուլները կայսեր կողմից հաստատվեին (1183 թ.):

129. ՍԱԼԱՀԱԴԻՆ, ԵԳԻՊՏԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱԿԻՐՆԵՐԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Երուսաղեմի թագավորությունը 50 տարի զրկված մնաց Եվրոպայի օգնությունից. այս միջոցին մահմեդականները զորացան և Հալեպի սուլթանը տեր դարձավ Եդեսիային. սրանով լատինների դրությունը չափազանց վտանգվել էր. եվրոպացիք ձեռնարկեցին Երկրորդ խաչակրության: Այս խաչակրության մասնակցեցին ֆրանսիացիք և գերմանացիք. բայց գործը շատ ան-

հաջող գնաց. հույների նենգությամբ և ներքին հակառակությամբ խաչակիրների մեծագույն մասը ջարդվեց թուրքերից և խաչակիրները հազիվ մինչև Դամասկոս հասած, հետ դարձան (1149 թ.):

Մի քանի տարի հետո, Սալահադդին քուրդ իշխանը (պապը Դվին մայրաքաղաքից էր), որ Հալեպի սուլթանի մոտ ծառայության էր մտել, նվաճեց Եգիպտոսը Ֆաթիմյանների ձեռքից և հիմնեց մի նոր՝ Էյումբի սուլթանությունը. շուտով նա նվաճեց նաև Հալեպի սուլթանությունը և կազմեց ահարկու մի պետություն, որ տարածվում էր Նեղոսից մինչև Եփրատ: Նրա ծրագիրն էր վերջ տալ Արևելքի քրիստոնյա լատին իշխանություններին և հետո արշավել Արևմուտք: Սալահադդինը արշավեց Ասորիքի և Պաղեստինի լատին իշխանների վրա, հաղթեց, Երուսաղեմն էլ գրավեց և թագավորին գերի բռնեց (1187 թ.): Նա չկոտորեց քրիստոնյաներին. ո՛չ մի արյունահեղություն չկատարվեց. նա ատում էր լատիններին և չէր վստահում հույներին, բայց սիրում էր հայերին. նա հրամայեց, որ բոլոր լատիններն իրենց պատրիարքի և իշխանների հետ մեկնեն քաղաքից Եվրոպա իրենց սպասավորներով և սրբություններով. խլեց լատինների և հույների վանքերն ու եկեղեցիները, մի մասը մզկիթի վերածեց, մյուսները նվիրեց հայերին, հատկապես Քրիստոսի գերեզմանը և Սրբոց Հակոբյանց վանքը. նա վստահ էր հայերի հավատարմության վրա և ցանկանում էր օգտվել նրանց աշխատասիրությունից՝ երկրի և պետության զարգացման համար:

Եվրոպացիք կազմեցին Երրորդ խաչակրությունը, որի գլուխն անցան գերմանացիք (Ֆրեդերիկ Բարբարոսա կայսեր գլխավորությամբ), ֆրանսիացիք և անգլիացիք: Գերմանացիների բանակը հասավ մինչև Կիլիկիա, ուր հայոց Լևոն իշխանը մեծ օգնություն տվեց նրանց. բայց կայսրը գետում լողանալիս խեղդվեց, որից հետո իր բանակն էլ ցրվեց. 100 000 գերմանացիներից հազիվ 5 000 հոգի հասավ Ասորիք, որոնք միանալով ծովի ճանապարհով եկած անգլիացիների և ֆրանսիացիների հետ, պաշարեցին և գրավեցին Աքիա քաղաքը: Այս տեղից ֆրանսիացիք բաժանվեցին և հետ դարձան. անգլիացիք ցանկացան շարունակել գործը, բայց Երուսաղեմի մոտ, հաշտվելով Սալահադդինի հետ, հետ դարձան: Անգլիացիք գրավեցին միայն Կիպրոս կղզին, ուր փոխադրեցին Երուսաղեմի Լուսինյանների թագավորությունը:

130. ԼԵՎՈՆ Բ ԹԱԳԱՎՈՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ

12-րդ դարի վերջերին Կիլիկիան հասավ իր զորության գագաթնակետին, որի կազմակերպիչն եղավ Կիլիկիայի առաջին թագավոր Լևոն Բ-ը:

Լևոնը գահ բարձրացավ այնպիսի ժամանակ, երբ շրջակա մահմեդական իշխանները զորացած՝ մի մեծ մահմեդական պետություն կազմելու վրա էին: Իր թագավորության նույնիսկ առաջին տարին երեք սուլթաններ արշավեցին Կիլիկիայի վրա. հյուսիսից Իկոնիայի սուլթանը, հարավից Հալեպի և Դամասկոսի սուլթանները միացած. Լևոնը գնաց նրանց դեմ, հաղթեց, առաջինին սպանեց, մյուսներին մեծ կոտորածով երկրից դուրս վռնդեց: Այս հաղթություններով Կիլիկիայի սահմանն ավելի ընդարձակվեց. Կիլիկիան այն ժամանակ տարածվում էր արևմուտքից մինչև Լիկայոնիա, արևելքից մինչև Եփրատ գետը, հարավից մինչև Խոզի գլուխ հրվանդանը, իսկ հյուսիսից՝ Տավրոսից էլ այն կողմ:

Մահմեդականները Կիլիկիայում հաջողություն չունեցան, բայց խորտակեցին Ասորիքի և Պաղեստինի քրիստոնյա իշխաններին, Երուսաղեմը գրավեցին և Սալահադդինը մինչև Եփրատ իր տերությանը միացրեց: Սրա վրա սկսվեց երրորդ խաչակրությունը. գերմանացիների կայսր Ֆրեդերիկ Մեծ Բարբարոսան 100 000 զորքով հասավ Կիլիկիայի դռները և Լևոնից օգնություն խնդրեց, խոստանալով որ փոխարենը թագավորական թագով կպսակի նրան: Հայերն ամեն անգամ օգնում էին խաչակիրներին և այս անգամ էլ չթերացան իրենց քրիստոնեական պարտքը կատարելու:

Ֆրեդերիկոս կայսրը գետի մեջ խեղդվելով խաչակրության գործն անհաջող անցավ, իսկ Լևոնի թագադրության հանդեսը մի քանի տարի ուշացավ: Վերջապես կայսեր որդին և հաջորդը՝ Հենրիկոս Զ. պապի հետ համաձայնվելով, թագավորական թագ և առյուծանշան դրոշ ուղարկեց Լևոնին: Լևոնը 1198 թվականին, Քրիստոսի Ծննդյան տոնի օրը, Տարսոնի մայր եկեղեցում պապի և կայսեր ներկայացուցչի ներկայությամբ և հայոց կաթողիկոսի ձեռքով օծվեց Կիլիկիայի առաջին թագավոր:

Լևոնն իր աթոռը Տարսոնից փոխադրեց Սիս, որ ամուր բերդաքաղաք էր և սկսեց կարգավորել իր երկիրը. նա իր աչքի առաջ ուներ հայկական, հունական, եվրոպական և մահմեդական

վարչաձևերը. այս բոլորի մեջ նա գերադասություն տվեց եվրոպական կարգերին, որ պատվաստեց հին հայկական վարչական ձևի վրա. Կիլիկիա հրավիրեց ֆրանսիացի, իտալացի, գերմանացի և անգլիացի բազմաթիվ պաշտոնյաների, զորավարների, ասպետների, վաճառականների, որոնք իրենց երկրի կարգերը մտցրին հայոց մեջ. Կիլիկիան դարձավ եվրոպական երկիր, ավատական կարգերով: Սկսվեց բանուկ վաճառականություն Արևելքի և Արևմուտքի միջև. ծովեզրյա վայրերում հիմնվեցին մի քանի նավահանգիստներ, որոնցից ամենանշանավորը դարձավ Այասը. այստեղ էին իջնում եվրոպական ապրանքները նավերով և Պարսկաստանի, Թաթարիստանի և Հնդկաստանի քարավանները՝ ցամաքով: Եվրոպացիք հիմնեցին ամեն կարգի հաստատություններ, հյուրանոցներ, գինետուններ, գործարաններ, վաճառատներ, բաղնիքներ, եկեղեցիներ և դատարաններ: Եվ այս բոլորը հասույթի մեծ աղբյուր դարձավ թե՛ նրանց տերերի, թե՛ երկրի ժողովրդի և թե՛ պետության համար:

Լևոնը թագավոր դառնալուց հետո երկարատև պատերազմ ունեցավ Անտիոքի իշխանության հետ, որ 12 տարի տևեց և հայտնի է Անտիոքի հաջորդության պատերազմ անվամբ: Անտիոքի իշխանը մեռնելով, քաղաքն անցել էր Ռուբենին, որ Լևոնի ազգականն էր. սրա հորեղբայրը, որ Տրիպոլսի կոմսն էր, մյուս լատին իշխանների հետ միացած, եկավ Անտիոք, Ռուբենին վտարեց և քաղաքին տեր դարձավ: Լևոնն իր ազգականի իրավունքը պաշտպանելու համար արշավեց եվրոպացիների վրա, հաղթեց նրանց և քաղաքը նորից հանձնեց Ռուբենին: Եվրոպացիք մի քանի անգամ հայերից ջարդվելուց հետո գրգռեցին շրջակա սուլթաններին, որպեսզի նրանց միջոցով հաղթեն Լևոնին, այսպես Իկոնիայի սուլթանը երկու անգամ արշավեց Կիլիկիա, Լամբրոնի իշխանն ապստամբեց, այնուհետև Հալեպի սուլթանը հանկարծակի մտավ Կիլիկիայի սահմանները, վերջապես եվրոպացիք ծովային անակնկալ հարձակում գործեցին Լևոնի վրա, բայց Լևոնը մի առ մի վանեց այս բոլոր հարձակումները և իր 34 տարվա գահակալության մեջ ընդմիշտ անպարտելի մնաց:

131. ԽԱՉԱԿԻՐՆԵՐԻ 4-ՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՊՈԼՍԻ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Իտալիայի հանրապետությունների մեջ ամենահարուստն ու ազդեցիկը Վենետիկն էր: Ադրիական ծովի անկյունում սեղմված այս քաղաքը շարունակ ազատ էր մնացել այն բոլոր բարբարոսների արշավանքից, որոնք Եվրոպան ու Ասիան ողողեցին, քաղաքի բնակիչներն իրենց դեմ ունեին ծովի մեջ ցրված մանր-մունր կղզիներ, ուր պետք եղած ժամանակ փախչելով ապաստան էին գտնում: Այսպիսով վենետիկցիք ո՛չ միայն չտուժեցին, այլ ընդհակառակը ծովեզերքի շրջակա կարևոր քաղաքներին տեր դարձան: Իրենց վաճառականությունը զարգացավ ու տարածվեց. ամեն կողմ հաստատեցին գործակալություններ. երբ Երուսաղեմի թագավորությունը հիմնվեց, Պաղեստինի բոլոր քաղաքների մեջ էլ առանձին մի թաղ ձեռք բերեցին. մինչև անգամ Կիլիկիայի թագավորության մեջ կարևոր տեղեր ստացան:

Վենետիկցիների մրցակիցներն էին հույները և մահմեդականները. առաջինները խանգարում էին իրենց ազատ առևտուրը Սև ծովում և Արշիպեղագոսում, մյուսներն իրենց առաջ փակել էին Հնդկաստանի ճանապարհը. հույները մինչև անգամ կոտորած էին կազմակերպել վենետիկցիների դեմ Պոլսի և շրջակա քաղաքների մեջ. այսպիսով ատելությունն այս երկու ազգերի միջև կատարյալ էր:

Երբ Երրորդ խաչակրությունը բոլորովին ապարդյուն անցավ, պապը կարիքն զգաց չորրորդ խաչակրությունը քարոզելու. թագավորներն ուշադրություն չդարձրին. բայց մի խումբ ֆրանսիացի ասպետներ, իրենց քաջությունը ցույց տալու համար, ընդունեցին կոչը: Երրորդ խաչակրության ժամանակ նկատվել էր, որ ծովի ճանապարհը շատ ավելի կարճ էր ու ապահով քան ցամաքային ճանապարհը, այնչափ թուրքական ավազակաբարո ցեղերի միջից. խաչակիրները դիմեցին ուրեմն վենետիկցիներին և խնդրեցին իրենց նավեր տալ Ս. Երկիրն ազատելու համար: Վենետիկցիք իրենց շահերին համաձայն գտան առաջարկը և պահանջեցին, որ նավերի վարձի փոխարեն խաչակիրները նվաճեն և իրենց հանձնեն Դալմացիայի Զարա քաղաքը, որ Ադրիատիկի իրենց առևտրին արգելք էր հանդիսանում: Խաչակիրները կատարեցին այս առաջարկը: Այնուհետև վենետիկցիք համոզեցին խաչակիրներին, թե Ս. Երկրի բանալին Պոլիսն է և

Կահիրեն. պետք է այս քաղաքներից մեկն ու մեկը գրավել: Այս ձևով վենետիկցիների վաճառականության արգելքները կվերանային. առաջինի գրավումով կբացվեր Սև ծովը, երկրորդի գրավումով՝ Հնդկաստանի ճանապարհը: Որովհետև Կահիրեն ավելի հեռու էր, որոշեցին գրավել Պոլիսը, մանավանդ որ հույների գահաժառանգը, գահից վռնդված, եկել էր այն ժամանակ Վենետիկ և իր ծառայությունն էր առաջարկում խաչակիրներին: Խաչակիրներն արշավեցին Պոլիս և մի հարձակմամբ տիրացան քաղաքին, կողոպտեցին, մի մասն այրեցին, հետո կայսրությունը տապալելով՝ իրենց մեջ բաժանեցին: Վենետիկցիք Պոլսում առանձին մի թաղ ստացան, բոլոր կղզիները, և Ադրիատիկի, Էգեյան ու Մարմարա ծովերի վրա կարևոր նավահանգիստներ. ասպետներից մեկը դարձավ Մակեդոնիայի թագավոր, ուրիշներ Հունաստանի զանազան քաղաքների վրա մեկական դքսություն հիմնեցին. Պոլսի կայսերական գահի վրա բազմեց Բալդվինը, իսկ հույները փախան Փոքր Ասիա և այնտեղ հիմնեցին Նիկիայի կայսրությունը (1204 թ.):

Այսպես խաչակիրները մոռացան Երուսաղեմը, որի համար ճանապարհ էին դուրս եկել, և ծառայելով միայն վենետիկցիների առևտրական գծուծ հաշիվներին կամ իրենց աղքատ գրպաններին, հիմնեցին Պոլսի լատին (ֆրանսիական) կայսրությունը, որ իր գոյությունը շարունակեց մինչև 1261 թվականը:

132. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵՎ ՍԵՐԲԻԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Բուլղարները հույների իշխանության տակ ընկնելուց հետո, երբեք հանգիստ չմնացին. միանալով հարևան սերբերի և չերնագորցիների հետ, նրանք մի քանի անգամ ապստամբեցին հույների դեմ, բայց վաղանցուկ հաջողություններ միայն ունեցան և նորից պարտվելով, բռնության լուծը ավելի ծանրացրին. կայսրերը Բուլղարիայի հանդեպ շատ որոշ քաղաքականություն ունեին, այն է նվազեցնել նրանց թիվը ի՛նչ ձևով որ կարելի էր: Այսպես, երբ պեչենեգներն արշավեցին Բուլղարիա, հույներն անփույթ գտնվեցին պաշտպանելու երկիրը, որպեսզի նրանք ազատորեն կոտորեին բուլղար ժողովրդին: Բուլղար ազգաբնակչության տոկոսը կրճատելու համար, կայսրերը զանազան կողմերից շարունակ Բուլղարիա էին բերում օտար գաղթականություններ.

այսպես մեծամեծ խմբեր բերվեցին հայերից, թուրքերից, վալախներից և հրեաներից: Այդ միջոցին կումանները, որոնք թաթարական մի բարբարոս ցեղ էին, Կասպից ծովից մինչև Կարպատյան լեռները գրավելով, շարունակ ասպատակում էին շրջակա երկրները և կողոպտում: Նրանց հաջողվեց անցնել Դանուբը և Բուլղարիա ու Մակեդոնիա մտնելով, ամեն կողմ ահ ու սարսափ տարածեցին: Հույները միանալով տեղական ժողովուրդների հետ, կարողացան վերջապես ընկճել նրանց: Այն ժամանակ կումանները թույլտվություն խնդրեցին հույների կայսրերից՝ հաստատվելու Բուլղարիայում և այլևս հետ չդարձան. նրանցից է ծագել արդի գագաուզ կոչված բուլղարական ցեղը (1091 թ.):

Կումանների գաղթը թեև հույների քաղաքականության համապատասխան էր, բայց շուտով իրենց դեմ դարձավ: 1186 թվականին բուլղարները, վալախների և կումանների հետ միացած, հույների դեմ մեծ ապստամբություն բարձրացրին. իրենց հետևեցին սերբերը, որոնց միացան նաև բոսնիացիք. հույները, արդեն այնքան թուլացած, չկարողացան զսպել նրանց և Ասսեն Ա-ի ձեռքով վերականգնվեց բուլղարական անկախ թագավորությունը, որի մայրաքաղաքն եղավ Տռնովոն: Երբ Պոլիսն ընկավ լատինական կայսրության ձեռքը, բուլղարները դիմեցին Հռոմ և պապական աթոռից օծում ու պաշտոնական հաստատություն ստացան:

Նույն ձևով ազատություն ստացավ նաև Սերբիան. այս նոր պետության գլուխն անցավ Սեփան Նեմունը և իր իշխանության տակ առնելով նաև Չերնագորիան ու Դալմացիան, հիմնեց մի զորավոր թագավորություն:

133. ՎՐԱՍՏԱՆԻ ՈՍԿԵԴԱՐԸ. ԹԱՄԱՐԱ ԹԱԳՈՒՀԻ, ԻՎԱՆԵ ԵՎ ԶԱՔԱՐԵ ՍՊԱՍԱԼԱՐ

Վրաստանի մեծացման և հզորացման աննախընթաց այն շարժումը, որ սկսել էր Դավիթ Վերանորոգիչը, ավելի ևս զարգացավ Թամարա թագուհու ժամանակ: Նրա օրով Վրաստանն իր մեծության գագաթնակետին հասավ և երկիրը ապրեց իր Ոսկեդարը: Թամարան սերված լինելով բյուզանդական կայսերական ընտանիքից, վայելում էր արդեն հույների բարեկա-

մությունը: Ամուսնանալով օս իշխան Դավիթ Սասլանի հետ և իրեն աջակից ընտրելով Զաքարեին ու նրա եղբայր Իվանեին, որոնք հայ իշխաններ էին, ձեռք բերեց նաև այս երկու ժողովուրդների վստահությունը: Արդեն հայերը թուրք ամիրաներից նեղված, փնտրում էին քրիստոնյա մի պետության հովանավորությունը, և այս ցանկությունը հաջողապես կատարեց Թամարա թագուհին: Թամարան մեծ պատիվների հասցրեց երկու հայ իշխաններին. Զաքարեին նշանակեց ամիրսպասալար Վրաց, իսկ Իվանեին՝ Հայոց և Վրաց աթաբեկ: Սրանք Վրաց թագավորության սյուները եղան: Հայ-վրացական միացյալ բանակների գլուխն անցած, բազմաթիվ պատերազմներ մղելով շրջակա թուրք ամիրաների դեմ, գրավեցին Աղվանքը, Սյունիքը, Գանձակը, Շիրակը, Դվինը, Անին և մինչև իսկ Կարինը հարկատու դարձրին: Այսպիսով Հյուսիսային և Արևելյան Հայաստանը նվաճելով և թուրքերից ու պարսիկներից մաքրելով, միացրին վրացական տերության: Բաղդադի արաբ խալիֆան, լսելով Թամարայի հաջողությունները, պատգամավոր ուղարկեց և նրա հետ բարեկամության դաշինք կնքեց: Ընդհակառակը Հալեպի սուլթան Նուրադդինը, Թամարայի այս մեծամեծ հաջողությունների վրա դառնացած, դեսպան ուղարկեց և պահանջեց, որ թագուհին իր ոտքը գա և հպատակություն հայտնի: Միևնույն ժամանակ իր բանակը մտնում էր Վրաստանի հողերը: Հայ-վրացական բանակը ջախջախեց սուլթանի ուժը և հետ քշեց նրան:

Այս միջոցին էր, որ Պոլսում կազմվում էր լատինական կայսրությունը և հույները Փոքր Ասիա անցնելով, հիմնում էին Նիկիայի կայսրությունը (1204 թ.): Ալեքս Կոմնենոս իշխանը, որ Թամարա թագուհու քեռորդին էր, փախավ Տրապիզոն և իր մորաքրոջ օգնությունը խնդրեց: Թամարան շարժեց իր բանակը և Ալեքսը գրավելով Լազիստանը, Տրապիզոնը, Կիրասոնը, Սամսոնը, Սինոպը, Ամասիան մինչև Հերակլեա (Էրեյլի) հիմնեց Տրապիզոնի հունական կայսրությունը:

Արդաբիլի սուլթանը հանկարծակի հարձակում գործեց Անիի վրա, գրավեց և շատ ժողովուրդ կոտորեց: Վրացիք դուրս եկան նրա դեմ, հաղթեցին, գրավեցին Արդաբիլը և Ատրպատականի զանազան կողմերը ավերելով, հասան Թավրիզ ու գրավեցին այն (1210 թ.): Այսպիսով վրացիք Բաթումիից մինչև Թավրիզ կազմել էին մի խոշոր պետություն, որ ընդգրկում էր Վրաստանը, Հայաստանը, Աղվանքը և Ատրպատականը: Կովկասում վրացական գերիշխա-

նությունը գրեթե մի դար տևեց և թաթարների արշավանքի ժամանակ ընկավ ու ոչնչացավ:

134. ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Հյուսիսային Ասիայի տափաստաններում անհիշատակ ժամանակներից ի վեր ապրում էին զանազան վայրենի թափառական ցեղեր, որոնք ընդհանուր անվամբ թաթար են կոչվում: Այս կողմերից էին դուրս եկել 4-րդ դարում հոները, հետո ավարները, բուլղարները և վերջապես մաճառները: 13-րդ դարի սկզբին Բայկալ լճի շուրջը բնակվող մոնղոլ թաթարական մի ցեղի մեջ երևան եկավ նշանավոր Չինգիզ-Խանը, որ աթոռը հաստատեց Կարակումում և բոլոր թաթարական ցեղերն իր իշխանության տակ միացնելով դուրս եկավ ամբողջ աշխարհը նվաճելու (1203 թ.): Նախ տիրեց միջինասիական Կարակիտայի պետության, հետո հարավ իջնելով, նվաճեց ույգուրների պետությունը, արևմուտքից Նայման և Կըրկըզ թաթարական իշխանությունները, արևելքից նվաճեց Ցին պետությունը, տունգուզները, Մանջուրիա, Կորեան և հետո Չինաստան մտնելով, նվաճեց նրա հյուսիսային մասը Պեկին մայրաքաղաքով միասին: Այնուհետև Չինգիզ-Խանն արշավեց Խորեզմի թուրքական պետության վրա, որ այն ժամանակ Արևելքի ամենամեծ տերությունն էր: Պետության նշանավոր քաղաքները՝ Բուխարան, Սամարղանդը, Բահլը և այլն գրավվեցին և ավերվեցին: Խորեզմը նվաճելուց հետո, Չինգիզ-Խանը Կասպից ծովի եզերքով հյուսիս բարձրացավ, Ուրալը անցավ և արշավեց Եվրոպա, Ղրիմի թերակղզին անապատ դարձավ, բուլղարները քշվեցին Հյուսիսային Վոլգայի ափերը. ռուսները, կումանների հետ դաշնակցելով, դուրս եկան նրա դեմ, բայց ջարդվեցին և Ռուսաստանն արյունով ողողվեց: Այս միջոցին Չինաստանը ապստամբեց և Չինգիզ-Խանն ստիպվեց Եվրոպայի նվաճումը թողնել իր Թուլի որդուն և շտապել Ասիա: Սլավոնական բոլոր ցեղերը միացան և դուրս եկան թաթարների դեմ. Թուլին հաղթեց արյունալի մի ճակատամարտում, ուր ռուսների 6 իշխանները մահ գտան: Այս միջոցին Թուլին ետ կանչվեց և նա Եվրոպան թողնելով նորից Ասիա անցավ: Շուտով Չինգիզ-Խանը մեռավ և իր հսկա պետությունը չորս մասի բաժանվեց. Չինաստան, Չաղաթայ և Սիբիր (Թուրքեստան), Ղփչաղ (Կասպից ծովից ու Սև ծովից մինչև

Ուրալյան լեռները) և Պարսկաստան: Վերջինիս իշխանությունն անցավ Հուլաղու-խանին: Յուրաքանչյուր պետություն սկսեց իր հաշվին նոր նվաճումներ կատարել: Ղփչաղի խաները նորից արշավեցին Ռուսաստան. Կիևի, Չեռնիկովի, Վլադիմիրի և Նովգորոդի իշխանությունները ջնջվեցին. Մոսկվա մայրաքաղաքը գրավվեց (1236 թ.): Ռուսաստանը նվաճելուց հետո, մոնղոլները նվաճեցին Լեհաստանը, Սիլեզիան, Մորավիան, Հունգարիան, որ ավերեցին և քարուքանդ արին: Նրանք անցան մինչև անգամ Դանուբը: Եվրոպան սարսափի մատնվեց այս նոր հեղեղի առաջ, բայց ոչ ոք տեղից չշարժվեց. միայն Գերմանիայի Ֆրեդերիկ Բ կայսրը մի զորավոր բանակ ուղարկեց նրանց դեմ, որոնք մի թաթարական բանակ ջարդուփշուր արին: Սրա վրա թաթարները կանգ առան և ավելի առաջ չշարժվեցին:

Հայաստանն այս միջոցին ենթարկվեց երկու արշավանքի: Խորեզմի թագավորի որդի Ջալալեդդինը, իր երկրից փախուստ տալով, մտավ Հայաստան, ասպատակեց Սյունիքը, Արարատը, հետո Գառնիի առաջ ճակատեց Իվանե աթաբեկի հայ-վրացական միացյալ բանակի դեմ, հաղթեց, ավերեց Վրաստանը, այնտեղից անցավ Խլաթի ամիրայության վրա, հաղթեց և գրավեց Խլաթը, անցավ արևմուտք՝ Իկոնիայի սուլթանի երկրներն ասպատակելու: Սուլթանը, Կիլիկիայի հայոց թագավորը, Ասորիքի լատին իշխանները միանալով, դուրս եկան նրա դեմ և հաղթելով քշեցին Կորդվաց լեռները, որտեղ սպանվեց:

Ջալալեդդինի արշավանքից քիչ հետո եկան թաթարները. Չարմաղան զորավարը Կասպից ծովի հյուսիսային կողմից հարավ իջնելով, ասպատակեց Աղվանքը, Վրաստանը ու մտավ Հայաստան (1236 թ.). սոսկալի անգթություններ գործեց, տեղական բոլոր իշխանությունները նվաճեց, հետո եկավ Անի, որ մատնությամբ գրավեց ու կոտորեց բնակիչներին, ապա գրավեց Կարսը, որ նույնպես ավերեց: Չարմաղանից հետո եկավ Բաղու զորավարը, որ ավերածն ու կոտորածը շարունակեց Հայաստանի արևմտյան ու հարավային մասերի մեջ, Իկոնիայի սուլթանին հաղթելով, գրավեց Կարինը, հետո իջավ Ծոփաց գավառը, գրավեց Վասպուրականն ու Տուրուբերանը, այնուհետև մտավ Միջագետք: Նույն միջոցին Հուլաղուն մտնում էր Պարսկաստան, նվաճում բոլոր մանր իշխանություններին, ջնջում էր հաշիշներին, հետո գնում Բաղդադ, որտեղ դեռ շարունակվում էր արաբների

խալիֆայությունը. թաթարները չարաչար սպանեցին ամիրա-պետին և նրա իշխանության վերջ տալով, Բաղդադը իրենց մայրաքաղաք դարձրին (1258 թ.): Այնուհետև Հուլաղուն անցավ դեպի արևմուտք, նվաճեց Միջագետքը, Հայաստանն առավ իր իրավունքի տակ և այլևս կոտորածները դադար գտան: Հուլաղուն եկավ Հայաստան, ընդհանուր աշխարհագիր կատարեց և 10 տարեկանից վեր ամբողջ արական սերունդը անտանելի հարկերի տակ դրավ: Այստեղից քաշվեցին Մարաղա, ուր Հուլաղուն հաստատեց իր աթոռը և իր կյանքի մնացած մասը խաղաղությամբ անցկացրեց:

135. ՀԵԹՈՒՄ Ա. ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Եգիպտոսում հիմնվել էր մամլուկների պետությունը, որոնք Ղփչաղի թուրք զինվորներն էին, Եգիպտոսի սուլթանների ծառայության կանչված և սուլթանին սպանելով նրա տեղն էին անցել (1250 թ.): Սրանք կազմվել էին այն թուրք գերիներից, որոնց թաթարները վաճառում էին և շատ իշխաններ գնելով՝ իրենց էին ծառայեցնում:

Եգիպտական սուլթանությունը դեպի Եփրատ առաջանալուց հետո, արևելյան քրիստոնեությունը ծանր դրության մեջ ընկավ: Ծանրացավ նաև Կիլիկիայի դրությունը, որ չորս կողմից շրջա-պատված մահմեդական ահեղ ծովում, չուներ դաշնակից կամ բարեկամ: Արդեն Լևոն Բ-ի մահից հետո, Իկոնիայի սուլթանը խլել էր Իսավրիայի մի մասը, որ գտնվում էր Կիլիկիայի իշխանության տակ: Հայերը, դաշնակից գտնելու հույսով, թագավորության միակ ժառանգ Զաբելին ամուսնացրին Անտիոքի լատին իշխանի որդու՝ Փիլիպոսի հետ, որ և բարձրացավ Կիլիկիայի գահը: Բայց որովհետև Փիլիպոսն սկսել էր լատինական ծեսը տարածել հայոց մեջ և թագավորական գանձերը կողոպտել, ուստի հայերը գա-հազուրկ արին նրան և բանտարկեցին, որտեղ մեռավ: Այսպես Անտիոքի դաշնակցությունը զուր անցավ և արդեն Անտիոքն էլ քիչ հետո հպատակվեց մահմեդականներին: Իրերի այս կացության մեջ Հայոց նոր թագավոր Հեթում Ա-ը ստիպված եղավ հաշտվել Իկոնիայի սուլթանի հետ և հրաժարվել Իսավրիայից: Նա ուզեց դաշնակցել եվրոպացիների հետ, բայց տեսավ որ նրանք էլ իրենց ներքին կռիվներով զբաղված, ժամանակ չունեին Արևելքով

զբաղվելու. արդեն վերջին խաչակրությունները ցույց էին տվել իրենց թուլությունը: Հույները շատ հեռու էին և նույնիսկ իրենք անզոր էին իրենց գոյությունը պահելու շարունակ առաջադիմող սելջուկների դեմ: Ի՞նչ պետք էր անել:

Մոնղոլները համակիր էին քրիստոնեության և բուդդայականության. ընդհակառակը նրանք թշնամի էին իսլամության և դաոյականության. Չինաստանում նրանք պաշտպանեցին բուդդայական կրոնը, որ ամբողջ երկրում տարածեցին՝ ջնջելով դաոյականությունը:

Քաղաքական այս տագնապալի կացության մեջ Արևելքից մի նոր հույս ծագեց. թաթարներն էին սրանք, որ Միջին և Ծայրագույն Ասիայի պետությունները նվաճելուց և Հայաստանը գրավելուց հետո, մտել էին Փոքր-Ասիա՝ սելջուկների դեմ կռվելու: Իկոնիայի սուլթանը նրանց դեմ էր դուրս եկել, բայց հաղթվել էր և Կապադովկիայում, Հայաստանում և Ասորիքում ունեցած երկրները մեծ մասամբ կորցրել էր: Հեթումը սելջուկյանների անկման վրա ուրախացած, քաղաքագիտական նուրբ հոտառությամբ հասկացավ, որ պետք է դաշնակցել թաթարների հետ: Քաղաքական շահերը համապատասխան էին. թաթարներն ուզում էին ջնջել մահմեդական պետությունները, հատկապես Բաղդադի խալիֆայությունը, որի անունը դեռ շատ հզոր էր. հայերն էլ թշնամի էին մահմեդականներին. ուստի միության եզր կար: Բացի այդ, թաթարները շատ համակիր էին քրիստոնեության: Արդեն 7-րդ դարից նեստորական քարոզիչներ մտել էին Հնդկաստան, Չինաստան և Թաթարիստան ու քրիստոնեություն էին քարոզում. մոնղոլներից շատերն ընդունեցին այս կրոնը: Երբ կազմվեց թաթարական պետությունը, քրիստոնյաներն ավելի բազմացան, որովհետև խաներից շատերը քրիստոնյա կանանց հետ ամուսնանալով, պաշտպան էին հանդիսանում նոր կրոնին: Այս նկատումներով եվրոպական պետություններն անգամ ուզում էին օգտվել նրանցից. 1245 թվականին պապը քրիստոնյա մի պատգամավորություն էր ուղարկել Թաթարիստան. 3 տարի հետո էլ ֆրանսիացիների Լուդովիկոս Թ թագավորը ձեռնարկեց քաղաքական դաշինք կնքել մոնղոլների հետ. մինչև անգամ Պեկին մայրաքաղաքում քրիստոնեական եկեղեցի և եպիսկոպոսություն հաստատվեց:

Այս դիտավորությամբ Հեթումը բանակցության մեջ մտավ

թաթարների Բազու զորավարի հետ և առաջին համաձայնությունը կնքվեց: Այս բանը գրգռեց սելջուկյաններին և Իկոնիայի սուլթանը միանալով Կիլիկիայի ավատական Լամբրոնի իշխանի հետ, մի քանի անգամ արշավեց Կիլիկիա. Հեթումը արշավեց նրանց վրա, սպանեց սուլթանին և Լամբրոնի իշխանին նորից հպատակեցրեց:

Բայց պետք էր թաթարական դաշնակցությունը դնել հաստատուն հիմքի վրա. սրա համար Հեթումը նախ իր եղբոր՝ Սմբատ սպարապետին դեսպան ուղարկեց թաթարների մեծ խանի մոտ և նրա համաձայնությունն առնելուց հետո անձամբ գնաց Կարակում՝ թաթարների մայրաքաղաքը, Բայկալ լճի վրա: Այնտեղ կնքվեց հայ-թաթարական հարձակողական և պաշտպանողական դաշնադրությունը. այս դաշնադրությամբ թաթարները հանձն էին առնում օգնելու հայերին ամեն արտաքին հարձակման պարագային և հետ վերցնելու սելջուկյանների գրաված հողերը. իսկ հայերը հանձն էին առնում օգնել թաթարներին Երուսաղեմը գրավելու և մամլուկների դեմ պատերազմելու (1253 թ.): Երեքուկես տարի տևեց այս ճամփորդությունը և Հեթումը Մանգու խանի եղբայր Հուլաղու զորավարի հետ եկավ Կիլիկիա: այստեղ լսեց, որ սելջուկների սուլթանն իր բացակայության ժամանակ արշավել էր Կիլիկիա և մի շարք վայրեր գրավել: Հեթումը վազեց սուլթանի վրա, հաղթեց, տիրեց Կիլիկիայի արևելյան կողմի երկրներին՝ մինչև Եփրատ և ամբողջ Իսավրիային:

Շուտով Հուլաղուն անցավ Ասորիք և հրավեր տվավ Հեթումին իր զորքով գալու և իրեն միանալու՝ Երուսաղեմ արշավելու համար: Հեթումը մեծ բանակով հասավ Եդեսիա, այստեղից դաշնակիցներն արշավեցին Հալեպ, որ գրավելով, սուլթանին գերի բռնեցին և աքսորեցին. հետո իջան Դամասկոս, որ Հուլաղուն գրավեց: Դաշնակիցներն այս երկրները բաժանեցին իրենց միջև. Հալեպը տրվեց հայոց, իսկ ավելի հարավ մինչև Դամասկոս՝ մնաց թաթարներին: Եվ մինչև Հուլաղուն և Հեթումը պատրաստվում էին Երուսաղեմ արշավելու, հանկարծ Մանգու խանի մահվան լուրը հասավ և Հուլաղուն՝ պահապան զորք թողնելով Դամասկոսում, շտապեց Թաթարիստան, իր եղբոր գահը ժառանգելու (1259 թ.):

136. ԻՏԱԼԻԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԶԱՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գերմանացիների կայսեր և պապի պայքարի մեջ պապերի իրական զորությունը հենվել էր Երկու Սիկիլիաների թագավորության քաջ նորմանների վրա. ուստի Ֆրեդերիկ Բարբարոսան աշխատեց գրավել այս պետությունը, որ Նաբոլիից սկսած գրավում էր ամբողջ Հարավային Իտալիան Սիկիլիա կղզով և տարածվում էր մինչև Աֆրիկայի հյուսիսային ափերը: Ֆրեդերիկը հանճարեղ մի հնարք գտավ. իր որդուն պսակեց թագավորի աղջկա հետ, որ նրա միակ ժառանգն էր. այսպիսով Ֆրեդերիկի մահից անմիջապես հետո որդին Հենրիկոսը տեր դարձավ նաև այս երկրին (1194 թ.):

Այսպիսով Գերմանիան հասավ այնպիսի մեծության, որի նմանը Եվրոպան դեռ չէր տեսել Կառլոս Մեծի օրից ի վեր: Իրեն էր պատկանում Բալթիկ ծովից մինչև Աֆրիկան:

Այսպիսի հզոր մի պետություն վտանգավոր էր պապի համար, որ ամեն կողմից շրջապատվել էր գերմանական հողերով: Այս ժամանակ արդեն պապ էր դարձել Իննովկենտիոս Գ-ը, որ Գրիգոր Է պապի ոգով համակված մեկն էր և պապական իշխանությունը կայսերական իշխանությունից բարձր էր համարում: Ինքն էր միջամտել Իսպանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Հունաստանի, Նորվեգիայի, Հունգարիայի քաղաքական գործերին և այժմ էլ ցանկանում էր հետ վանել գերմանական տիրապետությունը Հռոմի շրջակայքից և Երկու Սիկիլիաների թագավորությունից: Այս պատճառով նա գահակալական վեճ գրգռեց Գերմանիայի կայսերական տոհմի մեջ և ի վերջո գահը հանձնեց Ֆրեդերիկ Բ-ին, այն պայմանով, որ վերջինս հրաժարվեր Երկու Սիկիլիաների թագավորությունից:

Բայց պապը խաբվեց. Ֆրեդերիկը կայսր դառնալուց հետո մերժեց իր պայմանը և Երկու Սիկիլիաների թագավորությունը պահեց իր ձեռքում: Պապը հորդորեց նրան կազմակերպելու 5-րդ խաչակրությունը, բայց Ֆրեդերիկը ճարպիկ կերպով այս գործը թողեց Հունգարիայի թագավորի վրա, որ իր հունգարներով ու գերմանական զորքով արշավեց Եգիպտոս, գրավեց Դամիաթ քաղաքը, բայց հետո պարտվելով հետ փախավ (1217 թ.): Ֆրեդերիկը գնաց զսպելու Սիկիլիայում ծագած ապստամբությունը և այսպիսով առիթ ունեցավ կազմակերպելու և կղզուց դուրս բերելու 20 000 սարակինոսների մի զորավոր բանակ, որով հաջող կերպով

պիտի կարողանար կռվել իր թշնամիների դեմ: Կայսրերի ամենաթույլ կողմը պապի բանադրանքն էր. և Ֆրեդերիկը ճիշտ սրա համար էր գումարել այս բանակը, որին, որպես մահմեդական, չէր կարող ազդել պապի թելադրանքը: Վտանգն ավելի էր մեծացել պապի համար, և նա, վտանգն Իտալիայից հեռացնելու համար, անեծքով ստիպեց կազմել Վեցերորդ խաչակրությունը, Ֆրեդերիկը մեկնեց Երուսաղեմ, որը փոխանակ կռվով գրավելու, փողով գնեց սուլթանից (1229 թ.): Երուսաղեմում Ֆրեդերիկը թագավոր օծվեց: Նշանակալի է, որ կայսրը բանադրված լինելով պապից, ոչ մի կաթոլիկ եկեղեցական չհամարձակվեց օծել նրան և հայ կրոնավորներն էին, որ պապի իշխանությունը չճանաչելով, պսակեցին նրան:

Բայց նրա բացակայության ժամանակ, իտալացիք միացել, կազմակերպել էին Երկրորդ լոմբարդական լիգան և գրավել էին Սիկիլիան. պապը ոտքի էր հանել իտալական բոլոր հանրապետությունները: Ֆրեդերիկը եկավ, անցավ իր սարակինոսների գլուխը և արշավելով Իտալիայի բոլոր կողմերը, վերագրավեց Սիկիլիան, ջարդեց լոմբարդացիներին, որոնցից 10000 հոգու սպանեց, նվաճեց բոլոր ապստամբ հանրապետությունները՝ Ջենովան, Վենետիկը, Տոսկանան, վերջապես Հռոմը պաշարեց և գրավեց: Սրա վրա պապը սրտի ցավից մեռավ և պապական աթոռը փոխադրվեց Ֆրանսիա, ուր ընդհանուր ժողովով գահազուրկ հայտարարեց Ֆրեդերիկին: Ֆրեդերիկը կատաղեց. Աֆրիկայից բերել տվեց սարակինոսների նորանոր գնդեր և Իտալիայում արյան հեղեղ թափեց. իտալացիք անընկճելի կերպով շարունակում էին կռիվը. Ֆրեդերիկը որոշեց դիմել մոնղոլներին և թաթարներին և նրանց բարբարոսական հեղեղը բաց թողնել Եվրոպայի վրա. բայց հազիվ այդ որոշումն էր տվել, երբ մահը վրա հասավ և Իտալիան ու նրա հետ էլ թերևս ամբողջ Եվրոպան ազատվեց մեծ արհավիրքից (1250 թ.):

Այլևս վերացել էր գերմանական իշխանությունը Իտալիայից և սկսել էր ազատ կյանքը բոլոր հանրապետությունների մեջ:

137. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Լատինները տիրելով Պոլսին, մի ամբողջական պետություն չէին կազմել, այլ բյուզանդական կայսրության բոլոր հողերը մանր-մունր մասերի վերածելով, բաժանել էին իրենց մեջ. այդ պատճառով էլ չկարողացան հաստատուն բան կազմել: Միևնույն ժամանակ զանազան հույն իշխաններ պետության այս կամ այն կողմը հաստատվելով, հիմնեցին առանձին կայսրություններ. այսպես էին Եպիրոսի, Հռոդոսի, Թեսալոնիկեի, Նիկիայի և Տրապիզոնի կայսրությունները: Բացի սրանցից, Բալկանյան թերակղզու հյուսիսային ծայրում արդեն 12-րդ դարի վերջից կազմվել էր երկու զորավոր պետություն՝ Բուլղարիան և Սերբիան:

Այս զանազան իշխանությունների միջև չկար միության կապ. բոլորն էլ ձգտում էին ի վնաս մյուսների ընդարձակել իրենց իշխանությունը. լատիններն էլ ուզում էին տիրել Փոքր Ասիայի քաղաքներին և ոչնչացնել Նիկիայի կայսրությունը. բայց իրենց դեմ ունեին բոլոր հույն կայսրերի թշնամությունը: Հատկապես թշնամի էին իրենց բուլղարները, որոնք շարունակ ասպատակում էին Թրակիան և մինչև անգամ Ադրիանուպոլսի առաջ լատինական զորքը ջարդելով՝ կայսրին էլ գերի բռնեցին: Եպիրոսի կայսրը նվաճեց Թեսալիան և Թրակիան ու բուլղարներին և լատիններին հետ քշեց. մյուս կողմից Նիկիայի կայսրն էլ գրավեց Հռոդոսը, Սամոսը, Քոսը և այլ վայրեր: Այսպիսով հրապարակի վրա մնացին հունական երկու կայսրեր, որոնցից մեկն ու մեկը դրության տերը պիտի դառնար: Եպիրոսի կայսրը հիմարաբար մերժելով բուլղարների առաջարկած դաշնակցությունը, սրանք անցան Նիկիայի կայսեր կողմը, որով սա ավելի զորացավ: Լատինները դուրս եկան այս դաշնակցության դեմ և հաղթեցին թե՛ բուլղարներին և թե՛ նիկիացիներին: Բայց գանձարանի անձուկ դրության և արևմուտքից զինվորական օգնություն չստանալու պատճառով ստիպված էին տեղի տալ: Նիկիացիները դիմեցին սելջուկների օգնության և նրանց հետ միացած, տիրեցին ամբողջ Փոքր-Ասիայի լատինական հողերին: Այս միջոցին ծագեց թաթարների ահարկու արշավանքը, որ շուտով վերջ տվեց Իկոնիայի սելջուկյան իշխանության: Ինչպես Կիլիկիայի Հեթում թագավորը, նույնպես և Նիկիայի կայսրը խելոք քաղաքականությունն ունեցավ միանալու թաթարների հետ և արշավեց Եվրոպա: Նրա բանակը կազմվել էր հույն, սելջուկ, կուման, բուլղար և այլ սլավոն

ցեղերից. միևնույն ժամանակ նա իրավունքներ էր տվել վենետիկցիների հակառակորդ ջենովացիներին, որով հաջողվել էր եվրոպացիների մեջ երկպառակություն գցել: Այսպիսով նա դյուրությամբ առավ Թեսալոնիկեն, Եպիրոսը, այստեղի հունական կայսրությունը միացրեց իրեն և հետո շտապեց Պոլսի վրա. եվրոպացիք օգնություն խնդրեցին արևմուտքից. մի նավատորմիղ ճանապարհ ընկավ դեպի Պոլիս. բայց կայսրը շտապեց հարձակվել և դեռ նավատորմիղը չհասած, քաղաքացիների սիրալիր օգնությամբ հեշտությամբ գրավեց քաղաքը: Լատինները շտապով փախան և հունական կայսրությունը վերանորոգվեց (1261 թ.): Արևելքում մնաց միայն Տրապիզոնի կայսրությունը, որ բարեկամանալով մի կողմից Պոլսի կայսրության և մյուս կողմից Վրաստանի թագավորության հետ, դեռ շարունակում էր իր գոյությունը:

138. ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ԿՌԻՎՆԵՐԸ

Նորմանդական տիրապետությունը Անգլիայում Ֆրանսիայի համար փառք լինելու փոխարեն, մեծ աղետների և դարավոր պատերազմների պատճառ դարձավ: Նորմանդիայի դուքսերը Անգլիան նվաճելուց և այնտեղ թագավոր դառնալուց հետո, չէին հրաժարվել Ֆրանսիայի իրենց հողերից և հետևաբար մնում էին դեռ ֆրանսիացի թագավորի վասալը: Սրանից առաջ էր գալիս այն տարօրինակ երևույթը, որ վասալը ավելի զորավոր էր քան տերը: Ֆրանսիայի թագավորները ուզեցին ընկճել կամ գոնե տկարացնել իրենց վասալի զորությունը, իսկ վասալներն էլ աշխատում էին ջլատել Ֆրանսիան և հետո իրենց իշխանության տակ առնել: Թշնամությունն սկսեց նույնիսկ Գիյոմի ժամանակ, երբ բրըտոններն ապստամբելով Գիյոմի դեմ, ֆրանսիացիք սկսեցին օգնել նրանց. Գիյոմը հարվածեց բրըտոններին և մինչև Փարիզի մոտերը հասավ. իր մահը միայն խանգարեց, որ մեծ պատերազմ բացվեր Ֆրանսիայի և Անգլիայի միջև:

Դրությունն ավելի վատացավ, երբ Անգլիայի թագավորները զանազան խնամություններ կնքելով այս ու այն իշխանի հետ, ժառանգությամբ ձեռք բերին Ֆրանսիայի այլևայլ գավառները. այսպես Անժուն, որ Ֆրանսիայի թագավորների համար ծառայում էր իբր հենարան, Ակվիդանիան, Բրըտանյը: Այնպես որ, երբ

Անժուի կոմսը Հանրին բարձրացավ Անգլիայի գահի վրա, իրեն էր պատկանում, բացի Անգլիայից և Իռլանդիայից, որ նոր էր նվաճել, նաև Ֆրանսիայի կեսը, մինչդեռ Ֆրանսիայի թագավորը հազիվ Ֆրանսիայի քառորդ մասի տերն էր: Այս դրության մեջ շատ պարզ էր, որ Անգլիան պիտի կլաներ նաև Ֆրանսիայի մնացած մասը, և եթե այդ բանը տեղի չունեցավ, այդ այն պատճառով էր, որ Անգլիան կլանված էր ամբողջ ներքին կռիվներով. կռիվներ թագավորական ընտանիքում, թագավորի և իշխանների միջև, թագավորի և եկեղեցական իշխանության միջև:

Ֆրանսիայի և Անգլիայի միջև մեծ կռիվներն սկսվում են 13-րդ դարի հետ, երբ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Օգոստոսը, Անգլիայի մեծ զորությունը խորտակելու համար՝ պատերազմ բաց արեց Անգլիայի թագավոր Հովհաննես Անհողի դեմ, որ ստոր ու անխելք մեկն էր: Ֆիլիպը գրավեց Նորմանդիան, Անժուն և Ֆրանսիայի այն մասերը, որ իբր ավատ պատկանում էին Անգլիայի թագավորին (1204 թ.): Պապն առաջարկեց հաշտեցնել երկու կողմերին, բայց Հովհաննեսը եպիսկոպոսական ընտրությունների առթիվ հակառակ գնալով պապին, շատ զայրացրեց նրան և վերջապես պապը բանադրանք արձակեց նրա դեմ: Հովհաննեսն այնքան զիջեց և ստորացավ, որ մինչև իսկ Անգլիան պապական աթոռի ավատը հայտարարեց և տարեկան տուրք խոստացավ:

Անգլիայի այս աստիճանի անկման պատճառը Ֆրանսիան էր. ուստի Հովհաննեսը դավադրություն կազմեց նրա դեմ. ինքը՝ Գերմանիայի կայսրը և զանազան կոմսեր միացան և զանազան կողմերից Ֆրանսիայի վրա հարձակվեցին: Ֆիլիպը դուրս եկավ նրանց դեմ և բոլորին էլ մի առ մի հաղթեց: Հովհաննեսը պարտված և ամոթահար իր երկիրը քաշվեց:

Ֆրանսիայի փառքն ավելի մեծացավ Ֆիլիպի հաջորդների, մանավանդ Սուրբ Լյուդովիկոսի օրով, որ գրավեց Ֆրանսիայի մնացած հողերն էլ, ջախջախեց իր դեմ կազմակերպված մի դաշնակցություն, որ կազմել էին Անգլիայի և Իսպանիայի թագավորներն ու մի քանի կոմսեր, թե՛ Անգլիայի և թե՛ Իսպանիայի հետ կապեց խաղաղության դաշինք, իր եղբայրը գրավեց Հարավային Իտալիայի (Նապոլիի) թագավորությունը, վերջապես ինքն էր, որ կազմեց խաչակիրների 7-րդ (1248 թ.) և վերջին՝ 8-րդ արշավանքները դեպի Եգիպտոս, ուր և մեռավ ինքն էլ (1270 թ.):

139. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ

Հովհաննես Անհողը, չնայած այն բանին, որ շարունակ պարտվում էր Ֆրանսիայում, իր երկրումն էլ մի մեծ բռնակալ էր. նա շարունակ դրամ էր պահանջում բարոններից, բայց այդ գումարները շռայլում էր անօգուտ բաների համար: Նա աշխատում էր խլել պարոնների իրավունքը. երբ մի բարոն մեռնում էր, նրա ժառանգորդներից ահագին գումար էր վերցնում. եթե ժառանգն անչափահաս էր, խնամակալ անվան տակ կողոպտում էր նրա կալվածները. եթե ժառանգն աղջիկ էր, աճուրդով ամուսնացնում էր այս կամ այն ասպետի հետ. ամենաչնչին հանցանքի համար մեծ տուգանքներ էր նշանակում: Վերջապես բարոնների համբերությունը հատավ. և երբ Հովհաննեսը պարտված Ֆրանսիայից եկավ Անգլիա՝ նոր գումարներ պահանջելու, բարոններն ապստամբեցին և հաղթելով թագավորին, ստորագրել տվին նրան «Ազատության մեծ հրովարտակը»՝ Charte-ը (1215 թ.):

Այս եղավ անգլիական ազատ կարգերի հիմքը:

Հովհաննեսի հաջորդը՝ Հենրիկոս Գ-ը, մի թույլ և շռայլ թագավոր դուրս եկավ. նա շրջապատեց իրեն Ֆրանսիայից եկած շողոքորթ և հաճոյախոս բարոններով, եկեղեցական պաշտոնները բաշխեց իտալացիներին, իսկ անգլիացիները միայն ծառայում էին նրանց գրպանները հարստացնելու համար և պարտավոր էին աչք փակել բոլոր այն զեղծումների և կողոպուտների առջև, որ կատարում էին նորեկները և թագավորը: Վերջապես կազմվեց դժգոհների մի խումբ, որոնց գլուխն անցավ Մոնֆորը: Սրանք զենք վերցրին և հաղթելով թագավորին՝ բանտարկեցին: Այն ժամանակ Մոնֆորը ձեռք վերցրեց Անգլիայի ղեկավարությունը. կազմակերպվեց 10 հոգուց բաղկացած մի խորհուրդ, որ պիտի վարեր պետության գործերը. իսկ ավելի կարևոր գործերի կառավարությունը հանձնվեց ամբողջ Անգլիայի ժողովրդական ներկայացուցիչներին. յուրաքանչյուր քաղաք կամ կոմսություն պիտի ուղարկեր երկու ներկայացուցիչ, որոնք միանալով բարոնների և բարձր հոգևորականների հետ, պիտի կազմեին համագումար ժողովը:

Այս եղավ Անգլիայի և ամբողջ աշխարհի առաջին պառլամենտը (1264 թ.):

Բարոնները դժգոհ մնացին, որ իրենց տիրապետությունն այսպես սահմանափակվեց. դժգոհ մնաց նաև թագավորը, և այս երկուսը միացած, պատերազմի դուրս եկան Մոնֆորի դեմ,

հաղթեցին և Մոնֆորն սպանվեց. բայց իր կատարած գործը մնաց և այժմ տիրապետում է ամբողջ աշխարհում:

140. ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵԳԻՊՏԱՑԻՆԵՐԻ ԴԵՄ

Երբ Հուլաղուն գնաց Թաթարիստան, եգիպտացիների սուլթանը սիրտ առած, նորից մտավ Ասորիք, հաղթեց թաթարների մնացորդ բանակին և նրանց գրաված հողերին տիրելով, հասավ Կիլիկիա և Հեթումից հարկ պահանջեց: Հեթումն իսկույն իր երկու որդիներին ուղարկեց թշնամու դեմ, իսկ ինքն շտապեց գնալու թաթարներից օգնական զորք առնելու: Սուլթանը հաղթեց արքայորդիներին, մեկին գերեց, մյուսին սպանեց և Կիլիկիան տակնուվրա անելով հետ դարձավ: Եվ երբ Հեթումն հասավ Կիլիկիա, արդեն ամեն ինչ վերջացել էր, բերված զորքն էլ այնքան մեծ թիվ չէր կազմում, որպեսզի նոր հարձակման սկսեր. ուստի ավելի լավ համարեց Հալեպը սուլթանին տալով գերված որդուն ազատել և հաշտվել եգիպտացիների հետ:

Եգիպտացիք երկրորդ անգամ արշավեցին Կիլիկիա Հեթումի հաջորդ Լևոն Գ-ի ժամանակ, երբ երկիրը բաժանվել էր զանազան իշխանների ապստամբությամբ: Լևոնը չկարողացավ զորավոր բանակ կազմակերպել և երկիրը անպաշտպան թողնելով, քաշվեց լեռները: Եգիպտացիք մտան Կիլիկիա, շատ տեղեր ավերեցին, առին նույնիսկ Տարսոն մայրաքաղաքը, այրեցին, կողոպտեցին ու ջարդեցին, բայց հետո Սիսի առաջ մի մեծ ջարդ կրելով, թողեցին երկիրը և հետ դարձան:

Շուտով եգիպտացիք արշավեցին երրորդ անգամ, բայց այս անգամ Լևոնը պատրաստ էր ընդունելու նրանց: Նա իր զորքը մի քանի մասի բաժանած, զանազան վայրերում դարանի դրեց. մի բանակ սպարապետին հանձնած՝ թշնամու դեմ ուղարկեց, իսկ ինքն էլ թիկունքը կտրեց: Եգիպտացիք ամեն կողմից պաշարված, ընկան ծուղակի մեջ և այնպիսի ջարդ կրեցին, որ մնացյալը հազիվ կարողացավ փախչել: Սուլթանը նոր զորքով օգնության հասավ, բայց վիրավորվելով քաշվեց Դամասկոս, ուր և մեռավ:

Թաթարների խանը լսելով հայոց այս մեծ հաղթությունը, դեսպաններ ուղարկեց Լևոնին շնորհավորելու, միանգամայն և

առաջարկեց Միջագետքից նվաճված գավառները Կիլիկիայի պետության միացնելու: Բայց Լևոնը մերժեց, իմանալով որ դժվար պիտի լինի իրեն կառավարել մի այնպիսի ընդարձակ երկիր, այդքան թշնամիների միջև (1276 թ.):

Այս հաղթական պատերազմից հետո հայերն ու թաթարները արշավեցին Ասորիք և ահագին ջարդ սփռելով եգիպտացիների բանակում, հասան մինչև Համա. գրավեցին Հալեպն ու Դամասկոսը: Մի վճռական ճակատամարտում, որ հայերն ու թաթարները մղեցին եգիպտացիների դեմ, սուլթանի զորքը մեծ ջարդ կրեց. սուլթանը փախչելու վրա էր. հանկարծ թաթարների բանակում անկարգություն առաջացավ և մի թևը հետ քաշվեց. այս շփոթությունից օգուտ քաղեց սուլթանը, նորից հարձակվեց հայոց և թաթարների մնացած բանակի վրա և ստիպեց քաշվել Կիլիկիա:

Եգիպտացիք նորից արշավեցին Կիլիկիա Հեթում Բ-ի ժամանակ. թաթարներն զբաղվել էին պատերազմով, ուստի չկարողացան օգնություն ուղարկել. եգիպտացիք մտան Կիլիկիա, պաշարեցին կաթողիկոսանիստ Հռոմկլա քաղաքը, որ երկար դիմադրելուց հետո գրավվեց, կոտորվեց, իսկ ժողովրդի մնացած մասը կաթողիկոսի հետ միասին Եգիպտոս գերի տարվեց (1291 թ.):

Շուտով հայոց մեջ գահակալական կռիվ սկսվեց. թագավորի եղբայրներն սկսեցին իրար ձեռքից հափշտակել գահը. եգիպտացիների սուլթանը օգուտ քաղելով այս խառնակ վիճակից, շտապեց արշավել Կիլիկիա: Բայց հազիվ մոտեցել էր սահմանին, Հեթումը գնաց նրա դեմ, զորքը ջարդեց և սուլթանին էլ գերի բռնելով թաթարների Ղազան խանին նվեր ուղարկեց:

Երբ եգիպտացիք լսեցին իրենց այս մեծ կորուստը, կատաղեցին և նոր սուլթանը 100 000 զորքի գլուխն անցած վազեց Կիլիկիա: Ղազան խանը հասավ. Հեթումը և Ղազանը միացած, 200 000-անոց բանակով արշավեցին եգիպտացիների վրա, ջարդուփշուր արին սուլթանի զորքը և մտան Ասորիք. գրավեցին Դամասկոսը, նվաճեցին Պաղեստինն ու հասան Երուսաղեմ: Այստեղ Հեթումը կատարեց քրիստոնեական մեծահանդես տոն, հոգաց քրիստոնյա ժողովուրդների կարիքները և կառուցեց զանազան շինություններ հայոց Սրբոց Հակոբյանց հռչակավոր վանքում (1301 թ.):

Դաշնակից բանակը ճանապարհ ընկավ Եգիպտոս արշավելու և եգիպտական տերության վերջին հարվածը հասցնելու. հանկարծ լուր հասավ, թե Ղազան խանի ազգականներից մեկը ապստամբել

է իր դեմ. Ղազանն ստիպվեց զորքի մեծ մասը վերցնելով հետ դառնալ. եգիպտացիների սուլթանը հարմար առիթ գտավ. ռազմագիտորեն նա թիկունքից հարձակում գործեց հայ-թաթարական մնացորդ բանակի վրա և շփոթություն գցելով նրա մեջ, ստիպեց նորից հետ քաշվել:

141. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ. ԿՈՒԲԻԼԱՅ ԽԱՆ (ՄԵՌԱԾ 1294 Թ.)

Չինացիք չկարողանալով դիմադրել քին թաթարների արշավանքին, որոնք ամբողջ Հյուսիսային Չինաստանը նվաճել և Հո-Նան նվաճելով, ուժեղ պետություն էին հաստատել, նրանց արևմտյան ցեղակից մոնղոլների օգնությունը խնդրեցին. 5 քին թաթարների թագավորը իզուր մեծ զիջումներ արեց և առաջարկեց համաձայնության գալով՝ այս անխոհեմ քայլին չդիմել, որովհետև, ասաց նա, մոնղոլները քիներին նվաճելուց հետո, նաև չինացիների պետությունն էլ պիտի գրավեն: Չինացիների և մոնղոլների միացյալ բանակը ջարդեց քիներին և վերջապես եկավ պաշարեց Հո-Նան մայրաքաղաքը: Պաշարումը երկար տևեց. բնակիչները մեծ դիմադրություն ցույց տվեցին. բայց վերջապես սովը տիրեց և մարդիկ սկսեցին միմյանց ուտել: Նգայ-թի թագավորն ամեն հույս կտրած, խեղդամահ եղավ և այսպիսով արևելյան կամ քին թաթարների պետությանը վերջ տրվեց (1235 թ.):

Մոնղոլների առաջնորդ Կուբիլայ խանն իրեն կայսր հռչակելով՝ նվաճեց ամբողջ հյուսիսային Չինաստանը, որ պատկանում էր քիներին. Սեչուան գավառի մայրաքաղաքում 40 000 մարդ սպանեց: Հետո 700 000-անոց մի բանակ ուղարկեց հարավային Չինաստանի վրա, որտեղ դեռ չինացիների կայսրերը շարունակում էին իրենց իշխանությունը: Կայսրը ծով փախավ, ուր չինական նավատորմը մոնղոլների նավատորմի հետ կռվի բռնվեց: Սակայն փոթորիկն աննպաստ էր չինացիներին: Մոնղոլներն այստեղ էլ հաղթեցին, և նախարարն ամեն հույս կտրած, գրկեց 18-ամյա կայսրին և երկուսը միասին նետվեցին ծով՝ ազատ մահը ամոթալի ստրկությունից գերադաս համարելով: Նրանց հետևեց նաև թագուհին: Այդ օրը 100 000 չինացի մահ գտավ: Չինական Մեծ կայսրությունը, որ 4 000 տարվա կյանք ուներ, վերջացավ (1279 թ.):

Կուբիլայ խանն իր տերությունը ներսից էլ զորացնելու համար,

ուզեց չին ժողովրդի սերը գրավել, այն ժողովրդի, որ մահու չափ ատում էր մոնղոլներին: Սրա համար չինացիների մեջ ամենից ավելի սիրված և հարգված երեք իմաստուններին իրեն օգնական և խորհրդական նշանակեց և ամեն գործի մեջ նրանց խորհրդով էր շարժվում: Այսպես Կուբիլայն ամբողջապես ընդունեց չինական քաղաքակրթությունը, չինական հին կայսրերի իմաստուն օրենքները և բարեկարգությունները վերահաստատեց, գիտությունների, հատկապես մաթեմատիկայի և աստղաբաշխության հովանավորող հանդիսացավ, հիմնեց գիտական ակադեմիա, ուր հրավիրեց ո՛չ միայն Չինաստանի, այլև Հնդկաստանի, Պարսկաստանի ու Թուրքեստանի գիտնականներին: Մինչև անգամ Մարկո-Պոլո աշխարհագրագետին, որ այն ժամանակ Չինաստանում էր գտնվում, Չինաստանի մի գավառի կառավարիչ նշանակեց: Տիբեթցի Փա-սե-փա անվամբ մի երիտասարդ, որ իր ծագումով և առաքինությամբ ամբողջ Արևելքում հռչակվել էր, կանչեց իր մոտ և լամայական կրոնի կրոնապետ նշանակեց: Հյուսիսային Չինաստանում, հին Պեկինի մոտ, կառուցեց մեծ և փառավոր մի քաղաք, որ արդի Պեկինն է և այն դարձրեց իր մայրաքաղաքը: Գետերն իրար միացնելով կառուցեց մի լայն ջրանցք և այս մայրաքաղաքը միացրեց ծովին, որով նավերը կարող էին ազատ երթևեկել. ջրանցքը 40 օրվա ճանապարհ էր նավով. երկու կողմից քարափ և ծառուղի էր կառուցված. գյուղեր, տուներ և խանութներ էին շինված երկու կողմերի վրա: Մոնղոլ ազնվական ընտանիքների որդիներին հավաքելով, նրանց համար բաց արեց մի առանձին դպրոց, որտեղ նրանք չինացի ուսուցիչների ձեռքի տակ չինարեն լեզուն և չինական կենցաղավարությունն էին սովորում: Ամբողջ օրը ինքն էլ նրանց հետ էր պարապում: Այս բանը բավական է ցույց տալու համար, թե ինչքան մեծ փափագ ուներ մոնղոլական բիրտ բարքերը վերացնելու և չինական ոգին ընդունել տալու իր ազգին: Երեք տարի հետո նորուս մոնղոլներն արդեն այնպես էին փոխվել, որ այլևս իրենց և չինացիների մեջ զանազանություն չկար. և նրանք գնացին իրենց մյուս հայրենակիցներին էլ այս ոգով կրթելու:

Կուբիլայն այս կարգերը հաստատելուց և Չինաստանը բարեկարգելուց հետո, դուրս եկավ նոր աշխարհակալության: Կորեայի թագավորի օգնությամբ 4000 նավով 100 000 զորք ուղարկեց Ճապոնի դեմ. բայց սոսկալի փոթորիկը այս նավատորմիղը խորտակեց. ճապոնացիք 70 000 հոգի չինացու և

կորեացու գերի բռնեցին և 30 000 մոնղոլի սպանեցին: Մյուս կողմից իր երրորդ բանակը որ ուղարկել էր Տոնկինը և Քոչինչինը նվաճելու, հաղթվեց և հետ փախավ: Կուբիլայը հաջորդ տարին կազմակերպեց մի նոր նավատորմ՝ Ճապոնի վրա արշավելու համար, բայց զիջելով իր իշխանների և ժողովրդի աղաչանքին, այս մտադրությունից հետ կանգնեց:

Չինգիզ խանի թոռը Արևելյան Թաթարիստանում մեծ պետություն էր կազմել. սա ցանկացավ արշավել Չինաստանի վրա. բայց Կուբիլայի բանակը հաղթեց և նրա պետությունը նվաճեց: Այսպիսով Կուբիլայի պետությունը հասավ հսկայական մեծության. սա տարածվում էր Սառուցյալ օվկիանոսից մինչև Մալակկայի նեղուցը, պարունակելով Չինաստանը, Պեկուն, Տիբեթը, Թաթարստանը, Թուրքեստանը, Ույղուրների երկիրը, Սիամը, Քոչինչինը, Տոնկինը և Կորեան (վերջին չորսը՝ հարկատու): Ազատ էին մնացել միայն Ճապոնը և Քիու-սիուն, որ ճապոնացիք չթողին գրավել:

142. ԻՍՊԱՆԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԴԵՄ

Մինչդեռ Հայաստանն իր ուժերը լարած կռվում էր եգիպտացիների դեմ, մյուս կողմից ուրիշ քրիստոնյա մի ժողովուրդ հերոսական կռիվ էր մղում նրանց ցեղակից մի ուրիշ մահմեդական պետության դեմ: Իսպանիան էր դա:

Երբ արաբները նվաճեցին Իսպանիան, վիսիգոթ իշխաններից մեկը փախավ մի քանի հազար մարտիկներով դեպի հյուսիս և այնտեղ հիմնեց մի փոքր իշխանություն: Այս նեղ անկյունում, վիսիգոթները իրենց թիկունքը տված օվկիանոսին, իրենց ճակատն ունենալով լեռների պատնեշը, կռիվ բաց արին արաբական պետության դեմ, մի կռիվ, որ տևեց 8 դար և վերջացավ 1492 թվականին, քրիստոնյաների հաղթանակով: Կամաց-կամաց նրանք առաջ եկան. Կառլոս Մեծը արաբների արշավանքը կասեցնելու համար ուժ տվեց այս փոքր իշխանության. Պիրենյանների ստորոտում նա հիմնեց երկու սահմանապահ իշխանություն, որոնք նրա մահից հետո անկախություն ձեռք բերեցին: 11-րդ դարում արաբներն ամբողջ հյուսիսային Իսպանիայից հետ քաշվեցին և ձևացավ երեք քրիստոնյա անկախ թագավորություն՝

Լեոնի և Կաստիլիայի միացյալ թագավորությունը, Նավարրայի թագավորությունը և Արագոնի թագավորությունը:

Կաստիլիայի Ալֆոնս Զ թագավորը նորոգեց պատերազմը արաբների դեմ. արաբները հետ քշվեցին և Իսպանիայի կեսը գրավվեց (1083 թ.): Արաբական ալմորավի ցեղը Աֆրիկայից արշավեց Իսպանիա և այնպիսի ջարդ տվեց քրիստոնյաների բանակին, որ Ալֆոնսը հազիվ 5 հոգով կարողացավ փախուստ տալ:

Ալֆոնսն այն ժամանակ օգնության կանչեց ֆրանսիացի ասպետներին. արաբները ջարդվեցին և նրանցից նվաճված հողերով հիմնվեց Պորտուգալիայի կոմսությունը (1090 թ.), որ հետո դարձավ թագավորություն: Այս պատերազմների շրջանում նշանավոր դարձավ Սիդը՝ իսպանական վեպերի հերոսը:

Կաստիլիացիների արշավանքների հետ միաժամանակ կռիվը մղվում էր նաև Իսպանիայի արևելյան կողմը. Արագոնի Ալֆոնս Ա թագավորը հասավ մինչև Սարագուսա, ջնջեց այնտեղի արաբական իշխանությունը և Սարագուսան իրեն մայրաքաղաք դարձրեց (1118 թ.): Արաբական մի նոր ցեղ՝ Ալմոհադ կոչված, արշավեց Իսպանիա, Ալմորավիներին քշեց Բալեարյան կղզիները և քրիստոնյաներին այնպիսի ջարդ տվեց, որ նրանք իրենց նոր գրաված հողերը թողնելով հետ քաշվեցին:

Այս սոսկալի պարտության վրա Արագոնի, Կաստիլիայի և Նավարրայի թագավորությունները միանալով, մի զորավոր դաշնակցություն կազմեցին. Հռոմի պապը կոչ կարդաց քրիստոնեության. 60 000 մարտիկներ Եվրոպայի զանազան կողմերից շտապեցին այս նոր խաչակրության և եկան օգնելու հերոսական Իսպանիային: Լաս Նավասի մեծ ճակատամարտում մահմեդականների ուժը ջարդուփշուր եղավ (1212 թ.), որից հետո իսպանացիք արագորեն առաջացան դեպի հարավ: Շուտով նվաճվեցին արաբական նշանավոր մայրաքաղաք Կորդովան, հռչակավոր Սեվիլլա քաղաքը, Վալենցայի թագավորությունը, Բալեարյան կղզիները: Այս բոլոր վայրերից մահմեդականները դուրս քշվեցին, կես միլիոն արաբներ հավաքվեցին Գրենադայի արաբ էմիրության մեջ, որ նրանց վերջին ապաստանը եղավ (1248 թ.):

Գրենադայի էմիրը մի նոր կոչ ուղղեց. արաբները շարժվեցին Աֆրիկայից. իսպանացիք դուրս եկան և այնպիսի մի ահավոր հարված տվին նրանց, որ շտապեցին փախչել Աֆրիկա և այլևս ամենևին չերևացին:

Դժբախտաբար իսպանացիք թողեցին, որ Գրենադայի արաբ իշխանությունը դեռ երկու դար էլ ապրի, իսկ իրենք սկսեցին իրենց մեջ կռվել և կամ շրջակա երկրներից հողեր խլել: Այսպես Արագոնի թագավորը գրգռեց սիկիլիացիներին ֆրանսիացիների դեմ և նրանք մեկ գիշերվա մեջ բոլոր ֆրանսիացիներին կոտորելով (Vepres Siciliennes) կղզին նրան հանձնեցին (1282 թ.): Սիկիլիայի վրա ավելացավ Սարդենիա կղզին և հետո Նապոլիի թագավորությունը՝ Հարավային Իտալիայում (1435 թ.): Միայն Պորտուգալիան էր, որ իր բնական սահմանների մեջ ամփոփված, միջոց չունենալով խառնվելու ընդհանուր եվրոպական քաղաքականության, տվեց իրեն ծովային ընդարձակ վաճառականության: Իր հանդուգն խուզարկուներն էին, որ գտան Բարեհուսո հրվանդանը և Հնդկաստանի ծովային ճանապարհը:

143. ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Հայաստանից և Իսպանիայից դուրս, ուր քրիստոնեությունը կռիվ էր բարձրացրել հզոր մահմեդականության դեմ, մնացյալ ամբողջ քրիստոնյա երկրներում տիրում էր անիշխանություն կամ ապստամբական կռիվ: Այսպես էին Իտալիան, Գերմանիան, Ֆրանսիան և Անգլիան:

Պապերը, մաքառելով գերմանական կայսերական իշխանության դեմ, կարծում էին, թե նրան ջնջելով իրենք պետք է ձեռք բերեին Իտալիայի տիրապետությունը. բայց այս հաշիվը սխալ դուրս եկավ: Երբ կենտրոնական իշխանությունը Իտալիայից վերացավ, և բոլոր քաղաքներն ազատություն ստացան, երկրում առաջ եկավ բացարձակ անիշխանություն: Ամեն մի իշխան, որ ձեռքում զորություն ուներ, ամեն մի ազնվական, որ բավական ազդեցություն ուներ և ամեն մի քաղաք, որ իրեն համար առանձին հանրապետություն էր ստեղծել, ցանկանում էր ընդարձակել իր իշխանությունը ուրիշների հաշվին: Այսպես Իտալիան դարձավ բազմաթիվ մանր-մունր իշխանությունների և ներքին հավիտենական պատերազմների ասպարեզ. և պապը հարկավոր ուժը չունեցավ ոչ այս բոլորին նվաճելու և ոչ իսկ կռիվները դադարեցնելու, այլ, ընդհակառակը, ինքն էլ պարտավորվեց փախչել Իտալիայից:

Երեք կարգի իշխանություններ կազմվեցին այս ժամանակ Իտալիայում. բռնապետություններ, ժողովրդական ազատ հանրապետություններ և ազնվապետական հանրապետություններ: Առաջին կարգի իշխանությունները զարգացան Հյուսիսային Իտալիայում, Լոմբարդիայի շրջանում, երկրորդ կարգը՝ Տոսկանայում, որոնցից անվանի եղան Ֆլորենցան, Պիզան և Ջենովան, իսկ երրորդ կարգից ի միջի այլոց նշանավոր եղավ Վենետիկը: Լոմբարդիայի բռնապետությունները ձևացան հենց Գերմանիայի կայսրության դեմ եղած կռիվների առթիվ. այն զորավարները, որ պատերազմի մեջ դիրք էին ձեռք բերել իրենց քաջությամբ, միապետության տապալումից հետո պահեցին իրենց իշխանությունը հակառակ ժողովրդի կամքի և դարձան բռնակալներ. դրանց մեջ նշանավոր եղավ Միլանոն, ուր իշխանության գլուխ անցավ բռնակալների մի հարստություն և իր իշխանությունը տարածեց շրջակա շատ քաղաքների վրա. նրանք ուզեցին դուրս գալ այս լծից և սկսեց կռիվը նրանց միջև: Միլանոյի օրինակին հետևեց Նապոլիի ֆրանսիացի թագավորը և ուզում էր տիրել ամբողջ Իտալիային. բայց ընդհակառակը Սիկիլիայի ապստամբությունը ծագելով, կղզին անցավ Արագոնի թագավորին և Նապոլիի թագավորությունը ոչնչացավ (1282 թ.): Այնուհետև Ջենովան սկսեց ազդեցիկ դիրք բռնել և կամենում էր մյուսներին իր իշխանության տակ առնել: Նա ուներ հարուստ ծովային վաճառականություն և ուժեղ նավատորմիդ. իր մրցակիցներն էին Պիզան և Վենետիկը: Պիզան վաղուց արդեն մի փառավոր նավատորմիդ ուներ, որով տեր էր դարձել Արևելքի վաճառականության. խաչակիրների ժամանակ այդ ասպարեզում նա ավելի առաջ գնաց. կայսերական կռիվների ժամանակ, բռնելով միապետության կողմը, Իտալիայում նա դարձավ ամենահզորը. իրեն էին պատկանում Կորսիկա և Սարդենիա մեծ կղզիները: Ջենովան պատերազմ բաց արեց նրա դեմ և նրա նավատորմիդը խորտակելով խլեց այդ կղզիները (1284): Պիզացիք ցնցվեցին և նորից ուշքի գալով պատերազմ նորոգեցին, բայց նորից պարտվեցին և այս անգամ բոլորովին քայքայվեցին (1290 թ.):

Պիզան քայքայելուց հետո Ջենովան իր ուշքը դարձրեց Վենետիկի վրա. սա Պիզայից շատ ավելի մեծ ծովային պետություն էր, եվրոպական մեծ պետությունների չափ հզոր. Արշիպեղագոսի, Ադրիատիկիի և Արևելքի տիրապետությամբ նա

մեծ փառքի էր հասել. Սև ծովի վաճառականությունը ամբողջապես իրենն էր. Պոլսի լատինական կայսրության կործանումից հետո նա շատ թուլացավ (1261): Ջենովացիք տիրելով երկու կղզիների Արշիպեղագոսում, ուզեցին խանգարել նրանց վաճառականությունն այս ծովում, ինչպես Սև ծովի վրա թաթարների հետ ունեցած վաճառականությունը խլել: Վենետիկցիք միանալով Արագոնի թագավորի և Արևելյան կայսրության հետ, պատերազմ բաց արին ջենովացիների դեմ, խլեցին Սարդենիա կղզին նրանց ձեռքից, բայց հետո հաղթվելով, ամբողջ Սև ծովի փաճառականությունը նրանց թողեցին: Ջենովան այն ժամանակ դարձավ ամենից ուժեղը և ուզեց գրավել նաև Միջերկրականի վաճառությունը: Ջենովացիք նորից հաղթեցին և արշավեցին նույնիսկ Վենետիկի վրա. ժողովուրդն արդեն պատրաստվել էր թողնելու քաղաքը և փախչելու Կրետե, Վենետիկը անդունդի եզերքն էր կախված, երբ մի նշանավոր իշխան դուրս եկավ կռվի, հաղթեց ջենովացիներին և Վենետիկը նորից կանգնեց իր նախկին փառքով:

Սրա վրա ընկավ Ջենովան, Հնդկաստանի ծովային ճանապարհի գյուտը ավելի ավերեց իր վաճառականությունը: Նրա տեղ բարձրացավ Ֆլորենցիան, որ Լուկայի և Պիզայի հանրապետությունները նվաճելով, դարձավ Տոսկանայի ամենամեծ հանրապետությունը: Բայց ահա այստեղ էլ սկսեցին կուսակցական կռիվները և երկիրը տակնուվրա արին: Չկար մի խաղաղ անկյուն ապրելու: Այս խառնակությունից վախեցած, պապը փախուստ տվեց Հռոմից և աթոռը փոխադրեց Ֆրանսիայի Ավինյոն քաղաքը (1309 թ.), ուր հույս ուներ Ֆրանսիայի թագավորների պաշտպանության տակ հանգիստ կյանք վարել: Պապի հեռանալով բարոյական իշխանության ուժն էլ վերացավ Իտալիայից և ժողովուրդը բռնակալներից և անվերջ կռվից զզված, նորից հրավիրեց Գերմանիայի կայսրին, որ գա Իտալիան խաղաղացնելու: Հանրի Է կայսրը մտավ Իտալիա (1310 թ.), բայց թե՛ ինքը և թե՛ իր հաջորդները չկարողացան կարգ մտցնել այս ընդհանուր անկարգության մեջ և հուսահատ հետ քաշվեցին: Այն ժամանակ Հռոմում դուրս եկավ Ռիենցի անվամբ մեկը, որ վերականգնելով Հռոմեական հանրապետությունը, ցանկացավ կազմակերպել Իտալիայի միությունը. բայց հազիվ մի քիչ կառավարեց՝ ժողովրդական ապստամբության զոհ գնաց (1347 թ.): Վերջապես պապը որոշեց նորից նվաճել Հռոմը. ազնվականները և

քաղաքացիք ճանաչեցին նրա իշխանությունը. բերդերը նորոգեցին և պապը եկավ Հռոմ (1376 թ.). դրա վրա Ավինյոնը նոր պապ ընտրեց և այսպիսով պապական իշխանությունն էլ բաժանվեց մինչև 1417 թվականը:

Այս բոլոր խառնակությունները պատճառ դարձան, որ մյուս պետությունները խառնվեին Իտալիայի գործերին և նրա զանազան մասերը խլեին:

144. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԵԾ ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գերմանական կայսերական իշխանության պարտությունը պապական կռիվների մեջ եթե պատճառ դարձավ Իտալիայի անիշխանության, նվազ աղետաբեր չեղավ նաև Գերմանիայի համար: Նույնիսկ պապերի դրդումով այստեղ ուժ առավ ավատականությունը և բոլոր իշխաններն ուզեցին անկախ լինել: Այս նպատակով, երբ Ֆրեդերիկ Բ-ը մեռավ (1250 թ.), այլևս նրան հաջորդ չընտրեցին. և ամեն մի դքսություն ինքնագլուխ սկսեց կառավարել իր երկիրը, բայց դքսություններն էլ չմնացին իբրև ուրույն ամբողջություն, այլ նրանք էլ իրենց մեջ բաժանվեցին մանր մասերի, այնպես որ Գերմանիան դարձավ հարյուրավոր մանր անկախ պետությունների մի հավաքում: Այս վիճակը, որ տևում է 23 տարի (1250-1273 թթ.), կոչվում է մեծ անիշխանություն: Սկսվեց մի անկարգություն, որի նմանը ոչ մի պետության մեջ չէր տեսնված. ամեն մեկն իրեն տեր էր համարում. ամեն տեղ տիրում էր պատերազմը. փոքրիկ բարոններ մի-մի բերդի մեջ ամրացած, կողոպտում և սպանում էին վաճառականներին ու անցորդներին. ավազակությունն ընդհանուր երևույթ դարձավ: Եվ որովհետև այլևս իշխանություն չկար, ժողովուրդներն սկսեցին փրկության մի ելք մտածել. զանազան վայրերում կազմակերպեցին ինքնա-պաշտպանության դաշնակցություններ, որոնց նպատակն էր ավազակ բարոնների դեմ իրենց գոյությունը պաշտպանել:

Այս դաշնակցությունների մեջ նշանավոր եղան Հռենոսի դաշնակցությունը և Հանսեական դաշնակցությունը. վերջինն առևտրական մի խոշոր միություն էր, որ հիմնվեց 1256 թվականին. նրա մեջ մտան Բալթիկի ափերին գտնված քաղաքները, որոնց թիվը հետզհետե ավելանալով հասավ մինչև 80-ի: Հանսան

դարձավ մի պետություն, որի մայրաքաղաքն էր Լյուբեքը. իր առևտրական նավատորմիղը գրավել էր Հյուսիսային և Բալթիկ ծովերը և իր ներկայացուցիչներն ուներ Եվրոպայի մեծ մայրաքաղաքներում:

Վերջապես իշխանները իրենք էլ զզվեցին տիրող անիշխանությունից և որոշեցին վերականգնել կայսրությունը, որ առանց վնասելու յուրաքանչյուրի անկախության, պիտի պահեր կարգը երկրում. սրա համար ընտրեցին դիտմամբ իշխաններից ամենաթույլին՝ Համբուրգի կոմս Ռուդոլֆին (1273 թ.), որ կարողացավ կարճ ժամանակում ապստամբներին նվաճել, 70 ավազակ բարոնների բերդեր քանդել, երկիրը կարգի բերել:

145. ՉԵԽԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ. ՕՏՏՈԿԱՐ Բ

Մեծ Մորավական պետության կործանումից հետո, սլավոնականության կենտրոն դարձավ Չեխիան, որ առանձին թագավորություն կազմեց: Բայց նա չկարողացավ մի ուժեղ պետություն դառնալ այն պատճառով, որ բաժանվել էր մանր-մունր ավատական իշխանությունների, որոնք անջատական ձգտումներ ունեին և իրար հետ ներքին պատերազմներով էին զբաղված: Այս խառնակ դրությունից օգուտ քաղեցին գերմանացիք և արդեն 11-րդ դարում նվաճելով երկիրը, վասալական իշխանություն դարձրին: Գերմանիայի մեծ անիշխանության ժամանակ չեխերն օգտվելով առիթից, կազմակերպեցին իրենց երկիրը: Իրենց թագավորը՝ Օտտոկար Բ, պատրաստեց ընտիր բանակ, ընկճեց զանազան ավատական իշխաններին և Սաքսոնիայից մինչև իտալական Ալպերը մի զորավոր միապետություն հիմնեց, որի մեջ էին մտնում Չեխիայից դուրս նաև Մորավիան, Ավստրիան, Հունգարիան, Կարինտիան և Շթրիան: Երբ Ռուդոլֆը դարձավ կայսր, Օտտոկարը մերժեց նրան հպատակվել: Գերմանացիք արշավեցին նրա վրա, ոտքի հանեցին ավստրիացիներին ու հունգարներին, որոնք դժգոհ էին չեխերի իշխանությունից, և այսպիսով հեշտությամբ հաղթեցին չեխերին. Օտտոկարն ստիպվեց հաշտվել գերմանացիների հետ, տալով նրանց Ավստրիան, Կարինտիան և Շտրիան (1275 թ.): Օտտոկարն իր ուժերը հավաքեց և երկրորդ անգամ դուրս եկավ կռվի. բայց

Վիեննայի առաջ պարտվեց և սպանվեց իր իշխանների դավաճանությամբ (1278 թ.). այսպիսով նվաճվեց նաև Մորավիան և չեխերի ձեռքում մնաց միայն Չեխիան: Ռուդոլֆը միացնելով Ավստրիան, Կարինտիան և Շթրիան, կազմեց մի դքսություն և տվեց իր որդուն (1282 թ.): Այդ օրվանից սկսվում է Ավստրիայի Հաբսբուրգյան տան իշխանությունը:

146. ՎԱԼԼԵՍԻ ԵՎ ՍԿՈՎՏԻԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Բրիտանիայի բնիկ ժողովուրդը կելտական ցեղերն էին. երբ օտար ժողովուրդներն սկսեցին խուժել այս երկիրը, կելտերը քաշվեցին կղզու հյուսիսային և արևմտյան ծայրերը և այդ լեռնոտ մասերում շարունակեցին իրենց գոյությունը: Ո՛չ հռոմայեցիք, ո՛չ սաքսոնները, ո՛չ դանիացիք և ո՛չ էլ նորմանդացիք դեռ չէին հասել նրանց գավառները և չէին ձեռք տվել նրանց անկախության: Հյուսիսային մասում ապրողներն էին սկովդիացիք, արևմտյան մասումն էլ Վալլեսը:

Անգլիայի Էդուարդ Ա թագավորը ուզեց տիրել Վալլեսին և հաջողեց իր ավատը դարձնել. բայց գալլերն ապստամբեցին և կատաղի կռիվներ մղեցին անգլիացիների դեմ. նրանք ուզում էին ունենալ իրենց առաջին թագավորը: Էդուարդը վերջապես գտավ մի հնարք. իր որդուն հայտարարեց Վալլեսի իշխան, որով թե՛ երկիրը նվաճած և թե՛ ժողովրդի անջատական ձգտումներին բավարարություն տված եղավ (1284 թ.):

Վալլեսի նման մի անկախ երկիր էր նաև Սկովտիան, որի թագավորներն իրենց իշխանությունն անկախաբար վարում էին մինչև այն ժամանակ: Էդուարդ թագավորի ժամանակ սկովտիացիների իշխանական տոհմը վերջացած և նոր թեկնածուների մեջ կռիվ ծագած լինելով, Էդուարդը միջամտեց և վերջապես երկիրն իր իշխանության տակ առավ: Սկովտիացիք ապստամբեցին. անխնա ջարդեցին իրենց վրա ուղարկված անգլիական բանակները և իրենց անկախությունը նորից ձեռք բերեցին (1314 թ.):

147. ՀԻՆԴՈՒՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Երբ գուրիների պետությունը կործանվելով ընկավ Խորեզմի սուլթանության ձեռքը, Այբեկ անվամբ մի թաթար, գրավեց Գանգեսի հովիտը և անկախ երկիր հայտարարեց (1206 թ.): Այս երկիրն այնուհետև կոչվեց Հինդուստան, որի ժողովրդի մեծ մասը մահմեդական հնդիկ էր. մայրաքաղաք դարձավ Դելիին. Այբեկը լինելով հասարակ ծագումից, իր հարստությունն էլ կոչվեց Մամլուկ: Մամլուկներն արագությամբ ընդարձակեցին նոր պետության սահմանները և հասան մինչև Բրահմապուտրա: Չինգիզ-Խանը և նրա հաջորդները շատ անգամ ասպատակեցին այս երկիրը, բայց չտիրեցին նրան, այլ կողոպտելով հետ դարձան: Ավելի հետո մամլուկները կարողացան քշել մոնղոլների կանոնավոր արշավանքները և բնավ չնվաճվեցին: Հուլաղուն բարեկամություն հաստատեց մամլուկների հետ և մինչև անգամ իր դեսպանն ուղարկեց Դելիի:

Մամլուկներից հետո Հինդուստանի թագավորությունը անցավ Խալջի հարստության (1290 թ.), որոնց հիմնադիրը նույնպես թաթար էր, Ամու-Դարյայից գաղթած: Սրանց օրով Հինդուստանի պետությունը չափազանց մեծացավ և հասավ մինչև Կոմորին հրվանդանը՝ Հնդկաստանի հարավային ծայրը (1311 թ.): Բոլոր հնդկական անկախ թագավորությունները, որ գտնվում էին այս ընդարձակ տարածության մեջ, ջնջվեցին կամ հպատակվեցին: Մահմեդականությունը հետզհետե տարածվում էր հնդիկների մեջ. իսլամական քաղաքակրթության ազդեցության տակ ձևացավ Հինդուստանի լեզուն, որ կազմված էր թաթար, պարսիկ, աֆղան, արաբ տարրերից՝ հնդկական ֆոնի վրա, և իսկական պատկերն էր ժողովրդի այս տարօրինակ խառնուրդի:

Պետությունն այսպիսի մեծության հասնելուց հետո, ձեռնարկում է աշխարհակալության: Մուհամմեդ Բ թագավորը մեծ բանակով արշավում է մոնղոլների վրա և քշում նրանց (1327 թ.): Այս հաջողությունից ոգևորված կազմում է 100 000-անոց մի բանակ և ծրագրում է Տիբեթի վրայով արշավել Չինաստան, գրավելու այս ընդարձակ երկիրը, բայց Հիմալայի ձյունապատ շղթայում ամբողջ բանակը սառչում է (1337 թ.): Երրորդ անգամ կազմակերպում է մի բանակ և ուղարկում Պարսկաստանի վրա. բայց զինվորներն ապստամբում են և ցրվում տերության զանազան կողմերը՝

թալանելու համար: Տերության այս քաղաքականությունը ցույց էր տալիս, թե մոտ է անկումը. շուտով թագավորը այնպիսի ծանր հարկեր դրեց ժողովրդի վրա, որ շատ-շատեր չդիմանալով՝ քաշվեցին անտառները և սկսեցին կռվի դուրս գալ պետական պաշտոնյաների դեմ: Բնիկ հնդկական իշխաններն ապստամբություն բարձրացրին և երկրի զանազան նահանգներում նոր անկախ թագավորություններ կազմեցին: Շատ արագ քայքայվեց պետությունը և արդեն 14-րդ դարի կեսին այն մեծածավալ պետությունից մնացել էր միայն Դելիի մայրաքաղաքը:

148. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

Անգլիայի և Ֆրանսիայի հակառակությունը, որ նորմանդական տիրապետությունից էր սկսվել, նորանոր պատճառներ ունեցավ զարգանալու և վերջապես տեղի տվեց այն երկարատև պատերազմին, որ պատմության մեջ հայտնի է Հարյուրամյա պատերազմ անվամբ: Այս պատճառներից գլխավորներն էին ֆրանսիացիների մատուցած օգնությունը սկովտիացիներին՝ ապստամբության ժամանակ, Անգլիայի մատուցած օգնությունը Ֆլանդրիային, որ ֆրանսիացիք ուզում էին նվաճել, և երրորդ՝ Անգլիայի ցանկությունը գրավելու ֆրանսիական թագը, որ ժառանգական օրենքով իրեն էր հասնում: Էդուարդ Գ Անգլիայի թագավորի մայրը, ֆրանսիացիների թագավորի աղջիկը լինելով, երբ նրա բոլոր եղբայրները մեռան, բնականաբար ժառանգությունը իրեն էր հասնում: Բայց ֆրանսիացիք օրենք դրին, որ կինն իրավունք չունի գահ ժառանգելու. այսպիսով Էդուարդի պահանջը մերժվեց: Այս եղավ ահա գլխավոր պատճառը Հարյուրամյա պատերազմի:

Անգլիացիք տարան առաջին խոշոր հաղթությունները երկու մեծ ճակատամարտների մեջ. ֆրանսիացիների թագավորը գերի բռնվեց և ստիպվեց ստորագրել մի դաշինք, որի համաձայն Ֆրանսիայի արևմտյան կեսը տրվում էր Անգլիային (1360 թ.): Բայց ֆրանսիացիք կամաց-կամաց ամրացան, իրենց բանակը և ելևմուտքը կարգի բերին և մանր-մունր կռիվներով համարյա թե ամբողջ կորցրած հողերը հետ խլեցին. այնպես որ վերջ ի վերջո անգլիացիների ձեռքը մնաց միայն 3 ծովեզերյա քաղաք (1380 թ.):

Այս միջոցին Անգլիայում ժողովրդական հեղափոխություն

բռնկվեց. ճորտերն ազատություն ձեռք բերելու համար ապստամբեցին տերերի դեմ. նրանք պահանջում էին դասակարգային հավասարություն. ապստամբությունը շատ հաջող անցավ. նրանք մինչև անգամ Լոնդոնը գրավեցին և թագավորն ստիպվեց ստորագրել ճորտերի ազատության հրովարտակը: Բայց հենց որ ժողովուրդը հանդարտվեց, թագավորը հավաքեց վարձկան զորք, հարձակվեց ապստամբների վրա, պարագլուխներին սպանեց և այսպիսով նախկին կարգը վերականգնեց:

Ժողովրդական ապստամբությունը զսպվելուց հետո սկսվեց մի նոր խռովություն: Թագավորը շեղվել էր օրենքից. նա շարունակ դրամ էր պահանջում պետությունից, որ շռայլում էր անխնա. վերջապես Պառլամենտը մերժեց դրամ տալ թագավորին. թագավորն իր գլուխը հավաքեց 10 000 քաջ զինվորների մի խումբ և մի կողմ դնելով ամեն մի օրենք, սկսեց երկիրը կառավարել իր քմահաճույքի համեմատ: Այս բռնակալության դեմ իշխանները գլուխ բարձրացրին. նրանց առաջնորդը Հանրի (Լանկաստեր տոհմից) կարողացավ վերջապես հաղթել թագավորին, գահազուրկ անելով սպանեց նրան և ինքը թագավոր դարձավ (1399 թ.):

Երբ այսպես բոլոր կռիվները վերջացան և երկրում տիրեց խաղաղություն, անգլիացիք նորից սկսեցին պատերազմը Ֆրանսիայի դեմ, որ այս միջոցին գահակալական կռիվների պատճառով անիշխանության էր մատնված. իշխանները իրար էին կոտորում: Անգլիացիք ցամաք դուրս եկան, ջարդեցին ֆրանսիական մեծ բանակը, գրավեցին Նորմանդիան, առան Փարիզը, և ֆրանսիացիք ստիպվեցին կնքել մի նոր դաշինք, որով հանձն էին առնում ֆրանսիական թագի ժառանգ ճանաչել Անգլիայի թագավորին (1420 թ.):

Ֆրանսիացիների գահաժառանգը չընդունեց այս դաշինքը և սկսեց ինքնագլուխ շարունակել պատերազմը. բայց միայն Օռլեան քաղաքն էր, որ նրա կողմն էր պաշտպանում. անգլիացիք եկան պաշարեցին նաև այս քաղաքը: Այս միջոցին դուրս եկավ մի խեղճ հովվուհի՝ Ժաննա դ'Արկը, որ աստվածային տեսիլքով ներշնչված, բանակների առաջն անցավ և անգլիացիների դեմ քալեց. իր օրինակը և իր խոսքերը քաջալերեցին պարտված զինվորներին. հայրենասիրական զգացումներով լցրեցին բոլորին: Օռլեանը գրավվեց, շուտով Անգլիայի գլխավոր աջակից Բուրգոնյի դուքսը հեռացավ նրանց դաշնակցությունից, Փարիզը գրավվեց,

Նորմանդիան առնվեց և անգլիացիք ամբողջապես թողեցին Ֆրանսիան, պահելով միայն ծովեզրյա Կալե քաղաքը (1453 թ.):

149. ՈՒՆԻՏՈՌԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Թաթարների դաշնակցությունը հայոց հետ կես դարից ավելի ուժ տվեց ո՛չ միայն դիմանալու արաբական գրոհին, այլև նրանց դեմ սպառնական դիրք բռնելու և դեպի Ասորիք ու Պաղեստին հաղթական արշավանքներ կազմակերպելու:

Վերևում ասացինք (§ 135), որ թաթարները կողմնակից էին քրիստոնեության: Ավելի ճիշտ, նրանք թույլատրել էին ուրիշ կրոնների մուտքը իրենց երկրում: Կրոնական այս ազատությունից օգտվելով, թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները սկսել էին ընդարձակ քարոզչական գործունեության թաթարների մեջ: Եղան իշխաններ էլ, որոնք ընդունեցին մահմեդականությունը, եղան իշխաններ էլ , որոնք քրիստոնյա դարձան:

Կրոնական քարոզչության այս պայքարում ավելի հաջող դուրս եկան Եգիպտոսի կրոնական քարոզիչները, որոնք կարողացան թաթարների Բերկե խանին գցել իրենց ցանցի մեջ: Բերկե խանը ո՛չ միայն ընդունեց մահմեդականությունը, այլև ինքն սկսեց տարածել այդ կրոնը զինվորականության և ժողովրդի մեջ: Շուտով ամբողջ զորագնդեր իրենց զորավարների հետ միասին ընդունեցին իսլամական կրոնը:

Կրոնական տարբերությունը մի նոր ազդակ դարձավ քաղաքական երկպառակության, որ ուշ թե շուտ պիտի սկսեր մեծատարած կայսրության մեջ: Արևմտյան թաթարների իշխան Բերկե խանը պատերազմի դուրս եկավ արևելյան թաթարների իշխան Հուլաղուի դեմ, որ քրիստոնեության կողմնակից էր: Պատերազմի բեմ հանդիսացավ Կուրի հովիտը, ուր երկու բանակները ծանր կռիվներ մղեցին միմյանց դեմ: Հուլաղուի կողմը հաղթեց և առաջնությունն անցավ մահմեդականների ձեռքը:

1302 թվականին Ղազան խանը մեռավ և նրա հաջորդ Ղարբաղանդը մահմեդականությունն ընդունեց: Սա եղավ մեծագույն հարվածը Կիլիկիայի համար, որովհետև թաթարները սրանով լուծեցին իրենց կապած դաշինքը հայոց հետ և միացան

թուրքերի ու մամլուկների հետ: Այսպիսով Կիլիկիան օղակված գտնվեց ամեն կողմից մահմեդականության հզոր ցանցով, որին դիմանալ անկարող էր. հյուսիսից սելջուկներն էին, արևելքից թաթարները, հարավից մամլուկները. միայն ծովի կողմն էր ազատ:

Թաթարների թշնամությունը շատ վտանգավոր եղավ հենց այն պատճառով, որ նրանք արդեն նախապես իբրև դաշնակից ծանոթացած լինելով բոլոր գաղտնի անցքերին, դյուրությամբ կարող էին թափանցել երկրի ներսերը և նրանց դեմն առնելն ավելի դժվար էր:

Հենց որ կազմվեց մահմեդականների միությունը, նրանք սկսեցին արշավել Կիլիկիա. նախ արշավեցին թաթարները և իբրև ճանապարհներին ծանոթ, մտան երկրի ներսերը, մի տարի քարուքանդ արին ու հեռացան: Նրանցից հետո եկան մամլուկներն ու թուրքերը, որ մի քանի անգամ արշավեցին և մեծ ավերներ գործեցին: Հեթումը կարող չէր այս արշավանքների առաջքն առնել, բայց վերջապես նա շարժվեց և հարձակվեց մամլուկների վրա, երբ նրանք հարուստ ավարով հղփացած, հետ էին դառնում. և այնպիսի մի ջարդ տվեց նրանց, որ սուլթանն ստիպվեց հաշտություն խոսել Հեթումի հետ և առժամանակ մահմեդականների արշավանքը վերջ գտավ:

Թաթարների դաշնակցությունը կորցնելուց և այնպիսի մի վտանգավոր կացության մատնվելուց հետո, Կիլիկիայի թագավորներն ստիպված էին փնտրել մի նոր դաշնակից, ուրիշ ոչ ոք չկար, բայց եթե Արևմտյան Եվրոպան:

Հայերի և եվրոպացիների հարաբերությունն սկսել էր դեռ առաջին խաչակիրների ժամանակից. այնուհետև երբ Ասորիքում կազմվեցին զանազան քրիստոնյա իշխանություններ, նրանց հարաբերությունը ավելի բարեկամական եղավ. հայ թագավորների և այդ քրիստոնյա իշխանների միջև շարունակ կնքվում էին ամուսնական խնամություններ. Լևոն Բ-ի օրով Կիլիկիա թափվեց եվրոպացիների մի մեծ խումբ, որոնցից շատերը հաստատվեցին երկրում:

Բայց արևմտյան քաղաքականության լծակը Հռոմումն էր՝ պապական իշխանության ձեռքում, որի գլխավոր նպատակը ուրիշ բան չէր, եթե ոչ ամբողջ քրիստոնեական աշխարհն իրեն հպատակեցնել: Արդեն այս մտադրությամբ Կիլիկիա էին թափվել մի խումբ լատին քարոզիչներ, որոնք սկսել էին հավատի վեճեր

հարուցել երկրում և զանազան ձևերով համակիրների մի շրջան ստեղծել: Այս քարոզիչները մեր պատմության մեջ ծանոթ են ունիտոռ (միարար) անվամբ: Երբ Կիլիկիայի թագավորությունն այնքան տկարացավ, որ այլևս բացարձակ պետք զգացվեց եվրոպացիների օգնության դիմելու. ունիտոռները պարզապես հայտարարեցին, որ հայերը կարող են օգնության հույս ունենալ, երբ ճանաչեն պապական եկեղեցու գերիշխանությունը: Կազմվեց երկու կուսակցություն՝ կաթոլիկական և ազգային: Առաջին կուսակցության գլուխն անցան թագավորն ու իշխանները, որոնք իրենց աթոռը պահելու և երկիրը ազատելու համար ստիպված էին հակվել Հռոմին. իսկ երկրորդ կուսակցությունը կազմում էր ժողովուրդը, որ իր հայրերի հավատի վրա ուզում էր մնալ անխախտ, ավելի նվիրական համարելով կրոնը քաղաքական կյանքից:

Հեթումը և նրա աթոռակից Լևոն Դ-ը եկեղեցական ժողով գումարեցին և հայ եկեղեցու դավանության մեջ զանազան պապական նորամուծություններ մտցնելով, բռնի պահանջեցին գործադրել: Սրա վրա ժողովուրդը գրգռվեց և թաթարների զորավարին Կիլիկիա հրավիրելով, երկու թագավորներին, իրենց կուսակիցների հետ միասին, կոտորել տվեց: Այս բանը լսելով Լևոնի եղբայր Օշինը իսկույն զորք հավաքեց, գնաց թաթարների վրա, երկրից դուրս քշեց և կառավարությունն իր ձեռքն առավ: Նա ինքն էլ էր պապական կուսակցության կողմնակից և սրա համար նորից եկեղեցական ժողով գումարեց. բայց այնքան իմաստուն գտնվեց, որ երբ տեսավ, թե ժողովուրդը երբեք մտադրություն չունի իր հավատից շեղվելու, մի կողմ թողեց այս ծրագիրը (1316 թ.):

150. ԿԻԼԻԿԻԱՆ՝ ՀԱՐԿԱՏՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Կուսակցական պայքարը շատ ավելի զորացավ Օշինից հետո, Լևոն Ե-ի ժամանակ: Այս ժամանակ Կիլիկիա էր եկել Կիպրոսի նախկին թագուհի Զաբելը, որ Լևոնի մեծ հորաքույրն էր: Լևոնը մեծ ընդունելություն արեց նրան և այն բազմաթիվ լատին իշխաններին, որ ուղեկցում էին նրան, զանազան պաշտոններ բաշխեց: Ազգային կուսակցության պարագլուխները զայրացան. թշնամությունն այն աստիճան զարգացավ, որ երկու կուսակցությունները զենք վերցրին և պատերազմի դուրս եկան միմյանց դեմ. Զաբելը

հաղթվեց. նրա որդիները բանտարկվեցին, մյուսները փախան Կիպրոս, և Կիպրոսի թագավորը պատերազմ հրատարակելով հայոց դեմ, պատրաստվեց Կիլիկիա արշավելու: Հռոմի պապը մեջ մտավ և երկու կողմերին հաշտեցրեց: Եվրոպացիք թեև Ասորիքից բոլորովին վտարված, բայց դեռ լրիվ չէին հրաժարվել խաչակրության մտքից: Պապական քարոզիչները գրգռում էին դեռ այս ու այն թագավորին՝ բանակ կազմելու, Արևելք արշավելու և Ս. Երկիրն ու արևելյան քրիստոնեությունը մահմեդականների ձեռքից ազատելու: Իրենց քարոզության հետ զուգընթաց աճում էր նաև ունիտոռական պրոպագանդան Կիլիկիայում և ամենքի աչքը ուղղված էր դեպի Եվրոպա, ակնդետ սպասելով խաչակիրների գալստյան: Պապական քարոզները նշանակություն չունեցան Եվրոպայում. բայց ավելի էին գրգռում մամլուկներին, որոնք այն ժամանակ մի ահագին պետություն կազմած, Նեղոսից մինչև Պարսից ծոցը մեկ իշխանության տակ միացուցած, տանջում էին Ասորիքի, Պաղեստինի և Միջագետքի քրիստոնյա ժողովուրդներին: Մամլուկները տեսնում էին, որ եվրոպացիք մի հենարան միայն ունեն Արևելքում, և դա Կիլիկիան է, որի թագավորները սրտանց համակիր ու դաշնակից էին եվրոպացիներին. ուստի մտածեցին նախ այս հենարանը քանդել, որպեսզի ավելի հեշտ լինի իրենց համար խաչակիրների արշավանքի դեպքում նրանց առաջն առնել:

Այս նպատակով մամլուկները թաթարների և թուրքմենների հետ դաշինք կնքեցին և սկսեցին արշավանքը. նախ արշավեցին թաթարները Իկոնիայի կողմից, որոնց հաջորդեցին թուրքմենները արևելքից: Մի քանի ամիս նրանք ամբողջ երկիրը քարուքանդ արին, այրեցին, կողոպտեցին, մինչև անգամ մեռելները գերեզմանից հանեցին ու պղծեցին: Երբ նրանք հետ քաշվեցին, եկան մամլուկները վերջին հարվածը տալու Կիլիկիային: Դաշտային Կիլիկիան ավերելուց հետո, նրանք գնացին պաշարելու Այաս նշանավոր քաղաքը, որ վերջապես գրավեցին ու կոտորեցին: Թագավորն անզոր գտնվեց այս արշավանքների առաջքն առնելու: Ժողովուրդը նրանից հույսը կտրած, կազմեց ինքնապաշտպանության խմբեր, որոնք զանազան տեղեր դարան մտած, հանկարծական հարձակումներով սկսեցին կոտորել թշնամիներին: 200 քաջերի մի խումբ հարձակվեց եգիպտական 18 000-անոց հեծելազորի վրա, 6 000 հոգու կոտորեց, մի մասն էլ գերի բռնեց. մի

ուրիշ խումբ, 600 հոգուց բաղկացած, ընկավ Այասից դարձող հաղթական բանակի վրա և այնպիսի ջարդ տվեց, որ նրանք մոտ 5 000 դիակ թողնելով դաշտի վրա, հազիվ կարողացան փախչել: Այս պարտությունների վրա մամլուկների սուլթանը Կիլիկիան նվաճելու մտադրությունը հետաձգեց և ստիպվեց զինադադար կնքել Լևոնի հետ 15 տարվա պայմանաժամով, որի համաձայն Կիլիկիան դառնում էր եգիպտացիներին հարկատու թագավորություն (1323 թ.):

Այսպիսի անկումը չսթափեցրեց Լևոնին և ունիտոռական կուսակցության. նրանք նորից սկսեցին իրենց կործանիչ քաղաքականությունը, եվրոպացիների հետ բանակցություններ և խաչակրության սպառնալիքը: Կուսակցական պայքարն այնքան սաստկացավ, որ Լևոնը մինչև անգամ հայոց սպարապետին և իր կնոջը գլխատել տվեց՝ իբրև ազգային կուսակցության պարագլուխների: Բոլոր պաշտոնները բաշխվեցին լատիններին: Սրա վրա հայ իշխանները ասպարեզից հեռացան և երկիրը մնաց երեսի վրա: Մամլուկները լսելով այս խառնակությունը, քանդեցին դաշինքը, երկու անգամ արշավեցին Կիլիկիա, երկիրն ավերակ դարձրին և այն ժամանակ միայն քաշվեցին , երբ Լևոնը խաչի և Ավետարանի վրա երդում արավ այլևս ո՛չ մի հարաբերություն չունենալ եվրոպացիների հետ (1337 թ.):

151. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Լևոն Ե-ի մահով հայոց թագավորական տոհմը սպառված լինելով, գահը օտար իշխանների ձեռքում խաղալիք դարձավ: Նոր թագավորի ընտրության ժամանակ, ունիտոռական կուսակցությունը հաղթեց և թագավոր հրավիրվեց Կիպրոսի Զաբել թագուհու որդի Կոստանդին Գ-ը, որ Լևոնի կենդանության ժամանակ այնքան խռովությունների պատճառ էր դարձել Կիլիկիայում: Թագավոր ընտրվելով, Կոստանդինը խելքի չեկավ. նա մինչև անգամ հայոց եկեղեցին ամեն անգամ ծաղրի էր ենթարկում. դրա վրա հայերը բարկացան և վրան հարձակվելով սպանեցին: Կոստանդին Գ-ի տեղ թագավոր ընտրվեց եղբայրը Գվիդոն, որ իր նախորդի ընթացքը շարունակեց, հայ իշխանների կալվածները հափշտակեց և լատիններին բաշխեց. դրա վրա հայ իշխանները զայրացան և նրան էլ սպանեցին:

Այս անգամ ազգային կուսակցությունը հաղթանակեց և

թագավոր ընտրվեց սպարապետի որդին Կոստանդին Դ-ը, որ աշխատեց ներքին երկպառակությունները դադարեցնել, երկրի սահմանները կարգի բերավ, դաշնակցեց Կիպրոսի թագավորի և Հռոդոսի իշխանի հետ և երբ եգիպտացիք նորից արշավեցին Կիլիկիա, նրանց օգնությամբ կարողացավ փառավոր ջարդ տալ նրանց և Կիլիկիայից դուրս քշել (1357 թ.):

Կիլիկիայի թագավորության վերջին փայլն էր այս, որից հետո երկիրն ընկավ կատարյալ անկարգության մեջ: Կարծես ունի-տոռական և ազգային կուսակցությունների պայքարը բավական չէր, այժմ էլ ավելացավ գահակալության պայքարը: Երկու հոգի թեկնածու էին թագավորական գահին. առաջինն էր Կիպրոսի թագավոր Պետրոսը, որ գաղտնի դաշինք կնքելով պապի հետ, խոստացել էր հայ եկեղեցին միացնել պապական աթոռին, եթե հաջողացներ իրեն ձեռք բերել Կիլիկիայի գահը. երկրորդն էր նրա ազգական Լևոն Լուսինյանը: Այս երկուսն էլ ունեին իրենց կուսակիցները Կիլիկիայում, որոնք կռվում էին միմյանց դեմ բոլոր ներելի և աններելի միջոցներով: Վերջապես Պետրոսը մեռավ և միակ թեկնածու Լևոնը գահ բարձրացավ:

Բոլորը կարծում էին, որ Լևոնի թագավորությունը փառք ու երջանկություն պիտի բերեր Կիլիկիային. բայց որչա՜փ հուսախաբ եղան նրանք, երբ տեսան, որ այս թագավորն էլ խոհեմությունը մի կողմ թողած, սկսեց պարապել կրոնական վեճերով և հայ իշխան-ներին հալածել: Այս բանի վրա զայրացան հայ իշխանները և ե-գիպտացիներին հրավիրեցին Կիլիկիա. եգիպտացիք մտան եր-կիրը, Լևոնին գերի բռնեցին և հայոց թագավորությունը կոր-ծանելով Կիլիկիան իրենց իշխանության տակ վերցրին (1375 թ.):

152. ՄԵԾ ՉԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Մեկ դար ամբողջ Չինաստանը մնաց մոնղոլ-թաթարական տիրապետության տակ: Չինացիք, չնայած նրանց բազմաթիվ մեծագործություններին և աշխարհակալության, չսիրեցին նրանց: Պատճառները բազմաթիվ են: Նախ՝ չինացիք ընդհանրապես դեպի օտարները ատելությամբ էին լցված. երրորդ՝ թաթարները լամայական վարդապետության հետևելով, ուժ տվին այս նոր կրոնին և մի կողմ դրին չինացիների ազգային կրոնը: Լամաներն

ստանալով մեծամեծ իրավունքներ և արտոնություններ, մեծ հարստության էին տիրացել և իրենց շվայտ կյանքով ու բռնություններով չին ժողովրդի հարստահարիչն էին դարձել: Նույնիսկ այն մեծամեծ պալատները և տաճարները, որ կայսրերը կառուցում էին, ժողովրդի զայրույթն էին շարժում, որովհետև նա գիտեր, որ այդ կառուցումները իր դառն քրտինքի արդյունքն էին: 14-րդ դարի կեսից հետո թաթար ինքնակալների խստությունն ու հարկապահանջությունը չափազանց մեծացել էին: Կայսրերից մեկը ցանկացավ փոխել Դեղին գետի ընթացքը. ժողովուրդը ցույց տվեց, որ դա ահագին վնասների պատճառ պիտի լինի. կայսրը չլսեց. միլիոնավոր մարդիկ գործի դրվեցին և գետը դարձրեցին: Չհաշվելով այն մեծամեծ ծախսերը, որ այս գործի համար վատնվեցին, բյուրավոր ընտանիքներ տնից, տեղից զրկվեցին, իրենց հողերը գետի նոր հունին տրվեցին և ստիպվեցին բռնի կերպով գաղթել և ուրիշ անմշակ հողեր ստանալ: Այս բոլորը գումարվելով վերջին թաթար ինքնակալների զեխ ու անառակ կյանքի վրա, դառնության բաժակը լցրին և չինացիք սկսեցին շարժվել: Մի շարք իշխաններ ապստամբեցին իրենց գավառներում և հիմնեցին առանձին պետություններ: Այս ապստամբներից ամենագլխավորն եղավ Չու-Յուան-չանգը, որ հասարակ հողագործի որդի էր և նախապես բուդդայական քուրմ էր եղել. այնտեղ ստորացուցիչ աշխատանքներից ձանձրացած, թողեց ու փախավ և նվիրվեց քաղաքական գործերի: Նա գրավեց Նանկինը և իր բանակների գլուխն անցած իր արշավանքները շարունակեց մոնղոլների դեմ: Նա քիչ-քիչ իրեն միացրեց նաև մյուս ապստամբներին և վերջապես Պեկինը գրավելով դուրս քշեց մոնղոլներին դեպի Կարակորում և դեպի այն տափաստանները, որտեղից եկել էին նրանք: Այսպես հիմնվեց չինական անկախ կայսրությունը (1368 թ.):

Նոր պետությունը միայն քաղաքական հեղափոխություն չէր, այլ ներկայացնում էր մի ընդհանուր ազգային շարժում, որ գրավել էր ամբողջ Չինաստանը: Չինացիք դուրս եկան ո՛չ միայն մոնղոլների դեմ, որոնք իրենց պետական թշնամիներն էին, այլև բոլոր օտար տարրերի դեմ: Նրանք դուրս եկան նաև քրիստոնեության դեմ, որ 7-րդ դարից մուտք էր գործել և մոնղոլների տիրապետության ժամանակ շատ առաջ էր գնացել: Թե՛ նեստորական և թե՛ կաթոլիկ քրիստոնյաները վտարվեցին, նրանց

եկեղեցիները փակվեցին և քրիստոնեական կրոնը ջնջվեց Չինաստանից:

Ազգային միություն կազմելուց հետո, չինացիք դուրս եկան իրենց շրջակա երկրները նվաճելու կամ չինական ազդեցության տակ առնելու: Տիբեթը հպատակվեց. Կորեան և Աննամը հարկատու դարձան. չինական նավատորմը դուրս եկավ ծովը և ճապոնացիներին մեծ ջարդ տալով, ստիպեց նրանց դադարեցնել իրենց ավազակային հարձակումները Չինաստանի վրա: Ավելի հետո չինացիք իրենց արշավախմբերն ուղարկեցին դեպի Սիամ, Ցեյլոն, Ջավա, Սումատրա, Բենգալիա և մինչև Պարսից ծոցը: Չինական ազդեցությունը տարածվեց այս բոլոր երկրների վրա. Ցեյլոնը ճանաչեց Չինաստանի գերիշխանությունը. Ադենից, Եգիպտոսից, Սամարղանդից դեսպաններ եկան Չինաստան՝ կայսեր իրենց հարգանքը մատուցելու (1441 թ.):

Այսպես Չինաստանը դարձավ Արևելքի մեծագույն պետությունը:

153. ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հելվետիան Բուրգունդիայի թագավորության մասն էր, որ ամբողջ երկրի հետ նվաճել էին գերմանական կայսրերը (1033 թ.): 12-րդ դարում այստեղ ձևացան մի շարք կարևոր քաղաքներ, ինչպես Ցյուրիխը, Բազելը, Բեռնը, Ֆրայբուրգը, որոնք զանազան առևտրական արտոնություններ ձեռք բերեցին: Լեռների մեջ կային երեք գավառակներ (կանտոն), որոնք դեռ ինքնագլուխ կառավարվում էին. այդպես էին Շվարցը, Ուրին և Ունտերվալդը: Ավստրիայի Ռուդոլֆ իշխանն ուզեց ջնջել այս երեք կանտոնների ինքնավարությունն էլ. իր գործակալ Գեսլերը, անգութ մարդ, սկսեց անհանգստացնել ժողովրդին. դրա վրա երեք կանտոնները միացան և Վիլհելմ Տելի առաջնորդությամբ ապստամբեցին. Գեսլերն սպանվեց. ավստրիացիք զորք ուղարկեցին, բայց պարտություն կրեցին. իշխանն ինքը անցավ 20 000-անոց բանակի գլուխը և նրանց վրա արշավեց. 1500 լեռնականներ բրերով զինված նրանց դեմ դուրս եկան և չարաչար կոտորեցին (1315 թ.): Այդ բանից հետո այդ երեքի վրա ավելացան ուրիշ կանտոններ, այնպես որ բոլորի թիվը դարձավ 8: Ավստրիացիք նոր արշավանքներ մղեցին այս քաջերի դեմ, բայց միշտ էլ պարտվելով, հետ քաշ-

վեցին և ստիպվեցին ճանաչել երկրի անկախությունը (1388 թ.):

Եվ որովհետև առաջին հաղթական պատերազմը տեղի էր ունեցել Ծվայց գավառակում, նրա անվամբ էլ ամբողջ երկիրը կոչվեց Ծվեյցարիա կամ Զվիցերիա:

154. ԼԵՎՈՆ Զ-ի ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՑԻՆԵՐԻՆ

Երբ Լևոնը գերի տարվեց Եգիպտոս, սուլթանն առաջարկեց նրան ընդունել մահմեդականությունը և նորից տեր դառնալ Կիլիկիայի թագավորության: Լևոը մերժեց և մնաց Եգիպտոսում գերի: Երկար նա աշխատեց, որ պապը կամ Եվրոպայի թագավորները ազատեն իրեն գերությունից. բայց իզուր: Վերջապես նա գտավ մի բարերար. դա էր Կաստիլիայի Հովհաննես թագավորը, որ միանալով Արագոնի թագավորի հետ, դիմեց Եգիպտոսի սուլթանին և նրա սիրտը հաճեցնելով՝ ազատեց Լևոնին: Լևոնն անցավ Եվրոպա, նախ շնորհակալ լինելու իր բարերարներին և երկրորդ՝ աշխատելու որ մի նոր խաչակրություն հանի Եվրոպայից և ի կորցրած գահը ձեռք բերի: Կաստիլիայի Հովհաննես թագավորն ընդունեց նրան իբրև քրիստոնեական կրոնի նահատակ և նրան պարգևեց երեք իսպանական քաղաքների իշխանությունը (Մադրիդ, Վիլլառեալ և Անդուխար): Այդ պաշտոնով մնաց Լևոնը Իսպանիայում մի քանի տարի, բայց հետո նրա արևելյան բռնակալության պատճառով ժողովրդական խռովություն ծագելով, ստիպվեց թողնել երկիրն ու անցավ Ֆրանսիա: Այստեղ նա ցանկացավ գործադրել իր վաղեմի փափագը՝ ազատել Կիլիկիան եվրոպական բանակով: Ֆրանսիայի թագավորը սիրով ընդունեց նրա առաջարկը, բայց որովհետև այն ժամանակ Ֆրանսիան պատերազմի մեջ էր Անգլիայի դեմ (հարյուրամյա պատերազմներ), Լևոնը մտածեց նախ հաշտեցնել այս երկու քրիստոնյա պետությունները: Իր առաջարկի համաձայն զինադադար կնքվեց և Լևոնն Անգլիա անցնելով, ներկայացավ անգլիական Պառլամենտին:

Խաղաղասերների կուսակցությունն իսկույն նրան ընտրեց իրենց պարագլուխ. Լևոնն աշխատեց համոզել կռվող կողմերին՝ վերջ տալու այս աղետալի պատերազմին: Բայց պատերազմի պատճառներն այնքան խոր էին, որ անկարելի եղավ հասնել

ցանկալի նպատակին: Լևոնն հուսահատ վերադարձավ Ֆրանսիա և այնտեղ՝ Փարիզում, պետական ռոճիկով ապրեց մինչև իր մահը (1393 թ. նոյեմբերի 29):

Մինչև այսօր մնում է հայոց վերջին թագավորի գերեզմանը Փարիզի մոտ, Սեն Դենիի աբբայարանի գավիթում:

155. ԿԱԼՄԱՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Մեծն Կնուդի (995-1035 թթ.) մահից հետո, մեծ դանիական պետությունը քայքայվեց և Դանիան, Շվեդիան ու Նորվեգիան բաժանվելով, կազմեցին երեք անկախ թագավորություն: Նրանց մեջ ամենանշանավորը դարձավ նորից Դանիան, որ 13-րդ դարի սկզբում մեծ պետություն կազմեց. Վալդեմար Բ-ը (1202 թ.) օգտվելով գերմանական կռիվներից, նվաճեց Վենեդները, տիրեց Էստոնիային, Պրուսիային, Հոլշտայնին, Համբուրգին, Լյուբեկին, Մակլեմբուրգին և այսպես իր իշխանության տակ առավ Հյուսիսային և Բալթիկ ծովերի հարավային և արևելյան ափերը: Բայց այս գերիշխանությունը երկար չտևեց. Դանիան շուտով ընկավ և բաժանվեց մանր մասերի:

Պետությունը երկրորդ անգամ մեծացավ Վալդեմար Դ-ի օրով (1334 թ.), որ նույնպես օգտվելով Գերմանիայի խառնակ դրությունից, արշավեց Հանսեական դաշնակցության վրա, մի շարք անգամներ հաղթեց նրա նավատորմին, հետո սկսեց նեղել Շվեդիան և Նորվեգիան: Այն ժամանակ երեք պետությունները միացան և հարձակողական դաշինք կապեցին Դանիայի դեմ. հաղթեցին և գրավեցին Կոպենհագենը: Սկանդինավյան պետությունները սակայն շուտ խելքի եկան և տեսան որ Հանսեական դաշնակցության հաջողությունը վնասում է նույնիսկ իրենց շահերին, որովհետև տիրելով Հյուսիսային և Բալթիկ ծովերի վաճառականության, խլում է իրենց առևտուրն իրենց ձեռքից: Դրա վրա երեքը միանալով Կոլմարում կազմեցին մի ընդհանուր դաշնակցական կառավարություն. Դանիան, Շվեդիան և Նորվեգիան պիտի մնային անկախ թագավորություններ իրենց ներքին գործերում, իսկ արտաքին քաղաքականության մեջ գործելու էին միասին (1397 թ.):

Կոլմարի միությունը ուժ տվեց Դանիային նորից հարձակվելու

Գերմանիայի վրա, խլելու Շլեզվիգն ու Հոլշտայնը, որով և վերջ տվեց Հանսենյան գերիշխանությանը Բալթիկ ծովում:

156. ՅԱՆ ՀՈՒՍ. ՉԵԽԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Պապական ոտնձգությունները աշխարհիկ գործերի մեջ, նրանց պառակտումը և հոգևորականության շատ ընկած բարքերը՝ որոշ մտածող մարդկանց մեջ պատճառ դարձան նոր խմորումների. սկսեցին կասկածել կաթոլիկ եկեղեցու դավանանքների մասին: Այսպիսի ազատախոհների մեջ առաջինն եղավ Անգլիացի Վիկլիֆը, Օքսֆորդի համալսարանի դասախոս, որ ուրանում էր պապի գերիշխանությունը, եկեղեցական նվիրապետությունը, եկեղեցական ավանդությունը և պապական կարգադրությունների սրբությունը, և պահանջում էր, որ լատիներեն Ս. Գիրքը ժողովրդի խոսած լեզվին վերածվի, աշխարհականներն էլ կարող լինեն եկեղեցական խորհուրդներ կատարելու, Ս. Գիրքը լինի բարձրագույն հեղինակություն, պապական քավության թղթերի վաճառքը վերանա և եկեղեցական ինչքերը հարքունիքիս գրավվեն: Իր հետևորդներից մեկն եղավ Պրագայի համալսարանի դասախոս Յան Հուս չեխը: Չեխիան այն ժամանակ մեծ առաջադիմություն էր ցույց տվել, ժողովրդի բարոյականը բարձրացել և ազնվացել էր: Կանայք իրենց զարդերը թողնում էին, վաշխառուները հրաժարվում էին շահադիտությունից, զվարճության վայրերը դառնում էին բարեգործական հաստատություններ: Պրագայի համալսարանը, որ Գերմանիայի ամենահին համալսարանն էր, նշանավոր էր դարձել իր պրոֆեսորներով: Միևնույն ժամանակ չեխերի մեջ սկսել էր ազգային զարթոնքը. նրանք ցանկանում էին ազատվել գերմանական լծից: Համալսարանն էլ այդ պայքարի ասպարեզը դարձավ. այնտեղ կային չեխ, բավարացի, սաքսոնացի, լեհ ուսանողներ և պրոֆեսորներ, որոնք իրար հետ կռվի մտան. վերջապես չեխերը հաղթանակեցին, և գերմանացիք հեռանալով հիմնեցին Լայպցիգի համալսարանը: Ճիշտ այս միջոցին երևան եկավ Հուսը, որ սկսեց համալսարանից քարոզել իր նոր հայացքը. նրա համար հոգեկան փրկության ճանապարհը անձնապես մերձեցումն էր առ Աստված՝ աղոթքով և բարոյական կյանքով, և ո՛չ թե արարողությունների և

վարդապետների օրհնությամբ: Հասկացող ժողովրդի բարոյական բարձրությունը, գերմանացիների դեմ ունեցած հակառակությունը շուտով տվեցին նրան հետևորդների մի մեծ թիվ: Եվ կաթոլիկ հոգևորականությունը չգիտեր ի՛նչ անել այս աճող շարժման դեմ:

Երբ Կոնստանցայում եկեղեցական ժողով գումարվեց պապական հերձվածին վերջ տալու, այնտեղ կանչվեց նաև Յան Հուսը. եկեղեցականները դատապարտեցին նրան և այրեցին խարույկի վրա (1415 թ.):

Սրա վրա Յան Հուսի հետևորդները, որ ահագին թիվ էին կազմում, ապստամբեցին. ապստամբությունն ավելի բորբոքվեց հենց նրանով, որ դարձավ ազգային պայքար չեխերի և գերմանների միջև: Յան Ժիսկան անցավ ապստամբների գլուխը և 40 000-անոց բանակով քալեց Պրագայի վրա. գրավեց քաղաքը, այնուհետև անցավ Չեխիայի զանազան կողմերը, կոտորելով 15 000 կրոնականներ, աբեղա և կույս: Կայսրը բանակ կազմած գնաց չեխերի վրա. բայց նրա 100 000-անոց բանակը ջարդուփշուր եղավ. կրկին ու կրկին ուղարկված բանակները նույն վախճանն ունեցան. կայսրը զիջեց վերջապես հաշտվելու Հուսյանների հետ՝ որոշ պայմաններով. Հուսյանները բաժանվեցին երկու մասի. չափավորները համաձայն էին հաշտության, իսկ արմատականները՝ ոչ: Այն ժամանակ կռիվը փոխադրվեց այս երկու կուսակցությունների միջև. կայսերականները և կրոնականները միացան չափավորների հետ և արշավեցին արմատականների վրա. 20 000 հոգի ընկավ նրանցից Պրագայում և հուսյանները պարտվեցին: Չեխիան, արյունաքամ եղած ու ավերված, նվաճվեց և նորից ստիպվեց ճանաչել Գերմանայի կայսեր իշխանությունը (1434 թ.):

157. ԼԵՀԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԻՏՎԱՆԻԱՅԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Լեհացիք Բոլեսլավ Ա-ի ժամանակ մեծ տերություն կազմեցին: Նա էր, որ իր իշխանության տակ միացնելով բոլոր լեհական ցեղերը, դուրս եկավ շրջակա ժողովուրդների դեմ կռվելու. հաղթեց պրոուսացիներին (որոնք սլավոնական կռապաշտ ու վայրենի ցեղ էին Լեհաստանից հյուսիս-արևելք, Բալթիկի ափերին), լուտիչներին, պոմորյաններին, սլավներից խլեց Մորավիան, գերմաններից խլեց Մայսենյան գավառը, ռուսներից խլեց Կարմիր Ռուսիան

և այսպիսով Կիևից մինչև Բալթիկ ծովն իր իշխանության տակ առավ: Գերմանացիք նրա ուժը խորտակելու համար մի քանի համառ պատերազմներ մղեցին և Օտոն Մեծի ժամանակ քիչ էր մնում, որ բոլորովին նվաճեին Լեհաստանը, բայց նա հաղթեց. և ի վերջո հաշտվելով, հրաժարվեց Չեխիայից և Մայսենից, պահելով միայն Մորավիան և Բալթիկի եզերքները: Բոլեսլավի ժամանակ է, որ Լեհաստանը առաջին անգամ դառնում է թագավորություն (1024 թ.):

Բոլեսլավից հետո լեհացիք սկսեցին զարկ տալ երկրի բարեկարգության. երկիրը, որ մեծ մասամբ ծածկվել էր անտառներով և ճահիճներով, մաքրեցին, բնակություն հաստատեցին և արվեստների ու երկրագործության մեջ առաջ գնացին: Լեհաստանի համար շատ վատ եղավ միայն հողերի բաժանման դրությունը զանազան իշխանական տոհմերի միջև, որով սկսեցին ներքին երկպառակություններ և ազգամիջյան կռիվներ: Այս կռիվներից օգուտ քաղելով, գերմանացիք 12-13-րդ դարերում շարունակ խլում էին սլավոնական հողերը: Նույն միջոցին արևելքից արշավեցին թաթարները, որոնք Ռուսաստանը կործանելով մտան Լեհաստան, ահագին ավար ու կոտորած սփռեցին երկրի մեջ և հետ քաշվեցին:

Ավերված երկիրը նորից շենացնելու համար լեհ թագավորները դյուրացրին արտաքին գաղթականների մուտքը. գերմանացիք, հրեաներ և բազմաթիվ հայեր թափվեցին Լեհաստան, հիմնեցին գյուղեր ու քաղաքներ, առևտուրը զարգացրին երկրում և քիչ ժամանակից մոնոդոլական ավերը մոռացնել տվեցին: Գաղթականության վնասն այն եղավ, որ որոշ գավառներ գերմանացան, այսպես Սիլեզիան, որ գրեթե ամբողջապես գերմանաբնակ դարձավ:

Վերանորոգված Լեհաստանի մեծագույն թագավորն եղավ Կազիմիր Մեծը (1333-1370 թթ.), որ ուսումը և կրթությունը ծաղկեցրեց երկրում և նրա շնորհիվ էր, որ Լեհաստանի հայերն ստացան ներքին ինքնավարություն նախ Կամենիցում (1344 թ.), և քիչ հետո Իլվովում կամ Լվովում. հայոց գլխավորն էր վոյթը, որ ընտրվում էր հայոց միջից և 12 հայ դատավորների ընկերակցությամբ վարում էր հայոց բոլոր դատական գործերը: Հայերը կառուցեցին նաև մի հոյակապ մայր եկեղեցի, որի իրավասությունը տարածվում էր նաև Մոլդավիայի հայոց վրա: Կազիմիրը բացեց Կրակովի նշանավոր համալսարանը: Նա արտաքին քաղաքականության մեջ երկու ուղղություն բռնեց. բարեկամություն

արևմուտքի հետ և պատերազմ արևելքի հետ. այս մտքով նա բարեկամական դաշինք կապեց գերմանացիների և չեխերի հետ, և կռվի դուրս եկավ ռուսների դեմ, որոնցից խլեց Գալիցիա և Վոլինիա նահանգները:

Կազիմիր Մեծի մահից հետո Լեհաստանը միանալով Հունգարիային, կազմեց մի մեծ պետություն (1370 թ.), բայց տեսնելով, որ անկարելի է այդ, լեհացիք բաժանվեցին և իրենց աչքը դարձրին այլ կողմ:

Լեհաստանի հարևան մի մեծ ուժ կար. դա Լիտվանիան էր, որ հավասարապես թշնամի էր գերմանացիներին, լեհերին, ռուսներին և թաթարներին: Լեհացիք մտածեցին այս թշնամի ուժը իրենց բարեկամ դարձնել, ուստի սկսեցին հարաբերության մեջ մտնել նրանց հետ. լեհացիների թագուհին ամուսնացավ Լիտվանիայի իշխանի հետ, որ և մկրտվեց քրիստոնյա. այս եղավ սկիզբը ոչ միայն լիտվանացիների քրիստոնեության, այլև Լեհաստանի հետ քաղաքական միության (1386 թ.):

Լեհաստանի և Լիտվանիայի միությունը հավասարապես օգտակար եղավ երկուսի համար էլ. այս միությամբ նրանք կազմեցին մի ուժեղ պետություն, որ արևելյան Եվրոպայում գլխավոր դեր խաղաց ամբողջ երկու դար: Լեհացիք թեև հաղթվեցին թաթարներից, բայց հաջողապես կռվեցին գերմանացիների դեմ. տևտոնյան ասպետական կարգի բանակը, որ եկել էր պրուսիացիներին քրիստոնյա դարձնելու, կռապաշտներին կոտորելու և նրանց երկրները խլելու, բնաջինջ եղավ. մի ահեղ ճակատամարտում 40 000 գերմանացիք իրենց մահը գտան (1410 թ.). այս հաղթանակներով Պրուսիան և Պոմորիեն մտան լեհական իշխանության տակ: Եկավ մի պահ, երբ Չեխիան էլ միանում էր Լեհաստանին. Հուսյաններն օգնություն խնդրեցին լեհերից Գերմանիայի դեմ. լեհերը տրամադիր էին օգնելու, բայց կաթոլիկ հոգևորականությունն արգելք հանդիսացավ. այսպիսով չկատարվեց այդ միությունը, որ լեհերին պիտի տար շատ մեծ դեր Եվրոպայի պատմության մեջ:

158. ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ավգսբուրգի ճակատամարտում հունգարացիք 100 000 մարդ կորցնելուց հետո (955 թ.), իրենց բարբարոսական արշավանքներն այլևս դադարեցրին և դարձան նստակյաց ժողովուրդ: Քրիստոնեությունը շուտով տարածվեց նրանց մեջ: Իրենց քարոզիչն եղավ Ս. Ստեփանը, որ պապից ստացավ թագավոր տիտղոսը (1000 թ.): Նրա հաջորդները երկիրը մեծացրին նոր աշխարհակալություններով. նվաճեցին Տրանսիլվանիան, որ ռումինական հող էր, և Խորվաթիան, որ սերբական մի ժողովրդի հայրենիքն էր: Հունգարացիների ձեռքի տակ խորվաթներն ընդունեցին կաթոլիկ կրոնը և այսպիսով բաժանվեցին սերբերից, որոնք հունադավան էին: Այնուհետև հունգարացիք սկսեցին արշավանքներ մղել ահարկու ծավալով ռուսական իշխանությունների վրա. բայց անկարող եղան նվաճելու նրանց: Այդ միջոցին սկսեց թաթարների արշավանքը, որ Ռուսիայի և Լեհաստանի հետ ավերեց նաև Հունգարիան, մինչև Ադրիատիկ ծովը (1241 թ.): Բայց Լեհաստանի նման այստեղ էլ թափվեցին գերմանացի գաղթականները և ավերված երկիրը շուտով շենացրին:

Հունգարիայի համար առաջադիմության նոր թվական բացվեց, երբ Նապոլիի թագավորի որդին, մի ֆրանսիացի, բարձրացավ հունգարական գահը (1301 թ.): Հունգարացիք լայն հարաբերություններ մշակեցին արևմուտքի ամենակիրթ ազգերի՝ ֆրանսիացիների և իտալացիների հետ: Շատ ուսումնական մարդիկ այդ երկու ազգերից հրավիրվեցին Հունգարիա և ուսման ու գիտության զարկ տվեցին: Այս շրջանին հունգարացիք հետամուտ եղան նաև հեռավոր քաղաքական գործերի և աշխարհակալության: Լյուդովիկոս մեծ թագավորի ժամանակ ծովային արշավանքներ կազմակերպեցին գրավելու համար Նապոլին. դաշնակցեցին ջենովացիների հետ՝ կռվելու համար վենետիկցիների դեմ և այսպիսով ձեռք բերին Դալմացիան: Վերջապես Լուդովիկոսն ստացավ լեհական թագը, որով երկու պետությունները մեկի վերածվեցին (1370 թ.): Բայց այս միությունը երկար չտևեց և Լեհաստանը բաժանվեց Հունգարիայից, միանալու համար Լիտվանիային: Սակայն լեհերի հետ միությունը քաղաքական պահանջ դարձավ քիչ հետո, որովհետև Արևելքից շարժվում էր օսմանցիների ահավոր զորությունը. նրան դիմադրելու համար

լեհերի թագավոր Վլադիսլավ Գ-ը ընտրվեց նաև Հունգարիայի թագավոր և պատրաստվեց կռվելու (1440 թ.):

159. ԲԱԼԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՑԻՆԵՐԻՑ ԱՌԱՋ

Լատինացիների կայսրությունը տապալելով հանդերձ, հույները չկարողացան բյուզանդական կայսրությունն ամբողջովին վերականգնել. նրա շատ մասերը դեռ մնում էին եվրոպացիների ձեռքում. այսպես վենետիկցիք պահում էին իրենց տիրապետությունները դեռ Արշիպեղագոսի կղզիներում, ծովափում և նույնիսկ Պոլսում, Պելոպոնեսում և Ատտիկեում կային մի քանի ֆրանսիական իշխանություններ, Նապոլիի ֆրանսիացի թագավորը գրավեց Եպիրոսը: Հույները, եվրոպացիների ուժը տկարացնելու համար, այժմ էլ սկսեցին նրանց հանել միմյանց դեմ. վենետիկցիների դեմ սկսեցին քաջալերել ջենովացիներին, որոնք նրանց մրցակիցներն էին. ֆրանսիացիների դեմ հանեցին իսպանացի վարձկան զորք, թեև սրանք հետո զենքը հույների դեմ դարձրեցին և հիմնելով մի թափառական հանրապետություն, սկսեցին ասպատակել այս ու այն կողմ և վերջում էլ Ատտիկեն խլեցին: Նույնիսկ հույները բաժանված էին երեք կայսրության. մեկը նստում էր Պոլսում, մյուսն Ադրիանուպոլսում և երրորդը՝ Թեսալոնիկեում:

Բալկանների հյուսիսային կողմում կային երկու պետություններ՝ Բուլղարիան և Սերբիան. բուլղարները, ռումինների հետ միացած, շարունակում էին իրենց ասպատակությունները Թրակիայի վրա, այնպես որ նրանց և հույների միջև ատելությունը կատարյալ և կռիվն անպակաս էր: Բուլղարները հույներին ոչնչացնելու համար դիմեցին Վոլգայի թաթարներին և նրանց տասնյակ հազարավոր զորքը առաջնորդելով Բալկան, ավերում և ասպատակում էին ամեն կողմ. բայց իրենց՝ բուլղարների մեջ էլ միություն չկար. շարունակ ծագում էին հակաթոռ թագավորներ և իրար բզկտում: Սերբերը հանդարտ դիտում էին այս բոլորը և երբ հույն ու բուլղար փոխադարձաբար իրար քայքայեցին այս մրցման մեջ, իրենք իջան ասպարեզ: Սերբերը կազմեցին մի մեծ պետություն Ստեփան Դուշանի օրով (1333-1355 թթ.), որ տիրեց Ալբանիային, Մակեդոնիային, Թեսալիային և հասավ մինչև Եգեական (Էգեյան) ծովը: Բուլղարիան նրա գերիշխանության տակ մտավ. այնուհետև Դուշանն առավ իր վրա Ցար սերբերի և հույների տիտղոսը,

հիմնեց անկախ սերբ պատրիարքություն և ամբողջ Բալկանների գերիշխանությունն իրենն էր: Բայց նրա մահից հետո պետության արժանավոր մի ժառանգ չգտնվելով, իր գրաված երկրները նորից բաժանվեցին և կազմեցին մանր-մունր անկախ պետություններ: Սերբիան շատ տկարացավ: Ասպարեզ իջավ Հունգարիան, որ նվաճեց Բալկանները մինչև Վիդին. բուլղարները ուժ չունենալով դիմադրելու, ստիպվեցին դիմել օտարին:

Եվ այսպես ամբողջ Բալկաններում տիրում էր թուլություն, կռիվ և երկպառակություն. հույները, վենետիկցիք, ջենովացիք, ֆրանսիացիք, իսպանացիք, բուլղարները, ռումինները, ալբանացիք, սերբերը, բոսնիացիք և հունգարները, ռումանները, պեչենեգները, թաթարները կռվում էին միմյանց դեմ և իրար էին վնասում: Այս խառնաշփոթ վիճակի մեջ երևան եկան օսմանցիք:

160. ՕՍՄԱՆՑԻՔ ԳՐԱՎՈՒՄ ԵՆ ԲԱԼԿԱՆՆԵՐԸ

Օսմանցիք նախապես Խորեզմի պետության մեջ բնակվող փոքր թուրքմենական ցեղին. թաթարական արշավանքների ժամանակ նրանք թողեցին իրենց երկիրը և 50 000 հոգով եկան բնակվեցին Հայաստանի արևմտյան կողմը՝ Երզնկայից մինչև Խլաթ: Չինգիզ-Խանի մահից հետո, այս գաղթականներից Էրթողրուլ իշխանը, 400 ընտանիք առնելով հետը, գնաց Իկոնիայի սելջուկյան սուլթանի ծառայության մեջ մտավ և իբրև պարգև զանազան կալվածներ ստացավ: Մոնղոլների մի նոր արշավանք սելջուկյան պետության վերջ տվեց, Իկոնիայի սուլթանն սպանվեց և նրա երկիրը բազմաթիվ մանր մասերի վերածվեց: Էրթողրուլն էլ սկսեց իշխել իր շրջանի վրա: Նրա որդին՝ Օսմանը իր աթոռը հաստատեց Ենիշեհիր քաղաքում և իրեն հայտարարեց սուլթան (1300 թ.): Օսմանը շարունակեց հոր աշխարհակալությունները և մի կողմից սելջուկյան մյուս սուլթանների հողերը և մյուս կողմից հույների բյուզանդական կայսրության հողերը գրավելով հասավ մինչև Բրուսա (1326 թ.): Այս քաղաքը դարձավ նոր պետության և ազգի մայրաքաղաքը, որ իր հիմնադրի անվամբ կոչվեց Օսմանյան:

Օսմանցիք ասպարեզ էին եկել պատմական շատ հարմար րոպեում. թաթարներն ընկճված, սելջուկյան պետությունը քայքայված և մանր մասերի վերածված, հույների պետությունը

բաժան-բաժան եղած, բալկաններն իրար հակառակ մանր իշխանությունների վերածված, որոնց մեջ միաբանություն կամ դաշնակցային ընդհանուր կապ գոյություն չուներ, ժողովուրդները նեղվում էին տիրողների ծանր հարկերից, իսկ արևելյան քրիստոնյաները նաև հույների կրոնական հալածանքներից: Օսմանցիք կարողացան օգուտ քաղել այս երկպառակություններից և մեկը մյուսի հետևից նվաճեցին զանազան ժողովուրդները: Շուտով ընկան Նիկիան և Նիկոմիդիան. այնպես որ Բոսֆորի և Դարդանելի ամբողջ ասիական ափը նրանց ձեռքն անցավ: Այս բավական չէր. հույների կայսերական գահի համար ներքին կռիվ ծագելով, կայսրը օսմանցիներին օգնության կանչեց: Այսպիսով օսմանցիք Ասիայից հեշտությամբ դիմացը անցան և գրավեցին Կալիպոլի քաղաքը, որով առաջին անգամ լինելով ոտք դրեցին եվրոպական հողի վրա (1356 թ.): Նրանք իսկույն չհարձակվեցին Պոլսի վրա, այլ շրջան կազմելով նախ արշավեցին Ադրիանուպոլսի վրա, որ Թրակիայի երկրորդ մայրաքաղաքն էր. սուլթան Մուրադը գրավեց այն և իր պետության մայրաքաղաքը դարձրեց (1360 թ.): Ժամանակն էր, որ Բալկանների բոլոր քրիստոնյա պետությունները միանային այլազգիների դեմ և նրանց ջախջախեին: Բայց ընդհակառակը, իրար հետ էին կռվում: Բուլղարները, չկարողանալով վտարել հունգարներին, դիմեցին օսմանցիներին և նրանց բանակը իրենց հայրենիքն առաջնորդեցին. օսմանցիք եկան և արագորեն գրավեցին Բուլղարիայի նշանակալի մասը, հետո Մակեդոնիան: Հույների կայսրը, այս դեպքերից սարսափահար, անցավ Եվրոպա և արևմտյան պետություններից օգնություն խնդրեց. բայց ոչ մեկը չկարողացավ օգնել նրան, որովհետև բոլորն էլ ներքին կռիվներով կամ արտաքին պատերազմով էին զբաղված: Հատկապես շատ մեծ էր վենետիկցիների և ջենովացիների միջև ծագած պատերազմը, որին մասնակցում էին Միջերկրականի բոլոր ծովային պետությունները և որ մինչև 1381 թվականը տևեց: Կայսրը այն ժամանակ ստիպվեց դառնալ սուլթանի վասալը և տարեկան հարկ վճարել նրան: Բանը բանից անցնելուց հետո միայն Դանուբի ժողովուրդները դաշնակցություն կազմեցին օսմանցիների դեմ. սերբերի Լազար թագավորը, բոսնիացի, խորվաթ, չերնագորացի, ալբանացի, սերբ, բուլղար և ռումին բանակի գլուխն անցած, Քոսովայի դաշտում մի ահավոր ճակատամարտ մղեց սուլթան Մուրադի դեմ, ուր թեև

օսմանցիք նախապես մեծ ջարդ կրեցին, բայց հետո հաղթանակը իրենց մնաց: Թե՛ սուլթանը և թե՛ Լազարը մեռան այդ ճակատամարտում (1389 թ.): Սեբերին ջարդելուց հետո, օսմանցիք գրավեցին ամբողջ Թրակիան, Մակեդոնիան, առան Տռնովա մայրաքաղաքը և բուլղարական պետությունը կործանելով, անցան Դանուբի մյուս ափը:

Օսմանցիների երևալը ցնցեց հունգարացիներին: Միացյալ Հունգարիայի և Գերմանիայի թագավոր Սիգիսմունդը մի նոր խաչակրություն քարոզեց Արևմուտքում. ֆրանսիացի և գերմանացի ասպետներն եկան միանալու հունգարական բանակին և Դանուբն անցնելով Նիկոպոլսի առաջ դուրս եկան. բայց օսմանցիք չարաչար հաղթեցին նրանց և մինչև իսկ թագավորը հազիվ կարողացավ փախչել (1396 թ.):

Սարսափը տիրեց Արևմտյան Եվրոպային. բայց հանկարծ մի նոր ավելի ահավոր արշավանք օսմանցիների ուշադրությունը դարձրեց դեպի Ասիա և կացությունը փրկեց կես դարով. դա Թիմուրլենկի արշավանքն էր:

161. ԹԻՄՈՒՐԼԵՆԿԻ (ԼԵՆԿԹԵՄՈՒՐ) ԱՐՇԱՎԱՆՔԸ

Չինգիզ-Խանի մահից հետո թաթարների պետությունը չարս մասի էր բաժանվել. Չինաստանը, Չաղաթայը, Ղփչաղը և Պարսկաստանը: Բայց այս չորսն էլ շատ երկար չդիմացան և մանր-մունր անկախ մասերի բաժանվեցին: Հայաստանը պաշտոնապես Պարսկաստանի թաթարական պետության իշխանության տակ էր գտնվում: Բայց միևնույն ժամանակ երկրի ներսում իշխում էին զանազան ցեղեր՝ մասամբ Բաղդադի խանին հարկատու և մասամբ անկախ. այսպես արևմուտքում թուրքմենները, արևելքում պարսիկները և հարավում քրդերը, որոնց գլխավորն էր Սասունի բեկը:

14-րդ դարի վերջում Չինգիզ-Խանի ազգականներից մեկը՝ Թիմուրլենկը ցանկացավ վերականգնել թաթարների կործանված կայսրությունը. Սամարղանդի մոտ ուզբեկ թաթարների մի հասարակ ցեղապետ էր նա. օգուտ քաղելով Չաղաթայի պետության քայքայումից, որ վերածվել էր բազմաթիվ մանր մասերի, որոնք շարունակ կռվի մեջ էին միմյանց դեմ, նա հարձակվեց նրանց վրա, մի առ մի նվաճեց, տիրեց Սամարղանդին և այնտեղից դուրս եկավ

աշխարհներ նվաճելու (1372 թ.): Նվաճեց նաև Խորեզմի պետությունը, Կաշգարի թագավորությունը (Չինական Թուրքեստան), հետո մտավ Պարսկաստան, գրավեց ու կործանեց Սուլթանիեն, որ Հուլաղուի ցեղի մայրաքաղաքն էր, Կասպից ծովի հարավով անցնելով և Ատրպատականն ավերելով, Թավրիզից մտավ Հայաստան, ավերեց Սյունիքը, Այրարատը, հասավ մինչև Կարս և այնտեղից Տփղիսի վրա գնաց (1376 թ.): Այստեղից ետ դառնալով Հայաստանի վրայով գնաց Պարսկաստան և նրա դեռ չնվաճված գավառները գրավելով, առաջացավ մինչև Սպահան (1387 թ.): Հետո որոշեց Ղփչաղի պետությունը կործանել. Կովկասյան լեռներից անցավ, մտավ Ռուսաստան (1390-1392 թթ.) ու թեև իր նպատակին չհասավ, բայց կարողացավ գոնե մեծ հարված հասցնել և մինչև Մոսկվա առաջացավ: Հետո գնաց Հնդկաստան (1398 թ.), երկրի հյուսիսային մասը (Փենջաբը՝ Դելիի մայրաքաղաքով) ավերակ դարձրեց. այնտեղից եկավ Կովկաս, Հայաստանն ու Վրաստանը քարուքանդ արեց, հետո իջավ հարավ, Ասորեստանում գրավեց Բաղդադը, բոլոր բնակիչներին կոտորեց, անցավ Ասորիք, Հալեպն ու Դամասկոսը գրավեց և այրեց, նվաճեց Եգիպտոսի սուլթանին, հետո հյուսիս բարձրանալով մտավ Բարձր Հայք, որի բոլոր քաղաքները կործանեց ու ոչնչացրեց: Այսպես ամբողջ Հայաստանին տիրելուց հետո, մտավ Փոքր-Ասիա՝ չափվելու օսմանցիների հետ: Ճանապարհին գրավեց Սեբաստիա հայաշատ քաղաքը, որի բնակիչներին չարաչար կոտորեց: Անկյուրիայի (Անկարայի) դաշտում տեղի ունեցավ ահռելի ճակատամարտը թաթարական երկու արխարհակալների միջև. 800 000 մոնղոլները բախվեցին 400 000 օսմանցիների հետ, որոնց առաջնորդում էր սուլթան Բայազեդը. պատերազմը տևեց երեք օր. 240 000 դիակ փռվեց դաշտում. Թիմուրլենկը հաղթեց և սուլթանին գերի բռնեց: Այսպես Փոքր-Ասիան էլ ամբողջապես նվաճվեց և Թիմուրլենկը մինչև Զմյուռնիա առաջացավ (1402 թ.): Այստեղից նա ուզեց արշավել Եվրոպա, բայց նավեր չկային իր ահռելի բանակը տեղափոխելու համար. ուստի ետ դարձավ և այս անգամ Չինաստան մտավ, որ աշխարհի վրա միակ մրցակիցն էր իր լայնածավալ պետության. և մինչդեռ այս երկրի աշխարհակալությամբ էր զբաղված, մահը վրա հասավ և իրեն հետ վերջ տվեց նրա մեծածավալ պետության (1405 թ.):

Թիմուրլենկը աշխարհիս մեծագույն աշխարհակալը և

ամենամեծ գազանն եղավ. նրա համար հաճույք էր կոտորելը, այրելն ու ավերելը. այն ընդարձակ պետության մեջ, որի մի ծայրից մյուսն էր վազում շարունակ, միայն ավերած ու կոտորած սփռեց: Թեև մահմեդական, բայց նա չէր խնայում նույնիսկ իր հավատակիցներին: Սպահանում 70 000 մահմեդական կոտորեց. Խորասանի Սաբզվար քաղաքում ամբողջ ժողովուրդը կոտորելով, միայն 2000 հոգի թողեց, որ իրար վրա դարսելով ու շաղախով ծեփելով, աշտարակների իբր հիմք գործածեց. Բաղդադում 90 000 մարդ կոտորելով, նրանց գանգերից մի կոթող կանգնեցրեց. Հնդկաստանում Դելիհի մոտ 100 000 գերի սպանեց. Հալեպն ու Դամասկոսը կրակի տվեց և մարդկանց գանգերից բուրգեր կանգնեցրեց: Սոսկալի անգթություններ գործեց Հայաստանում. Վանը գրաված ժամանակ ժողովրդի բազմությունը 5-10 իրար կապելով բերդից ցած գլորեց, մեռելների կույտերն այնքան բարձրացան, որ պարիսպներին հավասարվելով, վերջին ընկնողները այլևս չէին մեռնում: Սեբաստիայում, որովհետև երդում էր տվել սուր չբարձրացնել ժողովրդի վրա, 4000 զինվոր ողջ-ողջ թաղեց, կանանց ձիերի պոչից կապելով ջարդուփշուր արեց. բոլոր երեխաներին հավաքելով դաշտի մեջ, իր ձիավորներին ոտնատակ անել տվեց: Իր անցած վայրերում այնպիսի սով տիրեց, որ մարդիկ սկսեցին իրենց մերձավորներին եփել և ուտել:

162. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԻՄՈՒՐԼԵՆԿԻՑ ՀԵՏՈ

Թիմուրլենկի հսկայական պետությունը կործանվեց իր մահվան հետ. բոլոր նվաճված երկրներն անկախություն ձեռք բերեցին, իրանից մնաց միայն Կենտրոնական Ասիայի մի փոքր մասը:

Հայաստանի հարավային կողմում այն ժամանակ իշխում էր Սասունի քուրդ բեկ Ղարա-Յուսուֆը. նա անձնատուր չէր եղել Թիմուրլենկին և իր սակավավոր մարդկանցով թափառում էր սարից սար: Երբ նա լսեց Թիմուրլենկի մահը, նորից վերադարձավ իր երկիրը և իր իշխանության տեր դարձավ (1408 թ.): Նա տիրեց նաև Ատրպատականին և միացրեց Հարավային Հայաստանի քուրդ իշխանության, որ և կոչվեց Շահի- Արմեն: Լենկթեմուրի որդի Շահրուխը երբ այս բանն իմացավ, իր բանակը վերցրեց և արշավեց Ղարա-Յուսուֆի վրա: Այդ օրվանից սկսեց մի ահռելի

կռիվ Շահի-Արմենի և Շահրուխի միջև, որ տևեց 17 տարի: Այս պատերազմների միջոցին Հայաստանը երկու կողմից ոտնակոխ լինելով, բազմաթիվ գյուղեր ու քաղաքներ կործանվեցին, շատ մարդ կոտորվեց կամ գերի տարվեց, վերջապես տիրեց մի ահռելի սով, որ թշնամիների թողած պակասը լրացրեց: Այս սարսափելի վիճակից փախչելով, շատ հայեր թողեցին երկիրը և գաղթի ճանապարհը բռնեցին, որով երկիրն իր որդիներից դատարկվեց: Վերջապես քուրդերը իրենք ձանձրացան այս դաժան կռիվներից և իրենց իշխանին թողնելով հեռացան ու միացան Շահրուխին. և Շահի-Արմենի հարազատ որդին մոր հետ միաբանած սպանեց հորը քնած ժամանակ (1437 թ.):

Շահրուխն այսպես հաղթական դուրս գալով, Արևելյան և Հյուսիսային Հայաստանը միացրեց Ատրպատականի հետ և բոլորի իշխանությունը հանձնեց Շահի-Արմենի եղբոր՝ Ջհանշահին, որ իր աթոռն Ատրպատականում հաստատեց: Միևնույն ժամանակ Հայաստանի հարավային մասում զորացել էին թուրքմենները և նրանց գլխավոր Ջիհանգիրը, Շահրուխից անկախ, ձեռքն էր առել երկրի իշխանությունը:

163. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱԾԻՆ

Հայոց Կաթողիկոսական աթոռը, որ Լուսավորչի ձեռքով հաստատվել էր Էջմիածնում, հայոց պետության անկումից հետո սկսեց շրջել բոլոր քաղաքները, ուր հաստատվում էր հայոց իշխանությունը: Վերջին անգամ, երբ Ռուբինյան թագավորությունը մայրաքաղաք դարձրեց Սիսը, Կաթողիկոսական աթոռն էլ այնտեղ փոխադրվեց: Երբ հայոց քաղաքական իշխանությունը բոլորովին վերջացավ, աթոռն այնուամենայնիվ շարունակեց մնալ Սսում, թեև Կիլիկիան ավերված, ժողովրդից թափուր և այլազգիների հարստահարության տակ նեղված: Կաթողիկոսները շատ անգամ թափառում էին աստանդական և միայն եպիսկոպոսական ձեռնադրության ու մյուռոնի օրհնության համար երևում էին Սսում: Նրանց հարաբերությունը ազգի ընդհանրության հետ դժվարացել էր առանց ամբողջ ազգի հավանության և մասնակցության, ճանապարհների հեռավորության և դժվարության պատճառով: Բացի սրանից, Կիլիկիայի կաթողիկոսները,

ունիտոռական խլրտումների ժամանակ կամա-ակամա վերցրել էին զանազան կաթոլիկական կրոնական սովորություններ, որոնց համաձայն չէր ազգի մեծամասնությունը, հատկապես բուն Հայաստանի ժողովուրդը:

Այս բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, հայրապետական պատվի և հայ կրոնի անարատության նախանձախնդիր մարդիկ մտածեցին կաթողիկոսական աթոռը նորից փոխադրել իր բնակավայրը՝ Ս. Էջմիածին, որ պիտի դառնար քաղաքական իշխանությունից զրկված և զանազան երկրներում ցրված հայ ժողովրդի միության կենտրոնը:

Այս նպատակով 1441 թվականին Էջմիածնում տեղի ունեցավ մի ընդհանուր հայկական եկեղեցական ժողով, որին ներկա եղան հայության զանազան հատվածներից ընտրված և ուղարկված կրոնական և աշխարհական բազմաթիվ պատվիրակներ: Ժողովն Էջմիածինը հայտարարելով Հայրապետական աթոռ, հրավիրեց Սսի այն ժամանակի կաթողիկոս Գրիգոր Թ-ին գալ բազմելու Էջմիածին: Կաթողիկոսը չուզեց թողնել Սիսը: Այն ժամանակ եկեղեցական ժողովը ձեռնարկեց նոր կաթողիկոսի ընտրության և ընդհանուր հավանությամբ Էջմիածնի կաթողիկոս հռչակվեց Կիրակոս Վիրապեցին:

Այսպիսով հայերն ունեցան երեք կաթողիկոս. առաջինը, որ ընդհանուր հայոց կաթողիկոսն է, նստում է Էջմիածնում և կոչվում է Ամենայն հայոց հայրապետ. իսկ Սսի և Աղթամարի կաթողիկոսները համարվում են մասնավոր: Սսի կաթողիկոսը իր գոյությունը շարունակում է մինչև այսօր, իսկ Աղթամարի կաթողիկոսությունը 19-րդ դարի վերջում լռելյայն դադարեց:

164. ՀՈՒՆԳԱՐԱՑԻՆԵՐԻ ԿՌԻՎՆԵՐԸ ՕՍՄԱՆՑԻՆԵՐԻ ԴԵՄ

Սուլթան Բայազետի գերությամբ օսմանյան պետությունը գրեթե քայքայվելով, արևմտյան ազգերը դժբախտաբար չուզեցին օգտվել այս առիթից: Բուլղարիան և Վալակիան անկախություն ձեռք բերեցին. Փոքր Ասիայի մանր իշխանությունները հպատակությունից դուրս եկան: Այս կռիվները տևեցին 10 տարի և վերջապես նախկին կարգը վերահաստատվեց: Օսմանցիք նորից

սկսեցին իրենց աշխարհակալությունները Բալկաններում. վենետիկցիների ձեռքից խլեցին Թեսալոնիկեն, հետո Ալբանիան իրենց իշխանության տակ առան և մինչև Վալակիա ու Տրանսիլվանիա առաջացան:

Օսմանցիների հաջողությունները նորից մտատանջություն պատճառեցին հույներին և հունգարներին: Հույների կայսրը վազեց Արևմուտք և պապից օգնություն խնդրեց. պապը խոստացավ քարոզել նոր խաչակրություն, միայն եթե հույներն ընդունեին իր գերիշխանությունը և հունական եկեղեցին միացնեին հռոմեական աթոռին: Քաղաքական ճգնաժամի մեջ կայսրը համաձայնվեց. Ֆլորենցիայում գումարված եկեղեցական ժողովը, ուր ներկա էին նաև կայսրը և հունական միտրոպոլիտները, հռչակեց երկու եկեղեցիների միությունը (1439 թ.): Սրա վրա պապը հրավեր կարդաց արևմտյան քրիստոնյա պետություններին՝ դուրս գալ օսմանցիների դեմ. բայց ոչ ոք չշարժվեց. ֆրանսիացիք, գերմանացիք, անգլիացիք և իսպանացիք իրենց ներքին գործերով կամ կռիվներով էին զբաղվել: Կոչն արձագանք գտավ միայն Լեհաստանում և Հունգարիայում, որովհետև սրանք անմիջականորեն շահագրգռված էին և առանց կոչի էլ շարժվելու էին: Խաչակրության գլուխն անցան երկու կտրիճ մարդիկ՝ Լեհաստանի և Հունգարիայի թագավոր Լադիսլաս Գ-ը և Տրանսիլվանիայի իշխան Յան Հունիադին: Յան Հունիադին անցավ Դանուբը, հենց առաջին անգամից սպանեց 20 000 օսմանցու, իր 15 000 քաջերով օսմանցիների տասնապատիկ մեծ բանակը ջարդեց, գրավեց Բելգրադը, ազատագրեց Սերբիան, գրավեց Բուլղարիայի Սոֆիա քաղաքը և Դանուբի աջ եզերքը ավերակ դարձրեց: Լադիսլասը լեհ և հունգար միացյալ բանակով հասավ Բուլղարիա. սուլթանը, վախեցած, հաշտություն խնդրեց, բայց պապի նվիրակը քանդեց դաշինքը և բանակն արշավեց Վառնա. սուլթանը ելավ նրա դեմ, ջարդեց, Լադիսլասն սպանվեց և Հունիադին իշխանության գլուխն անցնելով, մտավ Սերբիա և Քոսովայի դաշտում բախվեց սուլթանի մեծ բանակի հետ. հունգարական բանակը բնաջինջ եղավ և Հունիադին հազիվ կարողացավ փախչել (1448 թ.):

165. ՊՈԼՍԻ ԱՌՈՒՄԸ. ՎԵՐՋ ՀՈՒՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ

Օսմանցիների գլխավոր նպատակը Պոլիսը գրավելն էր, Պոլիսը, որի դիմացը նստել էին իրենք և մոտ մի դար նրա շուրջը ման էին գալիս: Սուլթան Մուհամմեդ Բ-ը որոշեց կատարել այդ գործը. 260 000-անոց մի զորավոր բանակ պատրաստեց նա, թնդանոթների մի պատկառելի պաշարով և մի մեծ նավատորմիղով և հանկարծ ծովից ու ցամաքից պաշարեց քաղաքը: Արդեն այն ժամանակ հունական կայսրությունն այնքան էր փոքրացել ու տկարացել, որ միայն Պոլսում էր ամփոփվել: Սուլթանի ահավոր բանակի դեմ կայսրն ուներ միայն 9 000 կռվող, որից 2 000-ը վենետիկցի և ջենովացի: Այնուամենայնիվ նրանք մեծ քաջությամբ պաշտպանեցին իրենց քաղաքը. 5 ջենովական նավ ընկղմեց 300 օսմանական նավ և 12 000 կռվողներ սուզվեցին ջուրի տակ: Հունական հուրն էլ հրաշքներ էր գործում: Սուլթանը մի վարպետ հնարք մտածեց. գիշերանց տախտակյա մի անցք պատրաստել տվեց, որ Բոսֆորը միացնում էր Ոսկեղջյուրին և այդ անցքի վրայով նավատորմիղը փոխադրեց քաղաքի ներսի ծոցը: Հույները զարհուրեցին թշնամուն իրենց հետևում տեսնելով. այնուամենայնիվ հուսահատական քաջությամբ զինվեցին: Մայիսի 29-ի գիշերը օսմանցիք սկսեցին ընդհանուր հարձակումը. առավոտյան արդեն քաղաքի կեսը գրավվել էր. կայսրն անձամբ նետվեց կռվի մեջ և սպանվեց. քաղաքը գրավվեց և հույների կայսրությունը վերջացավ (1453 թ.):

Սուլթանը ձի նստած մտավ Ս. Սոֆիայի տաճարը, կոտորեց ժողովրդին և գմբեթի վրայի խաչը հանելով, տեղը բարձրացրեց օսմանյան կիսալուսինը:

Այսպես ընկավ Արևելքի քաղաքակրթության և քրիստոնեության վերջին ապաստանը՝ բարբարոսության ու մահմեդականության դաժան թաթի տակ:

Այս դեպքը այնքան նշանավոր երևույթ էր պատմության մեջ, որ նրանով վերջանում է Միջին դարը և սկսվում է Նոր դարը:

Ն Ո Ր Դ Ա Ր

166. ԳՅՈՒՏԵՐ. ՀՈՒՄԱՆԻԶՄ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ

Միայն բյուզանդական կայսրության անկումը չէ որ սկիզբ է դնում Նոր դարին. դա մի քաղաքական դեպք էր. բայց գրեթե նույն միջոցին եվրոպական աշխարհում տեղի է ունենում մի այնպիսի մեծ բարոյական ու գիտական շարժում, որ ամբողջովին հեղափոխում է մարդկությանը:

Միջնադարյան շրջանում մարդկությունը եկեղեցական իշխանության ստրուկն է. պապն ստեղծել է մի այնպիսի հզոր աստվածապետություն, որ իրանից դուրս ոչ մի իշխանություն չի ճանաչում. բոլոր թագավորներն ու կայսրները նրա վասալներն են. կյանքի և մտքի համար նա գծել է այնպիսի կանոններ, որոնք պարտադիր են ամենքի համար և որոնցից դուրս գալը հանցանք է. կրոնը դարձել է ո՛չ թե համոզմունքի և հոգու գործ, այլ խստորեն գծված կանոնների կույր գործադրություն. ազատ միտքն արգելված է. կրթությունը կապված է սխոլաստիկային, այն է Ս. Գրքի՝ հոգևոր հայրերից տրված տարրական բացատրություն:

Բայց պապերի քաղաքականությունը սկսեց կամաց-կամաց ընկնել. խաչակրությունը, որ աստվածապետության ստեղծած գլուխգործոցն էր, անհաջող անցավ. Եվրոպայի այլևայլ ազգերը ուզեցին անկախորեն կառավարվել և պապի լուծը թափ տվեցին. եկեղեցում սկսեցին առաջ գալ ազատ մտածողներ, ինչպիսիք էին Վիկլիֆը, Յան Հուսը և հետո ուրիշներ, որոնք նույնիսկ պապի հոգևոր գերիշխանության դեմ խոսեցին և հոգու փրկությունը բարոյական մաքրության և Աստուծուն անձնապես մերձենալու մեջ գտան: Սկսվում է **եկեղեցու բարեկարգությունը:**

Մտքի ազատությունը, բացի եկեղեցուց, սկսվում է նաև մի ուրիշ ասպարեզում՝ գրականության և գիտության մեջ: Դրա սկիզբն է դնում Դանթեն, իտալացի նշանավոր գրողը (1265-1321 թթ.), որին հետևում են ուրիշները և այսպես սկսվում է **հումանիզմը** Իտալիայում և այնտեղից էլ անցնում է Եվրոպայի մյուս երկրները: Հումանիստները պահանջում են չկենտրոնացնել իրենց ամբողջ

մտածմունքը երկնքի և հանդերձյալ կյանքի վրա, այլ իմանալ նաև, որ կա աշխարհը իր հրապույրներով և մարդը՝ իր բնական հակումներով: Այս ուղղության ազդեցության տակ ծնունդ են առնում մեռած լատիներենի տեղ նոր լեզուների ազգային գրականությունը, աստվածաբանության փոխարեն աշխարհիկ ուսմունքներն են քաջալերվում և մարդկային բոլոր արվեստները հեղափոխվում, նոր ուղղությամբ են զարգանում:

Նոր դարի սկզբին երեք մեծ գյուտ է տեղի ունենում. վառոդի և թնդանոթի գյուտը, որ 14-րդ դարի առաջին քառորդին մտնում է Եվրոպա արաբների միջոցով. տպագրության գյուտը, որ անում է Գուտենբերգը 1436 թվականին Գերմանիայում և կողմնացույցը, որ նույնպես 14-րդ դարից մտնում է Եվրոպա: Վառոդի և թնդանոթի գյուտով փոխվում է պատերազմական արհեստը. անձնական քարոզչության տեղ տիրում է ռազմագիտության արվեստը. ասպետների բերդերն այլևս անզոր են լինում դիմադրելու. մանր իշխանները ընկճվում են մեծերի ուժի առաջ և այսպես վերացվելով ասպետությունն ու ավատականությունը, առաջ են գալիս մեծ միապետությունները: Տպագրության գյուտով կրթությունը մեծ զարկ ստացավ. այն բոլոր հեղինակների գործերը, որոնք ձեռագիր և շատ թանկ լինելով, հարուստ դասակարգին միայն մատչելի էին, տպագրության միջոցով ամենքին մատչելի դարձան. և սրանով ազատ մտածմունքն էլ լայն ծավալ ստացավ: Վերջապես կողմնացույցը պատճառ դարձավ նավարկության և վաճառականության զարգացման: Պորտուգալացիք և հետո իսպանացիք դուրս եկան նոր ու անծանոթ աշխարհներ գտնելու. իրար հետևից հայտնագործվեցին Մադերա կղզին, Կանարյանները, Ասորյան կղզիները, Գվինեան, Բարեհուսո գլուխը Աֆրիկայի ծայրին: Քրիստափոր Կոլոմբոսը գտավ Ամերիկան (1492 թ.), որ հայտնագործությունների ամենանշանավորը եղավ և նոր ժամանակի պատմության մեջ մեծագույն դերը խաղաց:

Պոլսի առումից հետո շատ հույն ուսումնականներ դասական հնության բազմաթիվ ձեռագրերով ապաստանում են Իտալիա. հին հունական դպրոցի ուսումնասիրությանը նոր զարկ է տրվում. հումանիստները, որոնք աշխարհիկ գաղափարներով էին տարված, հելլենական կուլտուրայի մեջ գտնում են այն, ինչ որ իրենք էին փնտրում: Աշխարհային հաճույք, անձնական կորով, քաջություն, մարմնի և բնության գեղեցկություն և այդ բոլորը

քրիստոնեության և եկեղեցու ազդեցությունից ու հովանավորությունից դուրս: Հին արվեստը նորոգվում է: Այս շրջանը կոչվում է Վերածնություն, որ սկսելով Իտալիայից, անցնում է Եվրոպայի մյուս երկրները. նրա շրջանն է 15-րդ և 16-րդ դարերը:

167. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց թագավորության անկումից հետո, շատ հայեր անցել էին Փոքր Ասիա: Այդպիսի գաղթեր եղել էին նաև սելջուկների արշավանքի ժամանակ, Շահրուխի և Ղարա-Յուսուֆի ընդհարումների միջոցին և այլն: Երբ օսմանցիք Փոքր Ասիային տեր դարձան, այնտեղի հայերն էլ բնականաբար նրանց իշխանության տակ մտան և այսպիսով պաշտպանություն էին գտնում կրոնական այն հալածանքներից, որ հույներն էին հարուցում իրենց դեմ: Օսմանցիների հաջողության պատճառներից մեկն էլ քրիստոնյաների փոխադարձ ատելությունն էր: Հայ ազնվականներն ու հոգևորականները կարողացել էին մոտենալ օսմանյան արքունիքին, հատկապես սուլթան Մուհամմեդ Բ-ին սիրելի էր դարձել Բրուսայի հայոց հոգևոր հովիվ Հովակիմ եպիսկոպոսը, որ գուշակել էր նրան, թե մի օր Պոլսին տեր պիտի դառնա:

Երբ Մուհամմեդը տիրեց Պոլսին, չջնջեց քրիստոնյաների իրավունքները. առհասարակ տվեց նրանց կրոնական ազատություն և ազգությունները կրոնական համայնքի վերածելով, դրեց մի պատրիարքի կամ հոգևոր պետի գերիշխանության տակ: Այսպես արեց նա հույների և լատինների համար:

Սուլթան Մուհամմեդը Պոլսում գտավ նաև հին հայ գաղթականություն, որ բյուզանդական շրջանից գաղթել էր Պոլիս և դեռ իր ազգային առանձնահատկությունները չէր կորցրած: Նա Բրուսայից կանչել տվեց իր բարեկամ Հովակիմ եպիսկոպոսին, տվեց նրան պատրիարքական տիտղոս և Փոքր Ասիայից շատ ազնվական հայերի էլ Պոլիս հրավիրելով և Պոլսի հին հայ գաղթականության հետ մի առանձին համայնք կազմելով, ենթարկեց նրա հոգևոր իշխանության (1461 թ.): Այսպես սկսվեց Պոլսի հայոց պատրիարքական իշխանությունը, որ երբեմն կաթողիկոսական իշխանությունից էլ ազդեցիկ դարձավ և որի իշխանությունը հետզհետե ավելի մեծացավ, քանի մեծանում ու տարածվում էր օսմանյան պետությունը:

Շուտով Փոքր Ասիայի և Հայաստանի զանազան կողմերից հայերը գունդ-գունդ թափվեցին մայրաքաղաքը, մասամբ գտնելով այնտեղ արհեստների և վաճառականության ընդարձակ ասպարեզ, և մասամբ էլ հրապուրվելով կյանքի և գույքի ապահովությունից, որ համեմատաբար ավելի բարձր էր, քան տառապյալ Հայաստանում: Այսպես կազմվեց Պոլսի ստվար հայությունը, որի թիվը մինչև 200 000-ի հասավ և մի օր պիտի խաղար նշանավոր դեր հայության կուլտուրայի գործում:

168. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՐ ԴԱՐԻ ՇԵՄԻՆ

Միջին դարի վերջում, Շահրուխի և Ղարա-Յուսուֆի երկարատև պատերազմներից հետո, Հայաստանը երկու պետության էր բաժանված. հարավային մասի վրա իշխում էր թուրքմեն իշխան Ջիհանգիրը, իսկ Հյուսիսային և Արևելյան Հայաստանն Ատրպատականի հետ Շահի-Արմենի թագավոր Ջհանշահի ձեռքումն էր: Երբ Ջհանշահը մեռավ, թուրքմեն իշխան Ջիհանգիրի որդի Ուզուն-Հասանը հարձակվեց Ատրպատականի վրա, գրավեց ամբողջ Հայաստանի և Արևմտյան ու Հարավային Պարսկաստանի միացյալ թագավորության տեր դարձավ (1458 թ.):

Ուզուն Հասանն ուզեց ավելի ընդարձակել իր երկիրը դեպի արևմուտք. նա արշավեց Փոքր Ասիա, գրավեց Եվդոկիա քաղաքը, այրեց, բնակիչներին կոտորեց և իր արշավանքն առաջ տանելով մինչև Կիլիկիայի սահմանները հասավ:

Փոքր Ասիան այդ ժամանակ ամբողջապես օսմանցիների ձեռքումն էր: Պոլիսը գրավելուց հետո, սուլթան Մուհամմեդն իր ուշադրությունը դարձրել էր Բալկանների և Փոքր Ասիայի մնացյալ մասերի վրա. 1460 թվականին հարձակվեց Տրապիզոնի հունական կայսրության վրա, հաղթեց և այդ պետության վերջ տալով, երկիրն առավ իր իշխանության տակ: Հունգարացիք չթողեցին իրեն հեշտությամբ նվաճելու սերբիական գավառները. այսպես նաև ալբանացիք, որոնց քաջ իշխանը՝ Ալեքսանդր բեկ մինչև իր մահը կռվեց սուլթանի դեմ և իր երկիրը թշնամուն չհանձնեց: Այնպես որ վերջապես սուլթանը ձանձրացած, այդ երկու երկրները թողեց ազատ, իսկ ինքը նվաճեց բոլոր հունական կղզիները, Ղրիմը, Դալմացիան և նույնիսկ Իտալիայի Օրանտո քաղաքը գրավելով,

մոտեցավ Վենետիկին: Իր նպատակն էր տիրել Հռոմին և «Ս. Պետրոսի խորանի վրա ձիուն հաճար կերցնել»: Այս նպատակով նա մինչև անգամ արշավանք կատարեց Հարավային Իտալիայի ծովափը, բայց անհաջող:

Ուզուն-Հասանն իր հանդուգն արշավանքով գրգռեց սուլթանի կատաղությունը իր դեմ. Մուհամմեդ անձամբ դուրս եկավ կռվելու նրա դեմ: Դերջանի մոտ խորտակեց պարսիկների բանակը, փախցրեց Ուզուն-Հասանին և Արևմտյան Հայաստանի մի մասն առավ իր իշխանության տակ (1473 թ.):

Այսպես սկսվեց Հայաստանի տիրապետության պատերազմը պարսիկների և օսմանցիների միջև, որ տևեց մինչև 18-րդ դար զանազան ընդհատումներով և Հայաստանն ավերակ դարձրց ու հայ ժողովրդին հայրենիքից դուրս վտարեց: Եվ Նոր դարը, որ Եվրոպայի համար եղավ գյուտերի, առաջադիմության, ազգերի կազմակերպության մի գեղեցիկ շրջան, հայոց համար ընդ-հակառակը դարձավ քայքայման ու խավարի մի շրջան: Շատ ուշ միայն, և այն էլ գաղթականությունների մեջ, հայն էլ պիտի սկսեր վայելել եվրոպական լուսավորությունը:

169. ՂՐԻՄԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾԸ

Ղրիմը ծովային վաճառականության հարմարությամբ շատ վաղուց դեպի իրեն էր քաշել հռոմայեցիների և հույների ուշադրությունը: Հույն վաճառականները լցվել էին նրա ծովափնյա քաղաքները: 10-րդ դարից սկսած հայերն էլ դիմում էին այստեղ և առևտրական գործերով պարապում: Թաթարների արշավանքի ժամանակ թերակղզին ամբողջապես անցավ նրանց ձեռքը: 1266 թվականին ջենովացիք մտան Ղրիմ և հիմնեցին մի առանձին դքսություն, որի մայրաքաղաքը եղավ Կաֆան:

Երբ թաթարները տիրեցին Հայաստանին, հայերի մի ստվար խումբ, 40 000 հոգի, իբրև գերի քշեցին Վոլգայի ափերը, ուր նրանք հաստատվելով սկսեցին պարապել զանազան գործերով: Սկզբում թաթարները սիրով էին հայերի հետ, բայց հետո սկսեցին նեղել: Հայերը չդիմանալով, որոշեցին գաղթել: Նրանք բանակցության մտան Ղրիմի ջենովացիների հետ և համաձայնության գալուց հետո, զենք վերցրին և մեծ բազմությամբ եկան հաստատվեցին Ղրիմում (1330 թ.): Նորանոր գաղթականություններ Հայաստանից

ու Թաթարիստանից հայոց թիվը հասցրին 300 000-ի: Սրանք լցվեցին ու շենացրին թերակղզու ամեն կողմերը, ծաղկեցրին վաճառականությունը Ասիայի և Եվրոպայի միջև, կառուցեցին վանքեր, եկեղեցիներ, գյուղեր ու քաղաքներ: Կաֆա քաղաքը 100 000 հայ բնակիչ ունեցավ և առանձին հայկական բանակ՝ բերդը պաշտպանելու համար: Հայոց այս անսովոր բազմության պատճառով, իտալացիք Կաֆան կոչում էին Armenia Maritima (Ծովային Հայաստան):

Բալկաններին և հունական կղզիներին տիրելուց հետո, սուլթան Մուհամմեդ Բ-ը ուզեց գրավել նաև Ղրիմը. Կեդիք Ահմեդ փաշան 300 նավով և 40 000 զորքով արշավեց թերակղզու վրա. իրեն միացան նաև Ղրիմի թաթարները թիկունքի կողմից. թերակղզու շատ քաղաքները գրավվեցին, անկարելի եղավ միայն գրավել Կաֆան, որտեղ ջենովացիք և հայերը միացած, շարունակ հետ էին մղում հարձակումները: Վերջապես ջենովացիք նեղը մնացած, թողեցին բերդը և փախան. հայերը մենակ մնացին և շարունակեցին կռիվը: Փաշան լսելով այդ, բանակցության մտավ հայերի հետ և խոստացավ ամենևին չվնասել նրանց, եթե համաձայնվեին հանձնել քաղաքը: Հայերը, սովից նեղված, վերջապես համաձայնվեցին և Կաֆան գրավվեց (1475 թ.):

Փաշան դրժեց իր խոստումը. քանիցս նա հայ իշխաններին համոզիչ խոսքերով մահմեդական կրոնին հրավիրելուց հետո, տեսնելով որ անօգուտ է, գաղտնի դավաճանություն սարքեց նրանց դեմ: Պատրաստեց մի հանդիսավոր խնջույք, ուր հրավիրեց բոլոր հայ իշխաններին: Խնջույքի միջոցին հանկարծ զորքը հարձակվեց նրանց վրա և բոլորին էլ կոտորեց: Այնուհետև օսմանյան զորքը մտավ քաղաք, հարձակվեց ժողովրդի վրա, փոքրիկներին խլեց մահմեդական դարձնելու, իսկ մեծերին անխնա կոտորեց, այնպես որ արյունը գետի նման հոսում էր Կաֆայում: Այնուհետև ավարի տվեցին հայկական հարստությունները, եկեղեցիները կողոպտեցին ու քանդեցին: Նույն խժդժությունները գործեցին նաև Ղրիմի մյուս քաղաքներում: Մնացած հայերը հազիվ կարողացան փախչել և ապաստանել Լեհաստան, Ռումինիա, Տրանսիլվանիա և Հունգարիա:

Ծաղկյալ Ղրիմն օսմանցիների ձեռքով ավերակ դարձավ:

170. ՄԱԹԻԱՍ ԿՈՐՎԻՆ. ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՄԵԾ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանցիների դեմ մղած պատերազմի մեջ հունգարացիք մի քանի անգամ ցույց էին տվել իրենց քաջությունը. նրանք բյուզանդական կայսրության անկումից հետո Եվրոպայի պատնեշը դարձան մահմեդականության առաջ և իրենց արյունով փրկեցին Արևմուտքը օսմանցիների լծից: Այսպիսի զորության հասնելուց հետո, հունգարացիք այլևս չուզեցին տանել գերման-ավստրիական լուծը և ապստամբեցին: Ապստամբության գլուխն անցավ Մաթիաս Կորվինը, օսմանցիներին հաղթողը, որ 1458 թվականին Հունգարիայի թագավոր ընտրվեց: Նա չբավականացավ իր երկրով և միաժամանակ արշավանքներ սկսելով օսմանցիների, գերմանացիների և չեխերի վրա, խլեց նրանցից զանազան գավառներ և միացրեց Հունգարիայի թագավորության: Հաղթելով օսմանցիներին, խլեց Բոսնիան, գերմանացիների կայսեր ձեռքից խլեց Ավստրիան, Շթրիան և Կարինտիան. դրանից հետո մայրաքաղաքը Պեշտից փոխադրեց Վիեննա:

Միևնույն ժամանակ չեխերն էլ թոթափել էին գերմանական լուծը. Պրագայում թագավոր էր ընտրվել Պոդեբրադը, որ Կորվինի նման նշանավոր զորավար էր: Պոդեբրադը, վերջ տալու համար Հյուսյան հարցին, թագն ընդունեց կաթոլիկ կղերի ձեռքից. բայց պապերը չբավականացան հաշտարար քաղաքականությամբ և պահանջեցին, որ Չեխիան լիովին կաթոլիկ դառնա: Եվ որովհետև այդ անկարելի էր, ուստի պապը նրան հերետիկոս հայտարարեց և գրգռեց հարևան ազգերին Չեխիայի վրա արշավելու: Ամեն կողմից հարձակվեցին: Առիթը չուզեց փախցնել նույնիսկ Մաթիաս Կորվինը և Չեխիայի վրա արշավելով գրավեց երկրի զանազան գավառները և մինչև իսկ մոտ էր Պրագան էլ առնելու: Բայց Պոդեբրադն սթափվեց. կազմակերպեց չեխական ուժերը և հունգարացիներին դուրս քշեց: Կորվինն այսպիսով չհասավ իր բուն նպատակին, բայց իր ձեռքում պահեց Մորավիան և Սիլեզիան:

Հունգարիայի հաջողությունը երկար չտևեց. Կորվինի մահից (1490 թ.) անմիջապես հետո գահակալության կռիվ ծագեց Հունգարիայում, որից օգտվելով Գերմանիայի Մաքսիմիլիան կայսրը, կորցրած հողերը նորից հետ գրավեց:

171. ԵՐԿՈՒ ՎԱՐԴԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Հարյուրամյա պատերազմից հետո Անգլիայում սկսվեց մի ներքին ահեղ պատերազմ, որ տևեց 30 տարի և մի միլիոնից ավելի անգլիացիների կորստի պատճառ դարձավ:

Նույն ժամանակ Անգլիայի թագավորն էր Հանրի Զ-ը, Լանկաստրի տոհմից, որ մի խեղճ մարդ էր: Անգլիացիք այս թագավորի վրա գցեցին Ֆրանսիայում իրենց պարտության և կորցրած հողերի պատասխանատվությունը, մանավանդ, որ նրա կինը՝ Մարգարիտը ֆրանսուհի էր և ֆրանսիական շահերի պաշտպան էր համարվում: Դժգոհների գլուխն անցավ Յորքի դուքսը, որ պահանջում էր Անգլիայի գահը, քանի որ Լանկաստրի տոհմը ապօրինի կերպով խլել էր այն իր ձեռքից: Իրեն միացան բազմաթիվ մարդիկ, մանավանդ զինվորականների և ռամիկների այն ստվար խումբը, որ Հարյուրամյա պատերազմի մեջ կռվով և կողոպուտով զբաղված, այժմ էլ մի այդպիսի բանի հետևից էր ման գալիս: Յորքի կուսակցությունն իր զինանշանի մեջ դրել էր մի սպիտակ վարդ, մինչդեռ Լանկաստրի նշանը կարմիր վարդ էր. այս պատճառով էլ այս պատերազմը կոչվում է Երկու վարդերի պատերազմ:

Յորքի դուքսը հարձակվեց թագավորի վրա, հաղթեց, գերեց նրան և Պառլամենտի վճռով տեր դարձավ գահին: Թագուհին դուրս եկավ իր ամուսնու իրավունքը պաշտպանելու. նա կոչ կարդաց Վալլեսի և Սկովդիայի բնիկներին, կազմեց նրանցից մի ստվար բանակ, սպանեց Յորքի դուքսին և նրա կուսակիցներին չարաչար կոտորեց: Այն ժամանակ ասպարեզ իջավ դուքսի որդին Էդուարդ Դ-ը, որ նոր բանակ կազմած, հաղթեց թագուհուն, նրա կուսակիցներից 30 000 հոգու սպանեց, Լոնդոնն առավ և Պառլամենտի ու ժողովրդի համաձայնությամբ իրեն թագավոր հայտարարեց: Թագուհին դիմեց Ֆրանսիա, ֆրանսիացի կամավորներից և Սկովտիայի բնիկներից բանակ կազմելով Անգլիա մտավ, բայց չարաչար հաղթվելով ետ փախավ: Նա նորից 60 000 մարդ հավաքեց իր շուրջը, Էդուարդին փախցրեց և Հանրի Զ-ին բանտից արձակելով նորից գահ բազմեցրեց: Շուտով հասավ Էդուարդը ֆրանսիական բանակով, թագուհուն հաղթեց և վերջնականապես տեր դարձավ գահին:

Էդուարդը ինչպես և իր հաջորդները եղան անգութ և

գազանաբարո մարդիկ և շարունակ զբաղվեցին թագավորական ընտանիքի ժառանգներին կոտորելով. այնպես որ վերջապես մնաց իբր ժառանգ Լանկաստրի տոհմից Հանրի Է-ը, որ ամուսնանալով Յորքի միակ ժառանգորդուհու հետ, երկու վարդերը միացրեց և այս ահավոր պատերազմին վերջ տվեց (1485 թ.):

Պատերազմի միակ արդյունքն այն եղավ, որ Անգլիայի ազնվականությունը ոչնչացավ, 80 իշխան և հազարավոր բարոններ կոտորվեցին, ժողովուրդը փչացավ, և այսպիսով թագավորական իշխանությունը սանձող ուժը վերացավ: Դրանից թագավորները ուժ ստացան, խլեցին ազնվականների հողերը, ոտնակոխ արին Պառլամենտի իրավունքները և վերականգնեցին հին բռնակալ կարգերը, որի համար Միջին դարն այնքան մարտնչել էր: Ուժասպառ ժողովուրդը մոռացավ այդ բոլորը և աչքը դարձնելով դեպի արվեստներն ու վաճառականությունը, իր նյութականն ապահովելու հետամուտ եղավ:

172. ԻՍՊԱՆԻԱՅԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

11-րդ դարից սկսած Իսպանիան բաժանվել էր չորս թագավորության. Կաստիլլայի, Արագոնի և Նավարրայի թագավորությունները, որ պատկանում էին քրիստոնյաներին և Գրենադայի թագավորությունը, որ պատկանում էր արաբներին:15-րդ դարի կեսին Կաստիլլայի թագավորության ժառանգուհի Իզաբելլան ամուսնանալով Արագոնի թագավորի որդի Ֆերդինանդի հետ, այս երկու հզորագույն թագավորությունները մեկի վերածվեցին (1476 թ.): Արագոնի թագավորությունն այսպիսով զորանալուց հետո, մտածեց նվաճել Իսպանիայի մնացյալ մասերը: Գրենադայի թագավորության մեջ միևնույն ժամանակ գահակալության կռիվ էր ծագել. երեք արաբ իշխաններ կռվում էին իրար հետ. Ֆերդինանդը օգուտ քաղեց սրանից և ամբողջ գավառին տիրելուց հետո, մեծ բանակով մայրաքաղաքը պաշարեց: Քաղաքը երկար դիմացավ, մինչև անգամ օսմանցիք օգնության հասան, բայց իզուր. իսպանացիք վերջապես սովով ստիպեցին արաբներին անձնատուր լինել: Այսպես վերջացավ արաբների իշխանությունը Իսպանիայի վրա (1492 թ.):

Ֆերդինանդը նախապես ազատ թողեց մահմեդականներին դավանելու իրենց կրոնը, բայց հետո պատճառ բռնելով նրանց մի

ապստամբական շարժումը, հրամայեց կա՛մ քրիստոնյա դառնալ և կա՛մ երկրից հեռանալ: Մահմեդականները մեծ մասամբ նախընտրեցին քրիստոնյա դառնալ քան երկրից հեռանալ. բայց ծածկաբար շարունակում էին պահել իրենց հին հավատը: Դրա վրա թագավորը հնարեց հավատաքննության ատյանը (ինկվիզիցիա), որի նպատակն էր այսպիսի կեղծարարներին բռնել ու պատժել: Հետո այս ատյանը դարձավ մի սոսկալի միջոց՝ անխտիր պատժելու կաթոլիկության դեմ ազատ մտքեր արտահայտողներին:

Ֆերդինանդն այնուհետև հարձակվեց Նավարրայի վրա և խորամանկությամբ գրավեց. այսպիսով Իսպանիայի միությունը լրացավ:

Բայց Ֆերդինանդը Իսպանիայով էլ չբավականացավ. նա այնուհետև հարձակվեց Նապոլիի թագավորության վրա, որ ամբողջապես նվաճեց: Իր օրով հայտնագործվեց Ամերիկան, որ ամբողջապես միացավ Իսպանիայի պետության:

Ֆերդինանդի քաղաքական նշանավոր գործն եղավ իր աղջկանն ամուսնացնել Գերմանիայի կայսեր որդու հետ, որից և ունեցավ Կարլոս անուն մի որդի, որ և ընտրվելով Գերմանիայի գահակալ, Նոր դարի մեծագույն կայսրը պիտի դառնար:

173. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՕՍՄԱՆՑԻՆԵՐԻՑ

Ուզուն-Հասանի մահից հետո պարսկական պետության մեջ գահակալական կռիվներ սկսեցին. օսմանցիք օգուտ քաղելով դրանից, արշավեցին Հայաստան և խլեցին Բաբերդն ու Երզնկան: Վերջապես Իսմայել Սեֆյան իշխանը թեկնածուներին հաղթեց և պարսկական գահը բարձրացավ. Բաղդադից մինչև Խորասան նա ամբողջ պարսկական երկրին տեր դարձավ. այսպես հիմնեց Սեֆյան հարստությունը, որի մայրաքաղաքն էր Թավրիզը (1500 թ.): Նոր հարստությունը պետական կրոն դարձրեց իսլամական շիա դավանանքը, հակառակ օսմանցիներին, որոնք սուննի էին: Քաղաքական թշնամությունը երկու ազգերի միջև այսպիսով ավելի սաստկացավ կրոնական մոլեռանդությամբ:

Շահ Իսմայիլն իր գահը ամրացնելուց հետո արշավեց

օսմանցիների վրա՝ Հայաստանից գրված քաղաքները հետ խլելու համար: Իր հետ դաշնակցել էր Եգիպտոսի սուլթանը, որ օսմանցիների հետ թշնամության պատճառներ ուներ: Օսմանցիների Սելիմ սուլթանը ահարկու բանակով դուրս եկավ նախ պարսիկների դեմ. նա սրբազան պատերազմ (ջիհադ) հայտարարեց շիաների դեմ և Հայաստանում 40 000 շիա մահմեդական կոտորեց: Պարսկական բանակը հետ քաշվեց. սուլթանը հասավ Խոյի մոտ և Չալդրանի դաշտում բանակ դրեց. Շահ Իսմայիլն անձամբ դուրս եկավ ճակատելու նրա դեմ. ահավոր ճակատամարտում 100 000 մարդ կորավ. շահը հաղթվեց, վիրավորվեց ու փախավ: Սելիմը մտավ Թավրիզ և ամբողջ Արևմտյան ու Հարավային Հայաստանը, Երզնկայից մինչև Ուրմիայի ծովը իր իշխանության տակ առավ (1514 թ.): Քուրդերը, որ այն ժամանակ պարսիկների իշխանության տակ էին, շահի պարտությունը տեսնելով, կամովին հպատակվեցին օսմանցիներին և Դիարբեքիրի, Մերդինի և Մուսուլի գավառները օսմանյան տերության ձեռքն անցան (1515 թ.): Հայաստանի նվաճումից հետո Սելիմն իր հաղթական արշավանքն ուղղեց դեպի հարավ՝ Եգիպտոսի վրա. մտավ Ասորիք, գրավեց Հալեպը, Դամասկոսն ու Լիբանանը. Պաղեստինը նվաճելուց հետո, Սուեզի պարանոցով անցավ Եգիպտոս, գրավեց Կահիրե քաղաքը և մամլուկների պետությունը կործանելով, Եգիպտոսն էլ իր պետության միացրեց: Եգիպտոսի անկման վրա Արաբիայի կիսանկախ ցեղերը եկան ինքնակամ հպատակություն հայտնելու սուլթանին և նրան նվիրեցին Մուհամմեդի դրոշը և մահմեդական սուրբ քաղաքների բանալիները: Այսպիսով Արաբիան էլ նվաճվեց և օսմանցիների սուլթանը ստացավ Խալիֆայի՝ Մուհամմեդի հաջորդության տիտղոսը:

174. ԼՅՈՒԹԵՐ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

Գերմանիան Միջին դարի վերջում շատ խառնակ վիճակ էր ներկայացնում. կայսրների ձգտումը՝ տիրելու օտար երկրների և ստեղծելու խոշոր, միապետական պետություն, ո՛չ միայն ապարդյուն էր անցել, այլև երկրում առաջ էր բերել երկպառակություն. ավատական կարգերը ո՛չ միայն չէին վերացել, այլ ընդհակառակն ավելի էին զարգացել և ամբողջ երկիրը

բաժանվել էր անթիվ մանր-մունր մասերի: Իշխողներն աշխատում էին որքան կարելի է շատ դրամ խլել ժողովրդից, անարդարությունը թագավորում էր ամեն տեղ. հարստահարված ժողովուրդը երբեմն-երբեմն փորձեր էր անում ապստամբելու տիրող կարգերի դեմ, բայց այդ փորձերը խեղդվում էին արյան մեջ: Ավելի վատ էր եկեղեցական իշխանությունը. կաթոլիկ կրոնավորները, մեծ մասամբ Իտալիայից եկած տգետ ու անառակ մարդիկ, հաճույք և հարստություն էին միայն փնտրում: Վիկլիֆի փորձերը Անգլիայում, Յան Հուսը Չեխիայում զուր էին անցել: Մի ժամանակ պապական եկեղեցու սրտացավ հայրերը Բազելում ժողով էին գումարել եկեղեցին բարեկարգելու համար, բայց պապերի բռնակալ թաթը կարողացել էր այդ էլ խեղդել (1431-1449 թթ.): Ֆլորենցիայում Սավոնարոլա կաթոլիկ եկեղեցականը սկսել էր քարոզել բարոյական մաքրություն, դեմ էր գնացել պապերի անառակության, հաջողել էր նույնիսկ Իտալիայի ժողովրդին բարոյական դարձի բերել, բայց պապը նրան կախել էր տվել (1498 թ.):

Բարոյական անկման և պապական բռնակալության այս վիճակը շատ երկար տևեց. հումանիզմի ալիքները, որ Իտալիայից տարածվեցին ամեն տեղ, հասան նաև Գերմանիա և վարակեցին նրան. համալսարանները, նույնիսկ Գերմանիայի կայսրը ընդունեցին այս նոր ուղղությունը: Նշանավոր մտածողներ այս ժամանակ դուրս եկան կռվելու պապական եկեղեցու անբարոյականության դեմ: Սրանց մեջ հայտնի եղավ Էրազմը, որ սկսեց ծաղրել Կաթոլիկ եկեղեցու հակաքրիստոնեական ոգին, փողապաշտությունը, կաշառակերությունը, անառակ վարքը, Ս. Գրքին տրված կեղծ բացատրությունները և այլն: Բայց Էրազմը դրական արդյունք առաջ չբերեց: Եկեղեցական բարեկարգությունը վերապահվել էր Մարտին Լյութերին:

Հռոմի պապն այս միջոցին Ս. Պետրոսի տաճարը նորոգելու համար փողի պետք ունենալով, սկսել էր մեղքերի քավության թղթեր վաճառել. ով որ գներ այդ թղթերից, ազատվում էր քավարանի տանջանքներից: Դրամանական մի բանկ գնեց այդ թղթերը զեղչով և իր գործակալների միջոցով սկսեց վաճառել Գերմանիայի զանազան քաղաքներում: Լյութերը դուրս եկավ կռվելու այս խայտառակ աստվածավաճառության դեմ (1517 թ.). նա հրատարակեց մի քանի գրքեր, բաց արեց հրապարակային դասախոսություններ՝ հարվածելու կաթոլիկ կղերի անկարգու-

թյունը և պահանջելու լայն եկեղեցական բարեկարգություն, եկեղեցական հարստությունների աշխարհականացումը, պապական գերիշխանության ջնջումը:

Գերմանիայի ժողովուրդը պատրաստ էր այս քարոզությունը լսելու. իշխաններն էլ կողմնակից էին, որովհետև դրանով տեր էին դառնում եկեղեցիների դիզած հարստության և ազատվում էին պապերի հզոր իշխանության հպատակությունից. նույնիսկ շատ կրոնավորներ համամիտ էին Լյութերին, որովհետև նոր կարգերով իրենք ստորադրյալ վիճակից բարձրանալով տեր էին դառնում եկեղեցական համայնքների: Այս պատճառներով ահա Լյութերի վարդապետությունը ահագին հետևորդներ ունեցավ:

Այս միջոցին Գերմանիայի կայսրը՝ Կարոլոս Ե-ը պատերազմի դուրս եկած լինելով Ֆրանսիայի դեմ, պետք ուներ մի զորավոր պաշտպանի. այդ պաշտպանը կարող էր լինել պապը, ուստի կայսրը բռնեց պապի կողմը և Վորմսի ժողովում դատապարտեց Լյութերին (1521 թ.): Լյութերը քաշվեց Սաքսոնիա և այնտեղ պարապում էր մի կողմից Ս. Գիրքը թարգմանելով գերմաներենի, իսկ մյուս կողմից հրատարակելով բազմաթիվ աշխատություններ՝ տարածելու համար իր վարդապետությունը: Այս պատրաստություններից հետո նա գնաց Վիտտենբերգ և կազմեց առաջին լութերական եկեղեցական համայնքը. դա դարձավ մի կենտրոն, որից և տարածվեց ամբողջ Գերմանիա (1522 թ.):

Լյութերի վարդապետությունը միայն համակիրներ ու հակակիրներ չունեցավ: Եղան այնպիսիներ, որ նրա առաջարկած բարեկարգությունը դեռ քիչ գտան և ավելի առաջ տանելով գործը՝ հիմնեցին նորանոր դավանանքներ: Այսպես առաջ եկան **մկրտչականները** (baptistes), որոնք պահանջում էին մկրտությունը կատարել չափահասության ժամանակ, որովհետև մանուկն անընդունակ է ըմբռնելու կրոնը. **էքստազիստները**, որոնք Ս. Գրքերը անբավարար համարելով, սպասում էին նոր աստվածային ներշնչումների, որով յուրաքանչյուրը դառնում էր մարգարե:

Բայց Լյութերի քարոզչությունը կրոնականից հետո, անդրադարձավ նաև հասարակական կազմակերպության. շատերը մտածում էին, որ արդեն հասել է ժամանակը փոխելու Գերմանիայի պետական եկեղեցական խառնակ դրությունը. ասպետներն ուզում էին տապալել ավագներին, որոնց ծառա էին դարձել իրենք. գյուղացիները պահանջում էին հարկերի թեթևացում. ճորտերի

ազատություն. ավելի ծայրահեղները պահանջում էին կոտորել հարուստներին և հողերն ու ստացվածքները համայնացնել: Ամեն կողմ սկսվեցին ապստամբությունները. ջարդում, փշրում, կոտորում, այրում ու քանդում էին, կաթոլիկական վանքերն ու եկեղեցական հարստությունները կողոպտում, հողերը խլում, տեղ-տեղ բազմակնությունն ու անառակ կարգեր հաստատում: Բարձր դասակարգերը տեսան, որ վտանգը լուրջ է, ուստի կաթոլիկներն ու լութերականները միացան, ջարդեցին գյուղացիներին ու ճորտերին և կարգը վերահաստատեցին:

Լյութերի ազդեցությունը Գերմանիայից անցավ շրջակա երկրների վրա. Ցյուրիխում Ցվինգլ անվամբ մի պապական քահանա, նույնպես սկսեց պայքարել թողության թղթերի վաճառման, վանականության և ծեսերի դեմ. նրա վարդապետությունն էլ շուտով տարածվեց Զվիցերիա և Հարավային Գերմանիա և կազմեց ավետարանական եկեղեցին: Ժնև քաղաքում դուրս եկավ Կալվին անվամբ ֆրանսիացի մի քարոզիչ, որ սկսեց Լյութերից ավելի ազատական մի դավանանք քարոզել և հիմնեց բարենորոգյալ (ռեֆորմատ) եկեղեցին: Անգլիայում Հանրի Ը թագավորը քաղաքական նկատումներով բաժանվել ցանկանալով իր կնոջից և ապահարզանի մերժում ստանալով պապից, հեռացավ կաթոլիկ եկեղեցուց և պառլամենտի հետ միացած, հիմնեց Անգլիական եկեղեցին (1534 թ.), որ բռնում էր լութերական և պապական եկեղեցիների մեջտեղը: Շվեդիայում և Դանիայում թագավորներն իրենց իշխանությունն ավելի զորացնելու և երկրի հարստությունը պապի ձեռքից հետ առնելու համար ընդունեցին լութերական դավանանքը (1527 թ.), որ և սուրով ու կոտորածով տարածեցին իրենց ժողովրդի մեջ: Եվ այսպես քառորդ դար չէր անցել, Լյութերի վարդապետությունը տարածվեց Միջին և Հյուսիսային Եվրոպայում և շատ երկրներ բաժանվեցին կաթոլիկ եկեղեցուց:

175. ՎԻԵՆՆԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Սուլթան Սուլեյմանի ժամանակ օսմանյան պետությունը հասավ իր մեծության գագաթնակետին. նա ուզեց Գերմանիայի ձեռքից խլել Հունգարիան և գնաց պաշարեց Բելգրադը, որ նրա բանալին էր: Հունգարացիք քաջությամբ կռվեցին, բայց չկարողացան պահել քաղաքը, որ վերջապես թշնամու ձեռքն ընկավ (1521

թ.): Օսմանցիք այս քաղաքի առումից հետո կարող էին ուղղակի գնալ Վիեննայի վրա, բայց ուզեցին նախ իրենց հաշիվը վերջացնել Հռոդոսի հետ, որի ասպետներն այնքան ժամանակ անընկճելի էին մնացել նախորդ սուլթանների արշավանքներից:

Սուլեյմանը 200 000 զորքով գնաց հարվածելու Հռոդոսի պարիսպները. ասպետները Եվրոպայի քրիստոնեությունից օգնություն խնդրեցին, բայց իզուր. հազիվ մի քանի հազար կամավորներ պատասխանեցին իրենց կոչին: Ասպետները մի քանի տարի հերոսաբար կռվեցին, 80 000 թուրք ջարդեցին. և երբ արդեն կղզին ավերակների մի կույտի էր վերածված, թշնամու թվից ընկճված, թողեցին ու քաշվեցին Մալթա:

Այնուհետև Սուլթանը ազատ էր Հունգարիա արշավելու. Մոհաչի հռչակավոր պատերազմում նա խորտակեց հունգարացիների ուժը, ուր և նրանց թագավորը մահ գտավ (1527 թ.): Հունգարական անկախությունը վերջ գտավ: Ավստրիացիք ուզեցին իրենց պետության միացնել Հունգարիան, իսկ անկախության կողմնակիցները հավաքվեցին Զապոլի հունգար իշխանի շուրջը. նա միացավ օսմանցիների հետ, և սկսվեց մի երկար պատերազմ Ավստրիայի և օսմանցիների միջև՝ Հունգարիայի տիրապետության համար: Օսմանցիք ամբողջ երկիրը ոտնատակ տվեցին, Բուդան գրավեցին և Վիեննայի պատերի տակ բանակ դրեցին: Բայց քաղաքացիք այնպիսի քաջությամբ կռվեցին, որ սուլթանը պարիսպների առաջ 40 000 դիակ թողնելուց հետո վերջապես ստիպվեց նահանջել: Նա դարձավ Հունգարիա, Զապոլիին պսակեց թագավոր և իրեն վասալ հայտարարեց:

Մի քանի տարի հետո Սուլեյմանը մի քանի հարյուրհազարանոց բանակով եկավ, պաշարեց Վիեննան: Քաղաքացիների քաջությունն այս անգամ էլ փրկեց իրենց. սուլթանը լսելով, որ եվրոպական մի նավատորմ գնացել է Պոլիսը պաշարելու, իսկույն թողեց քաղաքը և շտապեց իր մայրաքաղաքը:

Զապոլիի մահից հետո նրա այրին գահակալական կռիվ հայտարարեց կայսեր դեմ և դրա համար խնդրեց օսմանցիների օգնությունը: Տաճիկները նորից հեղեղեցին Հունգարիան, գրավեցին Բուդան և Դանուբից դեպի արևելք գտնված ամբողջ երկիրն իրենց իշխանության տակ առան: Գերմանացիների կայսրը այս արշավանքից վախեցած, շտապեց սուլթանի մոտ և նրա հետ հաշտություն կնքեց (1547 թ.):

176. ՍՈՒԼԵՅՄԱՆԸ ՆՎԱՃՈՒՄ Է ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Այն միջոցին, երբ Սուլեյմանն զբաղվել էր Հռոդոսի պաշարմամբ, պարսիկների Թահմասպ շահը գրավել էր Վանա ծովի հյուսիսային քաղաքները. Սուլեյմանն ուղարկել էր մի բանակ և այդ քաղաքները հետ վերցրել: Հունգարական արշավանքներից հետո Սուլեյմանը նորից զենք առավ պարսիկների դեմ, մանավանդ որ պարսիկների թագավորի եղբայրը ապստամբելով շահի դեմ՝ անցել էր օսմանցիների կողմը: Սուլեյմանը նրա հետ միացած արշավեց Հայաստան, ուղղակի գնաց Թավրիզ, գրավեց և հետո հետ դառնալով եկավ Վան, որ նույնպես պաշարեց և գրավեց: Այդ միջոցին Թահմասպը Վանա ծովի եզերքներն էր ոտնակոխ անում. Սուլեյմանը հասավ նրա հետևից և մեծ կոտորածով հետ քշեց:

Այս հաղթություններից հետո Սուլեյմանն իր երկիրը քաշվեց. Թահմասպը դուրս եկավ իր կորցրած երկրները հետ խլելու և մինչև Կարին առաջացավ: Սուլթանն ստիպվեց նորից արշավել Հայաստան և այս անգամ Կարինի և Կարսի վրայով մտավ Արևելյան Հայաստան, ուր դեռ օսմանցիք ոտք չէին կոխել: Ասպատակեց Երևանի, Նախիջևանի և Սյունյաց գավառները և այնպիսի ավեր ու կործանում սփռեց, որ հինգ օրվա ճանապարհի չորս բոլորը ոչ արտ էր երևում և ոչ անկործան բնակություն: Այսպիսի մեծ հաղթանակից հետո, Սուլեյմանը դարձավ Փոքր Ասիա և այնտեղ հաշտություն կնքեց պարսիկների հետ. այս հաշտությամբ ամբողջ Հայաստանն անցավ օսմանցիների ձեռքը, իսկ Թավրիզը մնաց պարսիկներին (1555 թ.):

177. ԳԵՐՄԱՆՈ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Գերմանիայի կայսրը մեռնելով, նրան հաջորդ ընտրվեց Կարլոս Ե-ը (1519 թ.). սրա հայրը լինելով Հաբսբուրգի տնից, Կարլոս Ե-ը տեր դարձավ Ավստրիային, Կարինտիային և Տիրոլին, պապից ժառանգեց Նիդեռլանդիան և Բուրգունդիան, մայրը Իսպանիայի ժառանգը լինելով՝ ստացավ Իսպանիան, Նապոլին, Սիկիլիան, Սարդենիան և Ամերիկան, իսկ իբրև Գերմանիայի

կայսր՝ տեր եղավ Գերմանիայի և Հյուսիսային ու Միջին Իտալիայի: Այսպիսով Կարլոսը դարձավ Եվրոպայի և աշխարհի ամենամեծ ինքնակալը և նրա համար էին ասում ժամանակակիցները, թե արևը երբեք մայր չի մտնում նրա երկրների վրա: Այս լայնածավալ աշխարհների միության համար մի խանգարիչ միայն կար. դա Ֆրանսիան էր, որ Գերմանիայի և Իսպանիայի միջև մտած, երկուսն իրարից անջատում էր: Պետք էր վերացնել այս արգելքը: Մյուս կողմից, արդեն բավական ժամանակ էր, որ Ֆրանասիան օգուտ քաղելով Իտալիայի խռովություններից, ուզում էր ձեռք բերել այս երկիրը. նա տիրել էր Նապոլիի թագավորության, բայց իսպանացիք դուրս էին քշել նրան. գրավել էր Միլանը, բայց պապը հաջողել էր Իտալիայի, Իսպանիայի և Անգլիայի օգնությամբ դուրս քշել նաև այստեղից: Վերջին անգամ Ֆրանսիայի թագավորը՝ Ֆրանսուա Ա-ն նորից մտել էր Իտալիա, գրավել Միլանը և մինչև անգամ Գերմանիայի գահին իր թեկնածությունն էր դրել: Ընտրությունը չհաջողվեց և Գերմանիայի կայսր ընտրվեց Կարլոսը, որ իրեն նպատակ դրեց տիրել Ֆրանսիային, իսկ մյուս կողմից Ֆրանսուայի էլ նպատակն էր, ինչ գնով էլ որ լինի, արգելք դառնալ նրա այս նպատակին:

Պատերազմը մղվեց երկու կողմից փոփոխակի հաջողությամբ. վերջապես կայսրը այնպիսի մի հարված հասցրեց ֆրանսիացիներին, որ կարծես նրանք երկար ժամանակ չպիտի կարենային ուշքի գալ. հանկարծ ֆրանսիացի ավատական իշխաններից մեկն ապստամբեց և կայսերական զորքի գլուխն անցած, Իտալիայում ջարդեց ֆրանսիական զորքը և թագավորին էլ գերի բռնեց (1525 թ.): Ֆրանսուան ստիպվեց ամոթալի դաշինք կնքել և գերությունից ազատվելով անցնել Ֆրանսիա: Իտալացիք վախեցան Ֆրանսուայի պարտությունից, մտածելով, որ Իտալիան նորից կայսեր լծի տակ կընկնի. արդեն գերմանական զորքը սկսել էր կողոպտել Հռոմը. ուստի իտալացիք ծածուկ միացան Ֆրանսուային, որ աշխատում էր նորանոր դաշնակիցներ գտնել կայսեր դեմ: Նա դաշինք կապեց օսմանցիների հետ, որոնք Հունգարիան գրավելով, մինչև Վիեննա էին հասել. նա գրգռեց Աֆրիկայի ծովահեններին, որոնց գլխավորը՝ Խայրեդդին Բարբարոսան, օսմանցիների օգնությամբ տիրելով Ալժիրին և Թունիսին, այժմ էլ մի մեծ նավատորմիղ կազմած, ասպատակում էր Իսպանիայի և Իտալիայի ծովափերը և հազարավոր մարդկանց

գերի էր բռնում ու տանում Աֆրիկա. միևնույն ժամանակ Ֆրանսուան մտավ Իտալիա: Կայսրը անընդհատ վազում էր ամեն կողմ. մեկ օսմանցիների դեմ, մեկ Իտալիա, մեկ ծովահենների դեմ: Խայրեդդինի ասպատակություններն այնքան սաստկացան, որ կայսրը ստիպվեց առանձին բանակով նրա վրա գնալ. նա առավ Թունիսը, ազատեց 20 000 քրիստոնյա գերիներ Աֆրիկայից և վերադարձրեց Եվրոպա: Հետո Անգլիայի հետ դաշն կապեց ու մտավ Ֆրանսիա, գրավեց ու հասավ գրեթե մինչև Փարիզ և ֆրանսիացիք ստիպվեցին հաշտություն խնդրել:

Բայց Կարլոսն իր գործը իր ձեռքով փչացրեց. նա հակառակ գնալով լութերականներին, վերջապես ներքին պատերազմի դուռ բացավ. լութերականները բանակ կազմեցին և կայսեր հետ կռվի դուրս եկան. կայսրը հաղթեց, լութերականների բանակը ջարդեց. նրանց պաստորներին աքսորեց. այն ժամանաակ լութերականները ծածուկ դաշինք կապեցին ֆրանսիացիների հետ և երկու կողմից միաժամանակ հարձակման դիմեցին. կայսրը պարտվեց լութերականներից և քիչ մնաց գերի բռնվեր. սրա վրա նա զիջեց. Ավգսբուրգի դաշնադրությամբ լութերականներին տվեց կրոնական ազատություն (1555 թ.): Ֆրանսիային տվեց երեք գավառ, որից հետո իր պետությունը բաժանելով որդու և եղբոր միջև, հրաժարվեց գահից. Գերմանիան և Ավստրիան անցան եղբորը, Իտալիան, Իսպանիան, Նիդեռլանդիան և Ամերիկան անցան իր որդուն՝ Փիլիպոս Բ-ին (1556 թ.):

178. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Նոր Աշխարհի բացումը գյուտերի և աշխարհակալության մեծ ասպարեզ բացավ Իսպանիայի առաջ. ամեն տարի խումբ-խումբ հետախույզներ մեկնում էին Իսպանիայից՝ այս ընդարձակածավալ ցամաքամասում մի նոր երկիր գտնելու, մի նոր աշխարհ նվաճելու և մի նոր գաղութ հիմնելու համար: Այսպիսի հետախույզներից նշանավոր եղավ Մագելլանը, որ 1520 թվականին առաջին անգամ լինելով, կատարեց աշխարհի շրջանը և գտավ Պատագոնիան: Ֆերնանդ Կորտեզը արշավեց Մեքսիկայի վրա. այս երկիրն այն ժամանակ բնակված էր մի բազմամարդ ժողովրդով, որ ուներ փառավոր քաղաքակրթություն, սեփական ճարտարապետություն և առանձին գիր ու դպրություն: Նրանց

վրա թագավորում էր ացտեկների ցեղը, որի իշխանությունը Ատլանտյան օվկիանոսից մինչև Խաղաղականն էր տարածվում, իր ձեռքի տակ նվաճած ունենալով զանազան օտար ցեղեր: Մայրաքաղաքն էր Մեքսիկան, որ մի մեծ լճի մեջ առանձին կղզու վրա էր կառուցված: Կորտեզը օգուտ քաղելով նվաճված ցեղերի ատելությունից տիրողների դեմ, հեշտությամբ նվաճեց երկիրը: Բայց իսպանացիների գազանությունը և հարստահարությունը շուտով պատճառ դարձան, որ ժողովուրդն ապստամբեր նրա դեմ: Իսպանացիք հազիվ կարողացան փախչել Մեքսիկայից և հավաքելով բնիկներից 100 000 զորք, ընկան Մեքսիկայի վրա, թագավորին բռնեցին և գրեթե ամբողջ ցեղը բնաջինջ արին:

Սրա նման վախճան ունեցավ Պերուն, որ չնչին բանակով գրավեց Պիզարրո Իսպանացին. այստեղ էլ կար սեփական քաղաքակրթություն, շեն քաղաքներ ու տաճարներ. իսպանական խստություններն այստեղ էլ ոտքի հանեցին ժողովրդին, որ մեծ արյունահեղությամբ խեղդվեց:

Պերուից հետո ընկավ Չիլին, որ նվաճեց Ամալգո Իսպանացին (1535 թ.): Այս բոլոր երկրները իսպանացիք նվաճեցին շատ չնչին ուժերով, իրենց հրազենների շնորհիվ, որ անծանոթ էին բնիկներին:

Ուր որ գնացին իսպանացիք, բնիկների հանդեպ ցույց տվեցին գազանաբարո վերաբերմունք: Նրանց հետ վարվում էին ինչպես անասունների, սպանում էին ու ջարդում անխնա: Այս գազանության պատճառները զանազան են. նախ գաղթողների մեջ ժողովրդի ամենագռեհիկ մասի մի ստվար թիվ կար, բանտից փախածներ, ավազակներ, մարդասպաններ և թիապարտներ: Երկրորդ՝ գաղթողները, մեղմ կլիմայի տակ մեծացած, անընդունակ էին Նոր Աշխարհի կիզիչ արտերում մշակություն անելու կամ հանքերում աշխատելու. ուստի այս կարգի աշխատանքները բնիկներին պարտադիր դարձրին: Հողերը բաժանեցին մասերի և բնիկներին իրենց տներից, ընտանիքից և հողից զրկելով, իրենց որոշած հեռավոր վայրերն էին ուղարկում աշխատելու: Այսպիսով ստեղծվեց տարապարհակ աշխատանքը, որ շուտով վերածվեց ստրկության: Վերջապես կար իբրև թե ավելի բարձր մի նպատակ: Պապը (Ալեքսանդր Զ) հրաման էր տվել նոր աշխարհի ժողովուրդը քրիստոնյա դարձնել և այս գործը հանձնել էր երկու պետության.

արևելյան մասը պորտուգալացիներին էր տվել, արևմտյան մասը իսպանացիներին (1493 թ.): Իսպանացիք կրոնական մոլեռանդությամբ տոգորված, ամեն գնով ուզում էին քրիստոնեությունը պարտադրել բնիկներին, և երբ նրանք ընդդիմություն ցույց տվեցին և կամ ծանր տարապարհակ աշխատանքներից ընկճված, փախչել փորձեցին, իսպանացիք ընկան նրանց վրա և ամենասաստիկ տանջանքներով տանջում էին: Հղի կանանց փորն էին պատռում, փոքրիկ երեխաներին ժայռերին զարնելով փշրում էին: Նստած իրենց գեղեցիկ ձիերի վրա, իրենց սուրերը մերկ, միմյանց հետ մրցման էին դուրս գալիս թե ո՛վ կարող է գլուխները մե՛կ հարվածով թռցնել: Բնիկների իշխաններին կապկպելով մաղմաղ կրակի վրա խորովում էին, որպեսզի նրանց տանջանքը ավելի երկար լիներ: Պահում էին հատուկ կատաղած շներ, որոնց սովորեցրել էին հարձակվել բնիկների վրա և նրանց պատառ պատառ անել: Սրա համար հատկապես շներին անոթի էին պահում, որպեսզի նրանց կատաղությունն ավելանար: Այս արվեստը նույնիսկ Քրիստափոր Կոլոմբոսն էր սովորեցրել իսպանացիներին: Պատմագիրները նշանավոր իշխանի նման հիշատակում և գովեստ են կարդում Բեզերիլլո անվամբ մի շան, որ այնպես նշանավոր էր իր կատաղությամբ և իր խելացիությամբ, որ գիտեր զանազանել բնիկներին իսպանացիներից և անխնա հոշոտում էր նրանց. սրա համար մի զինվորի ամբողջ թոշակը նշանակված էր նրան և ոսկի ու գերիներ էլ էր ստանում. մինչդեռ մյուս շները կես թոշակ էին ստանում:

Այսպիսի հալածանքներից բնիկներն սկսեցին հետզհետե նվազել:

Լաս Կազաս կրոնավորը բնիկների մեջ քրիստոնեություն էր քարոզում. ինքն է, որ պատմում է իսպանացիների գործած գազանությունները հեզաբարո բնիկների հանդեպ, որոնց անվանում է անմեղ գառներ, մինչդեռ իսպանացիներին՝ անոթի կատաղած վագրեր: Երբ բնիկները ոչնչացան, իսպանացիք Աֆրիկայից սկսեցին նեգրեր վարձել՝ դաշտային ծանր աշխատանքներ կատարելու համար: Այսպես սկսվեց ամերիկացի սևամորթների գերեվաճառությունը:

179. ՃԻԶՎԻՏՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Բողոքականների հարաճուն տարածումը տեսնելով, կաթոլիկ եկեղեցին ցնցվեց և մտածեց պայքարի նոր միջոցներ ստեղծել: Այս միջոցներն եղան կրոնական պրոպագանդան և ներքին բարեկարգությունը:

Պրոպագանդայի համար հիմնվեց ճիզվիտական (հիսուսյան) կրոնական կարգը. դրա հիմնադիր Իգնատիոս Լոյոլան իսպանացի մի ազնվական էր, քաջ և արկածախնդիր մարդ. ոգևորված պապականության գաղափարներով, նա կրոնավոր դարձավ և նպատակ դրեց կռվել հերետիկոսների դեմ ամեն միջոցներով և բարձրացնել պապի հեղինակությունը: Նոր կարգը հաստատվեց 1540 թվականին: Նրա սկզբունքն էր միջոցների մեջ խտրություն չդնել (նպատակն արդարացնում է միջոցը). նրա անդամները զինվորական կարգապահությամբ ուխտում էին կույր հպատակություն իրենց մեծավորի հրամանին. նրանք ազատ էին կրոնական ճգնություններից և պիտի գործեին աշխարհական կենցաղի մեջ՝ աշխատելով ամենքի մեջ մտցնել պապական ոգին: Սրան հասնելու համար իբր գլխավոր միջոց վերցրին կրթության գործը և խոստովանությունը: Նրանք շուտով ամեն տեղ բաց արին դպրոցներ, որոնք իրենց ընտիր կարգապահությամբ հրապուրեցին մեծ թվով աշակերտություն. շուտով կրթական գործն իրենց մենաշնորհը դարձավ: Այդ դպրոցների մեջ նրանք մատաղ սերունդի հոգին կաղապարում էին ճիշտ իրենց ուզած ոգով և պատրաստում մոլեռանդ պապադավաններ:

Խոստովանության միջոցով ճիզվիտները ձեռք էին բերում բոլոր գաղտնիքները և կրոնական պատիժների երկյուղով հավատացյալներին անել տալիս ինչ որ ցանկանում էին:

Միաբանությունը հիմնեց քարոզչական առաքելություններ Ամերիկայի, Հնդկաստանի, Չինաստանի մեջ և մի կողմից Եվրոպայի հերետիկոսներին հալածելով և մյուս կողմից պապականների թիվը օտար երկրներում ավելացնելով՝ մեծացնում էր պապի իշխանությունը:

Ճիզվիտների վարած այս մոլի քաղաքականությունը նրանց անունը հոմանիշ է դարձրել խարդախի և կեղծավորի:

Ավելի մաքուր կաթոլիկները մտածեցին ներքին բարեկար-

գությամբ դժգոհությունների առաջն առնել. դրա համար գումարվեց Տրիտինդյան ժողովը (Concile des Trentes), որ պապի կողմից հանված դժվարությունների և երկար ձգձգումների պատճառով (1545-1564 թթ.) թեև մեծ արդյունքի չհասավ, բայց գոնե կարողացավ ճշտիվ որոշել կաթոլիկ եկեղեցու դավանանքը վերջնականապես, ծիսակատարությունը վերածեց մեկ ձևի և հիմնարկեց հոգևոր դպրոցներ՝ կրոնավորների կրթության համար:

Բայց և այնպես այս բոլորը չհանգցրին կռիվները և երկար ժամանակ Եվրոպայի բոլոր երկրներն էլ ասպարեզ դարձան ներքին և արտաքին կրոնական պատերազմների և մեծ արյունահեղության, ինչպես պիտի տեսնենք քիչ հետո:

180. ԻՍՊԱՆԻԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴԵՐԸ ՓԻԼԻՊՈՍ Բ

ԺԶ դարի կեսից հետո Իսպանիան հասավ իր մեծության գերագույն աստիճանին. մի կողմից Նոր Աշխարհի զանազան երկրների նվաճումը և այդտեղից ձեռք բերված ոսկու ահագին պաշարը, մյուս կողմից Գերմանիայի բաժանումով Փիլիպոս Բ թագավորին բաժին ընկած երկրները (Նիդեռլանդիա, Իտալիա, Սիկիլիա և Սարդենիա) նրա հարստությունը և մեծությունը պատկառելի դարձրին:

Փիլիպոս Բ-ը հաստատամիտ և անողոք մի մարդ, համոզմունքով թունդ կաթոլիկ, տիրելով Իսպանիայի գահին այն ժամանակ, երբ բողոքականությունը սկսվել էր սպառնալի չափերով տարածվել Արևմտյան Եվրոպայի երկրներում, դուրս եկավ պաշտպանելու կաթոլիկության շահերը անողոք կերպով ամեն երկրի մեջ և կաթոլիկության միջոցով նա ուզում էր տիրապետել ամեն տեղ: Դրա համար նա իր անձնական նախաձեռնությամբ ազատ կերպով միջամտեց Հոլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Սկանդինավիայի կրոնական պատերազմներին, կռվի դուրս ելավ մահմեդական արաբների և օսմանցիների դեմ և այսպիսով համաշխարհային քաղաքականության մեջ գլխավոր դերն իր վրա վերցրեց:

Առաջին հաջող կռիվը նա մղեց մահմեդականության դեմ. Իսպանիայի արաբներին արգելեց խոսել իրենց լեզուն և հագնել

իրենց արևելյան տարազը. և երբ նրանք այս բռնության դեմ ապստամբեցին, հարձակվեց նրանց վրա, կոտորեց և ոչնչացրեց: Իսլամությունը Իսպանիայից վերջացավ:

Այս ժամանակ օսմանցիք մեծ զորությամբ հարձակվել էին Կիպրոսի վրա. կղզու սակավաթիվ կռվողները ասպետական քաջությամբ երկար ժամանակ դիմադրեցին թշնամուն, բայց նրանց գերազանց թվից ընկճված, անձնատուր եղան. տաճիկները հակառակ իրենց պայմանի, բոլորին էլ կոտորեցին: Կիպրոսի առումը մեծ զայրույթ հանեց Եվրոպայում. պապը նոր խաչակրություն քարոզեց, որի գլուխ կանգնեց Իսպանիան և միանալով Վենետիկի նավատորմի հետ, Լեպանտի առաջ խորտակեց 300 նավերից բաղկացած օսմանցիների նավատորմը և 30 000 տաճիկ կոտորեց (1571 թ.): 224 նավ ընկղմեց. գերությունից ազատեց 10 000 քրիստոնյա, Թունիսը գրավեց: Թեև քիչ ժամանակ հետո քրիստոնյաների մեջ խռովություն ծագելով, գրավված վայրերը վերադարձվեցին օսմանցիներին, բայց Լեպանտի պարտությունը եղավ օսմանցիների անկման նախանշանը, որից հետո պետությունը հետզհետե դեպի հետ է գնում:

Մեծ հաջողություն ունեցան նաև Պորտուգալիայի հարցում. Պորտուգալի թագավորը մեռնելով, գահի համար կռիվն սկսվեց բազմաթիվ թեկնածուների միջև, որոնցից մեկն էլ Փիլիպոսն էր. նա մի մեծ բանակով մտավ Պորտուգալիա. ժողովուրդը սիրով ընդունեց նրան և հրատարակեց Պորտուգալիայի թագավոր: Պորտուգալիայի տիրապետությամբ Իսպանիայի գահին միացան նաև նրանց բազմաթիվ գաղութները. Ասիայի և Ամերիկայի մեջ (1580 թ.):

Այսպիսի հաջողությամբ չանցան սակայն Հոլանդիայի, Անգլիայի և Ֆրանսիայի կռիվները, որոնց մեջ վերջ ի վերջո պարտվեց Իսպանիան, ինչպես կպատմենք այժմ:

181. ՀՈԼԱՆԴԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Նիդեռլանդիան 3 ցեղերից բաղկացած երկիր էր՝ հոլանդացի, ֆլաման և վալլոն: Սրանք իրենց աշխատասիրությամբ և ծովային վաճառականությամբ շատ էին հարստացել և զարգացել. Գանդը, Բրյուկկեն և Անդվերբենը նշանավոր քաղաքներ էին դարձել: Երկիրն այնչափ հարուստ էր, որ իսպանական պետության տալիս էր 4 անգամ ավելի եկամուտ, քան նույն ինքն Իսպանիան:

Նիդեռլանդիան թեև Իսպանիային հպատակ, բայց ուներ իր ներքին ինքնավարությունը: Լութերական և կալվինական քարոզիչներն այս երկիրն էլ մտան. Փիլիպոս Բ-ը, տեսնելով նրանց հաջողությունը, ուզեց խիստ միջոցներով կանգնեցնել այդ շարժումը, բայց ժողովուրդն ավելի գրգռվեց, ազնվականները մի կուսակցություն կազմեցին և ցանկանում էին կռվել իսպանական ոտնձգությունների և կաթոլիկության դեմ: Թագավորն ստիպվեց զորք ուղարկել և գլխավորներին պատժել մահով: Այն ժամանակ սկսվեց հայտնի ապստամբությունը, որովհետև հոլանդացիք չէին կարող բաց դաշտում կռվել իսպանացիների դեմ, ուստի գրավեցին մի շարք նավահանգիստներ և սկսեցին մղել ծովահենական պատերազմ: Իսպանացիք կատաղած ընկան երկրի զանազան կողմերը. ծաղկած ու հարուստ Նիդեռլանդիան արյամբ ներկվեց, բայց ժողովուրդը երբեք չընկճվեց և հուսահատ քաջությամբ շարունակում էր կռիվը. Փիլիպոսը վերջապես տեսնելով, որ պատերազմից ոչ մի օգուտ չկա, ընդհակառակը դրանով միայն պետության գանձարանն է դատարկվում, ուզեց դիմել մեղմ միջոցների: Բայց այլևս ուշ էր: Նիդեռլանդիայի զանազան գավառները միանալով դաշնակցություն կնքեցին և որոշեցին իսպանացիներին դուրս վտարել երկրից: Վերջապես իսպանացիք ձեռք վերցրեցին քաղաքականությունը. նրանք գրգռեցին Նիդեռլանդիայի հարավային բնակիչ բելգիացիներին, որոնք դեռ կաթոլիկ էին մնացել. սրանք ընդունեցին Իսպանիայի հպատակությունը. իսկ հոլանդացիք դրա փոխարեն Ուտրեխտի դաշինքով կազմեցին Միացյալ գավառների հանրապետությունը (1579 թ.): Երկար կռիվներից հետո Փիլիպոսը ձեռք քաշեց Նիդեռլանդիայից. Բելգիան հանձնեց Ավստրիայի իշխանության, իսկ Հոլանդիան՝ անգլիացիների ու ֆրանսիացիների օգնությամբ սկսեց անկախորեն կառավարվել (1609 թ.):

182. ՄԱՐԻԱ ՍՏՅՈՒԱՐՏ. ԱՆԳԼՈ-ԻՍՊԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Անգլիայում թեև Հանրի 8-ը հաստատել էր անգլիական դավանանքը, բայց ամբողջ երկիրը այդ դավանանքին չէր հպատակվել: Նախ դեռ շարունակվում էր տեղ-տեղ կաթոլիկությունը, մյուս կողմից սկսել էին տարածվել բողոքականության

նորանոր ձևերը՝ կալվինականություն և պուրիտանիզմ. հատկապես այս վերջիններն ուզում էին ջնջել ամեն մի կաթոլիկական մնացորդ: Կռիվն սկսվեց այս բոլորի միջև. Հանրի թագավորի հաջորդ Մարիա թագուհին, որ մոր կողմից իսպանուհի էր և հակառակ էր բողոքականության , նորոգեց կաթոլիկ եկեղեցին և սկսեց անխնա կոտորել բողոքականներին: Բայց նրա բոլոր ջանքերը անցան անօգուտ: Երբ նա մեռավ, այժմ էլ նրա հաջորդը՝ Եղիսաբեթը հարեց անգլիկան կրոնին և սկսեց հալածել մյուս բողոքական եկեղեցիներին և կաթոլիկներին: Շուտով մեջ խառնվեց նաև Սկովտիան և առաջացավ քաղաքական պատերազմ Անգլիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի միջև:

Սկովտիայում կրոնական բարեկարգությունն սկսվեց իրենց Մարիա Ստյուարտ թագուհու օրով. տապալեցին կաթոլիկությունը, պատկերներն ու արձանները ջարդեցին, վանքերի հողերը խլեցին և հիմնեցին սկովտական երիցական եկեղեցին: Մարիա Ստյուարտ թագուհին, որ ֆրանսիական ցեղից էր, դիմեց Ֆրանսիայի օգնության, զորք բերել տվեց և դուրս եկավ իր ժողովրդի հետ կռվելու: Սկովտացիք դիմեցին Անգլիայի թագուհուն, որ բռնեց ժողովրդի կողմը: Սկովտացիք ջարդեցին թագուհու զորքը և իրեն էլ փախցրին: Թագուհին ապաստանեց Եղիսաբեթի մոտ, իսկ նա բռնեց նրան և բանտարկեց:

Մարիա Ստյուարտը ավելի վտանգավոր եղավ բանտում. նա շարունակում էր այնտեղից դավաճանությունը, գրգռելով Իսպանիայի Փիլիպոս թագավորին՝ կաթոլիկության այս ոխերիմ պաշտպանին:Դավաճանությունը բացվեց և Մարիա Ստյուարտը գլխատվեց: Փիլիպոսը, որի սրտին մոտիկ էին միշտ կաթոլիկության շահերը, գրգռված մանավանդ այն բազմաթիվ անգլիացի ծովահեններից, որոնք ասպատակում էին իսպանական գաղութները, զորք հավաքեց և դուրս եկավ ջարդելու բողոքական Անգլիան և կաթոլիկ եկեղեցին վերականգնելու:

1598 թվականին Փիլիպոսը պատրաստեց «անպարտելի արմատա»-ն. դա իսպանական մեծ նավատորմիղ էր, բաղկացած 160 մեծ առագաստանավերից, 20 000 զորքով: Այս բանի վրա ամբողջ Անգլիան ոտքի կանգնեց. կրոնական անկախության գաղափարը միացավ երկրի անկախության գաղափարին. մինչև անգամ կաթոլիկները զենք առան. կազմվեց ժողովրդական նավատորմ և պատրաստվեցին դիմադրելու: Արմատան դեռ

Անգլիա չէր հասել, երբ ծագեց մի ահռելի փոթորիկ և ամբողջ նավատորմը ջրասույզ արեց՝ իր զինվորներով միասին: Փիլիպոսը մի երկրորդ նավատորմ ուղարկեց, որ նույնպես փոթորկից ջրասույզ եղավ: Անգլիացիք քաջալերված, ընկան իսպանական նավերի մնացորդների վրա, խորտակեցին և մինչև անգամ Իսպանիայի ծովեզերքները ասպատակեցին: Փիլիպոսը այլևս ուժ չուներ դիմադրելու:

Այսպես Անգլիան մի հարվածով ոչ միայն Հռոմի կրոնական գերիշխանությունը, այլևս Իսպանիայի քաղաքական հզորությունը խորտակեց:

183. ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ. ՆԱՆՏԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Կալվինականները Զվիցերիայի վրայով Ֆրանսիա անցան և քարոզել սկսեցին. հաջողությունը մեծ եղավ. այսպիսով ժողովուրդը բաժանվեց երկու մեծ կրոնական հատվածի՝ կաթոլիկներ և հուգենոտներ (ինչպես կոչվում էին նորադարձները): Կրոնական հակառակությունը շուտով լուրջ կերպարանք ստացավ: Կառավարությունը թեև կաթոլիկ, բայց իր թուլությամբ չկարողացավ նոր շարժման առաջն առնել. կաթոլիկները դիմեցին Իսպանիայի Փիլիպոս թագավորի օգնության, իսկ հուգենոտներն էլ Անգլիայի օգնությունը խնդրեցին: Կաթոլիկները դուրս եկան կոտորելու նորադարձներին, առանց խնայելու ո՛չ կանանց և ո՛չ երեխաներին. դրա վրա երկու կողմից սկսվեց մի սոսկալի կռիվ, որ բռնեց ամբողջ երկիրը և զանազան ընդհատումներով 36 տարի տևեց: Վերջին անգամ երկու կողմերը պայմանավորվեցին և միմյանց հետ հաշտության դաշինք կնքեցին:

Հաշտությունից անմիջապես հետո կաթոլիկները մի խոշոր դավադրություն կազմեցին և գիշերով հանկարծ հարձակվելով Փարիզի բնակչության վրա, բոլոր բողոքականներին կոտորեցին (1572 թ. 24 օգոստոս): Այս կոտորածն անցավ գավառները և մի քանի օր տևեց. 30 000 մարդ զոհ գնաց:

Կոտորածը, որ հայտնի է պատմության մեջ «Բարթողիմեոսյան գիշեր» անվամբ, շատ ուրախացրեց կաթոլիկներին. պապը հատուկ գոհաբանական մաղթանք կատարեց հերձվածողների բնաջնջման առթիվ:

Բայց բողոքականները ջնջված չէին. նրանք հավաքվեցին մի շրջանում և կազմեցին առանձին պետություն, որի մայրաքաղաքն եղավ Լա-Ռոշելը: Պատրաստվեցին նոր կռվի: Կաթոլիկներն էլ Փարիզում կազմեցին մի լիգա, որ դիմելով Իսպանիայի Փիլիպոս թագավորին, զորք ստացավ և դուրս եկավ ընկճելու նրանց: Հանրի Գ թագավորն ուզեց հաշտեցնել երկու կողմերին: Բայց ահա կաթոլիկներն իր դեմ ապստամբեցին և Փարիզը պատնեշներով ծածկվեց: Թագավորը դավով սպանեց լիգայի գլխավորին, բայց ինքն էլ վրեժխնդրության զոհ գնաց:

Թագավորի մահից հետո գահն անցավ Հանրի Դ-ին, որ բողոքականների կուսակցության գլխավորն էր. ուրիշ ժառանգ չկար: Արդեն շատերը հոգնել էին ազգամիջյան այս երկարատև պատերազմից, մանավանդ որ վատ էին գտնում այլևս օտարի միջամտությունը. ուստի անցան թագավորի կողմը: Նա ջարդեց լիգան և հետո, որպեսզի միանգամից վերջ տա խռովություններին, քաղաքագիտորեն ընդունեց կաթոլիկությունը, գրավեց Փարիզը և հռչակելով Նանտի հրովարտակը, երկու դավանանքները ազատ հայտարարեց (1598 թ.):

Փիլիպոսը մի վերջին անգամ ազդու փորձ արեց. երկու կողմից՝ Հոլանդիայից և Իսպանիայից Ֆրանսիայի վրա արշավեց. բայց երկու կողմից էլ պարտվելով, կրոնական պատերազմը վերջ գտավ:

184. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ

Սուլթան Սուլեյմանից հետո օսմանյան տերությունն սկսում է աստիճանաբար ընկնել. սուլթանները, որոնք մի ժամանակ բանակի առաջնորդներն էին, դառնում են զվարճասեր պալատականներ և պետության գործը հանձնում վեզիրներին: Վեզիրներից ոմանք իրենց խելքով և ընդունակությամբ կարողանում են մերթ փայլ տալ տերության, մյուսներն էլ հետամուտ են լինում հարստության և զվարճության: Ենիչերիները, որոնք մի ժամանակ թշնամիների արհավիրքն էին, իրենց շարունակական ապստամբություններով խանգարում են և՛ ժողովրդի, և՛ պետության անդորրությունը. իսկ ժողովուրդն արդեն կշտացած ընդարձակ երկրների աշխարհակալությամբ, մտավորապես աղքատ, բարոյապես ընկած, չունի մի որևէ իդեալ: Օսմանցիք դեռ շարու-

նակում են իրենց զորավոր անունը, բայց այլևս նրանք Եվրոպայի սարսափը չեն և իրենց շահատակությամբ գլխավորապես Ասիային են վնաս հասցնում, իրենցից ավելի թույլ պարսիկների հետ, մինչև ռուսական աշխարհակալությունների շրջանը:

Պարսիկների Թահմասպ թագավորը զոհ է գնում պալատական դավաճանության. իր մահից հետո էլ շարունակվում է կռիվը զանազան ժառանգորդների միջև: Այս խռովությունների լուրն առնելով, օսմանցիների, Մուրադ Գ սուլթանը մի բանակ ուղարկեց դեպի Արևելք՝ Լալա Մուսթաֆա փաշայի հրամանատարությամբ: Օսմանցիք նախ մտան Վրաստան, որ նախորդ արշավանքների ժամանակ օսմանյան սրից ազատ էր մնացել, պարսիկ կուսակալներին քշեցին և ամբողջ երկիրն իրենց իշխանության տակ առան: Այնուհետև օսմանցիք, բաժանված զանազան բանակների, արշավեցին բովանդակ պարսկական տիրապետությունների վրա: Մի քանի տարի փոփոխակի հաջողությամբ կռվելուց հետո, օսմանցիք հաղթեցին և մի կողմից հասան ու գրավեցին Բաղդադը, մյուս կողմից Թավրիզը: Այն ժամանակ Պարսկաստանի գահը բարձրացավ Շահ Աբասը, որ տեսնելով իրեն շրջապատված մի կողմից ներքին և մյուս կողմից արտաքին թշնամիներով, ստիպվեց հաշտություն խնդրել օսմանցիներից և Հայաստանը, Վրաստանն ու Ատրպատականը Թավրիզ մայրաքաղաքով նրանց հանձնեց (1585 թ.):

185. ՃԱՊՈՆԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ. ՆՈՊՈՒՆԱԿԱ ԵՎ ՆԻԴԵՅՈՇԻ

Ծայրագույն Արևելքի վերջին երկիրն է Ճապոնը, որ 4 մեծ և անհամար փոքրիկ կղզիներե կբաղկանա: Հնագույն ժամանակ երկրի բնակիչները այնուներն էին, որոնք սպիտակ ցեղին էին պատկանում: Ճապոնացիք եկան և երկար կռիվներից հետո երկրին տեր դարձան: Այնուները քաշվեցին հյուսիս և հետզհետե ջնջվելով, այսօր աննշան թիվ են կազմում Սախալին կղզում և Ճապոնիայի հյուսիսային կողմը:

Ճապոնը հին գրականություն չունի. իր քաղաքակրթությունը չինացիների և նույնիսկ կորեացիների համեմատությամբ շատ ավելի նոր է: Առաջին անգամ կորեացիք մտցրեցին գիրը Ճապոն (405 թ.). բուդդայական կրոնը չինացի քարոզիչները բերեցին 4-րդ

դարում: Ճապոնի հին պատմությունը առասպելներից էր բաղկանում. միայն մեր թվարկության 7-րդ դարում է սկսում պատմական շրջանը, որ դեռ առասպելներից բոլորովին զերծ չէ:

Ճապոնը վաղուց բաժանվել էր շատ բազմաթիվ իշխանությունների միջև. այս իշխանները ճապոնացիների լեզվով դաիմիո (daimo) են կոչվում, որ մեր նախարարական կարգին է համապատասխանում: Գլխավոր իշխանությունը երկու մարդու ձեռքումն էր. միկադո, որ Ճապոնիայի կայսրն է և շոգուն, որ արևելյան վեզիրի աստիճանն է ներկայացնում (եվրոպացիք կոչում են տայկուն = taikun): Կռիվն անպակաս էր ո՛չ միայն այն հարյուրավոր իշխանությունների և պետությունների մեջ, այլև պետության երկու ներկայացուցիչների՝ միկադոյի և շոգունի միջև: Շոգունին հաջողվեց իր իշխանությունը ժառանգական դարձնել և միկադոյի վրա գերիշխանություն ձեռք բերեց. ամբողջ քաղաքական իշխանությունն իր վրա վերցրեց: Միկադոյի իշխանությունն այլևս անվանական դարձավ. իրեն մնում էր միայն հոգևոր պետի կոչումը և երկրի կառավարության մեջ բնավ ազդեցություն չուներ:

Բոլոր այս պատերազմները, որ դարեր տևեցին և արյունոտ էջերով լցրեցին Ճապոնի պատմությունը, արգելք եղան ճապոնացիներին մի կուռ միություն կազմելու և պատմության մեջ ազդեցիկ դեր խաղալու: Ընդհակառակը, նրանք միշտ եղան հպատակ կորեացիներին կամ չինացիներին, և եթե այս հպատակությունը միայն պարզ հարկատվությամբ էր վերջանում, դրա պատճառը երկրի հեռավորության և ծովային անմատչելի դիրքին է վերագրվում:

16-րդ դարի կեսից ճապոնացիք սկսում են ապստամբել Չինաստանի դեմ: 4 000 հոգի դուրս են գալիս չինական ծովափ, բայց սրանց գրեթե կեսը ջարդվում է և մնացյալը հետ փախչելով, ծովի ալիքներին զոհ է դառնում (1555 թ.): Հաջորդ տարին 10 000 հոգի արշավում են. բայց թե՛ այս և թե՛ ուրիշ երրորդ մի արշավանք էլ (1563 թ.) բոլորովին անհաջող են անցնում:

Նոբունագա կայսրը (1573-1582 թթ.) նպատակ է դնում կազմել Ճապոնիայում մե՛կ զորավոր կենտրոնական իշխանություն: Երկու մեծ թշնամի կար երկրում. հարյուրավոր ավատական մանր իշխանները և բուդդայական կրոնավորների դասակարգը, որ մեծ հարստություն դիզած և լավ զինված, միացել էր ավատական

իշխաններին: Քաղաքական նպատակով Նոբունագան իրեն օգնական կանչեց ճիզվիտներին, որոնք ոչ միայն Կիուսու կղզում ծաղկյալ վիճակ ունեին, այլև մայրաքաղաքում և ավելի հեռուները բազմաթիվ հետևորդներ էին ճարել: Այն ժամանակ կատարված մի վիճակագրության համաձայն (1581 թ.) ճապոնացի քրիստոնյաների թիվը 150 000 էր, որոնք ունեին 200 եկեղեցի: Նոբունագան ջարդեց, նվաճեց գրեթե բոլոր մանր իշխանությունները, 400 բուդդայական տաճար այրեց, կործանեց, մնացյալն էլ իր սուրին զոհ դարձրեց: Բայց հազիվ իր նպատակի գործադրության հասած, իր զորավարներից Ակեչի Միցուհիդը դավաճանեց կայսեր և մի տաճարում հանկարծ պաշարեց նրան: Հուսահատության մատնված կայսրը անձնասպան եղավ:

Այն ժամանակ մեջտեղ ելավ Հիդեյոշին, որ Ճապոնիայի պատմության մեջ մեծագույն հերոսի համբավն ունի: Սա հասարակ ծագում ուներ. կայսեր բանակի մեջ զինվոր էր գրվել, բայց իր խելքով և քաջությամբ աստիճանից աստիճան բարձրանալով, վերջապես զորապետ էր կարգվել: Աշխարհակալության տենչերով տոգորված, սա կայսեր 3 տարեկան որդուն գահ բարձրացրեց և իշխանությունն իր ձեռքը վերցրեց: Նա ոչ միայն երկաթե ձեռքի մեջ զսպեց ապստամբներին և երկիրը մի գայիսոնի տակ միացրեց, այլև թաթար աշխարհակալների օրինակով՝ միտք հղացավ Չինաստանի կայսրությունը նվաճելու: Սրա համար ծրագրեց նախ Կորեային տեր դառնալ և հետո նրանց հետ միասին Չինաստան արշավել: Ճապոնական բանակը մտավ Կորեա (1594 թ.). պատերազմների մեջ եփված ու վարժված ճապոնացիք դյուրությամբ հաղթեցին կռիվներին անսովոր խաղաղ կորեացիներին և քիչ ժամանակվա մեջ ամբողջ թերակղզուն տեր դարձան: Հիդեյոշին առաջարկեց թագավորին՝ միանալ իրեն հետ, Չինաստանն իրենց միջև բաժանելու համար: Թագավորը փախավ և չինական բանակը մտավ Կորեա. ու թեև շատ մարդ կոտորեց, բայց կարողացավ ճապոնացիների բանակին հաղթել՝ նրանց երկու զորավարների միջև ծագած թշնամության պատճառով: Այս միջոցին Հիդեյոշին հիվանդացավ և իշխանությունն իր 6-ամյա որդուն ապահովելու համար ստիպվեց բանակը հետ կանչել: Հիդեյոշին մեռավ (1598 թ.) և իր խոշոր ծրագիրն անկատար մնաց:

186. ԻՍՊԱՆԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Կես դար հազիվ տևեց Իսպանիայի գերիշխան դիրքը Եվրոպայի և Ամերիկայի վրա. իր փառքն ու իր մեծությունը իր կործանման պատճառը դարձան: Ամերիկայի տիրապետությունը վնասեց Իսպանիային. այնտեղից թափված ոսկու ահագին քանակությունը ծուլացրեց նրանց և իսպանացիք սկսեցին վարել միայն շռայլ ու շվայտ կյանք. արդյունաբերությունը կանգնեց, որովհետև ամեն ինչ Եվրոպայի մյուս ազգերից սկսեցին գնել և այսպիսով վերջ ի վերջո իրենց ձեռք բերած ոսկու ահագին պաշարը մյուսների ձեռքն անցավ: Մյուս կողմից ոսկու առատությունը դրամի արժեքը գցեց և ապրանքների գները բարձրացրեց, որով հասարակ ժողովուրդը ծայր աստիճան նեղության մեջ ընկավ: Իսպանիայի մղած կռիվները Ֆրանսիայի, Հոլանդիայի և Անգլիայի դեմ բոլորովին ապարդյուն անցան, պատճառ դարձան շատ իսպանական զինվորների կորստյան և վերջ ի վերջո իրենց անհաջող արդյունքով պետական ազդեցությունն էլ կոտրեցին: Հոլանդիան կորցնելով: Իսպանիան կորցրեց. իր եկամտի մեծագույն աղբյուրը. անգլիական պատերազմի մեջ ոչնչացավ իսպանական նավատորմը և ծովերի տիրապետությունը անցավ Անգլիային. անգլիացիք և հոլանդացիք դուրս եկան կռվելու գաղութների շուրջը. անգլիացիք Չիլին կողոպտեցին, նոր գաղութներ հաստատեցին, որոնք ավելի ուժով մրցում էին մյուսների հետ. նույնիսկ Պորտուգալիայի տիրապետությունը վնասակար դարձավ, որովհետև սրանով նրա ընդարձակ գաղութների պաշտպանությունն Իսպանիայի վրա ընկավ:

Արդյունաբերությունն արդեն մոռացվել էր, առևտուրն էլ անգլիացիների և հոլանդացիների ձեռքն անցավ. այսպիսով մյուս ազգերը առաջ անցան և Իսպանիան հետ մնաց: Եվ այն երկիրը, որ ուզում էր ամենից բարձր և ամենքի վրա գերիշխան լինել, ամենից հետին և խավար երկիրը դարձավ: Ահա թե ինչ ստեղծեց մոլեռանդ կաթոլիկության կույր հետևողությունը:

187. ՇԱՀ ԱԲԱՍ ԵՎ ԻՐ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Շահ Աբասը եղավ պարսիկների մեծագույն թագավորներից մեկը. նա ձգտեց ո՛չ միայն իր երկիրն ընդարձակելու, այլև

բարեկարգելու և հարստացնելու: Անգլիացի երկու եղբայրներ եկան, մտան իր մոտ ծառայության և զինվորական նոր կարգերի հետ հրացանի և թնդանոթի գործածությունը մտցրեցին պարսկական բանակում: Շահ Աբասը նրանցից մեկին ուղարկեց Եվրոպայի գրեթե բոլոր թագավորների մոտ և նրանց հետ բանակցության մեջ մտավ՝ կազմելու համար մի մեծ դաշնակցություն, խորտակելու համար օսմանյանների զորությունը:

Շահ Աբասի հաշտությունը օսմանցիների հետ լոկ մի զինադադար էր և նա հարմար րոպե էր փնտրում՝ պատերազմը նորոգելու և իր կորցրած երկրները գրավելու համար: Հարմար առիթը ներկայացավ, երբ զանազան հայ ու վրացի իշխաններ, քուրդ բեկեր և մինչև իսկ Հայոց կաթողիկոսը, օսմանցիների հարկապահանջությունից նեղված, նրան ապաստանեցին: Շահ Աբասը նրանց միջոցով իմացավ օսմանցիների զինվորական դրությունը և բանակ պատրաստելով, հանկարծ հարձակվեց նրանց վրա: Թավրիզը, Նախիջևանն ու Երևանը գրավեց և արշավեց Կարս: Օսմանցիք իսկույն մի ահագին բանակ պատրաստեցին և ճանապարհ ընկան նրա դեմ: Շահ Աբասը հույս չունենալով պատերազմով հաղթելու օսմանցիներին, մի խորամանկ միտք մտածեց. այն է ամբողջ Արևելյան Հայաստանի ժողովրդին գաղթեցնել Պարսկաստան և երկիրը անապատ դարձնել. այս միջոցով նախ օսմանցիների արշավանքը անապատի միջով կդադրեր և երկրորդ՝ հայոց միջոցով Պարսկաստանում արհեստն ու վաճառականությունը կծաղկեին: Այս մտադրությամբ գործակալներ ստռեց ամեն կողմ, որոնք Արաքսից մինչև Կարս և Լոռիից մինչև Ալաշկերտ գտնված բոլոր ժողովուրդը, հայ և մահմեդական, բռնի տեղահանելով, բերեցին Արարատյան դաշտը լցրեցին. սրանց միացրին նաև Գանձակի, Կարինի, Բասենի, Խնուսի, Խլաթի, Մանազկերտի և Վանի շրջաններից քշված գերիներին: Գաղթականներին տեղահանելուց հետո այրում էին տուն, տեղ և ամեն ինչ: Օսմանցիք լսելով այս տեղահանությունը, շտապեցին Կարսից, հասնելու Շահ Աբասին և ժողովրդին հետ դարձնելու համար: Շահ Աբասն էլ իր կողմից շտապով քշում էր տարագիրներին: Օսմանցիք արդեն Նախիջևանի մոտ էին, երբ ժողովուրդը հասավ Արաքսի ափը, ուր բերվեցին նաև Ջուղայի հայերը, որոնք նշանավոր էին այն ժամանակ իրենց հարստությամբ և վաճառականական գործու-

նեությամբ: Լաստերն ու նավակները շատ քիչ էին գետն անցնելու համար, ուստի Շահ Աբասը մտրակով և կախաղաններով ստիպեց թափվելու գետը և լողալով անցնելու դիմաց: Բացվեց մի աղեխարշ տեսարան. հարյուր-հազարավոր ժողովուրդն Արաքսի մեջ թափվեց. շատեր գետի ալիքներին զոհ գնացին և նրանց դիակներով ջրի երեսը ծածկվեց. մի մասը կարողացավ մի կերպ դիմացն անցնել և այլևս ապահով ճանապարհներով քշվեց դեպի Սպահան, որի շուրջը հիմնեցին բազմաթիվ գյուղեր: Ջուղայի գաղթականներին հատկացվեց Սպահանի մի արվարձանը, ուր նրանք նոր քաղաք կառուցելով, կոչեցին Նոր Ջուղա (1605 թ.):

Օսմանցիք Արաքսի ափը հասնելուց հետո, չկարողացան իրենց արշավանքը շարունակել. շուտով իրենց մեջ ծագեցին ներքին ապստամբություններ և ենիչերիների խռովությունները, որոնցից օգուտ քաղելով Շահ Աբասը շարունակ ասպատակում էր օսմանցիների հողում հայոց գավառները: Նա տիրեց ոչ միայն Հայաստանին ու Վրաստանին, այլև առաջացավ մինչև Բաղդադ, Մուսուլ և Տիգրանակերտ: Պատերազմը տասնյակ տարիներ տևեց փոփոխակի հաջողությամբ: Մինչև անգամ օսմանցիների սուլթանն ստիպվեց անձամբ արշավանքի դուրս գալ պարսիկների դեմ և մինչև Թավրիզը գրավեց, բայց իր վերադարձից հետո Շահ Աբասը նորից գրավեց կորցրած հողերը: Վերջապես երկու կողմերն էլ կռվից ձանձրացած, հաշտվեցին միմյանց հետ, որով Արևելյան Հայաստանը, Երասխից ձախ, մնաց պարսիկների ձեռքում (1639 թ.):

Ասացինք, թե Շահ Աբասը Պարսկաստանի մեծ և աշխարհաշեն թագավորներից մեկն էր. հայ ժողովուրդը, որ նա գերի տարավ Պարսկաստան, նույնպես իր այդ աշխարհաշեն նպատակների համար էր և ուզում էր նրանց միջոցով արհեստներն ու վաճառականությունը ծաղկեցնել իր երկրում: Ուստի և ամեն արտոնություն տվեց նրանց և հակառակ կրոնավորների մոլեռանդության, նրանց հետ սիրով և քաղցրությամբ էր վարվում և նույնիսկ մահմեդականների հետ մի վեճի միջոցին, աչառությամբ հայոց կողմն էր բռնում: Նախանձով տեսնում էր, թե ինչպես ռուսները, պորտուգալացիք և անգլիացիք, այնքան հեռու երկրներից գալով և պարսիկների քթի տակ եղած Հնդկաստանի վաճառականության տեր դառնալով, նրա ամբողջ հարստությունը կքամեին, իսկ իրենք՝ հարևան պարսիկը, զուրկ ու թափուր էին մնում: Պարսիկներն ընդունակ չէին վաճառականության մեջ,

ուստի զարկ տվեց հայ ժողովրդին և նրա միջոցով Հնդկաստանի վաճառականությունը ձեռք բերել աշխատեց: Միանալով անգլիացիներին, հարձակվեց Պարսից ծոցի վրա, գրավեց Հյուրմյուզը և մարգարտի արտահանությունը, որ 100 տարուց ի վեր պորտուգալացիների ձեռքումն էր, խլեց, որով պետական գանձի համար ահագին եկամտի աղբյուր բացեց:

Սպահանը մայրաքաղաք դարձնելուց հետո, մեծամեծ շենքերով, պալատներով ու մզկիթներով զարդարեց. նշանավոր է Չեհլսիթուն կոչված ապարանքը, որ 40 սյունի վրա էր բարձրանում, քաղաքը Ջուղայից բաժանող գետի վրա (Զենդերուտ) 30 կամարով մի կամուրջ գցեց: Խորասանի Մեշեդ քաղաքը, որ պարսիկ հավատացյալների ուխտատեղին է, գեղեցիկ շենքերով զարդարեց և ուխտագնացությունը քաջալերեց. այսպիսով այն ահագին հարստությունը, որ ամեն տարի պարսիկ ուխտավորները Արաբիա (Մեքքա) էին թափում, երկրում պահելու և խնայելու պատճառ դարձավ: Երկրի ներսում ճանապարհորդելը դյուրացնելու համար 999 իջևան կառուցեց: Ուզում էր Մազանդարանն էլ հայ գաղթականների կենտրոնավայր դարձնել և այնպես շենացնել, որ ինչպես ինքը կատակով ասում էր, «Քրիստոնյաների համար գինիով ու խոզերով հարուստ դրախտ դառնար»: Բայց երկրի վատառողջ կլիման իր այս ցանկությունը չկարողացավ գոհացնել:

Պարսիկների ու տաճիկների հաշտությունը 80 տարուց ավելի տևեց և միջոց տվեց հայ ժողովրդին մի քիչ կազդուրվելու և ուսումնական նպատակների հետամուտ լինելու:

188. ՃԱՊՈՆԱՑԻՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՆ ՄՏՆՈՒՄ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՀԵՏ

Ծովային մեղմ կլիմայով և առատ բուսականությամբ օժտված Ճապոնիան ընդունակ էր ինքն իր մեջ իր կենսական կարիքները բավարարելու և հեռու երկրներ դիմելու պետքը չէր զգում: Կորեան մի կողմից և մանավանդ լայնածավալ Չինաստանը մյուս կողմից, անհրաժեշտության դեպքում կարող էին կարևոր ծառայություն մատուցել: Այս պատճառով ճապոնացիք Արևմտյան աշխարհից միշտ հեռու մնացին:

Առաջին անգամ ճիզվիտ քարոզիչներն եղան, որ քրիստոնեություն տարածելու պատրվակով մտան Ճապոնիա: Ճապոնացիք

սկզբում արգելք չեղան այս նոր կրոնին, որ բուդդայական մի աղանդ էին համարում: Այն ժամանակ բուդդայական կրոնը այնքան շատ աղանդների էր բաժանված և այնքան շատ աղանդապետներ էին գալիս Ճապոնիա իրենց նոր վարդապետությունը քարոզելու, որ ճապոնացիք այլևս վարժվել էին ամեն այս կարգի նորությունների: Ինչպես տեսանք, Նոբունագա կայսրը քրիստոնյաներին իրեն աջակից դարձնելու նպատակով նրանց կատարյալ ազատություն էր տվել և ճիզվիտներին հովանավորում էր: 1582 թվականին առաջին անգամ ըլլալով ճապոնացի 4 իշխաններ այցելության են գնում Եվրոպա և ճիզվիտների առաջնորդությամբ Պորտուգալիա և Իսպանիա այցելելուց հետո՝ գնում են Հռոմ պապին տեսության: 1605 թվականին Ճապոնիայում 750 000 քրիստոնյաներ կային արդեն:

Քարոզիչները ճանապարհ բաց արեցին վաճառականներին: 17-րդ դարի սկզբից պորտուգալացիք, իսպանացիք, հոլանդացիք և անգլիացիք առևտրական տներ են հաստատում Ճապոնիայում: Սրանց հետևում են ճապոնացիք և նավեր կառուցելով՝ գնում են մինչև Մեքսիկա առևտուր անելու:

Շուտով ճապոնացիք տեսնում են, որ քարոզիչների բուն նպատակը ո՛չ թե կրոն տարածելն է, այլ կրոնի միջոցով կամաց-կամաց երկրի հարստության և հետո երկրին տիրելն է: Սրա վրա քրիստոնեությունն արգելում են (1614 թ.): Ճապոնացի քրիստոնյաներին նահատակում են, եկեղեցիները փակում, քարոզիչներին վտարում և Ճապոնիայում վերջ են տալիս քրիստոնեությանը:

189. ԵՐԵՄՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

Ավգսբուրգի դաշինքով Գերմանիան բաժանվել էր միմյանց թշնամի երկու տարբեր կրոնական համայնքների: Հաջող պայքար մղելու համար, կաթոլիկները կազմեցին մի լիգա, որի գլուխն էր Բավարիայի դուքս Մաքսիմիլիանը, իսկ լութերականները կազմեցին մի առանձին միություն Սաքսոնիայի իշխանի շուրջը: Բացի այս երկուսից դուրս եկան այժմ էլ կալվինականները, որոնք կազմեցին մի ուրիշ միություն՝ Ֆրիդրիխ իշխանի գլխավորությամբ:

Բողոքական դավանանքը տարածվել էր նաև Ավստրիայում, Մորավիայում և Չեխիայում: Ճիզվիտները ազդեցություն ձեռք

բերելով Ավստրիայում, ուզեցին վերջ տալ նոր կրոնին. չեխերը դեմ կանգնեցին և կայսեր դեմ ապստամբեցին (1618 թ.): Նրանք օգնություն խնդրեցին Հոլանդիայից, դիմեցին Գերմանիայի կալվինական միության և Ֆրիդրիխ իշխանին իրենց թագավոր ընտրելով, պատերազմի դուրս եկան, հաղթեցին Ավստրիային և մոտ էին գրավելու Վիեննան: Ավստրիայի իշխանը դիմեց կաթոլիկական լիգայի և Իսպանիայի օգնության և նրանց զորքով ջարդեց չեխերին ու գերմանական բողոքականներին և Ֆրիդրիխ թագավորին էլ Չեխիայից փախցրեց Հոլանդիա: Վտանգը տեսնելով, Հյուսիսային Գերմանիայի իշխանները միացան և Դանիայի Քրիստիան թագավորին օգնության կանչեցին: Կաթոլիկական լիգան հաղթեց այս բոլորին և դանիացիք ստիպվեցին ճանաչել այն հրովարտակը, որով բողոքական եկեղեցիների կալվածները նորից անցնում էին կաթոլիկներին:

Այս նեղ րոպեին օգնության հասավ Շվեդիայի թագավոր Գուստավ Ադոլֆը, որ կռվին միջամտելու երկու նպատակ ուներ. նախ պաշտպանել բողոքականությունը և երկրորդ՝ Բալթիկ ծովի հարավային ափի վրա իշխանություն ձեռք բերել: Գուստավ Ադոլֆը եկավ, միացավ սաքսոնացիներին, հաղթեց կաթոլիկներին և Հյուսիսային Գերմանիան մաքրելուց հետո, իջավ հարավ-արևմուտք, առավ Բավարիան, որ կաթոլիկության բունն էր: Բայց այս պատերազմներից մեկում ինքն էլ մեռավ: Այնուհետև կաթոլիկները ջարդեցին շվեդացիներին, գրավեցին Բավարիան, որի վրա Սաքսոնիայի իշխանը և ուրիշներ հաշտություն խնդրեցին լիգայից:

Դանիայի և Շվեդիայի պարտությունը տեսնելով, վախեցավ Ֆրանսիան, որի համար Գերմանիայի ուժեղությունը մի վտանգ էր. ռուստի ինքն էլ կռվի նետվեց: Այդ րոպեից պատերազմը դարձավ համաշխարհային: Գերմանիայի կայսրը զենքը դարձրեց ուղղակի Ֆրանսիայի դեմ. իսպանացիք էլ շարժվեցին Ֆրանսիայի հարավից. շվեդներն ազատ զգալով իրենց, մտան Գերմանիա, արշավեցին ամեն կողմ և մինչև Վիեննա հասան: Ֆրանսիացիք հաղթեցին գերմանացիներին և գրավեցին Էլզասը, քշեցին իսպանացիներին և նրանց բոլոր տիրապետությունները Պիրենյան լեռներից հյուսիս՝ խլեցին, միևնույն ժամանակ գրավեցին նաև իտալական քաղաքները:

Այդ բոլոր պատերազմների ընթացքում Գերմանիան տակնու-

վրա եղավ. շեն քաղաքներն ավերակ ու անբնակ դարձան. մարդիկ վայրենացան և սովից սկսեցին միմյանց ուտել: Վերջապես 30 տարվա ապարդյուն կռիվներից երկու կողմն էլ ուժասպառ եղած, որոշեցին հաշտվել. Վեստֆալի դաշինքով ճանաչվեց կաթոլիկ, լութերական և կալվինական կրոնների ազատությունը Գերմանիայում, Զվիցերիան և Հոլանդիան անկախ տերություններ հայտարարվեցին, Ֆրանսիան ստացավ Էլզասը, իսկ Շվեդիան ստացավ Պոմերանիան: Գերմանիան ոչ միայն կրոնապես բաժանվեց, այլև քաղաքականորեն ընկավ և վերածվեց 360 մանր իշխանությունների (1648 թ.): Դրանցից ոմանք այնքան մանր էին, որ մի քառորդ մղոն տարածություն ունեին. ուրիշներ զրկված էին թնդանոթ արձակելու իրավունքից, որովհետև ռումբը հարևան պետության մեջ պիտի իյնար:

Այլևս Գերմանիան պետություն չէր:

190. ԼԵՀԱՀԱՅԵՐԻ ՑՐՎՈՒՄԸ. ՆԻԿՈԼ ԹՈՐՈՍՈՎԻՉ

Օգտվելով լեհ թագավորների տված արտոնություններից, Լեհաստանի գաղթական հայերը, իրենց ընդունակության շնորհիվ, շատ բազմացան և առաջադիմեցին: Նրանց թիվը հասնում է 200000-ի: Նրանք առհասարակ հարուստ վաճառականներ էին, որ իրենց մեծամեծ և լավ կազմակերպված քարավաններով, իբրև միջնորդ էին ծառայում եվրոպական և արևելյան վաճառականության: Բացի սրանից, նրանք մտել էին պետական ծառայության և շատեր հասել ազնվականության տիտղոսին: Հայոց բնակած գլխավոր քաղաքներն էին Իլվովը կամ Լվովը, ուր 50000 հայ բնակիչ կար և Լեհաստանի հայոց մայրաքաղաքն էր համարվում, Կամենիցը, Յազլովեցը և այլն: Այնքան մեծ էր հայոց հարստությունը, բազմությունը և առանձնաշնորհյալ դիրքը, որ լեհացիք վախենում էին, թե հայերը պետության մեջ պետություն կկազմեն:

17-րդ դարի առաջին քառորդին կաթոլիկները հալածանք հանեցին լեհահայ եկեղեցու դեմ, որ պատճառ դարձավ լեհահայ գաղութի ցրվելուն և ոչնչանալուն: Այս դժբախտության պատճառն եղավ Նիկոլ Թորոսովիչ լեհահայ փառամոլ հայ եպիսկոպոսը:

Էջմիածնի Մելքիսեդեկ կաթողիկոսը դրամական ժողովարարու-

թյան համար Լեհաստան գալով, Նիկոլը դիմեց նրան և շատ ընծաներ տալով, հակառակ ժողովրդի փափագին, եպիսկոպոս օծվեց և լեհահայոց թեմի առաջնորդ դարձավ: Ժողովուրդը չընդունեց և կաթողիկոսի նզովքից միայն վախենալով, հպատակվեց Նիկոլին: Բայց մի քանի տարի հետո նրա անպատկառ վարմունքից վշտացած, գժտվեց նրա հետ և եկեղեցուց դուրս արեց: Նիկոլը դիմեց ճիզվիտներին՝ նրանց միջոցով բռնի տիրանալու համար հայոց եկեղեցուն:

Մենք գիտենք, որ Լեհաստանը թեև կաթոլիկ էր, բայց ընդունում էր կրոնի ազատությունը. այս պատճառով այստեղ զորացել էին բողոքականները, այնպես որ պապը այդ երկիրը կորած էր համարում կաթոլիկության համար: Այս վիճակին դարման տանելու համար նա Լեհաստան ուղարկեց 2000 ճիզվիտների մի բանակ (1565 թ.), որոնք տեսնելով բողոքականության առաջադիմությունը, սարսափեցին, բայց չհուսահատվեցին և կռիվ սկսեցին: Նրանք բաց արին նախ իրենց կանոնավոր դպրոցները և նրանց միջոցով տարածում էին կաթոլիկական խմորը: Իսկ երբ իրենց աշակերտը Սիգիզմունդ լեհական գահը բարձրացավ, կաթոլիկության գործը նոր զարկ ստացավ: Նախ հաղթվեցին որթոդոքսները և կամ կաթոլիկ կրոնին հպատակվեցին և կամ ստիպվեցին հեռանալ երկրից: Ավելի հալածվեցին բողոքականները, որոնց եկեղեցիները քանդեցին, կրոնավորներին սպանեցին կամ աքսորեցին և կաթոլիկությունը բռնի տարածեցին:

Օտար կրոնները նվաճելուց հետո, կարգը եկավ հայոց. և առիթը ինքնին ներկայացավ, երբ Նիկոլը դիմեց ճիզվիտներին և գրավոր խոստում տվեց նրանց իր ժողովրդին Պապի իշխանության տակ դնելու, եթե պաշտպանեն իրեն: Ճիզվիտներն իրենց աշակերտներով, զորքով ու դատավորներով դիմեցին հայոց եկեղեցին, բռնի գրավեցին և Նիկոլին հանձնեցին: Նիկոլը գրավեց եկեղեցական բոլոր կալվածները, կրոնավորներին բանտարկեց և պահանջեց ժողովրդից ընդունել կաթոլիկությունը, թե ոչ զրկված էր եկեղեցուց: Ժողովուրդն ավելի լավ համարեց մնալ առանց եկեղեցու, քան թե ուրանալ իր հավատը: Եկեղեցական արարողությունները վերջացան, մկրտություն, պսակ ու թաղման կարգը դադարեցին և հայ ժողովուրդն ապրում էր առանց որևէ ծեսի: Այս դժբախտ վիճակին դարման անելու համար հայերը դիմեցին կաթողիկոսին, թագավորին, պապին, բայց ամեն ինչ ապարդյուն անցավ:

Այս հալածանքը տևեց 23 տարի (1630-1653 թթ.) և հայերը տեսնելով, որ այլևս ճար չկա, ցրվեցին Իլվովից զանազան երկրներ, Սաքսոնիա, Բավարիա, Հոլանդիա և Անգլիա, այնպես որ 50 000 հայից մնաց 5000 հոգի:

Նիկոլը տեսնելով որ այս բոլոր միջոցներն իզուր անցան, առերես հաշտվեց ժողովրդի մնացորդի հետ, իսկ գոնե նոր սերունդը կաթոլիկ դարձնելու համար, բացել տվեց պապական մի դպրոց, որ իրոք հասավ նպատակին: Նրա մահից հետո Լեհաստանի հայոց ժողովուրդը կաթոլիկ հայտարարվեց (1699 թ.) և ազգային ամեն առանձնահատկություն կորցնելով, լեհերի մեջ ձուլվեց ու ոչնչացավ:

191. ՄԱՆՋՈՒՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կորեայի հյուսիսային կողմում կար Ցին պետությունը. 13-րդ դարում մոնղոլները, ոչնչացնելով այս պետությունը, նրանցից մի մասը փախավ դեպի հյուսիս: Սրանցից ձևացավ մանջուր ժողովուրդը: 1618 թվականին սրանք անցան Ամուր գետը և գրավելով Մուկդենն ու շրջակայքը, հաստատվեցին այնտեղ: Այնուհետև այս երկիրը կոչվեց Մանջուրիա: Չինացիք աշխատեցին վտարել նրանց այդտեղից, բայց չկարողացան: Այսպես, Չինաստանի սահմանի վրա կազմվեց մանջուրական պետությունը:

Մանջուրներն սկսեցին շարունակ հարվածել Չինաստանը. այն մեծ կայսրությունը, որ 15-րդ դարում մինչև Պարսից ծոցն էր հասել, այժմ արդեն թուլացել էր և քայքայվել. արքունիքի շռայլությունը, պալատական նենգությունները ոչնչացրել էին գանձարանը. կայսեր հարստահարությունը, բնական պատուհասներն ու քաղցածությունը տիրում էին ամեն կողմ: Ամեն կողմ ծագեցին ապստամբություններ և խռովություններ քաղցած ամբոխի կողմից: Ոչ դրամ կար և ոչ էլ զորք՝ թշնամիներին դիմադրելու համար: Այսպես մանջուրները հետզհետե առաջ եկան և առաջացան մինչև Պեկին: Չինացիք վարձեցին 400 հոգուց բաղկացած մի ավազակախումբ պորտուգալացիներից և չինացի ավազակներից, որոնց հրացաններով էլ զինեցին: Բայց այս ավազակախումբն էլ գործի չդրվեց, որովհետև պետությունը վախենում էր, որ նրանք հաղթական դուրս գալուց հետո գահին կտիրեն:

Ուրը մեծ ապստամբապետ էր դուրս եկել երկրի մեջ. ամեն մեկը բանակ կազմած կռվում էր մյուսի դեմ՝ կայսերական գահին տիրելու նպատակով. և այս ապստամբապետների ձեռքի տակ ժողովուրդը անխնա ջարդվում էր: Սարսափելի եղավ Հո-Նան գավառի աղետը: Ապստամբապետներից մեկը այս գավառի մայրաքաղաքը ապաստանած լինելով, կայսերական բանակի զորավարը սոսկալի գաղափարն ունեցավ Դեղին գետի թումբը բանալու և ապստամբներին ջրահեղձ անելու: Բայց ապստամբները կարողացան ճողոպրել. գետը ողողեց ամբողջ քաղաքը. բոլոր տունները փուլ եկան և այն մեծ քաղաքի տեղում գոյացավ մի լիճ. ժողովրդից 300000 հոգի ջրահեղձ եղան: Ապստամբապետներից մեկը առաջացավ մինչև Պեկին մայրաքաղաքը և գրավեց. կայսրը այս լսելով, անձնասպան եղավ: Ապստամբները ամբողջ քաղաքը սուրի տվին: Սրա վրա ժողովուրդը դիմեց մանջուրներին և խնդրեց, որ գան իրենց ազատելու: Մանջուրները մտան, ժողովրդի կեցցեների տակ Պեկին մայրաքաղաքը գրավեցին և չինական կայսրության վերջ տվեցին (1644 թ.):

Բայց Պեկինի գրավմամբ դեռ ամբողջ Չինաստանը չէր նվաճվել. պետք էր գրավել ամեն մեկ գավառն ու քաղաքը, ուր մի ապստամբ կամ չինացիների կայսերական տներից մեկը նստած՝ դիմադրություն էր ցույց տալիս: Պատերազմը տևեց 6 տարի. թաթարներն ահագին ջանք գործադրեցին նվաճելու այս ահագին երկիրը. և անշուշտ չպիտի հաջողեին, եթե ապստամբների մեջ միություն լիներ: Բայց նրանցից յուրաքանչյուրն ուզում էր միակ տերը ինքը լինել, և նախանձով վառված, աշխատում էր մյուսի պարտության համար: Ամեն տեղ ժողովուրդը 100 000-ներով ջարդվում էր և քաղաքները ավերակ էին դառնում: Այս նախանձի, մատնության և երկպառակության միջոցով վերջապես մանջուրները ամբողջ Չինաստանին տիրեցին:

Չինաստանի նվաճումը մանջուրների կողմից առանձին փոփոխություն չառաջացրեց պետական կազմի մեջ. կայսերական ընտանիքը միայն փոխանակվեց նոր մանջուրական իշխանով. մանջուրները պահեցին չինացիների հին պետական կարգերը. քաղաքների և նահանգների կառավարությունը նորից Կոն-Ֆու-ցեի աշակերտներին վստահվեց. մինչև իսկ քրիստոնյաներ հրավիրվեցին Չինաստան. մի ճիզվիտ աստղաբաշխական գիտության մեջ բարեկարգություններ մտցնելու համար պալատ կանչ-

վեց. մի ժամանակ նաև քրիստոնեական սրբատուն և եկեղեցիներ կառուցելու արտոնություն տրվեց, որ հետո նորից ետ առնվեց: Այս ժամանակներից է սկսվում եվրոպացիների հարաբերությունը. ռուս, հոլանդացի դեսպաններ են գալիս, պապը նվիրակ է ուղարկում և այլն:

Այսպես մանջուրական իշխանությունը ամուր հաստատվեց երկրում և շուտով, ինչպես նախորդ թաթարական հարստությունները, յուրացնելով երկրի կրոնը, լեզուն և քաղաքակրթությունը, գրեթե չինացի դարձավ:

192. ԱՆԳԼԻԱՅԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Երկու վարդերի պատերազմից հետո, Անգլիայի թագավորները սկսել էին բռնակալ դիրք բռնել թե՛ վարչական և թե՛ կրոնական գործերի մեջ: Նրանք ուշադրություն չէին դարձնում այլևս պառլամենտին և աշխատում էին կառավարել բոլորովին անկախ. միևնույն ժամանակ նրանք հարվելով անգլիկան եկեղեցուն, չէին ճանաչում և հալածանք էին հանել ո՛չ միայն կաթոլիկների, այլև բողոքական տարբեր եկեղեցիների՝ պուրիտանների, կալվինականների և երիցականների դեմ: Կաթոլիկները պետության դեմ դավադրություն կազմեցին և թագավորի պալատն ու պառլամենտը վառոդով օդը ցնդեցնելու պատրաստություն տեսան: Դավադրությունը բացվեց և կաթոլիկները մահվամբ պատժվեցին:

Վառոդային դավադրությունից հետո ժողովուրդը և պառլամենտը բոլորովին երես դարձրեցին կաթոլիկներից, և ավելի համակիր եղան բողոքական մյուս եկեղեցիներին ու հատկապես պուրիտաններին: Երբ ծագեց պատերազմը Իսպանիայի և Հոլանդիայի միջև և հետո էլ Գերմանիայում, անգլիացիք ուզում էին, որ իրենք էլ մասնակցեն այս կռիվներին, ընկճելու համար Գերմանիան և իրենց դիրքը ավելի զորացնելու համար: Բայց Անգլիայի թագավորները իրենց անճարակությամբ չկարողացան օգտվել առիթից և մինչդեռ ֆրանսիացիք, շվեդացիք, հոլանդացիք ստացան լավ-լավ բաժիններ, անգլիացիք բոլորովին հեռու մնացին ավարից: Այստեղից սկսեց ավելի մեծ դժգոհություն թագավորների դեմ: Պառլամենտը, իբրև ժողովրդի ներկայացուցիչը, կռվում էր իր իրավունքները ձեռք բերելու համար, իսկ թագավորները չէին լսում

նրան և շուտ-շուտ պառլամենտի արձակման հրաման տալիս. մինչև անգամ Կարլոս թագավորը բոլորովին արձակեց պառլամենտը և ինքնագլուխ կառավարում էր, բոլոր ըմբոստներին մահով պատժելով: Կարլոսը ձեռք զարկավ նաև կրոնական հարցին. տապալեց Սկովտիայի երիցական եկեղեցին և հաստատեց անգլիկան եկեղեցի: Սկովտիացիք ապստամբեցին: Թագավորը բանակ ուղարկեց նրանց դեմ, բայց զինվորները, որ համակիր չէին թագավորին, փախան, իսկ մնացյալն էլ ջախջախվեց: Կարլոսը տեսնելով որ անկարելի է այս ձևով կառավարել, ստիպվեց գումարել նոր պառլամենտ, որ մյուսներին հակառակ շատ երկար դիմացավ և դրա համար էլ կոչվում է երկարատև պառլամենտ:

Պառլամենտն սկսեց պայքարել թագավորի դեմ. ջնջեց նրա արքայական բոլոր իրավունքները. բայց երբ խնդիրը հասավ կրոնականին, տարաձայնությունը տիրեց իր մեջ: Կազմվեց երկու կուսակցություն. առաջինի կողմն էր պառլամենտի մեծ մասը, որ պուրիտան էր, իսկ երկրորդը անգլիկաններն էին, որ բռնեցին թագավորի կողմը. թագավորի կողմն էին հատկապես ասպետները, ազնվականները և Անգլիայի հյուսիսային և արևմտյան գավառները, իսկ հարավային և արևելյան գավառները պառլամենտական էին: Սկսեց քաղաքային պատերազմը թագավորի և պառլամենտի միջև (1642 թ.): Երկու տարվա անվճռական կռիվներից հետո, պառլամենտը դիմեց Սկովտիայի օգնության, իսկ թագավորը՝ Իռլանդիայի: Պառլամենտն ավելի զորացավ, երբ իրեն հարեց Անկախների կուսակցությունը, որ բաղկացած էր կալվինականներից, կրկնակնունքներից և ուրիշ աղանդավորներից. նրանց առաջնորդն եղավ Կրոմվելը: Սրանք կրոնական պատերազմ հայտարարեցին և նորակրոն հավատացյալների մոլեգին քաջությամբ ընկան թագավորականների վրա, հաղթեցին և թագավորն ստիպվեց հանձնվել պառլամենտին: Պառլամենտը որոշեց հաշտվել նրա հետ այն պայմանով, որ թագավորը հաստատի սահմանադրական միապետություն և երիցական եկեղեցի: Այն ժամանակ գլուխ բարձրացրին անկախները, որոնք հանրապետական էին և բոլոր բողոքական կրոնների ազատությունն էին ուզում: Նրանք գրավեցին Լոնդոնը, թագավորին գլխատեցին, պառլամենտը մաքրեցին արքայականներից և հիմնեցին Անգլիական Հանրապետություն (1649 թ.): Կրոմվելը, որ

այս բոլոր շարժման վարիչն էր, իր վրա առավ գործադիր իշխանությունը, օրենսդրականը թողնելով պառլամենտին:

Նոր կարգերից դժգոհ մնացին Իռլանդիան և Սկովտիան, որոնք բաժանվելով Անգլիայից՝ իրենց համար թագավոր դրեցին Կարլոս Բ-ին: Կրոմվելը շարժվեց նրանց վրա, ապստամբությունը խեղդեց արյան հեղեղի մեջ և երկու երկրներն էլ նորից Անգլիային միացրեց: Կրոմվելը դարձավ ո՛չ միայն քաղաքական գործիչ, այլև քաջ զորավար և նշանավոր պետական անձ: Նա մինչև իր մահը կառավարեց Անգլիան իր զորավոր ձեռքով: Իր մահից հետո արժանավոր հաջորդ չգտնվելով, անգլիացիք վերադարձան նախկին կարգերին, հրավիրեցին Կարլոս Բ-ին իբրև թագավոր, որ պիտի կառավարեր երկիրը համայնքների պալատի և լորդերի ժողովի հետ (1660 թ.):

Բայց Կարլոս Բ-ը, ինչպես և իր հաջորդը Հակոբ Բ-ը կաթոլիկ էին և շարունակ աշխատում էին կաթոլիկության շահերի համար: Կարլոսը մինչև անգամ ծածուկ դաշնակցել էր Ֆրանսիայի հետ, պայմանով որ եթե Անգլիայում հեղափոխություն ծագի, ֆրանսիական բանակը մտնի Անգլիա: Այս բոլոր դավերը տեսնելով, անգլիացիք գահընկեց արին թագավորին, Հոլանդիայից կանչեցին Վիլհելմ իշխանին և նոր սահմանադրությամբ հաստատեցին Անգլիայի թագավոր (1688 թ.): Այս նոր կարգով հայտարարվում էր երկրի մեջ կրոնի ազատություն, արքայական բոլոր արտոնությունները ջնջվելով անցնում էին պառլամենտին, որով պառլամենտը ավելի բարձր էր լինում կանգնած քան թագավորը:

Այսպես տեղի ունեցավ Անգլիայի անարյուն հեղափոխությունը:

193. ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կրոնական պատերազմներից հետո, Ֆրանսիան իր ամբողջ ուժերը լարեց ներքին բարեկարգության համար. իրար հաջորդող մի խումբ նշանավոր պետական գործիչներ՝ Ռիշլիոն, Մազարենը և Կոլբեռը այս բարեկարգիչ շարժման գլուխ կանգնեցին: Նրանք բարելավեցին հարկային սիստեմը, երկրագործությունը և գյուղատնտեսությունը առաջնակարգ դիրքի հասցրին. գործարաններ բանալով, նրանց համար օտար երկրներից վարպետներ հրավիրելով և մաքսապաշտպան դրությամբ տեղական արդյունա-

բերությունը քաջալերելով այնպես առաջ տարին այն, որ ներածությունն ըստ կարելվույն պակասեց և արտածությունը զարգանալով՝ օտար երկրների հարստությունները Ֆրանսիա փոխադրեց. մյուս կողմից ուժ տվեցին ֆրանսիական գաղութներին Ամերիկայի, Աֆրիկայի և Հնդկաստանի մեջ, որով ֆրանսիական ազդեցությունը զորացավ և շատ հեռուները տարածվեց. կազմակերպեցին բանակը, որի զինվորների թիվը կես միլիոնից անց կացավ. հնարելով սվինի գործածությունը, պատերազմական արվեստի մեջ մտցրին այնպիսի բարեփոխություն, որով նիզակավորների և հրացանակիրների առանձին բանակները մեկի մեջ միացան:

Ռիղլիոյի և իր հաջորդների գլխավոր նպատակն եղավ ստեղծել խիստ կենտրոնացած միապետություն. նրա համար պետք էր բոլոր անջատական կամ ինքնավար ուժերը: Սրանք էին նախ՝ հուգենոտները, որոնք Նանտի հրովարտակի համաձայն կազմում էին առանձին կրոնական համայնք՝ քաղաքական որոշ ինքնավարությամբ, ձգտում էին դեպի բողոքական երկրները՝ Անգլիա և Հոլանդիա, և նրանց օգնությամբ ուզում էին ձեռք բերել ավելի մեծ ազատություն: Երկրորդը՝ խոշոր ազնվականությունն էր, որ ավատական ժամանակից մնացած մեծ արտոնությունների տեր էր և շատ անգամ արքայական իշխանության դեմ ըմբոստանում էր: Եվ վերջապես երրորդը հոգևորականությունն էր, որ պապի գերիշխանության տակ, եթե ոչ բացարձակ, գոնե սահմանափակ ինքնավար ձգտումներ ուներ:

Ռիշլիոն պատերազմի դուրս եկավ հյուգենոտների դեմ, որոնց Անգլիայից օգնություն ստանալով՝ համառորեն պաշտպանվեցին երկար ժամանակ. բայց վերջապես Ռիշլիոն քշեց անգլիացիներին, հուգենոտներին հաղթեց, նրանց Լա-Ռոշել մայրաքաղաքը գրավեց և Նանտի հրովարտակից դուրս հանեց նրանց բոլոր քաղաքական արտոնությունները: Ավելի հետո, Լուի ԺԴ-ի ժամանակ, նրանց կրոնական արտոնություններն էլ խլվելով, Նանտի հրովարտակը բոլորովին ոչնչացվեց և բողոքականները բոլորովին թողնելով երկիրը, գաղթեցին Զվիցերիա և Հոլանդիա:

Ազնվականությունը ջախջախելու համար Ռիշլիոն մի կողմից սկսեց ավերել նրանց դղյակները, առանձին արտոնությունները ջնջեց, մյուս կողմից մանր ազնվականներին և հասարակ ժողովրդի արժանավոր զավակներին ավելի բարձր պաշտոնի կանչելով՝ նրանց ենթարկեց:

Լուի ԺԴ-ի ժամանակ մինչև անգամ հոգևորական իշխանությունը կերպարանափոխվեց. ստեղծվեց գալլիական եկեղեցին, որ առանց հեռանալու պապական դավանությունից, Հռոմի աթոռի գերիշխանությունը Ֆրանսիայի վրա ըստ կարելվույն կրճատեց:

Այսպես ջնջվեցին երկրի միջից բոլոր ավատական կամ ինքնավար մարմինները և ստեղծվեց մի կուռ միապետություն, որ կենտրոնացել էր Փարիզում, թագավորական պալատում. ամեն վճիռ այնտեղից էր դուրս գալիս: Միապետների ամենամեծ ներկայացուցիչն եղավ Լուի ԺԴ-ը, որ համարձակվում էր ասել. «Պետությունը ես եմ», և անձամբ վարում էր երկրի բոլոր գործերը: Իր օրով Ֆրանսիան փառքի գագաթնակետին հասավ. ամեն ասպարեզի մեջ երևան եկան հանճարեղ մարդիկ, որոնք նրա անունը մեծացրին. Փարիզը դարձավ Եվրոպայի մայրաքաղաքը և հանճարի, արվեստի, ճաշակի և գեղեցկության հայրենիքը. ամեն ազգ սկսեց ընդօրինակել ֆրանսիական կյանքը և նրա լեզուն համաշխարհային դարձավ: Իր ժամանակը կոչվում է «Լուի ԺԴ-ի դար»:

Ներքին ուժերը կազմակերպելուց հետո, ֆանսիացիք սկսեցին միջամտել արտաքին քաղաքականության: Ռիշլիոն ջանաց տկարացնել Գերմանիան, զգալով որ նա իր ապագա մրցակիցն է դառնալու: Այս պատճառով երեսնամյա պատերազմի ժամանակ, երբ Գերմանիան ջարդեց Դանիայի և Շվեդիայի ուժը, իսկույն ինքը Շվեդիային օգնության հասավ. Գերմանիան ջախջախվեց և նրա հետ էլ ընկավ Իսպանիան: Ֆրանսիացիների օգնությամբ Պորտուգալիան ձեռք բերեց իր անկախությունը և իրեն դաշնակից դարձավ (1640 թ.): Շվեդիան իրեն դաշնակից կամ զբաղված Արևելքում, Անգլիան ներքին կռիվներով պառակտված, Իտալիան քայքայված, Հոլանդիան թույլ, և միայն Ֆրանսիան էր, որ ամենից ավելի գերիշխան դիրք էր բռնում Եվրոպայում:

194. ԵՎՐՈՊԱՅԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՄ

Լուի ԺԴ-ը վստահելով իր գերիշխան դիրքի վրա, ուզեց նորանոր աշխարհակալություններով մեծացնել Ֆրանսիայի սահմանը: Պատճառ բերելով ինչ-որ ժառանգական հարց իսպանական գահի վերաբերմամբ, հարձակվեց Նիդեռլանդիայի հողերի վրա: Հոլանդացիք տեսնելով որ Ֆրանսիայի ախորժակը մեծ է և

ապագային վտանգը իրենց է հասնելու, Անգլիայի և Շվեդիայի հետ միացած, կազմեցին եռյակ դաշնակցությունը՝ ֆրանսիական արշավի առաջն առնելու համար: Ֆրանսիացիք վախեցան, հաշտություն կնքեցին դաշնակիցների հետ՝ գրավելով իսպանական Նիդեռլանդիայից մի մեծ մաս, որի մեջ նշանավոր էր Լիլը:

Ֆրանսիացիք ծածուկ աշխատեցին քանդելու Եռյակ դաշնակցությունը. Լուի ԺԴ-ը կարողացավ իր կողմը գրավել Շվեդիան: Անգլիայի Կարլոս Բ թագավորը կաթոլիկ լինելով և կռիվ ունենալով բողոքական ժողովրդի հետ, ծածուկ դաշինք կնքեց Ֆրանսիայի հետ, պայմանով որ ֆրանսիական բանակը մտներ Անգլիա ժողովրդական ապստամբության դեպքում: Այսպես երբ Հոլանդիան մնաց մենակ, Լուին հարձակվեց նրա վրա: Ֆրանսիական բանակն առաջացավ մինչև Ամստերդամ. հոլանդացիք վերջին դժվարության հասած, դիմեցին ծայրահեղ միջոցի. պատռեցին ծովի թումբերը* և թշնամի բանակը ջրահեղձ արին. ծովի վրա էլ ջախջախեցին ֆրանս-անգլիական միացյալ նավատորմը: Սրա վրա գերմանացիք և պրուսիացիք մեջ մտան և Ֆրանսիայի դեմ պատերազմ հայտարարեցին: Ֆրանսիացիք թողեցին Հոլանդիան և կռիվը շուռ տվեցին նրանց դեմ, որոնք քիչ էր մնում գրավեին Էլզասը. ֆրանսիացիք կորցնելով իրենց գլխավոր զորավարին, զիջեցին հաշտվել Գերմանիայի հետ՝ ստանալով Իսպանիայի հաշվին Ֆրանշկոնտեն (1679 թ.):

Լուին երրորդ անգամ դուրս եկավ Գերմանայի դեմ. առանց կռիվ հայտարարելու նա խլեց Ֆրանսիայի արևելյան գավառները մինչև Լուքսեմբուրգ և Ստրասբուրգ: Գերմանացիք տեսնում էին այս բոլոր հափշտակությունները, բայց չէին կարողանում դուրս գալ, որովհետև չափազանց զբաղված էին թուրքական արշավանքով: Դարձյալ հոլանդացիք եղան, որ կազմակերպեցին կռիվը և այս անգամ ավելի մեծ չափերով: Հոլանդիայի իշխան Վիլհելմը կարողացավ կազմել մի մեծ դաշնակցություն, որի մեջ մտան Գերմանիան, Իսպանիան, Շվեդիան, իտալական իշխանությունները. քիչ հետո ինքն էլ Անգլիայի թագավորությունն ընդունելով՝ Անգլիան էլ մտցրեց նրա մեջ. այսպիսով ամբողջ Եվրոպան Ֆրանսիայի դեմ դուրս եկավ: Պատերազմը տևեց 10 տարի. ֆրանսիացիք մեծ քաջություններ գործեցին, նույնիսկ հաղթեցին անգլիական նավատորմին, բայց թշնամիների

*թումբ - պատնեշ, պատվար (խմբ.):

բազմության առաջ իրենց ուժերն սպառվեցին, անգլիացիք ջարդեցին ֆրանսիական նավատորմը և ծովերի տիրապետությունը վերջնականապես իրենց ձեռքը վերցրին. վերջապես Ֆրանսիան ստիպվեց հաշտություն խնդրել և հրաժարվեց իր գրաված երկրներից՝ պահելով միայն Ստրասբուրգը (1697 թ.):

Չորրորդ անգամ սկսվեց պատերազմը դարձյալ իսպանական ժառանգության պատճառով: Իսպանիայի թագավորը մեռնելով, Լուի ԺԴ-ը պահանջում էր գահ բարձրացնել իր թոռ Փիլիպոսին, մինչդեռ Գերմանիայի կայսրն էլ դրել էր իր կրտսեր որդի Կառլոսի թեկնածությունը: Գերմանիային միացան Անգլիան, Հոլանդիան և Իտալիան: Լուին արշավեց Իսպանիա և երկիրը գրավեց. բայց անգլիացիք էլ գրավեցին Ջիբրալտարը և Պորտուգալիային տեր դարձան. մյուս կողմից դաշնակիցները գրավեցին Ֆրանսիայի հյուսիսային և արևելյան գավառները. հոլանդացիք մինչև Վերսալ առաջացան: Դրա վրա Լուին հաշտություն խնդրեց. իր բախտից այդ միջոցին Գերմանիայի կայսրը և նրա երեց որդին մեռնելով, գահին ժառանգ էր մնացել Կարլոսը: Դաշնակիցները չուզենալով միացնել Գերմանիայի և Իսպանիայի թագերը, համաձայնվեցին ճանաչել Փիլիպոսին իբրև Իսպանիայի թագավոր, պայմանով որ նա հրաժարվեր Ֆրանսիայի ժառանգությունից: Ֆրանսիան զրկվեց շատ հողերից. Ֆլանդրիայի մեծ մասը տվեց Ավստրիային, Հյուսիսային Ամերիկայի տիրապետությունների մի մասը Անգլիային, Սավոյիան վերադարձրեց Սավոյիայի դքսին, որ միացնելով նաև Պիեմոնտը և Սարդենիան՝ կազմեց առանձին թագավորություն. մյուս կողմից Անգլիան ստացավ Ջիբրալտարը, Ավստրիան առավ Բելգիան, Միլանոն և Նեապոլիի թագավորությունը, Հոլանդիան էլ բելգիական բերդերի շարքը՝ իբրև պատնեշ Ֆրանսիայի դեմ (1714 թ.):

Այսպես քայքայվեց Ֆրանսիան, բանակն ուժասպառ եղավ, տնտեսական կառուցվածքը կործանվեց, ժողովուրդը աղքատացավ, երկիրը մեծ պարտքի տակ ընկավ և միապետական կառավարությունն իր ամբողջ հմայքը կորցրեց:

195. ՇՎԵԴԻԱՅԻ ՍԵՇՈՒԹՅՈՒՆԸ

Կալմարյան դաշնադրությունը, որ Սկանդինավիայի երեք պետությունները միացրել էր, տևական չեղավ. վերջնականապես

քայքայվեց նա 1448 թվականին Շվեդիայի բաժանմամբ: Այնուհետև Շվեդիան սկսեց առաջ դիմել և գերիշխան դիրք ստանալ հյուսիսում: Գուստավ Վազան, որ լութերական դավանանքը մտցրեց Շվեդիայում, կազմակերպեց մեծ բանակ և սկսեց շարժվել դեպի Բալթիկ ծովի արևելքն ու հարավը: Այս ժամանակից Շվեդիան կռիվ սկսեց գրեթե միաժամանակ Դանիայի, Գերմանիայի, Լեհաստանի և Ռուսիայի դեմ: Գուստավ Վազան հաջողեց հաղթել թե՛ Հանսեենյան դաշնակցության և թե՛ ռուսներին, որով գրավեց Բալթիկի հարավային և արևելյան կողմերը, բայց իր հաջորդները այդ հողերը հետ տվեցին: Դանիացիք առաջ եկան և Շվեդիայի հյուսիսային կողմերը գրավեցին:

Այդ շրջանին գահ բարձրացավ Գուստավ Ադոլֆը, Շվեդիայի մեծագույն թագավորը, որ միաժամանակ կռիվ սկսեց բոլոր կողմերի վրա: Նախ դրամով հետ դարձրեց դանիացիներին և նրանց գրաված հողերը հետ վերցրեց. հետո հարձակվեց ռուսների վրա, հաղթեց և գրավեց Բալթիկի ծովեզերյա գավառները՝ Ինգրիան, Կարելիան. միջամտեց Երեսնամյա պատերազմին և ամբողջ Գերմանիան ասպատակելով՝ հաշտության ժամանակ Շվեդիան ստացավ Պոմերանիան (1643 թ.):

Լեհացիք մի կողմից ռուսների և մյուս կողմից օսմանցիների դեմ կռվի բռնված, չկարողացան միջամտել Երեսնամյա պատերազմին, բայց երբ շվեդացիք հաստատվեցին Պոմերանիայում, տեսան իրենց սպառնացող վտանգը և այլևս չէին կարող լուռ մնալ: Լեհացիք սկսեցին նույնիսկ պահանջներ դնել Շվեդիայի գահի վերաբերմամբ. դրա վրա Շվեդիայի Կարլոս Ժ թագավորն արշավեց Լեհաստան, Վարշավայի մոտ հաղթեց լեհերի թագավորին և 3 ամսում ամբողջ երկրին տեր դարձավ (1655 թ.):

Այս արշավանքից սարսափած, իսկույն գերմանացիք, դանիացիք և ռուսները դաշն կապեցին և պատերազմի դուրս եկան Շվեդիայի դեմ: Կարլոսն իր ամբողջ ուժը դարձրեց դանիացիների վրա, քշեց նրանց Շվեդիայի հարավում գրաված երկրներից, սառած նեղուցի վրայով իր բանակը մտցրեց Դանիա և գրավեց Կոպենհագենը: Կռիվը շարունակվեց փոփոխակի հաջողությամբ, մինչև որ Հոլանդիան և Ֆրանսիան միջամտելով կռվող կողմերին հաշտեցրին: Շվեդիան ստիպվեց թողնել Լեհաստանը, բայց Բալթիկի ափին ստացավ Ինգրիան, Կարելիան, Էստոնիան և Սլավոնիան:

Ֆրանսիական պատերազմի ժամանակ Լուի ԺԴ-ը փնտրեց Շվեդի բարեկամությունը, և շվեդացիք մեկ այս և մեկ մյուս կողմը հարելով, պահեցին իրենց գերմանական հողերը Բալթիկի վրա:

196. ՄՈՒՀԱՄՄԵԴ Դ. ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Օսմանցիք իրենց ընկած փառք նորից փորձում են բարձրացնել Մուհամմեդ Դ-ի ժամանակ. Քյոփրիլիների տոհմը վեզիրության կանչվելով, կարճ ժամանակում վերջ է դնում ներքին խռովություններին, կարգի է բերում աղքատ գանձարանը, վենետիկցիներից խլում է զանազան տեղեր, Տրանսիլվանիան վերածում է վասալական իշխանության և հետո արշավում է Հունգարիայի վրա: Օսմանցիք արագությամբ առաջ քայլելով՝ սպառնում էին Վիեննային: Նրանց հաջողությունն այնչափ մեծ էր, որ Ֆրանսիայի թագավոր Լուի ԺԴ-ը մի րոպե մոռանալով իր ոխը, 10 000-անոց մի ընտիր բանակ օգնության ուղարկեց գերմանացիներին: Գերմանացիների, ավստրիացիների, ֆրանսիացիների և հունգարացիների միացյալ բանակը ջարդուփշուր արեց թուրքերին, որոնք թողեցին կռվի դաշտը և հետ փախան, պահելով իրենց միայն Տրանսիլվանիան և Հարավային Հունգարիան:

Օսմանցիք իրենց պարտության վրեժը հանեցին արշավելով Կրետեի վրա, որ խլեցին վենետիկցիների ձեռքից (1669 թ.): Պատմության մեջ ավելի մեծ պաշարում տեսնված չէ քան Կրետեի բերդի պաշարումը, որ 25 տարի տևեց. օսմանցիք 56 անգամ հայտնի և 45 անգամ ստորերկրյա հարձակում գործեցին. պաշարվածները 1160 ական պայթեցրին, իսկ օսմանցիները՝ սրա երեք անգամը. քաղաքացիք 50000 մարդ կորցրին, իսկ տաճիկներն ավելի քան 100 000: Օսմանցիք հետո արշավեցին Լեհաստան և գրավեցին Պոդոլիան և Ուկրաինան: Լեհ հռչակավոր զորավար Յան Սոբիեսկին վրա հասավ, Խոտինի մոտ ջարդեց նրանց և Ուկրաինան հետ առավ (1673 թ.): Այս քաջության վրա լեհերը նրան թագավոր ընտրեցին:

Այս միջոցին օսմանցիների վեզիրը դարձավ Կարա-Մուստաֆա փաշան, որ մտածեց գործադրել Սուլեյմանի ծրագիրը, արշավել Գերմանիա և նրա արևելյան գավառները խլելով կազմել մի մեծ մահմեդական պետություն, որի մայրաքաղաքը պիտի լիներ

Վիեննան: Այս մտքով նա հավաքեց 150000 զորք և մի հունգարացի դավաճանի խորհրդով, որին խոստացել էր Հունգարիայի իշխանությունը, առանց որևէ քաղաքի առաջ կանգ առնելու, ուղղակի առաջացավ Վիեննա և պաշարեց (1683 թ.): Այս արշավանքն այնքան արագ կատարվեց, որ գերմանացիք ժամանակ չունեցան պատրաստվելու և քաղաքն իր բախտին թողեցին: Վիեննան միայն 10000 զորք ուներ. մի քանի գունդեր էլ քաղաքացիներից և ուսանողներից կազմվեցին. քաղաքացիք հուսահատությամբ կռվեցին. 18 հարձակում նրանք հետ մղեցին և 24 անգամ դուրս հարձակվեցին: Արդեն պարիսպները փլած, բանակի կեսը ջարդված և վիրավոր, մնացածը հիվանդ կամ հուսահատ էր, երբ կայսրը կարողացավ կազմակերպել իր բանակը, որի լավագույն մասը կազմում էր Յան Սոբիեսկին՝ լեհական քաջ զորքով: Ենիչերիները կատաղությամբ կռվեցին, բայց երբ Սոբիեսկին իր զորքով առաջ խոյացավ, նրանք այլևս չդիմացան ու փախան:

Վիեննայի ճակատամարտը վերջին հարվածը հասցրեց օսմանյան պետության. մի քանի անգամ բանակ կազմեցին, կռվի դուրս եկան, բայց միշտ ջարդվեցին և սկսեցին հետզհետե հետ քաշվել. կայսրը տիրեց Հունգարիային, վենետիկցիք գրավեցին Մորան, լեհերը՝ Պոդոլիան, ռուսներն արշավեցին Ղրիմ: Կարլովիցի դաշնադրությամբ օսմանցիք ամբողջապես թողեցին Դանուբի ձախ ափը (1699 թ.):

197. ՖՈՐՄՈԶԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Չինաստանի և Ճապոնիայի միջև, Կանտոնի դեմ, ընդարձակ մի կղզի է Ֆորմոզան: Չին-մանջուրական խռովությունների ժամանակ հոլանդացիք տեր էին դարձել նրան: Նշանավոր մի չին ծովահեն, 3 000 նավերի մի տորմիղ կազմելով, այս ծովերի իշխանությունը գրավել էր և Չինաստանի, Հնդկաստանի, իսպանացիների և հոլանդացիների ամբողջ վաճառականության տեր էր դարձել: Մանջուրական կռիվների ժամանակ մի թաթար զորավար հանկարծակի բռնեց նրան և Պեկինի պալատը տարավ: Սրան որպես վրեժ, որդին հարձակվեց Կանտոնի վրա: Երբ Կանտոնը մանջուրական կայսեր կողմից գրավվեց և ավարի տրվեց (1650 թ.), ծովահենն անձնատուր չեղավ, այլ չինական

նավատորմի գլուխն անցած, շարունակ չինական ափերն էր ասպատակում: Կայսրը քանիցս զորք ուղարկեց նրա դեմ, բայց չկարողացավ հաղթել: Վերջապես ծովահենը մտածելով, որ չի կրնար այսպես երկար շարունակել և հաստատուն մի կռվան ունենալու համար, Ֆորմոզա կղզու վրա հարձակվեց և երկար պատերազմներից հետո հոլանդացիների ձեռքից գրավելով, իր իշխանությունն այնտեղ հաստատեց: Այստեղ ամրացած, հիմա ավելի լավ պիտի կարողանար կռվել կայսեր նավատորմի դեմ, որի դեմ շարունակ հաղթող ելնելով, Չինաստանի ծովամերձ գավառները իր սարսափի տակ էր պահում: Վերջապես կայսրը մի նոր հնարք մտածեց. հրամայեց ամբողջ ծովեզերյա բնակչության՝ լքել իրենց տունն ու տեղը և ծովից 3 փարսախ հեռու միայն բնակություն հաստատել: Այս հրամանի գործադրությունից հետո, գետնի երեսից սրբեց բոլոր քաղաքները, գյուղերը, ավաններն ու բերդերը և ծովային վաճառականությունը բացարձակապես արգելեց: Հազարավոր ընտանիքներ, որ ձկնորսությամբ էին ապրում, հետին թշվառության մատնվեցին: Բայց այս տարօրինակ միջոցը իր արդյունքն ունեցավ. ծովահենն այլևս ավարելու բան չունեցավ և իր ավազակները վարձատրություն չգտնելով՝ ծովահենին լքեցին և հեռացան. Ֆորմոզա կղզին անձնատուր եղավ (1684 թ.):

198. ՄԵԾ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

16-րդ դարում ուզբեկները Սամարղանդի վրա հարձակվեցին. Թիմուրլենկի (Լենկ Թեմուր) ծոռը Բաբեր, գահը թողնելով, փախավ Աֆղանիստան: Այս եռանդուն մարդը, իր գահը նորից ձեռք ձգելուց հուսահատ, որոշեց տիրել Հնդկաստանին, իբրև պապենական ժառանգություն: Այն ժամանակ, երբ Թիմուրլենկը ավերելով Դելիին (Դելի) հեռացել էր, իսկույն հինդուստանցիք վերադարձել և իրենց իշխանությունը նորոգել էին Դելիիի և նրա շրջակա փոքր տարածության վրա: Բաբերը տեսնելով այդ պետության թուլությունը, 2000 աֆղան հավաքեց իր գլուխը և Քաբուլին տիրելուց հետո արշավեց Հնդկաստան: Նա գրավեց Դելիին և ջնջելով Հինդուստանի թագավորությունը, հիմնեց Մեծ մոնղոլների կայսրությունը (1526 թ.): Շրջակա բոլոր հնդիկ իշխանությունները իրար հետևից նվաճվեցին և Բաբերը երեք տարվա մեջ հասավ

մինչև Հնդկաստանի կեսը: Նրա թոռը՝ Աքբարը իջավ ավելի հարավ: Այս ժամանակ Հնդկաստանը դարձավ մի բարեկարգ երկիր. Դելիի մայրաքաղաքը զարդարվեց ճոխ ու գեղեցիկ շենքերով և աշխարհի նշանավոր քաղաքներից մեկը դարձավ: Աքբարը տեսնելով, որ երկրի գլխավոր պակասությունը երկու ցեղերի և երկու կրոնների հակամարտությունն է, աշխատեց ըստ կարելվույն վերացնել այդ: Հնդիկներին, որ առաջ համարվում էին ստոր դասակարգ և զրկված էին պետական ծառայությունից, առաջ քաշեց և պետական պաշտոնների հասցրեց, իբրև հավասար մահմեդականի: Նա պահանջում էր կրոնական համբերողություն և նույնիսկ երկու կրոնների միացման համար ջանքեր գործ դրեց. նա քարոզում էր, թե մի է Աստված, իսկ դավանանքը նշանակություն չունի: Իր սկզբունքն էր «Մի է Աստված, և Աքբարն է խալիֆան»:

Նախորդների փառավոր գործը շարունակում է Ավրենգզեբը և նվաճում է Հնդկաստանի գրեթե մինչև ծայրը. մոնղոլների պետությունն արդեն իր փառքի գագաթնակետին է հասնում (1687 թ.): Բայց նրա սխալ քաղաքականությունը պատճառ է դառնում երկիրն ու պետությունը քայքայելու: Ավրենգզեբը մոլեռանդ մահմեդական էր. նա հրամայում է մինչև անգամ քանդել հնդկական նշանավոր մեհյանները և նրանց տեղ մզկիթ կառուցել. հնդիկները նորից զրկվում են իրավունքներից և ամեն պաշտոն հանձնվում է մահմեդականներին:

Այս բռնությունների վրա հնդիկներն ապստամբում են: Նրանց լավագույն մարտիկները, կռվասեր ու հայրենասեր մարդկանց մի խումբ, քաշվում են Հնդկաստանի արևմտյան կողմը (Բոմբեյից հարավ) մի ամուր վայր և կազմակերպում հնդկական մի նոր համայնք Մահարատտա անվամբ, որի գլուխն է կանգնում Սիվաջին: Նա նորոգում է բրահմանական կրոնն ու հին հնդկական օրենքները իրենց բոլոր խստությամբ: Մահարատտաները հայտարարում են իրենց անկախ թագավորություն և կռիվ են սկսում Մեծ մոնղոլների կայսրության դեմ: Նրանք թեև շատ փոքրաթիվ, բայց այնպես լավ կազմակերպված էին, որ այն ահագին կայսրության դեմ կարողացան հաջող կերպով կռվել, նրանց մեծամեծ բանակները խորտակել: Նույն միջոցին ծագեց և մի ուրիշ թշնամի տարր: Նանակ անվամբ մեկը Փենջաբում հիմնեց մի նոր կրոն, որ կոչվում էր Սիկհի և մահմեդական ու բրահմանական կրոնների ձուլումից էր ձևացած. նա նորից

քարոզեց և ունեցավ բազմաթիվ հետևորդներ: Որչափ ժամանակ որ մոնղոլները չէին խանգարում նրանց, սիկհիները հանդարտ մարդիկ էին. բայց հանկարծ քաղաքականությունը փոխվելով, մոնղոլներն սկսեցին հալածել սիկհիներին և նրանց գլխավորներին բռնելով սպանեցին: Սիկհիները կատաղեցին և նրանց կրոնը նոր ձևափոխություն ստանալով, դարձավ մարդասպանների մի աղանդ: Ուր որ մի սիկհի պատահեր մի մահմեդականի, իր սրբազան պարտքն էր սպանել նրան: Այսպես սկսեցին երկու կողմից իրար ջարդել. մոնղոլները հաղթող դուրս եկան և սիկհիների վերջին մնացորդները, մանր ավազակախմբեր կազմած, ստիպվեցին քաշվել Հիմալայի անմատչելի բարձունքները, որտեղից ստեպ -ստեպ հարձակվում էին մահմեդականների վրա և կոտորում:

Այս միջոցին մեռավ Ավրենգզեբը և իրեն հետ քայքայվեց Մեծ մոնղոլների կայսրությունը (1707 թ.):

199. ԳԱԼԴԱՆԸ ԵՎ ՕԼԵԹՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Օլեթները մոնղոլական ժողովուրդ էին, որ Չինաստանի հյուսիսային կողմն էին բնակվում: Սրանց ցեղապետներից մեկը՝ Կալդանը, որ ավելի Քոնքայշ մականվամբ է ծանոթ, Չինգիզ-Խանի նման ցանկացավ հիմնել մոնղոլական մի մեծ կայսրություն: Նախ նվաճեց և իր ձեռքի տակ միացրեց իրենց հարակից բոլոր մոնղոլ ցեղերը և նրանց թագավոր դառնալով, Դալայլամայի օրհնությունը խնդրեց: Սրա նվիրագործությունն ստանալուց հետո, գնաց կալգաների վրա: Սրանք նույնպես մոնղոլական մի ցեղ էին, որ Չինաստանից վտարվելով, եկել, հաստատվել էին այն հողերի վրա, ուր ծագում էր առել Չինգիզ-Խանի պետությունը: Կալգաներն իրենց բոլոր ուժերը հավաքեցին և 100 000-ից ավելի ստվար բանակով եկան նրա դեմ. Գալդանը ջարդեց նրանց և տեր դարձավ նրանց հողերին: Այսպիսով Սամարղանդը, Բուխարան, Յարքանդը, Քաշկարը, Թուրֆանը և Քամուլը մտան նրա իշխանության տակ: Կարծես կրկնվում էր ճիշտ այն ծրագիրը, որ բռնել էր Չինգիզ-Խանը:

Այս ժամանակ Չինաստանի մանջուրական պետության գլուխն էր Կանգ-հի կայսրը: Կալգաների խանը դիմեց նրան և հպատակություն հայտնելով՝ նրա օգնությունը խնդրեց: Կայսրը արդեն տեսել էր վտանգը. ուստի շուտով նրա առաջն առնելու

համար երկու մեծ բանակ ուղարկեց Կալդանի վրա և նրանց հետևից էլ ինքը ճանապարհ ընկավ դեպի Թաթարիստան: Կալդանը պարտվելով, հպատակություն հայտնեց (1690 թ.):

Բայց Կալդանի հպատակությունը ձևական էր. կայսրը զգաց, որ նա հարմար առիթի է սպասում նորից ընդվզելու, ուստի նորանոր բանակներ ուղարկելով նրա վրա, երկիրը պահում էր հնազանդության մեջ: Վերջապես ինքն անձամբ մեծ բանակով ճանապարհ ելավ և մինչև Հոանգ-հո գետն առաջացավ: Այստեղ եկան նաև Կալդանի դեսպանները և հպատակություն հայտնեցին: Բայց կայսրը պահանջեց, որ Կալդանն անձնատուր ըլլա: Եվ մինչդեռ այս բանակցությունների մեջ էին, Կալդանը մեռավ և իր ծրագիրն անկատար մնաց (1697 թ.): Ամբողջ պետությունը մինչև Պարսկաստանի սահմանը չին-մանջուրական պետության ձեռքն անցավ:

200. ՊԵՏՐՈՍ ՄԵԾ. ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ռուսները 250 տարի թաթարների ձեռքի տակ մնացին. Թիմուրլենկը, որ մինչև Մոսկվա արշավեց, թեև չկարողացավ նվաճել Ղփչաղի պետությունը, բայց մեծ հարված հասցնելով նրանց, պատրաստեց ռուսների ազատագրությունը: Այս գործի գլուխն անցավ Իվան Գ-ը, որ դաշնակցելով Կասպից ծովի մոտիկ Նողայ թաթարների հետ, դուրս եկավ կռվելու մոնղոլական տիրապետության դեմ: Նա նվաճեց նրանց, Ղազանի և Աստրախանի թաթարներին վասալ դարձրեց, հետո արշավեց ռուսական զանազան հանրապետությունների վրա, և այսպես ամբողջ Ռուսաստանն իր գայիսոնի տակ միացնելով, ստացավ ցար տիտղոսը:

Ամբողջական Ռուսաստանը կազմելուց հետո, ռուսներն իրենց առաջ ունեցան երկու նպատակ. նախ՝ քաղաքակրթվել ու եվրոպական ազգերին նմանվելու աշխատել և երկրորդ՝ իրենց տիրապետությունը տարածել շրջակա ազգերի վրա: Առաջին նպատակի վրա աշխատանք են թափում թագավորները հենց Իվան Գ-ից սկսած. մշակվում են օրենքներ, արհեստները քաջալերվում են, տպագրության արվեստը Մոսկվա է մտնում:

Բայց ռուսներն ավելի հետամուտ են լինում աշխարհակալության. Իվան Գ-ը կռիվ է սկսում Լեհաստանի դեմ և գրավում է Լիթվանիայի մի մասը. Իվան Դ-ի ժամանակ նվաճվում են Ղազանի և Աստրախանի թաթարական խանությունները,

կոզակները հետ քշվելով, ռուսները հասնում են Սև ծով: Երմակը նվաճում է Սիբիրը (1580 թ.), նովգորոդցիք ուզենալով միանալ Լեհաստանին, ցարն սկսում է մի ահեղ կոտորած և 60 000 հոգի ջարդում է:

Ռուսաստանը սրանից հետո խեղճանում է. Ղրիմի թաթարներն արշավում են Մոսկվա և այրում, շվեդացիք գրավում են Էստոնիան, լեհերը գրավում են Կուրլանդիան և Լիվոնիան: Շուտով ծագում են գահակալական կռիվներ և ժողովրդական ապստամբություններ, որոնցից օգուտ քաղելով, լեհերը մտնում են Ռուսաստան և գահին տիրանում: Նրանց դեմ ապստամբություն է ծագում և լեհերը Մոսկվան այրելով փախչում են: Ռուսները նորից են միանում և գահ բարձրացնում Միխայիլ Ռոմանովին (1613 թ.):

Ռոմանովների տոհմը նոր փայլ տվեց Ռուսաստանին. երկիրն ավելի քաղաքակրթվեց, ավելի մոտեցավ եվրոպական կյանքին և միանգամայն ավելի մեծացավ ու հարստացավ: Այս մեծ գործը կատարողն եղավ գլխավորապես Պետրոս Մեծը (1682-1725 թթ): Նա ջենովացի, գերմանացի և հոլանդացի վարպետների ձեռքով կազմակերպեց եվրոպական բանակ և ընտիր նավատորմ, որով առաջին անգամ Ազովը պաշարեց և գրավեց: Նա անձամբ ճանապարհորդեց Հոլանդիա, Անգլիա, Ավստրիա և Ֆրանսիա, ծանոթանալու համար եվրոպական քաղաքակրթության. նա Հոլանդիայում աշխատում էր իբրև հասարակ բանվոր. երբ վերադարձավ Ռուսաստան, բաց արեց նավաշինության և մաթեմատիկական դպրոցներ. 1700 թվականին հիմնեց Նևայի գետաբերանում մի նոր քաղաք, որ իր անունով կոչվեց Ս. Պետերբուրգ. այստեղ փոխադրեց իր աթոռը Մոսկվայից և սա եղավ նոր եվրոպական քաղաքակրթության օրինակը Ռուսաստանում:

Լեհաստանի գահի համար նույն ժամանակ վեճ էր սկսվել երկու թեկնածուների միջև. մեկի կողմը բռնել էր Պետրոս Մեծը, մյուսի կողմը՝ Շվեդիայի Կարլոս ԺԲ թագավորը: Այս եղավ պատճառը մի մեծ պատերազմի երկու տերությունների միջև. Կարլոսը 15 000 զորքով Ռուսաստան արշավեց, ջարդեց նրանց 60 000 զորքը, քայլեց Լեհաստան, խլեց նրանց ձեռքից Բալթյան նահանգները և մինչև Ռուսաստանի սիրտը առաջացավ: Ռուսները շարունակ հետ էին քաշվում՝ այրելով իրենց հետևից ամեն ինչ: Կարլոսը հասնելով Ռուսաստանի ներսերը, ձմեռվա սաստիկ ցրտին, հանկարծ դեմ առ դեմ գտնվեց ռուսների կազմակերպած նոր բանակին. Պոլտա-

վայում տեղի ունեցավ մեծ ճակատամարտը երկու վեհապետների միջև. Կարլոսը հաղթվեց և վիրավորվելով փախավ Բեսարաբիա՝ հանձնվելու օսմանցիներին: Նույն միջոցին Պետրոսը գրավեց Շվեդիային պատկանող երկրները՝ Էստոնիան, Կարելիան, Ֆինլադիան, ոտքի հանեց դանիացիներին, բայց մինչդեռ ինքն այս արշավանքներով էր զբաղված, օսմանցիք գրգռվելով Կարլոսից, կռվի դուրս եկան ռուսների դեմ: Պետրոսը հաղթվեց օսմանցիներից և քիչ էր մնում գերի ընկներ նրանց ձեռքը, եթե կաշառքով և Ազովը հետ տալով չազատվեր: Կարլոսը շտապեց իր երկիրը և ռուսների հետ բանակցեց հաշտության մասին:

Այսպես Ռուսաստանը դարձավ Արևելյան Եվրոպայի մեծագույն պետությունը. Լեհաստանը և Շվեդիան ընկան, որոնց անկումից պիտի օգտվեր մի ուրիշ աննշան պետություն, որ էր Պրուսիան:

201. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՁԳՏՈՒՄՆԵՐԸ ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ

Մինչդեռ հայերն ամեն տեղ գտնվում էին ճնշված դրության մեջ, Ղարաբաղում ունեին ներքին ինքնավարություն՝ պարսիկ խաների գերիշխանության տակ: Երկիրը, որ 200 000 հայ և 100 000 մահմեդական բնակչություն ուներ, բաժանված էր հինգ գավառի, որոնցից յուրաքանչյուրի վրա իշխում էր մի մելիք: Մելիքի իշխանությունը ժառանգական էր ուղիղ գծով. նա ուներ իր բանակը և բերդերը, կառավարում էր ժողովուրդը, դատերն էր վարում, հարկ էր հավաքում և առհասարակ ծառայում էր իբրև միջնորդ ժողովրդի և պարսիկ խաների միջև:

Թեև այս վիճակն ամեն տեղից ավելի տանելի էր, բայց Ղարաբաղի ազատասեր ժողովուրդը չուզենալով մնալ մահմեդական լծի տակ, մտածեց մի քրիստոնյա պետության հովանավորության տակ մտնել և նրա օգնությամբ անկախություն ձեռք բերել: Այս նպատակով մելիքները միացան և մի դեսպանություն ուղարկեցին Եվրոպա: Դեսպանության գլուխն էին Իսրայել Օրի հնդկահայը և ղարաբաղցի Մինաս վարդապետը: Նրանք դիմեցին Բավարիայի մեծ իշխանին, որ երկրի հեռավորությունը պատճառ բերելով, հորդորեց դիմել ռուսների Պետրոս Մեծ կայսեր և այս առթիվ հանձնարարական թուղթ էլ տվեց:

Բավական ժամանակ կար, որ հայերը ռուսների հետ առևտրական հարաբերության մեջ էին: Նոր Ջուղայի հայերը 1659 թվականին կայսեր նվիրել էին արևելյան ճաշակով գոհարազարդ ոսկե մի գահ և առանձին պատվիրակություն ուղարկելով կայսեր մոտ, կնքել էին առևտրական դաշնակցություն, որի համաձայն Հնդկաստանի և Պարսկաստանի թանկագին ապրանքները ազատորեն պիտի կարենային ներմուծել Ռուսիա: Դրանից հետո շատ վաճառականներ եկան հաստատվեցին Ռուսաստանի մեծ քաղաքները, ինչպես Նովգորոդ, Արխանգելսկ, Մոսկվա և Պետերբուրգ: Այս քաղաքներում բացվեցին հայ առևտրական տուներ: Ռուսների թագավորները, տեսնելով հայոց ընդունակությունը, աշխատեցին ամեն կերպ հրապուրել նրանց դեպի իրենց երկիրը և ահա Լեհաստանից ու Պարսկաստանից շատերը գաղթում են Ռուսաստան, արհեստներն ու վաճառականությունը ծաղկեցնում են. նրանք են որ Ռուսաստան են մտցնում շերամաբուծությունը, կերպասեղեն ու մետաքսեղեն գործելը:

Երբ Ղարաբաղի հայոց դեսպանությունը հասավ Պետրոս Մեծի մոտ, կայսրը շատ ուրախացավ, որովհետև հայոց մեջ տեսավ մի միջոց՝ Հայաստանին և Պարսկաստանին տիրապետելու (1706 թ.): Կայսրը բնականաբար իր բուն մտադրությունը թաքցնելով, սիրով ընդունեց հայոց առաջարկությունը և Մինաս վարդապետին պահեց Ռուսաստանում՝ վարելու համար բանակցությունները Ղարաբաղի մելիքների հետ, իսկ Իսրայել Օրին իբրև ռուսական դեսպան ուղարկեց Պարսկաստան՝ երկրի վիճակը լրտեսելու և հայոց ապստամբությունը պատրաստելու թաքուն նպատակով:

Արդեն լուրը տարածվել էր ամեն կողմ. հայերը պարսիկների տերության վախճանը հասած էին համարում. պարսիկները գրգռվել էին և պահանջում էին շահից՝ չընդունել կայսեր դեսպանին: Այնուամենայնիվ Օրին հասավ Պարսկաստան, ընդունվեց շահից և ապա վերադարձավ կայսեր մոտ՝ հայտարարելու թե հայերը մի նշանի են սպասում ապստամբության դրոշը բարձրացնելու:

Այս միջոցին տեղի ունեցավ աֆղանների արշավանքը, որ Կովկասից մինչև Սպահան տակնուվրա արեց Պարսկաստանը և գործի վիճակը բոլորովին փոխեց:

202. ՍՅՈՒՆՅԱՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ. ԴԱՎԻԹ-ԲԵԿ

Աֆղանիստանը պարսիկների գերիշխանության տակ ինքնավար մի տերություն էր, որ կառավարվում էր սեփական էմիրներով: 18-րդ դարի սկզբում նրանց էմիրը՝ Մահմուդը ապստամբեց պարսիկների դեմ և Կանտահար մայրաքաղաքից դուրս եկավ նվաճելու Պարսկաստանը: Նա ուղիղ արշավեց Սպահան մայրաքաղաքի վրա, որի արվարձանն էր կազմում Նոր Ջուղան: Այս քաղաքի հայերը դիմեցին պարսիկների թագավորին և իրենց պաշտպանության համար զորք խնդրեցին: Բայց շահը մտածելով, որ աֆղանները ոչ այլ ինչ են, եթե ոչ հասարակ ավազակներ, որոնք Նոր Ջուղայի հայոց անբավ հարստությունը կողոպտելով պիտի կշտանան ու հետ դառնան, ոչ միայն չօգնեց հայոց, այլև վարպետությամբ զինաթափ արեց նրանց: Աֆղանները գրավեցին Նոր Ջուղան, քաղաքը կողոպտեցին, հետո գրավեցին Սպահանը, թագավորին գահընկեց արին և էմիրը պարսից թագավոր հայտարարեցին:

Էմիր Մահմուդը եղավ ավազակ մի թագավոր: Թեև կեղծավորությամբ քրիստոնյաներին կրոնի ազատություն և եվրոպացիներին վաճառականական արտոնություն շնորհեց և սովը վերջացնելու համար գյուղերից քաղաք շատ ուտելեղեն փոխադրել տվեց, բայց մյուս կողմից քաղաքի 300 իշխաններին իրենց որդիներով կոտորեց, 3000 զինվորների, որ իրեն թիկնապահ էր ընտրել, բնաջինջ արեց, եվրոպացիների հարստությունը կողոպտեց, Նոր Ջուղան ավարեց և շատ մարդկանց սպանեց, շենքերը քանդեց փլցրեց, այնպես որ Նոր Ջուղան կործանվեց և այլևս չկարողացավ վերականգնվել: Սրանից հետո քուրդերից և աֆղաններից մի բանակ կազմելով, Շիրազի վրա արշավեց, որ 8 ամիս պաշարելուց հետո, սովով ու սրով կործանեց:

Այս արշավանքը տակնուվրա արեց Պարսկաստանը. թագավորի որդի Թահմազը փախավ Մազանդարան և այնտեղ իրեն Պարսկաստանի թագավոր հռչակեց:

Օսմանցիք առիթից օգուտ քաղելով Քուրդիստանը և Ատրպատականը գրավեցին. Վանի փաշան 25000 զորքով Թավրիզի վրա արշավեց. թեև քաղաքը երկրաշարժից քարուքանդ էր եղել, բայց բնակիչները քաջությամբ դիմադրեցին ու թեև իրենք էլ 30 000 զորք կորցրեցին, բայց թշնամի բանակից էլ 20 000 հոգի ջարդեցին. հետո քաղաքը նրանց հանձնելով, Արդաբիլ գաղթեցին:

Կովկասյան լեռներից լեզգիները, ուրիշ ավազակ ցեղերի հետ միացած, արշավեցին հարավ և մինչև Սևանա ծովն առաջացան. Ղարաբաղի պարսիկ խաները գլուխ բարձրացրին և սկսեցին իրար հետ կռվել: Մեծն Պետրոս, ռուսների կայսրը, օգուտ քաղելով այս շփոթություններից, զորավոր բանակով եկավ Կովկաս. Ղարաբաղի հայ մելիքները արդեն ազատության ժամը հնչած կարծեցին և վրացիների թագավորի հետ միասին, 40 000 զորքով ներկայացան նրան՝ իրենց ծառայությունն առաջարկելու Հայաստանի և Վրաստանի փրկության համար: Բայց Պետրոս կայսրը Դերբենդը, Շամախին, Բաքուն և Գիլանը գրավելուց հետո, թողեց քրիստոնյաներին ու հետ դարձավ (1722 թ.):

Հայերը լքվեցին: Սյունեցի մի կտրիճ՝ Դավիթ-Բեկ, որ Վրաստանում անուն հանած զորավար էր, 50 կտրիճ հայեր հավաքած իր գլուխը, անցավ իր հայրենիքը և ապստամբեց թուրք ու պարսիկ խաների դեմ: Նա հարձակվեց նախ ղարա-չոռլու կոչված ավազակ թուրք ցեղի վրա, ջարդեց և ցրեց նրանց: Այս առաջին հաջողությունից սիրտ առած, 400 հայեր խմբվեցին նրա դրոշակի տակ: Թուրքական ջիվանշիրների ցեղը, լսելով Դավթի գործերը, 16 000 հոգով արշավեցին նրա վրա. Դավիթն իր 400 հոգով նրանց դեմ ելավ և երկու օրվա կռվից հետո, ջարդեց ու փախցրեց նրանց: Դավթի համբավն արդեն ամեն կողմ տարածվեց և Սյունյաց զանազան կողմերից խումբ-խումբ հայեր դիմում էին Դավթի բանակը: Այսպիսով նրա զորքի թիվը հասավ 7000-ի, որից 2 000-ը գտնվում էր Դավթի ձեռքի տակ, մյուսները զանազան շրջաններում. նրանց վրա Դավիթ նշանակեց նոր զորավարներ, որոնցից գլխավորներն էին Մխիթարը, Տեր Ավետիք քահանան, Թորոս իշխանը և Ստեփանոս Շահումյանը:

Պարսիկների խաները, տեսնելով որ շարժումը հետզհետե սպառնալի է դառնում, շտապեցին միանալ և Դավթի վրա արշավել: Դավիթը հաղթեց բոլորին և նրանց բերդերից մի քանիսը գրավեց: Նա արշավեց նաև Նախիջևանի խանի վրա, բայց ագուլեցի հայոց դավաճանությամբ, պարտվեց նրանց ահագին զորության առաջ և քաշվելով իր երկիրը, հիմնեց Հալիձորի ամուր բերդը, իբրև իր աթոռանիստը (1724 թ.):

Դավթի զորապետները շարունակեցին կռիվը իրենց գավառներում: Բարգուշատի Ֆաթալի խանը 12 000 զորքով արշավեց Չավնդուրի Թորոսի վրա. իշխանն իր 4 000 զորքով նրա դեմ դուրս

եկավ. հաղթեց և փախցրեց. այդ միջոցին, Երեցվանիկի հայ մելիք Ֆրանգուլը դավաճանությամբ անցավ թուրքերի կողմը և Թորոսը շրջապատվելով, իր 3 000 քաջերի հետ ընկավ պատերազմի դաշտում: Թուրքերը սիրտ առած եկան պաշարեցին հայոց Մեղրի քաղաքը. տեղացիք սկսեցին դիմադրել, բայց անկարող էին դիմանալ պաշարողների ահագին զորության: Այդ միջոցին օգնության հասավ Շահումյանը 2000 զորքով. թուրքերը մնացին երկու սրի մեջ և այնպես ջարդվեցին, որ 11 000 դիակ թողնելով ցիրուցան եղան:

Այսպես կարճ ժամանակում Դավիթը մաքրեց Սյունիքը թուրքերից, խաների իշխանությունը խորտակեց և երկիրը իր իշխանության տակ առավ:

Հերթը հասավ օսմանցիների հետ կռվելուն:

Թահմազ շահը, որ նստում էր Մազանդարանում, իր երկիրն աֆղաններից ազատելու համար սկսել էր բանակցություններ վարել ռուսների հետ և խոստանում էր Կասպից ծովի եզերքի մի քանի քաղաքները նրանց տալ՝ օգնություն ստանալու հույսով: Երբ Պետրոս Մեծը առաջացավ դեպի Դերբենդ, Բաքու և Գիլան, օսմանցիք զայրացան և ռուսների ոտքը Արևելքից կտրելու համար՝ իրենց բանակը ուղարկեցին պարսիկների վրա:

Օսմանցիք արագությամբ գրավեցին Երևանը, Նախիջևանը, Թավրիզն ու Համադանը: Լսելով Դավթի ապստամբությունը, Հաջի Մուստաֆա փաշայի հրամանի տակ մի զորաբանակ էլ ուղարկեցին նրա վրա, Սյունյաց երկիրը նվաճելու համար: Դավթի զինվորները օսմանցիների արշավանքը լսելով, թողեցին ու փախան. այնպես որ նրա մոտ մնաց միայն 450 հոգի: Օսմանցիք ամեն կողմը գրավեցին և եկան Հալիձորը պաշարսցին: Դավիթ որոշեց մինչև վերջին շունչը կռվել: Օսմանցիք 7 օր ռմբակոծեցին բերդը, վերելակներով աշխատում էին ներս մտնել, բայց մեծ կոտորածով հետ էին մղվում շարունակ: 7-րդ օրը սոսկալի էր հարձակումը ...: Հանկարծ Մխիթար սպարապետը և Տեր Ավետիքը մի գումարտակով բերդի ծածուկ դռնից դուրս թռան և թափվեցին թշնամիների վրա: Շփոթությունն այնպես մեծ եղավ, որ օսմանցիք թողեցին ու փախան:

Օսմանցիք նոր զորք հավաքեցին և երկրորդ անգամ եկան Հալիձորը պաշարելու: Դավիթը մտածեց մի խորամանկ միջոց. գիշերանց մատակ ձիերի մի երամակ արձակեց նրանց բանակի վրա. բանակի ձիերը կատաղած սկսեցին այս ու այն կողմ վազել,

իսկ ինքը Դավիթ հարձակվեց թշնամու վրա, կոտորեց ու հետ փախցրեց (1726 թ.):

Թահմազ խանը լսելով Դավթի տարած հաղթությունը Պարսկաստանի թշնամի օսմանցիների դեմ, առանձին հրովարտակ ուղարկեց նրան և Սյունյաց երկրի իշխանաց իշխան հռչակեց՝ դրամ կտրելու իրավունք շնորհելով:

Դավիթը սակայն երկար չապրեց իր հաղթության պտուղը վայելելու համար և մեռավ իր իշխանության վեցերորդ տարում (1728 թ.):

Դավթի տեղ հաջորդ ընտրվեց Մխիթար զորավարը: Օսմանցիք նոր բանակով արշավեցին Հալիձորի վրա և բերդականների ներքին անհամաձայնության պատճառով, գրավեցին և բնակիչներին սրի քաշեցին: Մխիթարը փախավ և նոր զորք հավաքելով, գրավեց մի քանի տեղեր: Նա ամրացավ Խնձորեսկ բերդի մեջ, մի քանի հայեր դավաճանությամբ նրա գլուխը կտրեցին և Թավրիզի փաշային տարան (1729 թ.): Մխիթարի մահվան վրա, հայերն ամեն կողմից լքված, ռուսաց պետությունից ոչ մի օգնություն չստանալով, ստիպվեցին ընդունել օսմանցիների լուծը:

203. ՆԱԴՐՇԱՀԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Օսմանցիների գրված գավառներից դուրս, Պարսկաստանը երկուսի էր բաժանված. հյուսիսային մասում իշխում էր Թահմազը, իսկ հարավային մասում աֆղանների թագավոր Էշրիֆը: Երկուսն էլ աշխատում էին իրար խորտակել և իրենց իշխանությունը ամբողջ Պարսկաստանի վրա տարածել: Թահմազի կողմը ավելի զորացավ. նրա զորավարներից Նադրը մի քանի անգամ ճակատեց Էշրեֆի դեմ և վերջապես նրան բռնելով՝ սպանեց: Թահմազ շահն այն ժամանակ մտավ Սպահան և պարսիկների թագավորությունը նորոգեց:

Այդ ժամանակից պարսիկներն սկսեցին մի պատերազմ՝ երկու ճակատի վրա. արևելյան կողմը աֆղանների դեմ, արևմտյան կողմը օսմանցիների դեմ: Օսմանցիք պատրաստություն չունենալով, Թավրիզը թողեցին և քաշվեցին Երևան, բայց շուտով նոր բանակ կազմած՝ մինչև Համադան արշավեցին: Նադիր շահն զբաղված էր Աֆղանիստանում Հերաթի պաշարմամբ, ուստի Թահմազ շահը անձամբ դուրս եկավ օսմանցիների դեմ, բայց չարաչար

հաղթվեց և ստիպվեց Երասխից այն կողմ գտնված երկրները օսմանցիներին թողնել (1732 թ.):

Նադր շահը աֆղաններին հաղթելուց հետո, վերադարձավ Սպահան և երբ լսեց Թահմազի պարտությունը, կատաղեց, նրան գահընկեց արեց և բանակի գլուխն անցած՝ դեպի Բաղդադ արշավեց օսմանցիների վրա: Տիգրիսի մոտ տեղի ունեցավ պատերազմը, ուր օսմանցիք չարաչար պարտվեցին: Նույն միջոցին Ղարաբաղի մելիքները իրենց մեջ դավադրություն կազմելով, տոնական մի գիշեր կոտորեցին իրենց երկրում գտնված ամբողջ օսմանյան զորքը (1733 թ.): Սակայն Նադրը չկարողացավ իր սկսած գործը շուտով վերջացնել. Բելուջիստանը ապստամբվեց պարսիկների դեմ. Նադրը գնաց, ապստամբությունը զսպեց և զենքը նորից դարձրեց օսմանցիների դեմ: Օսմանցիք երկու փաշաների առաջնորդությամբ 80 000 զորքով իր վրա էին գալիս. Նադրը նրանց դեմ գնաց և Ախուրյան գետի առաջ այնպիսի ջարդ տվեց, որ բանակը ցիրուցան եղավ անթիվ դիակներ թողնելով դաշտում. նրանց թվումն էին նաև երկու փաշաները:

Այս փառավոր հաղթությամբ Նադրը տեր դարձավ Հայաստանի մեծ մասին և Վրաստանին. բայց որովհետև նա միտք ուներ պարսիկների գահը հափշտակելու, ուստի օսմանցիների հետ հաշտվեց՝ նրանց համար նպաստավոր պայմաններով: Հետո բանակ դրեց Մուղանի լայնատարած դաշտում, հրավիրեց այնտեղ պարսից խաներին, հայոց կաթողիկոսին ու մելիքներին, Էջմիածնի աթոռին զանազան պարգևներ արեց, հայ գերիներին ազատեց, մելիքներին իրենց իշխանության մեջ վերահաստատեց և մեծ փառավորությամբ թագավոր պսակվեց (1736 թ.):

Թագավոր դառնալուց հետո, Նադրշահն սկսեց մի նոր արշավանք դեպի արևելք: Նա մտավ Աֆղանիստան և Կանդահարն ու Քաբուլը գրավելուց հետո Ինդոսն անցնելով մտավ Հնդկաստան և Դելիի մայրաքաղաքի վրա գնաց: Մեծ մողոլների պետության ինքնակալը դուրս եկավ նրա դեմ. չարաչար պարտվելով սակայն, թշնամու գթությանն ապավինեց: Նադրշահն իբր վասալ նրան նորից իր գահի վրա նստացրեց (1739 թ.): Այսպես Հնդկաստանը հարկատու դարձնելուց հետո, հնդկական ահռելի ավարով Նադրշահը ետ դարձավ, մտավ Հերաթ, Բալխն ու Բուխարան նվաճեց, ուզբեկների պետությունը և Խորեզմի թագավորությունը վասալ հռչակեց և դարձավ Մեշեդ մայրաքաղաքը:

Դրանից հետո Նադրշահը դարձյալ սկսեց պատերազմն օսմանցիների դեմ. Երևանի առաջ տեղի ունեցավ մի մեծ ճակատամարտ, ուր 20 000 օսմանցի կոտորվեց: Այս պատերազմն եղավ վերջինը. այնուհետև երկու կողմերը հաշտվեցին և Արևելյան Հայաստանը, հին կարգի համաձայն, մնաց պարսիկների ձեռքում (1746 թ.): Նադրշահը գրավեց նաև Դերբենդը, Բաքուն և Շամախին ռուսների ձեռքից, որով ամեն ինչ հին վիճակին վերածվեց և հայոց ազատական ձգտումները խեղդվեցին:

204. ՊՐՈՒՍԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Պրուսիացիք սլավոնական մի վայրենի ցեղ էին, որ բնակվում էին Բալթիկ ծովի եզերքը. 10-րդ դարի սկզբին Գերմանիայի կայսրները երկրի արևելյան սահմաններն այս ավազակներից պահելու համար Օդերի արևմտյան կողմը հիմնեցին Բրանդեն-բուրգի սահմանապահությունը:1417 թվականին Հոհենցոլեռնի Ֆրեդերիկ Ա-ը կայսրից գնեց այս դքսությունը, որ հետո իր ցեղին ժառանգական դարձավ: Դքսությունը տարածվեց Օդերի երկու կողմը՝ գնելով նորանոր հողեր. իբր ավատ ստացավ Պրուսիան, որի բնիկ ժողովուրդը տևտոնյան ասպետների քարոզությամբ արդեն քրիստոնեությունն ընդունել և գերմանական քաղա-քակրթության ազդեցության տակ գերմանացել էր: Ֆրիդ-րիխ-Վիլհելմ մեծ մասնակցություն ցույց տալով Երեսնամյա պատերազմին, իբրև վարձատրություն ստացավ արևելյան Պոմե-ռանիան և Մակդեբուրգը: Շվեդացիների և լեհերի պատերազմում բռնելով Լեհաստանի կողմը, դրա փոխարեն ազատվեց լեհական գերիշխանությունից (1657 թ.): Դուքսը մեծ ուշադրություն դարձրեց իր բանակը կարգավորելու և իր երկիրը բարեկարգելու. այնպես որ երբ Լուի ԺԴ-ի դեմ կազմվեց Եվրոպական դաշնակցությունը, ինքն էլ միջամտեց և այնպիսի հաղթություններ տարավ, որ իր անունը հռչակավոր դարձավ: Ֆրանսիական բողոքականների հալածանքի ժամանակ նա հյուրընկալեց բազմաթիվ ժողովուրդ, որոնք իր երկրները շենացրին և արվեստները ծաղկեցրին: Վերջապես սրա որդին Ֆրեդերիկը խնդրեց կայսրից Պրուսիայի թագավոր տիտղոսը, խոստանալով օգնել նրան Ֆրանսիայի դեմ պատե-րազմի դեպքում:

Այսպես հիմնվեց Պրուսիայի թագավորությունը (1701 թ.):

Քիչ ժամանակից Պրուսիան զինվորական մի հզոր պետություն դարձավ. այս գործը նա պարտական էր Ֆրիդրիխ-Վիլհելմ թագավորին, որ կոպիտ ու չափազանց ժլատ մարդ էր. նա ապրում էր հասարակ բանվորի նման, խնայում էր պետության վերջին կոպեկը և միայն մի ցանկություն ուներ՝ պատրաստել լավ բանակ: Տերության ամբողջ եկամուտը վատնում էր բանակի համար. այնպես որ երբ նա մեռավ, Պրուսիան, որ միայն 2,5 միլիոն բնակիչ ուներ, կարող էր դուրս բերել մի այնպիսի բանակ, որ բովանդակ Գերմանիայի կայսերական բանակին հավասար էր թվով, իսկ տեխնիկայով և պատերազմական քաջությամբ՝ նրանից շատ բարձր:

Այս բանակով ահա դուրս եկավ Պրուսիան՝ կռիվ մղելու Ավստրիայի դեմ և իր սահմանները ընդարձակելու նրա հաշվին:

205. ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՋՈՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ավստրիայի կայսրը մեռնելով, գահը թողեց իր դուստր Մարիա Թերեզային (1740 թ.). բայց ահա դուրս եկան մի խումբ թեկնածուներ, որոնք երկրի այս կամ այն մասը իրենց էին պահանջում:

Այսպիսի թեկնածուներից մեկն էր Բավարիայի դուքսը, որ իրեն կողմը շահելով նաև Ֆրանսիան, դուրս եկավ կռվելու կայսրուհու դեմ: Պրուսիայի թագավոր Ֆրեդերիկ Բ-ը, որ առիթ էր փնտրում, հանկարծ հարձակվեց կայսրուհու հողերի վրա և գրավեց Սիլեզիան: Սրա վրա Ֆրանսիայի, Բավարիայի, Պրուսիայի և Իսպանիայի միջև կազմվեց մի դաշնադրություն՝ բաժանելու համար Ավստրիական կայսրության հողերն իրենց միջև. ֆրանս-բավարական բանակը մտավ Ավստրիա և մինչև Պրագա առաջացավ: Կայսրուհին կորել էր: Այն ժամանակ առաջ եկան հունգարացիք, որոնք ուխտեցին ցմահ պաշտպանել նրան: Ֆրանսիական բանակը դուրս քշվեց Ավստրիայից: Կռվի մեջ մտավ Ֆրանսիայի հետ թշնամի Անգլիան, որ իր հետ քաշեց նաև Հոլանդիան, որպեսզի չթողնեն Ֆրանսիայի մեծանալը և խորտակեն նրա նավատորմը: Ֆրանսիացիների հետ քաշվելովը կռիվը փոխադրվեց Հոլանդիա, Բելգիա, Հռենոսի ափերը և Իտալիա: Այս միջոցին բավարական թեկնածուն մեռավ և նրա հաջորդն ստանալով Բավարիան, կռվից հետ քաշվեց: Հետ քաշվեց

նաև Ֆրեդերիկը, որ Սիլեզիայի հետ մի նոր կոմսություն ևս ստացել էր կայսրուհուց. դրա փոխարեն կայսրուհին իր կողմն էր քաշել նաև Սաքսոնիան: Այսպիսով ավստրիացիք զորացան. դաշնակիցները, որ Հոլանդիայի, Իտալիայի, Բելգիայի և նույնիսկ Սկովտիայի մեջ հաղթանակներ էին տարել, սկսեցին հետ քաշվել. ֆրանսիացիք երեք անգամ հաշտություն խնդրեցին, բայց Անգլիան մերժեց. անգլիական նավատորմը ջարդեց ֆրանսիականը և եկավ պաշարեց Մարսելն ու Տուլոնը. կռվի ամբողջ ծանրությունը մնացել էր Ֆրանսիայի վրա. սրանք էլ մեծ թափով ընկան Հոլանդիայի վրա և գրեթե ամբողջ երկրին տեր դարձան: Այս դեպքի վրա երկու կողմերը դադարեցրին կռիվը և կնքեցին Ախենի դաշնագիրը, որի համաձայն Պրուսիան ստացավ Սիլեզիան, իսպանացիք ստացան մի քանի դքսություններ Իտալիայում, Անգլիան ստացավ Մադրասը և Ամերիկայի իսպանական գաղութներում գերեվաճառության և անգլիական ապրանքներ ներմուծելու իրավունքը, Մարիա Թերեզան ճանաչվեց կայսրուհի, իսկ Ֆրանսիան չներկայացրեց ոչ մի հողային պահանջ: Նրա կորուստը շատ մեծ էր. նրա նավատորմը ջախջախվել էր, ինչ որ Անգլիայի բուն նպատակն էր (1748 թ.):

206. ՕԼԵԹՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՆԱՑԻՆԵՐԻ ԴԵՄ

Օլեթները, որ ինչպես գիտենք, Չինաստանի հյուսիսային կողմը հպատակ մի պետություն էին կազմում, այս ժամանակները ապստամբության դրոշը բարձրացրին չինացիների դեմ:

Գալդանի սերնդից մի քանի իշխաններ միմյանց հետ կռվի բռնվեցին: Երկարատև պատերազմներից ձանձրացած, ժողովուրդը դիմեց չինացիների կայսեր (Քիան-Լունկ) և խնդրեց, որ այս կռիվներին վերջ տա: Մրցակիցները երկու իշխաններ էին՝ Ամուր-Սանանը և Դավաճին: Կայսրը առաջինի կողմը բռնեց և նրան հաստատեց գահի վրա. բայց Դավաճիին էլ չսպանեց, այլ ազատ արձակեց այն ծածուկ նպատակով, որ եթե Ամուր-Սանանը ըմբոստանար, կարենար Դավաճիի միջոցով կռվել նրա դեմ: Ամուր-Սանանը հասկացավ կայսեր խորամանկությունը, միանգամայն դժգոհ իրեն տրված սահմանափակ իշխանությունից,

գրգռեց ժողովրդին և ապստամբեց կայսեր դեմ:

Չինացիների ավագանին միջամտության կողմնակից չէր և խնդրեց կայսրից, որ թաթարներին ազատ թողնի իրենց վեճերի մեջ, փոխանակ այն հեռավոր երկրներում արկածալի պատերազմի ձեռնարկելու: Բայց կայսրը չլսեց նրանց խորհուրդը և իր բանակը Թաթարիստան ճամփա հանեց:

Բանակը կազմող զինվորներից մի մասը թաթար էր. բնականաբար սրանք իրենց ազգակիցների կողմը պիտի բռնեին և շատ անգամ էլ մատնության դիմեցին: Նմանապես երկու իշխանները և ժողովրդի ցեղապետները, որոնք սրտանց Ամուր-Սանանի կողմն էին, ամեն կերպ աջակցեցին նրան: Այսպես չինացիների բանակները ոչնչացան: Կայսրը որոշեց հետ քաշվել: Երկու հանդուգն զորավարներ, մեկը չինացի, մյուսը մանջուր, գործի գլուխ անցան և այնպիսի քաջությամբ կռվեցին, որ օլեթները զենքը վար դրին, ամբողջ երկիրը նվաճվեց և Ամուր-Սանանը փախավ Սիբիր, որտեղ և մեռավ:

Այս հաղթությամբ ոչ միայն Թաթարիստանը, այլև Թուրքեստանը, որ օլեթներին հարկատու իշխանություններ էր կազմում, անցավ չինական կայսրության. Կաշկարը, Աքսուն, Յարքանդը, մինչև կազակների երկիրը նվաճվեցին և չինացիների պետությունը նորից մինչև Պարսկաստանի սահմանին հասավ (1760 թ.):

207. ՅՈԹՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

Ֆրեդերիկ Բ-ը Սիլեզիան գրավելուց հետո, ուզեց իր երկրին միացնել նաև Չեխիան, որ այս առթիվ խնդրեց Ֆրանսիայի դաշնակցությունը՝ խոստանալով նրան Բելգիան: Ֆրանսիացիք կռվի մեջ շատ հոգնած՝ մերժեցին: Մարիա Թերեզա կայսրուհին կազմեց մի նոր դաշնակցություն, որի մեջ մտան Ռուսիան, Սաքսոնիան, Շվեդիան և Ֆրանսիան. պրուսացիք էլ միացան Անգլիայի հետ, որի նպատակը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ավելի ջախջախել մրցակից Ֆրանսիան: Սկսվեց Յոթնամյա պատերազմը:

Դաշնակիցների 400000-անոց բանակն ամեն կողմից արշավեց Ֆրեդերիկի վրա, որ միայն 150000 զինվոր ուներ: Այսպիսի մի ահագին ուժի դիմադրելու համար Ֆրեդերիկը մտածեց անհամաձայնություններ ձգել թշնամիների մեջ, լայն չափերով գործադրել պատերազմական խաղերը և նրանց առանձին-առանձին

հարվածել: Նախ նա հարձակվեց Սաքսոնիայի վրա և նրանց բանակը գերի բռնեց. հետո արշավեց ավստրիացիների վրա և երկու մեծ հաղթություն տարավ նրանց դեմ: Այս առաջին հաջողություններից հետո, պրուսացիների դրությունը վատացավ. ֆրանսիացիք քշեցին անգլիացիներին և Հաննովերը գրավեցին. ռուսներն առան Արևելյան Պրուսիան, ավստրիացիք հաղթեցին նույնիսկ Ֆրեդերիկի բանակին և մտան Սիլեզիա: Բայց այս բոլոր ձախորդություններից հետո էլ Ֆրեդերիկը չընկճվեց. նա արագությամբ հասնում էր ամեն տեղ, հարձակվեց ֆրանսիացիների վրա, ջարդեց և Հաննովերից դուրս քշեց, հետո վազեց ավստրիացիների վրա, հաղթեց և Սիլեզիան ազատեց, ջարդեց նաև ռուսների բանակը և Պրուսիայից հետ քշեց: Սակայն ռուսները փոխադրեցին մի նոր բանակ և ավստրիացիների հետ միացած արշավեցին Բեռլին. Ֆրեդերիկի բանակը ջարդվեց և վերջապես նա իր մնացորդ 50 000 զորքով պաշարվեց ռուս-ավստրիական 140 000-անոց բանակից: Այս նեղ միջոցին անգլիացիք դադարեցրին դրամական օգնությունը և Ֆրեդերիկն ընկավ հուսահատական վիճակի մեջ:

Իր բախտից այս ժամանակ ռուսների կայսրուհին մեռավ և նրա հաջորդը ոչ միայն հրաժարվեց կռվից ու իր պահանջներից, այլև օգնական զորք ուղարկեց Ֆրեդերիկին: Թագավորը քաջալերված, ընկավ ավստրիացիների հետևից և հարվածեց նրանց: Երկու կողմերը համաձայնվեցին հաշտվել, որի համեմատ Ֆրեդերիկը պահեց Սիլեզիան և Գլացը, Սաքսոնիան անցավ Լեհաստանին, Ֆրանսիան վճարեց պատերազմական տուգանքը, Հնդկաստանի գաղութները, Կանադան, Անտիլյան կղզիները հանձնեց Անգլիային և Լուիզիանան տվեց Իսպանիային: Այսպես ուրեմն յոթնամյա այս պատերազմից Անգլիան շահեց ամենամեծ բաժինը, Ֆրանսիան կորցրեց ահագին նահանգներ, Ավստրիան թուլացավ ու քայքայվեց, իսկ Պրուսիան շահեց ամբողջ Եվրոպայի հիացմունքը: Ֆրեդերիկը կոչվեց Մեծ (1763 թ.):

208. ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Լեհերի վարած կռիվները օսմանցիների դեմ՝ շատ թուլացրին իրենց: Բայց Լեհաստանի համար ամենամեծ վնասը հասավ իր քաղաքական նորօրինակ կազմակերպությունից: Լեհաստանում

օրենսդրական իշխանությունը հանձնված էր ազնվականների շրջանային ժողովներին, որոնցից յուրաքանչյուրն իր շրջանի մեջ ինքնավար էր: Ընտրական ամբողջ իրավունքը պատկանում էր ազնվականության, իսկ քաղաքացիք և հոգևորականները զրկված էին: Գյուղացիք գտնվում էին ճորտական վատ դրության մեջ, քաղաքացիք նրանցից ավելի մեծ իրավունքներ չունեին և ապրում էին խեղճ դրության մեջ, որովհետև վաճառականությունը գտնվում էր օտարների ձեռքում, իսկ մանր առևտուրը հրեաների ձեռքումն էր: Կրոնական զանազան դավանանքներ՝ կաթոլիկություն, բողոքականություն և հունադավանություն շարունակ կռվի մեջ էին իրար հետ: Ճիզվիտները եկան նոր հայացքները խեղդելու և բոլոր դավանանքները կաթոլիկության մեջ ձուլելու: Դրությունը շատ ավելի վատացավ, երբ Լեհաստանն ընդունեց զինվորական դաշնակցության ձևը, որով ամբողջ երկիրը բաժանվեց մանր շրջանների՝ յուրաքանչյուրն ինքնավար զինվորական ժողովի կառավարությամբ: Ամեն մի ժողով իր շրջանի տերն էր և ամեն մի վճիռ կարող էր վերջնական համարվել այն ժամանակ, երբ միաձայն էր: Բավական էր մի անդամի հակառակ ձայնը և վճիռը ջնջվում էր (libetum veto): Այսպիսի դրությամբ ամբողջ երկիրը ստացավ մի անիշխան դրություն, որի մեջ կռիվն անպակաս էր և գերագույն իշխանություն գոյություն չուներ: Եվ այն ժամանակ, երբ Լեհաստանի չորս կողմը տեղի էին ունենում օսմանցիների, ռուսների, ավստրիացիների, գերմանացիների, շվեդների և պրուսիացիների կռիվները, լեհացիք փոխանակ նրանցից որևէ օգուտ քաղելու, իրար էին բզկտում, ազգամիջյան անվերջանալի մանր կռիվներով էին զբաղված: Այնքան թուլացել էր Լեհաստանը, որ երբ ծագեց Յոթնամյա պատերազմը, այդ պետությունը կարծես գոյություն չուներ. ռուսական բանակները անարգել անցնում էին նրա հողով. պրուսիացիք բռնի վերցնում էին նրանց իրենց շարքերը: Պատերազմից հետո ռուսների ազդեցությունը շատ զորացավ Լեհաստանում. նրանք իրենց կողմը գրավելով բողոքականներին և հունադավաններին, աշխատում էին Լեհաստանն իրենց հովանավորության տակ առնել. բայց կաթոլիկները հակառակ կանգնեցին: Այս խռովություններից օգուտ քաղելով Ֆրեդերիկ Բ-ը՝ առաջարկեց Ռուսիային և Ավստրիային՝ բաժանել երկիրն իրենց մեջ. համաձայնությունը կայացավ և Լեհաստանի մի խումբ գավառները խլվեցին (1772 թ.):

209. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Անգլիացիների պատերազմները Ֆրանսիայի և Հոլանդիայի հետ եվրոպական ցամաքում պատճառ դարձան նաև Հնդկաստանի տիրապետության:

Հնդկաստանն իր բերքերի առատությամբ վաղուց էր հրապուրում եվրոպացի վաճառականների ուշադրությունը: Բարեհուսո հրվանդանը գտնելուց հետո, առաջին անգամ պորտուգալացիք ոտք դրեցին Կալիկուտ (Կալկաթա), հիմնեցին Բոմբեյը և տարածվեցին ամբողջ Մալաբարի եզերքը: Նրանց հետևից հասան հոլանդացիք, որ իրենց իշխանությունը տարածեցին ամբողջ Մալազիայի վրա, և ավելի հետո ֆրանսիացիք, որ հաստատվեցին Կալիկուտ, Պոնդիշերի, Մասուլիպատամ և Չանդերնագոր: Լուի ԺԴ-ի ժամանակ, երբ ամբողջ Եվրոպան կռվի էր դուրս եկել Ֆրանսիայի դեմ, հոլանդացիք տիրեցին Հնդկաստանի ֆրանսիական գաղութներին. բայց հաշտությունից հետո նրանք նորից ծաղկեցին և տարածվեցին ամբողջ Դեկանի վրա: Ֆրանսիացիների հաջողությունը գրգռեց անգլիացիների ախորժակը. նրանք 1600 թվականին հիմնեցին Հնդկական ընկերությունը, որի նպատակն էր առևտրական անվան տակ տիրել Հնդկաստանին: Նրանց դեմ դուրս եկան հոլանդացիք, բայց անգլիացիք հաջողվեցին հաստատվել Մադրասում և Սուրաթում: Երբ անգլիացիք ջախջախեցին հոլանդական նավատորմը, իրենց գաղութներն ավելի մեծացան:

Մեծ մոնղոլների կայսր Ավրենգզեբը, տեսնելով անգլիացիների հաջողությունը, ելավ նրանց դեմ և Հնդկաստանից դուրս վանեց (1688 թ.): Բայց իր մահից հետո նրա տերությունը կործանվեց և վերածվեց մանր-մունր անկախ թագավորությունների (1707 թ.): Պարսիկներն արշավեցին Հնդկաստան (Նադրշահ), ավերեցին Դելիի մայրաքաղաքը և մոնղոլների թագավորին հարկատու դարձրին: Մյուս կողմից մահարատտաները գլուխ բարձրացրին և մոնղոլների կայսրությանն հաղթելով՝ ստիպեցին ամբողջ Հնդկաստանը իրենց հարկատու ճանաչել (1740 թ.): Ձևացավ մի զարմանալի կառավարական դրություն. ժողովուրդը հպատակ էր մոնղոլների պետության, բայց նաև հարկ էր տալիս մահարատտաներին: Շուտով մահարատտաներն էլ վերածվեցին մասերի և զանազան պետություններ կազմեցին: Կռիվն անպակաս էր սրանց

և մոնղոլների պետության միջև, որ իր խղճուկ գոյությունը դեռ քարշ էր տալիս:

Այս կռիվներից օգուտ քաղելով, եվրոպացիք սկսեցին ավելի տարածվել Հնդկաստանում: Ֆրանսիացիք իրավունք ստացան առանձին դրամ կտրելու Հնդկաստանում. Դյուպլեն ծրագրեց հիմնել Հնդկաստանի ֆրանսիական կայսրությունը: Հնդիկներն այնքան թույլ էին, որ նրանց ամենամեծ բանակը չէր կարող դիմանալ եվրոպական մի քանի հարյուր կանոնավոր զինվորի առաջ: Դյուպլեն խորտակելով նրանց ուժը, մեծամեծ հողերի տեր դարձավ: Վրա հասավ Ավստրիայի հաջորդության կռիվը, անգլիացիք հաղթեցին ֆրանսիացիներին Հնդկաստանում և Ախենի դաշինքով տիրեցին Մադրասին (1748 թ.):

Նույն թվականին Դեկանի հնդիկ թագավորը մեռավ և նրա երկու ժառանգների միջև գահակալական կռիվ սկսվեց: Անգլիացիք բռնեցին մեկի կողմը, ֆրանսիացիք մյուսի կողմը և սկսեցին միմյանց դեմ պատերազմել: Անգլիայի կողմը հաղթեց, Դյուպլեն հեռացվեց և Մադրասի դաշինքով ֆրանսիացիներին հպատակ 30 միլիոն հնդիկները բնիկներին վերադարձան. ֆրանսիացիների ձեռքում չնչին բան միայն մնաց:

Յոթնամյա պատերազմի սկիզբը, Բենգալի թագավոր եղավ Սարաջա-Դովլան (1756 թ.), որ Ֆրանսիայի և Հոլանդիայի օգնությամբ դուրս եկավ անգլիացիների դեմ, քշեց նրանց Բենգալից և Կալկաթային տիրեց: Անգլիացիք ուղարկեցին 1000 զինվոր, որոնք 2000 սիփահիների հետ միացած, ջարդեցին Սարաջա-Դովլայի 60 000-անոց բանակը, ֆրանսիացիների և հոլանդացիների ուժերը հետ քշեցին և ամբողջ Բենգալն ու Դեկանը նվաճեցին: Փարիզի դաշինքով՝ պարտված Ֆրանսիան իր բոլոր հնդկական գաղութները հանձնեց Անգլիային, պահելով միայն 5 քաղաք (1763 թ.):

Անգլիացիք այսպես ֆրանսիացիներին և հոլանդացիներին հեռացնելուց հետո, զենքը դարձրին տեղացի ռաջաների դեմ և մի առ մի նվաճեցին: Մյուս կողմից իրենց նախորդները սկսեցին գտնել ու նվաճել նորանոր երկրներ Խաղաղ օվկիանոսում և ուրիշ տեղեր. այսպես գրավվեցին Ավստրալիան, Հրո-երկիրը, Թաիթին, Նոր Զելանդիան, Տասմանիան, Սանդվիչը, Նոր Կալեդոնիան, Հավայան և այլն:

Անգլիացիք շատ վատ էին վարվում հնդիկների հետ. կոտորում, չարչարում, կողոպտում էին անխնա. նրանց անգթության

չդիմանալով վերջապես Միսորի սուլթան Հայդար-Ալին (1761 թ.) և նրա որդին Թիպպո-Սահիբը հնդկական իշխանների հետ դաշնակցելով, ապստամբեցին անգլիացիների դեմ. քանի՜-քանի՜ անգամ նրանք ջարդեցին անգլիական բանակները, բայց վերջապես անգլիացիք կարողացան վարպետությամբ դաշնակցությունը քայքայել և ապստամբներին նվաճել: Հնդկական անկախության վերջին պաշտպանը՝ Թիպպո-Սահիբը ընկավ իր մայրաքաղաք Սերինգապատամում (1799 թ.):

210. ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Ամերիկայի առաջին գաղթականներն եղան իսպանացիք և պորտուգալացիք. անգլիացիք այդ ժամանակ չունենալով դեռ լավ նավատորմիղ, չէին կարողանում օգտվել Նոր Աշխարհից: Առաջին անգամ 1584-ին անգլիացի ծովահենները գտան Վիրջինիան, որտեղ նեգրերի միջոցով զարգանալով ծխախոտի մշակությունը, շատ ծաղկեց ու շենացավ: Երբ Անգլիայում սկսվեցին կրոնական կռիվները բողոքականության զանազան աղանդների դեմ, հալածվածները թողեցին Անգլիան և Ամերիկա փախան և Ս. Լորանի գետաբերանից սկսած մինչև Ֆլորիդա հիմնեցին այլևայլ գաղութներ, որոնց մեջ նշանավոր եղավ Մասաչուսեցը (1620 թ.): Սրա շուրջը 20 000 գաղթական կար դրված 1640 թվականին: Այս գաղութները կազմում էին մանր խմբակներ, օրինակ՝ Նյու-Յորք մայրաքաղաքը 1667 թվականին ուներ 1 500 բնակիչ: Գաղութները կառավարվում էին շատ ազատ կարգերով. առանց բաժանվելու մայր հայրենիքից: Նրանք հիմնել էին ռամկավար բազմաթիվ մանր հանրապետություններ, ընդհանուր քվեարկության իրավունքով, կրոնի և առևտրի կատարյալ ազատությամբ: Անգլիան այդ գաղութներից հարկ չէր պահանջում. այս հանգամանքը, քաղաքական հանգստությունը, ճնշումների և հարստահարության բացակայությունը պատճառ դարձան, որ գաղութները հետզհետե ավելի աճեին ու բազմանային նորանոր գաղթականների միջոցով. օրինակ, 18-րդ դարի սկզբում, Անգլիայում քուեյկերների հալածման ժամանակ, 200000 քուեյկեր գաղթեցին Ամերիկա, իրենց Պեննն անուն քարոզչի առաջնորդությամբ և հիմնեցին առանձին նոր գաղութ Պենսիլվանիայում:

Յոթնամյա պատերազմների ժամանակ Անգլիան մեծամեծ ծախսերի ենթարկվելով, Ամերիկան էլ հարկի տակ դնել որոշեց: Նախ հաստատեցին դրոշմատուրքը, բայց երբ ամերիկացիք բողոքեցին, այդ տուրքը վերացնելով, զանազան ապրանքների վրա (ապակի, թուղթ, ներկ, թեյ) ներածության տուրք դրեցին: Ամերիկացիք չէին ընդունում ո՛չ մի տուրք, քանի իրենք ո՛չ մի ներկայացուցիչ չունեին անգլիական Պառլամենտում. Բոստոնում կազմվեց մի միություն, որին մասնակցում էին 192000 հոգի. նրանք որոշեցին ո՛չ մի ապրանք չգնել Անգլիայից: 1773 թվականին երբ անգլիական մի նավ թեյ բերեց Բոստոն, ժողովուրդը հավաքվեց և թեյը ծովը թափեց: Անգլիան որոշեց պաշարել Բոստոնը և ապստամբ քաղաքը ոչնչացնել: Դրա վրա ամերիկական բոլոր նահանգներն ապստամբեցին, Ֆիլադելֆիայի ժողովը որոշեց ընդհատել բոլոր հարաբերություններն Անգլիայի հետ և հայտարարելով Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախությունը, վճռեց կռվել Անգլիայի դեմ (1776 թ. հուլիսի 4):

Անգլիան 20000 գերմանացի վարձկան զորք ուղարկեց Ամերիկայի կամավորական բանակի դեմ, որի գլուխն էր Ջորջ Վաշինգտոնը: Ամերիկացիք առաջին կռիվների մեջ հաջողություն ունեցան, Բոստոնի անգլիական բանակը ջարդեցին, բայց իբրև նոր զինվորներ, պատերազմական արվեստին անտեղյակ, չկարողացան երկար դիմանալ: Անգլիացիք երեք կողմից ներս արշավեցին, Նյու-Յորքն ու Ֆիլադելֆիան գրավեցին: Դրա վրա ամերիկացիք Ֆրանկլինին ուղարկեցին Փարիզ և Ֆրանսիայից օգնություն խնդրեցին: Անգլիան զիջեց տուրքերը և խոստացավ մի պատգամավոր ընդունել Պառլամենտում, բայց այլևս ուշ էր: Ֆրանսիացիք, որ 1763 թվականի դաշինքով մեծապես տուժել էին Անգլիայի պատճառով, սիրով ընդունեցին ամերիկացիների առաջարկը. արդեն ֆրանսիացի կամավորները Լա Ֆայետի առաջնորդությամբ պատրաստվել էին մեկնել Ամերիկա: Արդեն Ամերիկան նվաճվելու վրա էր, երբ հասան ֆրանսիացիք. նրանց հետևից մեջ մտան նաև իսպանացիք. պատերազմը փոխադրվեց ծովի վրա. իսպանացիք պաշարեցին Ջիբրալտարը և պատրաստվեցին Անգլիա ցամաք դուրս գալու: Շատ կղզիներ ու գաղութներ խլվեցին Անգլիայի ձեռքից, բայց դեռ ո՛չ մի կողմը պարտված չէր:

Անսպասելի կերպով կռվի մեջ մտավ Ռուսիան, որ առաջարկեց

հիմնել Զինյալ չեզոքների լիգան: Անգլիան Յոթնամյա պատերազմից ի վեր սկսել էր ամեն տեղ ազատորեն խուզարկել որևէ պետության նավ, ուզած նավահանգիստը փակում էր նրա առաջ և պարունակությունը գրավում էր՝ իբր թշնամի կողմին ուղղված պաշար: Ռուսիան պահանջում էր, որ այս ապօրինությունները վերանան և չեզոք դրոշակները ազատ լինեն: Հոլանդիան ոչ միայն ընդունեց այս առաջարկը, այլև միացավ կռվող կողմերին: Այսպիսով այն բոլոր ծովային պետությունները, որոնց շահերին այնքան ժամանակ չարագիտությամբ հարվածել էր Անգլիան, նրա դեմ միացած դուրս եկան:

Այլևս պատերազմի ելքը վճռված էր. անգլիացիք ամեն տեղ պաշարվեցին. Ամերիկայի բանակը պաշարվեց Նյու-Յորքում. մինչև անգամ հոլանդացիք մտան Հնդկաստան՝ Թիպպո-Սայիբին օգնելու: Վերջապես անգլիացիք հաշտություն խնդրեցին. Վերսալի դաշնադրությամբ Միացյալ Նահանգների անկախությունը ճանաչվեց, Ֆրանսիան, Իսպանիան և Հոլանդիան ստացան զանազան գաղութներ Ամերիկայում, Աֆրիկայում և Հնդկաստանում (1783 թ.): Դրանից հետո Ամերիկայի 13 հանրապետությունները միանալով, ընդհանուր կանոնադրություն մշակեցին և կազմեցին ապակենտրոնացման դրությամբ իրենց դաշնակցային կառավարությունը (1787 թ.):

(Քուրդ Մահդի, 1785 թ., տե՛ս և առ Ա. Ալպօյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ հայոց, հատ. Ա., էջ 612):

211. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Նոր դարը թեև ջնջել էր Միջին դարի (միջնադար) ավատական կազմակերպությունը, բայց նրա մնացորդները, ինչպես ճորտություն, ազնվականների ազատությունը հարկից, նրանց օգտին կատարված տարապարհակ աշխատություն և այլն, տեղ-տեղ շարունակվում էին դեռ: Այդպիսի կարգերից ամենից ավելի ազատ էր Անգլիան, իսկ ամենից ավելի կապված էր Գերմանիան: Բայց Գերմանիան, ուր ժողովուրդը ծանր կռիվների պատճառով ընկճվել, վայրենացել, քաղաքակրթությունից հետ էր մնացել, անմռունչ տանում էր բռնությունը: Իսկ Ֆրանսիան, ուր մտավոր զարգացումը շատ առաջ էր գնացել, ծանր էր զգում այդ լուծը, մանավանդ որ իր աչքի առաջ ուներ անգլիական ազատ կարգերը,

կացությունն ավելի էր դառնացնում տնտեսական վիճակը: Լուի ԺԴ-ի միահեծան պետությունը, նրա օրից սկսված պատերազմները ընդհանուր եվրոպական դաշնակցության դեմ, Ավստրիայի հաջորդության և Յոթնամյա պատերազմը և վերջապես Ամերիկայի ազատության պատերազմի մասնակցությունը ուժասպառ էին արել Ֆրանսիան: Նա ծախսել էր միլիարդների հարստություն, որի դեմ ոչինչ չէր շահել, այլ ընդհակառակը ամեն օգուտ Անգլիան էր խլել: Երկիրը հասել էր սնանկության դուռը, ժողովուրդը ճնշվում էր հարկերի ծանրության տակ, մինչդեռ հոգևորականներն ու ազնվականները վայելում էին նրա աշխատանքը, առանց մասնակցելու այդ հարկերին: Պետք էր ամբողջ երկրի վարչական կազմը փոխել և նոր կարգեր ստեղծել:

Լուի ԺՁ թագավորը հրամայեց ժողովի հրավիրել երկրի բոլոր ներկայացուցիչներին՝ ազնվականներին, հոգևորականներին և հասարակ ժողովրդին, որպեսզի միջոցներ մտածեն վարչական բարենորոգումներ մտցնելու երկրի մեջ: 1789 թվականի մայիսի 5-ին ժողովը գումարվեց Վերսալում: Հոգևորականներն ու ազնվականները տեսնելով ժողովրդի ներկայացուցիչների բազմությունը, և վախենալով իրենց ձայնը կորցնելուց, մերժեցին ժողովի նստել նրանց հետ: Այն ժամանակ ժողովրդական ներկայացուցիչները հավաքվեցին առանձին՝ հայտարարելով իրենց Ազգային ժողով: Թագավորը, որ ավելի համակիր էր ազնվականներին, բռնի փակեց ժողովասրահը. այն ժամանակ ժողովականները գումարվեցին գնդախաղի մի սրահում և երդվեցին չցրվել, մինչև կմշակեն պետական նոր կազմ: Թագավորը զորք հավաքեց, որպեսզի ցրի ժողովը: Դրա վրա քաղաքացիք, հատկապես սոված աշխատավոր ժողովուրդը, որ իր վիճակի բարելավությունը Ազգային ժողովից էր սպասում, գրգռվեց: Հուլիսի 14-ին նրանք մեծ խմբով հարձակվեցին Բաստիլ բերդի վրա, գրավեցին, զենքերի պահեստը խլեցին և պատրաստվեցին կռվելու. թագավորն այս շարժումը տեսնելով, չուզեց ազգամիջյան կռիվ ստեղծել և համաձայնվեց Ազգային ժողովի որոշումներին:

Բայց Բաստիլի առման լուրը տարածվել էր ամեն տեղ. և ամեն տեղ էլ գրգռված ժողովուրդը դուրս եկավ իր ճնշողների դեմ, դղյակները գրավեց ու այրեց, ազնվական կալվածատերերին սպանեց և հողերը խլեց. երբ այս լուրը հասավ Ազգային ժողովին,

ազնվականները վեր կացան և կամովին հրաժարվեցին իրենց բոլոր արտոնություններից. մի գիշերվա մեջ Ֆրանսիայի ամբողջ ավատական կարգը ջնջվեց (օգոստոս 4): Ազգային ժողովը պահանջեց թագավորից թողնել Վերսալը և փոխադրվել Փարիզ՝ ժողովրդի տրամադրության տակ, ուր եկավ նաև Ազգային ժողովը և այնուհետև կոչվեց Սահմանադիր ժողով ու նպատակ դրեց մշակել երկրի սահմանադրությունը: Միևնույն ժամանակ կազմվել էին բազմաթիվ ազատ քաղաքական ակումբներ, որոնք խորհրդակցում ու վիճում էին նույն նյութի շուրջը և տոն տալիս Սահմանադիր ժողովին: Այդ ակումբներից նշանավոր դարձավ Ժակոբինների ակումբը, որ ամբողջ Ֆրանսիայի հետ հարաբերության մեջ մտավ և ամեն տեղ ճյուղեր հիմնեց:

Սահմանադիր ժողովը հայտարարեց մարդու և քաղաքացու իրավունքը. բոլոր մարդիկ հավասար են. իշխանությունը պատկանում է ժողովրդի ամբողջության. իսկ երբ իշխանությունը ճնշում գործ դնի՝ ժողովուրդն իրավունք ունի դիմադրելու. պահանջվում է խղճի, խոսքի, մամուլի և ժողովների ազատություն, օրենսդիր իշխանությունը հանձնվում է ժողովրդի ընտրած ներկայացուցչական ժողովին, իսկ գործադիր իշխանությունը՝ թագավորին, որ պիտի կառավարի ժողովրդի դրած կանոնների համաձայն:

Այս որոշումների համաձայն ազնվականների, եկեղեցիների և վանքերի հողերը գրավվեցին, կրոնավորների ընտրությունը և նրանց ռոճիկի նշանակումը անցավ ժողովրդին, Ավինյոնը, որ պապի կալվածն էր համարվում, խլվեց և Ֆրանսիային միացավ, գերմանացի ավատապետներ, որոնք դեռ իշխում էին Ֆրանսիայի արևելյան գավառների մեջ, արտոնություններից և հողերից զրկվեցին:

Այս բոլոր բարեփոխությունները զայրույթ առաջացրին շատերի մեջ. պապը, հոգևորականները և կույր հավատացյալները հակառակ էին եկեղեցու աշխարհականացման, ազնվականներից շատերը և գերմանական իշխանները փախան արտասահման և խնդրում էին կառավարություններից, որպեսզի զորք ուղարկեն Ֆրանսիայի հեղափոխությունը ճնշելու. դժգոհների մի բանակ էլ կազմվեց հենց Ֆրանսիայում և պատրաստվեց կռվել: Սահմանադիր ժողովի նշանավոր հռետոր Միրաբոն, որ թագավորական իշխանության ոչնչացումը դեռ վաղաժամ էր համարում և նրա

միջոցով ուզում էր կազմակերպել բարեկարգության գործը, առանց արտաքին միջամտության, խորհուրդ էր տալիս Լուի ԺԶ-ին փախչել Փարիզից և զենքով կռվել ժողովի դեմ՝ իր իրավունքների պաշտպանության համար. թագավորը փորձեց փախչել, որպեսզի գնա Լոթարինգիայի բանակը, այնտեղից միանա Ավստրիայի Լեոպոլդ կայսեր հետ, որ թագուհու եղբայրն էր և միասին վերահաստատեն երկրում կարգը: Բայց նա բռնվեց, հետ դարձավ և ստիպվեց հաստատել Ազգային Սահմանադրությունը:

Սահմանադիր ժողովն այլևս իր գործը վերջացրած լինելով հրաժարվեց և նրա փոխարեն գումարվեց Օրենսդիր ժողովը. քննության առնվեց հոգևորականների և փախստական ազնվականների հարցը. այն կրոնավորները, որոնք հակառակ էին եկեղեցու աշխարհականացման, աքսորվեցին, փախստական ազնվականների ստացվածքը* գրավեցին և պահանջեցին Գերմանիայից, որ դադարի նրանց օգնելուց: Նույն ժամանակներում (1787 թ.) Բելգիան ապստամբել էր Ավստրիայի դեմ և խորտակելով նրանց բանակները, անկախություն էր հայտարարել: Ֆրանսիացիք դուրս եկան օգնելու նրանց: Այս բոլորն ավելի զայրացրին Ավստրիայի Լեոպոլդ կայսեր, որ բանակցություն սկսեց եվրոպական տերությունների հետ՝ ճնշելու ֆրանսիական հեղափոխությունը: Նրա առաջին սպառնական քայլերը կատաղեցրին հեղափոխականներին, և պայթեց պատերազմը Ֆրանսիայի և Ավստրիայի միջև, որին դաշնակցեց նաև Պրուսիան և կամաց-կամաց բոլոր եվրոպական պետությունները: Ժողովուրդը մտածեց, որ թագավորը համակիր է թշնամիներին, հարձակվեց պալատի վրա, թագավորին բանտարկեց և միապետությունը տապալելով՝ հանրապետություն հռչակեց և հրավիրեց Կոնվանսիոնը՝ կառավարելու երկիրը (1792 թ.):

212. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Դաշնակիցների բանակը անպատրաստ գտավ Ֆրանսիան. կառավարությունը տապալված, իշխանության ազդեցիկ ներկայացուցիչները կամ փախած կամ վտարված, ժողովուրդն էլ թեև լցված լավագույն զգացումներով, բայց անփորձ էր և ինքն իրեն կառավարելու անվարժ: Այս պատճառով դաշնակիցները իրար

* ստացվածք - ունեցվածք (խմբ.):

հետևից տեղացին հարվածները: Այս վտանգավոր կացության մեջ երևան եկան ֆրանսիացիների ծայրահեղ հոգեբանական կողմերը. հայրենասիրության պոռթկում և արյունռուշտ կատաղություն դեպի հեղափոխության հակառակորդները: Ժողովրդի այս երկու զգացումների կատաղի արտահայտիչը հանդիսացավ ծայրահեղ հեղափոխական Դանտոնը. նա մի կողմից ամենամեծ եռանդով կազմակերպում էր կամավորական բանակները հայրենիքի պաշտպանության համար և մյուս կողմից կազմակերպում է տեռորը և կոտորում բոլոր նրանց, որոնք կասկածվում էին հակահեղափոխության մեջ: Բանտերը լցվեցին դժբախտներով. սեպտեմբերի 2-ին հասարակության տականքները վազեցին բանտերը և սկսեցին կոտորել բոլոր կասկածելիներին՝ այր, կին ու երեխաներ. 3 օր տևեց կոտորածը. միայն Փարիզում սպանվեց 1 500 հոգի, որտեղից անցավ գավառները:

Հանրապետությունը հաստատվելուց հետո գումարվեց **Կոնվանսիոնը՝** նոր սահմանադրություն մշակելու և երկիրը կառավարելու համար: Այս նոր ժողովի աչքի ընկնող տարրերն էին՝ **ժիրոնդեննները,** որոնք հանրապետական գաղափարներով տոգորված, հանդարտ մտածող, կոտորածի և խստությունների հակառակ մարդիկ էին, **ժակոբենները** (Ռոբեսպիեռի գլխավորությամբ) և **մոնտանտանյարները,** երկուսն էլ հին կարգերի բացարձակ հակառակորդ, ծայրահեղ հեղափոխական և տեռորի թունդ կողմնակից, որոնք իրենց հետևում ունեին ժակոբենների ակումբները և Փարիզի սրիկա դասակարգը, որ **սանկյուլոտ** (անվարտի) էր կոչվում: Կոնվանսիոնը հայտարարեց, թե հանրապետությունը պատերազմ է մղում բոլոր ժողովուրդների ազատության համար ընդդեմ բռնապետների. նրա բանակները ջարդեցին պրուսիացիներին և ավստրիացիներին, մտան Բելգիա և Հռենոսի ափի քաղաքները գրավեցին: Կոնվանսիոնը դատի ենթարկեց նաև բանտարկյալ թագավորին և մեղավոր ճանաչելով նրան՝ գլխատեց (1793 թ. հունվար 21): Սրա վրա Գերմանիայի և Իտալիայի պետությունները, Իսպանիան և Անգլիան միացան Ավստրիայի և Պրուսիայի հետ և պատերազմ սկսեցին Ֆրանսիայի դեմ: Այս մեծ ուժի առաջ ֆրանսիական բանակներն սկսեցին պարտություն կրել. Բելգիան գրավող բանակը ջարդվեց ու հետ քաշվեց. Կոնվանսիոնը որոշեց 300 000 մարդ հանել կռվի համար և այս գործի համար հիմնեց **դիկտատուրան**, որի մեջ մտան

ծայրահեղ հեղափոխականները Ռոբեսպիեռի գլխավորությամբ: Նրանք դուրս արին Կոնվանսիոնից ժիրոնդեններին, որոնք տեռորի հարցում իրենց հակառակորդներն էին և տեռորը տարածելով ամբողջ Ֆրանսիայում, անխնա կոտորում էին բոլոր կասկածելիներին, այն է ազնվականներին, հարուստներին, կրոնավորներին և նույնիսկ ժիրոնդեններին:

Դիկտատորների բռնությունը գրգռեց շատերին. գավառներն սկսեցին ապստամբել նրանց դեմ. ապստամբության առաջին օրինակը ցույց տվեց Վանդեան, որին հետևեցին Նորմանդիան, Բորդոն, Լիոնը, Մարսելը, Տուլոնը: Բայց դիկտատորները փոխանակ մեղմանալու, ավելի կատաղեցին. նրանք ջնջեցին ամեն հին կարգ, քրիստոնեությունը վերցրին և հաստատեցին բանականության աստվածուհու պաշտամունքը, որի պատվին խնջույքներ և հացկերույթներ էին սարքում Փարիզի Աստվածամոր մայր տաճարում. ջնջեցին նույնիսկ քրիստոնեական թվականը և ամսանունները ու նրանց տեղ դրեցին հեղափոխական նոր թվական, որ սկսվում էր 1792-ից և եղանակներից վերցրած նոր ամսանուններ: Բայց շուտով դիկտատորները բաժանվեցին իրենց մեջ և սկսեցին իրար կոտորել. գլխատեցին Դանտոնին և Ռոբեսպիեռին, որոնք ահաբեկիչների գլխավորներն էին, իրենց թունդ կուսակիցների հետ: Ժողովուրդը հետզհետե սառեց նրանցից. ժակոբենների ակումբը փակեցին, ահաբեկիչներին աքսորեցին և ժիրոնդեններին նորից կանչեցին: Կազմվեց նոր կառավարություն, որ կոչվում է **դիրեկտորիա** (1795 թ.). օրենսդրական իշխանությունը հանձնվեց երկու պալատի (Ծերերի խորհուրդ և Հինգհարյուրի խորհուրդ). իսկ գործադիր իշխանությունը՝ 5 դիրեկտորների և նրանց նշանակած մինիստրներին:

Այս միջոցին պատերազմը շարունակվում էր նախկին ձևով բոլոր ճակատների վրա. ֆրանսիացիք կռվում էին քաջությամբ. ապստամբ գավառները նվաճվեցին. անգլիական, ավստրիական, պրուսական, իտալական և իսպանական բանակները մի քանի պարտություններ կրեցին. նվաճվեց Հոլանդիան և իբրև դաշնակից Ֆրանսիային միացավ: Կռվի հաջողությանը շատ նպաստեց Լեհաստանի ապստամբությունը, որ Ռուսիայի, Պրուսիայի և Ավստրիայի մտահոգության առարկա դարձավ և ստիպեց նրանց՝ զորքերը հետ քաշել ֆրանսիական ճակատից. Պրուսիան բոլորովին դուրս եկավ դաշնադրությունից և հաշտվեց Ֆրանսիայի հետ:

Կռիվների մեջ նշանավոր եղավ մի երիտասարդ զորավար Նապոլեոն Բոնապարտ անվամբ, որ ստացավ մի մեծ բանակի հրամանատարություն և ուղարկվեց Իտալիա՝ կռվելու սարդինացիների և ավստրիացիների միացյալ ուժի դեմ: Նա առանց թողնելու, որ այս երկուսը միանան, ջարդեց սարդենացիներին և ստիպեց հաշտություն խնդրել. հետո հարձակվեց ավստրիացիների վրա և Իտալիայից քշեց Տիրոլ: Կայսրը մի քանի անգամ նորոգեց պատերազմը և վերջին անգամ ուղարկեց իր ամենալավ զորավարը, բայց Բոնապարտը բոլորին էլ հաղթեց և Ավստրիան հաշտություն խնդրելով, թողեց Իտալիան և քաշվեց Վենետիկ: Մնում էր միայն Անգլիան, որ ջարդել էր Ֆրանսիայի դաշնակից հոլանդական ու իսպանական նավատորմը և նրանց գաղութները գրավել: Նապոլեոնը ծրագրեց Եգիպտոսի արշավանքը՝ կռվելու համար Անգլիայի դեմ:

213. ՆԱՊՈԼԵՈՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵԳԻՊՏՈՍ. ՆԱՐԲԵՅ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Եգիպտոսը օսմանյան պետության հպատակ մի նահանգ էր. սուլթանների թուլության պատճառով, վերջին ժամանակները այստեղ երևան էին եկել զանազան բեյեր, որոնք ինքնագլուխ իշխում էին և իրենց ուզած ձևով հավաքում հարկերը: 18-րդ դարի վերջերը հայտնի դարձավ Մուրադ անվամբ մամլուկ բեյը, որ կովկասցի մի հայ էր, մանուկ ժամանակ Եգիպտոս տարված և մամլուկների բանակը մտցված: Իշխանական դիրք ձեռք բերելուց հետո, Մուրադ բեյը մտածեց ապստամբել սուլթանի դեմ, Ասորիքը նվաճել և միացնելով Եգիպտոսին՝ հիմնել անկախ թագավորություն: Նա իրեն օգնական և աջակից գտավ Ամորի Ժոզեֆ անվամբ երիտասարդ իշխանին: Այս անձը, որ կիպրոսցի էր և Լուի դը Լուսինյան իշխանի որդին, այցելելով Երուսաղեմ և տեսնելով այն բոլոր վայրերը, որոնք մի ժամանակ Լուսինյանների տոհմին էին պատկանում, մտածեց երթալ Եգիպտոս, միանալ Մուրադ բեյին և միացյալ ուժերով վերականգնել Եգիպտոսի և Հայաստանի թագավորությունները, առաջինը Մուրադ բեյի և երկրորդը իր իշխանության տակ: Մուրադը, որ մի կտրիճ ու վճռական օգնականի կարիքն ուներ, սիրով ընդունեց, Լուսինյան իշխանին և միասին սկսեցին գործել: Որովհետև Ամորին պիտի անցներ

մամլուկների գլուխը, Մուրադի խորհրդով արաբերենի թարգմանեց իր անունը և դարձավ Յուսուֆ Նարբեյ (Լուսինյան բառը մեկնելով իբր հայերեն **լույս** բառից, որ է արաբերեն **նար** «լույս կրակ»): Մամլուկները շատ սիրեցին նրան՝ իր փայլուն արտաքինի պատճառով:

Գլխավոր բանը, որ պետք էր ապստամբության հաջողության համար, դրամն էր: Մուրադ բեյը հրեա և արաբ ժողովրդի վրա մեծամեծ հարկեր դրեց և երբ այդ հարկերով չկարողացավ պետք եղած գումարը ձեռք բերել, սկսեց քամել եվրոպացի վաճառականներին և վերջապես նրանց վրա դրավ բռնի փոխառություն: Եվրոպացիք դիմեցին իրենց կառավարությանց: Ֆրանսիան ձեռք վերցրեց նրանց պաշտպանության գործը: Արդեն Նապոլեոնը Անգլիայի ուժը կոտրելու համար ծրագրել էր արշավել Եգիպտոս, այնտեղից Հնդկաստան և այս ահագին գաղութը խլելով, ոչնչացնել անգլիական առևտուրը: Երկու նպատակները միանում էին իրար հետ և Նապոլեոնը մի նավատորմի գլուխն անցած, հանկարծ դուրս եկավ Ալեքսանդրիա (1798 թ.):

Մուրադի համար բոլորովին անսպասելի էր այս արշավանքը: Նապոլեոնը Ալեքսանդրիան գրավելուց հետո, իսկույն արշավեց Կահիրե, որտեղ Մուրադը օսմանյան փաշայի հետ միասին՝ մամլուկ, ֆելլահ, բեդվին և ենիչերի զորքով դուրս եկավ կռվելու: Նապոլեոնը շուտով ջարդեց այս բանակը և Մուրադին քշեց վերին Եգիպտոս: Այնուհետև Նապոլեոնն իր մոտ կանչեց Նարբեյին և իմանալով նրանից Հայաստանի վերականգնման ծրագիրը, չափազանց նպաստավոր գտավ իր հաջողության համար: Վերականգնելով Հայաստանի թագավորությունը Փոքր-Ասիայում՝ Ֆրանսիայի հովանավորության տակ, նա մտածում էր նրա միջոցով կտրել Անգլիայի առաջ Հնդկաստանի ճանապարհը ցամաքի կողմից: Իբրև հին հայ թագավորական տոհմի սերունդ, նա շատ հարմար գտավ Նարբեյին և խոստացավ նրան իր աջակցությունը՝ եթե Նարբեյը հանձն առներ կռվել ֆրանսիական դրոշի տակ: Լուրը տարածվելով մամլուկների մեջ, նրանք մի օր հարձակվեցին Նարբեյի վրա և դաշույնների հարվածներով սպանեցին:

Այսպես կիսկատար մնաց Նապոլեոնի այս ծրագիրը, որի վրա ինքը ցավով էր խոսում մինչև իր վերջին րոպեն, Ս. Հելինե կղզու աքսորավայրի մեջ:

Նարբեյի որդին՝ Գևորգը, փախավ Պոլիս և ամուսնանալով մի

հայուհու հետ՝ ապրեց իբր հայ. նրա ժառանգներն եղան Խորեն արքեպիսկոպոս Նարբեյ Լուսինյանը, Ամբրոսիոս Գալֆայանը և վերջինիս որդին Լևոն Լուսինյանը, որ ապրում էր Ֆրանսիայում, հայ անվան տակ:

Անգլիացիք Նապոլեոնի դեմ ուղարկեցին իրենց նավատորմը, որ ֆրանսիական բոլոր փոխադրանավերը այրեց ու փչացրեց. միևնույն ժամանակ դրդեցին օսմանցիներին արշավել Եգիպտոս. Կահիրեում բարձրացավ ժողովրդական ապստամբություն. Նապոլեոնը ո՛չ միայն զսպեց ապստամբությունը, այլև Մուրադ բեյի մամլուկներին քշելով անապատը, ինքը մտավ Ասորիք, օսմանցիների ուժերը խորտակեց և մինչև Աքիա առաջացավ:

Այդ միջոցին Եվրոպայում պատերազմը նորից էր բորբոքվել. Ավստրիան դաշնակցելով Ռուսիայի հետ, նորից դուրս էր եկել կռվի: Ռուսները մտան Իտալիա, ամբողջ երկիրը նվաճեցին և անցան Զվիցերիա: Այս նեղ դրության մեջ Նապոլեոնը, որ ամենքի հիացմունքի առարկան էր դարձել, օգնության կանչվեց. նա ստիպվեց Աքիայի պաշարումը վերացնել և շտապեց Ֆրանսիա, իր զորավարներին թողնելով Եգիպտոսում, որոնք մի քանի տարի մնալուց հետո, առանձին դաշնադրությամբ երկիրը թողեցին օսմանցիներին և հետ դարձան: Ռուսները, տեսնելով, որ կռվի ամբողջ ծանրությունը Ավստրիան դավաճանությամբ իրենց վրա է թողնում, թողեցին նրա դաշնակցությունը և մոտեցան Ֆրանսիային: Նապոլեոնը հասավ Փարիզ, տեսավ կառավարության խռովահույզ վիճակը. պալատները արտաքսել էին դիրեկտորներին, ժողովուրդը սառել էր հանրապետական կոչված կառավարության անկայուն վիճակից, ինքն էլ պալատները արձակեց և իրեն, երկու աննշան անձերի հետ կոնսուլ ընտրել տալով, հանրապետության գլուխն անցավ (1799 թ.):

214. ՂՐԻՄԻ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Երկու հիմնական նպատակ ունեին ռուսները Արևելյան Եվրոպայում. ոչնչացնել Լեհաստանը և գրավել Թուրքիան ու Կոստանդնուպոլիսը՝ իբրև ժառանգորդ բյուզանդական կայսրության: Լեհաստանի համար առաջին քայլերը արդեն առնված էին. մնացյալը պիտի վճռվեր ապագային, իսկ երկրորդի համար գործի սկսեց Կատարինե կայսրուհին:

Հույներին ազատելու և քրիստոնեական մի պետություն հիմնելու պատրվակով, կայսրուհին պատերազմ հայտարարեց Թուրքիայի դեմ: Ռուսները թե՛ ծովի և թե՛ ցամաքի վրա հաղթեցին թուրքերին և Մոլդավիայից ու Ղրիմից դուրս քշեցին: Նրանց նավատորմը մտավ հունական ջրերը և բոլոր Հունաստանը ոտքի կանգնեց. ռուսները գրավեցին Արշիպեղագոսի հունական կղզիները և տաճկական նավատորմը կրակի տվեցին: 7 տարի շարունակ հարվածները կրելուց հետո, օսմանցիք ստիպվեցին հաշտություն խնդրել և Կուբանին ու Ղրիմին ինքնավարություն տալ: Մյուս գրավված հողերը՝ Մորավիան, Վալաքիան և կղզիները մնացին օսմանցիներին:

Բայց Ղրիմի ինքնավարությունը՝ թաթար գիրեյների իշխանության տակ ժամանակավոր մի բան էր. այնպես որ կայսրուհին չուշացավ այս չնչին ձևականությունն էլ վերացնելու և ամբողջ թերակղզուն տեր դարձավ (1779 թ.): Այդ ժամանակ էր, որ Ղրիմի հայերը մեծ քանակով դուրս եկան թերակղզուց և գաղթելով հարավային Ռուսիա, հիմնեցին Գրիգորուպոլիս և Նոր Նախիջևան հայաբնակ քաղաքները, որոնց մեջ նրանք տեղական ինքնավարություն էլ ունեցան:

Ղրիմի կորուստը շատ ծանր էր օսմանցիների համար. ուստի նրանք նոր բանակ կազմեցին և եվրոպացի մարզիչների ձեռքով կրթելով, պատերազմը նորոգեցին: Ռուսիան Ավստրիայի հետ միացած, դուրս եկավ և արագությամբ խլեց Բեսարաբիան, Մոլդավիան ու Վալաքիան. տաճիկները հուսահատ՝ հաշտություն խնդրեցին. Ավստրիան զբաղված լինելով ֆրանսիական հեղափոխական շարժումներով՝ զիջեց. նրան հետևեց նաև Ռուսիան: Այսպիսով տաճիկները վերջնականապես Ղրիմից ու Կուբանից ձեռք քաշեցին:

Կարգը եկել էր Լեհաստանին վերջին հարվածը տալու:

Իր առաջին անդամահատությունը կրելուց հետո, Լեհաստանն սթափվեց. տեսնելով որ իր տկարությունը կայանում է գլխավորապես թագավորի ընտրական դրության և ազատ վետոյի մեջ, թագավորությունը ժառանգական դարձրին և վետոն ջնջեցին (1791 թ.): Այս նոր կարգադրությունը դուր չեկավ ո՛չ Ռուսիային, որ ուզում էր միշտ խառնակ վիճակի մեջ տեսնել երկիրը՝ հեշտությամբ կուլ տալու համար, և ո՛չ էլ մի խումբ ազնվականների, որոնք իրենց օգտի համար կողմնակից էին հին անիշխանական կազմին: Սրանք

դիմեցին Ռուսիայի օգնության և նրա հետ միացած, դաշնակցություն կազմեցին կռվելու համար նոր պետության դեմ: Ռուսները, նրանց հետևելով նաև պրուսիացիք, մտան Լեհաստան, լեհերի դիմադրությունը խորտակեցին և կատարեցին Լեհաստանի երկրորդ բաժանումը, խլելով նրանից մի քանի գավառներ ևս (1793 թ.): Լեհ հայրենասերները կատաղեցին և մի հուսահատական փորձ արին կռվելու ռուսների դեմ. նրանք ջարդեցին Վարշավայի ռուսական զորքը, բայց չկարողացան դիմանալ երկար: Ռուսները գրավեցին Վարշավան և Պրուսիայի և Ավստրիայի հետ միացած, երրորդ անգամ բաժանեցին Լեհաստանը և նրա քաղաքական գոյության վերջ տվեցին (1795 թ.):

Այս բոլոր նվաճումները կատարվեցին լռիկ-մնջիկ: Ֆրանսիան շատ բորբոքվեց Լեհաստանի աղետով, բայց այստեղ ծագած հեղափոխությունը թույլ չտվեց որ մի որևէ ձևով կարենային օգնության հասնել նրան:

215. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Լեհաստանի և Թուրքիայի հարցի հետ Կատարինե կայսրուհին փորձեր սկսեց գրավելու պարսիկների հողերը Կովկասում: Ժամանակը շատ հարմար էր. Նադրշահից հետո նրա մեծ կայսրությունը կտոր-կտոր էր եղել. անիշխանությունը տիրում էր ամեն կողմ. Պարսկաստանի զանազան մասերում ձևացել էին մանր ինքնագլուխ միապետներ. այս պատճառով ռուսների համար շատ հեշտ պիտի լիներ պարսկական հողերի նվաճումը: Այս մասին իբր միջոց պիտի ծառայեին հայերը և հետո վրացիները: Կայսրուհին նախ բանակ ուղարկեց և գրավեց Դերբենդը, Բաքուն և Շամախին, որ Նադրշահի ժամանակից պարսիկների ձեռքում էին: Ռուսների մոտենալը նորից հույսեր ներշնչեց Ղարաբաղի մելիքներին և վրացիներին, որոնք սկսեցին բանակցություններ վարել կայսրուհու հետ և նրան հավատարմության երդում տվեցին:

Բայց Ղարաբաղն այլևս այն ինքնավար երկիրը չէր, ինչ որ էր Պետրոս Մեծի շրջանին: Նադրշահի մահից հետո Ղարաբաղի մելիքների մեջ մի մեծ կռիվ էր սկսվել: Վարանդայի Մելիք Շահնազարը իր անդրանիկ եղբորն սպանելով՝ բռնի խլել էր նրա գահը. մյուս մելիքները նրա ապօրինի վարմունքի դեմ միաբանած՝

պատերազմի էին դուրս եկել: Շահնազարը հաղթելու համար նրանց, միացել էր ջիվանշիրների ցեղապետ Փանահ խանի հետ և նրան հրավիրել էր իր երկիրը: Երկուսը միասին հիմնել էին Շուշու անառիկ բերդը և այդտեղից սկսել էին պատերազմը մյուս մելիքների դեմ, որ տևեց 12 տարի: Վերջապես մելիքներն ընկճվեցին և Փանահ խանը ամբողջ Ղարաբաղին տեր դարձավ: Նրա որդի Իբրահիմ խանը, օգտվելով Պարսկաստանի ընդհանուր վիճակից, ինքն էլ թոթափեց պարսկական լուծը և անկախաբար իշխում էր: Երբ նա լսեց, թե հայ մելիքները հարաբերության մեջ են մտել ռուսների հետ և նրանց հավատարմության թուղթ են տվել, կատաղեց, կաթողիկոսին թունավորեց, հայ մելիքների երկիրը ասպատակեց, անթիվ հայերի կոտորեց, մնացածները փախան և ապաստան գտան Հյուսիսային Կովկասի քաղաքներում:

Այս միջոցին Պարսկաստանում ասպարեզ դուրս եկավ Աղա Մահմադ խանը, որ մի առ մի ընկճելով ապստամբ միապետներին, ամբողջ Պարսկաստանին տեր դարձավ. նա եղավ Ղաջարների հարստության հիմնադիրը, իր աթոռը հաստատեց Թեհրանում (1785 թ.): Պարսկաստանից նա արշավեց Կովկաս՝ պատժելու համար Ղարաբաղի Իբրահիմ խանին, որ չէր ճանաչում իր իշխանությունը և Վրաց Հերակլ թագավորին, որ իր երկիրը ռուսների հովանավորության տակ էր դրել: Նա մարդիկ ուղարկեց հայոց մելիքներին և հրավիրեց, որ գան հպատակվելու իրեն, խոստանալով որ կհաստատի իրենց իշխանության մեջ և իրենց թշնամի Իբրահիմ խանին կոչնչացնի: Բայց մելիքները, որոնք դեռ հույս ունեին ռուսների օգնությամբ ազատություն գտնելու, մերժեցին թագավորի առաջարկը և իրենց թշնամի Իբրահիմ խանի հետ միացած, որոշեցին կռվել: Թագավորը մի քիչ զորք թողեց Շուշու առաջ և ինքն արշավեց Թիֆլիս: Վրաց Հերակլ թագավորը չկարողացավ երկար դիմանալ և քաղաքը թողնելով թշնամու ձեռքը՝ փախավ: Պարսիկները մտան Վրաստանի մայրաքաղաքը, 3 օր քարուքանդ արին, շատ մարդկանց կոտորեցին և 16 000 գերի վերցնելով, որոնց 3/4-ը հայ էր, քշեցին Պարսկաստան:

Աղա Մահմադ խանն այս անգամ կանգնեց Շուշու առաջ. քաղաքը չկարողացավ դիմանալ և անձնատուր եղավ: Հայտնի չէ թե ի՛նչպիսի սարսափներ պիտի գործեր թագավորն ապստամբ խանի և ըմբոստ հայերի դեմ. եթե իր սենեկապետը, որ ծածուկ հայ է համարվում, նույն գիշերը չսպաներ նրան (1797 թ.):

Թագավորի մահվան վրա պարսկական բանակը ցրվեց. երկրում սկսվեցին գահակալական կռիվները մի շարք թեկնածուների միջև. ռուսներն այս անցքերը լսելով, իրենց զորքը շարժեցին և տեր դարձան Վրաստանին ու Ղարաբաղին:

216. ՆԱՊՈԼԵՈՆ Ա-Ի ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիրեկտորիայի վերջին շրջանում արդեն հանրապետությունն անվանական էր դարձել Ֆրանսիայում. Բոնապարտը եկավ ավելի տկարացնելու և չեզոքացնելու իր երկու ընկեր հյուպատոսներին, ամբողջ կառավարությունն իր վրա վերցրեց: Նա կազմակերպեց երկիրը նոր կարգով. տերության գանձարանը կարգի բերեց՝ բոլոր դասակարգերն էլ ենթարկելով միատեսակ հարկի, որ եկամտի քառորդ մասն էր. արդարադատության համար հիմք բռնելով հռոմեական օրենքը, նոր պահանջների համեմատ վերամշակեց և հրատարակեց Նապոլեոնյան օրինագիրքը, դպրոցական գործը խլելով եկեղեցական իշխանության ձեռքից, ենթարկեց պետական իշխանության, ընդունելով հանդերձ կրոնի ազատությունը՝ կաթոլիկ կրոնը պետական կրոն ճանաչեց և պապի հետ համաձայնության գալով՝ խլված եկեղեցական կալվածների փոխարեն՝ եկեղեցու նյութական ապահովությունը պետության վրա վերցրեց. վտարված ազնվականներին Ֆրանսիա վերադարձնելով, ազատ ապրելու և պետական ծառայության մեջ մտնելու իրավունք տվեց: Բայց այս բոլորից ավելի նա աշխատեց վերականգնել Ֆրանսիայի գերիշխանությունը ամբողջ Եվրոպայի վրա:

Նապոլեոնն իր մեծ բանակով անցավ Ալպյան լեռները և Մարենգոյի մոտ ջարդեց ավստրիացիներին: Կայսրը հաշտություն խնդրեց և Հռենոսի ափը, ինչպես և Իտալիայի զանազան մասերն անցան Ֆրանսիային: Դրա հետ միասին Գերմանիան նոր կազմակերպություն ստացավ. հոգևոր տիրապետությունն աշխարհականացավ, մանր իշխանությունները հպատակվեցին մեծերին և կայսրը թողնելով «հռոմեական» տիտղոսը, դարձավ պարզապես Ավստրիայի կայսր: Այս հաղթությունների վրա Նապոլեոնն էլ իրեն հրատարակեց Ֆրանսիայի կայսր, որ և հաստատվեց ժողովրդական ընդհանուր քվեարկությամբ (1804 թ.):

Եվրոպան ընկճելուց հետո, Նապոլեոնը դուրս եկավ Անգլիայի

դեմ. բայց անգլիացիք կարողացան կազմել մի նոր դաշ-նակցություն, որի մեջ մտան Ռուսաստանն ու Ավստրիան: Նապոլեոնը կազմակերպեց մի լավ նավատորմ, որ ուղարկեց Անգլիայի դեմ և մի բանակ, որ տարավ դաշնակիցների դեմ: Նավատորմը ջարդուփշուր եղավ, բայց ցամաքային բանակը մեծ հաջողություն ունեցավ. Նապոլեոնն Աուստերլիցում անճամբ ճակատ հարդարեց երկու կայսրների դեմ և ջարդեց նրանց. Ավստրիացիք հաշտություն խնդրեցին և դուրս եկան դաշ-նակցությունից. այն ժամանակ մեջ մտավ Պրուսիան, որ պարծենում էր իր քաջարի բանակով. բայց նրա բանակն էլ Ենայում ջարդվեց և Նապոլեոնը Բեռլին մտավ:Պրուսիայի թագավորը դիմեց ռուսներին և նրանց հետ միացած նորից դուրս եկավ. բայց Նապոլեոնը երկուսին էլ ջարդեց, այնպես որ Ռուսաստանը թողեց դաշնակցությունը և բարեկամացավ Նապոլեոնի հետ. քիչ հետո դարձյալ դուրս եկավ Ավստրիան, բայց այս անգամ էլ հաղթվեց Վագրամի մոտ և հաշտություն խնդրեց:

Այսպես ֆրանսիական կայսրությունը հասավ մի այնպիսի մեծության, որի նմանը Կեսարից հետո չէր տեսնվել Եվրոպայում: Նվաճված երկրները կա՛մ ուղղակի միացան Ֆրանսիային և կա՛մ նրա հովանավորության տակ դաշնակից թագավորություններ դարձան, որոնց վրա Նապոլեոնը թագավոր դրեց իր այս կամ այն ազգականին կամ նշանավոր զորավարին: Այսպես Բելգիան, Հոլանդիան, Գերմանիայի և Իտալիայի մի մասը, Պորտուգալիան և Իսպանիան միացան Ֆրանսիային, իսկ վասալական պե-տություններ կազմեցին Լոմբարդիայի, Նապոլիի (Հարավային Իտալիա), Իլլիրիայի (Իստրիա և Դալմացիա), Վեստֆալիայի (որի մեջ մտան Հռենոսից մինչև Էլբա եղած գերմանական և պրուսական հողերը), Բավարիայի, Վյուրտեմբերգի, Սաքսոնիայի թագավորությունները, Զվիցերիական հանրապետությունը և Վարշավայի մեծ դքսությունը, որ կազմվեց Պրուսիայի լեհական հողերից: Գերմանական երկրներից Նապոլեոնը կազմեց Հռե-նոսյան դաշնակցությունը, որի նպատակն էր կոտրել Ավստրիայի և Պրուսիայի ուժը: Նապոլեոնը դաշինք կապեց ռուսաց Ալեքսանդր կայսեր հետ և թույլ տվեց նրան գրավել Ֆինլանդիան շվե-դացիներից և Բեսարաբիան թուրքերից: Ֆրանսիական ազդե-ցությունը տարածվեց ամեն կողմ: Ուր որ մտան ֆրանսիացիք, ավատական կարգերը և ճորտությունը վերացրին և Նապոլեոնի

օրենքները հաստատեցին: Նույնիսկ պրուսիացիք զգալով իրենց թույլ կողմերը, աշխատեցին բարեկարգվել նոր հիմքերի վրա, նրանք ուժ տվեցին քաղաքային ինքնավարության, ազատ զինվորական դրության, ուսման տարածման, նույնիսկ բաց արին Բեռլինի համալսարանը, որ կարճ ժամանակում իր շուրջը հավաքեց նշանավոր գիտական ուժեր:

217. ՆԱՊՈԼԵՈՆԻ ԱՆԿՈՒՄԸ. ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ

Բայց Ֆրանսիան իր հետ թշվառությունն էլ էր բերել. մշտական պատերազմները, բանակների կորուստը, ծանր տուրքերն ու տուգանքները բոլորին ուժասպառ արին: Նվաճված երկրները գլուխ բարձրացրին: Առաջին անգամ ապստամբեցին իսպանացիք, որոնք ուժ չունենալով մեծ ճակատամարտներով չափվելու Նապոլեոնի հետ, սկսեցին պարտիզանական պատերազմը: Այսպիսի կռվի մեջ չէր կարող գլուխ ելնել Նապոլեոնը իր մեծ բանակով, ուստի թողեց երկիրն իր զորավարներին: Անգլիացիք օգնության հասան իսպանացիներին. նրանց զորավարը, Վելինգտոն, քանի անգամ ջարդեց ֆրանսիական զորքը Իսպանիայում: Նապոլեոնը, տեսնելով որ իր թույլ նավատորմով անկարող է հարվածել Անգլիային, կազմակերպեց մայր ցամաքի պաշարումը. ամեն մի նավ, որ մտնում էր անգլիական որևէ նավահանգիստ, հարքունիս էր գրավվում: Այս միջոցին Նապոլեոնը ուզեց ջնջել անգլիական առևտուրը:

Բայց այս միջոցը մեծ նշանակություն չունեցավ Անգլիայի համար, որովհետև, նախ՝ նա շատ ընդարձակ գաղութներ ուներ, երկրորդ՝ անգլիացիք գրավեցին Ֆրանսիայի և նրա դաշնակիցների բոլոր գաղութները աշխարհի ամեն անկյունում, ոչնչացրին ֆրանսիական և հոլանդական առևտուրը և վերջապես նույնիսկ Եվրոպան սկսեց դժգոհել Նապոլեոնի կարգադրության դեմ, որովհետև առանց որոշ անգլիական ապրանքների ապրել անկարող էր:

Անգլիայի նման ընկճված չէր նաև Ռուսիան, որ թեև Նապոլեոնի հետ բարեկամական դաշն էր կապել, բայց այդ դաշինքը շատ խախուտ էր և ժամանակավոր: Նապոլեոնը հարմար րոպեի էր սպասում՝ նրան էլ տալու իր վճռական հարվածը: Ցամաքային

պաշարումը, Լեհաստանը վերականգնելու փորձերը սառեցրին ռուսներին և վերջապես բռնկվեց պատերազմը երկու կայսրությունների միջև: Նապոլեոնը կազմակերպելով 600 000-անոց մի բանակ, որի կենտրոնը կազմում էին ֆրանսիացիք, իսկ թևերը գերմանական, պրուսիական, ավստրիական, իտալական և լեհական օգնական զորքերը, արշավեց Ռուսիա: Այս ահավոր բանակի դեմ ռուսները 200 000 զորք միայն ունեին, ուստի նրանք չուզեցին մեծ ճակատամարտներ մղել, այլ շարունակ նահանջում էին երկրի ներսերը: Նապոլեոնը հասավ մինչև Մոսկվա, բայց նա գտավ քաղաքը այրված և դատարկ. ամբողջ ժողովուրդը հեռացել էր, իր հետ տանելով նաև պաշարը. այնպես որ Նապոլեոնը իր բանակի համար ուտելու պաշար չգտավ: Վրա հասավ Ռուսաստանի սաստկասառույց ձմեռը և Նապոլեոնը գլխիկոր ստիպվեց հետ քաշվել: Ռուսներն ընկան նրա հետևից և շարունակ հարվածում էին: Նապոլեոնը հազիվ կարողացավ իր բանակի մնացորդներով հասնել Ֆրանսիա, ուր հրամայեց նոր բանակ կազմել: Բայց արդեն իր պարտության լուրը տարածվել էր ամեն տեղ. բոլոր նվաճված ազգերը քաջալերված ոտքի կանգնեցին. Պրուսիան դուրս եկավ Նապոլեոնի դեմ, նրան միացան Շվեդիան և Ավստրիան. Ֆրանսիայում այլևս երիտասարդություն չէր մնացել. բոլորը կոտորվել էին այնքան տարվա կռիվների ընթացքում: Նապոլեոնը հավաքեց իր վերջին ուժերը և Վանդամի մոտ ճակատեց թշնամիների հետ. սաքսոնացիք և բավարացիք, որ Նապոլեոնի դաշնակիցներն էին, անցան թշնամու կողմը. Նապոլեոնի բանակը ջարդվեց. դաշնակիցներն արշավեցին Փարիզի վրա. մայրաքաղաքն ընկավ. Նապոլեոնը հրաժարվեց իր գահից և քաշվեց Էլբա կղզին. ֆրանսիացիք ջնջեցին կայսրությունը և հաշտություն խնդրեցին. Լուի ԺԸ մտավ Փարիզ և վերականգնեց Ֆրանսիայի թագավորությունը նախկին սահմաններով (1814 թ.):

Նապոլեոնը մի նոր փորձ ևս արեց. օգուտ քաղելով ֆրանսիացիների ընդհանուր դժգոհությունից, որ հարուցել էր Լուի ԺԸ-ը նախկին ազնվապետական կարգերը հիմնելով, նա երևաց Ֆրանսիայի հարավային կողմը (1815 թ. մարտ 1): Իր դեմ ուղարկված զորքը իսկույն իրեն միացավ և նա մտնելով Փարիզ, ուղղակի արշավեց Բելգիա, որտեղ գտնվում էին անգլիական և պրուսիական բանակները Վելինգտոնի և Բլյուխերի հրամանա-

տարության տակ: Վատերլոյի մոտ տեղի ունեցավ վերջին վճռական ճակատամարտը. Նապոլեոնը հաղթվեց և թշնամիներին հանձնվեց. նրան աքսորեցին Ս. Հեղինե հեռավոր կղզին: Վիեննայի վեհաժողովում կնքվեց հաշտության դաշինքը. Ռուսիան ստացավ Վարշավայի մեծ դքսությունը, Պրուսիան ստացավ լեհական մյուս հողերը, Պոմերանիան և մինչև Հռենոս եղած երկրները, Ավստրիան ստացավ Լոմբարդիան, Տիրոլը, Վենետիկը և գերմանական 38 պետությունների դաշնակցության գլուխն անցավ, Շվեդիան միացրեց Նովեգիան, Հոլանդիան և Բելգիան կազմեցին միացյալ անկախ թագավորություն, Զվիցերիան դարձավ չեզոք երկիր, Պորտուգալիայի, Իսպանիայի, Սարդենիայի և Երկու Սիկիլիաների թագավորությունները, ինչպես և պապական երկիրը վերականգնվեցին, իսկ Անգլիան պահեց իր գրաված գաղութների մեծ մասը:

218. ՍՐԲԱԶԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիական հեղափոխության ազատական սկզբունքները միայն Ֆրանսիայում չմնացին, կամաց-կամաց նրանք թափանցեցին բոլոր այն երկրները, որոնք բռնապետական կարգերի տակ նեղված էին և բոլոր այն ազգերի մեջ, որոնք օտարների լուծի տակ ճնշված էին: Ամերիկայից մինչև Եգիպտոս ազատության և անկախության շունչը տարածվեց:

Պետություններն ստիպվեցին իրենց ժողովուրդներին տալ որոշ իրավունքներ. այսպես Լուի ԺԸ-ը Ֆրանսիայում ընդունեց ներկայացուցչական կազմը, ռուսների Ալեքսանդր Ա կայսրը Լեհաստանին տվեց որոշ սահմանադրական կարգեր, Գերմանիայում և Պրուսիայում հաստատվեցին նույնպես ներկայացուցչական հիմնարկություններ: Բայց այս բոլորը բավական չէին:

Վիեննայի վեհաժողովը, որ կոչված էր դարմանելու Եվրոպայի խառնակ վիճակը, շատ ճնշված ազգերի համար ո՛չ մի կարգադրություն չարեց և այսպիսով նրանք որոշեցին իրենց ձեռքով իրենց վիճակին դարման տանել աշխատելու:

Գերմանիայում, ուր ժողովուրդը տասնյակներով իշխանությունների էր բաժանված, զգում էին, որ իրենք մի ազգ են. ազատական շրջանները, հատկապես ուսանողությունը, մտածում

էին Գերմանիայի միության և ազատագրման մասին և նույնիսկ ցույցեր սկսեցին ավստրիական իշխանության դեմ: Իտալական զանազան մասերում կազմվել էին կարբոնարների (ածխագործ) ծածուկ ընկերությունները, որոնց նպատակն էր Իտալիայի միությունը և ազատությունը: Իսպանիայում զորքն ապստամբեց և ստիպեց թագավորին ընդունել սահմանադրությունը, որ կազմված էր ֆրանսիականի օրինակով, բայց ավելի ազատ կարգերով: Նույնպիսի ապստամբություններ տեղի ունեցան նաև Պորտուգալիայում, Նապոլիում, Սարդենիայում և այս երեք երկրներում էլ բռնի մտցրին իսպանական սահմանադրությունը:

Ժողովուրդների մեջ աճող այս շարժումից վախեցան թագավորները և Ռուսիայի կայսրը նախաձեռնող հանդիսացավ հիմնելու սրբազան դաշնակցությունը, որի նպատակն էր պահել պետությունների կազմը անոփոխ և միացյալ, ուժով ճնշել այն բոլոր ազատական շարժումները, որ երբևիցե մի ժողովուրդ կհանդգներ ցույց տալ իր վեհապետի իրավունքների դեմ: Այս դաշնակցության համամիտ եղան Եվրոպայի բոլոր վեհապետները, բայց հատկապես դաշնակցությունը կնքվեց Ռուսիայի, Պրուսիայի և Ավստրիայի միջև: Անգլիան հրաժարվեց միանալ, որովհետև երկիրն այն ժամանակ թագավորի ձեռքում չէր, այլ մի խնամակալի: Դաշնակցության հոգին դարձավ Ավստրիայի առաջին մինիստր Մետեռնիխը, որ երկու հարևան պետությունների օգնությամբ Ավստրիայի դիրքը զորացնելով, ռեակցիան տարածեց ամբողջ Եվրոպայի վրա (1815 թ.):

Գերմանական շարժումը ճնշելու համար Մետեռնիխը ստիպեց գերմանական կառավարություններին հաստատել գրաքննչական և ոստիկանական խիստ հսկողություն՝ ազատ գաղափարների տարածման, համալսարանի և ուսանողության դեմ: Իտալիայի վրա արշավեց ավստրիական բանակը, Նեապոլում և Պիեմոնտում խեղդեց իտալացիների դիմադրությունը, պապական նահանգում վերականգնեց ճիզվիտական կարգը, իսկ Իսպանիայի վրա արշավեց ֆրանսիական բանակը, ապստամբներին նվաճեց և թագավորի միահեծան իշխանությունը վերահաստատեց:

Սրբազան դաշնակցության ճնշումից ազատ մնացին միայն Ամերիկայի ժողովուրդները և հույները, որոնց վրա կխոսենք այժմ:

219. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Հարավային Ամերիկան Իսպանիայի ձեռքն անցավ դեռ 16-րդ դարում. այս ահագին տարածությունը, որ Եվրոպայի կրկնակի մեծությունն ունի և տարածվում է Մեքսիկայից մինչև Պատագոնիա, իսպանացիք բաժանել էին 4 փոխարքայության՝ Մեքսիկա, Նոր Գրենադա, Պերու և Բուենոս-Այրես և 8 կապիտանության: Երկիրը կառավարվում էր խիստ բռնապետական կարգերով. ամեն վարչական պաշտոն տրվում էր միայն իսպանացիներին, որոնք ուրիշ բանի մասին չէին մտածում, եթե ոչ շուտ և շատ հարստություն դիզել: Նրանց ներելի էր ամեն ապօրինություն: Տեղացիները և սևամորթները անասունի տեղ էին գործածվում, և որպեսզի որևէ ըմբոստություն չծագի նրանց մեջ, շարունակ նրանք գրգռում էին տեղացի տարբեր ցեղերին միմյանց դեմ: Երկիրը խավար և հետամնաց վիճակում պահելու համար արգելել էին երկրագործությունը, արհեստներն ու վաճառականությունը. ամենաբերրի հողերը թողնվել էին երեսի վրա. խաղող տնկել անգամ ներելի չէր. առևտուրը միայն Իսպանիայի հետ պիտի լիներ. իսպանական նավերն էին, որ իրենց երկրի ապրանքները ներմուծում էին Ամերիկա և երբ Իսպանիայի արդյունաբերությունը մեռավ, իրենք էին դարձյալ, որ եվրոպական երկրների անպետք ապրանքները բերում էին ներս: Փայտն ու երկաթն անգամ ստիպված էին Իսպանիայից գնել: Ո՛չ մի օտարականի, նույնիսկ գիտական նպատակով, իրավունք չէր տրված այցելել Ամերիկա:

Վերջին ժամանակները իսպանացիների այս խստությունները մի քիչ մեղմացան. անգլիացիք դրսից ներս և հետո Ամերիկայի գաղութները իրար մեջ առևտուրով զբաղվելու իրավունք ստացան: Այն ժամանակից սկսեց կյանքը շարժվել: Իսպանիայի նպատակն էր երկիրը միշտ հեռու պահել նոր գաղափարներից, բայց Միացյալ Նահանգների ազատությունը և անգլիացիների սերմանած ազատական գաղափարները շուտով վարակեցին նրանց և Հարավային Ամերիկայի գաղութներն էլ սկսեցին ձգտել ազատության:

Երբ Նապոլեոնը Իսպանիա արշավեց և տեղական թագավորին դուրս քշելով իր ազգականին նոր թագավոր դրեց, ամերիկացիք

այս առիթը պատճառ բռնեցին և Իսպանիայի հպատակությունից դուրս եկան: Ապստամբությունը պայթեց 4 տեղ միաժամանակ: Առաջին անգամ ապստամբության դրոշը բարձրացրեց Վենեսուելան Միրանդայի առաջնորդությամբ, որ Վաշինգտոնի հին զինակից ընկերն էր (1809 թ.). ապստամբությունը շուտով տարածվեց Նոր Գրենադա և Կուիդո: Հաջորդ տարին (1810 թ.) ապստամբեցին Մեքսիկան՝ հյուսիսային կողմում, Բուենոս-Այրեսը՝ հարավային կողմում, որ իր հետ քաշեց նաև Պարագվայը և Մոնտեվիդեոն և Չիլին՝ արևմտյան կողմում: Առաջին ապստամբական շարժումները շուտով նվաճեցին իսպանացիք մեծ խստությամբ, բայց չկարողացան շարժումը արմատախիլ անել: Դուրս եկան նոր գործիչներ, որոնք ապստամբության գործի գլուխը կանգնեցին. այսպիսիներից նշանավոր եղավ Բոլիվարը, որ անգլիացիների օգնությամբ ջարդեց իսպանական զորքը և անկախ հայտարարեց Կոլումբիան, Վենեցուելան և Էքվատորը, որոնք կազմեցին միացյալ դաշնակցային հանրապետություն: Ամենից հետո ապստամբեց Պերուն, որովհետև այստեղ կյանքի պայմանները շատ ավելի տանելի էին քան ուրիշ տեղեր: Բոլիվարը այստեղ էլ հասավ և իսպանացիներին հաղթելով՝ երկիրն ազատեց: Պերուն կազմեց անկախ հանրապետություն, իսկ նրա հարավային մասը բաժանվելով Պերուից, կազմեց մի նոր երկիր, որ իր ազատարարի անվամբ կոչվեց Բոլիվիա: Ազատված երկրներն առհասարակ իրար հետ միանալով ձևացնում էին դաշնակցական հանրապետություններ, ինչպես Կոլումբիայի, Վենեցուելայի և Էքվատորի միացյալ հանրապետությունները, Արգենտինայի հանրապետությունը, որ պարունակում էր Ուրուգվայը և Պարագվայը. այսպես նաև Պերուն, Կոլումբիան և Բոլիվիան, որոնք իրենց նախագահ ընտրեցին Բոլիվարին: 1821 թվականին Մեքսիկայի բնիկներից մեկը՝ Իտուրբիդեն, իշխանության գլուխ կանգնելով, հայտարարեց իրեն կայսր և հիմնեց Մեքսիկայի կայսրությունը, որին միացավ նաև Կենտրոնական Ամերիկան: Բայց իր խստություններն ստիպեցին իր հպատակներին ապստամբել. բաժանվեց Վերակրուզը և հիմնեց անկախ հանրապետություն. մեքսիկացիք սպանեցին նրան և երկիրը հանրապետություն հայտարարեցին. այն ժամանակ նրանից բաժանվեց Կենտրոնական Ամերիկան, որ կազմեց Գուատեմալայի միացյալ հանրապետությունը (Գուատեմալա, Կոս-

տա-Ռիկա, Նիկարագուա, Սան-Սալվադոր և Հոնդուրաս):

Այսպես քառորդ դարում Ամերիկայի բոլոր երկրներն ազատվել էին և իսպանացիների ձեռքում մնացել էր միայն Կուբան և Պորտո-Ռիկոն:

Ամերիկայի ազատարար Բոլիվարը 1826 թվականին Պանամայում կազմեց Ամերիկայի բոլոր հանրապետությունների վեհաժողովը և աշխատեց հիմնել մի ընդհանուր դաշնակցական հանրապետություն բոլոր ամերիկյան երկրների՝ Միացյալ Նահանգների օրինակով. բայց իր աշխատանքը զուր անցավ. կասկածում էին, որ նա նպատակ ունի հիմնել իրեն համար մեծածավալ մի կայսրություն: Իր մահից հետո նույնիսկ միացյալ հանրապետությունները սկսեցին մղել միմյանց դեմ ներքին անվերջանալի պատերազմներ և ապստամբություններ և իրարից բաժանվելով, կազմեցին ինքնուրույն հանրապետություններ, որոնց թիվն այսօր հասնում է 17-ի: Վերջին երկիրը Բրազիլիան եղավ, որ կայսերական իշխանությունը տապալեց և հիմնեց հանրապետություն (1889 թ.):

220. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պարսիկները չէին կարող հեշտությամբ մոռանալ այն, որ ռուսներն առանց մի կաթիլ արյուն թափելու, լոկ հայոց ու վրացիների միջոցով տեր էին դարձել այնքան ընդարձակ հողերի: Ուստի մի քանի տարի պատրաստություն տեսնելուց հետո, պատերազմի դուրս եկան կորցրած գավառները հետ գրավելու համար: Նրանք իրենց հույսը դրել էին Նապոլեոնի օգնության վրա. իրոք այդ ժամանակ Նապոլեոնը ծրագրել էր Պարսկաստանի միջով մի արշավանք կազմակերպել դեպի Հնդկաստան՝ կռվելու համար անգլիացիների դեմ. և այս նպատակով արդեն սկսել էր մոտենալ պարսկական արքունիքին, նրանց բանակի համար կազմակերպիչներ էր ուղարկել. բայց անգլիացիք վրա հասան և ֆրանսիական ծրագիրը ջուրն ընկավ: Այսպես պարսիկները մենակ մնացին ռուսների դեմ. ու թեև ռուսները սակավաթիվ էին, բայց տեղացի հայոց շնորհիվ վերջ ի վերջո հաղթեցին պարսիկներին, որոնք ստիպվեցին հաշտություն խնդրել և Ղարաբաղն ու մի քանի գավառներ ռուսներին թողնել (1813 թ.):

Այս հաշտությունն էլ վերջնական չէր պարսիկների կողմից: Նրանք էլի մի քանի տարի իրենց ուժերը հավաքեցին և նոր զորությամբ հարձակում սկսեցին: Պարսիկների 80 000 զորքն անցավ Երասխը և Շուշին պաշարեց: Մի բանակ էլ գնաց Գանձակի վրա, գրավեց և առաջացավ մինչև Շամքոր, ուր սպասում էր Շուշու գլխավոր բանակին, որպեսզի միաբան ուժով արշավեն Թիֆլիսի վրա: Շուշում ռուս զորքը շատ քիչ էր և բավական պաշար ու հրանոթ էլ չուներ: Բայց հայ ժողովուրդը միացավ նրանց հետ, կանայք անգամ պատնեշները բարձրանալով օգնում էին կռվողներին: Պարսիկներն ամեն տեսակ խոստումներով աշխատում էին հրապուրել հայերին իրենց կողմը, բայց ամեն ինչ ապարդյուն անցավ և հայոց շնորհիվ Շուշին անձնատուր չեղավ:

Այս միջոցին ռուսները շարժվեցին Թիֆլիսից. Մատաթյան հայ զորավարը մի գունդ զորքով հասավ Շամքոր, ջարդեց պարսիկներին և արշավեց Գանձակի վրա: Պարսկական գլխավոր բանակը թողեց Շուշին և շտապեց Գանձակ, բայց նույնպես մի ահավոր ջարդ կրելով Մատաթյանի սակավաթիվ զորքից, փախավ իր երկիրը:

Այս հաղթությունների վրա ռուսների բանակը հրաման ստացավ զանազան թևերով առաջ շարժվելու և բուն Պարսկաստան մտնելու: Աննկարագրելի է այն ցնծությունը, որ ռուսների արշավանքի լուրը պատճառեց հայերին: Մահմեդականների դարավոր լծից զզված, նրանք տեսան որ հասել է ազատության ժամը: Վրաստանի հայոց առաջնորդ Ներսես Աշտարակեցին, ռուսներից խոստում ստանալով Հայաստանի ինքնավարության համար, հրավեր կարդաց հայ ժողովրդին: Ամեն կողմից թափվեցին հայ կամավորները և Ներսեսն առանձին գունդ կազմած, խաչը ձեռքին անձամբ առաջնորդում էր հայկական գնդին դեպի կռիվ՝ հայրենիքի ազատության համար: Հայերն ամեն տեղ գրկաբաց ընդունեցին ռուսներին և ո՛չ միայն իրենց արյունը զոհաբերեցին, այլև իրենց վերջին պաշարը տրամադրեցին ռուս բանակին, գաղտնի ճանապարհները ցույց տվեցին և թշնամու գաղտնիքները երևան հանեցին: Պարսիկները տեսնում էին այս բոլորը և իրենց ամբողջ վրեժը հայերից էին հանում. կողոպտում և այրում էին հայկական գյուղերը, բնակիչներին կոտորում կամ դեպի Պարսկաստան գերի քշում: Բայց ո՛չ մի բան չվախեցրեց հայերին:

Այս հանգամանքների տակ ռուսների բանակը շարունակ առաջ էր մղում հաղթական արշավը. Մատաթյանն իր գնդով և հայ կամավորներով մտավ Ղարաբաղ և մինչև Ահար առաջացավ, իսկ ռուսների գլխավոր բանակը գրավեց Էջմիածինը, Նախիջևանը և Երևանը, որ Արևելյան Հայաստանի մայրաքաղաքն էր: Այնուհետև մտան Ատրպատական, գրավեցին մինչև Թավրիզ և առաջարկեցին պարսիկներին հաշտվել: Պարսիկները հաշտությունը մերժեցին և երբ ռուսները շարունակելով իրենց արշավանքը, մի կողմից Արտաբիլ և մյուս կողմից մինչև Ուրմիա հասան, զիջեցին և զենքը ցած դրեցին: Թուրքմենչայում կնքվեց հաշտության դաշնագիր, որով Վրաստանի հետ ամբողջ Արևելյան Հայաստանը անցավ ռուսներին և Երասխը երկու տերությունների սահման որոշվեց (1828 թ.):

221. ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանցիք իրենց բռնակալ կայսրությունը հիմնեցին Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի զանազան քրիստոնյա և մահմեդական երկրների ավերակների վրա: Գտնվելով այդ ժողովուրդներից ավելի ցածր աստիճանի վրա, ապագայում էլ նրանք երբեք չքաղաքակրթվեցին և մնացին գրեթե նույն այն բարբարոսները, ինչ որ էին Թաթարիստանից դուրս եկած ժամանակ: Ամբողջ նրանց պետությունը հիմնված էր ջարդի, կոտորածի, ավերածի և կողոպուտի վրա: Բոլոր հպատակներն էլ հեծում էին նրանց լծի տակ. շատ տեղեր արդեն հպատակությունն ավանդական էր և առիթի էին սպասում ամբողջապես թափ տալու ստրկության լուծը: Երբ զորացավ Ռուսիան և կարողացավ հաջողապես հարվածել օսմանցիներին, քրիստոնյաների մեջ սկսեց հույսը Ռուսիայի օգնությամբ փրկություն գտնելու:

Այսպիսի երկրներից առաջինն էր Չերնագորիան, որի ժողովուրդը թառած լեռնային բարձունքներում, երբեք չէր հպատակվել թուրքերին: 1806 թվականին ապստամբեցին սերբիացիք և հաղթելով օսմանցիներին՝ ստացան վասալական իշխանության իրավունք: Այսպես եղավ նաև Ռումինիայի համար՝ ռուսների օգնությամբ: Հերթը եկավ հույներին:

Հունաստանի լեռնային մասերում վաղուց բուն էին դրել

կլեֆտները և պալիկարները, հայդուկային խմբակներ, որոնք կռիվ էին մղում տաճիկների դեմ: Նրանց առաջացրած մանր ապստամբությունները Մորեայում և Ալբանիայում խեղդվեցին արյան ծովի մեջ՝ Ալբանիայի կառավարիչ Ալի փաշայի ձեռքով: Բայց շարժումը չընկճվեց: Զանազան քաղաքներում կազմվեցին գաղտնի ընկերություններ, որոնք արտասահմանյան հույների միջոցով կապ հաստատեցին եվրոպական պետական անձանց և հատկապես ռուսների հետ:

Ապստամբության շարժառիթը եղավ Ալբանիայի կառավարիչ Ալի փաշան, որ մերժելով սուլթանի հպատակությունը, կռիվ սկսեց նրա բանակների դեմ: Հույները մոռացան նրա կատարած ջարդերը և միացան նրան: Իպսիլանտի անվամբ մի ռուսական հույն զորավար փոքր խմբով մտավ Վալաքիա և կոչ արեց հույներին ընդհանուր ապստամբության: Նա հաղթվեց և փախավ Ավստրիա: Մի քանի տարի հետո Հունաստանի զանազան քաղաքները ոտքի ելան (1821 թ.): Կազմվեց մի փոքր նավախումբ, որ իր գիշերային հանկարծական հարձակումներով կրակ էր տալիս տաճիկների նավերին: Օսմանցիք հույների ապստամբության պատասխանեցին մի սոսկալի ջարդով. Պոլսում կախեցին նրանց պատրիարքին՝ 100 կրոնավորների հետ: Հույները չհուսահատվեցին. ապստամբությունն ավելի տարածվեց և բռնեց կղզիները, ինչպես Քիոսն ու Սամոսը. շատ վայրեր կռվեցին հաջողությամբ. Ալբանիայի կռիվներն արգելում էին օսմանցիներին ավելի մեծ ուժով հարձակվելու նրանց վրա: Բայց երբ Ալբանիան պարտվեց և Ալի փաշան անձնատուր եղավ, տաճիկներն իրենց բոլոր ուժով ընկան հույների վրա: Քիոս կղզու 80 000 հույն բնակչությունը մեկ գիշերվա մեջ բնաջինջ եղավ. Մորեան գրավվեց և տաճիկները նրանց վերջին ճիգերը ջնջելու համար կանչեցին Եգիպտոսի փոխարքա Մեհմեդ-Ալի փաշային, որ իր նավատորմը 16 000 զորքով ուղարկեց Հունաստան, երկիրը նվաճեց և հասավ մինչև Միսոլունգի՝ ապստամբների վերջին ապավենը Կորնթոսի ծոցում: Ապստամբները երկար կռվից և սովից ուժասպառ, պայթեցրին իրենց քաղաքը և թշնամու հետ միասին թաղվեցին նրա փլատակների տակ: Հունաստանի ապստամբությունն ընկճված էր:

Եվրոպացի ազգերը մեծ համակրանք ունեին դեպի հույները՝ իբրև իրենց հին քաղաքակրթության ծնող. Անգլիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից և Ամերիկայից ուղարկում էին նրանց

շատ դրամ և մինչև անգամ կամավոր զինվորներ. այդպիսիներից մեկն էր անգլիացի նշանավոր բանաստեղծ Լորդ Բայրոնը: Երբ 8 տարի հերոսաբար մարտնչելուց հետո Հունաստանը մոտ էր այլևս ջնջվելու, եվրոպացիք ձայն բարձրացրին նրա համար: Առաջին անգամ բողոքեց Անգլիան. սրբազան դաշնակցությունը հակառակ էր հույներին՝ իբրև ապստամբների. բայց երբ ռուսների գահի վրա բարձրացավ Նիկոլա Ա կայսրը, որոշեց զենքով միջամտել կռվին: Իր միջամտությամբ շարժվեց Անգլիան, իր հետ քաշ տալով նաև Ֆրանսիան: Երեք պետությունների նավատորմիղը հավաքվեց Նավարինի առաջ և ոչնչացրեց ամբողջ տաճկական նավատորմը: Ռուսներն այդ միջոցին զբաղվել էին պարսկական պատերազմով և չէին կարող խոշոր մասնակցություն ցույց տալ կռվին. բայց հենց որ Թուրքմենչայի դաշնադրությամբ երկու կողմերը հաշտվեցին, Ռուսիան պատերազմ հրատարակեց տաճիկների դեմ. 100 000 ռուսական զորք սահմանն անցավ երկու կողմից. Գյումրիից նրանք իջան Կարս և գրավեցին. այդ ժամանակ Թեհրանում ծագեց ժողովրդական խռովություն. մոլեռանդ ամբոխը հարձակվեց ռուսական դեսպանի վրա և իր ընկերներով կոտորեց. տաճիկներն ուզեցին օգտագործել այս շարժումը և Պարսկաստանը նորից դուրս բերել ռուսների դեմ. այդպես էր պահանջում նաև խուժանը. իրոք էլ տեղ-տեղ սկսեցին ավազակային հարձակումներ Հայաստանի կողմից. բայց ռուսների հաջողությունները տաճիկների դեմ վախեցրին նրանց և կասեցրին այդ անխոհեմ քայլից: Տաճկաստանը մնաց մենակ: Կարսից հետո ընկան Ախալցխան, Արտահանը, Բայազետը և Կարինը, որ տաճիկների լավագույն բերդն էր համարվում: Մյուս կողմից ռուսներն անցան Բալկանները և Պոլսի վրա քայլեցին: Սուլթանն ստիպվեց հաշտություն խնդրել. հաշտության դաշինքը կնքվեց Ադրիանուպոլսում (1829 թ.), որի համաձայն Հունաստանն անկախություն ստացավ, Ռումինիան, Սերբիան և Չերնագորիան հարկատու իշխանություն դարձան, իսկ Ռուսաստանը գրավեց Սև ծովի եզերքից Անապան և Փոթին, իսկ Հայաստանից՝ Ախալցխան և Ախալքալաքը:

222. ՀՈՒԼԻՍՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Թագավորության վերահաստատումը Ֆրանսիայում ժողովրդին բաժանեց երկու թշնամի բանակի՝ արքայականներ և ազատա-

կաններ: Առաջինի կողմն էին ազնվականներն ու հոգևորականները, որոնք պահանջում էին իրենց կորցրած հողերն ու հին արտոնությունները և հակառակ էին հեղափոխության սերմանած գաղափարներին՝ իբրև անկրոնություն: Երկրորդի կողմն էր ազգի մեծ մասը, որ բաժանված զանազան կուսակցությունների, կազմել էր գաղտնի ընկերություններ և պատրաստվում էր կռվելու արքայականների դեմ:

Լուի ԺԸ-ը, թեև համակիր չէր ազատականներին, բայց վախենալով ժողովրդական պոռթկումներից, շնորհել էր երկրին պառլամենտական վարչություն, թեև սահմանափակ չափով: Բայց նրա հաջորդ Շարլ Ժ-ը դրդվելով Սրբազան դաշնակցությունից, բոլորովին հարեց կրոնականներին և ազնվականներին, նրանց զանազան արտոնություններ տվեց, ժողովրդի իրավունքները խլեց, ընտրական կարգը բոլորովին սահմանափակեց և խիստ գրաքննություն հաստատեց: Փարիզի բուրժուազիան և բանվորները միացան, փողոցներում պատնեշներ կանգնեցրին և դուրս եկան կռվելու կառավարության դեմ (1830 թ. հուլիս): Կռիվը երկու օր տևեց. զինվորներից շատերը ժողովրդի կողմը լինելով, թագավորը չկարողացավ գլուխ ելնել և ստիպվեց իր հրամանները հետ վերցնել: Բայց արդեն ուշ էր. ազատականները տապալեցին կառավարությունը. թագավորին հեռացրին և նրա տեղ դրեցին Լուի Ֆիլիպին, որ համաձայնվեց ազատականների պահանջներին:

Հուլիսյան հեղափոխությունը արձագանք գտավ Եվրոպայի զանազան կողմերը. ապստամբեցին բելգիացիք, լեհացիք և իտալացիք: Բելգիացիք, որ Վիեննայի վեհաժողովի որոշմամբ բռնի միացվել էին Հոլանդիային, բաժանվեցին նրանից և իրենց երկիրը անկախ հայտարարեցին: Լեհերն ապստամբեցին ռուսների դեմ, իսկ իտալացիք՝ պապական իշխանության և Ավստրիայի դեմ: Բելգիայի հեղափոխությունը հաջողությամբ պսակվեց և եվրոպական պետությունները ճանաչեցին նրանց անկախությունը. իսկ լեհական և իտալական ապստամբությունները ճնշվեցին:

Լեհական ապստամբությունը պայթեց Վարշավայում և 9 ամիս տևեց. ռուսները 120 000-անոց բանակով արշավեցին լեհերի վրա, որոնք 45 000 կռվող միայն ունեին: Վիստուլա գետի ափին եղան երկու մեծ ճակատամարտները, ուր լեհերը 10 000 ռուս կոտորեցին: Այս և հաջորդ երկու ճակատամարտների մեջ լեհերը հաջողություն ունեցան: Բայց մասամբ իրենց վստահությունը դիվանագիտական

բանակցությունների վրա և գլխավորապես իրենց թվի սակավությունը՝ բնականաբար պատճառ եղան, որ լեհերը չկարողանան երկար դիմանալ: Նրանք նահանջեցին Վարշավա, որ երկու օր ռմբակոծելուց հետո գրավեցին ռուսները. ապստամբներին խստիվ պատժեցին և Լեհաստանի բոլոր արտոնությունները ջնջեցին:

223. ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱԼԱԺԵՆԻԱ

Թուրքմենչայի դաշնադրությամբ Արևելյան Հայաստանը պարսիկների ձեռքից անցնելով ռուսների իշխանության տակ, սկսում է կոչվել Ռուսահայաստան: Օսմանցիների պատերազմները, Շահ Աբասի և Նադրշահի արշավանքներն ավերակ էին դարձրել այդ երկիրը. քրիստոնյա իշխանության տակ նա պիտի գտներ ապահովություն և հանգստություն: Հայոց ազգային շարժման կազմակերպիչը՝ Ներսես Աշտարակեցին, հայոց ազգի միության կենտրոն ընդունելով Էջմիածինը, մտածեց նրա շրջակա գավառները հայ տարրով լցնել և այսպիսով իրական Հայաստան ստեղծել: Այս մտադրության հակառակ չէին նաև ռուսները, որոնք իրենց պետության սահմանները ապահովելու համար, ուզում էին զորացնել այստեղ քրիստոնյա տարրը: Այս մտադրության հակառակ չէին նաև ռուսները, որոնք իրենց պետության սահմանները ապահովելու համար, ուզում էին զորացնել այստեղ քրիստոնյա տարրը: Ներսեսի խորհրդով նրանք Թուրքմենչայի դաշնադրության մեջ մտցրին մի պայման, որով Պարսկաստանից Ռուսաստան գաղթականությունն ազատ էր: Այս հոդվածը դրված էր հատկապես հայոց համար: Եվ Ներսեսն իր գործակալներով, մանավանդ Լազարյան գնդապետն իր կենդանի հորդորներով հրավեր կարդացին Ատրպատականի հայ ժողովրդին գաղթելու Արաքսի մյուս երեսը: Հայերը պատրաստ էին. պարսիկների պետությունն ամեն կերպ աշխատեց ժողովրդին պահելու իր տեղում, բայց ո՛չ նրանց քաղցր խոստումները, ո՛չ սպառնալիքը չկարողացան պահել հայերին: «Ավելի լավ է ռուսների խոտն ուտենք, քան պարսից հացը», - ասում էին հայերը. և 40 000 հայ Պարսկաստանի զանազան կողմերից ճամփա ընկան Ռուսահայաստան և հաստատվեցին Նախիջևանի, Երևանի, մասամբ էլ Ղարաբաղի գավառները:

Հազիվ այս գաղթականությունը տեղավորվել էր, մի ուրիշ գաղթ էլ սկսվեց Տաճկահայաստանից: Արևելյան պատերազմի ժամանակ Բայազեդի և Կարինի շրջանների հայերը, քրդերից և օսմանցիներից նեղված, գրկաբաց ընդունել էին ռուսներին և ամեն կերպ աջակցել էին նրանց, ճիշտ ինչպես Արևելյան Հայաստանի հայերը՝ Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ: Տաճիկների զայրույթը մեծ եղավ մանավանդ այն ժամանակ, երբ ձեռք ձգեցին կաթողիկոսի մի նամակը, որով նա հորդորում էր կարնեցիներին՝ օգնել ռուսներին ընդդեմ օսմանցիների: Երբ պատերազմը վերջացավ և Ադրիանուպոլսի դաշինքով այս շրջանները նորից օսմանցիների ձեռքում մնացին, հայերը վախենալով օսմանցիների վրեժխնդրությունից կամ ազատ օրեր տեսնելուց հետո չուզենալով նորից մահմեդական լծի տակ ընկնել, 90 000 հոգի Կարինից, Կարսից ու Բայազետից դուրս եկան Կարապետ եպիսկոպոսի առաջնորդությամբ և Ռուսահայաստան գաղթելով, բնակվեցին Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Ախալքալակի և Նոր Բայազետի շրջաններում (1830 թ.):

Այսպիսով Ռուսահայաստանում հավաքվեց 400 000 հայ ժողովուրդ, որ իր ներքին գործերի կառավարության մեջ ուներ երկու հոգևոր իշխանություն՝ Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսը և Գանձասարի կաթողիկոսը, որ Աղվանից հայրապետության շարունակությունն էր համարվում: Ռուսները, օգուտ քաղելով հայոց ռուսասեր տրամադրությունից, ուզեցին նրանցից մի զորավոր թումբ կազմել մահմեդական պետությունների արշավի առաջ: Այս պատճառով աշխատեցին բարձրացնել հայոց մտավոր ու նյութական մակարդակը: Իբրև նվիրապետական միապետություն, նրանք որոշեցին կազմակերպել նախ հայոց հոգևոր իշխանությունը, որովհետև հայ հոգևորականի մեջ տեսնում էին ռուսական քաղաքականության տարածիչը: Իրենց նախաձեռնությամբ կազմվեց հայ եկեղեցու վարչական կանոնադրությունը, որի մեջ հին հայոց օրենքները, նոր սովորությունները և ռուսական պահանջներն աշխատել էին մի կերպ հաշտեցնել իրար հետ: Այս կանոնադրությունը կոչվեց Պալաժենիա, որ կայսեր կողմից հաստատվեց 1836 թվականին և գործադրվեց մինչև ռուսական կայսրության անկումը:

Պալաժենիայի հիման վրա հայ ժողովրդի հոգևոր գլուխն է Էջմիածնի կաթողիկոսը. Գանձասարի կաթողիկոսությունը նրանք

ջնջեցին, որպեսզի հակառակությունը վերանա երկու աթոռների միջև և հայ եկեղեցին մեկ իշխանության տակ ավելի զորանա: Կաթողիկոսը ընտրվում է Էջմիածնի տաճարում, աշխարհի ամեն կողմը սփռված հայերի եկեղեցական և աշխարհական պատգամավորների ձեռքով և հաստատվում է ռուսների կայսեր հրովարտակով: Կաթողիկոսին աջակից է Սինոդը, որ բաղկացած է 8 եկեղեցական անդամներից, որոնք հաստատվում են կաթողիկոսի առաջարկությամբ և կայսեր հաճությամբ, և մեկ աշխարհական դատախազից, որ նշանակվում է կայսեր կողմից: Կաթողիկոսը Սինոդի նախագահն է: Սինոդին է հանձնված ամբողջ Ռուսաստանի հայոց դպրոցների, վանքերի և եկեղեցիների վարչական, տնտեսական, վիճակագրական գործը, ինչպես և ժողովրդի ամուսնական և եկեղեցականների դատական գործերը: Ամբողջ Ռուսաստանի հայությունը բաժանված է հինգ թեմի վրա, որոնք են Երևանի, Վրաստանի, Ղարաբաղի, Շամախիի, Աստրախանի և Բեսարաբիայի թեմերը: Ամեն մի թեմ ունի մի թեմական առաջնորդ եպիսկոպոս, որին գործակից է կրոնավորների մի ժողով՝ կոնսիստորիա անվամբ: Թեմը բաժանված է մի քանի **հաջորդության,** որոնցից յուրաքանչյուրի գլուխն է առաջնորդական փոխանորդ կամ հաջորդ տիտղոսով մի վարդապետ և որին գործակից է քահանաների մի ժողով՝ հոգևոր կառավարություն անվամբ: Վերջապես հաջորդությունները բաժանվում են մի շարք գյուղախմբերի, որոնք կոչվում են գործակալություն և որի գլուխն է մի քահանա՝ գործակալ տիտղոսով: Այս բոլորը կենտրոնացման դրությամբ կապված են Սինոդին:

Ռուսաստանի հայերը ձեռք բերելով ապահովություն և հանգստություն, քիչ ժամանակի մեջ շատ առաջադիմեցին. դարի վերջում, այն է 70 տարվա մեջ, նրանք արդեն թվով քառապատկվել էին. արհեստներով և վաճառականության մեջ այնպես էին առաջացել ու հարստացել, որ Կովկասի տիրող տարրն էին դարձել: Ռուսների քաղաքակրթության ազդեցության տակ նրանք թողեցին ասիական բարքերը և սկսեցին հետզհետե եվրոպականանալ: Նրանք հատուկ զարկ տվեցին կրթական գործին. Լազարյան ճեմարանը Մոսկվայում (1818 թ.), Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում (1825 թ.) և Աղաբաբյան վարժարանն Աստրախանում (18.. թ.), եղան ռուսահայոց առաջին երեք լուսատու աստղերը, որոնց օրինակով բացվեցին հետո յուրաքանչուր թեմում մի թեմական

դպրանոց և բազմաթիվ տարրական դպրոցներ, որոնց գումարը հասավ ....-ի: Միևնույն ժամանակ հայ աշակերտները մտնում էին ռուսական գիմնազիաները և ավարտելուց հետո շատերը իրենց ուսումը շարունակում էին Ռուսաստանի կամ Եվրոպայի համալսարաններում. այսպիսով ունեցանք բժիշկների, փաստաբանների, երկրաչափների և արվեստագետների մի ստվար թիվ, որով հայերը գերազանցեցին Կովկասի բոլոր ժողովուրդներին, նույնիսկ ռուսներին:

224. ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

Ունիթոռների աշխատանքը հայերին կաթոլիկ դարձնելու՝ զուր անցավ: Նորադարձները օսմանցիների արշավանքի ժամանակ բոլորովին կտրվելով Եվրոպայից, կա՛մ նորից ազգային եկեղեցու ծոցը դարձան և կա՛մ ընդունեցին մահմեդականությունը, ինչպես Ատրպատականում:

Երբ ճիզվիտները զորացան արևմուտքում, նորից ձեռք առին արևելյան ազգային եկեղեցիները Հռոմին հպատակեցնելու ծրագիրը: Նրանք կազմեցին զանազան քարոզչական խմբեր, որոնք տարածվեցին Արևելքի երկրները՝ Հայաստան, Վրաստան, Պարսկաստան, Հնդկաստան և մինչև Չինաստան: Նրանք Հայաստան մտան 1668 թվականին և քարոզչական ճյուղեր հաստատեցին Կարինից մինչև Տրապիզոն, Կարս և Բայազետ: Կամաց-կամաց կազմվեց մի փոքրաթիվ կաթոլիկ հայ ժողովուրդ, որ խորշում էր ազգային եկեղեցուց: Եվ որովհետև տաճիկների պետությունը չէր ճանաչում այդ համայնքը և առանց նրա թույլտվության կարելի չէր հիմնել եկեղեցիներ, ուստի կաթոլիկ հայերն ստիպված էին դիմել հայոց եկեղեցին և մկրտությունը, պսակն ու թաղումը հայ քահանաներից ընդունել, մյուս խորհուրդների համար դիմելով կաթոլիկ կրոնավորներին: Հայ կղերն աշխատեց այս շարժման առաջն առնել թե՛ մեղմ և թե՛ բռնի միջոցներով, բայց անկարելի եղավ: Կաթոլիկները դիմեցին ֆրանսիական դեսպանին և նա, իրենց ազդեցությունը տարածելու համար օսմանյան պետության մեջ, իր վրա վերցրեց հայ կաթոլիկների պաշտպանությունը. սրան հակառակ օսմանյան պետությունն էլ բռնում էր նրանց հակառակ դիրք, որպեսզի թույլ չտա եվրոպացիներին հայ կաթոլիկների պատրվակով խառնվելու

իր ներքին գործերին: Կաթոլիկներն առայժմ բավականացան ունենալով մի հայ կաթոլիկ եպիսկոպոս, որ Պոլսի լատին նվիրակի իրավասության տակ կառավարում էր նորադարձներին:

Կաթոլիկներից ոմանք լատինական սովորությամբ իրենց տներում մատուռ էին կառուցել և պատարագ էին մատուցում: Պետությունը պատահաբար տեղեկանալով այս մասին՝ պատասխանատվության կանչեց հայոց պատրիարքին և պահանջեց, որ հերձվածը վերացնի ազգից: Այդ ժամանակ թե՛ հայոց և թե՛ կաթոլիկների առաջավորները ժողով կազմելով, ձեռնարկեցին երկու դավանանքների միաբանության և փոխադարձ զիջումներով վերջապես հրատարակեցին «Հրաւէր սիրոյ» անվամբ տետրակը, որ հայ եկեղեցու նոր դավանանքը պիտի լիներ (1820 թ.) և փորձեցին գործադրել:

Բայց այս միաբանությունը ամենքի սրտովը չէր. ազգային եկեղեցու կողմնակիցները տեսնում էին, որ հայ եկեղեցին շատ զիջումներ է արել. կաթոլիկների մեջ էլ վենետիկյանները միաբանության կողմնակից էին, իսկ վիեննացի, լիբանանցի և կոլեջցի կոչված հատվածները, որոնք բոլորովին սառած էին ազգային եկեղեցուց, ուզում էին բոլորովին լատինանալ. նրանք նույնիսկ հայերեն չէին խոսում, իրենց համարում էին մի առանձին ազգություն, որի կրոնը հռոմեականն է, լեզուն տաճկերեն, անուններն ու սովորությունները ֆրանսիական: Սրանք գրգռեցին հայ ժողովրդին ապստամբելու պատրիարքի դեմ և ահա հասարակ դասակարգի մի մեծ բազմություն հարձակվեց պատրիարքարանի վրա, դռները կոտրատեց, պատրիարքը հազիվ կարողացավ փախչել: Պետությունը միջամտեց, խռովարարներին բռնեց, մի մասին աքսորեց և մի մասին էլ բանտարկեց և գլխատեց:

Այսպիսով միաբանության գործը գլուխ չեկավ և կաթոլիկներն աշխատեցին ունենալ առանձին պատրիարքություն: Երբ ծագեց ռուս-պարսկական պատերազմը, կաթոլիկները պատճառ բռնելով հայոց աջակցությունը ռուսներին, սկսեցին ամբաստանել պետության առաջ Տաճկաստանի հայերին, իբր թե նրանք էլ այժմ ուզում են ապստամբել օսմանցիների դեմ և առանձին տերություն կազմել ռուսների հովանավորության տակ և որպեսզի կաթոլիկները ապստամբ հայադավանների հետ գործ չունենան, խնդրում են ունենալ առանձին եկեղեցի և պատրիարք: Հայոց պատրիարքը անձամբ երաշխավորեց իր հոտի համար սուլթանի առաջ և միայն

կաթոլիկների համար մերժեց պատասխանատու լինել:

Սակայն շուտով այն հարվածը, որ կաթոլիկներն ուզում էին հասցնել հայոց գլխին, ծանրապես իջավ իրենց գլխին: Հունական ապստամբության հետևանքով եվրոպացիք պատերազմ հայտարարեցին օսմանցիների դեմ և նրանց նավատորմը այրեցին: Սուլթանը, կասկածելով հայ կաթոլիկների վրա, որոնք եվրոպացիների հետ հարաբերության մեջ էին, հրամայեց աքսորել նրանց Պոլսից Փոքր-Ասիա, ինչպես որ լատիններին էլ քշել էր Եվրոպա: Ձմեռ ժամանակ տեղի ունեցավ աքսորը: 12 000 հոգի անասելի նեղությունների ենթարկվեցին, իրենց 40 քահանաներով: 400 երեխա ցրտից ու քաղցից մեռան, մնացյալը հասավ Փոքր-Ասիայի զանազան վայրերը:

Պատերազմը վերջացավ Ադրիանուպոլսի դաշնադրությամբ, որի պայմաններից մեկն էր կրոնական ազատությունը օսմանյան տերության մեջ: Այս հիման վրա եվրոպացի դեսպանները պահանջեցին կաթոլիկների վերադարձը և առանձին համայնք կազմելու իրավունք: Աքսորվածները հետ եկան, հիմնեցին առանձին եկեղեցիներ և ունեցան սեփական հայ կաթոլիկ պատրիարք (1835 թ.):

225. ԵԳԻՊՏՈՍԻ ԽԴԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Նապոլեոնի հեռանալուց հետո, Եգիպտոսը մի քանի տարի ներքին շփոթությունների ասպարեզ դարձավ. մամլուկները, օսմանցիք և անգլիացիք սկսեցին իրար հետ կռվել: Այդ կռիվների ժամանակ նշանավոր դարձավ Մեհմեդ-Ալի փաշան, որ մամլուկներին բնաջինջ անելով, իրեն Եգիպտոսի փոխարքա հռչակեց: Լինելով սիրող եվրոպական քաղաքակրթության, նա հրավիրեց իր մոտ անգլիացի և ֆրանսիացի բազմաթիվ պաշտոնյաներ և նրանց օգնությամբ կարճ ժամանակում շատ ծաղկեցրեց երկիրը. ջրանցքներ ու գործարաններ բաց արեց, մի քանի անծանոթ բույսերի մշակությունը ներմուծեց Եգիպտոս, երկրագործությունը և վաճառականությունը ծաղկեցրեց: Միևնույն ժամանակ պատրաստեց եվրոպական ոճով բանակ և նավատորմ և արշավելով Արաբիայի և Սուդանի ու Նուբիայի վրա, այդ երկրներն էլ նվաճեց. իսկ հույների ապստամբության ժամանակ օգնելով սուլթանին՝ իբրև վարձ ստացավ Կրետեն:

Այսպիսի մեծության հասնելուց հետո, Մեհմեդ-Ալին բոլորովին անկախ հայտարարեց իրեն օսմանյանների հպատակությունից և նույնիսկ արշավեց Ասորիք, որի վրա վաղուց աչք ուներ: Սուլթանի բանակները խորտակվեցին և եգիպտացիք Տարսոն անցնելով, մտան Փոքր-Ասիա: Այստեղ իրենցից վեց անգամ ավելի մեծ տաճկական բանակը կոտորեցին և ճամփա ընկան դեպի Պոլիս: Սուլթանը սարսափահար, Եվրոպայի օգնությունը խնդրեց. ռուսները մտան Պոլիս և եգիպտացիք ստիպվեցին կանգնեցնել իրենց արշավը: Երկու կողմերը հաշտություն կնքեցին. Կիլիկիան և Ասորիքը մնացին եգիպտացիներին, իսկ ռուսներն իբրև վարձ՝ իրավունք ստացան փակելու Բոսֆորն ու Դարդանելը եվրոպական ռազմանավերի առաջ (1833 թ.):

Մի քանի տարի անց, օսմանցիք իրենց պարտության վրա զայրացած, նորից բանակ կազմեցին և Մեհմեդ-Ալիի դեմ պատերազմը նորոգեցին: Օսմանյան բանակը դարձյալ ջարդվեց և նավատորմը թշնամու կողմն անցավ: Սուլթանը նորից դիմեց եվրոպացիներին. Անգլիան, Ռուսիան, Ավստրիան, Պրուսիան և Ֆրանսիան միջամտեցին, կազմվեց երկու տեսակետ. Ֆրանսիան կողմնակից էր Մեհմեդ-Ալիին տալու իր տիրած երկրները, իսկ մյուսները օսմանցիների իրավունքն էին պաշտպանում: Լոնդոնի դաշինքով որոշվեց Մեհմեդ-Ալիին թողնել Եգիպտոսի և Նուբիայի ժառանգական իշխանությունը՝ օսմանցիների գերիշխանության տակ՝ **խդիվ** տիտղոսով, իսկ Ասորիքն ու Արաբիան հետ վերցնել: Դաշինքից դժգոհ, Մեհմեդ-Ալին ուզեց շարունակել պատերազմը. Ֆրանսիան պատրաստություն տեսավ զենքով պաշտպանելու նրան, իբր իր հովանավորյալին: Մոտ էր պայթելու ընդհանուր եվրոպական պատերազմ. դաշնակիցների նավատորմը պաշարեց Ալեքսանդրիան. Ֆրանսիան վախեցավ և զիջեց համաձայնվել: Հարցի կարգադրության փոխարեն եվրոպացիք պահանջեցին օսմանցիներից փակել նեղուցները բոլոր օտար մարտանավերի առաջ (1841 թ.):

226. ԱՄԻՐԱՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Հայտնի է, որ Պոլսի հայոց պատրիարքությունը հիմնվել է 1461 թվականին, որի իշխանությունը սկզբում տարածվում էր Պոլսի և Փոքր-Ասիայի այն մասի վրա, որ հպատակ էր օսմանյան պետության: Երբ օսմանցիք մեծացան և մի կողմից մինչև Թավրիզ

և մյուս կողմից մինչև Եգիպտոս հասան, հայության մի ստվար մեծամասնությունն էլ Պոլսի պատրիարքի իշխանության տակ ընկավ: Արդարև Պոլսի պատրիարքությունից ավելի հին ժամանակներից կային Աղթամարի և Սսի կաթողիկոսությունները և Երուսաղեմի պատրիարքությունը, որոնք նվիրապետական կարգով Պոլսի պատրիարքից ավելի բարձր էին, բայց նրանց իշխանությունը սահմանափակված էր իրենց մասնավոր շրջանում և օսմանյան պետությունն իբրև հայոց վարչական գլուխ ճանաչում էր միայն Պոլսի պատրիարքին, այնպես որ կաթողիկոսներն անգամ նրա միջոցով էին անում իրենց դիմումները պետության:

Իր իշխանությունը պատրիարքը վարում էր ամիրաների խորհրդով: Այս անվամբ էին ճանաչվում այն հայ անհատները, որոնք պետական որևէ մատակարարություն կապալով իրենց վրա վերցնելով կամ փաշաներին իբր սեղանավոր ծառայելով, ձեռք էին բերել մեծ հարստություն և ազդեցություն: Նրանք էին ընտրում պատրիարք, նրանք էին գահընկեց անում, նրանք էին թելադրում նրան գավառների առաջնորդների ընտրությունը: Ժողովուրդն այս բոլոր գործերի մեջ ձայն կամ մասնակցություն չուներ: Ամիրաներն էլ իրենց մեջ ունեին մեծն ու փոքրերը. և բնական է ավելի հարուստ և ազդեցիկ ամիրայի ձայնը գերակշիռ նշանակություն ուներ. այսպիսով ուրեմն արևելյան բռնակալությունն էր, որ տիրում էր մեր կրոնական ու վարչական գործերի մեջ:

Այս վիճակը չէր կարող հավիտյան տևել: Հուլիսյան հեղափոխությունն այստեղ էլ եկավ հասարակական կարգերը ցնցելու: Ընդհարումը ժողովրդի և ամիրաների միջև սկսվեց դպրոցական հողի վրա:

Դպրոցական գործը, ինչպես այլուր, նույնպես և Պոլսում այն ժամանակ հասարակական գործ չէր. մասնավոր մարդիկ տներում կամ խանութներում աշակերտներ էին կարդացնում՝ իրենց անհատական շահի համար: Առաջին անգամ 1790 թվականին Շնորհք Մկրտիչ ամիրան Պոլսի զանազան թաղերում իր ծախսով հիմնում է հասարակաց ուսումնարաններ: Նրան հետևում են ուրիշները և այսպիսով հիմք է դրվում ազգային ժողովրդական կրթության: Օտարների օրինակով մինչև անգամ հիմնվում է Սկյուդարի ճեմարանը, որ Պոլսի հայոց առաջին միջնակարգ դպրոցն է դառնում (1838 թ.): Ճեմարանի պահպանության համար որոշվեց ազգային տուրք, իսկ այս տուրքի գանձումը և ճեմարանի

ծախսերի հսկողությունը հանձնվեց Պոլսի հայ հասարակության 24 արհեստավորական համայնքներից ընտրված մեկական ներկայացուցիչների ժողովին, որին պիտի գործակցեին նաև ամիրաները: Բայց ամիրաները չուզենալով իրենց իրավունքն այսպիսով կորցնել, մերժեցին մասնակցել իրենցից ստոր մարդկանց ժողովներին: Այսպիսով ճեմարանի գործը երեսի վրա մնաց և նրա նյութական վիճակը քանի գնաց վատացավ:

Այս տեսնելով ժողովուրդը դիմեց պետության և խնդրեց, որ հաստատի 24-ի ժողովը՝ իբրև վարիչ ազգային գործերի: Բայց ամիրաներն իրենց ազդեցությամբ կարողացան ո՛չ միայն հետ կանգնեցնել ժողովի հաստատությունը, այլև 24 ընտրյալներին և ժողովրդի գլխավորներին բանտարկել տվեցին: Դրա վրա ժողովուրդը կատաղեց և 3 000 հոգի Բարձրագույն դռան առաջ ցույց կազմակերպելով, պահանջեցին բանտարկյալների ազատությունը: Տերությունը վախեցած՝ զիջեց, բայց մի քանի օր հետո շարժման պարագլուխներին բռնեց և աքսորեց, պատրիարքին գահընկեց արեց և ճեմարանը փակեց:

Այս հարվածը փոխանակ մեղմելու ժողովրդին, ավելի զայրացրեց. նրանք որոշեցին ամեն կերպ կռվել ամիրաների դեմ, մինչև կատարյալ հաղթությունը: Ամիրաները վախեցան, դիմեցին պետության և հաստատել տվեցին 27 արհեստավորների ժողովը, որ պատրիարքից և ամիրաներից անկախ պիտի վարեր բոլոր ազգային գործերը, դպրոցները, հիվանդանոցը, պատրիարքարանը, որբերի և աղքատների հոգատարությունը (1841 թ.):

Բայց շուտով տեսնվեց, որ ո՛չ արհեստավորներն առանց ամիրաների և ո՛չ ամիրաները առանց արհեստավորների չպիտի կարողանան վարել այդքան գործ. ուստի փոխադարձ զիջումներով երկու կողմերը հաշտվեցին և կազմեցին Երեսնից ժողովը, որ բաղկացել էր 16 ամիրաներից և 14 արհեստավորներից (1844 թ.):

Ժողովրդի այս հաղթությունը ո՛չ միայն ժամանակի ոգու արդյունքն էր, այլև մի նոր պետական բարեփոխություն: Ռուսների հաջողությունները, բալկանյան ազգերի շարժումները, Հունաստանի ազատությունը, եգիպտական ապստամբությունը և այլն զգացրել էին օսմանցիներին, որ ժամանակ է արդեն հին կարգերը փոխելու: Սուլթան Մեջիդը 1839 թվականին շնորհել էր թանզիմաթը, որով պետության մահմեդական և քրիստոնյա ժողովուրդները օրենքի առաջ հավասար էին հռչակվում, և քրիստոն-

յաներն էլ իրավունք էին ստանում մտնելու պետական ծառայության մեջ: Հայերը, որ իրենց ընդունակությամբ գերազանցում էին թուրքերին, շուտով մտան պետական ծառայության մեջ, ձեռք բերեցին բարձր պաշտոններ և հասան բեյության ու փաշայության աստիճաններին: Այսպիսով ամիրաների դասակարգը սկսեց հետզհետե հետ քաշվել և նրա տեղ առաջացավ պետական պաշտոնյաների նոր դասակարգը:

Երեսնից ժողովի հաստատումից հետո էլ ամիրաները դեռ չէին ուզում հրաժարվել իրենց իրավունքներից և պահանջում էին, որ պատրիարքն իրենց հավանությամբ նշանակի գավառների առաջնորդներին: Պատրիարքը մերժում էր այդ պահանջն ասելով, որ աշխարհականներն իրավունք չունեն կրոնական գործերին խառնվելու: Պատրիարքի իրավունքները սանձելու համար ամիրաները դիմեցին պետության և Երեսնից ժողովի փոխարեն կազմել տվեցին երկու նոր ժողով. առաջինը **Հոգևոր ժողով**, որ պիտի բաղկանար 14 եկեղեցականներից և պիտի վարեր բոլոր կրոնական գործերը, իսկ երկրորդը **Գերագույն ժողով**, որ պիտի բաղկանար ամիրաներից, արհեստավորներից և վաճառականներից ընտրված 20 անձերից և պիտի վարեր բոլոր քաղաքական և աշխարհիկ բնույթ ունեցող գործերը: Պատրիարքն այդ երկու ժողովների նախագահն էր և առանց նրանց գործելու ո՛չ մի իրավունք չուներ:

Այսպիսով վերջիվերջո դուրս եկավ, որ ժողովրդի պահանջով ամիրաների իրավունքները սանձվեցին և ամիրաների պահանջով էլ պատրիարքի ինքնիշխանությունը սանձվեց և հայ ժողովուրդը տիրացավ ընտրական կազմակերպության (1847 թ.):

227. ԱՆԳԼԻԱՅԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ

Աստիճանական բարենորոգումների հանդարտ ընթացքը, որին ձեռնարկել էր Անգլիան երկու դարից ի վեր, հանկարծ կանգ էր առել Նապոլեոնի դեմ մղված պատերազմների ժամանակ: Ազգային վտանգն ստիպել էր նրանց միանալ այնպիսի եվրոպական պետությունների հետ, որոնք ռեակցիայի գլխավոր ներկայացուցիչներն էին: Երբ Նապոլեոնն ընկավ, արդեն երևան եկավ սկզբունքների և շահերի այն խոր տարբերությունը, որ կար ազատական Անգլիայի և եվրոպական պահպանողական պե-

տությունների միջև: Անգլիայում այս ժամանակ արտաքին գործերի մինիստր դարձավ Կաննինգը, որ իրեն ազատականության հովանավոր հայտարարեց և իբրև այն, եռանդուն աջակցություն ցույց տվեց Հարավային Ամերիկայի և Հունաստանի ազատագրական կռիվներին: Նրա օրով հիմնվեց Անգլիայում ազատ առևտրի սկզբունքը, որով ջնջվեցին զանազան ապրանքների վրա դրված մաքսերը. սրանով ապրանքների գներն ընկան հօգուտ ժողովրդի, ներածությունն ու արտածությունը լայն չափերի հասան: Քիչ հետո վերջնականապես հաստատվեց կրոնի ազատությունը հօգուտ կաթոլիկների: Անգլիան մինչև այն ժամանակ ընդունում էր միայն բողոքականությունը իբրև պետական կրոն, չէր ճանաչում կաթոլիկության հավասարությունը, չէր ընդունում կաթոլիկներին ո՛չ իբրև ընտրող և ո՛չ իբրև ընտրելի, այնպես որ Իռլանդիայի ժողովրդի մեծամասնությունը, որ կաթոլիկ էր, դուրս էր մնում Պառլամենտից և պետական պաշտոններից: Այժմ այս սահմանափակումը վերացվեց:

Այնուհետև բարեփոխվեցին պառլամենտական ընտրությունների պայմանները, այնպես որ ժողովրդական տարրը, որ որոշ սահմանափակությունների պատճառով պակաս էր ներկայացված, ավելի զորացավ Պառլամենտում, ի վնաս հարուստների և ազնվական դասակարգի: Միևնույն ժամանակ վերացվեց գաղութների միջից ստրկությունը և գերիների առևտուրը, որ ուրիշ բան չէր եթե ոչ միջնադարյան բարբարոսության մնացորդը:

Այս բոլոր մեծամեծ բարեփոխությունները կատարվում էին Անգլիայում օրինական ճանապարհով, կենդանի խոսքի, վիճաբանության և քվեարկության միջոցով, առանց կռիվների և արյունահեղության: Եվ դեռ որքան մեծ բարենորոգությանց ծրագրեր էին երկնվում: Այստեղ տեսնվում էր տարբերությունն անգլիական լուրջ և խոհուն բնավորության և եվրոպական մյուս ժողովուրդների, հատկապես ֆրանսիացիների կրակոտ ու թեթև բնավորության միջև, որոնք յուրաքանչյուր բարեփոխությունը կատարում էին մեծ ցնցումներով, հազարավոր զոհերի արյան գնով:

228. ՓԵՏՐՎԱՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵԱԿՑԻԱՆ

Հուլիսյան հեղափոխությունը կատարված էր բուրժուազիայի (ունևոր միջին դասակարգի) և չունևոր բանվոր դասակարգի

գործակցությամբ. բայց նրա արդյունքը վայելեց միայն բուրժուազիան, որովհետև հեղափոխության վարիչը ինքն էր դարձել: Անշուշտ բարենորոգումներ մտցվել էին, բայց միապետական շրջանի սահմանադրական կարգերը դեռ բոլորովին մաքրված չէին: Ամբողջ Ֆրանսիայի միլիոնավոր ազգաբնակչության մեջ կար միայն 200 000 ընտրող, որից 24 000 հոգի միայն ընտրելի էր պետական բոլոր պաշտոնների համար, մնացյալն իրավազուրկ, արհամարհված ամբոխ էր: Եվ ամբոխն ստիպվեց քանիցս դուրս գալ կռվելու՝ իրավունք ձեռք բերելու համար. իրար հետևից 1830, 1832 և 1834 թվականներին բարձրացան ժողովրդական ապստամբություններ Փարիզում և ուրիշ մեծ քաղաքներում և պետությունը ստիպվեց զենքով ճնշել նրանց: Հասարակության մեջ դուրս էին եկել առաջին ընկերվարական քարոզիչները, որոնք բոլորովին նոր գաղափարներ էին տարածում, ինչպես՝ ընտանիքի և ժառանգության վերացում, համայնական աշխատանք, աշխատանքի կազմակերպումը պետության ձեռքով և այլն: Բայց այս բոլոր շարժումների վրա պետությունը ուշ չէր դարձնում: Ձախակողմյան պառլամենտականները ժողովրդի մեջ սկսեցին կազմակերպել պիկնիկներ, որոնց մեջ պայքար էին մղում ընտրական իրավունքն ընդարձակելու օգտին և կծու հարձակումներ գործում կառավարության դեմ. կառավարությունն արգելեց այդ պիկնիկները: Ժողովուրդը գրգռվեց և իր սովորական ձևով սկսեց պատնեշներ կանգնել՝ կռվելու համար: Թագավորը հրամայեց զինվորներին կրակել ժողովրդի վրա: Բայց երբ տեսավ, որ զորքը նրա կողմն է, այլևս ավելորդ համարեց կռիվը և հրաժարվեց գահից: Միապետությունը տապալվեց և հայտարարվեց նոր հանրապետություն (1848 փետրվար):

Ինչպես հուլիսյան, նույնպես և փետրվարի հեղափոխությունը մի կայծ եղավ, որ բռնկեց ամբողջ Եվրոպան. ամեն տեղ պայթեցին նմանօրինակ հեղափոխական շարժումներ, հենց միևնույն տարում: Գերմանիայում ազատականներն ամեն կողմ ձայն բարձրացրին և պահանջեցին մամուլի և քաղաքական ժողովների ազատություն, երդվյալների դատարան, ժողովրդական բանակ և ամենից ավելի՝ մի և միացյալ գերմանական պետություն: Ֆրանկֆուրտի մեջ հավաքվեցին բոլոր պետությանց պատվիրակները և կազմեցին Սահմանադիր պառլամենտը, որ պիտի որոշեր կառավարության նոր կազմը: Ավստրիայում շարժումն ավելի

մեծացավ. ուսանողների սպառնալիքի վրա, սրբազան դաշ-նակցության հոգին՝ Մետեռնիխը փախավ Անգլիա. ուսանողները գրավեցին Վիեննան, հունգարացիք գրավեցին Պեշտան և հիմնեցին անկախ պետություն՝ Կոշուտի գլխավորությամբ. չեխերը տիրեցին Պրագային. կայսրն ստիպվեց հրավիրել Սահմանադիր ժողով՝ ամբողջ Ավստրիայի համար մշակելու նոր սահմանա-դրություն: Պրուսիայում՝ Բեռլինում կռիվ սկսեց ժողովրդի և զորքի միջև. զինվորներն սկսեցին կոտորել. թագավորը, տեսնելով որ այս կոտորածի վախճանը նույնիսկ պետությանն է վնաս, իսկույն հրամայեց դադարեցնել կռիվը, շնորհեց սահմանադրություն և խոստացավ աշխատել գերմանական միության մասին: Իտալիան համակվեց ամբողջ ապստամբական շարժումներով. Սարդինիայի թագավորը կռվի դուրս եկավ Ավստրիայի դեմ և գրավեց Լոմբարդիան: Վենետիկը հանրապետություն հայտարարեց. Սիկիլիան և Նապոլին (Նեապոլը) արդեն ստիպվել էին սահմա-նադրություն հաստատել. ամբողջ իտալական ժողովուրդը ուզում էր միանալ և կազմել իտալական դաշնակցությունը և այս շարժման գլուխն անցնելով պապը, սկսեց բանակցություններ վարել:

Բայց այս բոլոր շարժումներն էլ կատարյալ հաջողություն չունեցան և վերջիվերջո ռեակցիան հաղթանակեց ամեն տեղ: Ամենից առաջ իտալացիք չկարողացան միանալ իրենց մեջ. նապոլիացիք և սիցիլիացիք կռվում էին միմյանց դեմ, որից օգտվելով Սիկիլիայի թագավորը՝ խեղդեց ապստամբությունը. Սարդենիան մենակ մնաց Ավստրիայի դեմ և պարտվելով՝ Լոմ-բարդիայից հետ քաշվեց. Վենետիկի հանրապետությունը ջնջվելով՝ Ավստրիային հանձնվեց. պապը հանրապետական-ներից ճնշված՝ օգնություն խնդրեց կաթոլիկ պետություններից. ֆրանսիացիք եկան և Գարիբալդիին հաղթելով՝ նորից պապին հաստատեցին իր գահի վրա:

Ավստրիայում գործերը շատ խառնակ վիճակ ստացան զանազան ազգերի ազատական ձգտումների պատճառով. չեխերն ուզում էին հիմնել առանձին պետություն, հունգարներն առանձին և հարավային սլավոնները (խորվաթները, սերբեր, դալմացիացիներ) առանձին: Այս պատճառով միմյանց չօգնեցին և կայսրը յուրա-քանչյուրին առանձին-առանձին հարվածեց: Նախ առավ Պրագան և չեխական շարժումը կանգնեցրեց, հետո ընկավ Վիեննան և գերմանական ազատական շարժումը խեղդեց և հետո արշավեց

Հունգարիայի վրա: Խորվաթները միացան կայսեր՝ կռվելու համար հունգարացիների դեմ, այն հույսով, որ կայսրը իրենց կվարձատրի ինքնավարություն շնորհելով: Բայց երբ իմացան, որ կայսրն այնպիսի ցանկություն չունի, հետ քաշվեցին: Հունգարացիք միացան լեհերի հետ և քաջությամբ կռվելով՝ պարտության մատնեցին կայսերական բանակները: Այն ժամանակ կայսրը խնդրեց Ռուսաստանի օգնությունը. ցարը, որ հակառակ էր լեհական շարժման, հանուն սրբազան դաշնակցության զորք ուղարկեց Հունգարիա և այս քաջ ժողովրդի անկախության կռիվը խեղդեց:

Գերմանիայում Սահմանադիր ժողովը հայտարարեց Գերմանիայի միությունը, որին գլուխ ընտրեց Պրուսիայի թագավորին՝ կայսր տիտղոսով. բայց նա չընդունեց, որովհետև Բավարիան, Հաննովերը, Սաքսոնիան և Վուրթեմբերգը համաձայն չէին և երկրորդ՝ Ավստրիան և Ռուսիան, որոնք չէին ուզում իրենց սահմանի վրա մի մեծ պետության կազմությունը, պատրաստ էին միացյալ ուժով հարձակվելու Պրուսիայի վրա:

Նույնիսկ Ֆրանսիայում գործերը հակառակ ընթացք ստացան. հեղափոխությունից մի քանի ամիս հետո սոսկալի պատերազմ տեղի ունեցավ հանրապետական երկու կուսակցությունների՝ չափավորների և արմատականների միջև: Չափավորները հաղթեցին: Եվ երբ ընտրության ձեռնարկեցին, քվեների ստվար մեծամասնությամբ նախագահ ընտրվեց Նապոլեոն Ա կայսեր եղբորորդի համանուն Նապոլեոնը, որ 4 տարի իբրև նախագահ կառավարելուց հետո, հանկարծ տվեց պետական հարվածը, Պառլամենտի ազդեցիկ պատգամավորներին և ժողովրդական նշանավոր գործիչներին բանտարկեց և իրեն կայսր հրատարակեց՝ Նապոլեոն Գ անվամբ (1852 թ.):

229. ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

Բողոքականության քարոզչությունը հայոց մեջ շատ ավելի սկսվեց քան կաթոլիկության: Ամերիկայից և ուրիշ վայրերից մի խումբ միսիոներներ մտան հայոց մեջ. արևելքում նրանք գործում էին Շամախիում և Շուշում, իսկ արևմուտքում՝ Պոլսում և Զմյուռնիայում: Նրանք ժողովրդի մեջ ձրիաբար տարածում էին աշխարհաբար Ս. Գիրքը, կրոնական գրքույկներ, աղքատներին նպաստ էին տալիս, անգործներին պաշտոն ճարում, կիրակնօրյա

դասախոսություններ բաց անում և ամեն բանի մեջ իրենց կրոնական վարդապետությունն էին տարածում: Պոլսում նրանք բաց արեցին երկու բարեկարգ գիշերօթիկ դպրոցներ, որոնց նմանը դեռ չկար հայոց մեջ և որոնք դարձան բողոքական կրոնի սերմնարանները: Արդեն կազմվեց բողոքական հայ ժողովուրդ, որ սկսեց կռիվ մղել ազգային եկեղեցու դեմ և նրանից անջատվելու աշխատել: Հակոբոս պատրիարքը տեսնելով նոր վարդապետության տարածումը, մտածեց բռնի միջոցներով նրա առաջն առնել: Նա Լյութերի վարդապետությունը հրապարակավ բանադրեց և բողոքական հայերին Փոքր-Ասիա աքսորեց: Բայց ինչպես կաթոլիկ հայերի պաշտպանությունն իր վրա էր վերցրել Ֆրանսիայի դեսպանը. այսպես էլ բողոքականների պաշտպանությունն իր վրա առավ Անգլիայի դեսպանը և պետության դիմելով՝ պատրիարքը հանդիմանություն ստացավ Բարձրագույն դռնից: Այն ժամանակ նա բաց արեց Սկյուդարի ճեմարանը՝ որպեսզի հակազդի բողոքականների դպրոցներին և հայ աղքատ աշակերտները նրանց դիմելու փոխարեն՝ հայոց դպրոցը հաճախեն (1838 թ.):

Այս միջոցն էլ, իհարկե, մեծ ազդեցություն չունեցավ և բողոքականների թիվը հետզհետե ավելանում էր: Նրանց դեմ մաքառելու ավելի հաջող փորձ արեց Մատթեոս պատրիարքը, որ գրով ու խոսքով զինվեց նրանց դեմ: Նա մի տեսակ վիճակագրություն կազմելով նորադարձների համար, տեսավ, որ նրանք 7000 հոգի են և երեք կարգի են բաժանվում. առաջին կարգը չքավորներն էին, որոնք իրենց ստացած դույզն դրամական վարձատրության համար հակվել էին բողոքականներին. պատրիարքը նրանց դրամական նպաստներ հասցրեց և հաջողվեց հետ դարձնել: Երկրորդ կարգը համոզված հավատացյալներն էին, որոնք միսիոներների քարոզների ազդեցությամբ չէին հավատում այլևս ազգային եկեղեցու այս կամ այն հավատալիքներին: Պատրիարքը նրանց համար բաց արեց հրապարակային քարոզների մի շարք, ինքն անձամբ անհատապես խոսում էր նրանց հետ և մտքերը լուսավորելով, մի առ մի վերադարձնում ազգային եկեղեցու ծոցը: Այսպես դարձրեց նորահավատների մեծագույն մասին և մնաց միայն մի քանի հարյուր հոգի. սրանք կազմում էին երրորդ կարգը և մոլեռանդ հետևորդներն էին, որոնք ո՛չ մի կերպով չէին ուզում զիջել. նրանց մեջ կար նույնիսկ մի

քահանա, որ Ս. Կույսի դեմ անպատկառ հայհոյանքներով էր խոսում: Այսպիսիների դեմ պատրիարքը ձեռք առավ բռնի միջոցները, բանտարկեց նրանց և հալածեց: Այնուհետև նա մի շրջաբերական հրատարակեց, որով բանադրում էր բողոքականության հետևողներին և արգելում էր հայադավաններին ոչ մի հարաբերություն չունենալ նրանց հետ, ո՛չ խնամություն, ո՛չ առևտուր և ո՛չ իսկ բարեկամական տեսակցություն (1846 թ.): Բողոքականները բանադրված, հայ եկեղեցուց վտարված, Բարձրագույն դռան պաշտպանությունից զրկված՝ դիմեցին բողոքական պետություններին և նրանց օգնությունը խնդրեցին: Երկար բանակցություններից հետո անգլիացիների դեսպանին հաջողվեց պետությունից ստանալ առանձին հրովարտակ, որով հայ բողոքականները հայոց պատրիարքի իշխանությունից դուրս գալով, կազմում էին առանձին եկեղեցի և առանձին համայնք, որի գլուխը կոչվում էր **ազգապետ** (1850 թ.):

230. ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գերմանական և ավստրիական հարցի կարգադրությունից հետո, ռուսներն արևմտյան կողմից ապահովվելով, ձեռնարկեցին արևելյան հարցի լուծման: Նրանք առաջարկեցին Անգլիային՝ վերցնել Եգիպտոսը և Կրետեն, իսկ իրենք Բալկանների բոլոր քրիստոնյա ժողովուրդներին ազատելով՝ պիտի կազմեին անկախ թագավորություններ՝ Ռուսաստանի գլխավորության տակ: Անգլիան և Ֆրանսիան հակառակ կանգնեցին այս առաջարկին, որովհետև չէին ուզում, որ Պոլիսը ընկնի ռուսների ձեռքը, նրանց ազդեցությունը Բալկանների վրա զորանա և դեպի ազատ ծովը ելք ունենան: Նրանք արևմտյան ազգերից կազմեցին մի դաշնակցություն, որի հոգին եղավ Ֆրանսիան:

Ռուսաստանը պահանջեց տաճիկներից որոշ իրավունքներ Երուսաղեմում օրթոդոքս եկեղեցու համար և առհասարակ Թուրքիայի արևելյան քրիստոնյաների հովանավորությունը: Սուլթանը մերժեց, այն ժամանակ ռուսները պատերազմ հայտարարեցին տաճիկների դեմ. նրանց ցամաքային բանակը գրավեց Դանուբյան իշխանությունները, իսկ նավատորմը ջնջեց Սև ծովի տաճկական նավատորմը: Անգլիան և Ֆրանսիան դուրս եկան պաշտպանելու տաճիկներին և պատերազմ հայտարարեցին Ռուսաստանի դեմ:

Իրենց միացան նաև Ավստրիան, Գերմանիան և փոքրիկ Սարդինիան: Նրանք պահանջեցին մաքրել Բալկանները, և երբ ավստրիական բանակը մոտեցավ Ռուսաստանի սահմաններին, ռուսներն ստիպվեցին թողնել Սելիստրեի պաշարումը և հետ քաշվել: Մյուս կողմից դաշնակիցների նավատորմը մտավ բոլոր ռուսական ջրերը, իսկ Ղրիմի մեջ պաշարեց Սևաստոպոլի ամուր բերդը: Երկար պաշարումից հետո քաղաքն ավերվեց և գրավվեց: Ռուսներն ամեն կողմից նեղը մնացած՝ հաշտություն խնդրեցին. Փարիզի դաշնադրությամբ Բեսարաբիայի մի մասը գրավվեց ռուսներից, Դանուբյան իշխանություններն ազատվելով նրանց խնամակալությունից՝ մտան եվրոպական մեծ պետությանց հովանավորության տակ, իսկ թե՛ Ռուսաստանին և թե՛ Թուրքիային արգելվեց պահել պատերազմական նավատորմ Սև ծովում (1856 թ.):

231. ԴԱՂՍՏԱՆԻ ԵՎ ԹԱԹԱՐԻՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Ռուսները մինչդեռ Տաճկաստանի քրիստոնյա ժողովուրդների հարցը լուծելու համար ստիպված էին եվրոպական պետությունների շահերն էլ ի նկատի առնել և նրանց հետ բանակցության մեջ մտնել, ընդհակառակը Ռուսաստանի արևելքում՝ Ասիայում նրանք բոլորովին ազատ էին: Թուրքմենչայի դաշնադրությամբ թեև Հայաստանն ու Վրաստանը նվաճված էին, բայց Կովկասի լեռնային մասը դեռ չէր ճանաչում ռուսական իշխանությունը: Չերքեզների գլխավոր Շամիլը, որ իրեն մարգարե էր համարում, ամրացած Դաղստանի հպարտ լեռներում, 25 տարի կռվեց (1834-1859 թթ.), քաջությամբ ռուսների դեմ և վանեց նրանց բոլոր հարձակումները: Վերջապես 1859 թվականին նա ընկավ և Ռուսաստանի խորքերը տարվելով բանտարկվեց: Չերքեզները չուզեցին այնուհետև մնալ ռուսական տիրապետության տակ և Թուրքիայի հետ պայման կապելով՝ գունդագունդ գաղթեցին այնտեղ: Տաճիկները ուրախությամբ ընդունեցին նրանց, նախ այսպիսով իրենց երկրի մեջ մահմեդական տարրը զորացնելու համար և երկրորդ՝ գործածելու համար նրանց իբրև զենք ապստամբ քրիստոնյա ժողովուրդների դեմ: Բալկաններում, Կիլիկիայում և Հայաստանում, ուր որ քրիստոնյա ժողովուրդը բազմություն էր կազմում կամ բաղկացած էր կռվող տարրերից,

հաստատեցին չերքեզներին՝ հատուկ պատվեր տալով կառավարության կողմից՝ վարվելու իրենց ուզած ձևով և ճնշելու քրիստոնյա տարրերին:

Երբ մի կողմից Դաղստանի կռիվն էր շարունակվում, մյուս կողմից ռուսները առաջանում էին Ասիայի ներսերը: Նրանց մեծ բանակը ճանապարհ ընկնելով Կասպից ծովի արևելյան կողմից՝ առաջացավ ու գրավեց Սիր-Դարյա և Ամու-Դարյա գետերի ընդարձակ հովիտները Թաթարիստանում: Այնուհետև բանակն արշավեց Խիվայի խանության վրա, մտավ Թուրքեստանի խորքը և պաշարեց Խիվան (1841 թ.). սոսկալի մի ցուրտ, որ օդին անգամ սառեցնում էր, ստիպեց նրանց հետ նահանջել և այս արշավանքն անհաջող անցավ: 13 տարի հետո ռուսները մի նոր բանակ կազմակերպեցին և նորից արշավեցին Թուրքեստան. Խիվանն առնվեց և ռուսական պետության միացվեց: Նրան պիտի հետևեր Բուխարան, որ նվաճվելով՝ կազմեց առանձին էմիրություն՝ ռուսների կայսրության գերիշխանության տակ:

232. ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական կյանքի հաղորդակցությունը, որ Կիլիկյան շրջանին սկսել էր, վերացավ հայությունից Կիլիկյան թագավորության անկման հետ: Օսմանցիք տիրապետեցին Արևելքին և ո՛չ միայն արգելք հանդիսացան արևմտյան քաղաքակրթության, այլև արևելյան հին քաղաքակրթությունների մնացորդներն էլ ջնջեցին: Եվրոպական կրթության արձագանքը սկսեց մեր մեջ այն հայ վաճառականների միջոցով, որոնք առևտրի համար գնացել էին Իտալիա և Հոլանդիա, Հայաստանի զանազան կողմերից: Իտալիա գաղթած հայերը սկիզբ դրեցին հայկական տպագրության (1512 թ.), այնպիսի ժամանակ, երբ դեռ եվրոպական շատ ազգեր տպագրության ինչ լինելը չգիտեին: 1567 թվականին Աբգար դպիր Եվդոկիացին բաց արեց Պոլսում Արևելքի առաջին տպարանը, որ շուտով փակվեց, բայց հաջորդ դարի կեսից հետո շատ ծաղկեց և առաջադիմեց: 18-րդ դարի կեսից հետո սկսում են հայ ուսանողները դիմել Եվրոպա, նախ Իտալիա և հետո Ֆրանսիա, բժշկություն կամ ուրիշ գիտություններ սովորելու համար: 1840-ական թվականներին Փարիզում կազմվել էր պատվական հայկական շրջանակ, որ իր դպրոցը և հետո թերթերն էլ

ունեցավ: Այնտեղ էին Այվազովսկին, Նարբեյը, Ռուսինյանը, Պալյանը, Ութուճյանը, Ծերենցը, Ստեփան Ոսկանը, Մատթեոս Մամուրյանը և ուրիշներ: Նրանք ապրեցին հենց այն հեղափոխական կյանքի մեջ, որին ասպարեզ դարձավ Ֆրանսիան այդ շրջանին. նրանք լսեցին հեղափոխական նշանավոր քարոզիչների կրակոտ ճառերը և անձամբ տեսան 1848 թվականի հեղափոխական շարժումը և նրա ազատական գաղափարներով ներշնչված՝ ուզեցին հայ կյանքն էլ մասնակից դարձնել այդ ազատական գաղափարներին:

Ուսանողները Պոլիս դարձան և նվիրվեցին ազգային վերանորոգության գործին: Նրանց գլխավորներն եղան ճարտարապետ Պալյանը, պետական պաշտոնյա Օտյանը և բժիշկ Ռուսինյանը: Սրանք իրենց մեջ միացած նախապես պատրաստեցին Հայոց Ազգային Սահմանադրության օրինագիծը, որի մեջ գլխավոր բաժին ունեցավ Պալյանը: Ռուսինյանը, որ ամենից ավելի թունդ հեղափոխականն էր և այն կարծիքն ուներ, թե մի ազգի քաղաքական կյանքը հեղափոխելու համար՝ նրա ամեն ինչը պետք է հեղափոխել, ձեռքն առավ նախ հայերեն լեզուն: Այդ ժամանակ հայերենը գրաբարն էր միայն համարվում և տիրապետում էր դպրոցի, եկեղեցու և գրականության մեջ. աշխարհաբարը ռամկին էր վերապահված: Ռուսինյանը գրեց իր «Ուղղախօսութիւն»-ը և պահանջեց դուրս անել գրաբարը այդ ասպարեզից և նրա տեղ դնել նոր հայերեն լեզուն: Իր դեմ ծառացավ Գերագույն և Հոգևոր ժողովների ազնվական ու կրոնական դասակարգը և պահանջեց բանադրել հանդուգն վերանորոգչին և նրա գրքի վրա արգելք դրեց և առհասարակ հիմնեց գրաքննությունը, որ դեռ պետության մեջ էլ չէր ընդունվել: Բողոքող երիտասարդները ոտքի կանգնեցին և սանձելու համար արտոնյալ դասակարգի ոտնձգությունները, որոշեցին կազմել մի մեծ հանձնաժողով, որ պիտի մշակեր նոր կանոնադրություն Ազգային վարչության համար: Հանձնաժողովի մեջ մտան հենց նույն հեղափոխական գործիչները և իրենց պատրաստած ծրագիրն անցկացնելով, հիմնեցին Տաճկահայոց Ազգային Սահմանադրությունը, որ պետական ազդեցիկ պաշտոնյա Օտյանի ջանքերով էլ օսմանյան կառավարության կողմից ևս վավերացվեց (1860 թ.):

Ըստ Սահմանադրության՝ Ազգային վարչության գլխավոր մարմինն է Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովը, որ

բաղկացած է 140 անդամներից. սրանցից 40-ը եկեղեցական են, որ ընտրվում են Պոլսի եկեղեցականների կողմից. 40 երեսփոխան, որ ընտրվում են գավառներից և 80 երեսփոխան, որ ընտրվում են Պոլսի զանազան թաղերից: Նրան են ենթարկվում Կրոնական ժողովը և Քաղաքական ժողովը, որոնք բաղկացած են առաջինը 14 եկեղեցական և երկրորդը 20 աշխարհական անդամներից և ընտրվում են Ընդհանուր ժողովից: Քաղաքական ժողովից կազմվում են 4 խորհուրդներ (Ուսումնական, Տնտեսական, Դատաստանական և Վանքերի տեսչության) և 3 հոգաբարձություն (ելևմտից, կտակների և հիվանդանոցների): Սրանց տեսչության տակ են յուրաքանչյուր թաղի մեջ ժողովրդից ընտրված թաղական խորհուրդը, որ հոգում է նույն թաղի եկեղեցու, դպրոցի և ժողովրդի պետքերը:

Ազգային վարչության գլուխն է նրա ձեռքով ընտրված պատրիարքը, որ և նախագահում է ժողովներին և համարվում է հայոց գործադիր իշխանությունը:

Ազգային Սահմանադրությունը տաճկահայոց մտավոր և ազգային շարժման առաջին կենդանի նշանը դարձավ, որի պատրաստությունն սկսել էր ամիրայական պայքարներից: Այդ թվականից արդեն հայոց կրթական և ազգային շարժումն սկսեց հետզհետե աճել և ծնունդ տվեց վերջապես հայկական հարցին:

233. ԻՏԱԼԻԱՅԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

1848 թվականի իտալական շարժումները չհասան իրենց նպատակին, բայց իտալացիք դրանից չհուսահատվեցին, այլ ավելի փորձվեցին ու խրատվեցին: Նրանք իմացան, որ միության հասնելու համար նախ պետք է խմբվել մի հաստատուն կենտրոնի շուրջը և սպասել քաղաքական հարմար առիթի: Այդ կենտրոնը եղավ Սարդենիայի թագավորությունը, ուր գտնվեց նաև մի նշանավոր պետական գործիչ՝ Կավուրը: Նա հասկացավ բոպեի դրությունը և ջանաց օգտվել նրանից: Նա աշխատեց մոտենալ Նապոլեոնին, որովհետև նրա մեջ տեսնում էր մանր ազգերին ազատելու ձգտումը, որ ուներ Նապոլեոն Ա-ը, կոտրելու համար մեծ պետությունների ուժը և զորացնելու Ֆրանսիայի ազդեցությունը: Կավուրն շտապեց մասնակցել Ղրիմի պատերազմին, նախ Սարդենիայի ուժը զգալ տալու համար և երկրորդ՝ դեպի

Ֆրանսիան եղած բարեկամության գործնական ձև տալու համար: Ղրիմի պատերազմից հետո, երբ տեսավ որ Ավստրիան այլևս կորցրեց Ռուսաստանի բարեկամությունը, իսկ Նապոլեոնը հակառակ է ավստրիական գերիշխանության, ծածուկ դաշինք կապեց Ֆրանսիայի հետ՝ խոստանալով նրան տալ Նիցցան և Սավոյան, իսկ ինքը պատերազմի պատրաստվեց Ավստրիայի դեմ: Ավստրիան կանխեց նրան. Ֆրանսիան միջամտեց: Նապոլեոնն անձամբ իր բանակի գլուխն անցած, արշավեց ավստրիացիների վրա և Մաջենտայի ու Սոլֆերինոյի ճակատամարտերում ջարդեց նրանց ուժը: Այս հաջողությունների վրա գերմանացիք և պրուսիացիք զայրացած, պատրաստվեցին կռվի դուրս գալու: Նապոլեոնն զգուշացավ և իսկույն հաշտվեց Ավստրիայի հետ, ստանալով Լոմբարդիան, որ նվիրեց Սարդենիային:

Այս հաջողության վրա, Իտալիայի զանազան մանր գավառները իրենց իշխանների դեմ ապստամբելով, կամովին միացան Սարդինիային: Գարիբալդին իր կամավորներով մտավ Սիկիլիա, քշեց թագավորին, հետո գրավեց Նապոլին: Սարդենիայի թագավոր Վիկտոր Էմմանուելը արշավեց հարավ և այս նվաճված երկրներն էլ միացնելով Սարդենիային՝ հայտարարեց իրեն միացյալ Իտալիայի թագավոր (1861 թ.): Ավստրիան տեսավ այս բոլորը, բայց Ֆրանսիայից պարտված՝ վախեցավ կռվի դուրս գալ նորից: Այսպես կատարվեց Իտալիայի մեծ մասի միությունը. դուրս մնացին միայն Նիցցան և Սավոյան, որ ըստ պայմանի տրվեցին Ֆրանսիային, Վենետիկը, որ մնաց Ավստրիային և Հռոմը, որ պապի իշխանության տակն էր գտնվում:

234. ԼԻԲԱՆԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Լիբանանը Ասորիքի ծովեզերյա և շատ լեռնային մի մասն է, ուր բնակվում են երկու գլխավոր ցեղեր՝ քրիստոնյա մարոնիները և մահմեդական դուրզիները: Դուրզիները, իբրև մահմեդական, շատ էին նեղացնում իրենց հարևան քրիստոնյաներին. 19-րդ դարի կեսին նրանց հալածանքը մեծ չափերի հասավ. 1860 թվականին նրանք մեծ բազմությամբ հարձակվելով մարոնիների վրա՝ սպանեցին 600 հոգի, հետո ընկան գյուղերի վրա, 550 գյուղ այրեցին ու մոխիր դարձրին, 10 000 քրիստոնյա սրի քաշեցին: Սրա վրա Դամասկոսի մահմեդականներն էլ ոտքի ելնելով, սպանեցին իրենց

քաղաքի բնակիչներից 5 000 քրիստոնյա, 38 վարդապետ, 3 եպիսկոպոս, այրեցին Ռուսաստանի, Պրուսիայի, Հոլանդիայի, Բելգիայի և Հունաստանի հյուպատոսարանները և բոլոր քրիստոնյաների տները, վանքերը, եկեղեցիներն ու առաջնորդարանները: Հայերն այս հարվածներից զերծ չմնացին: 42000 քրիստոնյաներ փախան զանազան կողմեր:

Մահմեդականների այս մեծ անկարգությունը եվրոպական միջամտություն առաջ բերեց. Նապոլեոնի հրամանով 8000 ֆրանսիական զորք ցամաք դուրս եկավ, որին հետևեց նաև անգլիական 4000 զորքերի մի բանակ: Նրանք հարձակվեցին Լիբանանի լեռների վրա, ապստամբ մահմեդականներին ջարդեցին. դրա վրա օսմանյան պետությունն էլ շարժվելով, մի մեծ բանակ ուղարկեց Դամասկոս, քաղաքապետին, զորավարին ու բազմաթիվ զինվորականների հրացանի բռնեց*, ապստամբներին կախեց, և նյութական վնասները վճարել ստիպեց: Եվրոպական պետությունները Նապոլեոնի պահանջով դիմեցին օսմանյան կառավարության և Լիբանանի քրիստոնյաների համար ստացան որոշ ինքնավարություն՝ մի քրիստոնյա կուսակալով՝ օսմանյան պետության գերիշխանության տակ (1861 թ.):

235. ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Կիլիկիան օսմանցիների իշխանության տակ մտնելուց հետո, երկրի զանազան կողմերում ձևավորվեցին թուրքմեն իշխանություններ, որոնք անվանապես միայն հպատակվում էին օսմանցիներին: Այդպիսի ինքնիշխան գավառներից մեկն էլ Զեյթունն էր, որ 1545 թվականից սկսած կառավարվում էր Սուրենյան տոհմի իշխաններով: 1618 թվականին օսմանցիների սուլթանը հրովարտակ էր հանել, որ օսմանյան իշխանությունը չխառնվի բնավ Զեյթունի գործերին և տարեկան մի թեթև տուրքով գոհանա: Տաճիկները մի քանի անգամ ուզեցին մտնել Զեյթուն, բայց միշտ էլ դիմադրության հանդիպեցին և քաջ զեյթունցիներից ջարդ կրելով, հետ դարձան: 19-րդ դարի կեսից հետո օսմանցիք որոշում են Կիլիկիայի բոլոր ապստամբ իշխանությունները ջնջել և երկիրը փաստորեն գրավել:

* հրացանի բռնեց - գնդակահարեց (խմբ.):

Առաջին մեծ փորձը Զեյթունի վրա են կատարում:

1860 թվականին օսմանցիների Խուրշիդ փաշան 12000 կանոնավոր և շատ անկանոն զորքով Զեյթունի վրա է արշավում. հայերը կատաղաբար անցնում են Ջիհուն գետը և նրա բանակի վրա հարձակվելով, այնպիսի մի սոսկալի ջարդ են տալիս, որ օսմանցիք փախչելու շնորհն են խնդրում:

Այդ միջոցին էր տեղի ունեցել Լիբանանի ապստամբությունը և եվրոպացիների միջամտությամբ երկիրն ազատվում էր մահմեդական լծից: Լիբանանի օրինակը դրդեց հայերին և ահա Լևոն անվամբ մեկը, որ իրեն Լուսինյան ցեղից էր համարում, Զեյթուն գալով, մի հանրագիր պատրաստեց և անձամբ տանելով Փարիզ, ներկայացրեց Նապոլեոն Գ կայսեր: Այս հանրագրով Կիլիկիայի հայերը, որ նոր միայն ջարդել էին օսմանյան բանակը, հայտնում էին, թե իրենք մի քրիստոնյա ժողովուրդ են, որ մինչև 70 000 զինվոր հանելու կարող են և պահանջում են ինքնավարություն: Նապոլեոնը, որ սիրում էր փոքր ազգերին ձեռք կարկառել՝ մեծերին տապալելու և իր ազդեցությունը տարածելու համար, համակրությամբ ընդունեց հանրագիրը և սուլթանին դիմում արեց: Տերությունն այս դիմումի վրա շփոթված, որոշեց ջնջել Զեյթունը և նոր բարդություններից ազատվել:

1862 թվականին Ազիզ փաշան 62 000 կանոնավոր և անկանոն զորքով Զեյթունի վրա արշավեց. հայերը դիմադրեցին Ջիհուն գետի առաջ, բայց թվի սակավության և դիրքի վատության պատճառով ստիպվեցին հետ քաշվել: Օսմանցիք առաջ եկան և Զեյթունը պաշարեցին: Դարերի ընթացքում այսպիսի բան տեղի չէր ունեցած. իսկույն հայերն իրենց կտրիճներին ոտքի հանեցին և 5 000 հոգի զանազան տեղեր դարան մտան կամ վտանգավոր կիրճերը բռնեցին: Ազիզ փաշան, որ կարծում էր, թե քաղաքն իր ձեռքի մեջ է առել, այնպիսի ջարդ կրեց, որ ամեն ինչ թողնելով հազիվ կարողացավ փախչել: 2000 օսմանցիք փռվել էին պատերազմի դաշտում:

Այս հաղթությունից հետո հայերը նոր բողոքով դիմեցին Նապոլեոն կայսեր և նրա միջամտությունը խնդրեցին. սուլթանը, որ Ազիզ փաշայի պարտության վրա կատաղած՝ կրկնակի մի բանակ ուղարկելու մտադիր էր, Նապոլեոնի պահանջի վրա ստիպվեց եղած զորքը հետ քաշել, Ազիզ փաշային պաշտոնանկ արեց, Զեյթունի իշխաններին Պոլիս կանչեց և հաշտության հանձնաժողով կազմելով, պահանջեց՝ որ զեյթունցիք ընդունեն մի

տաճկական գավառապետ, իսկ ոստիկանությունը և այլ պաշտոնները մնան տեղացի հայոց ձեռքում:

Այսպես օսմանյան իշխանությունն առաջին անգամ մտավ Զեյթուն (1865 թ.):

236. ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Ամերիկայի Միացյալ Նահանգներն իրենց ազատությունը ձեռք բերելուց հետո, սկսեցին հսկայաքայլ առաջադիմել. գաղթականներն առաջացան հետզհետե դեպի անծանոթ և անբնակ մասերը, կտրատեցին անտառները, չորացրին ճահիճները, սկսեցին մշակել բամբակ, ցորեն և ամեն տեսակ ընտիր բերքեր. արգավանդ հողը, առատ ջուրը մեծ արդյունք տվեցին իրենց. ամեն կողմից մարդիկ թափվեցին այստեղ, մանավանդ այն ժամանակ, երբ գտնվեցին Կալիֆոռնիայի ոսկու առասպելական հանքերը. բնակիչները, որ նոր ազատված ժամանակ 4 միլիոն էին (որից 700 000-ը ստրուկ), 1840 թվականին հասել էին 17 միլիոնի, իսկ 1860-ին՝ 27 միլիոնի:

Միացյալ Նահանգները կարելի էր էապես երկու մասի բաժանել, որոնք իրարից տարբերվում էին զանազան կողմերով: Հյուսիսային նահանգները մեծ մասամբ անգլիացի և գերմանացի գաղթականներից կազմված, բողոքական էին, իսկ հարավային նահանգները, մեծ մասամբ իսպանացի և իտալացի գաղթականներից կազմված, կաթոլիկ էին: Հյուսիսային բնակիչները հանրապետական էին և ուզում էին դաշնակցական կառավարության ձևը պահել, իսկ հարավայինները դեմոկրատ էին և ուզում էին նահանգների լիակատար անկախություն: Կար և մի մեծ տարբերություն տնտեսական կողմից: Հարավային նահանգներն ունենալով շատ տաք կլիմա և ընտիր հող, զբաղվում էին ծխախոտի, շաքարի, բրնձի և բամբակի մշակությամբ, որ տալիս էին մեծ արդյունք: Ժողովրդից շատերը լինելով հարուստ հողատեր, այդ հողերի մշակության համար պետք ունեին տարապայման տաքին դիմացող բազմաթիվ մշակների. այս պատճառով նրանք գնում էին Աֆրիկայից շատ ստրուկներ և ծառայեցնում իրենց հողերի վրա: Հյուսիսային նահանգները, որոնք մեղմ կլիմա և նվազ բերրի հող ունեին, մշակում էին ցորեն և

ավելի հոգ էին տանում արհեստագործության և վաճառականության: Այնտեղ զարգացած էր մանր տնտեսությունը և ստրկություն չկար: Ազատ կարգերը ավելի էին աճեցրել հյուսիսի բնակիչներին, իսկ հարավը հազիվ նրա կեսի չափ բնակիչ ուներ, որի կեսն էլ դեռ ստրուկ էր: Ազատ գաղափարների տարածման հետ հյուսիսում տարածվում էր նաև ստրկության դեմ պայքարը: Հարավային նահանգները տեսնելով վտանգը, որ իրենց տնտեսությունը պիտի քայքայեր, զանազան ձևերով աշխատում էին նրա առաջն առնել և նախագահական ընտրությունների մեջ իրենց ձայնն անցկացնել:

1860 թվականին նախագահ ընտրվեց Աբրահամ Լինկոլնը, որ ստրկության երդվյալ թշնամին էր: Հարավային նահանգները տեսնելով որ այլևս դիմադրությունն անզոր է, բաժանվեցին հյուսիսից և իրենց մեջ միանալով, 11 նահանգ առանձին պետություն կազմեցին, առանձին մայրաքաղաքով և առանձին նախագահով, ընդամենը 9 միլիոն բնակչությամբ, որի գրեթե կեսն ստրուկ էր:

Պատերազմն սկսվեց: Հյուսիսային 19 նահանգները, թեև ունեին կրկնապատիկ ժողովուրդ, մոտ 19 միլիոն բնակչություն, մեծ հարստություն և ահագին նավատորմ, բայց և այնպես այդ ժողովուրդը, իբրև արհեստավոր ու վաճառական, անվարժ լինելով պատերազմի, չկարողացավ դիմադրել հարավի բնակիչներին, որոնք վայրենի բնիկների հետ միշտ կռվի մեջ լինելով, սովորել էին պատերազմական արվեստը և ունեին մի շարք լավ զորավարներ: Երկու տարի շարունակ սրանք հաղթում էին հյուսիսի բանակներին և մոտ էին արդեն գրավելու Վաշինգտոն մայրաքաղաքը: Բայց հյուսիսի ժողովրդի բարոյական ուժը և կյանքի զորությունը երբեք չընկճվեց: Այդ պատերազմների մեջ նրանք հետզհետե վարժվեցին և նրանց անփորձ կամավորները փորձառու զինվորներ դարձան: Հյուսիսը երկու լավագույն միջոց ուներ կռվելու համար հարավի դեմ. նախ նա ազատ հայտարարեց ստրուկներին, որով հարավի բնակչության կեսն իր կողմը անցավ. հետո հյուսիսի մեծ նավատորմը պաշարեց հարավային նավահանգիստները, որով հարավի ամբողջ արտահանությունը խափանվեց: Այսպիսով հարավի վաճառականությունը վերջացավ: Շուտով հյուսիսի բանակներն արշավեցին հարավ, հաղթեցին նրանց գլխավոր հրամանատար Լիին, որ անձնատուր եղավ և գրավեցին Ռիչմոնդ մայրաքաղաքը (1865 թ.):

Այսպես վերջացավ պատերազմը, որ կես միլիոնից ավելի կյանք արժեց Միացյալ Նահանգների քաղաքացիների վրա և ապստամբ նահանգները հետզհետե ընդունելով ստրկության վերացման օրենքը, մի առ մի մտան դաշնակցության մեջ:

237. ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ամերիկյան ստրուկների ազատության հետ զուգընթաց է Ռուսաստանի ճորտերի ազատությունը: Ամերիկայում այդ դեպքը կատարվեց մեծ արյունահեղությամբ, իսկ Ռուսաստանում՝ խաղաղ ճանապարհով:

Սկսած Սրբազան դաշնակցության հաստատումից, Ռուսաստանում կազմվել էին ազատականների ծածուկ միություններ, որոնց նպատակն էր կռվել ցարական բռնակալ վարչակարգի դեմ: Այս շարժումները թեև չհասան իրենց բուն նպատակին, բայց առաջացրին որոշ հետաքրքրություն դեպի հասարակ ժողովուրդը, դեպի ճորտերի դասակարգը:

Ռուսաստանում ճորտերի դասակարգը կազմում էր այն ահագին թվով գյուղացիությունը, որ իբրև ստրուկ ծառայում էր հողատեր հարուստների մոտ, բոլորովին աղքատ, իրավազուրկ ու թշվառ դրության մեջ: Ալեքսանդր Բ ռուսաց կայսրը մասամբ տեղի տալով ազատական պահանջներին, մասամբ էլ զգալով, որ երկրի զորության պատվանդանը հենց հասարակ ժողովուրդն է, հրաման հանեց ազատագրել նրանց: Բոլոր հողատերերը պարտական էին իրենց հողերի մեկ մասը հանձնել իրենց ճորտերին իբրև սեփականություն, իսկ ճորտերն էլ պարտավոր էին իրենց աշխատանքով կամ վարձով վճարել նրանց փոխարժեքը: Այսպիսով 46 միլիոն ստրուկ ազատություն ստացավ: Ազատված հողերը կազմեցին գյուղական համայնական սեփականություն. նրանք պատկանում էին ամբողջ համայնքին և վաճառումից ու գրավումից ազատ էին (1861 թ.):

Այս ազատագրությունը սակայն լիովին բավարար արդյունք չունեցավ. շատ տեղ ստացված հողաբաժինը բավարար չէր ապրեցնելու համայնքը. դրա վրա ավելացնենք պետական վատ կազմակերպությունը, կրթության սոսկալի պակասը և մեզ համար պարզ կլինի, թե ինչպիսի խավար ու թշվառ դրության մեջ էր ռուս գյուղացիությունը:

238. ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻԱՑՈՒՄԸ

Իտալիայի նման գերմանական ժողովուրդն էլ վաղուց էր ցանկանում միանալ և մի զորավոր Գերմանիա կազմել, բայց դժվար էր լինում որոշել, թե ո՛ր տերությունը պիտի անցնի դաշնակցության գլուխը: Երկու մեծ թեկնածու կար՝ Ավստրիան և Պրուսիան, որոնք իրար առաջ էին կտրում՝ այս նպատակին հասնելու համար: Ավստրիայի թուլացումը իտալական պատերազմի ընթացքում շահավետ էր Պրուսիային, որ ամենից ավելի ցանկանում էր ձեռք բերել կայսերական տիտղոսը և Ֆրանսիայի ու Ռուսիայի մրցակից մի հզոր պետություն դառնալ: Նա իր ամբողջ ուշադրությունը դարձրել էր բանակի վրա. Վիլհելմ Ա թագավորը, իր առաջին նախարար Բիսմարկը և զինվորական գլխավոր Մոլտկեն միացել էին մի նպատակի շուրջը, այն է կազմել Եվրոպայի ամենամեծ բանակը, որովհետև բռունցքից վեր ուրիշ բան չէին ճանաչում: Ազատականները հակառակ էին նրանց սկզբունքին և դրա համար էլ չէին ուզում Պրուսիան որպես գերմանական դաշնակցության գլուխը: Բայց Վիլհելմը, Բիզմարկն ու Մոլտկեն արհամարհում էին բոլոր բարոյական քարոզները և հենց դրանց առաջն առնելու համար առիթ էին փնտրում պատերազմի:

Առիթը ներկայացավ, երբ Դանիայի թագավորն անժառանգ մեռնելով, Շլեզվիգ և Հոլշտայն գավառների մասին վեճ ծագեց: Պրուսիան, որ ծովային մեծ ուժ էլ կազմելու փափագ ուներ, Ավստրիայի հետ միանալով, Կիլը գրավեց և այն երկու գավառները պահանջեց: Դանիան մերժեց. պատերազմն սկսվեց. բայց փոքրիկ Դանիան ուժ չուներ երկու մեծ պետություններին դեմ դնելու, եվրոպական պետություններն էլ իրեն օգնության չհասան. նա պարտվեց և իր երկու գավառներից զրկվեց (1864 թ.): Բայց երբ պետք եղավ ավարը բաժանել, Պրուսիան ժամանակը եկած համարեց իր վաղեմի ցանկությունը գործադրելու: Նա նախ դաշնակցեց Ավստրիայի հակառակորդ Իտալիայի հետ, Ռուսաստանի և Ֆրանսիայի հավանությունն էլ ստացավ և Ավստրիան դուրս թողնելով՝ երկու գավառները միացրեց և իրեն հայտարարեց գերմանական դաշնակցության գլուխը (1866 թ.):

Ավստրիան դուրս եկավ պատերազմելու Պրուսիայի դեմ. իրեն միացան գերմանական դաշնակցությունից Հանովերը, Սաք-

սոնիան, Բավարիան և մի շարք մանր պետություններ: Պրուսիան ընկավ նրանց վրա և մի առ մի ջախջախեց այս ուժերը: Միևնույն ժամանակ հարավից իտալացիք ծովից ու ցամաքից Ավստրիայի դեմ դուրս եկան. կայսրը ստիպվեց իր բանակը երկուսի բաժանել: Իտալական բանակն ու նավատորմը պարտվեցին, բայց այնուամենայնիվ կարողացան ավստրիական ուժերը ջլատել. պրուսիական երկաթե բռունցքը իջավ Ավստրիայի վրա, ջարդեց նրա բանակները և մոտեցավ Վիեննային: Կայսրը տեսնելով, որ այլևս ապարդյուն է շարունակել կռիվը, հաշտություն խնդրեց. Պրուսիան ստացավ Շլեզվիգը, Հոլշտայնը, Հաննովերը և 22 գերմանական հյուսիսային պետությանց գլուխն անցավ. հարավային պետությունները բաժանվելով Ավստրիայից՝ մնացին անկախ, բայց դաշինք կապեցին Պրուսիայի հետ. Վենետիկը խլվեց Ավստրիայից և տրվեց Իտալիային:

Ավստրիայի պարտությունը խրատական մեծ դաս եղավ իրեն համար. պետությունը տեսավ, որ հին միապետական կարգերը այլևս անընդունակ էին կառավարելու այս բազմացեղ երկիրը. հիմնվեց սահմանադրությունը. միևնույն ժամանակ բավարարություն տրվեց հունգար ժողովրդի անջատական ձգտումներին. կայսրությունը բաժանվեց երկու ինքնավար մասերի. Ավստրիա և Հունգարիա. առաջինի մայրաքաղաքն էր Վիեննա, ուր նստում էր կայսրը և գտնվում էր Պառլամենտը. երկրորդի մայրաքաղաքն էր Բուդապեշտը, ուր գումարվում էր հունգարական Պառլամենտը. Ավստրիայի կայսրը նաև Հունգարիայի թագավորն էր համարվում. երկու պառլամենտներն անկախ էին իրենց երկրի գործերում, իսկ ընդհանուր պետական գործերի համար կար երկու պառլամենտներից կազմված առանձին ներկայացուցչական մարմին: Կառավարական այս ձևը գոհացրեց մաճառներին, բայց այժմ էլ սկսեցին ուրիշ ազգային շարժումներ. Ավստրիայում լեհերն ու չեխերը, Հունգարիայում էլ ոչ հունգար տարրերը պահանջում էին ինքնավարություն և ամբողջ երկիրը դարձավ ազգային մրցակցությունների մի անվերջանալի քաոս:

239. ՖՐԱՆՍ - ՊՐՈՒՍԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Երկրորդ կայսրության ժամանակ Ֆրանսիան աշխատեց նորից հասնել այն փառքին, որ ուներ մի ժամանակ արևմուտքում և ամբողջ աշխարհում: Նապոլեոնը միանալով Անգլիայի հետ, բռնի ստիպեց Չինաստանին՝ բանալ մի քանի նավահանգիստներ եվրոպական առևտրի համար, նվաճեց Քոչինչինը, նպաստեց Սուեզի ջրանցքի բացման և այս ձեռնարկներով այնպիսի զարկ տվեց Ֆրանսիայի առևտրական գործունեության, որ 10 տարվա ընթացքում ամբողջ շրջանառությունը կրկնապատկվեց: Մյուս կողմից նա հետամուտ եղավ պետական միջոցներով զարդարելու Փարիզը՝ գեղեցիկ ապարանքներով, նորանոր փողոցներով, ճեմելիքներով և պարտեզներով: Փարիզը դարձավ նորից զվարճության, ճաշակի և նորաձևության կենտրոնը ամբողջ աշխարհի համար:

Այս բոլորը սակայն մի վատ արդյունք ունեցավ. նյութական բարօրության հասած ժողովուրդը հետամուտ լինելով ուրախության և զվարճության, սկսեց բարոյապես ընկնել: Եվ մինչդեռ Ֆրանսիայի հարևան Պրուսիան հետզհետե աշխատում էր երկրի մեջ զինվորական ուժը բարձրացնել, Ֆրանսիան մեղկանում էր: Նրա զինվորական բոլոր գործողությունները պսակվում էին անհաջողությամբ. միջամտեց իտալական հարցին, բայց փոխանակ շահելու, իր կողքին մի նոր պետություն ստեղծեց. իր աչքի առաջ թույլ տվեց, որ կատարվի Գերմանիայի միությունը, որ կարող էր Ավստրիայի հետ միանալով խանգարել. փորձեց պաշտպան կանգնել լեհական ապստամբության Ռուսաստանի դեմ, բայց անօգուտ սպառնալիքից այն կողմ չանցավ. Մեքսիկա զորք ուղարկեց Մաքսիմիլիանին երկրին կայսր դարձնելու համար, բայց Միացյալ Նահանգներից վախեցած՝ հետ քաշվեց: Պրուսիան տեսնում էր այս բոլորը և հարատևում իր սպառազինությունը: Միայն Նապոլեոնն էր, որ իրերի բուն վիճակը չէր տեսնում և առիթ էր որոնում պատերազմի դուրս գալու Պրուսիայի դեմ՝ նորածին Գերմանիայի ուժը ջախջախելու համար:

Առիթը ներկայացավ, երբ իսպանացիք իրենց թագուհուն երկրից դուրս վռնդելով՝ գահն առաջարկեցին պրուսական մի իշխանի: Նապոլեոնը բողոքեց և իշխանը հետ կանգնեց. բայց Նապոլեոնը սրանով չբավականանալով՝ ավելի խիստ պահանջներ դրեց, և երբ

մերժում ստացավ, դուրս եկավ կռվելու Պրուսիայի դեմ:

Պրուսիան պատրաստ էր, միայն Ֆրանսիան պատրաստ չէր: Պրուսիացիք, Ռուսաստանի հետ բարեկամական դաշինք կնքելով, կես-միլիոնանոց իրենց բանակը սահման ուղարկեցին, որի դեմ Ֆրանսիան հազիվ կեսը կարողացավ դուրս բերել, շատ անկարգ վիճակի մեջ: Գերմանացիք պաշարեցին Մեցը և այնտեղ փակեցին ֆրանսիական խոշոր բանակ. Նապոլեոն կայսրը անձամբ գնաց ազատելու քաղաքը, բայց Սեդանի առջև ստիպվեց կանգնել գերմանական խոշոր ուժերի առաջ: Մի մեծ ճակատամարտում նա պարտվեց և անձնատուր եղավ (1870 թ.): Կայսրությունը տապալվեց և հանրապետություն հռչակվեց: Ամեն կողմից ֆրանսիացի նորակոչներն ու կամավորները դուրս եկան իրենց հայրենիքը փրկելու, բայց նրանց անձնվիրությունը չկարողացավ վանել գերմանական արշավը:

Պրուսիացիք պաշարեցին Փարիզը, որ մի քանի ամսից հետո սովից ստիպված անձնատուր եղավ: Ֆրանսիան ստիպվեց հրաժարվել Էլզաս-Լոթարինգիայից և 5 միլիարդ պատերազմական տուգանք վճարել: Վիլհելմ Ա-ն հռչակեց իրեն կայսր և ամբողջ Գերմանիան նրա ձեռքի տակ մեկ պետություն կազմեց: Այսպես գերմանական ծրագիրն իրականացավ, իսկ Պրուսիան ընկավ քառասային դրության մեջ. ժողովուրդն ամբողջ այս խայտառակության մեղքը ձգելով բուրժուազիայի վրա, կազմեց Կոմունա, Փարիզը գրավեց և անխնա այրում-ջնջում էր ամեն ինչ, և՛ նշանավոր պալատներ, և՛ հասարակական շինություններ, կոտորում էր հարուստներին: Վերջապես կառավարությունը հարձակմամբ առավ քաղաքը, կոմունականներին սարսափելի գազանությամբ ճնշեց և հանրապետությունը վերահաստատեց: Քիչ-քիչ ժողովուրդը կազդուրվեց, իր վրա դրված տուգանքը շուտով վճարեց և նորից բռնեց Եվրոպայում իր ազդեցիկ դիրքը:

Ֆրանս-պրուսիական պատերազմը մի ուրիշ ազդեցություն էլ ունեցավ. Իտալիայի թագավորը օգուտ քաղելով ֆրանսիական բանակի Հռոմից հեռանալուց, արշավեց այդտեղ և Հռոմն էլ միացրեց Իտալիային: Այսպես Պապի աշխարհական իշխանությունը ջնջվեց և Իտալիան հասավ կատարյալ միության:

240. ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ֆրանս-պրուսիական պատերազմը նոր քաղաքական դրություն ստեղծեց Արևելյան Եվրոպայում. Ավստրիան ձեռք քաշելով Իտալիայից և Ավստրիայից, աչքը դարձրեց դեպի Բալկանները՝ մրցելու համար Ռուսաստանի դեմ: Այս գործում նա իրեն օգնական ուներ Գերմանիան, որ թեև ուղղակի շահ չուներ Բալկաններում, բայց չէր ուզում տեսնել Ռուսաստանի աճումը: Իսկ Պրուսիան, չկարողանալով կշռել գործի իրական դրությունը, ոչ միայն չէր կասկածում իր երկու հակառակորդ հարևանների վրա, այլ մինչև իսկ նրանց հետ դաշինք կապեց և այսպիսով իբր թե ապահովություն ձեռք բերելով Արևմտյան Եվրոպայի դեմ, որ Ղրիմի պատերազմում խանգարել էին իրեն, ավելի ազատորեն ձեռք կարկառեց դեպի Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդները՝ նրանց ազատության անվամբ իր տիրապետությունն ընդարձակելու:

Սլավոնական ցեղերի ապստամբությունը 19-րդ դարի սկզբին, հույների ապստամբությունը և Ղրիմի պատերազմը արևելյան քրիստոնյա ժողովուրդների մի փոքր մասին միայն թեթևություն էին պատճառել. մյուսները, մանավանդ Թուրքիայի ասիական հպատակ քրիստոնյաները դեռ հեծում էին անողոք բռնակալության լծի տակ: Ասորիքի կոտորածը, մանավանդ Զեյթունի ապստամբությունը ավելի ապարդյուն եղան: 1866 թվականին ապստամբեց Կրետեն և ուզեց միանալ Հունաստանին. տաճիկները մի սոսկալի ջարդով պատասխանեցին նրանց. Հունաստանն ուզեց զենքով միջամտել, բայց եվրոպացիք չթողեցին և սուլթանից խոստում ստացան բարենորոգումներ մտցնելու կղզու մեջ: Ավելի մեծ եղավ 1875 թվականի սլավոնական ապստամբությունը, որ տեղիք տվեց մեծ պատերազմի:

Երբ չերքեզները Կովկասից գաղթեցին Թուրքիա, տաճիկները աշխատեցին բնակեցնել նրանց հատկապես այն վայրերում, ուր քրիստոնյա տարրը զորեղ էր, դրդելով նրանց ամեն կերպ նեղել այդ քրիստոնյաներին: Այսպես սկսվեցին չերքեզների ընդհարումները, որոնք քիչ-քիչ ընդունեցին խոշոր չափեր: Օրինակի համար, միայն Ֆիլիպեի շրջանում նրանք 12 000 քրիստոնյա էին սպանել: Այս խժդժությունները մի կողմից, օսմանյան կառավարության հարստահարությունը մյուս կողմից ստիպեցին սլավոն ժողովրդին ապստամբելու: Ապստամբեց նախ Հերցեգովինան, հետո Բոս-

նիան, որոնց հետևեց Բուլղարիան: Եվրոպական պետությունների ներկայացուցիչները գումարվելով Պոլսում, աշխատում էին մի ելք գտնել: Հանկարծ տեղի ունեցավ օսմանյան հեղափոխությունը. սուլթանին գահընկեց արին, սպանեցին և նրա տեղ դնելով իր եղբորը, հրատարակեցին Սահմանադրություն: Սերբիան և Չերնագորիան, տեսնելով իրենց ցեղակից ժողովուրդների վիճակը, հայտարարեցին կատարյալ անկախություն և դուրս եկան պաշտպանելու նրանց: Օսմանցիք, որ դժվարանում էին ապստամբների խմբակների հետ կռվել, հաջողությամբ կռվեցին սերբ ու չերնագորական կանոնավոր բանակների դեմ, Սերբիան ավերեցին և մոտ էին Չետինեն գրավելու: Այն ժամանակ եվրոպացիք Պոլսում կազմեցին մի դեսպանաժողով, որ պահանջեց Թուրքիայից ապստամբ սլավոն նահանգների մեջ մտցնել տեղական ինքնավարություն՝ եվրոպացիների հսկողության տակ: Տաճիկների սուլթան Աբդուլ Համիդ Բ-ը, տեսնելով եվրոպացիների մեջ տիրող անհամաձայնությունը, մանավանդ Անգլիայի բարյացակամ վերաբերմունքը, մերժեց: Այն ժամանակ դուրս եկավ Ռուսաստանը՝ զենքով ստիպելու նրան (1877 թ.):

Ռուսական բանակներն առաջ խաղացին Եվրոպայում Բուլղարիայի վրայով և Ասիայում՝ Հայաստանի վրայով. նրանք սկզբում երկու կողմերում էլ մեծ դիմադրության հանդիպեցին, բայց հետո նոր զորությամբ ընկան տաճիկների վրա, արևելքից գրավեցին Բայազեդը, Կարսը, Կարինը, իսկ արևմուտքից Ադրիանուպոլիսը գրավելով, Պոլսի մոտ, Սան-Ստեփանո արվարձանում կանգ առին: Սուլթանը նեղը մնացած, հաշտություն խնդրեց և կնքեց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, որի համաձայն Ռումինիան, Սերբիան, Չերնագորիան և Բուլղարիան՝ Մակեդոնիայի հետ ստանում էին անկախություն Ռուսաստանի հովանավորության տակ և շատ տեղեր էլ կցվում էին Ռուսաստանին (1878 թ.):

Ռուսաստանի այս աստիճան հաջողությունը հաճելի չէր Անգլիային. ուստի մյուս եվրոպական պետությունների հավանությունն առնելով, պատերազմի սպառնալիքով պահանջեց Ռուսաստանից՝ հեռանալ Պոլսից և հաշտության հարցը թողնել իրենց: Բեռլինում կազմվեց մեծ պետությունների վեհաժողովը, որ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը ջնջելով՝ կազմեց Բեռլինի դաշնագիրը: Այս դաշնագրի համաձայն Ռումինիան, Սերբիան և Չերնագորիան դարձան բոլորովին անկախ պետություններ,

Կարսը, Արտահանը և Բաթումին անցան Ռուսաստանին, Բոսնիան և Հերցեգովինան տրվեցին Ավստրիային, Թեսալիան հույներին, Կիպրոսն Անգլիային, Բուլղարիան դարձավ օսմանցիներին հարկատու իշխանություն, իսկ Արևելյան Ռումելին ինքնավարություն ստացավ քրիստոնյա նահանգապետով: Մի քանի տարի հետո (1885 թ.), Բուլղարիան արշավեց հարավ և Արևելյան Ռումելին էլ միացրեց իրեն: Պետություններն անտարբերությամբ նայեցին այս գրավման վրա. միայն Սերբիան էր, որ Ռուսաստանի դրդմամբ պատերազմ հրատարակեց Բուլղարիայի դեմ. նորածին Բուլղարիան երկու շաբաթվա մեջ կարողացավ քաջությամբ դուրս քշել սերբերին և նույնիսկ Սերբիայի հողերը գրավել. սերբերն ստիպվեցին հաշտություն խնդրել, և նախկին կարգը վերականգնվեց:

241. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Այն բոլոր կրթական շարժումները և վարչական բարեկարգությունները, որոնք 19-րդ դարի կեսին ծնունդ էին առել Պոլսի հայոց մեջ, գրեթե միայն մայրաքաղաքի հայոց համար էին, իսկ Հայաստանի հայ ժողովուրդը մեծ մասամբ մնում էր դեռ մտավոր խավարի և թուրքական հարստահարության և քրդական խժդժության ենթակա: Նրա մասին մտածող չկար:

Առաջին անգամ Խրիմյան Հայրիկը բարձրանալով Պոլսի պատրիարքական գահը (1869 թ.), իբրև քաջածանոթ Հայաստանի ժողովրդի թշվառ կյանքին, որի մեկ զավակն էլ ինքն էր, ազգային ժողովի քննության առարկա դարձրեց այդ հարցը: Կազմվեց Հարստահարությանց տեղեկագիրը, որի մեջ մանրամասն նկարագրելով ժողովրդի քաշած տառապանքը և այդ չարիքի պատճառներն էլ մատնանիշ անելով, մատուցվեց օսմանյան կառավարության և խնդրվեց որոշ բարեկարգություններ մտցնել հայաբնակ նահանգներում: Բարձրագույն դուռը խոստացավ, բայց ոչինչ չարավ:

Երբ ծագեց ռուս-տաճկական պատերազմը, հանուն արևելյան քրիստոնեության, հայերը երկու մասի բաժանվեցին. Ռուսաստանի հայերն առհասարակ պնդում էին, թե պետք է Տաճկահայաստանի ժողովուրդն էլ ապստամբի, որպեսզի ռուսական ազատարար բանակի միջոցով ձեռք բերի իր երկրի ինքնավարությունը. ընդհակառակը Պոլսի հայերը, որոնց գլուխն էր Ներսես

պատրիարքը, գտնում էին, որ հանդարտ մնալով ավելի կարող են հուսալ օսմանցիների կողմից տրվելիք բարենորոգման: Բայց օսմանցիք փոխանակ գոնե դժվար բոպեին հայոց հետ քաղցր վարվելու, սկսեցին ավելի ընթացք տալ քրդերի ու չերքեզների հարձակումներին թշվառ հայ ժողովրդի վրա: Այնպես որ երբ ռուսական բանակները մտան Տաճկահայաստան, բոլորը գրկաբաց ընդունեցին նրանց և ամեն կերպ աջակցում էին նրանց թուրքերի դեմ, ինչպես նախկին արշավանքների միջոցին:

Երբ ռուսներն ամեն կողմ տարածեցին իրենց հաղթանակը և վերջապես Սան-Ստեֆանոյում սկսվեց կնքվել հաշտության դաշնագիրը, իսկույն Ներսես պատրիարքը փոխեց իր քաղաքականությունը և դիմելով ռուսների բանակը, կարողացավ դաշնագրի մեջ մտցնել հայոց համար 16-րդ հոդվածը: Այս հոդվածի համաձայն օսմանյան կառավարությունը հանձն էր առնում բարենորոգումներ մտցնել Հայաստանում և ռուսական զորքը պիտի մնար Հայաստանում մինչև խոստացված բարենորոգումների գործադրությունը:

Բայց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը Անգլիայի պահանջով մերժվելով, Բեռլինի վեհաժողովում վերաքննության ենթարկվեց: Ներսես պատրիարքը ազգի կողմից Եվրոպա ուղարկեց երկու պատվիրակ՝ Խրիմյան Հայրիկին և Խորեն եպիսկոպոս Նարբեյին: Առաջինն իր թարգման Մինաս Չերազի հետ այցելեց Հռոմ, Վիեննա, Փարիզ և Լոնդոն, իսկ երկրորդը՝ Պետերբուրգ, պատրաստելու համար այդ պետությանց վարչապետների տրամադրությունը. երկուսը միանալով Բեռլինում, հուշագիր մատուցեցին վեհաժողովին, խնդրելով որոշ ինքնավարություն Հայաստանի համար: Վեհաժողովը դաշնագրի մեջ դրեց 61-րդ հոդվածը, որով օսմանյան կառավարությունը խոստանում էր Հայաստանի մեջ մտցնել բարենորոգումներ, որոնց գործադրության վրա պիտի հսկեին եվրոպական պետությունները և հատկապես Անգլիան:

Հայաստանի համար այս ձախորդ որոշումը մտցրեց Անգլիան իր շահադիտական նպատակների և ռուսների հետ ունեցած թշնամության պատճառով: Ռուսաստանի մեծանալը ցանկալի չէր իրեն. ռուս բանակի մնալը Հայաստանում մինչև բարենորոգումների գործադրությունը պիտի նշանակեր հավիտենական գրավում. մյուս կողմից Կարինի և Բայազետի հանձնումը ռուս-

ներին պիտի փակեր տարանցիկ ճանապարհը՝ Պարսկաստան արտահանած ապրանքների համար, իսկ Հայաստանի ինքնավարության նույնպես հակառակ էր, որովհետև կարծում էր, թե հայերը նվիրված են ռուսական քաղաքականության և հենց որ ստանան ինքնավարություն՝ պիտի ծառայեն նրա շահերին: Անգլիայի այս շահադիտությունը և իր սխալ կարծիքն էր, որ հայության մեծ դժբախտության պատճառ դարձավ:

242. ԱՆԳԼԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Ռուսների առաջխաղացումը դեպի Միջին Ասիա առաջ բերեց շահերի ընդհարում Անգլիայի հետ: Անգլիացիք Հնդկաստանը գրավված էին տեսնում և աշխատում էին, որ ռուսները կարենան հաստատվել նրա սահմանամերձ երկրներում: Մրցման գլխավոր ասպարեզը դարձավ Աֆղանիստանը և շատ բան էր կախված այն հանգամանքից, որ այդ անզոր պետությունը ու՛մ կողմը կթեքվի: Թե՛ ռուսները և թե՛ անգլիացիք աշխատում էին քաշել նրան յուրաքանչյուրն իր կողմը: Ռուսների դաշնակից Դոստ- Մուհամմեդին հաջողվեց գահընկեց անել Աֆղանիստանի Էմիր Սուջային և նրա գահը գռնագրավել: Գահազուրկ Էմիրը դիմեց Անգլիայի և Լահորի հնդիկ սուլթանի օգնության: Անգլիական բանակն անցավ Բելուջիստանը, գրավեց Կանդահարը, ռուսասեր Էմիրին դուրս քշեց և գահընկեց իշխանին նորից վերահաստատեց (1840 թ.): Բայց շուտով ռուսասեր իշխանը ապստամբություն հանեց Անգլիայի դեմ և անգլիացիների ամբողջ բանակը կոտորեց: Անգլիացիք սրա համար վրեժ չլուծեցին, այլ իրենք էլ ընկան Լահորի սուլթանի երկրների վրա, գրավեցին և ամբողջ Փենջաբին տեր դարձան. այնուհետև հաշտվեցին Դոստ-Մուհամմեդի հետ և նրան պաշտպան հանդիսանալով՝ իրենց դաշնակից դարձրին (1855 թ.):

Բայց Անգլիայի վտանգը բուն իսկ Հնդկաստանի մեջ էր. այդ ընդարձակ երկիրը պահպանելու համար նա ուներ 50 000 եվրոպացի և 240 000 հնդիկ սիփայի զորք: Հնդկական զորքի այս ահագին բանակը բավական էր անշուշտ հեշտությամբ ոչնչացնելու անգլիական իշխանությունը Հնդկաստանում, բայց Անգլիան ուներ մի հեշտ միջոց՝ իր տիրապետությունը պահելու համար. այն է հակառակություն սերմանել տարբեր ցեղերի միջև, գրգռել

մահմեդականներին ու բուդդայականներին իրար դեմ և նրանց փոխադարձ ատելությամբ իր դիրքը զորացնել: 1857 թվականին սիփայիններն ապստամբեցին և անգլիական բանակը ջնջեցին: Անգլիացիք ստիպվեցին նոր բանակ կազմակերպել և մեկ տարի ծանր պատերազմներ մղելով, հազիվ կարողացան ընկճել ապստամբությունը, նվաճել Հնդկաստանը, որ վերջապես անգլիական գաղութ հայտարարեցին (1876 թ.):

Հազիվ Հնդկաստանը նվաճվել էր, նորից աղմկեց Աֆղանիստանը: Շիր-Ալի էմիրը բռնեց ռուսների կողմը և հեռացավ անգլիացիներից: Անգլիացիք բանակ ուղարկեցին Աֆղանիստան, որ հազար դժվարությունների հաղթելուց հետո Քաբուլը գրավեց, Շիր-Ալին փախավ և ռուսների օգնությանն ապավինեց: Ռուսները, որ նոր էին վերջացրել արևելյան պատերազմը, վախենալով կռվի բռնվել անգլիացիների հետ, հորդորեցին աֆղաններին հաշտվել Անգլիայի հետ. աֆղանները, անճար մնացած, դիմեցին Անգլիային և ընդունեցին նրա գերիշխանությունը (1878 թ.):

Աֆղանիստանի գործը վերջացնելուց հետո, անգլիացիք ավելի ուժով ընկան Աֆրիկայի վայրենի երկրների վրա, որ 19-րդ դարի սկզբից սկսած շարունակ գրավում էին:

Ամերիկայի Միացյալ Նահանգները Անգլիայի ձեռքից, իսկ Հարավային Ամերիկան Իսպանիայի ձեռքից կորզելուց հետո, Եվրոպայում սկսել էր անտարբեր վերաբերմունք դեպի գաղութները: Գաղութները նմանեցնում էին պտուղների, որոնք հենց որ հասունանում են, ընկնում են: Բայց 19-րդ դարի կեսից սկսած այս վերաբերմունքը նորից փոխվեց և բոլոր եվրոպական մեծ պետություններն աշխատում էին նորանոր գաղութներ ձեռք բերել: Այս կողմից ամենաճարպիկը դուրս եկավ Անգլիան, որ ո՛չ միայն Պորտուգալիայի, Իսպանիայի և Հոլանդիայի հին գաղութները քիչ-քիչ իր ձեռքը գցեց, այլև նորանոր երկրներ գտավ ու նվաճեց անծանոթ աշխարհամասերից: Երկու նշանավոր անգլիացի երկրախույզներ՝ Լիվինգստոնը և Ստենլին, 70-ական թվականներին Աֆրիկայում երևան հանեցին շատ երկրներ, որոնք իրար հետևից Անգլիայի ձեռքն անցան: Այսպես Անգլիան նվաճեց Կապլանդիան (Հարավային Աֆրիկայում), կաֆրերի և զուլուսների երկիրը, Միջին Աֆրիկայում Ուգանդան, Զանզիբարը և Նիգերի հովիտը:

Նորագյուտ երկրների մեջ նշանավոր եղավ Կոնգոն, որ զա-

նազան ազգերի գաղթավայրը դառնալով, վերածվեց միջազգային անկախ պետության՝ Բելգիայի թագավորի հովանավորության տակ:

Այս բոլոր գրավումներից հետո անգլիացիք աչք դարձրին Եգիպտոսի վրա, այդ մեծահարուստ երկրին, որ իր Սուեզի ջրանցքով իշխում էր Հնդկաստանի, Արաբիայի և Հնդկական օվկիանոսի վրա:

Եգիպտոսում հասարակական դրամների շռայլության պատճառով տնտեսական տագնապ էր առաջացել, որ դարմանելու համար խդիվի մոտ կազմվել էր անգլո-ֆրանսիական նախարարություն: Արաբի փաշա անվամբ խռովարար զինվորականը, որ Եգիպտոսի իշխանությունը ձեռք ձգելու հետին միտք ուներ, զինվորության և ֆելլահների գլուխն անցնելով, ապստամբություն բարձրացրեց խդիվի և եվրոպացիների դեմ: Ֆելլահները հարձակվելով Ալեքսանդրիայի եվրոպացիների վրա, կոտորեցին նրանց և ամբողջ երկիրը տակնուվրա արին: Խդիվը, ինչպես նաև օսմանցիք, չկարողանալով խաղաղացնել երկիրը, հարկ եղավ եվրոպական միջամտություն գործ դնել. ֆրանսիացիք և անգլիացիք ուղարկեցին իրենց նավատորմը Ալեքսանդրիայի առաջ, բայց ֆրանսիացիք շուտով հետ քաշվելով, ասպարեզը մնաց անգլիացիներին: Սրանք ռմբակոծեցին Ալեքսանդրիան, հնդկական բանակը Սուեզի ջրանցքից ներս մտավ, Կահիրեն գրավեց. Արաբի փաշային գերի բռնեց և ամբողջ Եգիպտոսը ժամանակավոր անվան տակ գրավեց (1882 թ.):

Անգլիայի օրինակին հետևեցին Ֆրանսիան, հետո Իտալիան և Գերմանիան: Ֆրանսիան գրավեց Ալժիրը, Թունիսը և Մադագասկարը: Այս վերջինը, որ մեծ կղզի է, հիմնել էր մի կայսրություն, որ իր զորության գագաթնակետին հասավ 19-րդ դարի սկիզբը. իր մեծագույն գահակալն եղավ Անդրիանամպոյինիմերինա Մեծը, որ ստիպվեց ֆրանսիացիների հետ դաշինք կնքել և կղզին նրանց թևարկության ենթարկել:

Իտալիան և Գերմանիան էլ ձեռք բերեցին որոշ երկրամասեր, այնպես որ 19-րդ դարի վերջը չհասած, ամբողջ Աֆրիկան պատկանում էր եվրոպացիներին, մեծ մասամբ Անգլիային. մնացել էր միայն 4 երկիր, որոնք անկախ կամ ինքնավար էին. դրանք էին Մարոկկոն, Տրիպոլին, Եթովպիան և Լիբերիան:

Ավելի մեծ ու բարգավաճ գաղութներ ստեղծեցին եվրոպացիք

Օվկիանիայում. այս կողմից էլ ամենից հաջողը դարձավ Անգլիան: 1851 թվականին Ավստրալիայում գտնվեցին ոսկու հանքեր, ահագին գաղթականություն ամեն կողմից, հատկապես Անգլիայից, թափվեց այդ կղզին: Գաղթականների թիվը հասավ 4 միլիոնի, որոնք դեռ այս մեծատարած կղզու փոքր մասը միայն շենացրել էին: Նշանավոր դարձավ նաև Կանադան, որ իր բնական հարստությամբ, անտառներով ու բերքերով իրեն քաշեց միլիոնավոր ժողովուրդ հատկապես Անգլիայից և հետո էլ կազմեց անկախ պետություն (1867 թ.): Այսպես Կանադան դարձավ անգլո-սաքսոն ժողովրդի համար մի նոր համայնք, նման Միացյալ Նահանգներին, ուր շարունակ աճում ու բազմանում է այս ցեղը:

243. ԵԹՈՎՊԻԱ ԵՎ ՆԵԳՈՒՍ ԹԵՈԴՈՐՈՍ

Աֆրիկայի այս ընդարձակ և լեռնոտ երկիրը գտնվում է Եգիպտոսի հարավային կողմը, Կարմիր ծովի եզերքը: Ժողովուրդը դավանում է մի կրոն, որ քրիստոնեության և մովսիսական կրոնի խառնուրդն է: Անհիշատակ ժամանակներից սկսած երկրին տիրում էր թագավորական մի տոհմ, որ Սողոմոնյան էր կոչվում և իրեն հրեաների Սողոմոն թագավորից սերած էր կարծում: Վերջին ժամանակները Սողոմոնյան հարստությունը բոլորովին թուլացել էր, որովհետև թագավորն ամբողջ երկիրը բազմաթիվ մանր-մունր իշխանների բաժանած լինելով, իրեն անվանական մի իշխանություն միայն մնացել էր: Այս վիճակից օգուտ քաղելով, Գալլայի իշխանը հարձակվում է Եթովպիայի վրա և Ամհարայի թագավորության տեր դառնում:

Եթովպիան բաժանվում էր 4 մեծ մասի, որոնցից յուրաքանչյուրի վրա նստում էր առանձին իշխան (դեջաջ). դրանք էին՝ Ամհարան, Թեկրին, Շոան և Կոճամը: Գալլայի իշխանը Ամհարային տիրելուց հետո, մյուս երեք իշխանություններն էլ իրեն հարկատու է դարձնում, որով ամբողջ Եթովպիայի գերիշխան տերը (ռաս) է դառնում: Միևնույն ժամանակ Սողոմոնյան հարստության ժառանգին մի շարք գյուղեր տալով, թագավոր (նեգուս) անունը վրան է պահում:

Գալլացիք մահմեդական էին, բայց իշխանը քրիստոնյա հաբեշների սերը շահելու համար առերես քրիստոնեությունն է ընդունում:

Կասսա անվամբ մեկը, որ հասարակ մարդու որդի էր, Ամհարայի իշխանի մոտ զինվոր է գրվում և իր ցույց տված քաջությամբ այնչափ սիրելի է դառնում նրան, որ իշխանը իրեն փեսա է դարձնում նրան: Դիրք ձեռք բերելուց հետո Կասսան ապստամբում է իր աներոջ դեմ, հաղթում նրան և առանձին մի գավառի իշխան կարգվելով, դեջաջը կասսա է դառնում: Սրանից հետո հարձակվում է նաև շրջակա մի քանի իշխանների վրա և նրանց երկրներին տիրելով, իրեն Հաբեշիստանի թագավոր է օծել տալիս:

Եթովպացիների մեջ մի զրույց կա, թե գալու է մի ժամանակ, երբ Թեոդորոս անվամբ մի թագավոր է երևան գալու, Եթովպիայի թագավորությունն իր գագաթնակետին է հասցնելու, սուրբի առաքինի կյանքն է ունենալու և գրավելու է մինչև Երուսաղեմը: Այս զրույցը շահագործելով, Եթովպիայի առաջնորդ կրոնավորը, որ Աբունա է կոչվում, Դեջաջ Կասսան թագավոր օծած ժամանակ, նրան տվեց Թեոդորոս անունը, այն պայմանով, որ իր թշնամիներին սպաներ և իր առաջնորդական իրավունքներն ընդարձակեր, և հռչակ հանեց, թե ակնկալված Թեոդորոսը նա է: Ժողովուրդը հավատաց. այն իշխանները, որոնք դեռ ինքնագլուխ էին, վախից հպատակվեցին իրեն և Թեոդորոսը զորացած, մինչև անգամ Գալլայի բարբարոս երկրի կեսը նվաճեց և իր տերության միացրեց:

Իր թագավորության առաջին շրջանին Թեոդորոսն իրապես արժանավոր թագավոր եղավ. նա հիմնեց դատաստանական մի ժողով, որ օրենքով և արդարությամբ վճռում էր բոլոր դատերը: Գողերին և ավազակներին բռնեց և գլխատեց, որով ճանապարհները ապահովություն ստացան, ինչ որ երբեք չէր տեսնվել այս երկրում: Ժողովրդի հանդեպ առատաձեռն էր և ողորմած. ոտքի վրա կանգնած, անձամբ աղքատներին ողորմություն էր բաշխում: Կնոջ մահից հետո մինչև անգամ ուզեց թագավորությունից հրաժարվել և ճգնավորական կյանք վարել:

Սակայն նրա այս վարմունքը թուլության նշան համարելով՝ իշխանները, կրոնավորները և ժողովուրդը այս ու այն տեղ սկսեցին գլուխ բարձրացնել: Ապստամբություններն հետզհետե մեծ չափեր ընդունեցին: Ուզում էին գահազուրկ անել նրան: Սրա վրա Թեոդորոսը բռնությունը ձեռք առավ և այն հեզաբարո թագավորը դարձավ գազանաբարո մի բռնակալ: Հարուստներին կողոպտեց,

ժողովրդին կեղեքեց, ապստամբներին իրենց ընտանիքներով և մերձավորներով հազարներով սպանեց, հարյուրավոր մարդկանց մի շենքում բանտարկելով կրակի տվեց և այրեց, մինչև անգամ եկեղեցիները ռմբակոծեց և ավերեց և իրեն օծող առաջնորդին աքսոր ուղարկեց:

Այս միջոցին անգլիացիք բողոքականություն քարոզելու համար մի քանի միսիոներ էին ուղարկել Հաբեշիստան: Ֆրանսիացիք և գերմանացիք տեսնելով նրանց հաջողությունները, չարախոսում են Թեոդորոսի առաջ, թե նրանց նպատակը ո՛չ թե կրոն տարածելն է, այլ անգլիական տիրապետությունը: Թագավորն սկսում է թշնամաբար վարվել նրանց հետ. անգլիական հյուպատոսը խիստ հանդիմանություններ է ուղղում թագավորին, որի վրա զայրանալով թագավորը, իրեն ու մի շարք ուրիշ եվրոպացիների շղթայի է զարնել տալիս և անառիկ ու սեպ մի լեռան վրա բանտարկել տալիս: Անգլիական կառավարությունը մի քանի տարի ջանք է գործ դնում ընծաներով կամ սպառնալիքներով ազատել բանտարկյալներին: Նույնիսկ իր խնդիրքով Երուսաղեմի հայոց պատրիարքը, որ հաբեշների մոտ առանձին հարգանք է վայելում, հատուկ պատգամավորություն է ուղարկում Եթովպիա՝ թագավորի մոտ բարեխոսելու և բանտարկյալներին ազատելու համար: Բայց ամեն ինչ իզուր է անցնում: Սրա վրա անգլիացիք պատերազմ են հայտարարում և առաջին իսկ կռվում հաղթում են Թեոդորոսին, որ բանտարկյալներին արձակում է. բայց տեսնելով, որ սրանով անգլիացիք գոհ չմնացին և բանակը հետ չդարձավ, թշնամու ձեռքը չընկնելու համար անձնասպան է լինում (1868 թ.): Անգլիական բանակն այլևս առաջ չի գնում և շուտով հետ է դառնում:

244. ՍՈՒԴԱՆ ԵՎ ՄԵՀԴԻԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Եգիպտոսին տիրելուց հետո, Անգլիայի վրա ընկավ նաև Սուդանի խաղաղացման գործը, որ մահմեդական կրոնական մոլեռանդությամբ համակված երկիր էր: Այդ ժամանակները երևան եկավ Մուհամմեդ իբնի Աբդուլլահ անվամբ մեկը, որ հասարակ վարժապետի որդի էր և իր սերնդին մարգարեից ծագած էր համարում: Մուհամմեդը մտածեց, թե ինքն է այն մարգարեն, որ ըստ մահմեդական ավանդության գալու է աշխարհը բարեկարգելու: Նա իր վրա առավ Մեհդի անունը, ինչպես կոչվելու էր

այն բարեկարգիչ մարգարեն, և ճամփորդելով Սուդանի զանազան կողմերը, սկսեց սրբազան պատերազմ քարոզել անհավատների դեմ: Սուդանի և Եգիպտոսի տուրքերը ծանր էին, արաբները դժգոհ էին եղած կարգերից, եգիպտական պաշտոնյաները կաշառակեր էին և անարդար. ջնջված էր գերեվաճառությունը, որով քայքայվել էր տնտեսական կյանքը: Ուստի շատեր Մեհդիի կողմն անցան: Սուդանի ընդհանուր նահանգապետը, լսելով Մեհդիի այս գործերը, 200 հոգի ուղարկեց նրա վրա մի թնդանոթով, Մեհդիին ձերբակալելու համար (1881 թ.): Մեհդին հաղթեց և իր վրա եկողներին հետ փախցրեց: Ավելի մեծ բանակ եկավ Ֆաշոդայից, որին նույնպես հաղթեց: Վերջապես Խարթումի կառավարությունը 6 000 ընտիր զինվոր ուղարկեց նրա վրա. Մեհդին գիշերային հարձակմամբ այս բանակին էլ հաղթեց և հետ քշեց: Այս հաղթանակների վրա Մեհդիի համբավը տարածվեց և շատեր իր կողմն անցան: Մեհդին գրավեց Օբեյդ քաղաքը և իր աթոռը հաստատեց այնտեղ (1883 թ.): Քաղաքը սրբավայր դարձավ և Սուդանի ամեն կողմից ուխտավորները գունդ-գունդ թափվում էին այնտեղ՝ նոր մարգարեին տեսնելու և նրա օրհնությունն ստանալու:

Եգիպտոսի անգլիական կառավարությունը 10 000-անոց մի բանակ ուղարկեց Մեհդիի վրա. Մեհդին այս բանակն էլ զարկեց ու ոչնչացրեց: Այլևս սրա վրա ամբողջ Սուդանը Մեհդիին հպատակ դարձավ և բոլոր եվրոպացիք ու եգիպտացիք փախուստի ճանապարհը բռնեցին: Դարա գլխավոր քաղաքի հրամանատար ավստրիացի Սլատին փաշան մի տարի կռվելուց հետո անձնատուր եղավ. անգլիացիք ուղարկեցին զորավար Գորդոն փաշային Խարթում քաղաքը, եվրոպացիներին ու եգիպտացիներին հետ բերելու համար: Սա Սուդանի նախկին կառավարիչն էր եղել և մեծ ժողովրդականություն էր վայելում այնտեղ: Գորդոնը Խարթումից բանակցության մեջ մտավ Մեհդիի հետ և խոստացավ նրան Կորդոֆանի սուլթան ճանաչել, գերեվաճառությունը վերահաստատել և նրա հետ առևտրական հարաբերության սկսել, եթե իր մոտ եղած գերիներին ազատ արձակեր: Մեհդին արշավեց անգլիացիների վրա, հարվածեց Գորդոնին, գրավեց Խարթումը, որ իրեն մայրաքաղաք դարձրեց (1885 թ.):

Սրա վրա անգլիացիք Սուդանը թողին և հեռացան: Մեհդիի մեծությունն իր գագաթնակետին հասավ: Բայց նա չկարողացավ երկար վայելել. մի քանի ամիս հետո հիվանդացավ ու մահացավ, իրեն հաջորդ և խալիֆա նշանակելով իր օգնականին, որին

Աբուբեկիր կոչեց (1885 թ.):

Աբուբեկիրը ավելի առաջ գնաց. հարավից նվաճեց հասարակածի երկիրը (Էկվադոր), որ Անգլիայի իշխանության տակ էր գտնվում. հետո 60 000 զորքով Հաբեշիստանի վրա գնաց և նրա գլխավոր քաղաք Գոնդարը գրավեց: Եթովպիայի Հովհաննես կայսրը Թեկրեի և Ամհարայի զորքերը գումարելով, ելավ Աբուբեկիրի դեմ. ինքը գահի վրա նստած անձամբ էր առաջնորդում բանակին. բայց կռվի ժամանակ կայսրը զարնվեց ու մեռավ (1889 թ.): Աբուբեկիրն այն ժամանակ ծրագրեց Եգիպտոսը գրավել. բայց այստեղ իր առաջին բանակը ջարդվեց. մյուս կողմից Սուդանի մեջ սով ընկավ, որի դեմ խալիֆան կռվել անկարող էր, որովհետև երկիրն ամեն կողմից թշնամիներով էր պաշարված: Մյուս կողմից երևան եկան իտալացիք, որոնք անգլիացիների լքած Մասուա քաղաքը գրավեցին և հետո խալիֆայի առաջին բանակին հաղթելով՝ Կասալան գրավեցին: Բայց իտալացիք Եթովպիայի Մենելիք կայսեր հետ կռվի բռնվելով Ադուայի առջև մեծ ջարդ կրեցին և չկարողացան ավելի առաջ գնալ (1896 թ.): Վերջապես Եգիպտոսից առաջացավ անգլիացի Կիչները և արյունալի պատերազմում, ուր Աբուբեկիրն իր մահը գտավ, Մեհդիների իշխանության վերջ տվեց (1896 թ.):

245. ՌԵԱԿՑԻԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱԿԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռուս ժողովրդի ճնշված, աղքատ ու խավար դրությունը չէր կարող վերջապես չշարժել ժողովրդասեր մարդկանց սրտերը: Գրգռված պետության անտարբերության դեմ, ֆրանսիական հեղափոխության գաղափարներով տոգորված մի խումբ ռուս մարդիկ սկսեցին Եվրոպայում և Ռուսաստանում կազմակերպել գաղտնի հեղափոխական ընկերություններ, որոնց նպատակն էր Ռուսաստանում մտցնել սահմանադրական կառավարություն: Պետությունն հենց առաջին րոպեից սկսեց խստությամբ հետևել այս ընկերություններին և նրանց անդամներին բանտարկում կամ աքսորում էր:

Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ ռուս պաշտոնյաների ապիկարության պատճառով ծագած զանազան դժբախտությունները և հետո Բեռլինի վեհաժողովում Ռուսաստանին հասցված հարվածն ավելի սաստկացրին դժգոհությունը կառա-

վարության դեմ և հետևաբար հեղափոխության ծավալումը ժողովրդի մեջ: Հեղափոխականներն այնքան առաջացան, որ կազմակերպեցին բազմաթիվ տեռորներ, մինչև իսկ պատրաստություն տեսան ականով պայթեցնելու կայսերական պալատը: Այս հանդուգն փորձը փոխանակ մեղմելու կայսրին, ստիպեց նրան ձեռք առնել ամենախիստ միջոցները՝ հեղափոխական շարժումը ճնշելու համար: Կառավարության գլուխը դրվեց նշանավոր հայազգի զորավար Լորիս-Մելիքյանը, ամենալայն իրավունքներով. նրան ենթարկվեցին բոլոր նախարարությունները և ամբողջ Ռուսաստանը նրան հանձնվեց (1880 թ.):

Լորիս-Մելիքյանի քաղաքականությունն եղավ մի կողմից որոշ ազատություններ տալով ժողովրդին՝ հետ պահել նրան հեղափոխությունից և մյուս կողմից ոստիկանական խստագույն միջոցներով ոչնչացնել հեղափոխական կազմակերպությունները:

Այս ուղղությամբ բավական ժամանակ գործելուց հետո, երբ կառավարությունը համոզում էր գոյացրել, թե հեղափոխությունն արդեն ճնշված է, հանկարծ կատարվեց մի սոսկալի և հաջող տեռոր Ալեքսանդր Բ կայսեր դեմ (1881 թ.): Այս տեռորը ցույց տվեց, թե որքան անբավարար էին ձեռք առնված միջոցները: Նորընտիր կայսրը կազմեց նոր ժողով՝ խորհրդակցելու համար ստեղծված դրության մասին: Այս ժողովում Լորիս-Մելիքյանը առաջարկեց ընդունել բարենորոգումների ծրագիրը. բայց նրան հակառակ դուրս եկավ պահպանողական կուսակցությունը, որի գլխավորն էր Պոբեդանոսցևը: Մեծամասնության ճնշման տակ Լորիս-Մելիքյանը ստիպվեց հրաժարվել և ամբողջ գործը հանձնվեց Պոբեդանոսցևին:

Սկսվեց սոսկալի ռեակցիա, որի նմանը չէր տեսնվել ո՛չ մի երկրում: Ոստիկանությունը կազմակերպվեց նորանոր ուժերով, բանտերն ու աքսորավայրերը լցվեցին քաղաքական հանցավորներով, գրաքննությունը հասավ մեծ խստության, ուսումնարանական գործը, որի գլուխը դրվեց հայազգի նախարար Դելյանովը, խլվելով աշխարհական իշխանությունից, ենթարկվեց եկեղեցական վարչության: Օրթոդոքս կրոնը ստացավ բացառիկ իրավունքներ և բոլոր մյուս կրոններն ու ռուսական աղանդները հալածանքի կամ սահմանափակման ենթարկվեցին: Պետության նպատակն էր ռուսացնել բոլոր այլացեղ ժողովուրդներին. զանազան կողմեր սկսվեցին հրեական ջարդեր. ռուս ժողովրդին տեղահան

անելով բռնի գաղթեցնում էին Կովկաս, որպեսզի տեղացի ժողովրդի տոկոսը իջեցնելով, ռուս լեզուն և գրականությունը հեշտությամբ տարածեին նրանց մեջ: Վերջապես խլվեց հպատակ ազգերի դպրոցական վարչության ինքնօրինությունը. իմիջիայլոց փակվեցին մեր հարյուրավոր ծխական դպրոցներն ամբողջ Կովկասում:

Ռեակցիան հատկապես վնասակար եղավ հայության համար: Մի կողմ թողնելով այն ընդհանուր ճնշումը, որին ենթարկվեցին հայերը Կովկասում, իբրև հպատակ այլացեղ ժողովուրդներից մեկը, հայ դատը կորցրեց իր համակիրներից ամենա- գործնականին և իր օգնականին: Ռուս պետությունը, որ Սան-Ստեֆանոյում և Բեռլինում պաշտպան էր կանգնել հայ դատին, այժմ երես էր թեքում նրանից և նույնիսկ թշնամանում. և այդ այնպիսի ժամանակ, երբ Անգլիան վերագրելով հայերին ռուսասեր զգացուներ, զլանում էր հայկական դատի համար՝ հարկ եղած պաշտպանությունը:

246. ԵՎՐՈՊԱՑԻՔ ՄԻՋԱՄՏՈՒՄ ԵՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Ծայրագույն Արևելքի երկու նշանավոր երկրներն են Չինաստանը և Ճապոնիան: Չինաստանը ծանոթ էր հին քաղաքակրթությամբ, բայց նա գրեթե ոչ մի մասնակցություն չի ունեցել արևմտյան համաշխարհային կյանքում և զբաղվել է շարունակ Միջին Ասիայի թաթար ցեղերի հետ: Մանջուրիական հարբստության ժամանակ չեզոքացումն ավելի սաստկացավ. քրիստոնեությունն արգելվեց: Չին ժողովուրդը, քաշված իր լայնածավալ նահանգների մեջ, կտրել էր ամեն հարաբերություն արտաքին աշխարհի հետ և մինչև անգամ օտարների մուտքը արգելված էր:

19-րդ դարի սկզբից անգլիացիք առևտրական հարաբերություն սկսեցին Չինաստանի հետ. այստեղ էին փոխադրում մեծ քանակությամբ ափիոն, որ մշակվում էր Հնդկաստանում: 1840 թվականին չինական կառավարությունն արգելելով ափիոնի գործածությունը և անգլիական ափիոնը թույլ չտալով ներմուծել իր երկիրը, պատերազմ ծագեց երկու պետությունների միջև:

Անգլիացիք գրավեցին Կանտոնը, Նանկինը և ուրիշ մի շարք քաղաքներ: Չինաստանը պարտված, բանակցության մտավ և Անգլիայի ու Ֆրանսիայի առաջ ստիպվեց բաց անել մի քանի նավահանգիստներ՝ ազատ վաճառականության համար, միևնույն ժամանակ ճանաչելով քրիստոնեության իրավունքը:

Այնուամենայնիվ չին ժողովուրդը չէր կարողանում տանել օտարների ներկայությունը Չինաստանում: Պետությունն արդեն շուտով դրժեց հաշտության պայմանագիրը. մի ֆրանսիացի միսիոներ սպանվեց չինացիների ձեռքով. այս պատճառով նորից սկսվեց պատերազմը. անգլիացիք և ֆրանսիացիք գրավեցին մի շարք նավահանգիստներ և ուղղակի Պեկինի վրա գնալով, մայրաքաղաքը պաշարեցին. չինացիք ստիպվեցին զիջել և թույլ տալ եվրոպացի դեսպանների մուտքը մայրաքաղաք (1860 թ.):

Չինաստանին հետևեց Ճապոնիան, որ նույնպես արտաքին աշխարհի համար փակված և Չինաստանից ավելի հետամնաց երկիր էր: 1854 թվականին ամերիկացիք մի զորավոր նավատորմիղ ուղարկեցին Ճապոնիա և մի քանի նավահանգիստ բաց արին իրենց առաջ: Մի քանի տարի հետո էլ եվրոպական ուրիշ ազգեր՝ Ֆրանսիան, Ռուսիան և Անգլիան վաճառականություն անելու համար ստացան որոշ նավահանգիստներ: Անգլիացիք հիմնեցին Յոկոհամա քաղաքը: Բայց ճապոնացիք շատ վատ էին տրամադրված դեպի եվրոպացիները և քանիցս ջարդեր կազմակերպեցին. եվրոպական պետությունները շարունակ ստիպված էին միջամտել՝ իրենց հպատակների շահերը պաշտպանելու համար: 1863 թվականին մի անգլիացու սպանության համար անգլիական նավատորմը Կագոշիմա գլխավոր քաղաքը ռմբակոծեց և ամբողջապես կործանեց: Հաջորդ տարին անգլիական, հոլանդական, ֆրանսիական և ամերիկյան միացյալ նավատորմը Ճապոնիայի ծովեզերքը հարվածեց և 3 միլիոն դոլար տուգանք առավ:

247. ՉԻՆ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ԴԵՂԻՆ ՎՏԱՆԳԸ

Ճապոնիան, ինչպես գիտենք, կառավարվում էր միջնադարյան ավատական կարգերով. կայսրը, որ միկադո տիտղոսն ուներ, ո՛չ մի իրական ազդեցություն չուներ. ամբողջ իշխանությունը գտնվում էր տայկունի ձեռքում, որ արևելյան վեզիրի աստիճանն ուներ: 1868 թվականին Ճապոնիայում մեծ հեղաշրջում կատարվեց.

դաիմիոները տայկունի իշխանության դեմ ապստամբեցին. 271 դաիմիո կամովին հրաժարվելով իրենց իշխանությունից, երկրի սանձը միկադոյին հանձնեցին: Մուցուհիդո կայսեր խնամակալը՝ Սացուման կռիվ հայտարարեց տայկունի դեմ, մի քանի պատերազմների մեջ ջնջեց նրա բանակները և Ճապոնիայի բոլոր նահանգները միկադոյի իշխանության տակ դրեց: Մայրաքաղաք դարձավ Եդոն, որ այժմ Տոկիո է կոչվում: Այդ օրվանից Ճապոնիայի համար բացվեց մի մեծ թվական. երկիրը միջնադարյան ավատական կարգերից հանկարծական թափով անցավ նոր ազատական կարգերին. եվրոպական քաղաքակրթության բարիքները արագությամբ մտան Ճապոնիա. երկաթուղիներ հիմնվեցին, հեռագիրը (կապը) գործեց, լրագրեր հրատարակվեցին: Քրիստոնեությունը ազատ թույլատրվեց: 1889 թվականին հիմնվեց սահմանադրությունը. 1890 թվականին բացվեց առաջին Պառլամենտը. կրոնի և այլ ազատություններ շնորհվեցին ժողովրդին և շատ կարճ ժամանակվա ընթացքում երկիրն այնքան առաջ գնաց, որ դարձավ եվրոպական զարգացած մի երկիր:

Այսպիսի քաղաքակիրթ պետություն դառնալու հետ միասին, Ճապոնիան հետամուտ եղավ նաև իր զինվորական ուժերը կարգի բերելու. կազմեց մի զորավոր ցամաքային բանակ, իսկ նավատորմն այնքան մեծացավ, որ ո՛չ միայն Ասիայի, այլև ամբողջ աշխարհի մեջ առաջնակարգ դիրք գրավեց: Այսպիսի զորության հասնելուց հետո, Ճապոնիան արդեն նեղ գտնելով իր սահմանները՝ մտածեց աշխարհակալության մասին:

Առաջին երկիրը, որ գտնվում էր նրա ճանապարհի վրա, Չինաստանն էր, մեծածավալ, բայց խավար և հետամնաց Չինաստանը և Ճապոնիան իր առաջին պատերազմական փորձը նրանից սկսեց: Կռվի պատճառ եղավ Կորեան, որ Ճապոնիային հարևան ընդարձակ թագավորություն էր և համարվում էր Չինաստանի վասալը: Ճապոնիան և Չինաստանը պայմանավորված էին իրար հետ այս երկրում ազատ վաճառականությամբ զբաղվելու: 1894 թվականին Կորեայի թագավորը, չինացիների դրդմամբ, արգելք հանեց ճապոնական վաճառականության դեմ և Ճապոնիան ստիպվեց պատերազմ հայտարարել Չինաստանին: Խղճալի Չինաստանը ընդունակ չէր դիմադրելու Ճապոնիայի նման հզոր պետության. նրա բանակը,

նրա նավատորմիղը հենց առաջին բախումից անձնատուր եղան կամ փախուստի ճանապարհը բռնեցին: Ճապոնիան ծովի ու ցամաքի վրա հաղթելով, արդեն բռնել էր Պեկինի ճանապարհը, երբ չինացիների կայսրը համաձայնվեց հաշտություն խնդրել ամեն գնով: Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջամտությամբ հաշտության պայմանները մի քիչ մեղմացան և Չինաստանը, բացի միլիոնավոր պատերազմական տուգանքից, հանձն առավ ճանաչել Կորեայի անկախությունը, Ֆորմոզա մեծ կղզին հանձնել Ճապոնիային և տալ նրան ազատ վաճառականության և արհեստագործության իրավունքը Չինաստանում:

Ճապոնական բանակի այս առաջին սկզբնավորությունը սարսափ ազդեց Եվրոպայի վրա. մտածող մարդիկ սկսեցին երկյուղ կրել ապագայի մասին. եթե Ճապոնիան մի քառորդ դարում այսքան մեծ առաջադիմություն կարողացավ ցույց տալ, այսպիսի զորեղ պատերազմական պետություն դարձավ, ի՞նչ կլինի վաղը, եթե չինական 500 միլիոն ժողովուրդը Ճապոնիայի միջոցով քաղաքակրթվի և դեպի Եվրոպա արշավանքի դուրս գա:

Այս է, որ կոչվում է դեղին վտանգ:

248. ՀԱՅՈՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՃԻԿՆԵՐԻ ԴԵՄ

Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը հայոց համար մեռած տառ մնաց. եվրոպական ո՛չ մի պետություն չմտածեց նրա գործադրության մասին. Անգլիան, որ պաշտոնապես խնամակալ էր նշանակված հայկական դատին, մի քանի անգամ (1880 և 1883 թթ.) ազդու դիմումներ կատարեց օսմանյան կառավարության և պահանջեց 61-րդ հոդվածի գործադրությունը. բայց իզուր: Վերջապես հայերը համոզում գոյացրին, դիմումներով ու բողոքներով միայն խոստումներ կարելի է ստանալ, իսկ որևէ դրական արդյունքի հասնելու համար պետք է բռնել զինված ապստամբության ճանապարհը, ինչպես արել էին հույները և բալկանյան ժողովուրդները և ձեռք բերել իրենց ազատությունը:

Հայ հեղափոխական գաղտնի ընկերության առաջին կազմակերպիչն եղավ Մկրտիչ Փորթուգալյանը, պոլսեցի մի վարժապետ, որ երկար ժամանակ Հայաստանում ուսուցչական պաշտոն վարելուց հետո, իր ազատական գաղափարների համար շատ անգամ բանտարկվել և քաղաքից քաղաք էր քշվել: Նա

անցավ Ֆրանսիայի Մարսել քաղաքը և հիմնեց «Արմենիա» թերթը՝ առաջին հայ հեղափոխական օրգանը (1885 թ. հուլիս 20): Այս թերթով նա քարոզում էր զինված ինքնապաշտպանություն. գաղտնի գործակալներ նրա համարները ծածուկ կերպով մտցնելով Տաճկաստան, ցրում էին հայ ժողովրդի մեջ: Կազմվեց համակիրների մի խումբ, որ կրեց Արմենական կուսակցություն անունը:

Շուտով կազմվեց մի երկրորդ հեղափոխական կուսակցություն, որի գլուխն էր կանգնած թավրիզեցի Ավետիս Նազարբեկյանը: Կուսակցությունը ծնունդ առնելով ռուսահայերի մեջ, հետո անցավ Աթենք և վերջապես հաստատվեց Լոնդոնում, ուր հրատարակելով «Հնչակ» թերթը, կուսակցությունն էլ կոչվեց Հնչակյան (1888 թ.): Նրա սկզբունքն էր հարձակողական քաղաքականություն. կազմակերպել հայդուկային խմբեր, կռիվ մղել կառավարական պաշտոնյաների, զինվորների, քուրդ ավազակային խմբերի դեմ և արյամբ ստիպել Եվրոպային՝ ապստամբ ժողովրդի պահանջը լսելու:

Հնչակյաններին հետևեց հայ երրորդ հեղափոխական կուսակցությունը, որ ծնունդ առնելով ռուսահայոց մեջ Քրիստափոր Միքայելյանի և Սիմեոն Զավարյանի նախաձեռնությամբ (1890 թ.), անցավ հետո Ժնև, ուր հրատարակում էր «Դրոշակ» թերթը: Իր պահանջն էր Տաճկաստանի ապակենտրոնացումը. յուրաքանչյուր ազգ և երկիր, որոնց թվում նաև Հայաստանը, պիտի լինի ազատ ու ինքնավար իր ներքին գործերի մեջ, իսկ բոլոր ինքնավար ազգերի միությունը պիտի կազմի Թուրքիան:

Գրական պրոպագանդայից հետո շուտով հեղափոխական կազմակերպությունները անցան գործնականի, տեղի ունեցան ժողովրդական արյունալի ցույցեր հայերի և տաճիկ զորքի միջև, երկու կողմից տասնյակ զոհերով. այսպես Կարինի ցույցը, Պոլսի պատրիարքարանի ցույցը, Կուկունյանի հայդուկային արշավանքը Կովկասից, Մարսուանի ընդհանուր ապստամբության կոչը Տաճկաստանի բոլոր ժողովուրդներին:

Այս շարժումները փոխանակ մեղմելու կառավարության ընթացքը, ընդհակառակը ավելի գրգռեց: Սուլթան Համիդը անձնապես ձեռք առնելով հայկական հարցը, մտածեց զենքի զորությամբ ճնշել նրան: Հարյուրավոր հեղափոխականներ ձերբակալվեցին և բանտի, աքսորի ու կախաղանի դատապարտվեցին: Մյուս կողմից, հայության իբր հակակշիռ գործածեց քուրդերին, որոնք հայոց հարևան, շատ տեղ բարեկամ և հայոց չափ ճնշված

մի ցեղ էին: Հայոց ծրագիրն էր միանալ քուրդերի հետ և նրանց հետ միասին ազատել երկիրը սուլթանական լծից: Սուլթանը ջանաց թույլ չտալ, որ այդ միությունը հաստատվի հայոց ու քուրդերի միջև. այս նպատակով նա մի կողմից սիրաշահում էր քուրդերին զանազան պաշտոններով և շքանշաններով, մյուս կողմից քարոզիչ մոլլաների և շեյխերի միջոցով գրգռում էր նրանց մահմեդականի զգացմունքը քրիստոնյա հայի դեմ: Վերջապես նա կազմակերպեց քրդական Համիդի զորագունդը, որին գաղտնի իրավունք տվեց բնաջնջելու հայերին:

Հայոց առաջին գլխավոր ապստամբությունը տեղի ունեցավ Սասունում, հնչակյանների ղեկավարությամբ (1894 թ.). հայերը կռիվ սկսեցին քուրդերի դեմ և 2 շաբաթ հաջողությամբ վանեցին նրանց հարձակումները. քուրդերն ստիպվեցին խնդրել կառավարության օգնությունը. նա էլ ուղարկեց մեծ զորք և սոսկալի խժդժությամբ կոտորեց Սասունը: Կոտորածի լուրը հասավ Եվրոպա. Անգլիայի հասարակական կարծիքը մեծապես հուզվեց. կազմվեցին ամեն կողմ միտինգներ՝ բողոքելու համար տաճկական գազանությունների դեմ: Հայոց պաշտպանության համար ձայն բարձրացրեց Անգլիայի ազատականների նշանավոր պարագլուխ Գլադստոն ծերունին: Վերջապես անգլիական կառավարությունը պաշտոնապես ձեռք առնելով հայոց հարցը, դիմեց Ֆրանսիային և Ռուսիային և կազմել տվեց քննիչ հանձնաժողով, որ Սասուն երթալով քննել սկսեց տաճիկ կառավարության արարքները: Պոլսում կազմվեց դեսպանների ժողով, որ պատրաստեց Հայաստանի բարենորոգումների ծրագիրը և առաջարկեց սուլթանին (1895 թ. մայիս 1): Այս է, որ կոչվում է Մայիսյան ծրագիր:

Սուլթանը երկար աշխատեց ձգձգել գործը. հույսը դնելով եվրոպական պետությունների անհամաձայնության և Անգլիայի ազատական կառավարության անկման վրա, ուզում էր քնեցնել բարենորոգությունների ծրագիրը: Հնչակյանները մի նոր ցույցով ուզեցին ցնցել Եվրոպան: 2000 հոգուց բաղկացած մի խումբ արշավեց Բարձրագույն դռան վրա, ոստիկանապետին և մի խումբ ոստիկանների սպանեց: Պետությունը գրգռեց թուրք խուժանին և զենք բաժանելով՝ արձակեց հայոց վրա: Հազարավոր հայեր կոտորվեցին մայրաքաղաքում: Պոլսից կոտորածն անցավ գավառները, Հայաստան և Փոքր Ասիա և մի տարի ամբողջ երկիրը շրջան անելով, 100 000 հայ կոտորվեց, 100 000 հայ օտար երկրներ

գաղթեց և 40000 հայ մահմեդական դարձավ: Ամեն տեղ հայերը ջարդվեցին սոսկալի խժդժությամբ, գրեթե առանց դիմադրության: Միայն Զեյթունն ու Վանը կարողացան քաջությամբ դիմադրել:

249. ԶԵՅԹՈՒՆԻ ՄԵԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՆԻ ԴԵՊՔԵՐԸ

Զեյթունի ապստամբությունը տեղի ունեցավ հնչակյանների դրդումով, բայց իսկապես թուրք կառավարության գրգռիչ արարքներից ստիպած, որ ուզում էր բնաջինջ անել Զեյթունը. 6000 զեյթունցիք զենք վերցրին իրենց ծերունի իշխանի առաջնորդությամբ և առաջին անգամ գրավելով կառավարական պալատը, կառավարչին իր զինվորներով գերի բռնեցին (1895 թ. հոկտեմբեր 12): Հետո հարձակվեցին զորանոցի վրա և մի քանի օրվա կռվից հետո գրավեցին և ամբողջ զորախումբը գերի բռնեցին: Զորանոցի գրավմամբ հայերը ձեռք բերեցին բավական ռազմամեթքք և 2 թնդանոթ, որոնցով ավելի զորացած, հարձակվեցին շրջակա թուրք գյուղերի վրա և խորտակելով տաճկական գունդերի գրոհը, առաջացան մինչև Կապան, 15 ժամվա տարածությամբ տեղ:

Կառավարությունն ապստամբներին զսպելու համար Ադանայից և Մարաշից ուղարկեց 2 բանակ, առնվազն 50 000 զորքով: Առաջին մեծ կռիվը տեղի ունեցավ Ֆոնուզում, ուր 1500 հայեր 30000 զորքի դեմ 3 օր քաջությամբ դիմադրելուց հետո, բազմաթիվ զոհեր խլելով նրանցից, ռազմամթերքի սպառման պատճառով հետ քաշվեցին: Ավելի նշանավոր եղավ Սանդուխ լեռան կռիվը, ուր 1500 հայեր 60000 տաճիկների արշավը կանգնեցրին: Այդ միևնույն ժամանակ տաճիկները հարձակումներ էին գործում Զեյթունը շրջապատող բազմաթիվ դիրքերի վրա: Իսկ բուն Զեյթունում ապստամբել էին 600 տաճիկ գերի զինվորները և ներսից կրակ տալով, ուզում էին ոչնչացնել Զեյթունը: Տղամարդկանց բացակայության պատճառով, զեյթունցի կանայք կացիններով հարձակվեցին նրանց վրա և բոլորին էլ կոտորեցին: Այսպես ազատվեց Զեյթունը անակնկալ կոտորածից:

Զեյթունցիք իրենց ավանդական տակտիկայի համեմատ այսպես զանազան առաջավոր դիրքերում թշնամուն շարունակ տասանորդելուց հետո, հետզհետե հետ քաշվեցին և վերջապես եկան ամրացան բուն Զեյթունում, որի առումը համարում էին

անկարելի: Թշնամին պաշարեց ամեն կողմից, բայց անկարող եղավ ներս մտնել, ընդհակառակը հայերը իրենց հանդուգն ու խորամանկ հարձակումներով շարունակ կոտորում էին թշնամուն: Բացի սրանից, տաճկական բանակում սկսելով համաճարակը, ձմեռվա այդ սառնամանիքին, հազարավոր զոհեր էր տանում: Վերջապես հրամանատարը հեռագրեց սուլթանին, որ Զեյթունը գրավելու համար 50000 զորքի ևս պետք կա:

Սուլթանը պաշտոնանկ արեց նրան և ուղարկեց մի նոր հրամանատար, որ մի քանի ապարդյուն փորձերից հետո, չկարողանալով նվաճել Զեյթունը, ստիպվեց կրկնել իր նախորդի հեռագիրը:

Այն ժամանակ սուլթանը դիմեց եվրոպական դեսպաններին և խնդրեց հաշտություն: Հյուպատոսները մեկնեցին Զեյթուն և հայոց հետ բանակցության մտնելով, կնքեցին հաշտության պայմանագիրը օսմանյան կայսրության և Զեյթուն գյուղի միջև այն պայմանով, որ Զեյթունը այնուհետև կառավարվեր մի քրիստոնյա կառավարչով (հունվար 28):

Տաճիկների բանակը 20000 հոգի էր կորցրել:

Մի ուժեղ դիմադրություն էլ ցույց տվեցին հայերը Վանում: Տաճիկ խուժանը թուրքական թաղերի հայերին կոտորելուց հետո, արշավեց հայոց թաղերի վրա: 1500 կռվողներ, բաժանված քաղաքի 35 դիրքերի վրա, քաջությամբ կռվելով, չէին թողնում նրանց ներս խուժել: Տաճիկները քուրդերին օգնության կանչեցին և երբ նրանք էլ ջարդվեցին հայերից, կանչվեց 15000 համիդիե. միևնույն ժամանակ կառավարական զորքը 5 թնդանոթով հայոց դեմ կռիվ սկսեց: Անգլիական հյուպատոսը գլուխն անցնելով այս թնդանոթների, անձամբ ուղղում էր հարվածը հայոց դիրքերի վրա: Հայերը չվախեցան և շարունակեցին կռիվը ու մինչև իսկ թնդանոթներին լռության դատապարտեցին:

Այն ժամանակ կառավարությունը բերդից իջեցրեց Կրուպի մեծ թնդանոթները և մյուս կողմից քաղաքը կրակի տվեց: Հայերը տեսնելով, որ ամբողջ քաղաքը հրո ճարակ պիտի դառնա, հյուպատոսների միջոցով բանակցության մեջ մտան կառավարության հետ և հանձն առին դադարեցնել կռիվը: Ժողովուրդն ապաստանեց հյուպատոսարաններում, իսկ կռվողներից 700 հոգի գիշերանց դուրս գալով քաղաքից, անցան Պարսկաստան: Սահմանի մոտ նրանք պաշարվեցին 10000 համիդիե զինվորներով և մինչև վերջին փամփուշտը կռվելով, գրեթե բոլորն էլ նահատակվեցին:

250. ԲԱՆԿԻ ԳՐԱՎՈՒՄԸ. ԿՐԵՏԵԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ. ԱՆԴՐԱՆԻԿ

Հայոց կրած այս բոլոր սարսափների առջև այնուամենայնիվ Եվրոպան շարունակում էր անտարբեր մնալ: Դաշնակցականներն ուզեցին մի վերջին ահավոր փորձ անել Պոլսում և ստիպել տերություններին գործադրելու Մայիսյան ծրագիրը: Նրանք ծրագրեցին դինամիտով պայթեցնել օսմանյան բանկը, Բարձրագույն դուռը, պահականոցներն ու զորանոցները: Կառավարությունը նախապես իմանալով հայոց նպատակը, ձերբակալեց պարագլուխներին և գործը վիժեց: Տեղի ունեցավ միայն բանկի գրավումը: 25 երիտասարդներ, Բաբկեն Սյունու առաջնորդությամբ, ռումբերով հարձակում գործեցին շենքի վրա ու գրավեցին (օգոստոս 14): Բայց այդտեղ իրենց գլխավորը զոհ գնալով ռումբի հարվածներին, մյուսները լքվեցին և համոզվելով ռուսների դեսպանության համոզիչ խոսքերից, թողեցին բանկն ու հեռացան: Սկսվեց մի նոր կոտորած, որ 3 օր տևեց և 10000 զոհեր խլեց հայերից: Կոտորածն այնպես ահռելի էր, որ նույնիսկ եվրոպացիք էլ չխնայվեցին, այնպես որ տերություններն ստիպվեցին այս անգամ ազդու կերպով միջամտել և կոտորածներին վերջ տվեցին:

Հայերի ապստամբական շարժումների հետ միաժամանակ ապստամբել էին նաև Տաճկաստանի ուրիշ ժողովուրդները. դրուզները, մակեդոնացիք և Կրետեի հույները: Դրուզները շուտ ընկճվեցին, մակեդոնացիք Ավստրիայի և Բուլղարիայի աջակցությամբ զենքը ցած դրեցին, իսկ Կրետեն Հունաստանի աջակցությամբ և իր անջատ դիրքի շնորհիվ կարողացավ երկար դիմանալ: Հունաստանի օգնությունը պատճառ դարձավ հույն-տաճկական պատերազմի: Տաճիկները, եվրոպական դիվանագիտությունից երես առած, համարձակ կերպով արշավեցին Հունաստանի վրա և մի քանի օրվա մեջ խորտակելով հունական բանակները՝ մոտեցան Աթենքին: Այս տագնապալի րոպեին եվրոպացիք միջամտեցին, տաճիկներին ստիպեցին հետ քաշվել և Կրետեին տալով ինքնավարություն՝ երկու կողմերը հաշտեցրին (1897 թ.):

Իսկ հայերը, որ իրենց արդար դատի լուծման համար այնքան ահագին ջանքեր էին թափել և անթիվ զոհեր տվել, մնացին լքված եվրոպական դիվանագիտությունից: Ժողովրդի մեծագույն մասը հուսահատվեց, շատեր բռնեցին գաղթի ճանապարհը, երկիրն

սկսեց դատարկվել, իսկ մնացորդ թշվառ ժողովրդին էլ կառավարությունը տնտեսապես այնպիսի ճնշված դրության հասցրեց, որ կարճ ժամանակ հետո նրանց օրհասն էլ վճռված էր:

Ընդհանուր լքման մեջ դեռ շարունակում էին գործել դաշնակցականները, իրենց հայդուկային խմբերով և արտասահմանի հայերն իրենց դիմումներով Եվրոպայի հասարակական կարծիքին և դիվանագիտության: Հայդուկների մեջ նշանավոր դարձավ Անդրանիկը, որ տասը տարի ամբողջ իր մի բուռ կտրիճներով ասպատակում էր Սասունը, Մուշը, Վանը, շարունակ հարվածելով տաճկական զորքերը և քրդական ոհմակները:

251. ԻՍՊԱՆՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ստրուկների ազատության պատերազմից հետո, Ամերիկայի Միացյալ Նահանգները ավելի մեծ թափոմվ առաջ են գնում: Արդյունաբերությունն այնպես է զարգանում և նրա հետևանքով էլ բանվորական օրավարձն այնպես է բարձրանում, որ աշխարհի ամեն կողմերից գունդ-գունդ գաղթում են այնտեղ: 1865 թվականից սկսած տարեկան 250000 հոգի Միացյալ Նահանգներն են դիմում գործ գտնելու, աշխատելու և հարստանալու:

Այս գաղթականների մեծ մասը անգլիացի էր. բայց կային նաև ուրիշ երկրացի ժողովուրդներ. այսպես իտալացի, գերմանացի, լեհացի, իռլանդացի, մինչև իսկ ռուս և ասիական զանազան ժողովուրդներ, որոնց պիտի ավելանար հետո հայերի մի ստվար բազմություն (մինչև 200000 հոգի): 1867 թվականին Ռուսաստանը Ալյասկան վաճառեց Միացյալ Նահանգներին, որով այս երկրի վրա ավելացավ հանքաշատ մի նահանգ ևս:

Գաղթականներն սկզբնապես պահում էին իրենց ազգային հատկություններն ու զգացմունքները, բայց քիչ ժամանակ հետո ամերիկյան քաղաքացի դառնալով, միացան և ձուլվեցին ազգերի այս մեծ խառնարանում. այնպես որ այլազան ժողովուրդների նախկին անկարգ խառնուրդի փոխարեն առաջ եկավ վերջապես ամերիկյան կուռ մի ազգություն՝ սեփական հայրենիքի սիրով ու նրա շահերի պաշտպանության գաղափարով լցված:

Արդեն 1823 թվականին Ամերիկան հայտարարել էր Մոնրոյի վարդապետությունը, որի սկզբունքներն էին. 1) թույլ չտալ, որ Ամերիկայում կազմվի որևէ միապետական կամ ռեակցիոներ

իշխանություն. 2) թույլ չտալ, որ որևէ եվրոպական գաղթականություն մուտք գործի Նոր Աշխարհը. 3) Ամերիկան չպիտի խառնվի Հին Աշխարհի քաղաքական գործերին:

Միացյալ Նահանգների յուրատեսակ այս մեկուսացումը ճանապարհ պիտի բաց աներ նրա ներքին ազատ բարգավաճման ու հզորացման, մյուս կողմից պիտի տար նրան ապահովություն եվրոպական որևէ պետության ոտնձգությունների դեմ:

Մոնրոյի վարդապետությունը թեև արգելում էր Միացյալ Նահանգներին խառնվելու Հին Աշխարհի քաղաքական գործերին, բայց արգելք չէր դնում ո՛չ նրա առևտրական գործունեության և ո՛չ էլ ամերիկյան քաղաքացիների պաշտպանության որևէ օտար երկրում: Ըստ այսմ ամերիկացիք մեծ առևտրական գործունեությունների էին ձեռնարկել ինչպես Եվրոպայում, այնպես էլ Աֆրիկայում, Ավստրալիայում և Ասիայի արևելյան մասերում:

Այս վերջինում նշանավոր դարձավ Կուբա կղզին, որ Անտիլյան կղզիների մեծագույնն էր, ավելի քան մեկ միլիոն բնակչով և Հավանա մայրաքաղաքով. Կուբայում Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիները շաքարեղեգի մշակության մեծ ձեռնարկություններ ունեին: Կղզին պատկանում էր Իսպանիային: Շաքարեղեգի մշակության և շաքարի արտահանության գործում, մաքսերի բարձրացման պատճառով, Իսպանիայի և Միացյալ Նահանգների շահերը իրար բախվեցին: Արդեն 1895 թվականին տնտեսական տագնապի պատճառով Կուբան ապստամբել էր Իսպանիայի դեմ: Այդ ապստամբության պատճառով երկաթուղիները փչացան, ճանապարհները քանդվեցին, շաքարեղեգի մշակությունը կանգ առավ: Դրությունն ավելի ծանրացրեց Իսպանիայից ուղարկված զորավարի խստությունը: Բնակչությունը ճամբարները քշվեց, ապստամբ գավառները երկաթալարերով պատեցին, ամերիկյան շահերը վտանգվեցին: Սրա համար էլ ամերիկացիք անցան ապստամբների կողմը: Վտանգը տեսնելով իսպանական կառավարությունը զորքը հետ քաշեց, ճամբարները արձակեց, ապստամբներին էլ խոստացավ ազատական սահմանադրություն, մինչև անգամ ինքնավարություն (1897 թ.): Բայց ամերիկացի միլիոնատերերը, իրենց նյութական շահի ակնկալությամբ, փոխանակ զիջելու, գրգռեցին ամերիկյան կառավարությանը: Պատճառ բռնելով ամերիկյան մի զրահավորի պայթումը, որ ականի արկածի արդյունք էր, պատերազմ

հայտարարվեց Իսպանիայի դեմ: Թույլ Իսպանիան միջոց չուներ դիմադրելու հզոր Միացյալ Նահանգներին, մանավանդ այն պատճառով, որ ռազմաբեմը մայր երկրից շատ հեռու էր գտնվում: Ուստի կարծվածից շատ ավելի կարճ տևեց պատերազմը Կուբայում, Անտիլյան ու Ֆիլիպյան կղզիներում: Երեքնկես ժամվա մեջ իսպանական նավատորմը ոչնչացավ. կղզիները գրավվեցին և Իսպանիան հաշտություն խնդրեց: Մի քանի կղզիներ հանձնվեցին Միացյալ Նահանգներին, բայց Իսպանիան մնացյալն էլ վաճառեց ամերիկացիներին և Փարիզի դաշնադրությամբ (1898 թ.) հեռացավ ամբողջ կղզեխումբից: Այսպիսով Միացյալ Նահանգները դարձան գաղութային մի երկիր, որ իր շահերն ուներ Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսներում:

252. ԲՈՔՍԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

Այն պատերազմները, որ անգլիացիք և ֆրանսիացիք մղեցին Չինաստանի դեմ 19-րդ դարի մինչև կեսը և այն արտոնությունները, որ խլեցին նրանք զանազան դաշնադրություններով, գործի սկիզբն էին միայն: Եվրոպական տերությունների փոխադարձ նախանձը գրգռում էր նրանց նորից ու նորից հարձակվելու այս մեծատարած, բայց թույլ պետության վրա և նոր պատառներ խլելու: 1883 թվականին ֆրանսիացիք հարձակվեցին Տոնկինի և Աննամի վրա և գրավելով առին իրենց հովանավորության տակ՝ Չինաստանի գերիշխանությամբ: Երեք տարի հետ Անգլիան խլեց Բիրման՝ նույն պայմանով:

Չին-ճապոնական պատերազմից հետո, երբ ռուսները և ֆրանսիացիք պահանջեցին Չինաստանից երկաթուղային արտոնություններ, ժողովուրդը գրգռվեց եվրոպացիների դեմ. տեղի ունեցավ մի քանի գերման միսիոներների սպանություն: Դրա վրա գերմանացիք բռնի մտան Չինաստան և վարձու անվամբ գրավեցին Ցիա-չուն. նրան հետևեցին Ռուսիան, Ֆրանսիան և Անգլիան, որոնք գրավեցին մի-մի նշանավոր վայր. Ռուսաստանը գրավեց Պորտ-Արթուրի նավահանգիստը, որ զինելով դարձրեց մի անառիկ ամրություն: Այս բոլորը առաջ բերելով Չինաստանում տնտեսական տագնապ, գրգռեց մոլեռանդ մարդկանց հայրենասիրությունը: Նրանք միացան և կազմակերպեցին բոքսերների շարժումը, որ սկսելով Շանտունգից՝ տարածվեց երկրի զանազան

մասերը: Բոքսերները նախապես ընկան չինացի քրիստոնյաների վրա և կոտորեցին նրանց. հետո դարձան միսիոներների և վերջապես առհասարակ բոլոր օտարների վրա: Սպանվեց գերմանացիների դեսպանը և բոլոր եվրոպացիք պաշարվեցին դեսպանատներում: Չինական պետությունը ո՛չ միայն չհանգրստացրեց այս շարժումը, այլև ինքն էլ նրանց միացավ: Եվրոպացիք, ամերիկացիք և ճապոնացիք միացան և Չինաստանի վրա բանակ ուղարկեցին: Կառավարությունը փախավ: Դաշնակիցների բանակը, գերմանացիների ղեկավարությամբ, քշեց չինական զորքը, պաշարված եվրոպացիներին ազատեց և ստիպեց տերության պատժել բոլոր խռովարարներին, շարժումը դադարեցնել և վճարել եվրոպացիների կրած վնասները (1901 թ.):

253. ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Չինական պետության բաժանման մեջ բնականաբար ամենից ավելի շահագրգռված էին նրա երկու հզոր հարևանները՝ Ճապոնիան և Ռուսիան: Սակայն այս երկուսի ծրագրերը տարբեր բնավորություն էին կրում: Ճապոնիան թեև աշխատում էր մի կողմից խլել չինական հողերը, բայց նա խորապես ցանկանում էր զարթեցնել չին ժողովուրդը և նրա հետ միացած համաշխարհային տիրապետության ձեռնարկել: Ռուսիան զգալով այս վտանգը, աշխատում էր որքան կարելի է շատ հող խլել Չինաստանից, ամրանալ այդ վայրերում, որպեսզի հաջողապես դիմադրեր մի օր ճապոնական առաջխաղացման: Այս դիտումով, երբ ծագեց չին-ճապոնական պատերազմը և հաղթական Ճապոնիան ընդարձակ հողամասեր խլեց Չինաստանից, Ռուսիան, Ֆրանսիայի և Գերմանիայի օգնությամբ, ազդու կերպով միջամտեց իբր թե հօգուտ Չինաստանի և խլված հողերը մեծ մասամբ հետ դարձնել տվեց: Իր ծառայությանց փոխարեն Ռուսիան խլեց Պորտ-Արթուրը և ժամանակավոր անվան տակ՝ Մանջուրիան: Պորտ-Արթուրը զինելով նա դարձրեց ծովային ու ցամաքային մի այնպիսի անառիկ բերդ, որի առաջ անզոր պիտի գտնվեին աշխարհի մեծագույն բանակները: Մանջուրիայում էլ, թեև ժամանակավոր անվան տակ գրավված, սկսեցին այնպիսի ձեռնարկումներ, որոնք հայտնի ցույց էին տալիս, թե ոչ միայն միտք չունի վերադարձնելու այդ երկիրը, այլ ընդհակառակը, մտադիր է գրավել նաև Կորեան:

Իրերի այսպիսի դրությունը մշտական վտանգ էր Ճապոնիայի

համար, որ իրեն զգում էր ծովերի մեջ բանտարկված, ռուսների զինվորական հսկողության և մշտական նավապաշարման ենթարկված: Այս պատճառով քանի ուշ չէր, նա վճռեց զենքով լուծել խնդիրը:

Ռուսները շատ թեթև էին նայում փոքրիկ Ճապոնիայի վրա: Այս արհամարհանքը մեծապես վնասեց իրենց: Ճապոնական բանակները թե՛ ծովի և թե՛ցամաքի վրա այնպիսի քաջություն ցույց տվեցին, որ ամբողջ աշխարհի հիացմունքը շարժեց: Նրանք մտան Մանջուրիայի խորքերը և իրար հետևից գրավեցին նրա բոլոր քաղաքները: Պորտ-Արթուրը, այն անառիկ բերդը, երկար ու դաժան պաշարումից հետո, ճապոնական զորավարների հմտության և զորքի հերոսական քաջության առաջ, բաց արեց իր դռները: Ռուսական երկու նավատորմիղները ամբողջապես ընկան ճապոնացիների ձեռքը կամ օվկիանոսի հատակը գնացին: Վերջապես Ռուսիան պարտված, ստիպված հաշտություն խնդրեց՝ զիջելով Մանջուրիան վերադարձնել Չինաստանին, Պորտ Արթուրը և Սախալին կղզու կեսը հանձնել Ճապոնիային, իսկ Կորեայի վրա ճանաչել ճապոնական հովանավորությունը (1905 թ.): Բայց մի քանի ամիս հետո ճապոնացիք Կորեայի թագավորը Ճապոնիա տարան և Կորեան իրենց երկրին միացրին:

254. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Այն երկիրը, որ ամենից ավելի հեռու էր մնացել ֆրանսիական հեղափոխության բարիքներից, Ռուսաստանն էր: Ո՛չ Եվրոպայի սահմանադրական երկրների օրինակը, ո՛չ էլ Ռուսաստանում երևան եկած զանազան հեղափոխական կազմակերպությունների ուժեղ գործունեությունը չէին կարողացել ազդել նրա պետական քաղաքականության վրա, և Ռուսաստանը ճանաչված էր իբրև ամենից բռնակալ երկիրը ամբողջ աշխարհում:

Ռուսաստանի բռնակալ քաղաքականությունը ծանրացավ հատկապես մեր վրա: Հայկական հարցի վիժման գլխավոր պատճառը Ռուսաստանն էր: Երբ սկսել էին Տաճկաստանում հայոց առաջին հեղափոխական շարժումները և սուլթանը շփոթված ռուսների դեսպանի խորհրդին էր դիմել, սա պատասխանել էր. «Կոտորեցե՛ք, Ձերդ Վեհափառություն, կոտորեցե՛ք»: Երբ Անգլիան ձայն բարձրացրեց հօգուտ Հայաստանի,

նրան հակառակողը և նույնիսկ պատերազմի սպառնալիքով լռեցնողը Ռուսաստանն էր:

Ծանոթ եղավ Ռուսաստանի բռնությունը նաև Կովկասի հայոց վրա. այդ քաղաքականությունը ծայրագույն խստությամբ գործադրողն եղավ Կովկասի կառավարչապետ հայատյաց Գալիցինը: Նրա նշանաբանն էր «Այնպես ջնջել հայերին, որ նրանցից մնա միայն մեկ հոգի՝ թանգարանի համար»: Այս նպատակով նա հեռացրեց բոլոր հայերին պետական որևէ պաշտոնից, փակեց հայոց 600 ծխական դպրոցները, գրավեց նրանց կալվածները, խափանեց թերթերը, ջնջեց Հրատարակչական ընկերությունը, գրավեց հայոց եկեղեցական կալվածները, փակեց Շուշու թեմական դպրանոցը, ձեռք դրավ մինչև անգամ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության վրա: Եվ դեռ ուզում էր շարունակել և մինչև ծայրը հասցնել այս հայաջինջ քաղաքականությունը: Այս ճնշումները, հատկապես եկեղեցական կալվածների գրավումը, այսինքն մեր ամբողջ ազգային հարստության խլումը այնպես հուզեցին Կովկասի հայերին, որ հեղափոխական կազմակերպություններն ստիպվեցին իրենց գործունեությունը մի պահ փոխադրել Կովկաս: Տեղի ունեցան նշանավոր ահաբեկչական գործողություններ, որոնց զոհերից մեկն եղավ հենց ինքը Գալիցինը:

Ռուս-ճապոնական պատերազմը մի ազդու գործոն դարձավ Ռուսաստանի ազատական շարժման. ռուսների պարտությունը կատարելապես երևան հանեց պետության ամբողջ սնանկությունը. տեսնվեց, որ ժողովրդական գումարները իզուր են վատնվել, հզոր կարծված բանակները անկարգ ու անզոր են մի կանոնավոր պետության դիմադրելու համար: Ժողովուրդը շարժվեց: Ավելի ըմբոստ ու անվախ դարձած, նա պահանջում էր ձայն ունենալ կառավարության մեջ, հաշիվ էր պահանջում նրանից: Ամեն կողմ ցույցեր սկսեցին, հատկապես Մոսկվայում և Բաքվում: Տեղի ունեցավ մի հսկայական գործադուլ, որ ամիսներ տևեց և գրեթե ամբողջ երկիրը բռնելով՝ հասարակական կյանքը կանգնեցրեց: Վերջապես շարժումը հասավ զինված ընդհարման. մայրաքաղաքում բանակն ապստամբեց և պալատը ռմբակոծեց. կայսրը ստիպվեց տեղի տալ և շնորհեց սահմանադրությունը առանձին հրովարտակով (1905 թ. հոկտեմբեր 17). ժողովրդական քվեով ընտրվեցին երեսփոխանները և բացվեց Պետական դուման՝ Ռուսաստանի առաջին պառլամենտը (1906 թ.):

Ռուսաստանի ազատական կռիվները մի նոր աղետի պատճառ դարձան Կովկասի հայոց համար: Ռուսների կառավարությունը տեսնելով հայոց ու վրաց հեղափոխական տրամադրությունը և հատկապես Բաքվի բանվորության գրգռված վիճակը, և իմանալով, որ եթե այս ազգերը միանան, կարող են ամբողջ Կովկասը ոտքի հանել. որոշեց ազգային ատելությունները գրգռել և ազգամիջյան կռիվներով կանխել ծագելիք հեղափոխական շարժումը: Որովհետև վրացիներն ապրում էին մյուս ազգություններից գրեթե անջատ և քաղաքակիրթ մի ցեղ էին, անկարելի էր նրանց հանել կռվի հայոց և թուրքերի դեմ: Ընդհակառակը թուրքերը, իբրև վայրենի մի հորդա, տարված համիսլամության գաղափարներով և թալանի ու սպանության հակամետ, հեշտությամբ կարող էին դուրս գալ կռվի հայոց դեմ, մանավանդ որ Տաճկաստանում այդ երկու ցեղերն արդեն թշնամի էին դարձել: Ահա այս նպատակով ռուս կառավարության գործակալները մտան թուրքերի մեջ, բաժանեցին նրանց զենք և կառավարության կողմից աջակցություն խոստանալով, դուրս բերեցին հայոց դեմ կռվի:

Առաջին հարձակումը տեղի ունեցավ Բաքվում (1905 թ. փետրվար 6). թուրքերը, զինված հրացաններով ու դաշույններով, հանկարծ հարձակվեցին հայոց վրա և հարյուրից ավելի անձանց կոտորեցին: Հայերը, որ ամենևին չէին սպասում մի այսպիսի անակնկալի, դիմեցին պետության, բայց երբ պետք եղած պաշտպանության փոխարեն մերժում և ընդհակառակը դեպի թուրքերը աջակցություն տեսան, ստիպվեցին կազմակերպվել և ինքնապաշտպանության դիմել: Գործի գլուխ կանգնեց դաշնակցությունը և մի ահավոր հակահարվածով ջախջախեց թուրքերին:

Կռիվը Բաքվից անցավ Կովկասի բոլոր այն քաղաքները, ուր հայ և թուրք խառն բնակչություն կար: Նշանավոր եղան հատկապես Շուշու կռիվները, ուր թուրքերը շատ մեծ բազմությամբ հարձակվելով հայոց վրա, 400 տուն վառեցին, պաշարեցին հայոց թաղը և կտրելով հարաբերությունը արտաքին աշխարհի հետ, ուզում էին սովով ու սրով բնաջինջ անել նրանց: Հայերը դուրս բերելով իրենց թաղից մի հին թնդանոթ, հարձակվեցին թուրք ռոմակների վրա և այնպիսի սոսկալի ջարդ տվեցին նրանց, որ կառավարությունն ստիպվեց միջամտել և հայոց գյուղերը ռմբակոծելով ստիպեց հաշտվել:

Ռուսների ծրագիրն այն չէր, որ մեկ կամ մյուս կողմը շահեր, այլ

որ երկուսն էլ զբաղվելով՝ չմասնակցեին հեղափոխությանը, ուստի երբ մի որևէ քաղաքում թուրքերը, որ միշտ նախահարձակ էին լինում, որոշ հաջողություն էին ունենում հայոց վրա, ռուսները պատրաստում էին մի երկրորդ կռիվ, ուր կոզակները միանալով հայոց հետ, մի ահեղ կոտորած էին սփռում թուրքերի մեջ (այսպես եղավ Բաքվում, Շուշում և Նախիջևանում), իսկ երբ հայերը իրենց զինական առավելությամբ չափից ավելի էին առաջանում, ռուս զորքը միջամտելով, կանգնեցնում էր նրանց:

Թուրք-հայկական ընդհարումները տևելով մեկուկես տարի (1905 թ. փետրվար - 1906 թ. սեպտեմբեր) շրջան արին բոլոր կովկասյան քաղաքները. հայերի ամբողջ կորուստը եղավ 2000 հոգի, մինչ թուրքերինը՝ 6 անգամ ավելի. իսկ նյութական վնասի կողմից հայերը տուժեցին անհամեմատ ավելի, քան թուրքերը:

Սահմանադրությունը հաստատվելով Ռուսաստանի մեջ, ուրիշների հետ հայոց դրությունն էլ սկսեց փոխվել. Գալիցինը պաշտոնանկ լինելով՝ Կովկասը վերածվեց փոխարքայության, հայոց դեմ հարուցված բոլոր արգելքները ջնջվեցին, դպրոցները նորից բացվեցին, կալվածները վերադարձվեցին, մամուլի և ընկերությունների ազատություն տրվեց և հայերն էլ բավական ազատորեն բռնեցին ինքնազարգացման ուղին:

255. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանը դարձավ բռնության շղթայի առաջին խորտակված օղակը. նրա օրինակը տարածվեց իսկույն հարևան երկրների մեջ և կարճ ժամանակում վարակեց ամբողջ Արևելքը, Պարսկաստանը, Տաճկաստանը և Չինաստանը:

Պարսկաստանը, խաների բռնակալության տակ հեծող տգետ, թշվառ ու խավար այս երկիրը, արդեն վաղուց խմորման մեջ էր. Ռուսաստանի օրինակն ավելի խորացրեց հեղափոխական շարժումը. հոգևորականությունը, որի ձայնը ամենազոր է այս երկրում, ժողովրդի գլուխն անցնելով կազմեց մայրաքաղաքում մեծամեծ ցույցեր. 14000 հոգի անգլիական դեսպանատանը ապաստանելով, պահանջում էին սահմանադրություն. շահն ստիպվեց ընդունել նրանց պահանջը և բացվեց Պարսկաստանի առաջին մեջլիսը (1906 թ.):

Շուտով թագավորը մեռնելով, իր հաջորդը Մեհեմմեդ Ալի թեև

իրեն հայտարարում է Սահմանադրության կողմնակից, բայց ներքուստ աշխատում է տապալել նրան. զանազան քաղաքներում կազմակերպվում են անջումաններ, որոնց նպատակն էր շահի ոտնձգությանց հակառակ՝ պաշտպանել սահմանադրությունը: Ընդհանուր խռովության մեջ անգլիացիք և ռուսները միանալով, բաժանում են երկիրն իրենց մեջ: Սրանով վերջ է տրվում անգլոռուս մրցակցության, որ շատ վաղուց վտանգ էր դարձել և միանգամայն Իրանի իրական անկախություն: Երկու պետությունները հաշ-տեցնում էին շահին իր ժողովրդի հետ. բայց շատեր, հատկապես Թավրիզը, հավատ չընծայելով շահի խոստման, մերժում են ճանաչել նրան իբրև թագավոր: Թագավորը փակում է Ազգային ժողովը և Սահմանադրությունը հայտարարում է տապալված: Թավրիզն ապստամբում է. թագավորը զորք է ուղարկում նրա վրա. նույն միջոցին օգնության են հասնում Հայ հեղափոխական դաշնակցությունն իր մարտական խմբերով և Կովկասի թուրք հեղափոխականները. դուրս է գալիս մի ժողովրդական հերոս՝ Սաթթար խանը: Ժողովուրդը սիրտ է առնում, նվաճում կառավարական զորքերին և քաղաքից դուրս քշում: Թավրիզի օրինակով ապստամբում են ամեն տեղ և տապալում միապետությունը: Սպահանից Բախտիարի քաջ ցեղը Սարդար Ասադի ղեկավարությամբ և Ռաշդից դաշնակցական մարտիկ Եփրեմը հայ, պարսիկ ու վրացի կամավորների գլուխն անցած արշավում են Թեհրանի վրա: Մայրաքաղաքը գրավվում է և շահը փախչելով Ռուսաստան, նրա մանկահասակ որդին թագավոր է հայտարարվում (1909 թ.):

Սահմանադրական Պարսկաստանը չկարողացավ շուտով կանոնավոր կառավարություն ստեղծել. մի կողմից դրամական վիճակը և կարող պաշտոնյաների պակասը, և մյուս կողմից միապետականների լարած դավերն ստեղծեցին ընդհանուր խառնակություն: Շատ վատ դեր կատարեց Ռուսաստանը, որ ընդհանրապես ազատական կարգերին հակառակ և մտադիր լինելով բոլորովին գրավել Պարսկաստանը, աշխատում էր որքան կարելի է խառնաշփոթ վիճակ ստեղծել՝ գրավման առիթ և պատճառ ունենալու համար: Ահա այս պատճառով նա ամեն կերպ քաջալերում և հովանավորում էր միապետականներին, սկսած իր մոտ ապաստանած շահից մինչև վերջին խռովարար խանը: Երկրի այս խառնաշփոթ վիճակում ամենից ավելի բարերար դեր

կատարեցին հայերը, հանձին Հայ հեղափոխական դաշնակցության, որ մի կողմից մղում էր սահմանադրական գաղափարների պրոպագանդա, իսկ մյուս կողմից իր մարտական ուժերով պաշտպան էր կանգնում սահմանադրական կառավարության: Ճշմարիտ է, թե հայոց թե՛ մտավոր և թե՛ մարտական ուժերը շատ փոքր էին քանակով, բայց նրանք այնքան եռանդուն ու կորովի գտնվեցին, որ իրենց հետ քաշեցին-տարին նաև պարսկական ավելի ստվար ուժեր և դրանով պահեցին երկիրը:

Սահմանադրական կառավարության դեմ առաջին ապըստամբներն եղան Ղարադաղի խաները և Շահսևան կոչված ավազակ ցեղը, հետո ապստամբություն բարձրացավ Թեհրանում և վերջապես ռուսների կառավարության բարեհաճությամբ Պարսկաստան մտավ փախստական շահը և ավազակ թուրքմենների ու քրդերի գլուխն անցած, արագությամբ արշավեց դեպի Թեհրան (1911 թ.): Իր վրա ուղարկված բանակները պարտվեցին և շահի բանակն արդեն մոտեցել էր Թեհրանին. սարսափը տարածվեց մայրաքաղաքում. 50000 հոգի փախուստի ճամբան բռնեցին: Այդ սարսափի դրպեին Պարսկաստանի պահապան հրեշտակը հանդիսացավ Եփրեմը՝ իր օգնական քեռու հետ. նա անցավ հայ մարտիկների և քաջ բախտիարցիների գլուխը և կայծակի հարվածով ջնջեց շահի բանակը: Հազիվ 7 հոգով շահը կարողացավ փախչել Ռուսաստան: Եփրեմը շարունակեց իր գործը բոլոր մյուս ապստամբների հետ և ամենքին էլ նվաճեց, զոհ տալով նաև իր անձը Պարսկաստանի ազատության համար:

Նույն ժամանակ Ռուսաստանը, տեսնելով որ այս բոլոր դավերն իզուր են անցնում, բանակը շարժեց դեպի Պարսկաստան և մինչև Թավրիզ ու Ղազվին գրավեց:

256. ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Ֆրանս-պրուսիական պատերազմից հետո Գերմանիան Եվրոպայի ամենից ռազմական պետությունը դարձավ: Ֆրանսիան չէր կարող մոռանալ Էլզաս-Լոթարինգիայի կորուստը և շարունակ մտածում էր նորից հետ խլելու մասին: Թշնամությունն այսպիսով հավիտենական էր երկու պետությունների միջև: Միևնույն ժամանակ Ավստրիան չէր կարող հաշտ աչքով նայել Ռու-

սաստանի հաջողությանը Բալկանում, որի վրա աչք ուներ ինքն էլ: Այսպիսով երկու ցեղակից և հարևան ժողովուրդներ՝ Գերմանիան և Ավստրիան, վտանգի առաջ իրար մոտենալու և բարեկամանալու պատճառներ ունեին: Գերմանական պետության կազմակերպիչը Բիսմարկ կարողացավ կազմել մի զինակցություն Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի միջև, որի նպատակը պիտի լիներ հետ պահել Ֆրանսիան վրեժխնդրությունից և Ռուսիան՝ Բալկաններից (1883 թ.):

Գերմանիան այսքանով չբավականացավ. նա մի կողմից շարունակում էր իր անընդհատ սպառազինությունը ծովի ու ցամաքի վրա, մյուս կողմից տարածում էր իր հովանավորությունը հեռավոր գաղութների վրա՝ Ասիայում, Աֆրիկայում և Օվկիանիայում, և երրորդ կողմից իր առևտրական գործունեությունը զարգացնելով, նորանոր շուկաներ ձեռք բերում: Իր գլխավոր ծրագիրն եղավ ձեռք առնել Թուրքիան, որի հեռավոր անբնակ վայրերը, հատկապես Միջագետքի լայնածավալ դաշտերը, կարող էին դառնալ մեծահարուստ գաղթավայր գերման ժողովրդի համար: Այս նպատակով նա հետզհետե մոտեցավ Թուրքիային, ձեռք առավ նրա տնտեսական կյանքը, հիմնեց Բաղդադի երկաթուղին, որով Բեռլինը միանում էր Պարսից ծոցին: Թուրքիան զգում էր Գերմանիայի ձգտումը, բայց նա իբրև մի թույլ պետություն, ռուսական վտանգից վախեցած, ստիպված էր համակերպվել և վերջ ի վերջո ամբողջովին նրա գիրկն ընկավ:

Գերմանիան մոտենալով Թուրքիային, մի ավելի հեռավոր ծրագիր էլ ուներ. իրեն մոտեցնել մահմեդական աշխարհը, Պարսկաստանը, Արաբիան, Աֆղանիստանը, Եգիպտոսը, շահել Հնդկաստանի համակրությունը և բոլորը վերջիվերջո գործածել իբրև զենք Անգլիայի դեմ:

Այս նկատումներով էր, որ Գերմանիան և իրեն հետևելով Ավստրիան և Իտալիան հակառակ կանգնեցին հայկական դատին, պարզապես դուր գալու համար Թուրքիային, թե ոչ Գերմանիան հայոց կոտորածի մեջ որևէ շահ չուներ:

Երբ Գերմանիայի ուժը և ազդեցությունն արդեն պատկառելի դարձան, Ֆրանսիան վախեցած, պետք ունեցավ մի դաշնակից փնտրելու, և քանի որ Ավստրիայի թշնամին էլ Ռուսաստանն էր, ուստի երկու պետությունները ձեռք ձեռքի տվեցին: Այսպես կազմվեց ռուս-ֆրանսիական երկյակ դաշնակցությունը. ազատա-

կան և հանրապետական Ֆրանսիան միացավ բռնակալ և միապետական Ռուսաստանի հետ. դեպքերի պահանջն էր այդ (1897 թ.):

Սակայն սպառազինումը սրանով չվերջացավ, այլ նոր թափ ստացավ. Գերմանիան անընդհատ զինվում էր մյուսներից գերազանցելու համար. նրան հակակշռելու նպատակով Ֆրանսիան նույնպես շարունակ ավելացնում էր զինական ուժը. և Եվրոպան հեծում էր զինական սպառնալիքի տակ: Այս բանն այնքան սաստկացավ, որ արդեն ժողովուրդները չդիմանալով, սկսեցին քարոզել համաշխարհային խաղաղության մասին, կազմվեցին այդ նպատակով մասնավոր և միջազգային ընկերություններ: Վերջապես ռուսաց կայսրը պաշտոնապես առաջարկեց բոլոր պետություններին զինաթափվել կամ գոնե սպառազինությունը չափավորել և պատերազմին վերջ տալով, ազգերի մեջ ծագելիք վեճերը միջազգային դատարանով հարթել: Պետություններն ընդունեցին այս կոչը և հիմնեցին Հաագայի միջնորդ դատարանը (1899 թ.), որ թեև որոշ չափով նշանակություն ունեցավ միջազգային հարաբերությունների համար, բայց չկարողացավ վերջ տալ պատերազմին, քանի որ հենց նրա աչքի առաջ տեղի ունեցավ Անգլիայի պատերազմը Բոերների դեմ և Տրանսվալի ու Օրանժի հարավաֆրիկյան հանրապետությունների նվաճումը (1899-1902 թթ.):

Մինչդեռ Եվրոպայում կազմվում էին այս երկու մեծ դաշնակցությունները, Անգլիան շարունակում էր իր հոյակապ մենությունը: Բայց արդեն կարգը իրեն էր եկել մեկ կամ մյուս կողմը բռնելու:

Անգլիան գլխավորապես ծովային պետություն է. աշխարհիս բոլոր մասերում ունենալով բազմաթիվ կալվածներ ու գաղութներ, անհրաժեշտաբար պիտի ունենար մի այնպիսի մեծ նավատորմիղ, որ կարող լիներ գերազանցել բոլոր մյուս պետությունների խմբակցությունների նավային ուժերը: Բայց Գերմանիայի նավատորմն այնպես մեծացել էր, որ բռնելով աշխարհիս մեջ երկրորդ տեղը, սարսափ դարձավ Անգլիայի համար: Այս երկյուղն ստիպեց նրան վերջապես փնտրելու մի դաշնակից. և այս դաշնակիցն եղավ Հեռավոր Արևելքում Ճապոնիան: Դաշնակցելով այս զորեղ ծովային պետության հետ, Անգլիան միանգամից հասնում էր երկու նպատակի. նախ հեռացնում էր իր ասիական գաղութների վրա արշավելու որևէ վտանգ Ճապոնիայի կողմից և երկրորդ՝ ազատ էր

այլևս իր ասիական նավատորմիղը քաշելու Միջերկրական, այստեղ իր ուժերը զորացնելու համար:

Ավելի հետո Անգլիան կարիք զգաց մի երկրորդ դաշնակցի՝ պաշտպանելու համար իր աֆրիկյան գաղութները: Այս դաշնակիցն եղավ Ֆրանսիան, որ հարկավոր պարագային կարող էր օգնել նրան Միջերկրականում: Ֆրանսիան արդեն դաշնակից լինելով Ռուսաստանի հետ, իբրև միջնորդ ծառայեց բարեկամական կապեր հաստատելու Ռուսաստանի և Անգլիայի միջև, որի կարիքը հետզհետե զգալի էր դառնում, քանի զարգանում էր գերմանական ազդեցությունը Տաճկաստանում (Թուրքիայում):

Եվ ահա վերջապես Անգլիայի թագավորը տեսակցության է գալիս ռուսների կայսեր հետ՝ Ֆինլանդիայի Ռևիլ քաղաքում և կնքվում է նրանց միջև բարեկամության առաջին կապը (1908 թ.):

Այսպես կազմվում են Եվրոպայի վեց մեծ պետությունների երկու խոշոր խմբակցությունները, որոնցից առաջինը կոչվում է Եռյակ զինակցություն (Գերմանիա, Ավստրիա և Իտալիա), և երկրորդը՝ Եռյակ համաձայնություն (Անգլիա, Ֆրանսիա և Ռուսաստան), մեկի գլուխը լինելով Գերմանիան, մյուսինը՝ Անգլիան: Եվ այս երկուսի բախումին էր սպասում աշխարհը սարսափով:

257. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչդեռ հին աշխարհի մեծ պետությունները բռնել էին այսպես զինվորական ուժի և բռնության ճանապարհը ընդհանրապես, օվկիանոսներից այն կողմ, Նոր Աշխարհը բռնել էր մարդկային կյանքի բարելավման ուղին՝ մի կողմից նյութական և մյուս կողմից բարոյական ճանապարհով:

Հյուսիսային և Հարավային Ամերիկայի բազմաթիվ մեծ ու փոքր հանրապետությունների մեջ բարձր ի գլուխ կանգնած էին Միացյալ Նահանգները, այնպես որ հաճախ Ամերիկա ասելով հասկանում էին Միացյալ Նահանգները:

Քսաներորդ դարի սկզբում Միացյալ Նահանգները աշխարհի ամենաառաջին երկիրն էր թե՛ արդյունաբերական և թե՛ տնտեսական կյանքի կողմից: Արդյունաբերության կողմից նա անմրցելի էր. սկսած հացից, որ մարդու առաջին կենսական պահանջն է կազմում, մինչև նավթը և քարածուխը Ամերիկան կանգնած էր առաջին շարքում: Երկաթի արտադրության մեջ անգամ, որ

Անգլիայի մենաշնորհն էր մինչև այն ժամանակ, Ամերիկան գերազանցեց նրան: Ոչ միայն հումքի, այլև նույնիսկ գործված ապրանքների արդյունաբերության մեջ Ամերիկան չափազանց մեծ տեղ էր գրավում:

Այս վիճակին հասնելու համար նպաստում էին ոչ միայն Ամերիկայի չհնացած, չհոգնած հողը, այլև երկրի բնական արդյունավետությունը մի կողմից, մարդկային աշխատասիրությունը երկրորդ կողմից և բոլոր տեսակի հնարավոր միջոցների օգտագործումը երրորդ կողմից: Ամեն մի գյուտ, որ նպաստում էր կյանքը բարելավելու և մարդկային ձեռքի աշխատանքը կրճատելու, անմիջապես գործադրության էր դրվում Ամերիկայում: Հորդահոսան ու լայնատարած գետերը ջրանցքներով կապված էին իրար հետ և բոլոր անջրդի հողերը ջրում էին: Նրանց վրայով հազարավոր ու բյուրավոր շոգենավեր էին երթևեկում: Երկաթուղիների անսահման մի ցանց պատում էր ամբողջ երկիրը և գնացքները երթևեկում էին ոչ մի տեղ չտեսնված արագությամբ: Էլեկտրական գյուտարարության մեջ ամենամեծ բաժինը ունեն ամերիկացիք: Էլեկտրական լամպն էլ նրանց հնարածն է, ինչպես և հեռախոսն ու ավտոմոբիլը, որն առանց մեծ ծախսի հնարավորություն է տալիս մարդուն՝ մեծամեծ ճամփորդություններն անգամ առձեռն միջոցի վերածելու: Այս բոլոր միջոցներն ստեղծել են ամերիկացի քաղաքացու համար ոչ միայն բարեկեցիկ ու հանգստավետ կյանք, այլև նյութական հարստություն: Ամերիկայում խոսում են ոչ թե պարզ միլիոնների մասին, այլ բազմամիլիոնների և միլիարդների մասին:

Նյութականի կողքին ամերիկյան քաղաքացին վայելում է նաև հոգեկան ու մտավոր բոլոր բարիքները: Ոչ միայն նախնական, այլև միջնակարգ ու համալսարանական ձրի ուսում, թատրոններ, կինոներկայացումներ, ձրի դասախոսություններ, ռադիո, համերգներ, հակալկոհոլական, կրթական ու բարեգործական զանազան ընկերություններ և այլն:

Այս բոլորից հետո պետք է հիշել բոլոր քաղաքացիների վրա տարածվող ազատության, իրավահավասարության և դեմոկրատական ոգին: Ազատ են խոսքը, խիղճը, մամուլը, ժողովները, հավաքույթները և ամեն տեսակի խմբակցությունները: Կինը հավասար է տղամարդուն ամեն մի ասպարեզում: Չունենալով ոչ մի տեսակի ազնվականություն ոչ անցյալում և ոչ ներկայումս, ամերիկյան քաղաքացին բնության մաքուր, աննախապաշարյալ,

ազատ զավակն է և տիպարը ապագա մարդու: Նա գիտի, որ ինքը հավասար է բոլորին և բոլորը հավասար են իրեն. և ինքը եթե ընտրող է, միանգամայն և ընտրելի է և կարող է մի օր էլ երկրի նախագահը դառնալ:

Բայց ամերիկյան քաղաքացին չի մտածում միայն իր մասին. նա մտածում է նաև համայն աշխարհի և մարդկության մասին և ուզում է, որ ամբողջ աշխարհը և բոլոր մարդիկ լինեն իրեն պես ազատ և ո՛չ մի ազգ ուրիշ ազգի ստրուկը չլինի:

Ըստ այսմ Ամերիկայի Միացյալ Նահանգները երկիրն են ո՛չ միայն մարդկային հավասարության, բարձր աշխատավարձի, վիթխարի գործառնության և կյանքի անդորրության, ներկայացնում են ո՛չ միայն մարդ անհատի և ընկերության, ընտրյալ նախագահի և միլիարդատերերի երջանիկ համագործակցությունը, այլև ազգային բարօրության և միջազգային արդարության:

258. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Տաճկաստանում հեղափոխությունն առաջացավ մի քանի պատճառներից: Առաջին պատճառն էր հայոց կոտորածն ու գաղթը, որ մի մեծ հարված եղավ Տաճկաստանի տնտեսության. աշխատող ձեռքերի պակասը շուտով զգալի եղավ. արտածությունը դադարեց. պակասեցին տերության եկամուտները և գանձարանը, որ առանց այն էլ դատարկ էր, ավելի ևս դատարկվեց: Կառավարությունը կարիք զգաց նորանոր տուրքեր դնելու, որոնց ծանրության չդիմանալով թուրքերը, սկսեցին ըմբոստանալ. տեղի ունեցան հակապետական ցույցեր. իշխանությունները դիմեցին զինվորական ուժի, բայց զինվորները հրաժարվեցին կրակել իրենց կրոնակիցների վրա. Կարինում թուրքերը հարձակվեցին կառավարական պալատի վրա, սպանեցին վալիին և մերժեցին տուրք տալ: Սելանիկի բանակի շրջանում առաջացավ ազատական սպաների կոմիտեն, որ զայրացած սուլթանի խստություններից, նպատակ դրավ հաստատել Սահմանադրությունը Տաճկաստանում:

Երկրորդ՝ այն մանր-մունր թուրք խմբակցությունները, որոնցից ոմանք էլ իբրև հին սահմանադրականների ժառանգ փախել էին Եվրոպա և հրատարակում էին զանազան ազատական թերթեր, իրենց գաղափարները կամաց-կամաց տարածվում էին թուրք

ժողովրդի մեջ և խմորում մտքերը: Դաշնակցականներն իրենց գործունեությամբ և իրենց օրինակով քաջալերեցին նրանց, մինչև անգամ կազմեցին Փարիզում թուրք և հայ հեղափոխական ընկերությունների համաժողով (1902 թ.), ընդհանուր կապ և միություն հաստատելու համար, բայց այդ միությունը կարելի չեղավ, թուրքերի տհասության պատճառով:

Երրորդ պատճառն եղավ եվրոպական քաղաքականության փոփոխությունը: Տաճկաստանը վաղուց ապրում էր Անգլիայի և Ռուսիայի հակամարտության շնորհիվ. վաղուց Ռուսաստանը ոչնչացրած կլիներ նրան, եթե չլիներ Անգլիան, որ արգելք էր հանդիսանում Ռուսաստանի դեպի Միջերկրական տարածվելուն: Ղրիմի պատերազմին Անգլիան էր, որ կանգնեցրեց Ռուսաստանը. վերջին Արևելյան պատերազմին Անգլիան էր, որ Բեռլինի վեհաժողովում քայքայեց ռուսական ծրագիրը: Ընդհակառակը 1895 թվականին, երբ Անգլիան որոշել էր լուծել հայկական հարցը, Ռուսաստանն էր, որ արգելք հանդիսացավ նրան, իր հետ ունենալով նաև Գերմանիան: Իսկ այժմ, երբ Անգլիան և Ռուսաստանը բարեկամ էին դարձել, այլևս վերացել էր հակամարտությունը: Նրանք նույնիսկ սկսել էին բանակցություններ վարել՝ կարգադրելու համար Մակեդոնիայի խնդիրը և ստեղծելու համար Բալկաններում մի նոր թումբ գերմանա-ավստրիական առաջխաղացման դեմ: Սրան պիտի հետևեր հայկական հարցի կարգադրությունը նույն նպատակով: Դրությունը մոտավորապես այն էր, ինչ որ Պարսկաստանում, ուր Անգլիայի և Ռուսաստանի հակամարտությունը վերջանալով, երկիրը բաժանվեց երկուսի միջև:

Տաճիկները տեսան իրենց կորուստը և որոշեցին փրկել երկիրը:

Իսկույն բոլոր հեղափոխական ընկերությունները միացան և դաշնակցության համաձայնությամբ կազմեցին Փարիզի երկրորդ Օսմանյան համաժողովը, ուր վճռվեց սուլթանին գահընկեց անել և հաստատել Սահմանադրությունը: Սելանիկի բանակն ապստամբեց, 30000 ալբանացի պատրաստվեցին Պոլիս արշավել. սուլթանը վախեցավ և իր գահը փրկելու համար Սահմանադրություն հայտարարեց:

9 ամիս հետո սուլթանը պատրաստեց ռեակցիան. 5000 զինվորներ և կրոնավորների մի ոհմակ ապստամբություն բարձրացրին Սահմանադրության դեմ. Պառլամենտը ցրվեց: Այն ժամանակ

Սելանիկի բանակը Էնվեր բեյի առաջնորդությամբ արշավեց Պոլիս, ապստամբներին հաղթեց, արյունարբու սուլթանին գահընկեց անելով բանտարկեց և նոր սուլթան նշանակեց:

Մինչդեռ Պոլսում կատարվում էին այս շարժումները, Կիլիկիայում սկսվել էր հայկական ջարդ: Թուրք խուժանը, միացած պետական բանակի և 20000 քուրդ բանվորների հետ, հանկարծ հարձակվեցին հայոց վրա: Կոտորածն սկսվեց Ադանայից և այնտեղից անցավ Կիլիկիայի մյուս գյուղերն ու քաղաքները. 18000 հայ կոտորվեց. ազատվեցին միայն Սիսը, Հաջինը, Զեյթունը, Մարաշը և Չորք-Մարզվանը: Հաջինը 12 օր դիմադրեց 8000 թուրքերի խուժանին և քշեց նրանց: Զեյթունի վրա ոչ ոք չհամարձակվեց հարձակվել և նրա սպառնալիքով վախեցան նաև դիպչել Մարաշին: Հերոսական եղավ Չորք-Մարզվանի կռիվը, ուր 12000 հայ հավաքվելով 2 շաբաթի չափ կռվեցին իրենց վրա հարձակվող խուժանի և զինվորական բանակի դեմ և անձնատուր չեղան:

Կիլիկիայի ջարդը մեծ աղմուկ հանեց թե՛ Պոլսի հայոց և թե՛ եվրոպական դիվանագիտության մեջ. բայց թուրքերը կարողացան հանցանքը գահընկեց սուլթանի վզին փաթաթել և մի քանի հարյուր հոգու բանտարկելով, վեճը հարդարած եղան: Իսկ հայերը նոր ազատական կառավարության վրա դնելով իրենց հույսը, ի սեր համերաշխության համակերպվեցին:

259. ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Երիտասարդ թուրքերը ձեռք ձգելով իշխանությունը, հաստատեցին երկրում կյանքի և գույքի ապահովություն, տվեցին քրիստոնյաներին բավական աչքառու ազատություններ, ինչպես մամուլի ազատություն, զինվորական ծառայություն, զենք կրելու իրավունք և այլն: Բայց այս բոլորը սկզբնական շրջանում էր, երբ իրենք դեռ իշխանության մեջ ամուր հաստատված չէին և պետք ունեին ազատամիտ տարրերի, հատկապես հայ հեղափոխական դաշնակցության մարտական ու բարոյական օգնության: Բայց երբ որ իշխանության մեջ բոլորովին ամրացան, սկսեցին օսմանցիության, այն է բոլոր այլացեղ ժողովուրդները թուրքացնելու ծրագիրը: Այս ժամանակ նորից սկսեցին համիդյան ռեժիմի բոլոր ճնշումները և ո՛չ միայն հայոց, այլև բոլոր այլացեղ, նույնիսկ մահմեդական ժողովուրդների վրա: Նրանք բնականաբար

զինվեցին հատկապես այն ժողովուրդների դեմ, որոնք որոշ քաղաքական հասունության հասած էին: Թուրքերի այս քաղաքականությունը վերիվայր հուզեց ամբողջ երկիրը և պատրաստեց պետության վերջնական անկումը:

Ամենից առաջ ապստամբեցին ալբանացիք և ջարդեցին օսմանյան բանակները: Պետությունը նորանոր բանակներ ուղարկեց և մեծամեծ ջանքերով ու կոտորածով հազիվ կարողացավ զսպել նրանց: Սրան հետևեց իտալական պատերազմը, իտալացիք հարձակվեցին Տրիպոլսի վրա և մի քանի ամսվա մեջ ջարդուփշուր անելով տաճկական ուժերը, ամբողջ երկիրը գրավեցին:

Հազիվ այս պատերազմը վերջացել էր, ապստամբեցին Սամոս և Իկարիա կղզիների հույները. Մակեդոնիան, որ Համիդի օրով քանի անգամ ապստամբել և մեծամեծ զոհերով հազիվ էր ընկճվել, նորից գլուխ բարձրացրեց: Թուրքերն սկսեցին ջարդել: Այս կոտորածների վրա մեծ հուզում առաջացավ Բալկանյան պետությունների մեջ: Նշանավոր կրետացի հույն գործիչ Վենեզելոսը կարողացավ համաձայնություն գոյացնել հույն և բուլղար ժողովուրդների միջև, որոնց թշնամությունն էր եղել պատճառ, որ մինչև այն ժամանակ Բալկանների այդ մասը մնար տաճիկների լուծի տակ: Բուլղարիան, որ Տաճկաստանի վասալությունը թոթափելով իրեն անկախ թագավորություն էր հայտարարել, կազմակերպեց Բալկանյան պետությունների դաշնակցությունը, որի մեջ մտան Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան և Չերնագորիան: Դաշնակցությունը անմիջապես սկսեց պատերազմի (1912 թ. սեպտեմբեր): Տաճկական բանակներն իրար հետևից հալվեցին, ամբողջ Եվրոպական Թուրքիան գրավվեց, կղզիները նվաճվեցին և դաշնակիցների բանակը հասավ Պոլսի դուռը: Հաջողությունը, որ սպասվածից շատ գերազանց էր, վերիվայր շրջեց եվրոպական պետությունների հաշիվները: Ավստրիան չէր ուզում Սերբիայի անկախությունը, որ պատճառ պիտի դառնար իր զանազան հողերի բաժանման. միևնույն ժամանակ նա ուզում էր իր ձեռքում պահել Ադրիատիկից բանալին (որ Ալբանիան էր). ռուսները չէին ուզում, որ որևէ մի պետություն տիրեր Պոլսին. ուստի պետություններ միջամտեցին և զինադադար կնքեցին: Գումարվեց Լոնդոնի վեհաժողովը, ուր հաշտություն կնքվելով, գրավված հողերը բաժանվեցին դաշնակիցների միջև, թուրքերը Եվրոպայից գրեթե դուրս քշվեցին, իսկ Ալբանիան,

Ավստրիայի պահանջով, ինքնավարություն ստացավ, հատկապես այն նպատակով, որ Սերբիան հեռու մնար Ադրիատիկից:

Ալբանիայի չեզոքացումը պատճառ դարձավ Բալկանյան դաշնակիցների միջև նորանոր անհամաձայնությունների. հատկապես Սերբիան զրկվելով Ադրիատիկից, աչքը դարձրեց դեպի Էգեական ծովը և Ավստրիայի թելադրությամբ բուլղարներից պահանջեց Մակեդոնիայի մի մասը: Գժտությունը հետզհետե ծանրանալով, տեղի տվեց Բալկանյան երկրորդ պատերազմին: Հունաստանը, Սերբիան և Չերնագորիան միանալով, ընկան իրենց նախկին դաշնակից Բուլղարիայի վրա, հաղթեցին և արևմուտքից ու հարավից խուզեցին: Նրա դժվար կացությունից օգուտ քաղելով խարդախ Ռումինիան և թուլամորթ տաճիկը նույնպես ընկան անօգնական մնացած Բուլղարիայի վրա, և առանց մի կաթիլ արյուն թափելու, առաջինը խլեց այսրդանուբյան մի մասը, իսկ երկրորդը՝ Թրակիան (1913 թ.):

260. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Բալկանյան պատերազմը առիթ դարձավ նորից արծարծելու հայկական հարցը, որ 1896 թվականից հետո մոռացության էր տրվել: Եվ զարմանալի էր, որ նրան կենդանություն տվողը Ռուսաստանն էր, այն պետությունը, որ միակ պատճառն էր եղել հայոց կոտորածների և հայկական հարցի թաղման:

Ի՞նչ էր այս տարօրինակ փոփոխության պատճառը:

Այս փոփոխության գլխավոր պատճառը գերմանական վտանգն էր: Գերմանիան, որ Ավստրիայի հետ միացած արևմտյան կողմից սպառնում էր Ռուսիային, այժմ էլ իր ազդեցության ենթարկելով Տաճկաստանը, թաթը երկարել էր դեպի Հայաստան և հարավից սպառնում էր նրան: Այս վտանգը ավելի մեծ էր, որովհետև Հայաստանը այն խառնարանն էր, ուր պիտի միանար ամբողջ արևելյան մահմեդականությունը, տաճիկները, քուրդերը, արաբները, Պարսկաստանի թուրքերը, Կովկասի թաթարները և լեռնական ցեղերը, որոնք պետք եղած ժամանակ Գերմանիայի թելադրությամբ պիտի ծառանային Ռուսաստանի դեմ: Հայերն էին այն միակ վստահելի տարրը, որ պիտի կարողանար իբրև թումբ կանգնել այս բոլորի միջև և միությունը խանգարեր:

Ահա այս պատճառով ռուսական դիվանագիտությունը ձեռք է

առնում հայկական հարցը: Իր թելադրությամբ հայոց կաթողիկոսը Պոլսի Ազգային ժողովի տեղեկագրի հիման վրա դիմում է ռուսաց կայսեր և խնդրում հայոց պաշտպանությունը Տաճկաստանում: Ռուսաստանը դիմում է եվրոպական պետություններին. կաթողիկոսի հրամանով Փարիզում կազմվում է Հայկական կոմիտե, որի նախագահ է նշանակվում եգիպտահայ նշանավոր դիվանագետ Պողոս Նուպար փաշան: Կոմիտեն դիմում է պետություններին և պահանջում Հայաստանի 6 նահանգների ինքնավարությունը, մի եվրոպացի քրիստոնյա նահանգապետով: Պոլսում գումարվում է դեսպանաժողով, ուր Գերմանիան, Թուրքիայի հետ միացած, աշխատում է կրճատել հայոց պահանջը: Երկար վիճաբանություններից հետո ընդունվում է Գերմանիայի ծրագիրը և ըստ այնմ կնքվում է հայկական հարցի համաձայնագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև (1914 թ.):

Այս համաձայնագրի համեմատ ինքնավար շրջան են կազմում 7 նահանգ (հայաբնակ 6 նահանգների հետ միացվելով նաև Տրապիզոնը). ամբողջը բաժանվում է երկու մասի. առաջինը պարունակում է Տրապիզոնի, Կարինի և Սեբաստիայի նահանգները, իսկ երկրորդը պարունակում է Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի և Խարբերդի նահանգները, մի-մի քրիստոնյա եվրոպացի վերատեսչով, որ պիտի նշանակեն եվրոպական 6 մեծ պետությունները և պիտի հաստատի սուլթանը: Առաջին վերատեսուչներն եղան հոլանդացի պարոն Վեսթենեգը՝ հյուսիսային շրջանի համար, և նորվեգիացի մայոր Հոֆը՝ հարավային շրջանի համար: Հոֆը մեկնեց իր պաշտոնատեղին Բաղեշ, իսկ Վեսթենեգը մնում էր Պոլսում՝ իր պաշտոնեությունը ընտրելու համար, երբ հանկարծ ծագեց Առաջին համաշխարհային պատերազմը և Տաճկաստանի պետությունը համաձայնագիրը ջնջելով՝ վերատեսուչներին արձակեց:

261. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Համաշխարհային պատերազմի բուն պատճառը անգլո-գերմանական մրցակցությունն էր: Գերմանիան, համաշխարհային տիրապետության հովերով տարված, վստահ իր զինվորական ուժի գերազանցության վրա, որի համար այնքան տարիներ աշխատանք էր թափել, ժամանակը եկած համարեց ասպարեզ

նետվելու: Ավստրիան և Իտալիան իր դաշնակիցներն էին, Թուրքիան բարեկամ, մահմեդական աշխարհն ամբողջությամբ համակիր, Ֆրանսիայի մեջ աճում էին սոցիալիստական, մինչև անգամ հակապատերազմական գաղափարներ, բալկանյան ժողովուրդներն իրար դեմ լարված, Բուլղարիան Ռուսաստանից սառած, Անգլիան էլ իբր թե խճճված իռլանդական հարցով, հետևաբար ո՛չ մեկը չպիտի համարձակվեր խանգարելու հոխորտ Գերմանիայի ծրագիրը, Անգլիան պիտի քաշվեր իր կղզիները և ամբողջ Եվրոպան պիտի հպատակվեր Մեծ Գերմանիային:

Կռվին իբրև պատրվակ ծառայեց Ավստրիայի գահաժառանգի սպանությունը մի սերբիացու ձեռքով (1914 թ. հունիս 28), որի մեջ Ավստրիան տեսնելով Սերբիայի պետության մատը, պատերազմ հայտարարեց նրա դեմ: Ռուսիան դուրս եկավ պաշտպանելու. Գերմանիան շարժվեց նրա դեմ և այսպես դաշնակիցներն իրար օգնության վազելով, մի ամսվա ընթացքում 8 մեծ պետություն ճակատամարտի էին դուրս եկել միմյանց դեմ. Գերմանիան և Ավստրիան մի կողմից, Սերբիան, Չերնագորիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան և Ճապոնիան մյուս կողմից:

Գերմանիայի ծրագիրն էր, մինչդեռ Ավստրիան կզբաղեցներ Ռուսիան, ահարկու թափով ընկնել Ֆրանսիայի վրա և նախքան դաշնակիցների օգնության հասնելը՝ կուլ տալ նրան. դրանից հետո անցնել Արևելք և վերջացնել Ռուսաստանի հաշիվը: Եվ որովհետև Ֆրանսիայի գերմանական սահմանը շատ ամուր լինելով կարող էր երկար դիմանալ, ուստի Գերմանիան վճռեց խախտել Բելգիայի չեզոքությունը և նրա վրայով արշավել Ֆրանսիա, որովհետև ֆրանս-բելգիական սահմանը, իբրև չեզոք երկրի սահման, ոչ մի ամրություն չուներ:

Բայց փոքրիկ Բելգիան մերժեց ճանապարհ տալ գերմանական բանակներին: Այս մերժումը, որ գերմանական ծրագիրների խանգարման սկիզբն էր, այնպես կատաղեցրեց գերմանացիներին, որ նրանք մարդկային ամեն զգացմունք մոռացած, գազանաբար ընկան այդ թույլ պետության վրա և գործեցին այնպիսի ոճիրներ, որ թուրք-թաթարական հորդաներին միայն վայել էին:

Շուտով ընկավ Բելգիան, բայց իր հերոսական դիմադրությամբ նա ժամանակ տվեց նախ Ֆրանսիային՝ կազմակերպելու պաշտպանության գործը բելգիական թույլ սահմանների վրա, և երկրորդ Անգլիային՝ հասցնելու իր առաջին օգնական բանակը

Ֆրանսիա: Բայց ֆրանկո-անգլիական բանակը պարտվեց Գերմանիայի զորության առաջ, և թշնամին ուժեղ թափով առաջ խոյանալով մոտեցավ Փարիզին: Խուճապը տիրեց մայրաքաղաքում: Կառավարությունը փախավ: Այս ճակատագրական րոպեին ֆրանսիացի զորավար Ժոֆրը, Մառն գետի առաջ, կազմակերպեց մի այնպիսի դիմադրություն, որ գերմանացիների ուժը ջախջախվելով, ստիպվեցին քաշվել դեպի Բելգիա (1914 թ. սեպտեմբեր 5-9):

Մառնը եղավ Եվրոպայի փրկությունը: Դա այն կետն էր, ուր ֆրանսիացիները 15 դար առաջ կանգնեցրել էին Ատտիլայի գազանային արշավանքը դեպի Արևմուտք. և այժմ էլ Ժոֆրի ձեռքով կանգնեցվում էր այնպիսի մի ահավոր արշավանք և ջնջվում գերմանական բռնակալության սպառնալիքը ամբողջ Եվրոպայի վրայից:

Այն միջոցին, երբ Գերմանիան իր ամբողջ թափով արշավում էր դեպի Փարիզ, աչքաթող անելով արևելյան սահմանը, ռուսական բանակները մտել էին Պրուսիա և ջախջախելով գերմանական ուժերը, արշավում էին ուղղակի Բեռլին: Ստեղծվել էր Գերմանիայի համար այնպիսի ճգնաժամ, ինչ որ Ֆրանսիայի համար Մառնի նախօրյակին: Գերմանացի հռչակավոր զորավար Հինդենբուրգը դուրս եկավ ռուսների դեմ և խորտակելով նրանց՝ անջատեց Պրուսիան: Ռուսներն այն ժամանակ ընկան Ավստրիայի վրա, որից ոգևորված սերբերը՝ քշեցին թշնամիներին իրենց երկրից և նույնիսկ մտան Բոսնիայի հողերը: Սերբիայի հաջողությունը գրգռեց բուլղարներին՝ հարձակվելու նրա վրա, իսկ Ռուսաստանի հաջողությունը գրգռեց բուլղարներին՝ հարձակվելու նրա վրա, իսկ Ռուսաստանի հաջողությունը պատրվակ ծառայեց Թուրքիային՝ հարձակվելու Կովկասի վրա (1914 թ. հոկտեմբեր):

Այսպիսով Գերմանիան ունեցավ երկու դաշնակից ևս:

Բայց ավստրիական զորքը հենց սկզբից ցույց տվեց իր խեղճությունը և շարունակ հետ էր քաշվում, կամ 100 000-ներով գերի ընկնում: Կամավոր գերության դեմ էին հատկապես չեխերը, սլովակները, գալիցիացիք, որոնք թշնամի էին ավստրիական պետության և իրենց փրկությունը որոնում էին նրա կործանման մեջ: Ավստրիան ամբողջապես կնվաճվեր, եթե չհասնեին գերմանացիք և քաջ հունգարացիք, որոնք ո՛չ միայն քշեցին ռուսներին իրենց սահմանից, այլև գրավելով Լեհաստանը, մտան բուն ռու-

սական հողերը: Այսպիսով գերմանական ճակատը զորացավ արևելքում՝ հակառակ արևմտյանին, և շատ ավելի ապահով պիտի լիներ, եթե Ավստրիայի այս հաջողությունը չստիպեր Իտալիային բաժանվել իր անվանական դաշնակցից և պատերազմի դուրս գալ նրա դեմ՝ ազատելու համար այն իտալական հողերը, որոնք գտնվում էին ավստրիական տիրապետության տակ (Տրիեստի շրջանը):

Տաճիկների և բուլղարների միջամտությունը պատերազմի ճակատը ավելի լայնացրեց. ռուսները մտան Տաճկական Հայաստան և հայ ազգաբնակչության ազդու օգնությամբ արագորեն առաջանում էին երկրի ներսերը: Եվրոպացիք բանակ հանեցին Սելանիկ՝ օգնելու համար սերբերին և նավատորմ էլ ուղարկեցին Դարդանել՝ գրավելու Պոլիսը: Հույների դժկամակությունը խանգարեց առաջին ծրագիրը. իսկ ռուսների ախորժակները Պոլսին տիրանալու համար՝ ծածուկ պատճառ եղան, որ անգլիացիք իրենց հաջողության վերջին ոռպեներին թողնեին Դարդանելի արդեն նվաճված ամրությունները և հանկարծ հետ քաշվեին: Այսպիսով Արևելքը մնաց անօգնական. Սերբիան և Չերնագորիան ամբողջապես նվաճվեցին. սերբ ժողովուրդը վրեժխնդիր բուլղարներից ահագին ջարդ կրեց, իսկ զորքը Ալբանիայի ձյունապատ լեռներն անցնելով, մեծ նեղությամբ ապաստան գտավ Կորֆու կղզում:

Լեհաստանի, Սերբիայի և Չերնագորիայի նվաճմամբ Գերմանիան ստեղծեց մի ամուր պաշտպանված պետություն, որ սկսելով Հյուսիսային ծովից, անընդմիջաբար գնում էր մինչև Պարսից ծոցը: Այս կողմից վտանգը այլևս վերացված համարելով, գերմանացիք նորից կենտրոնացրին իրենց ուժերը արևմուտք և որոշեցին ամեն գնով կոտրել ֆրանսիացիների դիմադրական ուժերը, քանի դեռ չէր հասած անգլիական խոշոր բանակը, որ նոր միայն սկսել էր պատրաստվել Անգլիայում: Այս նոր արշավանքի դիմադրավայրը դարձավ Վերդենը, ուր երկու կողմերը դեմ առ դեմ բերեցին միլիոնավոր զորք, հազարավոր թնդանոթներ և ինքնաթիռների զանազան տեսակներ: Ամբողջ մի տարի Գերմանիան ամեն ջանք ու հնարք թափեց անցնելու համար այս կետը. բայց Ֆրանսիան այնպիսի դիմադրություն ցույց տվեց, որ թշնամին քառորդ միլիոն զոհ տալուց հետո, որոշեց լքել: Անգլիական մեծ ուժերն արդեն հասած լինելով, դաշնակիցներն անցան հարձակողականի և թշնամու դիրքերը քայլ առ քայլ խլելով՝ քշեցին նրան դեպի հետ:

Գերմանիայի կրիտիկական րոպեին կռվի մեջ մտավ Ռումինիան, որովհետև ստիպում էին նրան թողնել չեզոքությունը և մի կամ մյուս կողմին հարել: Ռումինիան ընտրեց Ռուսաստանի բարեկամությունը, հույս ունենալով, որ հաղթության դեպքում Ավստրիայից կխլի Տրանսիլվանիան, որի ժողովուրդը ռումին էր: Բայց Ռումինիան էլ շուտով ընկճվեց և ամբողջապես ընկնելով գերման ու թուրք լծի տակ՝ երկիրն ավերվեց:

Գերմանայի պատերազմական ձևն էր առհասարակ փոքր տերությունների հետ շուտով վերջացնել հաշիվը, որից հետո խլելով նրանց հարստությունը, ավելի ուժով հարձակվել զորավոր թշնամու վրա: Այսպիսով նա ստանում էր ռամիկ ժողովրդի առաջ հաղթականի և աշխարհակալի անուն, մինչդեռ իրապես օրեցօր սպառվում էին նրա ուժերը, հարստությունն ու պաշարը: Տիրում էր հացի ճգնաժամ: Այդ ժամանակ Գերմանիան, արդեն իբր հաղթական, առաջարկեց հաշտություն: Դա մի վարպետություն էր վերջ տալու համար իր դառն կացության և միաժամանակ շահավետ դուրս գալու կռվից: Բայց դաշնակիցները, որ ծանոթ էին նրա ներքին վիճակին, մերժեցին առաջարկը:

Գերմանիայից անկախ հաշտության մի նշանավոր կոչ արեց Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնը (1917 թ. հունվար 22), հիմնվելով արդարության մի այնպիսի սկզբունքի վրա, որ նոր մարդկության նշանաբանը պիտի դառնա: Այս սկզբունքով ո՛չ մի ազգ իրավունք չպիտի ունենար ճնշելու ուրիշ որևիցե ազգություն, աշխարհի բոլորփոքր ազգերը պիտի գտնեին իրենց ազատությունը, պիտի դադարեր պատերազմական ոգին և զինվորականությունը աշխարհից, և բոլոր մեծ ու փոքր ազգերի ներկայացուցիչներից պիտի կազմվեր Ազգերի լիգան, որ պիտի տար համաշխարհային խաղաղությունը: Մի խոսքով բոլոր ազգերը պիտի կազմեին համաշխարհային դաշնակցությունը:

Վիլսոնի կոչը բուռն համակրանքով ընդունվեց բոլոր մանր ազգերի կողմից. նրան ձայնակից դուրս եկան նաև Անգլիան և ամբողջ քաղաքակիրթ մարդկությունը. բայց ամեն ոք էլ համոզված էր, որ առանց ջախջախելու գերմանական բռնակալությունը՝ այդ խաղաղությունն էլ մի կեղծիք պիտի լիներ:

Այս մերժումներից ավելի կատաղած, Գերմանիան կռիվը հասցրեց հուսահատության և մոռացավ ամեն մի մարդկային իրավունք. նա մտածեց նավապաշարել Անգլիան և կտրել նրան

արտաքին աշխարհից. ամեն մի նավ, ի՛նչ ազգի էլ պատկաներ, թշնամի, բարեկամ ու չեզոք, որ մտնում էր Անգլիա, անխնա պիտի հարվածվեր, առանց ազդարարության, չխնայելով մինչև անգամ ճամփորդ կանանց ու երեխաներին: Ամերիկայի Միացյալ Նահանգները, որ առևտրական սերտ հարաբերության մեջ էր Անգլիայի հետ, խնդրեցին որ փոխվի այս անգութ որոշումը. բայց Գերմանիան անողոք եղավ և ամերիկյան շատ հպատակներ գերմանական սուզանավերով ծովամույն եղան: Սրա վրա զայրանալով Ամերիկան՝ պատերազմ հայտարարեց Գերմանիայի դեմ:

Ճիշտ այդ միջոցին Ռուսաստանում կատարվեց մի այնպիսի մեծ պետական հեղաշրջում, որ ո՛չ միայն պատերազմի, այլև հաջորդ տարիների ընդհանուր պատմության համար ահագին նշանակություն ունեցավ: Պատերազմի սարսափները, ռուսների կրած ծանր պարտությունները, տնտեսական ճգնաժամը, որոնք մեծ մասամբ պետական բարձր պաշտոնյաների, հատկապես կայսրուհու դավաճանությամբ էին առաջացած, շարժեցին ժողովրդական զայրույթ: Մայրաքաղաքում բարձրացավ հեղափոխություն. կայսրությունը տապալվեց և հիմնվեց ժամանակավոր ազատական կառավարություն, որ սկսեց կազմակերպել Սահմանադիր ժողով՝ գծելու համար երկրի նոր Սահմանադրությունը (1917 թ. մարտ 16):

Ռուսաստանի ազատությունը, մանավանդ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջամտությունը գերագույն գրավականն եղան դաշնակիցների հաղթության: Ամերիկան ցույց տվեց խոշոր ոգևորություն. 12 միլիոն երիտասարդ զինվորներ արձանագրվեցին կռվի դուրս գալու. առաջին բանակը, որ կես միլիոն հոգուց էր բաղկացած, մեկնեց Ֆրանսիա. դրա վրա յուրաքանչյուր ամիս շարունակ ավելանում էր քառորդ միլիոն զորք. բացի դրանից, ուղարկվեցին հազարավոր նավեր, ինքնաթիռներ, սուզանավեր, թնդանոթներ, ավտոմոբիլներ, պատերազմական և տեխնիկական ամենաընտիր պիտույքներ, պարեն և միլիարդներով դրամ: Միացյալ Նահանգների օրինակը գրգիռ հանդիսացավ նաև աշխարհի մյուս մեծ ու փոքր պետություններին, որոնք զենք վերցրեցին Գերմանիայի դեմ. այսպես Կուբան, Պանաման, Հունաստանը, Սիամը, Լիբերիան, Չինաստանը և Բրազիլիան, որով Գերմանիայի դեմ կռվող պետությունների գումարն եղավ 19. բացի սրանցից, 11 ուրիշ պետություններ (Բոլիվիան, Գուա-

տեմալան, Հոնդուրասը, Նիկարագուան, Սան-Դոմինգոն, Հաիտին, Չիլին, Կոստա-Ռիկան, Պերուն, Ուրուգվայը և Էկվադորը) կտրեցին իրենց հարաբերությունները Գերմանիայի հետ: Այսպիսով 30 պետություն, այն է մարդկության մեծ մասը դեմ կանգնեց Գերմանիային: Այնքան զզվելի էր դարձել նրա բռնակալ ոգին և անմարդասիրությունը:

Գերմանիայի դեմ կատարված այս ահեղ շարժումն անշուշտ բավական պիտի լիներ անմիջապես ստիպելու նրան, որ զենքերը ցած դներ: Բայց հանկարծ արևելքից ծագեց նրա համար մի այնպիսի նպաստավոր հանգամանք, որին ոչ ոք չէր սպասում և որ գոնե մի տարի երկարաձգեց համաշխարհային պատերազմը...

(Ձեռագրի այս մասում խունացած և բոլորովին անընթեռնելի է դարձած 7 տող. վերջում այլ թանաքով, դեղնավուն ֆոնի վրա, ձախից դեպի աջ բարձրացող թեքությամբ, երեք տողի վրա գրված է. «Բոլշևիզմի ծագումը պետք է դնել առանձին գլուխ. տե՛ս $ 192». այդ հատվածը ավելացված է ձեռագրի վերջում և գրավում է 6 էջ, «Բոլշևիզմ և քեմալիզմ» խորագրի տակ, որ մեքենագրված տեքստում ստացել է $ 267 հերթական N-ը):

Ծայրահեղ սոցիալիստների գլուխն էին կանգնած Լենինը և Տրոցկին, Կամենևը՝ մի առանձին կուսակցություն (բոլշևիկ), հարմար առիթը գտան գործադրելու իրենց գաղափարները, այն է կատարյալ սոցիալական հավասարություն, որ պիտի ձեռք բերվեր հարուստ և ինտելիգենտ դասակարգի ոչնչացմամբ և բանվոր դասակարգի տիրապետությամբ: Կռիվը պայթեց այս երկու դասակարգերի մեջ և բոլշևիկները կառավարության ղեկն իրենց ձեռքը առնելով, սկսեցին անխնա ջարդել հակառակորդներին: Գերմանիայի համար շատ բարեղեպ էր Ռուսաստանի այս ներքին կռիվը. ուստի սկսեց ամեն կերպով քաջալերել այն. գերման քարոզիչներ թափվեցին Ռուսաստան և ավելի ու ավելի առաջ տարին պայքարը: Բոլշևիկների քաղաքական սկզբունքն եղավ հաշտություն Գերմանիայի հետ «առանց հողային գրավումների և պատերազմական տուգանքի, ազգերի ինքնորոշման սկզբունքով»: Այս սկզբունքով Ռուսաստանի բոլոր հպատակ ազգերին իրավունք տրվեց բաժանվելու և անկախ երկրներ կազմելու. այս հիման վրա Ֆինլանդիան, Ուկրաինան, Լեհաստանը և Կովկասը անկախ հայտարարվեցին: Գերմանիան գրավեց Ռիգան, որի բնակչության 1 %-ը գերմանացի էր և դեռ ավելի ներս առաջանալով, վերջապես

ստիպեց բոլշևիկներին կնքել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը (1917 թ. դեկտեմբեր):

Այս դաշնագրով, որ չափազանց ստորացուցիչ էր Ռուսաստանի համար, երկրի մեծ մասն անցնում էր Գերմանիայի ձեռքը. Լեհաստանը, Ուկրաինան, Լիթվանիան, Ֆինլանդիան և Էստոնիան կազմում էին անջատ պետություններ, բայց իրապես բոլորն էլ վասալ Գերմանիային. գերմանական բանակը հասնում էր մինչև Ազովի ծովը և ահռելի քանակությամբ պաշար, ռազմամթերք ու պատերազմական պիտույքներ փոխադրում Գերմանիա: Ռուսաստանի գործը վերջացած համարելով, Գերմանիան իր բանակը դուրս բերեց նրա սահմաններից և ամբողջ ուժով հարձակվեց Ֆրանսիա, մտադիր լինելով վերջ տալու կռվին, քանի դեռ չէին հասած ամերիկյան մեծագույն ուժերը: Մյուս կողմից ավստրիական ուժերը մտան Իտալիա, բոլոր նվաճված տեղերը հետ վերցրեցին և առաջացան մինչև Վենետիկ: Երրորդ կողմից տաճիկները, որ նույն դաշնագրի զորությամբ տեր էին դառնում Կովկասի կարևորագույն մասին, Բաքումիի վրայով առաջացան դեպի Բաքու և Պարսկաստանի ներսերը, ոտքի հանելու համար ամբողջ մահմեդական աշխարհը և մտնելու Թաքարիստան ու Հնդկաստան: Գերմանական բանակը նորից անցավ առաջ և ահռելի հեռաձիգ թնդանոթներով սկսեց ռմբակոծել նույնիսկ Փարիզը:

Դաշնակիցները վերջին անգամ լարեցին իրենց ուժերը. ֆրանսիացի զորավար Ֆոշը խնդրեց Ամերիկայից օգնություն. 2 միլիոն ամերիկացի զորք ճակատը լցվեց. անգլիացիք մահմեդական շարժման առաջը կտրելու համար՝ ուժ տվեցին Միջագետքի և Ասորիքի քաղաքները՝ Բաղդադ, Մուսուլ, Երուսաղեմ, Դամասկոս ու Բեյրութ, որով ձեռք բերեցին Բաղդադի երկաթուղու բոլոր մեծ կայարանները. Բալկաններում ֆրանկո-սերբիական բանակը հույների հետ միացած՝ մտավ Մակեդոնիա, հաղթեց բուլղարներին և ստիպեց նրանց զենքերը հանձնելով՝ հետ քաշվել պատերազմից: Բուլղարիայի լքումը և գերմանական բանակների կրած մեծ պարտությունը ֆրանսիական հողում այլևս կորցրին ամեն հույս, և Գերմանիան իր դաշնակիցների հետ զենքը ցած դնելով՝ հաշտություն խնդրեց (1918 թ. հոկտ. 5):

262. ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Նախորդ գլուխներից մեզ արդեն հայտնի է այն դիրքը, որ բռնել էին մի կողմից Թուրքիան և մյուս կողմից դաշնակից ու համաձայնական պետությունները հայկական հարցի առթիվ: Թուրքիան ցանկանում էր որքան կարելի է խեղդել հայկական հարցը, Գերմանիան թեև իր տնտեսական նվաճումների մեջ կարիք էր զգում հիմնվել միակ վստահելի և ընդունակ հայ տարրի վրա, բայց մյուս կողմից ստիպված էր զիջելու թուրքերին՝ ավելի մեծ շահի ակնկալությամբ: Ընդհակառակը Ռուսաստանն աշխատում էր հայերից ստեղծել մի թումբ գերմանական առաջխաղացության դեմ: Այս դրության մեջ հայերի համակրանքը բնականաբար ռուսների և դաշնակիցների կողմը պիտի լիներ:

Ռուս-տաճկական պատերազմի նախօրյակին, տաճիկները, Գերմանիայի թելադրությամբ, մի ժողով գումարելով Կարինում, առաջարկեցին հայերին անցնել իրենց կողմը, կազմել հայ կամավորական գնդեր, որոնք տաճիկ սպաների ղեկավարությամբ մտնելով Կովկաս, պիտի ապստամբեցնեին հայ ժողովրդին ռուսների դեմ, խոստանալով հաղթությունից հետո կազմել անկախ հայ պետություն Ռուսահայաստանում, որին թերևս կցեին նաև Վանի նահանգը: Հայերը, որոնք մի կողմից վստահ էին դաշնակիցների հաղթության վրա, մյուս կողմից տարիների փորձառությամբ իմանում էին, թե որքան խաբուսիկ են տաճկական խոստումները, մանավանդ որ իրենց աչքի առաջ տեսան երկու վերատեսուչների արձակումը, մերժեցին այս առաջարկը և խոստացան միայն մնալ չեզոք և հավատարմությամբ ծառայել տաճիկ պետության ու բանակին այնպես, ինչպես ծառայում էին Կովկասի հայերը ռուս պետության:

Բայց տաճկական առաջարկի մեջ երկու դիտում կար. համաձայնության դեպքում, Կովկասի հայերն ապստամբելով ռուսների դեմ, պիտի գրգռեին նրանց թշնամությունը և անշուշտ ենթարկվեին մի սոսկալի կոտորածի, որով պիտի վերջանար անկախ Տաճկահայաստանի գլխավոր օժանդակ տարրը, իսկ մերժման դեպքում, տաճիկները պատճառ պիտի ունենային համարելու հայերին անվստահելի տարր և իրավունք պիտի համարեին կոտորել նրանց:

Այս եղավ թշնամության առաջին պատճառը տաճիկ պետության և հայերի միջև: Թշնամությունը շատ ավելի զարգացավ ռուս-տաճկական պատերազմի հայտարարությունից անմիջապես հետո, երբ Կովկասում, հայերը կամավորական խմբեր կազմելով, ռուսական բանակների հետ սկսեցին կռվել տաճիկների դեմ: Այսպես հայերը հայտարարվելով դաշնակիցներին, հատկապես ռուսներին աջակից, վտանգի առաջն առնելու համար տաճիկները որոշեցին ոչնչացնել ամբողջ հայ տարրը տերության արևմտյան ծայրից սկսած մինչև ռուսական ու պարսկական սահմանը: Նախ մեկ գիշերվա մեջ հավաքեցին Պոլսի ամբողջ մտավորականությունը՝ հասարակական գործիչ, գրագետ, բժիշկ, փաստաբան, երեսփոխան, ուսուցիչ և այլն, 500 հոգի, որոնց աքսորելով դեպի Փոքր Ասիա, կամաց-կամաց սպանեցին: Հետո ամբողջ տերության մեջ հավաքեցին բոլոր երիտասարդներին ու մտցնելով տաճկական բանակների մեջ իբր զինվոր կամ բանվոր, բոլորին էլ կոտորեցին: Մնացյալ ժողովրդին՝ ծեր, կին ու երեխա, տեղահանելով՝ քշեցին դեպի Միջագետք, ուր չէին կարող նրանք վտանգավոր տարր դառնալ: Այս տեղահանության միջոցին բոլոր գեղեցիկ կանայք գերվեցին տաճիկ հարեմների մեջ, 4 տարեկանից ցածր մանուկները բաժանվեցին տները և տաճիկ դարձան, իսկ մնացածներն անխնա տանջանքների մեջ, քաղցից, ծարավից և հիվանդություններից հյուծվեցին ու մեռան. մահից ազատվածներին տաճկական սուրը կոտորեց Միջագետքի անապատներում. թե ի՛նչքան հայ ջարդվեց այս անլուր կոտորածների ժամանակ, ճշտիվ հայտնի չէ. թիվը դնում են մեկ ու կես միլիոն. բայց սա միայն ստույգ է, որ Տաճկաստանի միլիոնավոր հայ ժողովրդից **ոչ մի շունչ չմնաց** ամբողջ 6 նահանգներում, Կիլիկիայում և Փոքր Ասիայի մեծ մասում: Ազատվեց միայն Պոլսի և շրջակայքի ազգաբնակչությունը և մի խղճուկ մնացորդ՝ Ասորիքի ու Միջագետքի անբնակ վայրերում, օրհասական վիճակի մեջ (1915 թ.):

Հայ ժողովուրդը, ինչպես միշտ, այս անգամ էլ չընդդիմացավ տաճկական բռնությանց: Մինչև անգամ Զեյթունի հերոսները, հավատալով գերմանական պատվիրակների հավաստիացումներին, կամովին հպատակվեցին տեղահանության հրամանին: Մի քանի տեղ միայն հայերը կազմեցին պատվավոր բացառություն. սրանք են Շաբին-Գարահիսար, Սասուն, Վան և Մուսա-լեռ (Սվեդիա): Շաբին-Գարահիսարի հայերը ստանալով տեղահա-

նության հրամանը և հաստատ իմանալով, որ գնում են դեպի մահ, որոշեցին մեռնել իրենց հայրենի հողի վրա. ծագեց մի հուսահատ կռիվ. ամեն ինչ զենքի վերածվեց. տկար օրիորդներն անգամ քարերով ու փայտերով զինված՝ թշնամու դեմ ելան. տաճիկները կոտորվեցին ու դուրս քշվեցին. պետությունն ստիպվեց Դարդանելից զորք հանել և թնդանոթի բռնելով քաղաքը, մինչև վերջին շունչը կոտորեց և քաղաքը մոխրակույտի վերածեց: Վանի հայերը ապստամբեցին տաճիկների դեմ և հերոսական պայքարի մեջ տիրելով ամբողջ քաղաքին, կոտորեցին մահմեդական ազգաբնակչության և հիմնեցին անկախ պետություն. շուտով ռուսական բանակն առաջացավ, հայերը կամովին քաղաքը հանձնեցին ռուսներին: Սասունի և շրջակայքի հայերը տասնյակ հազարներով բարձրացան լեռը և երկար կռիվներից ու շատ զոհեր տալուց հետո, անցան Կովկաս:

Շատ հանդուգն եղավ Մուսա լեռան (Սվեդիայի) հայոց կռիվը: Սրանք նույնպես չհավատալով տաճիկների խոստումներին, մերժեցին հպատակվել տեղահանության հրամանին և քաշվելով իրենց անառիկ լեռները, որոշեցին կռվել ու մեռնել: Իրենց միացան զեյթունցի 400 կտրիճներ, որոնք հակառակ իրենց հայրենակիցների որոշման, մերժել էին գաղթել և զենքը ձեռքներին բարձրացել լեռները: Տաճկական բանակն արշավեց Մուսա լեռան վրա. ահավոր կռվի մեջ հայերը ջարդեցին նրանց, բայց տեսնելով որ անկարելի էր դիմանալ մինչև վերջ, իջան դեպի ծովեզրը և այնտեղ պատահելով ֆրանսիական նավաբաժնին, նրանց օգնությամբ պատրաստեցին մի նոր ահեղ ճակատամարտ. առաջից հայ քաջերի գնդակները, հետևից ֆրանսիական նավաբաժնի ռումբերը խլեցին տաճիկներից հազարավոր զոհեր. ապստամբները կամաց-կամաց հետ քաշվեցին և ամբողջը՝ 5000 հոգի, նավերը մտնելով անցան Եգիպտոս:

Մեծ էր ոգևորությունը Կովկասում. հայերը վստահ դաշնակիցների հաղթության, հավատացած էին, որ վերջապես կազատվի Տաճկահայաստանը և ռուսական հովանավորության տակ կկազմի ինքնավար երկիր: Այս մտքով արտահայտվում էին նաև ռուսները: 200000 հայեր արդեն իբրև կանոնավոր զինվոր կռվում էին ռուսական բանակներում: Դրանից դուրս պաշտոնապես կազմակերպվեցին կամավորական բանակներ՝ բնիկ կովկասեցի և Կովկաս ապաստանած տաճկաստանցի հայերից: Սկզբում այս բանակների թիվը 4 էր, որոնց ղեկավարներն էին հայտնի հայ

հերոսներից Անդրանիկը, Դրոն, Համազասպը և Քեռին, որոնց ավելացան հետո նաև երկու ուրիշ բանակներ: Մինչև իսկ Ամերիկայից, հայերը գունդ-գունդ գալիս էին նույնիսկ իրենց ծախսով ու զենքով՝ կամավորական շարքերը մտնելու: Բոլոր ճակատներում հայերը կռվում էին քաջությամբ և եռանդով: Կամավորները ռուսական բանակների հետ մի կողմից հասան Պարսկաստանի խորքերը մինչև Քիրմանշահ, մյուս կողմից Մուշ, Բաղեշ, Կարին և Երզնկա: Այստեղ ռուսական բանակը դադար առավ և պատրաստություն էր տեսնում, մի նոր հարվածով արշավելու և գրավելու մինչև Սեբաստիա: Բացի սրանից, հայերը կամավորական խմբերով մտնում էին ֆրանսիական և անգլիական բանակները, կռվելու համար նրանց շարքերում, իրենց դարավոր թշնամու և նրա գործակից գերմանների դեմ:

Հայերի այս անօրինակ եռանդն ու ցույց տված քաջությունը արժանի դարձրեց նրանց «փոքրիկ դաշնակից» տիտղոսին:

Բայց ռուսները հենց առաջին հաջողությունից հետո, ցույց չտվեցին այն վերաբերմունքը, որ պարտավոր էին. նրանք մեծ դժվարություններ էին հանում կամավորության դեմ, մոռացության էին տալիս կամ չէին վարձատրում նրանց քաջագործությունները, խլում ամերիկահայերի բերած զենքերը, դիտմամբ դանդաղեցնում արշավանքը՝ որպեսզի ժամանակ տան տաճիկներին՝ կոտորելու մնացորդ հայերին, իսկ ընդհակառակն ամեն կերպով արգելում էին հայերին թշնամական վերաբերմունք ցույց տալ դեպի «խաղաղ մահմեդական ժողովուրդը», մի քանի հանդուգն կամավորներ նույնիսկ մահվան պատժի արժանացան: Վերջապես ռուսները որոշեցին լուծարել առանձին հայկական կամավորական գնդերը և խառնել ռուսական բանակի հետ, որով և հայերը հուսահատված, թողեցին շարքերը և ցրվեցին: Լքումն ավելի զորացավ, երբ պարզվեց, որ ռուսներն ու ֆրանսիացիք, հակառակ իրենց նախկին հրապուրիչ խոստումներին, գաղտնի որոշում էին կայացրել իրենց մեջ, առաջինները գրավելով մինչև Եփրատ, իսկ երկրորդները Եփրատից սկսած մինչև Միջերկրական: Արդեն ռուսները կազմակերպում էին Եփրատյան կոզակների խմբերը, որով Հայաստանը, առանց հայերի, պիտի դառնար ռուսական մի նահանգ:

Ռուսները հասնում էին իրենց հին նպատակին:

Ի՞նչ եղավ հայոց դերը համաշխարհային առաջին պատերազմում:

Պատմությունը սովորաբար դուրս է բերում մեծ ազգերի գործերը. փոքրերի գործունեությունը կորչում է ամբողջության մեջ: Սակայն ինչ որ էլ լինի պատմաբանների վերաբերմունքը այս աշխարհավեր պատերազմի մասին, անուրանալի է, որ հայերը, հակառակ իրենց փոքր թվին, կատարեցին մի այնպիսի մեծ գործ, որ վճռական ելք ունեցավ ընդհանրապես դաշնակիցների հաղթության և մասնավորապես Անգլիայի հաջողության համար: Այն րոպեին, երբ Տաճկաստանն ու Գերմանիան առաջարկում էին հայերին միանալ իրենց հետ և դուրս գալ ռուսների դեմ, ինչպիսի՞ կացություն պիտի ստեղծվեր համաշխարհային ճակատում, եթե հայերն իրապես համաձայնեին: Կովկասի թուրքերն ամբողջապես նվիրված տաճիկներին, Վրաստանը համակիր, Դաղստանի մահմեդականությունը ապստամբության տրամադիր, Պարսկաստանն ատելությամբ լցված դեպի ռուսները և պատրաստ մի անգամից նետվելու գերմանների գիրկը, և ահա ամբողջ Արևելքը ոտքի ելնելով, ճամփա պիտի տար նրանց դեպի Կասպից ծովը, այնտեղից արագությամբ անցնելու դեպի Թաքարիստան, ցնցելու ամբողջ մահմեդական աշխարհը, ապստամբեցնելու Հնդկաստանը, Աֆղանիստանը, Բելուջիստանը, Եգիպտոսը, Աֆրիկան և այնուհետև էլ ի՞նչ ուժ պիտի կարողանար կասեցնել գերմանա-մահմեդական տիրապետությունը աշխարհում: Հայերն եղան, որ կանգնելով Կովկասի ստորոտում, թույլ չտվեցին մյուսներին էլ դաշնակցել և վանեցին վտանգը մինչև այն րոպեն, երբ գերմանական ուժը խորտակվեց և աշխարհն ազատվեց գերմանաթուրք տիրապետությունից: Այսպիսով հայերն անգլիացիների ձրի վարձկանները դարձան:

263. ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ

Այն ճախորդ քաղաքականությունը, որ ստեղծվել էր ցարական Ռուսաստանում, միանգամից փոխվեց, երբ ազատական կառավարությունն իշխանության գլուխ բարձրացավ: Ազատական կառավարությունը նախ հրաժարվեց Տաճկահայաստանը գրավելու ծրագրից և հայտարարեց նրան անկախ, նույնիսկ համաձայնվելով կցել նրան Ռուսահայաստանի մի որոշ մասը, հատկապես մեր կրոնական կենտրոն Էջմիածինը: Կառավարության այս հայտարարությունը բնականաբար նորից վառեց

հայոց հայրենասիրական եռանդը և լավագույն ապագայի հույսեր ներշնչեց: Նրանք ամեն կերպ աշխատեցին ուժ տալ Հայաստանում կանգնած ռուս բանակին, որ թեև առաջ չէր շարժվում, բայց անհրաժեշտ էր պահպանելու համար հայրենիքի սահմանները և կանգնեցնելու թուրքական առաջխաղացումը: Որոշվեց մինչև անգամ արևմտյան ճակատներում գտնված 150000 հայ զինվորներին ուղարկել Հայաստան, որով այդ սահմանը միանգամ ընդմիշտ ապահովված պիտի լիներ:

Սակայն ազատական կառավարությունը երկար չտևեց Ռուսաստանում. բոլշևիկներն իշխանության գլուխ անցնելով, հայտարարեցին ազգերի ինքնորոշում, որ թեև հասուն և ուժեղ ազգերի համար գերագույն բարիքն էր, բայց մեզ նման փոքր և տկար ազգի համար ուրիշ բան չնշանակեց, եթե ոչ «գլխիդ ճարը տե՛ս»: Սկսեց ռուս բանակի դասալքումը. միլիոնավոր զինվորներ երեսի վրա թողնելով դիրք, զենք, ռազմամթերք, պաշար և ամեն ինչ, փախան իրենց տները: Թշնամու համար բաց էր ճանապարհը դիմելու ու՛ր որ ուզեր: Դասալքումը վտանգավոր էր հատկապես Կովկասի համար՝ արշավող տաճիկների գազանության պատճառով:

Իրերի այս վիճակի հանդեպ Կովկասը որոշեց բաժանվել Ռուսաստանից և կազմեց առանձին վարչություն, որի մայրաքաղաքն եղավ Թիֆլիսը: Միաժամանակ կազմվել էին Կովկասի ամեն մի ժողովրդի համար առանձին Ազգային խորհուրդ, որ մյուսներից անջատ պիտի վարեր իր ժողովրդի ներքին գործերը:

Ռուսների հեռացումը շատ մեծ վտանգ էր նաև դաշնակիցների համար. փոխանակ Բաղդադի վրայով անցնելու Հնդկաստան, գերմանացիք ձեռք բերեցին մի նոր ճանապարհ. դա էր Բեռլին-Բաթումի-Բաքու-Բուխարա ճանապարհը, որ ավելի կարճ ու ավելի էլ ապահով էր: Դաշնակիցները տեսան վտանգը և հակառակ իրենց այն ժամանակվա դժվար կացության, իսկույն որոշեցին դիմել այնտեղ: Անգլիական մի բանակ ճամփա ընկավ դեպի արևելք և բռնելով Կասպից ծովի եզերքը, պատրաստվեց արշավել Բաքու, կտրելու համար թշնամու առաջը: Կովկասում երեք ազգերից կազմվել էին առանձին բանակներ (հայ, վրացի և թաթար), որոնք դաշնակիցների օգնությամբ պիտի կռվեին թուրք և գերմանական արշավանքի դեմ:

Բայց այս երեք տարրերը տարբեր տրամադրություն ունեին. թաթարները ուրախ էին, որ գալիս են իրենց ցեղակից ու կրոնակից

թուրքերը, ուստի ո՛չ միայն չկռվեցին նրանց դեմ, այլ անմիջապես նեթ նրանց կողմն անցնելով, սկսեցին կոտորել փախչող ռուս զինվորներին և զինվել նրանց զենքերով, որպեսզի նրանց հեռացումից հետո կոտորեն իրենց հարևան հայերին: Վրացիք, թեև իրավունք ունեին վախենալու թուրքերի գազանությունից, բայց զգալով իրենց անզորությունը և վստահելով գերման քարոզիչների խոստումներին, շուտով նրանց կողմն անցան և բռնեցին հակառակ դիրք: Մնում էին միայն հայերը, որ այսքան թշնամի ցեղերի միջև, իբրև մի պատվար, պիտի կռվեին ու պաշտպանեին իրենց երկիրն ու Կովկասը՝ Երզնկայից սկսած մինչև Ղարաբաղ և Ատրպատական, որ ռուսներն այնպես լքել էին: Նրանք իրենց հույսը դրեցին իրենց զենքի վրա, հաստատ հավատացած լինելով, որ ուշ թե շուտ հաղթությունը լինելու է դաշնակիցների կողմը և վստահելով անգլիական բանակին, որ Միջագետքից առաջանում էր դեպի հյուսիս և արևելք:

Սակայն, ինչպես միշտ, անգլիացիք այս անգամ էլ ուշացան:

Թուրքերն առաջացան Տրապիզոնի և Երզնկայի կողմից դեպի Կովկաս. հայերը 6 ամիս ամբողջ պաշտպանեցին բովանդակ ճակատը, բացի Տրապիզոնի շրջանից, որ վստահվել էր վրացական զորքերին: Այդ միջոցին սկսվել էր խառնակ դրություն ամբողջ Կովկասում. Թաթարները ռուսներին կողոպտելուց հետո՝ զենքը դարձրին հայոց դեմ. սկսվեց երկուստեք կոտորածը. ճանապարհները կտրվեցին, երթևեկությունը դադարեց և հայերը մնացին բանտարկված իրենց երկրում:

1918 թվականի հունվարից սկսվեց տաճկական արշավանքը. նրանք դուրս բերեցին 30000-անոց ընտիր բանակ, որ կազմված էր Պաղեստինի և Դարդանելի հին փորձված զինվորներից, որոնց օժանդակում էին նաև տեղացի թուրքերն ու քուրդերը: Հայերը, հերոսական կռվից հետո, գերազանց ուժերի ճնշման տակ, հետզհետե թողնում են իրենց դիրքերը, քայլ առ քայլ պաշտպանվելով ու նահանջելով դեպի Կովկաս. ճանապարհին հայերը կոտորում են տեղական թշնամի տարրերին, որքան հնարավոր էր փչացնում են ճանապարհները, ոչնչացնում ռազմամթերքն ու պաշարը, գաղթեցնում հայ ժողովրդին դեպի Կովկաս. այնուամենայնիվ տաճիկների ձեռքը: Իրար հետևից ընկնում են Երզընկան, Կարինը, հայերը քաշվում են Սարիղամիշ, ուր 11 օր կռվում են տաճիկների առաջխաղացման դեմ: Հայերը Թիֆլիսից կազմա-

կերպված գալիս են նրանց օգնության: Նույն միջոցին վրացիք, որոնց հանձնված էր Տրապիզոնի գիծը, առանց կռվի թողնում են ճակատը և հետ քաշվում: Տաճիկները գրավում են Բաթումին: Այսպիսով ճակատի աջ թևը բացվում է, և հայերը ստիպվում են թողնել նաև Սարիղամիշը, որ այրելով և պայթեցնելով, քաշվում են Կարս: Անդրկովկասյան կառավարությունը, որ վարում էր վերին իշխանությունը, հրամայում է հայերին թողնել նաև Կարսը և համաձայն Բրեստ-Լիտովսկի դաշնագրի, քաշվել Ախուրյանի մյուս ափը: Հայոց բանակը, որի հարաբերությունը մինչև անգամ Թիֆլիսի հետ կտրված էր, ստիպվում է գործադրել կենտրոնական իշխանության հրամանը: Այսպես վրաց պատճառով հայերը թողնում են Կարսի զորավոր դիրքերը և քաշվում Ալեքսանդրապոլ:

Բրեստ-Լիտովսկի դաշնագրի գործադրությամբ պետք էր կարծել, որ տաճիկները բավարարված էին: Շուտով երևաց սակայն, թե գերմանացիք և տաճիկները սարքել էին այս բոլորը այն չար մտադրությամբ, որ կարողանան Կովկասի բանալին առանց կռվի ձեռք բերել, որից հետո արդեն կարող էին գրավել ամբողջ երկիրը: Տաճիկներն անակնկալ կերպով հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա. հայերն իրենց անհուն պաշարը թողնելով թշնամուն, փախան: Այստեղ բանակը բաժանվում է երկուսի. մեկ մասը քաշվում է դեպի Հյուսիս՝ Լոռի, մյուս մասը դեպի հարավ՝ Երևան: Տաճիկները կրկնակի ուժով դիմում են նրանց վրա: Հայերը գիտենալով, որ իրենց կյանքի և մահու հարցն է դրված իրենց առջև, մղում են մի այնպիսի ճակատամարտ, որ հիացնում է նույնիսկ թշնամիներին: Ղարաքիլիսեի առջև, 4 օր տևող ճակատամարտում, թուրքերը կրում են ահագին ջարդ, բայց հայերը թնդանոթ չունենալով և սպառելով մինչև վերջին փամփուշտը, տեղի են տալիս թշնամու մեծ ուժի առաջ: Հարավում, Սարդարապատի դաշտում, ընդհակառակը հայերը, վերջին հուսահատության մեջ, այնպես են կոտորում տաճիկներին, որ նրանք թողած ամեն բան, փախչում են Ալեքսանդրապոլ:

Պատմական այս երկու ճակատամարտները որոշում են հայոց բախտը:

Այս միջոցին գերմանական մի զորամաս իջել էր Վրաստան: Վրացիք, տեսնելով տաճիկների առաջացումը դեպի Թիֆլիս, իսկույն մտան գերմանացիների հովանավորության տակ և Անդրկովկասյան կառավարությունից հեռանալով, Վրաստանն

անկախ հայտարարեցին: Նրանց հետևեցին նաև Ադրբեջանն ու Հայաստանը: Հայոց ազգային խորհուրդը, որ նստում էր Թիֆլիսում, հռչակեց Հայաստանը անկախ պետություն (28 մայիս): Եվ տաճիկները, որ Կովկասյան հարցի առթիվ ընդհարվել էին գերմանացիների հետ, Ղարաքիլիսեի և Սարդարապատի ճակատամարտներում ահագին կորուստներ կրած, ստիպվեցին ճանաչել Հայաստանի անկախությունը, որ և հաստատեցին Բաթումիի նոր դաշնագրով (հունիս 4):

264. ԲԱՔՎԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Կարսն ու Ալեքսանդրապոլը գրավելուց և Երևան-Ջուլֆա երկաթուղու իրավունքը ձեռք բերելուց հետո, տաճիկները նպատակ դրեցին մեկ կողմից առաջանալ դեպի Թավրիզ և մյուս կողմից դեպի Բաքու: Այս այն վերջին կետն էր, որից հետո ամբողջ մահմեդականությունը ոտքի կանգնեցնելով, պիտի սկսեր Հնդկաստանի արշավանքը:

Հայաստանն իրապես նվաճված և անուժ էր դիմադրելու և ըստ երևույթին տաճիկները կարող պիտի լինեին իրենց ծրագիրն անարգել գործադրելու. բայց ահա նորից, երեք կետի վրա հայերը ծառացան նրանց դեմ. Ուրմիա, Զանգեզուր և Բաքու:

Տաճկական արշավանքի ժամանակ, երբ Երզնկան, Կարինը և Բաթումին ընկնում էին իրար հետևից, Արևելյան Հայաստանի ժողովուրդը ծանր դրության մեջ ընկավ. Ալաշկերտը սահմանի մերձավորության պատճառով կարողացավ փախչել Կովկաս. Վանը մնաց մենակ և ամեն կողմից պաշարված: Վանեցիք իրենց հույսը դրել էին անգլիական բանակի վրա, որ Մուսուլի կողմից պիտի առաջանար դեպի հյուսիս. բայց այս հույսերը չարդարացան. և հայերը, միացած քաջ ջելօների* հետ, որոնց գլուխն էր կանգնել իրենց կաթողիկոս Մար-Շիմոնը, թողեցին քաղաքը: Մի քանի հազար հոգի հազիվ կարողացավ անցնել Կովկաս, մյուսները, 12000 հոգի զինվոր և ժողովուրդ, անցան Ուրմիայի շրջանը: Այս շրջանի հայերն ու ասորիները, միացած սակավաթիվ ռուսների հետ, ուժեղ կերպով դիմադրում ու պաշտպանում էին շրջանը ասպատակող տաճիկ բանակի, քրդերի և տեղացի

* ջելօ - ասորի (խմբ.):

պարսիկների դեմ: Տաճիկները գրավեցին Վանը և առաջացան դեպի Ուրմիա: Քրիստոնյաների բանակը կազմում էր մի պատկառելի զորություն, որ անշուշտ հաջողությամբ պիտի դիմադրեր տաճիկներին, եթե հասներ անգլիական օգնությունը: Բայց անգլիացիք չեկան:

Քրիստոնյա բանակը երկու ճանապարհ ուներ. կա՛մ իջնել հարավ և միանալ անգլիական բանակին, կա՛մ բարձրանալ հյուսիս և Արաքսի վրայով անցնել Կովկաս: Այստեղ էր Անդրանիկը, որ չհպատակվելով Բաքումիի դաշնագրին, անցել էր Զանգեզուր և Ղարաբաղ, և այնտեղ, լեռնականներից կազմելով մի կտրիճ բանակ, արշավում էր աջ ու ձախ, մաքրելով այդ շրջանները թուրքերից և սպասելով անգլիացիների գալուստին, որպեսզի գրավի Ալեքսանդրապոլը և հետևից կտրի Բաքվի տաճկական բանակը: Անդրանիկը եկավ մինչև Նախիջևան և Խոյ, բայց չգտավ հայոց հետքը: Ուրմիայի բանակը դժբախտաբար ձախորդ որոշումն էր տվել իջնելու հարավ և բազմաթիվ կռիվներ մղելով տաճիկների ու քրդերի դեմ, վերջապես հասել էր անգլիացիներին: Անգլիացիք տարան նրանց Բաղդադ, ուր և պահեցին մինչև պատերազմի վերջը: Այսպիսով Ուրմիայի պաշտպանության գիծը կտրվեց, տաճիկները գրավեցին Թավրիզը և ամուր կերպով հաստատվեցին Ատրպատականում, իրենց բարեկամ թուրքերի և քրդերի մեջ:

Այժմ մնացել էր միայն դիմադրության մի կետ, որ էր Բաքուն: Այստեղի բնակչությունը բաղկացած էր թուրքերից, ռուսներից, հայերից և հրեաներից: Առաջինների տրամադրությունը ամբողջապես տաճիկների կողմն էր. արդեն մարտ ամսին նրանք ապստամբություն էին բարձրացրել և ուզում էին քաղաքի իշխանությունն իրենց ձեռքը գցել. մոտ 10000 թուրք կոտորելով՝ խաղաղությունը վերահաստատեցին: Նման շարժումներ տեղի ունեցան նաև նահանգի զանազան կողմերը, Շամախի, Նուխի, Գանձակ, որոնց մեջ թուրքերը մեծամասնություն էին կազմում: Թուրքերը կոտորում էին ոչ միայն հայերին, այլև ռուսներին և մալաքաններին: Շարժումը թեև խիստ ուժեղ, բայց վերջին խոսքը սովորաբար քրիստոնյաների կողմն էր լինում: Երբ տեղի ունեցավ Բաքումիի դաշնադրությունը, Բաքվի իշխանությունը մերժեց ճանաչել այն և հայոց ու ռուսների միացյալ բանակը ճանապարհ ընկավ՝ կանգնեցնելու տաճկական արշավանքը դեպի Արևելք:

Հաջողությունն սկզբում մերոնց կողմն էր. բայց տեղական թուրքերի օգնությունն ամեն կողմ, հրեաների լրտեսությունը և շատ ռուսների ու վրացիների դավաճանությունը պատճառ եղան, որ մեր բանակը հետզհետե հետ քաշվեր և վերջապես գար ամրանար Բաքվի թերակղզում:

Այս վտանգավոր րոպեներին, երբ ռուսական բանակը լքված և կռվելու անտրամադիր, Գանձակն ու Դաղստանը ապստամբած և երկու կողմից ճանապարհները կտրած, բուն Ռուսաստանը բոլշևիկյան վայրիվերումների մեջ տատանվելով և անկարող որևէ իրական օգնություն հասցնելու Բաքվին, ամենամեծ գործը կատարեցին հայերը: Բանակի մեծագույն տոկոսը հայերն էին կազմում. հայտնի մարտիկներ, իրենց կամավորական խմբերով, օժանդակում էին նրանց: Հայոց Ազգային ժողովն ամբողջապես իրեն դրել էր բանակի տրամադրության տակ: Սկսվեց քաղաքի ռմբակոծությունը՝ տեղացի թուրքերի և հրեաների ցուցումներով: Տաճիկները գիտեին, որ քաղաքի ամենամոլեռանդ պաշտ-պանները հայերն են, ուստի քանիցս պաշտոնապես դիմում արեցին նրանց որ հանձնեն քաղաքը, խոստանալով որ այդ պարագային ո՛չ մի կոտորած չի լինի և հայերի թաղերը կառնվեն միջազգային եվրոպական հսկողության տակ: Հայերը մերժեցին առաջարկը: Թուրքերը հարձակվեցին կատաղությամբ. նրանք նույնիսկ գրավեցին քաղաքի հեռավոր թաղերը. այստեղ առաջ նետվեց սեբաստացի հերոս Մուրադը և իր անձը զոհելով, փրկեց քաղաքը գրավումից: Տաճիկները ջարդվեցին և հետ քշվեցին:

Հայերը պահանջում էին հրավիրել անգլիացիներին, որ արդեն հասած Էնզելի, հրավերի էին սպասում մտնելու Կովկաս: Բոլշևիկները չէին համաձայնվում դրան, համարելով անգլիա-ցիներին իմպերիալիստ, իսկ նրանց արշավանքը իբրև մի վտանգ բոլշևիկյան շարժման դեմ: Վերջապես ժողովուրդն ավելի լավ համարեց կանչել անգլիացիներին և հրավիրեց նրանց քաղաք:

Անգլիացիների գալուստը մեծ քաջալերություն եղավ կռվողների համար. տաճիկներն արդեն բավական հետ քշված, կարելի պիտի լիներ ամբողջապես վանել նրանց Կովկասից, եթե անգլիացիք կարողանային օգտագործել հայ բանակի կորովն ու տրա-մադրությունը, մանավանդ որ զորավար Անդրանիկը Ղարաբաղի բանակով պատրաստ էր Եվլաղից կտրել տաճիկների թիկունքը: Բայց անգլիացիք արդեն բավական քիչ, գործի մեջ դանդաղ,

վախեցան անելու այդ խիզախ քայլը և տաճիկները նորանոր ուժեր փոխադրելով, նոր հարձակումներ սկսեցին: Անգլիացիք փախան, որից հետո հեռացան նաև ռուսները և վերջապես հայերը. 40000 հայ գաղթեց դեպի Պարսկաստան և Ռուսաստան: Հենց որ տաճիկները գրավեցին քաղաքը, տեղական թուրքերի և հրեաների հետ միացած, կոտորեցին 20000 հայ և բոլորի տներն ամբողջապես կողոպտեցին: Տաճիկները Բաքվից առաջացան մինչև Դաղստան, ուր մի կոտորած ևս սարքեցին այնտեղ ապաստանած հայերի մեջ:

Բաքուն վերջին կայանն էր. նրա գրավման էին վերապահել տաճիկներն ու գերմանացիք Հնդկաստանի արշավանքը:

Բայց տաճիկները մի ուրիշ սոսկալի ծրագիր էլ ունեին հայության համար:

Փակելով հայերին Հայաստանի փոքր շրջանում և արգելելով ամեն ելումուտ ու չթողնելով որևիցե ներածություն, նրանք նպատակ ունեին ամբողջ հայությանը սովամահ անելով՝ ոչնչացնել: Այս նպատակի գործադրության պիտի ձեռնարկեին Բաքվի գրավումից հետո. ուստի Բաքվի հայոց դիմադրությունը եղավ, որ հետաձգեց դաժան ծրագրի գործադրությունը, մինչև որ Գերմանիան պարտվելով Արևմուտքում, համաշխարհային առաջին պատերազմը վերջ գտավ և հայերն ազատվեցին իսպառ բնաջնջվելուց:

265. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հաղթականների պահանջը և ազգերի իրավունքը որոշելու համար պատերազմից հետո տեղի ունեցան զանազան ժողովներ, որոնցից գլխավորներն են Վերսալի և Սևրի ժողովները: Առաջինը որոշեց եվրոպական պետությունների սահմանները, իսկ երկրորդը՝ Տաճկաստանի: Ահա թե ի՛նչ վճիռներ տրվեցին.

Գերմանիայի, Ավստրիայի և Ռուսաստանի լեհական գավառներից կազմվեց Լեհական անկախ պետություն:

Ավստրիայի հողերից կտրվելով կազմվեցին անկախ Չեխոսլովակիան և Հունգարիան:

Ռումինիան ստացավ Ռուսաստանից Բեսարաբիան և Ավստրիայից Տրանսիլվանիան:

Սերբիան միանալով Չերնոգորիայի հետ և ստանալով Ավստրիայից Բոսնիան, Հերցեգովինան և Դալմացիան՝ կազմեց նոր պետություն Յուկոսլավի (Հարավսլավիա) անվամբ:

Ռուսաստանի հյուսիսարևմտյան կողմերում կազմվեցին երեք անկախ պետություններ՝ Ֆինլանդիան, Էստոնիան և Լիտվիան:

Գերմանիայից խլվեցին, բացի լեհական գավառներից, Էլզաս-Լոթարինգիան, որ միացավ Ֆրանսիային և Շլեզվիգ-Հոլշտայնը, որ միացավ Դանիային: Խլվեցին նույնպես բոլոր գաղութները և բաժանվեցին Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի միջև:

Ավստրիայից, բացի վերոհիշյալներից, խլվեցին նաև հարավային իտալական գավառները և միացան մայր երկրին: Մնացած փոքր Ավստրիան, որ պարունակում էր միայն գերմանական հողերը, իրավամբ ուզեց կցվել Գերմանիային, բայց արգելվեց:

Բալկաններում Ալբանիան մնաց անկախ պետություն:

Տաճկաստանից Արաբիան, Միջագետքը, Պաղեստինը, Ասորիքը դարձան հովանավորյալ պետություններ, առաջին երեքը Անգլիայի, իսկ վերջինը Ֆրանսիայի թևարկության տակ: Կիլիկիան տրվեց Ֆրանսիային, Ադալիան Իտալիային, Զմյուռնիայի շրջանը անցավ Հունաստանին, Պոլիսը գրավվեց դաշնակից բանակով, իսկ Քուրդիստանը և Հայաստանը անկախ հայտարարվեցին:

Այս բոլորից դուրս պարտյալների վրա դրվեց մեծագումար տուգանք, կրճատվեց նրանց զինվորական ուժը մեծ չափերով, իսկ Գերմանիայից, որ աշխարհավեր պատերազմի գլխավոր դերակատարն էր, խլվեց բոլոր ռազմամթերքը, զենքը, սավառնակները, զրահավորները և այլն:

Բայց ինչ որ պատերազմի լավագույն բարիքը պիտի համարվեր, դա էր Ազգերի Լիգան կամ Դաշնակցությունը, այն է բոլոր մեծ ու փոքր ազգերի ներկայացուցիչներից կազմված միջազգային մի ատյան, որ պաշտոն ուներ բոլոր ազգերի վեճերը հարթելու:

Այն բոլոր փոփոխությունները, որոնք նշանակեցինք վերևում, հեշտությամբ չգործադրվեցին. մանր ազգերը հազիվ ազատված, սկսեցին սահմանային վեճեր, որոնք հանգեցին հետո պատերազմի: Այսպես Լեհաստանի և Գերմանիայի, Լեհաստանի և Լիտվանիայի, Յուկոսլավիայի և Ալբանիայի, Իտալիայի և Յուկոսլավիայի միջև և այլն: Բայց այս բոլոր պատերազմները մեծ ծավալ չստացան. Լիգան վրա հասավ և իրավարարությամբ վեճերը հարթեց վերջացրեց: Եվ կարող ենք ասել, թե աշխարհի խաղաղությունը կատարյալ պիտի լիներ, եթե չլիներ մի կողմից բոլշևիզմը Ռուսաստանում և մյուս կողմից քեմալիզմը Տաճկաստանում:

266. ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Հայաստանն անկախ հայտարարվելուց հետո, Թիֆլիսում կազմված հայկական առաջին կառավարական խորհուրդը Հովհաննես Քաջազնունու նախագահությամբ մտավ Երևան մայրաքաղաքը և բացվեց հայոց առաջին Խորհրդարանը (1918 թ. օգոստոս 1):

Հայաստանը ներկայացնում էր այս միջոցին աշխարհի ամենաթշվառ անկյունը. նա մի կղզի էր, կտրված ամեն մի արտաքին հարաբերությունից. տաճիկները բռնել էին նրա չորս կողմը, Ալեքսանդրապոլից սկսած մինչև Ջուլֆա և օրեցօր սպառնում էին մնացյալին. վրացիք և թաթարները հայոց թշնամի, ռուսն անզոր, դաշնակիցները հեռու, երկաթուղին գրավված, երկիրը լցված ամեն կողմից թափվող փախստականներով, իսկ սովն ու տիֆը հնձում էին ժողովրդին անխնա: Դրությունն սկսեց լավանալ այն ժամանակ, երբ դաշնակիցները գրավեցին Պոլիսը և հրամայեցին տաճիկներին հեռանալ Հայաստանից: Տաճկական բանակը թողեց Կովկասը և քաշվեց 1914 թվականի ռուս-տաճկական սահմանը, տանելով իր հետ ինչ որ կար երկրում, նույնիսկ տների դռներն ու պատուհանները: Հայերը գտան բաց դուռ՝ հարաբերության մեջ մտնելու համար Եվրոպայի և Ամերիկայի հետ և պարենավորելու սովահար ժողովրդին: Արտասահմանի հայերն սկսեցին թափել իրենց օգնությունը, ինչ ձևի տակ էլ լինի: Անասելի է սակայն այն օգնությունը, որ արեց Ամերիկան Հայաստանին: Թե՛ պետությունը, թե՛ անհատները, թե՛ ժողովուրդը և թե՛ բարեգործական և հայասեր զանազան ընկերություններ Հայաստան էին հասցնում ցորեն և այլ անհրաժեշտ պիտույքներ: Պետությունը կնքեց երկար ժամանակով փոխառություն նոր հայ կառավարության հետ: Ամերիկացիք իրենց ձեռքն առին նաև ամբողջ հայ որբերի խնամակալության գործը: Մի խոսքով Ամերիկան եթե չլիներ, հայությունը ոչնչացած էր:

Հազիվ տաճիկները քաշվել էին և հայերը սկսել էին մի քիչ ազատ շունչ քաշել, սկսեց թշնամությունը հայոց և հարևան նորակազմ պետությունների միջև: Նախ՝ վրացիք չէին ուզում հայոց հանձնել Լոռի և Ախալքալաք գավառները, որոնք ո՛չ միայն պատմականորեն Հայաստանին էին պատկանում, այլև այժմ էլ

ամբողջապես հայերով են բնակեցված: Ընդհակառակը իջնելով հարավ, պահանջում էին մինչև Սևանա ծովի եզերքը: Բացի սրանից, վրացիք չէին թողնում, որ որևիցե հայ ազգային հարստություն, որ գտնվում է վրացական հողի վրա, նույնիսկ թիֆլիսեցի մի հայի սեփականությունը կազմող որևէ հայերեն գիրք կամ այլ ինչ տարվի Հայաստան: Վերջապես վրացիք արգելք եղան, որ Եվրոպայից կամ Ամերիկայից ուղարկված ցորենը անցնի Վրաստանի միջով: Այս պարագային հայերին մնում էր կամ անոթի մեռնել և կամ իրենց իրավունքը զենքով պաշտպանել: Սկսեց հայ-վրացական պատերազմը. հայերը երեք օրում գրավեցին բոլոր տեղերը և պատրաստվում էին Թիֆլիսի վրա արշավելու, երբ մեջ մտան անգլիացիք, որոշեցին մի չեզոք գոտի երկու երկրների միջև և պատերազմին վերջ տվեցին:

Այնուհետև հայերն անգլիացիների օգնությամբ սկսեցին լրացնել իրենց սահմանները՝ հարավից և արևմուտքից. Կարսում տեղացի թուրքերը օսմանցիների դրդմամբ կազմել էին անկախ հանրապետություն. անգլիացիք ձերբակալեցին այդ կառավարության անդամներին և հրավիրեցին հայերին գրավել երկիրը. 1919 թվականին հայկական բանակը գրավեց Կարսը, Կաղզվանը, Արդահանը, մյուս կողմից Նախիջևանն ու Ջուլֆան: Պարսկաստանում գտնված Ջուլֆա-Թավրիզ երկաթուղու գիծը դրվեց հայոց պետության իրավասության տակ և սկսվեց պաշտոնական հարաբերություն Հայաստանի ու Պարսկաստանի պետությունների միջև:

Այդ ժամանակ վեճ սկսվեց Ադրբեջանի և Հայաստանի միջև Ղարաբաղի և Զանգեզուրի համար. այս երկու գավառները, որ նույնպես զուտ հայկական են և պատկանում են Հայաստանին, պահանջում էր Ադրբեջանը, առարկելով թե նրանք մեծամասնությամբ բնակեցված են թուրքերով: Տեղացի հայերը չեն համաձայնվում միանալ Ադրբեջանին: Սկսվում է պատերազմը: Բաքվի կառավարությունը մի քանի անգամ ուղարկում է իր մարզված բանակները ռուս սպաների և տաճիկ զինվորականների ղեկավարությամբ: Հայաստանը չէր կարող տեղացիներին օգնության հասնել, բայց տեղացի քաջ հայերը միանալով այնպես են դիմադրում ու կոտորում նրանց բանակներին, որ Ադրբեջանը վերջապես ձեռք է քաշում իր մտադրություններից: Ահա այդ միջոցին պայթում է ապստամբությունը նույնիսկ Հայաստանի ներսում. Երևանից քիչ արևմուտք, Մեծ Վեդիից սկսած մինչև

պարսկական սահմանը, թուրքերն ապստամբում են և հիմնում անկախ կառավարություն. ապստամբության գլխավոր պատնեշն է լինում Բոյուք-Վեդին, որ հայերը 2 ամիս կռվելով հանդերձ չեն կարողանում գրավել: Մյուս կողմից, տաճիկներն սկսում են ոտնձգություններ անել հարավային սահմանների վրա. հայերը հասնում են ամեն կողմ, սանձում ապստամբներին, կասեցնում թուրքերին ու տաճիկներին և մյուս կողմից հոգ տանում ներքին բարեկարգության և պետության ամրապնդման գործին:

Ի՞նչ կարելի էր ակնկալել այն փոքր ժողովրդից, որ դարավոր ստրկությունից զարթնած, ահռելի կոտորածներից նոր շունչ առած, սկսում էր միայն ազատ քաղաքացու կյանք վարել: Հայ նորակազմ պետությունը շատ բաների կարոտություն ուներ. ամենից առաջ լուսավորության և քաղաքակրթության գործը բարձրացնել, ավերակները վերաշինել, դպրոցներ, արհեստանոցներ, գործարաններ բանալ, աղքատ ժողովրդին գործ հայթայթել, ամեն կերպով հետ մնացած արհեստները ծաղկեցնել և այլն: Սրա համար երկիրը պետք ուներ կարող ձեռքերի, հմուտ պաշտոնյաների: Դժբախտաբար հայերը ռուսական կառավարության ժամանակ պաշտոններից դուրս վտարված լինելով, թե՛ զինվորական և թե՛ քաղաքական ասպարեզներում հմուտ ու փորձված մարդիկ չունեին: Եղածներն էլ գրեթե ռուսացած և հայերեն լեզվին ու կյանքին անհմուտ մարդիկ էին: Պետությունն աշխատեց որքան կարելի է օգտվել այնպիսիներից, հետզհետե մարզելով ու հայ կյանքին մոտեցնելով օտարացած ուժերը: Նա կոչ արեց արտասահմանի հայության, որպեսզի ամեն կարգի հմուտ մարդիկ գային Հայաստան: Դժբախտաբար այս կոչին քչեր միայն պատասխանեցին, որովհետև դեռ երկիրը բարգավաճ վիճակի մեջ մտած չէր: Հետաքրքրական է նկատել, որ նույնիսկ օտար մարդիկ, օրինակ ռուսներ և լեհեր, մնացին Հայաստանում և հայերեն սովորելով՝ մտան հայկական ծառայության մեջ: Սակայն ինչ որ ամենից ավելի կարևոր է, դա այն է, որ հայ պետությունը պահանջեց վտարել ռուսերենի գործածությունը հայոց պետական շրջանակներից, ինչ որ անցյալի ցավալի հիշատակն էր, և մաքրել երկիրը օտար տարրերից: Այս կողմից ժամանակը մեծ բան էր արել: Պատերազմի ժամանակ տաճկահայերից 300000 հոգի գաղթելով Հայաստան, ինքնին ավելացրել էին հայ բնակչության տոկոսը: Մյուս կողմից կռիվների ընթացքում, երբ տաճիկներն այնպիսի գազա-

նային վերաբերմունք էին ցույց տվել հայերին, հայերն էլ աշխատել էին մասամբ նույնը անել Ռուսահայաստանի սահմաններում և Երևանի շուրջը հատկապես շատ վայրերում ոչնչացրել էին թուրքերին: Վերջապես հայ կառավարությունը հատուկ հոգ տանելով այս մասին, դիմեց Ադրբեջանի կառավարության և առաջարկեց փոխանակել Ադրբեջանի հայերին Հայաստանի թուրքերով: Հայաստանի թուրքերն իրենք էլ զգալով, որ իրենց դարն անցել է, աշխատում էին հեռանալ Հայաստանից և խմբերով գաղթում էին Ադրբեջան, մասամբ էլ Տաճկաստան և Պարսկաստան: Այսպիսով ահա Հայաստանի թուրքությունը չափազանց պակասեց և հայերը կազմեցին այնպիսի տոկոս, որի նմանը հարյուրավոր տարիներից ի վեր երբեք չէին տեսել:

Այս բոլոր գեղեցիկ գործերի պսակն եղավ այն օրը, երբ դաշնակից պետությունները ճանաչեցին Հայաստանի իրավական գոյությունը, հայերը հայտարարեցին պաշտոնապես անկախ Հայաստանի գոյությունը, որ և տոնվեց մեծաշուք հանդեսներով և թնդանոթի 101 հարվածների որոտով (1920 թ. հունվար 24):

267. ԲՈԼՇԵՎԻԶՄ ԵՎ ՔԵՄԱԼԻԶՄ

Համաշխարհային պատերազմի վայրիվերումների ժամանակ էր, որ ծնվեց բոլշևիզմը Ռուսաստանում. Գերմանիայի պարտությամբ վերջացավ Առաջին համաշխարհային պատերազմը և Եվրոպան քաղաքական արհավիրքներից ազատվեց: Սակայն այժմ էլ սկսվեց մի ավելի խոշոր շարժում՝ համաշխարհային հեղափոխությունը, որ իր առաջ կետ նպատակի էր դրել բոլշևիզմը: Ռուսաստանը դուրս եկավ այս ահավոր ու տիեզերական պատմության մեջ չտեսնված բանը գործադրելու: Բնականաբար Ռուսաստանը, որ պատերազմի ընթացքում այնպես քայքայվել ու սնանկացել էր, չէր կարող մենակ կատարել այս շարժումը: Բայց նա հավատացած էր, որ Եվրոպայի, ինչպես և աշխարհի ուրիշ զանազան ժողովուրդների տնտեսական վիճակը այնպես քայքայված, բանվորական դասակարգի մտքերը այնպես պատրաստված ու գերգրգռված են, որ բավական է կայծը տալ և ահա պիտի ծագի համաշխարհային հեղափոխության հրդեհը: Գլխավոր միապետական կառավարությունը, որի դեմ Ռուսաստանը ուզում էր չափվել, դա Անգլիան էր: Եվ իրոք, Անգլիան լինելով

ամենամեծ և ամենահարուստ պետությունը, պատերազմի մեջ նվազագույն զոհերը տալով հանդերձ ամենամեծ պատառները ձգելով իր ձեռքը, ունենալով իր ձեռքին նվաճված ու ճնշված ժողովուրդների ահագին թիվ, Ռուսաստանի կարծիքով ներկայացնում էր ամենահարմար վառելանյութը: Հնդկաստանը ներկայացնում էր նրա ամենաթույլ կողմը. ավելացնենք նրա վրա մահմեդական աշխարհը՝ Միջագետք, Պաղեստին, Եգիպտոս, Արաբիա և Պարսկաստան, որոնք այսպես թե այնպես ուզում էին թոթափել անգլիական լուծը: Անգլիայի քայքայմամբ, քայքայվելու էր նաև ամբողջ աշխարհի միապետական կառավարությունների սիստեմը, փոխվելու էր հարուստ դասակարգի տիրապետությունը և սկսվելու էր բանվորների տիրապետությունը:

Մեկնելով այս ելակետից, ռուսական բոլշևիզմը դառնում էր Անգլիայի ոխերիմ հակառակորդը և բոլոր այն ազգերը, որ հակառակ էին Անգլիային, դառնում էին ռուսների բարեկամ: Ռուսները չէին կարող սակայն դուրս գալ Անգլիայի դեմ արևմուտքից. ծովի և եվրոպական մայր ցամաքի վրա նրանք պիտի հանդիպեին շատ ուժեղ դիմադրության թե՛ Անգլիայի և թե՛ ուրիշ մեծ ու փոքր պետությունների կողմից, որոնք բոլշևիզմի վտանգից վախեցած՝ պիտի բռնեին Անգլիայի կողմը և նրա հետ միասին պիտի բարձրացնեին իրենց զենքը Ռուսաստանի դեմ: Կռվի լավագույն տեղը և Անգլիայի ամենաթույլ կողմը արևելքն էր, հատկապես Միջագետքը, Պարսկաստանն ու Հնդկաստանը: Եվ ահա այս նշանաբանով շարժվեցին ռուսները դեպի առա՜ջ:

Անգլիան զգում էր Ռուսաստանի նպատակը, ուստի աշխատում էր ամեն կերպ հեռացնել վտանգը. մերթ նա ուժ էր տալիս Ռուսաստանի միապետական կամ հակաբոլշևիկ տարրերին և կռվի դուրս բերում ռուսների դեմ, մերթ Եվրոպայի բանվորության կարծիքը հանում նրանց դեմ, մերթ բարեկամության և առևտրական հարաբերությունների դռներ բաց անում ռուսների հետ և վերջապես ամեն կերպ աշխատում ձգձգել գործը, հաստատ իմանալով, որ հեղափոխական բոլոր շարժումները ուժեղ են միայն իրենց առաջին թափին:

Բոլշևիկները կարողացան վերջապես ջնջել բոլոր ներքին դժվարությունները, ապստամբներին հաղթեցին ու երկրից դուրս վտարեցին, ոչնչացրին ազնվականության բոլոր իրավունքները, խլեցին նրանց հարստությունը, և երբ իրենց զգացին զորեղ,

ճանապարհ ընկան դեպի Արևելք:

Բայց ճանապարհը դեպի Արևելք նույնպես երկուսն էր. մեկը Թուրքեստանի վրայով դեպի Հնդկաստան, մյուսը Կովկասի վրայով դեպի Միջագետք: Առաջին գծի վրա բոլշևիկները բոլորովին մենակ էին մնալու. իսկ երկրորդ գծի վրա կային նպաստավոր հանգամանքներ:

Սևրի դաշնագիրը Տաճկաստանը գրեթե ոչնչացրել էր. այս բանը շատ ցավ էր պատճառում տաճիկների ազգասեր ու մոլեռանդ խմբակներին. Մուստաֆա Քեմալ անվամբ մի փաշա դուրս եկավ այդ խմբակների ցանկությունը կատարելու. նա հավաքեց իր գլխին 400 հոգի և չհպատակվելով սուլթանական կառավարության, մերժեց ընդունել եվրոպական պետությունների վճիռը: Բոլշևիկների և քեմալականների շահերը զուգորդվում էին իրար հետ, քանի որ երկուսն էլ թշնամի էին դուրս գալիս Անգլիայի դեմ. ռուսները քեմալականների միջոցով գտնում էին մի բաց ճանապարհ, միևնույն ժամանակ օգնական ուժ՝ առաջանալու համար դեպի Միջագետք, ուր սպասում էին տեղացի արաբները, կռվելու համար Անգլիայի դեմ: Այստեղից հետո ավելի հեշտ պիտի լիներ անցնել Պարսկաստան և Աֆղանիստանի վրայով Հնդկաստան:

Կազմվեց ուրեմն դաշնակցությունը բոլշևիկների և քեմալականների միջև ու ռուսների նյութական և բարոյական օգնությամբ քեմալիզմը տարածվեց ու բռնեց ամբողջ Փոքր Ասիան:

Բայց այդ երկու դաշնակիցների ճանապարհի վրա կանգնել էին Կովկասյան նորակազմ չորս պետությունները՝ Դաղստանը, Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը: Պետք էր որևէ ձևով վերացնել այս արգելքները, կա՛մ նվաճելով նրանց և կա՛մ դարձնելով դաշնակից պետություններ: Բազմաթիվ պրոպագանդիստներ ցրվեցին այդ երկրներում և համոզում էին՝ ընդունելու համար բոլշևիկյան վարչաձևը և միանալու ռուսական բոլշևիկյան իշխանության: Կովկասյան պետություններն ընկան երկընտրանքի մեջ: Հեշտ բան չէր միանգամից հրաժարվել ազգայնական ինքնագլուխ պետություն ունենալու այն հաճույքից, որի երազը դարերից ի վեր նոր միայն իրականացել էր: Մյուս կողմից անգլիացիք ամեն կերպով գրգռում էին այդ պետություններին, նույնիսկ զինվորական օգնության խոստումով, որպեսզի դեմ կանգնեն արշավող Ռուսաստանին: Վերջապես Ռուսաստանի թուլացած վիճակը հավատալ էր տալիս իրենց, որ դժվար չէր

խորտակել նրանց ուժը՝ նույնիսկ պատերազմի դեպքում: Հատկապես հայերն այս բոլորից դուրս՝ ունեին Սևրի դաշնագրի մի քանի հոդվածները, որոնք խոստանում էին նրանց մի մեծ և ընդարձակ Հայաստան:

Այս պատճառներով ահա կովկասյան ազգերը չտեսան այն հեղեղը, որ փրթել էր հյուսիսից և (փոխանակ կանխավ բանակցելու) բոլշևիկյան վարչաձև ընդունելու, դաշնակից պետություններ ձևավորելու ծրագրին, դուրս եկան կռվելու ռուսների դեմ:

Այս միջոցին հույները շարժվել էին Արևմուտքից և Թրակիան մաքրելուց հետո, տեր էին դարձել Հոնիային: Քեմալի համար բացվեց երկու ճակատ՝ Հայաստան և Հունաստան: Նա ավելի լավ համարեց հարձակվել նախ Հայաստանի վրա և նրա հաշիվը վերջացնելուց հետո՝ անցնել Հունաստան: Միևնույն ժամանակ շարժվում էր բոլշևիկյան բանակը հյուսիսից, որ Դաղստանը և Ադրբեջանը նվաճելուց հետո, կռիվ սկսեց Հայաստանի և Վրաստանի դեմ: Հայերն ստիպված էին կռվել երեք կողմի վրա, հյուսիսից ռուսների, հարավից տաճիկների և արևելքից Վեղիի ու Նախիջևանի թուրքերի դեմ: Նրանք կարողացան արագ թափով նվաճել Վեղին ու հասան Նախիջևան, բայց անկարող եղան դիմանալ քեմալական բանակներին, որոնք արագությամբ առաջանալով երկու ուղղությամբ, գրավեցին Կարսը (1920 թ. հոկտեմբեր 29) և հետո Ալեքսանդրապոլը: Այստեղ պարտված Հայաստանն ընդունում է տաճիկների ծանր պայմանները, Ախուրյանից արևմուտք և Արաքսից հարավ ընկած բոլոր հողերը հանձնելով նրանց. միևնույն ժամանակ վախենալով տաճիկների նոր հարձակումից, երկրի իշխանությունը հանձնում է բոլշևիկյան նոր կառավարության (1920 թ. դեկտեմբեր 2):

Բոլշևիկները տիրում են Հայաստանին, միևնույն ժամանակ Զանգեզուրը չընդունելով նրանց հպատակությունը, իրեն անկախ է հայտարարում: Այդ իշխանության զինվորական գլուխ է կանգնում սպարապետ Նժդեհը: Բոլշևիկներն Հայաստանում սկսում են որոշ խստություններ, բանտարկում, աքսորում և գլխատում են դաշնակցական տարրերին, որոնց համարում են հակահեղափոխական և իրենց ոխերիմ հակառակորդ: Դրա վրա երկրում ծագում է ապստամբություն (1921 թ. փետրվար 14-18), սկսում է քաղաքացիական կռիվը. բոլշևիկները նախ տապալվում են, բայց շուտով ռուսների բանակը մտնելով Հայաստան, վերջ է տալիս

ապստամբության և նորից տեր դառնում իշխանության (ապրիլ 3): Կռվողները տասնյակ հազարներով քաշվում են Զանգեզուր և այնտեղից Պարսկաստան: Երկար կռիվներից հետո նվաճվում է նաև Զանգեզուրը և ամբողջ Հայաստանը, ինչպես և ամբողջ Կովկասը, անցնում է բոլշևիկների ձեռքը: Արաքսը դառնում է ռուս-տաճկական սահման, որը հաստատվում է Կարսի դաշնագրով (հոկտեմբեր 19):

Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր Ն Ե Ր

ԱՅՎԱԶՈՎՍՔԻ Գ. - Համառոտ պատմութիւն Ռուսաց, Վենետիկ, 1836:

ԱՇՃԵԱՆ Ե. - Օսմանեան պատմութիւն, Պոլիս, 1886:

ԲԱՍՄԱՋԵԱՆ Կ. - Իսկական պատմութիւն Հայոց, Պոլիս, 1915:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ա. Մ. - Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1895:

ԳԵԼՑԵՐ Հ. - Համառոտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901:

ԳԷՈՐԳ - ՄԵՍՐՈՊ - Ուրարտու կամ Հայաստանի նախաբնիկները, Պոլիս, 1914:

COLLAS L. - Histoire de l'Empire Ottoman, 3edition, Paris.

ГЕЛЬМОЛЬТЧ Г. - История человечества, т. II, Восточная Азия, С. - Петерб., 1909.

ԴԱՂԲԱՇԵԱՆ Յ. - Ստոյգ Հայոց պատմութիւն, Թիֆլիս, 1914, պրակ Ա:

DUBEUX - La Perse, Paris, 1881. .

ԹԱՂԻԱԴԵԱՆ Մ. - Պատմութիւն Պարսից, Կալկաթա, 1846 (6 հ.):

ԼԷՕ- Հայոց պատմութիւն, Ա, Թիֆլիս, 1917:

KHAKHANOFF A. - Histoire de Georgie, Tiflis-Paris, 1900.

MASPERO G, - Histoire ancienne des peuples de l'Orient, Paris, 1905.

MOURIER - Histoire de Georgie (հին դար), Tiflis, 1886.

MOURIER - La Mingrelie, Odessa, 1884.

ՆԷՕԼԴԵՔԷ - Պատմութիւն Սասանեան տէրութեան, Վաղարշապատ, 1896:

SONGEON G. - Histoire de la Bulgarie, Paris. 1913.

Спилиота и Касрадзе - Վրաց պատմութիւն (ռուսերեն), I, Թիֆլիս, 1919:

ՎԻՆՈԳՐԱԴՈՎ - Դասագիրք ընդհանուր պատմութեան (3 հտ.), թրգմ. Խաժակի, Թիֆլիս, 1909:
VAUJANY H, De - Histoire de l'Egypte, Le Caire, 1885.
WELLS - The outline of history, I, New York, 1921,
ՏԱՂԱՎԱՐԵԱՆ Ն. - Ուրուագիծ պատմութեան Հայոց, 35-րդ տպ., Պոլիս, 1913:
PAUTHIER - Chine, Paris, 1879.
PFLUGK - Harttung - Weltgeschicte, I, Berlin (Չին, Հնդ., Ճապոն և այլն):
PRECLIN - Histoire des Etats - Unis, Paris, 1937.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԴԱՐ

1. Երկրագնդի նախնական վիճակը 5
2. Մարդու ծագումը 7
3. Նախապատմական շրջան 13
4. Առաջին քաղաքակիրթ երկրները 14
5. Ելամ և Քաղդեա 15
6. Հնդեվրոպացիք և նրանց գաղթականությունները 16
7. Միտանացիների պետությունը 18
8. Եգիպտական կայսրություն, եգիպտացիների
և հաթերի մրցումը 20
9. Ասորեստանյան առաջին կայսրությունը 22
10. Տայ թագուհին և եգիպտական նոր կրոնը 23
11. Եգիպտացիների և հաթերի բախումը
(Կադեշի ճակատամարտը) 24
12. Թրակացիք, փռյուգացիք և հայերը 25
13. Նաիրի, Հրեաստան, Դամասկոս 26
14. Ասորեստանյան երկրորդ կայսրությունը 27
15. Ուրարտյան դաշնակցությունը 28
16. Խալդյան կայսրություն. Արգիստիս Ա. 30
17. Հաթերի և խալդյանների անկումը, Ռուսաս Ա. 31
18. Եգիպտոսի, Բաբելոնի և Ելամի անկումը 33
19. Կիմմերների և սկյութացիների արշավանքը 35
20. Մարերի, բաբելացիների և եգիպտացիների
դաշնակցությունը, Ասորեստանի կործանումը. 36
21. Եգիպտացիների և բաբելացիների կռիվները,
Նաբուգոդոնոսոր. 38
22. Հայոց մուտքը Խալդիա 38
23. Մարական պետություն. հայեր և լյուդացիք 40

24. Չինների բարենորոգությունը. Քունկ-Ֆու-ցե 41
25. Հնդկաստան և Բուդդա 44
26. Պարսկական կայսրություն 46
27. Հայերը պարսիկների իշխանության տակ 47
28. Հույների անցյալը 49
29. Հույն-պարսկական պատերազմները 50
30. Պերիկլեսի դարը և Պելոպոնեսյան պատերազմները . . 53
31. Պարսկական գերիշխանությունը Հունաստանի վրա . . 54
32. Մակեդոնական կայսրություն. Մեծն Ալեքսանդր 57
33. Սելևկյան պետությունը 59
34. Հայաստանը մակեդոնացիների և սելևկյանների
իշխանության տակ 60
35. Հռոմի անցյալը. դասակարգային կռիվներ.
Իտալիայի նվաճումը 61
36. Փյունիկյան պատերազմները 63
37. Հնդկական մեծ պետություն. Չանդրազուփթա և Ասոքա 66
38. Չինական կայսրություն. Ցին-շի-հուանգ-թի 69
39. Չինաստանի բարեկարգությունը. Վեն-թի 73
40. Մակեդոնացիների և սելևկյանների անկումը.
Կարկեդոնի կործանումը 75
41. Հույն-բակտրիական թագավորությունը 76
42. Արտաշիսյան հարստությունը 77
43. Քաղաքային (քաղաքացիական) կռիվներ Հռոմում 78
44. Հայ-պոնտական կայսրություն.
Տիգրան Մեծ և Միհրդատ 80
45. Մարիոս-Սիլլայական պայքարը 83
46. Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքները 84
47. Առաջին եռապետություն 86
48. Կրասոսի արշավանքը. Հայ-պարթևական
դաշնակցություն 87
49. Երկրորդ եռապետություն 88
50. Անտոնիոսի արշավանքը Հայաստան 89
51. Հռոմեական կայսրություն. Օգոստոսի դարը 89
52. Արշակունյաց հարստությունը 90
53. Երուսաղեմի կործանումը. Ռումինիա 94
54. Հնդիկ-Սկյութական պետություն. Քանիշկա 95

55. Չինացիք հասնում են Կասպից ծով 96
56. Հայ-հռոմեական պատերազմները մինչև Տրդատ 97
57. Վրաստանի գերիշխանությունը Հյուսիսային
Կովկասի վրա 99
58. Սասանյան պետությունը 101
59. Դիոկլետիանոսի դաշնադրությունը և Տրդատ 102
60. Քրիստոնեության տարածումը. Աբգար,
Տրդատ և Կոստանդիանոս 103
61. Մանին և մանիքեական կրոնը 107
62. Արևելյան կայսրություն. Տրդատի դաշնադրությունը
Կոստանդիանոսի հետ 108
63. Քաղաքական կուսակցությունները Հայաստանում . . . 109
64. Արշակ և Մեծն Ներսես.
Կռիվ նախարարական կազմակերպության դեմ 111
65. Հուլիանոսի արշավանքը, Հովիանոսի
դաշնադրությունը. Մերուժան Արծրունի 113
66. Ձիրավի ճակատամարտը 115
67. Պապի գործունեությունը. Հայ եկեղեցու անկախությունը 117
68. Հնդիկների վերածնությունը. Կուփթաների հարստությունը 118
69. Բարբարոսների արշավանքը 119
70. Հայաստանի բաժանումը 121
71. Հռոմեական պետության բաժանումը.
Վերջ հին պատմության 122

ՄԻՋԻՆ ԴԱՐ

72. Մեսրոպ Մաշտոց. Հայ գրերի գյուտը 124
73. Վիսիգոթների արշավանքը. Ալարիկ 126
74. Արշակունյաց թագավորության կործանումը 126
75. Հոների երկրորդ արշավանքը. Ատտիլա.
Հռոմեական կայսրության կործանումը 128
76. Հայոց առաջին ապստամբությունը. Վարդանանց
պատերազմը 129
77. Թեոդորիկ. Գոթական կայսրություն 132
78. Հայոց երկրորդ ապստամբությունը.

Վահան Մամիկոնյան 133
79. Մազդակյան շարժումը Հայաստանում 135
80. Հուստինիանոս կայսրը 136
81. Հույն-պարսկական պատերազմները 140
82. Հեփթաղների պետությունը և թուրքական խաքանություն
83. Եմենը և Հաբեշիստանը 145
84. Հայոց երրորդ ապստամբությունը.
Վարդան Մամիկոնյան 146
85. Լոնգոբարդացիների պետությունը և
պապական իշխանությունը 147
86. Խոսրով Բ և Հերակլ 149
87. Մուհամմեդ. Արաբական արշավանքը 150
88. Դամասկոսի խալիֆայությունը 153
89. Ֆրանկների պետությունը. Շարլ Մարթել 155
90. Մեծ չինական կայսրություն. Թայ-ցուն 156
91. Հայերն արաբական իշխանության տակ 158
92. Բաղդադի խալիֆայությունը 160
93. Հայոց նոր ապստամբությունները.
Մուշեղ Մամիկոնյան 161
94. Տիբեթցիների արշավանքները 162
95. Կարոլոս Մեծի կայսրությունը 163
96. Կարոլոսի կայսրության բաժանումը 165
97. Բուղայի արշավանքը Հայաստան 166
98. Նորմանների և սարակինոսների արշավանքը 167
99. Ավատականություն 169
100. Սլավոնական պետությունների կազմությունը 170
101. Պավլիկյան շարժումը 174
102. Անգլիայի ազատությունը. Ալֆրեդ Մեծ 176
103. Հայոց Բագրատունիների թագավորությունը,
Աշոտ Ա. Պարսկաստանի անկախությունը 176
104. Սամանի թաթարական պետությունը 179
105. Կիտանների պետությունը 180
106. Հայոց կռիվները Ատրպատականի հետ 181
107. Բույիների պարսկական պետությունը 183
108. Հայկական հարստությունը Բյուզանդիայում. Ցմշկիկ 184
109. Անիի շինության շրջանը 186

110. Վրաստանի անկախությունը, Բագրատ Գ Մեծ 187
111. Գերման կայսրություն 17
112. Դանիական կայսրություն. Քանութ Մեծ 189
113. Բուլղարական պետությունը 189
114. Ղազնևիների սուլթանությունը 191
115. Սելջուկների արշավանքը. Արծրունյաց
թագավորության կործանումը 193
116. Բագրատունյաց տերության կործանումը 194
117. Նորմանդացիների տիրապետությունը Անգլիայում . . 196
118. Տուղրիլի և Ալփասլանի արշավանքները.
Կարսի թագավորության անկումը 196
119. Պապական պայքարը 198
120. Ռուբինյանց իշխանությունը 200
121. Խաչակիրների մեծ արշավանքը 202
122. Սելջուկյանների մեծությունը. Մելիքշահ, Հաշիշիներ . 205
123. Մանր իշխանություններ Հայաստանում 206
124. Հույների արշավանքը Կիլիկիա և Կիլիկիայի
ժամանակավոր նվաճումը 207
125. Թորոս Բ. Կիլիկիայի վերագրավումը 209
126. Մլեհ. Հայոց դաշնակցությունը սելջուկյանների հետ . 210
127. Վրաստանի մեծությունը. Դավիթ Վերանորոգիչ 212
128. Իտալիայի անկախության կռիվները Գերմանիայի դեմ 214
129. Սալահադդին. Եգիպտական կայսրություն.
Խաչակիրների 2-րդ արշավանքը 215
130. Լևոն Բ թագավոր Կիլիկիայի 217
131. Խաչակիրների 4-րդ արշավանքը.
Պոլսի լատինական կայսրությունը 219
132. Բուլղարիայի և Սերբիայի վերականգնումը 220
133. Վրաստանի Ոսկեդարը. Թամարա թագուհի,
Իվանե և Զաքարե սպասալար 221
134. Թաթարների արշավանքը 223
135. Հեթում Ա. Հայ-թաթարական դաշնակցություն 225
136. Իտալիայի երկրորդ ազատական պատերազմը 228
137. Լատինական կայսրության կործանումը 230
138. Ֆրանսիայի և Անգլիայի կռիվները 231
139. Անգլիական Պառլամենտը 233

140. Հայ-թաթարական պատերազմները
եգիպտացիների դեմ 234
141. Մոնղոլական հարստությունը Չինաստանում
Կուբիլայ խան (մեռած 1294 թ.) 236
142. Իսպանիայի անկախության կռիվները արաբների դեմ 238
143. Անիշխանությունը Իտալիայում 240
144. Գերմանիայի մեծ անիշխանությունը 243
145. Չեխական պետությունը, Օտտոկար Բ. 244
146. Վալլեսի և Սկովտիայի ապստամբությունը 245
147. Հինդուստանի պետությունը 246
148. Հարյուրամյա պատերազմ 247
149. Ունիտոռական խռովությունները Կիլիկիայում 249
150. Կիլիկիան՝ հարկատու թագավորություն 251
151. Կիլիկիայի թագավորության կործանումը 253
152. Մեծ չինական կայսրության վերանորոգումը 254
153. Շվեյցարիայի ազատությունը 256
154. Լևոն Զ-ի դիմումները եվրոպացիներին 257
155. Կալմարի միությունը 258
156. Յան Հուս. Չեխիայի նվաճումը 259
157. Լեհաստանի և Լիտվանիայի միությունը 260
158. Հունգարիայի և Լեհաստանի միությունը 263
159. Բալկանների վիճակը օսմանցիներից առաջ 264
160. Օսմանցիք գրավում են Բալկանները 265
161. Թիմուրլենկի արշավանքը 267
162. Հայաստանը Թիմուրլենկից հետո 269
163. Մայր Աթոռի փոխադրությունը Էջմիածին 270
164. Հունգարացիների կռիվները օսմանցիների դեմ 271
165. Պոլսի առումը. Վերջ հունական կայսրության 273

ՆՈՐ ԴԱՐ

166. Գյուտեր. Հումանիզմ և Վերածնություն 274
167. Պոլսի հայոց պատրիարքությունը 276
168. Հայաստանը նոր դարի շեմին 277
169. Ղրիմի հայոց կոտորածը 278
170. Մաթիաս Կորվին. Հունգարիայի մեծ թագավորությունը 280

171. Երկու վարդերի պատերազմները 281
172. Իսպանիայի միությունը 282
173. Հայաստանի և Եգիպտոսի նվաճումը օսմանցիներից . 283
174. Լյութեր. Եկեղեցական բարեկարգություն 284
175. Վիեննայի պաշարումը 287
176. Սուլեյմանը նվաճում է Արևելյան Հայաստանը 289
177. Գերմանո-ֆրանսիական պայքարը 289
178. Նոր աշխարհի նվաճումը 291
179. Ճիզվիտների կարգը 294
180. Իսպանիայի համաշխարհային դերը. Փիլիպոս Բ 295
181. Հոլանդիայի անկախությունը 296
182. Մարիա Ստյուարտ. Անգլո-իսպանական պատերազմ 297
183. Կրոնական պատերազմը Ֆրանսիայում. Նան-
տի հրովարտակը 299
184. Հայաստանի և Վրաստանի ամբողջական նվաճումը 300
185. Ճապոնիայի միությունը. Նոպունակա և Նիդեյոշի . . . 301
186. Իսպանիայի անկումը 304
187. Շահ Աբաս և իր արշավանքը Հայաստան 304
188. Ճապոնացիք հարաբերության են մտնում
Արևմուտքի հետ 307
189. Երեսնամյա պատերազմ 308
190. Լեհահայերի ցրվումը. Նիկոլ Թորոսովիչ 310
191. Մանջուրիական պետություն 312
192. Անգլիայի հեղափոխությունը 314
193. Ֆրանսիայի գերիշխանությունը 316
194. Եվրոպայի դաշնակցությունը Ֆրանսիայի դեմ 318
195. Շվեդիայի մեծությունը 320
196. Մուհամմեդ Դ. Վիեննայի վերջին պաշարումը 322
197. Ֆորմոզայի նվաճումը 323
198. Մեծ մոնղոլների կայսրությունը 324
199. Գալդանը և օլեթների պետությունը 326
200. Պետրոս Մեծ. ռուսական միապետություն 327
201. Ղարաբաղի հայոց ազատագրական ձգտումները.
Իսրայել Օրի 329
202. Սյունյաց ապստամբությունը. Դավիթ-Բեկ 331
203. Նադրշահի արշավանքը 334

204. Պրուսիական թագավորություն 336
205. Ավստրիայի հաջորդության պատերազմը 337
206. Օլեթների ապստամբությունը չինացիների դեմ 338
207. Յոթնամյա պատերազմ 339
208. Լեհաստանի առաջին բաժանումը 340
209. Հնդկաստանի նվաճումը 342
210. Միացյալ Նահանգների անկախությունը 344
211. Ֆրանսիական հեղափոխություն 346
212. Հանրապետությունը Ֆրանսիայում 349
213. Նապոլեոնի արշավանքը Եգիպտոս, Նարբեյ
և Հայաստանի վերականգնման ծրագիրը 352
214. Ղրիմի և Լեհաստանի նվաճումը 354
215. Վրաստանի և Ղարաբաղի նվաճումը 356
216. Նապոլեոն Ա-ի կայսրությունը 358
217. Նապոլեոնի անկումը. Վիեննայի վեհաժողովը 360
218. Սրբազան դաշնակցություն 362
219. Հարավային Ամերիկայի անկախությունը 364
220. Ռուս-պարսկական պատերազմը 366
221. Հունաստանի ազատությունը 368
222. Հուլիսյան հեղափոխություն 370
223. Ռուսահայաստանի կազմությունը. Պալաժենիա 372
224. Կաթոլիկ հայոց հարցը 375
225. Եգիպտոսի խղիվությունը 377
226. Ամիրայական պայքարը 378
227. Անգլիայի բարենորոգումները 381
228. Փետրվարի հեղափոխությունը և ռեակցիան 382
229. Բողոքական հայոց հարցը 385
230. Ղրիմի պատերազմը 387
231. Դաղստանի և Թաքարիստանի նվաճումը 388
232. Տաճկահայոց Ազգային Սահմանադրություն 389
233. Իտալիայի միությունը 391
234. Լիբանանի ինքնավարությունը 392
235. Զեյթունի ապստամբությունը 393
236. Ստրուկների ազատության պատերազմը Ամերիկայում 395
237. Ճորտերի ազատությունը Ռուսաստանում 397
238. Գերմանիայի միացումը 398

239. Ֆրանս-պրուսիական պատերազմ 399
240. Ռուս-տաճկական պատերազմ 401
241. Հայկական հարցը 404
242. Անգլիայի նվաճումները Ասիայում և Աֆրիկայում 406
243. Եթովպիա և Նեգուս Թեոդորոս 409
244. Սուդան և Մեհդիի արշավանքը 411
245. Ռեակցիան Ռուսաստանում. Հակահայ
քաղաքականություն 413
246. Եվրոպացիք միջամտում են Չինաստանում
և Ճապոնիայում 415
247. Չին-ճապոնական պատերազմը. դեղին վտանգը 416
248. Հայոց ապստամբությունը տաճիկների դեմ 418
249. Զեյթունի մեծ ապստամբությունը և Վանի դեպքերը . . 421
250. Բանկի գրավումը. Կրետեի ինքնավարությունը,
Անդրանիկ 423
251. Իսպանո-ամերիկյան պատերազմը 424
252. Բոքսերական շարժումը Չինաստանում 426
253. Ռուս-ճապոնական պատերազմը 427
254. Սահմանադրությունը Ռուսաստանում.
Թուրք-հայկական ընդհարումը Կովկասում 428
255. Սահմանադրությունը Պարսկաստանում 431
256. Եվրոպայի քաղաքական դրությունը Առաջին
համաշխարհային պատերազմի նախօրյակին 433
257. Ամերիկայի հզորությունը 436
258. Սահմանադրությունը Տաճկաստանում 438
259. Բալկանյան պատերազմները 440
260. Հայկական համաձայնագիրը 442
261. Առաջին համաշխարհային պատերազմը 444
262. Հայոց դերը Առաջին համաշխարհային պատերազմում 451
263. Անկախ Հայաստան 456
264. Բաքվի արշավանքը 459
265. Պատերազմի արդյունքը 462
266. Հայոց պետության առաջին քայլերը 464
267. Բոլշևիզմ և քեմալիզմ 467
Աղբյուրներ 472

Գալուստ Գյուլբանկյան հիմնարկության հովանավորությամբ Երևանի համալսարանի հրատարակչությունը լույս է ընծայել

1. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ** - Տիեզերական պատմություն (աշխարհաբարի վերածեց Վ. Վարդանյանը), 2000 թ.
2. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայկական լեռնաշխարհը, 2000 թ.
3. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայերենի հոլովները, 2000 թ.
4. **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան** - Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի 3-րդ, 4-րդ և 5-րդ հատորները, 2001 թ. (բառարանը 2002 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին)
5. **Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը,** աշխատասիրությամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի, Եր., 2001 թ.
6. **Շարական** (ժողովածու) - Աշխարհաբարի վերածեցին Ա. Մադոյանը և Գ. Մադոյանը, 2001 թ.
7. **Հրաչյա Միրզոյան** - Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, 2001 թ.
8. **Ռուբեն Ղազարյան** - Միջին գրական հայերենի բառապաշարը, 2001 թ.
9. **Բաբկեն Հարությունյան** - Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույցի», 2001 թ.
10. **Վարդան Արևելցի** - Տիեզերական պատմություն, (աշխարհաբարի վերածեց Գ. Թոսունյանը), 2001 թ.
11. **Գևորգ Մադոյան** - Գրիգոր Անավարզեցին շարականագիր, 2001 թ.
12. **Գևորգ Աբգարյան** - Հայ տպագրության նախապատմություն, 2001 թ.
13. **Փայլակ Անթապյան -** Հովհաննես սարկավագ Իմաստասեր, 2001 թ.
14. **Յոզեֆ Կարստ** - Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, 2001 թ.
15. **Ռաֆայել Մաթևոսյան** - Կուբան ապագայի որոնումներում. իրադարձություններ և դասեր, 2001 թ.
16. **Խաչիկ Բաղիկյան** - Ուսումնական դարձվածաբանական բառարան, 2002 թ.
17. **Հրաչյա Գաբրիելյան** - Հայոց բնաշխարհը (դասագիրք), 2002 թ.
18. **Էդուարդ Աղայան -** Լեզվաբանական հետազոտություններ, 2003 թ.
19. **Արտակ Մովսիսյան** - Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը, 2003 թ.
20. **Հրաչյա Աճառյան** - Քննություն Կիլիկիայի բարբառի, 2003 թ.
21. **Պիոն Հակոբյան** - Գիտական ուսումնասիրություններ, 2003 թ.
22. **Աշոտ Սուքիասյան** - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (2004 թ. արժանացել է ՀՀ. նախագահի մրցանակին), 2003 թ.
23. **Երջանիկ Գևորգյան** - Հայոց շարժումային լեզվի բացատրական լեզ-

վի բացատրական բառարան (Շարժութարան), 2003 թ.
24. **Հայնրիխ Հյուբշման** - Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանություն, 2003 թ.
25. **Հայնրիխ Հյուբշման -** Հայագիտական ուսումնասիրություններ, 2004 թ.
26. **Ալեքսանդր Մարգարյան** - Հայոց լեզվի քերականություն (Ձևաբանություն) 2004 թ.
27. **Ռամազ Գորգաձե** - Հայերեն-վրացերեն զրուցարան, 2004 թ.
28. **«Ժուռնալ Ազիատիկ» հանդեսի հայագիտական նյութերի ծանոթագրված մատենագիտություն,** 2004 թ. (ռուսերեն)
29. **Հրաչյա Աճառյան** - Հայոց պատմություն, հյուսված ընդհանուր պատմության հետ, 2004 թ.

Հ. Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(ՀՅՈՒՍՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ)

Հրատ. խմբագիր՝ **Հ. Մարգսյան**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Բղոյան**
Նկարիչ՝ **Գ. Մարիկյան**

Համակարգչային
շարվածք և ձևավորում՝ **Վ. Աղոյան, Ս. Գասպարյան**

Ստորագրված է տպագրության՝ 17.06.04 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Հրատ. 25.3 մամ., տպագր. 30.25 մամ = 28.13 պայմ. մամ.:
Պատվեր՝ 97:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Ալ. Մանուկյան, 1

Երևանի համալսարանի տպարան, Աբովյան, 52